Հովհաննես ՋԱՏԻԿՅԱՆ

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Երևան
2013

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Զ 332

Գիտական խմբագիր
ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն,
պատմաբան

Զատիկյան Հովհաննես

Զ 332 Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին. - Երևան։ «Նորավանք» ԳԿՀ, 2013. - 424 էջ։

Հովհաննես Զատիկյանի «Կարինի նահանգը 19-րդ դարի երկրորդ կեսին» աշխատությունը ծավալուն անդրադարձ է նահանգի 19-րդ դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությանը, նահանգի գավառների պատմությանը և ժողովրդագրությանը։ Գրքին հատուկ կարևորություն են հաղորդում ներկայացված ժողովրդագրական աղյուսակները, տեղագրական և ժողովրդագրական հարուստ նյութը։

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար։

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-825-21-2

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2013թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ……...…4

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ …….……..… 21

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՀԱՆԳԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..……...…….105

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ 411

ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……...414

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի երկրորդ կեսին աստիճանաբար խորանում էին Թուրքիայի տնտեսական քայքայման և քաղաքական մասնատման երևույթները: Այս պայմաններում արևմտահայությունն իր վրա էր ընդունում կայսրության անկման հոգեվարքի դաժան հարվածները:

Կարինը, որ Արևմտյան Հայաստանի հայաշատ ու տարածական մեծ ընդգրկում, տնտեսական ու մշակութային բարձր համարում ունեցող նահանգն էր, անմասն չէր այդ հարաբերություններից:

Հայ պատմագրությունը գրեթե սպառիչ վերլուծության է ենթարկել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը, ուստի, մշակված խնդիրները նորից ներկայացնելու նպատակով, հարկ համարեցինք ընդհանուր գծերով ներկայացնելով հարցը՝ հիմնական ուշադրությունը սևեռել Կարինի նահանգի 19-րդ դարի երկրորդ կեսի առավել ուշագրավ երևույթների վրա, որպեսզի ավելի հիմնավոր երևա տիրող սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների քայքայիչ դերը նահանգի հայության վատթար կացության ձևավորման գործում, ավելի ցայտուն ընդգծվեն նշված ժամանակահատվածում տեղի հայերի վիճակը, հոգևոր-մշակութային կյանքը, կենցաղը, զբաղմունքը:

Թուրքիայի հետամնացության արմատները գտնվում էին բիրտ սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների մեջ: Ագրարային այդ երկրում տիրում էին ֆեոդալական դաժան կարգերը, հողամշակության նախնադարյան ձևերը: Թեև բնակչության 85 տոկոսն զբաղվում էր գյուղատնտեսությամբ, բայց 5 տոկոսը կազմող կալվածատերերը տիրացել էին հողերի 65 տոկոսին[1]:

Հողատիրության առկա ձևերը միախառնված էին ֆեոդալական հարաբերությունների, քրդական տոհմատիրական հողատիրության, իսկ դարի վերջում՝ թույլ զարգացած ապրանքային-դրամական հարա-

[1] *Жуковский М.П.,* Земледельческая Турция, М., 1933, стр. 132.

բերությունների հետ: Այսպիսով, թուրքական հողատիրությունը հսկայական չափերով շեղվում էր «հողատիրության սովորական համակարգից»[1]:

Հողատիրության մեջ տիրող խառնաշփոթի պատճառը մուսուլմանական այն սկզբունքն էր, որով հողը ճանաչվում էր աստծո փոխանորդ սուլթանի սեփականությունը: Պակաս դեր չէին խաղում քոչվորական հողատիրության սովորությունները, երբ գրավված շրջանները միայն ժամանակավորապես էին դառնում նվաճողների սեփականությունը: Ահավոր ավերածություններից հետո, հեռանալով գրաված տարածքներից, քոչվորներն իրենց «իրավունքներն» էին տարածում նոր շրջանների վրա: Ամայացված այդ շրջանները հետագայում բնակեցվում էին նոր եկած քոչվորներով, ապա դրվում զինվորական հողատիրության տակ:

Պարզ է, որ հողատիրության այս հետամնաց ձևերն իրենց ամբողջ ծանրությամբ ընկնելու էին հպատակ ժողովուրդների, առաջին հերթին՝ քրիստոնյաների վրա:

Գործադրության ընդունելով մոնղոլական, արաբական և տեղական հողային օրենքները, դրանք լրացնելով Ղուրանի պահանջներով՝ ստեղծվում էին հողատիրության և հողօգտագործման բարբարոսական հարաբերություններ, որոնք լայն ասպարեզ էին բացում կողոպուտի և թալանի համար:

Նկարագրելով այդ վիճակը՝ 1868թ. օգոստոսին Կարինից Գ.Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկի հեղինակը գրում է, որ գավառահայությունը «ողբացող անգամ չունի, յոյսը միայն երկնքին է մնացել...»[2]:

Ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Կարինի նահանգի հարստահարությունների, հողազրկման, պանդխտության պատճառները բխում էին սուլթանական իրավակարգի վարած հակահայկական քաղաքականությունից, որի դեմ արևմտահայ գյուղացիությունն օգտագործում էր դիմադրության թույլ միջոցը՝ արտագնացությունը, պանդխտությունը:

Պանդխտությունը դիտելով ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական չարիք, ազգի ապագային մեծագույն հարված՝ ժամանակաշրջանի հայ գործիչները պայքարում էին այդ երևույթի դեմ, առաջադրում երևույթից դուրս գալու ուղիներ: Սակայն թուրքական բիրտ իրավակարգը բացառում էր այդ միջոցների դրական ներգործությունը, որովհետև հայաբնակ գավառները հայությունից դատարկելը պետական մշակված

[1] *Бакрадзе Дм.,* Исторический очерк турецкой системы земледелия, Тифлис, 1889, стр. 2.
[2] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ 153, 2-րդ բաժին. գ. 146, թ. 1:

քաղաքականություն էր: Հարստահարությունների ալիքն ավելի մահաշունչ էր դառնում հարկահավաքության ժամանակ: Թուրքիան, որը համարվում էր անօրինական հարկերի դասական երկիր, հարկային քաղաքականության ամբողջ ծանրությունը գցել էր քրիստոնյա հպատակների վրա և նրանց հաշվին էր ապահովում պետության կարիքները:

«Ուժեղի գերագույն իրավունքով» իրականացվող հարկային քաղաքականությունը բազմապատկում էր արևմտահայության թշվառությունը: Կեղեքիչների հոծ զանգվածները, ավերելով, թալանելով, բռնագրավելով գյուղացու վերջին հույսը, նրան մատնում էին սովի: Փրկության ուրիշ ուղի չտեսնելով՝ գյուղացին դիմում էր վաշխառուին: Վերջինս, թեև օգնում էր, բայց հետո բացելով քսակի անհագուրդ բերանը՝ թալանում էր նրան:

Կրոնական ու քաղաքական, տնտեսական հալածանքների ծանր բեռից դուրս գալու ուրիշ ուղի չտեսնելով՝ արևմտահայության կամազուրկ մասը դիմում էր ազգակործան միջոցին՝ կրոնափոխությանը: Օգտվելով առիթից՝ իրենց անսահմանափակ գործունեությունն էին ծավալել կաթոլիկ և բողոքական քարոզիչները: Բուն դնելով Արևմտյան Հայաստանում, շահելով սուլթանի հովանավորությունը՝ նրանք քաղաքականապես անապահով ժողովրդից պոկում էին դիմադրողականությունը կորցրած մասին, կազմալուծում ժողովրդի միասնությունը, դրանով իսկ իրենք վերածվում էին թուրքական քաղաքականությունն իրականացնող գործիքի: Դա մի կացություն էր, երբ «Խաւարի քօղով ծածկեալ և նախապաշարեալ յամենայնի», դրան գումարած իշխանությունների հայաջինջ քաղաքականությունը, նրա գործադրած «սոսկալի հալածանքները բոլորովին յուսահատութեան մատնած է հայն»,- 1887թ. մայիսի 25-ին Բաբերդից Գ.Սրվանձտյանցին գրում է Ասատուր Մութաֆյանը[1]: Հայ առաջավոր մտավորականության, մասնավորապես պատրիարքարանի ուշադրությունը բևեռվեց այդ աղետալի վիճակի վրա: Պատրիարքարանի ուղերձով Արևմտյան Հայաստանի տարբեր մարզերում ընկերությունների կազմակերպումը չուներ ուրիշ մեկ այլ նպատակ, եթե ոչ մաքառել այդ արհավիրքի դեմ, գոտեպնդել ժողովրդին, ապահովել նրա միասնությունը: Թեև միությունների հանձնարարականներում նշվում էին լոկ մշակութային գործունեության նպատակներ, սակայն նրանց հիմնական կոչումը ազգի գոյապահպանության հոգսերն էին, քաղաքական ու ազգային գիտակցության բարձրացումը:

[1] ԳԱԹ, նույն տեղում, գ. 720, թ. 1:

Արևմտյան Հայաստանի և Կարինի նահանգի սոցիալ-տնտեսական հարաբերությունների նկարագրությանն ու վերլուծությանն անդրադարձել են հայ և օտարազգի մեծ թվով ճանապարհորդներ, զինվորական գործիչներ, ուսումնասիրողներ: Առաջինն այդ խնդրին ձեռնամուխ է եղել Կարինի Ս.Աստվածածին եկեղեցու քահանա Հակոբ Կարնեցին: Նրա «Շինված Կարնո քաղաքին», «Տեղեկագիր Վերին Հայոց» աշխատությունները ոչ միայն ունեն ժամանակագրական, պատմական, ժողովրդագրական, աշխարհագրական կարևոր նշանակություն, այլև նահանգի տնտեսական ու քաղաքական խնդրում կատարում են նաև սկզբնաղբյուրի դեր[1]:

Արևմտյան Հայաստանի, նրա առանձին նահանգների, գավառների պատմության նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին:

Ա-Դոն, Գ.Աղայանցը, Ղ.Ալիշանը, Ատրպետը, Ատոմը, Մ.Ասլանյանը, Դիվանին, Ա.Եզիկյանը, Ալ.Երիցյանը, Ղ.Ինճիճյանը, Ա.Թոխմախյանը, Ե.Լալայանը, Լինչը, Լեոն, Խաժակը, Ս.Ծոցիկյանը, Ս.Հայկունին, Հ.Հուլունյանը, Մ.Հաճյանը, Մ.Միրախորյանը, Պ.Նաթանյանը, Հ.Ոսկանյանը, Հ.Ոսկյանը, Ղ.Չարըգը, Լ.Չորմիսյանը, Լ.Սարգսյանը, Ն.Սարգսյանը, Լ.Սրապյանը, Գ.Սրվանձտյանցը, Գ.Սյուրմենյանը, Հ.Տաշյանը, Գ.Փիսոնը, Հ.Քոսյանը, Հ.Քուրտյանը, ռուս և ռուսալեզու հայ հեղինակներ Ա.Ալիմովը, Դմ.Բակրաձեն, Ր.Բեկգուլյանցը, Ա.Գիպիուսը, Վ.Գիրգասը, Գ.Գրոտեն, Մկրտիչ-բեյ Դադիանը, Բ.Դանցիկը, Ա.Երիցովը, Մ.Ժուկովսկին, Դ.Զավրիևը, Յու.Կազի-բեկը, Ալ.Քալանթարը, Ա.Կոլյուբակինը, Լ.Դե-Կոնստանսոնը, Յակ. Լազարևը, Կ.Մակ-կոլը, Ա.Մեզիերը, Ա.Նովիչևը, Յա.Պրոսկուրյակովը, Ե.Սարկիսյանը, Ա.Տոմիլովը, Մ.Ուբիչինին և շատ ուրիշներ հուշեր, նկարագրություններ, ուսումնասիրություններ նվիրեցին խնդրո առարկա հարցին[2]:

---

[1] *Կարնեցի Հ.,* Շինված Կարնո քաղաքին..., տե՛ս Վ.Հակոբյանի կազմած Մանր ժամանակագրություններ. 13-18-րդ դդ., հ. 2, Ե., 1956, Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903:

[2] *Ա-Դո,* Վանի, Բիթլիսի և Էզրումի վիլայեթները, Ե., 1912, *Գ.Աղայանց,* Կարնո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891, *Ալիշան Ղ.,* Այրարատ, Վենետիկ, 1890, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, *Ատրպետ,* Ճորոխի ավազանը, Վիեննա, 1829, *Ատոմ,* Պետական վերանորոգումները և Հողային հարցը, Կ.Պոլիս, 1910, Բաբերդ և շրջակայքը, Փարիզ, 1954, *Արսլանյան Մ. Դիվանի,* Մի պատկեր Տաճկահայաստանի կյանքից, Բաքու, 1913, *Ա.Եզիկյան,* Պատմություն Կարնո կուսակալության Քղի գավառի Չանախչի գյուղի, Բելիվիլ, 1977, *Երիցյան Ա.,* Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայքը 19-րդ դարում, հ.1, Թիֆլիս, 1894, *Ինճիճեան Ղ.,* Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ.Ա, Վենետիկ, 1806, *Թոխմախյան Ա.,* Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1892, *Լալայան Ե.,* Երկեր, հ.1, Ե., 1983, *Լինչ,* Հայաստան, հ. Բ, Կ. Պոլիս, 1914, *Խաժակ,* Հարկերը Տաճկաստանու, Բաքու, 1903, *Լէո, Գ. Արծրունի,* հ.1, 2,3, Թիֆլիս, 1902, 1903, 1905,

Ուսումնասիրելով ներկայացված գրականությունը՝ հանգեցինք այն եզրակացությանը, որ ոչ բոլոր հեղինակներն են խորությամբ անդրադառնում խնդրին և տուրք տալով ժամանակաշրջանի ազգասիրական գրելաոճին, միայն ցավով են նշում հայրենիքի կաթվածահար կացությունը, երկարաձիգ նկարագրություններ ներկայացնում թուրքքրդական խժդժությունների մասին, հաճախ նաև տուրք տալիս այս կամ այն հեղինակի եզրակացություններին, որոնք ոչ թե ընդգծում են արևմտահայության թշվառության պատճառները, ոչ թե ներկայացնում են իրականությունն իր ամբողջ էությամբ, այլ նրանից վերցնում են մի հատվածը և այն դարձնում, ըստ իրենց տեսակետի, հիմնահարցի առանցքային խնդիրը:

Հայոց պատմություն, հ.3, Ե., 1969, *Ծոցիկյան Ս.,* Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, *Հայկունի Ս.,* Բագրեւանդ ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* Հուշամատեան Խոտորջուրի, Վիեննա, 1963, *Միրախորեան Մ.,* Նկարագրական ուղեորություն ի հայաբնակ գավառն Արևմտյան Տաճկաստանի, հ.Ա, Կ. Պոլիս, 1884, *Նաթանյան Պ.,* Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճակի, ճապաղջրի և Երզնկայու, գործ հինգերորդ, Կ.Պոլիս, 1883, *Ոսկանյան Հ.,* Կարին, ու կարնեցին և Կարնո վանքերը, Վիեննա, 1950, *Ոսկյան Հ.,* Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, *Սարգսյան Լ.,* Այց Թուրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890, *Սարգսյան Ն.,* Տեղեկագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, *Սրապյան Լ.,* Քղի, Անթիլիաս, 1960, *Սրվանձտյանց Գ.,* Երկեր, հ.2, Ե., 1978, Մանանա, Կ.Պոլիս, 1876, *Թորոս Աղբար,* Կ.Պոլիս, 1879, *Սյուրմելյան Գ.,* Երզնկա, Կահիրե, 1947, *Տաշեան Հ.,* Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, *Փիսոն Գ.,* Ուղեորություն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892, *Քոսյան Հ.,* Բարձր Հայք, հ. Ա, Բ, Վիեննա, 1925, 1926, *Քուրտյան Հ.,* Երիզա և Եկեղյաց գավառ, Վենետիկ, 1953,

Алимов А., Турция, см. Коммунистическая академия (сборник) М., 1934.

Бакрадзе Дм., Исторический очерк турецкой системы земледелия, Тифлис, 1889.

Бекгулянц Р., По Турецкой Армении, Ростов н/Д, 1914.

Гиппиус А., Статистические таблицы вилайетов турецкой империи ближайших к Закавказью. Тифлис, 1889.

Гиргас Б., Права христиан на Востоке по мусульманским законам, СПб., 1865.

Гроте Г., По Азиатской и Европейской Турции, М., 1933.

Дадиан Мкртич-бей, Современное армянское общество, Тифлис, 1878.

Данциг Б.М., Русские путешественники на Ближнем Востоке, М., 1965.

Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.

Жуковский М.П., Земледельческая Турция, М., 1933.

Завриев Д., К новейшей истории северо-восточных вилаьетов. Турция, Тифлис, 1947.

Кази-бек Ю., Современная Турция, СПб., 1897.

Калантар Ал., Экономические перспективы восточной Анатолии. Тифлис, 1913.

Колюбакин А., Материалы для описания Персии, Азиатской Турции и Закаспийского края, Тифлис, 1888.

Де-Конскансон Л., Реформы в Азиатской Турции, М., 1914.

Лазарев Як., Причины бедствий в Турции и ответственность за разорение Сасуна. Тифлис, 1895.

Мак-Коль К., Наш новый протекторат, М., 1884.

Мазиер А., Турция, СПБ., 1907.

Новичев А.Д., История Турции, т.1, Л., 1963, т.2, Л., 1968, т.3, Л., 1977, т.4, Л., 1978. Очерки истории Турции до мировой войны, М.-Л., 1937.

Հեղինակների երկրորդ խումբը բավարարվում է պատմական անցյալի ներկայացմամբ, քննադատում ազգային անմիաբանությունը՝ այն համարելով հայրենիքը կործանման տանող հիմնական պատճառը: Ավելին, չհեռանալով տարածված մտքից՝ հեղինակների մի մասն այն տեսակետին է հանգում, որ թուրքական վայրագ կարգերն արգելակում էին ոչ միայն տնտեսությունը, այլև մշակութային առաջընթացը:

Ռուս հեղինակների շրջանում այն թաքուն տեսակետը կա նաև, որ Արևմտյան Հայաստանում ճնշումների, հալածանքների պատճառը հայ ազատագրական շարժումներն էին: Ավելին, կրկնելով թուրքական պաշտոնական «վիճակագրության» կողմնակալ վկայությունները (Ա.Կոլյուբակին, Յա.Պրոսկուրյակով, Ա.Տոմիլով, ինչ-որ չափով նաև Վ.Գիրգասը, Ա.Նովիչևը և այլք)՝ նրանք արտահայտում են նաև դարավերջին Թուրքիայի նկատմամբ ռուսական ցարիզմի դիրքորոշումները:

Հիշատակված աշխատություններում, սակայն, կան հիմնախնդրի, վերլուծման առումով գնահատելի տեսակետներ, ինչպես, օրինակ՝ հայերի դերը տնտեսության, մշակույթի բնագավառում, և այդ տեսանկյունից էլ, օսմանյան բռնատիրության ավերիչ դերակատարումն այդ ասպարեզներում:

Չնայած թերություններին ու բացթողումներին, հայ և ռուս, ռուսալեզու ուսումնասիրողների աշխատությունները կարևոր ներդրումներ են արևմտահայության հետաքրքրող ժամանակահատվածի ուսումնասիրության ասպարեզում[1]:

Նշված աշխատություններից առանձնանում են Ա.Համբարյանի, Ա.Հովհաննիսյանի, Թ.Հակոբյանի, Հ.Ղազարյանի, Ս.Մարկոսյանի, Մ.Ներսիսյանի, Վ.Պարսամյանի, Ե.Սարգսյանի, Գ.Ստեփանյանի աշխատությունները, որտեղ բազմակողմանի քննության առնելով Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության հիմնահարցերը՝ հեղինակները, սակայն, առանձնապես չեն անդրադառնում այս կամ այն նահանգի, գավառի խնդիրների վերլուծությանը: Չնայած այս սահմանազատմանը, վերոհիշյալ աշխատություններում մշակված գիտական հիմնադրույթները հիմք են դառնում Կարինի նահանգի

[1] *Проскуряков Я.,* Заметки о Турции, Тифлис, 1905.
Саркисян Е.К., Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957.
Томилов А., Отчет о поездке по Азиатской Турции, Тифлис, 1907.
Убичини М., Изображение современного состояния Турции, СПб., 1854.

տնտեսական ու քաղաքական կյանքի ամբողջական նկարագիրն ավելի հստակեցնելու համար[1]:

19-րդ դարում թուրքական կայսրության հպատակ ժողովուրդների կարող ուժերին համակել էր պայքարի ու ազատագրական ոգին:

Արևմտահայությունն անմասն չէր այդ հեղաբեկումներից: Ազգային գիտակցության բարձրացման առաջին վկայությունը հանդիսացավ սահմանադրական շարժումը: Սահմանադրությունը թեև ոչինչ չտվեց ժողովրդին, սակայն տարրական իրավունքներից զուրկ արևմտահայությանն իր ուժերի նկատմամբ վստահություն ներշնչեց, դարձավ ազատագրական գաղափարախոսության ամուր հիմնաքար:

Սահմանադրական շարժման անբաժանելի մաս են կազմում 1872թ. մշակված «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և Կարինի բարենորոգումների ծրագիրը: Սահմանադրական շարժումը դիտելով անընդհատ զարգացման մեջ՝ դժվար չէ նկատել, թե հատկապես վերջին փաստաթղթում այդ գործընթացն ինչ կարևոր ու խոր առաջընթաց է ապրել:

Հնարավոր չէ իրարից առանձնացնել 1863թ. սահմանադրությունը, 1872թ. «Հրահանգը», 1879թ. Կարինի բարենորոգումների ծրագիրը: Ընդհանրությունն առկա է, վերջնական նպատակի ձգտումն՝ անսքող, դրանք առնչվում են կորցրած տնտեսական ու քաղաքական իրավունքները հետ ստանալու գաղափարին:

Հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածի կարևոր իրադարձություններից էին 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը, Բեռլինի կոնգրեսը, որոնք արևմտահայությանը հույսերի ու հուսախաբության ծանր բեռ բերեցին: Ճշմարտությունն իր ողջ դաժանությամբ կանգնեց համայն հայության առաջ: Հավատակից ու «քրիստոնեասեր» Եվրոպան մրուրով լցված բաժակ բաժին հանեց բազմաչարչար հայ ժողովրդին: «Հայկական հարցը» կոնգրեսի մասնակիցները վերածեցին մի միջոցի, որով Թուրքիայի վրա ամրացրեցին իրենց դիրքերը:

[1] *Համբարյան Ա.,* Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Ե., 1956, *Հովհաննիսյան Ա.,* Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք 1, 2, Ե., 1955, 1957, *Հակոբյան Թ.,* Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, *Ղազարյան Հ.,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., Ե., 1967, *Մարկոսյան Ս.,* Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Ե., 1968, *Ներսիսյան Մ.,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1870, Ե., 1955, *Պարսամյան Վ.,* Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Ե., 1958, *Саркисян Е.,* Аграрная политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1957. *Ստեփանյան Գ., Արփիարյան Ա.,* Ե., 1955:

Ֆրանսիացի հրապարակախոս Դումերկը, գնահատելով 61-րդ հոդվածը, գրում է. «Հակակշռի պահանջը, դադարելով երաշխիք լինել, վիրավորանք էր պարզապես, այն ավելին չէր, քան պրովոկացիա: Բեռլինի դաշնությունն ավելին էր, քան սխալը, այն ոճիր էր, Բեռլինի դաշնագրության տողերի միջին, մի դև հազիվ տեսանելի գրերով գրել էր 1879-1916 թվականների ամբողջ ծրագիրը, այդ գրերը սկսեցին քիչ առ քիչ պարզվել, որպես ջարդերի կարմիր արյան գույն, որպես հրդեհի, կրակի գույն»[1]:

Կրոնական մոլեռանդության ցանցապատ ամրոցը ճաք էր տվել դղրդյուններից: Համիդը փլվող պատի ճեղքերը լցնելու շաղախ ընտրեց հպատակների անմեղ արյունը, սկսեց ազատ, համարձակ գործել, իսկ արգելքների հանդիպելիս նեղ կածանով իր դեմ արշավողի ափի մեջ էր դնում բարենորոգումներ խոստացող դատարկ քսակները:

Դաժան փորձությունը ոտքի հանեց մինչ այդ քնած համարվող հայ ժողովրդին: Երկաթի ու արյան դաժան փիլիսոփայությունն իր արժանի տեղը գրավեց մի ժողովրդի սրտում, որը հույսը կտրելով որևէ օգնությունից՝ սեփական ուժերով էր ջանում լուծել իր ազատագրական խնդիրը: Դիվանագիտական միջամտության հովերը, նրանցից բխող գայթակղիչ ու երազածին կախարդանքներն իրենց տեղը զիջեցին իրականությունը զգաստ ու բացաչք տեսնելու, գնահատելու զգացողությանը:

Հայ ժողովուրդը ոտք էր դնում իր պատմության բախտորոշ ժամանակահատվածներից մեկը: Կազմակերպվելու, բռունցք դառնալու, ինքնապաշտպանական մարտերի ելնելու, ապա նաև ստրկական լուծը թոթափելու ձգտումն իր շուրջն էր հավաքել հայության ուժն ու միտքը, զորությունն ու կամքը: Վճռական մարտերի էր պատրաստվում մի ժողովուրդ, որն իր արդար պահանջի փոխարեն ստացել էր միայն բիրտ հարվածներ:

Արևմտահայության քաղաքական կացության հարցերն իրենց մեկնաբանություններն են ստացել հայ, ռուս և եվրոպացի հեղինակների աշխատություններում, հուշագրություններում, զեկուցագրերում, հայ պատմաբանների մենագրություններում, ուսումնասիրություններում[2]:

---

[1] Մատենադարան, Աշ. Հովհաննիսյանի անձնական արխիվ, թղթ. 24411, վավ. 126, թ.6:

[2] *Հ. Աստուր,* Սահմանադրությունը և հայ ժողովուրդը, Կ.Պոլիս, 1879, *Մ.Գ. Ролен-Жекмен,* Армения, армяне и трактаты, Брюсель, 1896, *Ем. Дилон,* Положение дел в Турецкой Армении. *Ф.Д. Грин,* Армянский кризис, *К.М. Мак-коль,* Ответственность Англии перед Арменией, см. Сборник, Положение армян…, М., 1896, *Ղ.Աղայան,* Մի երես մեր նորագույն պատմությունից, Մոսկվա, 1891, *Մ.Պեշիկթաշլյանի* քերթվածքներն ու ճառերը, Փարիզ, 1904, *Հ.Ամատյան,* Տաճկահայոց հարցի պատմու-

Հարկ է նշել, որ ոչ բոլոր հեղինակներն են կոնկրետ ուսումնասիրության խնդիր դարձրել այդ հարցը, ուստի նպատակահարմար է այդ բազմանուն գրքերը ենթարկել առանձին վերլուծության, որովհետև նրանք մեծ մասամբ կրկնում են իրար և նոր բան չեն ավելացնում հետաքրքրության օբյեկտ հիմնահարցի, հատկապես Կարինի նահանգի կացության ուսումնասիրության հարցում: Մշակված ընդհանուր տեսակետ ունենալով խնդրի նկատմամբ՝ ուսումնասիրողները բավարարվում են միայն արևմտահայության անբարեհույս վիճակի նկարագրությամբ:

Հարցի խոր ու մասնագիտական վերլուծությունները տեղ են գտել Ռ.Հովհաննիսյանի, Ա.Համբարյանի, Հ.Ղազարյանի, Ջ.Կիրակոսյանի աշխատություններում[1]:

Քննելով մեծ տերությունների ու Ռուսաստանի խաբուսիկ, շահադիտական քաղաքականությունը՝ ուսումնասիրողները զարգացնում են այն միտքը, որ հատկապես այդ քաղաքականության վրա հենվելով էր սուլթանիզմ իրականացնում հալածանքների ու ջարդերի ծրագիրը:

Շարունակվող քաղաքական ու տնտեսական հալածանքների անվերջանալի, մեկը մյուսից սպառիչ ալիքները ողբերգական վիճակի էին հասցրել արևմտահայությանը: Ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական հոսանքները, կազմակերպություններն ու խմբակները վիճակից դուրս գալու ելք էին փնտրում: Դաժան պայքարի այդ քուրայում էլ ձևավորվում էր արևմտահայության ազատագրական գաղափարախոսությունը: Ժողովրդական լայն խավարի մեջ նկատելի էին տեղաշարժեր:

Պատմաբանների տարբեր սերունդների ներկայացուցիչներ են անդրադարձել հերոսական այդ ժամանակահատվածի լուսաբանմանը: Առ այսօր էլ սփյուռքում ու մայր հայրենիքում լույս են տեսնում ուսումնասիրություններ, տպագրվում են հուշապատումներ, որոնցից առանձնանում է Ռ.Հովհաննիսյանի աշխատությունը[2], որն արժանի տեղ է զբաղեցնում արևմտահայ ազատագրական շարժումների պատմությանը

թյունը, Ն. Նախիջևան, 1915, *Սարուխան,* Ազգային խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում 1860-1910, հ.Ա, Թիֆլիս, 1912, *Լեռ,* Գ.Արծրունի, հ. 3, Թիֆլիս, 1905, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Բ, Փարիզ, 1934, 1935, *Էդ. Բեռնշտայն,* Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժնև, 1906, *Դիվանի,* Մի պատկեր տաճկահայ կյանքից, Բաքու, 1913, *Մ.Խրիմյան,* Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929, *Հ.Սվաճյան,* Հրապարակախոսություն, Ե., 1960, *Հ.Գանգրունի,* Հայ հեղափոխությունը օսմանյան բռնապետության դեմ, 1890-1910, Բեյրութ, 1973 և այլն:

[1] *Ռ.Հովհաննիսյան,* Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, *Հ.Ղազարյան,* նշված գիրքը, *Ա.Համբարյան,* նշված գիրքը, *Ջ.Կիրակոսյան,* Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980:

[2] *Ռ.Հովհաննիսյան,* նշված գիրքը:

նվիրված աշխատությունների շարքում ընդհանրապես և Կարինի նահանգի առթիվ՝ մասնավորապես: Հեղինակը խորազնին վերլուծության է երթարկում նահանգի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, որոնց շրջագծում էլ ձևավորվում էր արևմտահայության ազատագրական գաղափարախոսությունը: Հանգամանալից ներկայացնելով Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ձևավորման ու գործունեության պատմությունը՝ Ռ.Հովհաննիսյանը հանգում է այն ճիշտ հետևության, որ ինչպես արևմտահայ, այնպես էլ կարինահայ ազատագրական շարժումներն արդյունք էին ազգային գիտակցության բարձրացման, ազատագրական գաղափարախոսության հիմնավորման:

Կարինի նահանգի ազատագրական շարժումներին անդրադարձել են նաև Հ.Նշկյանն ու Ղ.Չարըգը[1]:

Հատկապես հիշարժան է Հ.Նշկյանի հուշագրությունը: Ժամանակակցի ու մասնակցի գրչով շարադրելով «Պաշտպան հայրենյացի» կազմավորման ու գործունեության շրջանը՝ հեղինակն արժեքավոր մանրամասներ է հայտնում նաև քաղաքի ու նահանգի մշակութային, հասարակական կյանքի մասին:

Ղ.Չարըգի «Կարինապատումը» հարուստ նյութ է պարունակում նահանգի տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերությունների ու վիճակի մասին, ընդգծում նահանգի հայության անմխիթար կացությունը, հանգում արժեքավոր հետևությունների:

Կարինի նահանգի ազատագրական շարժումների մասին կարևոր փաստաթղթեր կան նաև Հայաստանի Հանրապետության Պատմության կենտրոնական պետական արխիվում (ՀՀ ՊԿՊԱ)[2]:

Արևմտահայության ազատագրական շարժումներին զուգընթաց, նոր կերպարանք էր ստանում սուլթանական բռնատիրության հայակործան քաղաքականությունը: Եվրոպական տերություններին ու Ռուսաստանին հավաստելով 61-րդ հոդվածի կիրառման, բարեփոխումներ անցկացնելու մասին՝ Համիդը ձերբազատվեց նրանց միջամտությունից: Շուտով փութաջանորեն կազմավորվեցին համիդիե գնդերը, հայկական նահանգներ գործուղվեցին հայատյաց փաշաներ: Նախապատրաստելով նաև մուսուլմանական մոլեռանդ ամբոխին՝ սուլթանը սկսեց 1894-1896թթ. ջարդերը, որից անմասն չմնաց Կարինի նահանգի հայությունը:

[1] *Հ.Նշկյան,* Առաջին կայծերը, «Պայքարին» տպարան, 1930, *Ղ.Չարըգ,* Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957:

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56:

ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվի համապատասխան ֆոնդերը, եվրոպական տերությունների ու Ռուսաստանի դեսպանների, հյուպատոսների, դիտորդների, ականատեսների զեկուցագրերն ու վկայությունները, ժամանակակից մամուլը, հուշապատումները լի են Կարինի նահանգում կատարված զարհուրելի դեպքերի նկարագրություններով[1]:

Իրականացնելով հայկական ջարդերի քաղաքականությունը՝ սուլթանը, սակայն, չկարողացավ հայ ժողովրդի մեջ մեռցնել ազատագրական գաղափարը: Արևմտահայության մինչև Մեծ եղեռն ընկած ժամանակահատվածի պատմությունը այդ իրողության ամենավառ ապացույցն է:

* * *

Ներկայացված բազմաբնույթ, տարբեր նկատառումներով գրված գրականությունը աշխատության հիմնական խնդրի շարադրման համար ծառայել է որպես հիմնաքար ժամանակահատվածն առավել բազմակողմանի ներկայացնելու տեսանկյունից: Հատկապես գնահատելի է հայ պատմագրության խոշոր հաջողությունն Արևմտյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի վերլուծության բնագավառում: Սակայն հեղինակների ճնշող մեծամասնությունը խորությամբ չի անդրադարձել բնակչության տեղաբաշխման, արտագաղթերի, ներգաղթերի, դրանց պատճառների մեկնաբանությանը և ըստ այդմ էլ՝ Կարինի նահանգի ժողովրդագրության առանձնահատուկ դրսևորումներին:

Այս բացթողումների պատճառով էլ հայ պատմագրության մեջ, ժողովրդագրության ասպարեզում, գոյանում է ազատ տարածք: Անժխտելի է, որ ուսումնասիրություններում գերիշխողը նյութերի առատությունն է, բայց դրանք մասնակիորեն են անդրադառնում խնդրո առարկային կամ խիստ տեղային բնույթ ունեն:

Խնդիրն առավել դժվարանում է ժողովրդագրական հիմնական դրույթի՝ կայուն, պաշտոնական, անկողմնակալ վիճակագրության բացակայության պատճառով: Ավելին, վստահելի վիճակագրության բացակայության պայմաններում գրեթե անհնար է դառնում կողմնակալությամբ ներկայացված վիճակագրության հավաստիության աստիճանի բացահայտումը: Այսինքն, եթե վիճակագրությունը գիտակցված է կեղծվում, խեղաթյուրվում, դժվարանում է ճշմարտության բացահայտումը:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 42, 56, 114, Մշակ, 1896, Կարնո հիշատակին, Վիեննա, 1896:

Այս տեսանկյունից խոչընդոտների մի ամբողջ շարք կար նաև մեր առջև: Բայց տարբեր հեղինակների՝ այդ ուղղությամբ կատարած քրտնաջան աշխատանքը մեծագույն օժանդակություն ցուցաբերեց շարադրանքի կառուցմանը, որովհետև ուսումնասիրողների մեծ մասը բացահայտում էր նաև կողմնակալ, պաշտոնական վիճակագրության միտումնավորությունը, ցույց տալիս խնդրի լուծման ճշմարիտ ուղին: Ղևոնդ Ալիշանի, Հ.Էփրիկյանի, Թեոդիկի, Ղ.Ինճիճյանի, Ա-Դոյի, Ալ.Երիցյանի ներկայացրած հաշվարկները, վկայությունները նոր լույս էին տարածում այդ խավար բնագավառի վրա, ավելի դյուրին դարձնում կեղծիքների հայտնաբերումը, ճշմարիտ վիճակագրության հիմնավորումը[1]: Եվրոպացի, ռուս, հայ ճանապարհորդների, հուշագիրների, հետազոտողների մեծ մասը, վիճակագրության առումով, նոր վկայություններ, տեղեկություններ չի ներկայացնում, այլ անցնում է գքից գիրք, երբեմն հիմնավորում նաև ոչ իրականը, դրանով իսկ խաթարվում են նահանգների, գավառների, բնակավայրերի մասին պատկերացումները: Հանդիպելով նման դժվարությունների՝ հիմնվել ենք արխիվային փաստաթղթերի վրա, որոնց օգնությամբ էլ, հնարավորության սահմաններում, ձգտել ենք հանգել ճշմարիտ վիճակագրության:

Այն դեպքերում, երբ ձեռքի տակ չենք ունեցել առավել հավաստի, փորձված ու վստահելի վկայություններ, դիմել ենք միջին կոչվող տարբերակին, երբ եղած վկայությունների միջինը ընդունելով, թեկուզ փոքր շեղումներով, լուծվել է վիճարկվող խնդիրը:

Բնական է, որ մեր օգտագործած արխիվային փաստաթղթերի նկատմամբ ևս կառաջանա թերահավատություն: Բայց այստեղ կարևոր ու համոզիչ պետք է դիտել այն անժխտելի փաստը, որ վստահության արժանացած փաստաթղթերի մեծ մասի հեղինակները կամ ժամանակակից են, կամ իրենք անձամբ են կազմել վիճակագրությունները, ինչպես, օրինակ, մեծ նվիրյալ Գարեգին Սրվանձտյանցը: Մեծանուն գործչի հաշվարկների օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պաշտոնական վիճակագրության երաշխիքները, այլև հայ հեղինակների գերհաշվարկները:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրության առավելությունն անժխտելի է: Այն ամփոփում է ժողովրդագրության բոլոր մանրամասները, ականա-

[1] *Ղևոնդ Ալիշան,* Այրարատ, Վենետիկ, 1890, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, *Հ.Էփրիկեան,* Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա. Բ, Վենետիկ, 1902, Բայազետ, «Բազմավեպ», 1901 փետրվար, էջ 61-67, *Թեոդիկ,* Ամենուն տարեցույցը, Փարիզ, 1929, *Ղ.Ինճիճյան,* Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, *Ա-Դո,* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, *Ալ.Երիցյան,* Թե Տաճկական Հայաստանում որքան հայ կա, Փորձ, 1880, հունիս, հուլիս, էջ 88-113:

տեսի աչքով, բարեխղճությամբ ներկայացված են յուրաքանչյուր բնակավայրի բոլոր ցուցանիշները, տնտեսական, քաղաքական, մշակութային, դպրոցական համակարգի հարցադրումները, որոնց պատասխանները մեծագույն ներդրում են արևմտահայության պատմության բնագավառում: Թեև մեծանուն հետազոտողի մոտ ևս երբեմն նկատվում են բացթողումներ, բայց դրանք որակ չեն կազմում, քանզի վայրիվերո այդ ժամանակահատվածում, երբ գյուղեր էին տեղաշարժվում, նոր բնակավայրեր էին հիմնվում, հնարավոր էին նաև նման կարգի բացթողումներ:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությանը համարժեք է նաև մեր կողմից պայմանականորեն «Անանուն» անվանված հեղինակների վիճակագրությունը, որոնք սպառիչ պատասխաններ են տալիս 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբների Քղիի, Կամախի, Բաբերդի, Երզնկայի, Բասենի, Դերջանի գավառների մասին[1]:

Նույնպիսի բարձրարժեք վիճակագրություն է կազմել նաև Նազարեթ Փոստոյանը, որը ծագումով Քղիի Խուբս գյուղից էր և ԱՄՆ-ից այցելելով հայրենիք՝ մանրամասնություններով գրի է առել Քղիի 48 գյուղերի պատմությունը, ժողովրդագրությունը[2]:

Գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանն ընդգրկող վիճակագրական տեղեկություններով լի է ՀՀ ՊԿՊԱ 476 ֆոնդը, որի հեղինակ Հ.Գալստյանը տարբեր աղբյուրներից հավաքել է գյուղերի, քաղաքների մասին տեղեկություններ, ի մի է բերել դրանք, կատարել է թարգմանություններ թուրքական աղբյուրներից, կարողության սահմաններում փորձել ստեղծել ավարտուն, վստահելի աղբյուրագիտական ժողովածու: Շնորհակալ գործի հեղինակը, սակայն, առանձնացում ու դասակարգում չի կատարել իր հավաքած տեղեկությունների նկատմամբ, չի անցկացրել համեմատական վերլուծություն՝ արդյունքում ստեղծելով երբեմն իրար հակասող վկայությունների հավաքածու, որոնց նկատմամբ հիմնականում պետք է ունենալ քննական վերաբերմունք:

Աշխատության «Ժողովրդագրություն» գլխի համար մեծ քանակությամբ նյութեր ենք ընտրել ՀՀ ՊԿՊԱ 30 ֆոնդերի ավելի քան 700 գործերից, ԳԱԹ (Գրականության և արվեստի թանգարան) 18 ֆոնդերի 250 գործերից, Մատենադարանի (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ) 5 ֆոնդերի 50 գործերից:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, 146, 152, 161, 163, 164, 165:
[2] Նույն տեղում, գ. 140:

Արխիվային փաստաթղթերից, գրականությունից բացի, օգտագործել ենք նաև հայկական մամուլում տպագրված վիճակագրական բնույթի հոդվածները, որոնցից կարելի է հիշատակել Ա.Երիցովի ռուսերեն հոդվածը, Ս.Ամատյանի, Գ.Արծրունու, Ֆ.Բուռնազյանի, Ա.Խաչատրյանի, Ն.Մարտիրոսյանի, Պ.Մուրատյանցի, Սելյանի հոդվածները[1], «Արաքս», «Արարատ», «Բազմավեպ», «Բանասեր», «Մասիս» ամսագրերում, հանդեսներում, շուրջ 30 թերթերում, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում», «Հայկական Սովետական Հանրագիտարանում» տպագրված հոդվածներն ու հրապարակումները[2]:

Հիշատակված հոդվածներից առավել գնահատելին պրոֆ. Ա.Համբարյանի «Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը» հոդվածն է: Վաստակաշատ հեղինակների վերլուծություններն ու համեմատությունները, արևմտահայության բնական աճի, թվաքանակի մանրակրկիտ հաշվարկները մեզ համար ծառայել են որպես սկզբունք Կարինի նահանգի գյուղերի, քաղաքների, բնակավայրերի հայության քանակը պարզաբանելու, հուսալի և հատընծա վկայությունների գոյության պայմաններում՝ նաև ճշգրտելու ուղղությամբ[3]:

Արևմտյան Հայաստանի և հատկապես Կարինի նահանգի վիճակագրությանն անդրադարձած ուսումնասիրողներից քչերին է հաջողվել նորություն հաղորդել խնդրին:

Հայ մամուլը, որ սկսած 50-ական թվականներից, լայն տեղ էր հատկացնում արևմտահայության դառն ու հարստահարված կացությանը, երկրի կաթվածահար տնտեսությանը, ընդարձակ նկարագրություններ է տալիս քրդական վայրագությունների, հարստահարություն-

[1] *Ամատյան Ս.,* Եկեղեաց գավառ, Արևելյան մամուլ, 1884, փետրվար, 1886, մայիս, հունիս, 1887, փետրվար, օգոստոս, սեպտեմբեր, 1888, փետրվար, 1889, սեպտեմբեր, նոյեմբեր, 1890, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս; *Արծրունի Գ.,* Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակիչների մասին, «Մեղու Հայաստանի», 1882, 24 հունվարի, *Գևորգյան Թ.,* Խոտորջուր, ԲԵՀ, 1971, թիւ 3, *Բուռնազյան Ֆ.,* Մի ակնարկ Հայոց Խոտորջրի անցյալից, «Էջմիածին», 1950, թիւ 3-4, *Խաչատրյան Ա.,* «Հին Բայազեդի և Բագրևանդի հայերին սպառնացող վտանգը» «Արձագանք» 1883, 16 հունվարի; *Մարտիրոսյան Ն.,* Բայազետի գավառը, Վան-Տոսպ, 1916, թիվ 14, 15, 1917 թիւ 1, *Մուրատյանց Պ.,* Նկարագիր Ս.Հովանու վանուց և վիճակի նորին Բագրևանդա, «Արարատ» 1889, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, Սելյան Տաճկահայաստանի ազգաբնակչությունը, «Մուրճ», 1895, թիւ 7:

[2] «Արարատ», 1879, սեպտեմբեր, «Ճանապարհորդություն ի նահանգն Կարուց, գրեց Կ.Վ.Ս., «Արաքս», 1892, հունիս, Վիճակագրական տեղեկություն Տաճկաստանի բնակչաց վերաբերյալ, «Բազմավեպ», 1850, հոկտեմբեր, «Երիզա», «Բանասեր», 1851, նոյեմբեր, «Ազգային վիճակագրություն», «Մասիս» 1886, սեպտեմբեր, «Երզնկա կամ Երիզա»: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, 2, Երևան, 1986, 1988, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1-12, Ե., 1974, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981,1982, 1983, 1984, 1985, 1986:

[3] *Համբարյան Ա.,* Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, ԲԵՀ, 1869, թիւ 2:

ների, տեղական իշխանությունների գործունեության, կրոնափոխման, պանդխտության մասին:

Ընդունելի ժողովրդագրական հիմնական առանցքներից մեկը բնակավայրերի գյուղերի, գավառների սահմանների ճշգրտումն էր, որին անդրադարձել ենք՝ հենվելով Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ հարուստ գրականության վրա:

Ժողովրդագրության հաջորդ կարևոր սկզբունքը բնակչության ազգային կազմի փոփոխությունների բացահայտումն է: Նկատելի է, որ դարի առաջին և երկրորդ կեսերի բնակչության կազմում կան զգալի փոփոխություններ: Դրանք հիմնականում արդյունք էին հալածանքների, արտագաղթի, պանդխտության, կոտորածների: Կարևոր է նշել, որ տնտեսական կացությունից ելնելով՝ հայերը թաքցնում էին ընտանիքի անդամների թիվը: Վերջինս, ինչ խոսք, առավել է դժվարացնում բնակչության իրական քանակի պարզումը, և որքան էլ ջանքեր ներդրվեն, վիճակագրությունը մոտավոր պատկեր է ունենում, եթե, իհարկե, բացակայում է հավաստի վկայությունը:

Հաջորդ կարևոր հանգամանքը վկայությունների նկատմամբ զգուշավորության դրսևորումն է այն առումով, որ ականատեսների ու ժամանակակիցների տեղեկությունները հավասարման նշան են դնում գավառների ու գյուղերի միջև՝ ուշադրությունից դուրս թողնելով տնտեսական ու քաղաքական պայմանները: Այսինքն, թեև բնական աճի տեմպերը մեծապես կախված էին նշված խնդիրներից, բայց այն աչքաթող է արվել: Այս առումով առավել տուժում էին այն շրջանները, որոնք ենթարկվել էին մահմեդականների զանգվածային ներխուժմանը, ինչպես, օրինակ, Քղիում, Կիսկիմում, Թորթումում, Բայազետում իրականացված գործընթացները, կարևոր հանգամանք, որը նույնպես դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Այդ թվում գյուղերի այն մեծ մասը, որոնք արդեն կրում էին քրդական կամ թուրքական անուն, բայց ունեին հայ բնակչություն, սակայն տեղ չէին գրավում հայաբնակ կամ խառը գյուղերի ցուցակներում: Իրողություն, որը նվազեցնում է վիճակագրությունների արժանահավատությունը: Այս ուղղությամբ թերի տեղեկությունների մի շարք փաստեր կան Կարինի Առաջնորդարանի վիճակագրության մեջ, որն անվերապահորեն ընդունում է հատկապես Ա-Դոյի և նրան կրկնողների տեղեկությունները:

Ընդհանուր առմամբ, Արևմտյան Հայաստանի, Կարինի նահանգի վիճակագրությունները, ունենալով վերը նշված բացթողումներն ու

թերությունները, պատճառ են հանդիսանում կողմնակալ շահարկումների: Դրան զուգահեռ, պաշտոնական վիճակագրությունը, որը չէր արտացոլում իրականությունը, հաճախ արժանանում էր եվրոպացի հեղինակների վստահությանը, ինչպես, օրինակ, Վ.Քինեի և ուրիշների պարագայում, այն դեպքում, երբ ուսումնասիրողներից մեկի հավաստմամբ՝ Վ.Քինեի վիճակագրությամբ հայերի թիվը նվազ է ներկայացվում գրեթե 97 տոկոսով[1]:

Արևմտյան Հայաստանի վիճակագրության վրա թուրքական կառավարության սևեռումն ուժեղացավ հատկապես Բեռլինի կոնգրեսից հետո, և լույս աշխարհ եկան այնպիսի տեղեկություններ, որոնք, կեղծելով ճշմարտությունը, միջազգային հանրությանը ներկայացնում էին խեղված թվեր, ինչպես, օրինակ, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբեդին փաշայի պատասխանը տերությունների հարցումներին, որտեղ մասնավորապես հայտնվում է, որ Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի վիլայեթներում հայերը կազմում են բնակչության ընդամենը 17 տոկոսը, իսկ մահմեդականները՝ 79 տոկոսը[2]:

Ստեղծված խառնաշփոթը, ինչ խոսք, ազդում էր հավաստի վիճակագրության ստեղծման վրա: Պատրիարքարանի, առաջնորդարանների տեղեկությունները Եվրոպայում երբեմն չէին արժանանում պատշաճ վստահության, իշխանությունների կողմից խոչընդոտներ էին ստեղծվում խնդրով հետաքրքրվողների համար, և այդ ամենի արդյունքում հնարավորություն չստեղծվեց անկողմնակալ, հավաստի, արժանահավատ վիճակագրության ձևավորման համար, թեև, բարեբախտաբար, այնպիսի նվիրյալներ, ինչպիսիք էին Գ.Սրվանձտյանցը, հայտնի ու անհայտ գործիչները, մեծագույն դժվարությամբ, հսկայական ջանքերի շնորհիվ սերունդներին հասցրեցին վստահելի տեղեկություններ, որոնց օգնությամբ պատռվում է թուրքական վիճակագրության էությունը, ներկայացվում են հայերի թվաքանակի վերաբերյալ իրական տեղեկություններ:

Քանի որ Թուրքիայում բացակայում էր պետական պաշտոնական վիճակագրությունը, իսկ «սալնամեներ» կոչված փաստաթղթերի տեղեկությունները իրական վիճակի մասին պատկերացում կազմելու հնարավորություն չեն տալիս, ուստի մեր առջև ծառացած խնդիրները լուծելու համար հենվել ենք պատմիչների, պատմաբանների, ճանապարհորդ-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 4, թ. 30:
[2] Նույն տեղում, գ. 541, թ. 39:

ների, վիճակագիրների, հուշագիրների ներկայացրած տեղեկություններ-ի վրա՝ դրանք ենթարկելով համեմատական վերլուծության:

Ձեռք բերված նյութերի հիման վրա հնարավոր դարձավ կատարել նահանգի 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին տասն-ամյակի հայ բնակչության մոտավոր թվաքանակի հաշվարկներ և ըստ տարիների ցույց տալ հայ բնակչության աճի ու նվազման ցուցանիշները: Այդ նպատակով մեր կազմած աղյուսակները, որոնք, համեմատական, քանակական վերլուծությունների հնարավորություն են ընձեռում, ավելի քան հստակեցնում են նահանգի, բնակավայրերի ազգային կազմի մա-սին պատկերացումները, ընդգծում թուրքական իշխանության հայակուլ քաղաքականության կործանարար հետևանքները, որոնք որպես պետա-կան միջոցառումներ հանդես եկան 1995-96, 1915թթ. կոտորածների տեսքով, Արևմտյան Հայաստանը հայաթափվեց, ոչնչացվեց բնիկ ժողո-վրդի գրեթե 80 տոկոսը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

19-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիան ավատատիրական ագրարային երկիր էր: Թեև բնակչության գերակշիռ հատվածը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, բայց ցածր աստիճանի վրա էին գտնվում հողամշակությունն ու հողային հարաբերությունները: Ոտնահարված էին հողագործի իրավունքները, անբավարար աստիճանի վրա էր գտնվում ոռոգման համակարգը, հողը մշակվում էր նահապետական եղանակով, քայքայիչ մեծ ներգործություն էր ունենում անկանոն հարկային քաղաքականությունը: Այս ամենի պատճառով կենտրոնական և արևելյան Անատոլիայում օգտագործվում էր մշակելի հողատարածությունների միայն 10 տոկոսը[1]:

Կարինի նահանգն ուներ 41360 քառ. կմ օգտագործելի հողատարածություն: Եթե մշակովի հողատարածությունը պարզ բաժանման ենթարկենք բնակչության քանակի վրա, ապա յուրաքանչյուր գյուղական ընտանիք պետք է ունենար բավարար քանակի հող: Սակայն, ընդունելով այն փաստը, որ կայսրության ասիական նահանգներում մշակվում էր օգտագործելի հողատարածությունների ½-ը, ապա նահանգում մշակման տակ էր մնում միայն 20.680 քառ. կմ հողատարածություն:

Նահանգի քաղաքային բնակչությունը հասնում էր 93.900 մարդու[2]: Եթե բնակչության ընդհանուր քանակից հանենք քաղաքաբնակների թիվը, ապա կունենանք գյուղաբնակների թիվը՝ 646.000-93.000=553.000: Եթե գյուղական բնակչության ընդհանուր թվից հանենք քոչվոր և անասնապահ քրդերի թիվը, որոնք չէին զբաղվում գյուղատնտեսությամբ՝ հողամշակությամբ, ապա նորից անլուծելի էր մնալու հողային հարցը,

[1] *Новичев А.Д.,* Очерки экономики Турции до мировой войны, М. Л., 1937, стр. 43-44.

[2] *Չորմիսյան Լ.,* Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Բեյրութ, 1972:

որովհետև հողազրկման գործընթացը հետզհետե խորանում էր՝ ստվարացնելով հողազուրկների բանակի շարքերը:

Հողամշակության ցածր մակարդակի պատճառով ընկնում էր նաև բերքատվությունը:

Ահա թե ինչու թուրք հայտնի վիպագիր և լրագրող Յաշար Քեմալը, որը քանիցս շրջագայել է արևելյան վիլայեթներում, գրում է. «Արևելքում հողը բերքատվության տեսակետից փչացել է քոչվորական շահագործման հետևանքով: Հողը գուրգուրանք է պահանջում...»[1]:

Կարինի նահանգը, առանձնապես Կարինի դաշտը, Բասենը հայտնի են եղել որպես բերքառատ շրջաններ: Դարի վերջին նահանգում տարեկան արտադրվել է 33.833.000 չինիկ բերք՝ ցորեն, գարի, հաճար, կտավատ, կորեկ, ոսպ և այլն, 6268100 հոխա միրգ, լոբազգի կուլտուրաներ, պտուղ, բանջարեղեն[2]:

Մեկ այլ վկայությամբ, 1886-1890թթ. նահանգում տարեկան միջինը արտադրվել է 28.997.000 չինիկ կամ մոտ 12 մլն փութ ցորեն, գարի[3]:

1886-1890թթ. նահանգում արտադրվել են հետևյալ քանակի գյուղատնտեսական մթերքներ, հացահատիկ[4]:

Ցորեն	106.156.000	հոխա	ծխախոտ	2.550	հոխա
գարի	73.133.000	հոխա	ձիթապտուղ	20.000	հոխա
աշորա	4.895.000	հոխա	հուն. ընկույզ	792.500	հոխա
կորեկ	610.500	հոխա	կաղին	200	հոխա
կտավատ	473.000	հոխա	սոխ	1.130.000	հոխա
ոսպ	22.900	հոխա	խաղող	762.000	հոխա
լոբի	1.583.000	հոխա	խնձոր	118.900	հոխա
բակլա	66.000	հոխա	տանձ	132.950	հոխա
բրինձ	50.000	հոխա	սիսեռ	87.600	հոխա
եգիպտացորեն	55.000	հոխա[5]			

Կարինի նահանգն անմասն չէր Թուրքիայի բռնակալական, բարբարոսական հողային հարաբերություններից: Հայ գյուղացին իր արտադրածի տերը չէր, նրա աշխատանքի արդյունքը տնօրինում էր մուսուլման վերնախավը: Ճնշված ու հալածված հողի մշակն աչք չէր բացում անլուր տառապանքից, որպեսզի կատարելագործեր, առաջ մղեր արտա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 330, թ. 8 շրջերես:
[2] *Էփրիկյան Հ.,* Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 302:
[3] Турецкий сборник, СПб, стр. 144.
[4] *Калантар Ал.,* Экономические перспективы Восточной Армении, Тифлис, 1913, стр. 24-25.
[5] Նույն տեղում:

դրությունն ու արտադրության միջոցները: «Ռուսաստանին սահմանակից Էրզրումի վիլայեթում մշակվում էր օգտագործելի հողերի հազիվ տասներորդ մասը: Այն էլ մշակվում էր շատ վատ: Հողամշակությունը փոքրասիական (անատոլիական) վիլայեթներում գտնվում էր ոչ բարձր զարգացման մակարդակի վրա: Հողամշակման ձևը նույնն էր, ինչ մի քանի հարյուրամյակ առաջ»[1]:

Թուրքիայում հողատիրությունը ստեղծվեց նվաճումների ճանապարհով, և քանի որ տիրելու իրավունքը տիրողինն էր, ապա ամբողջ հողային հարստությունն ընկավ թուրքերի տրամադրության տակ: Սակայն, քանի դեռ շարունակվում էին նվաճումները, տեղացի բնակչությունը կարողացավ պահպանել հողը: Ճակատային հարված ստանալով Եվրոպայում՝ սուլթանները ներքաշվեցին նվաճված երկրների մեջ և սկսեցին դաժան հարստահարություններն ու բռնագրավումները:

19-րդ դարի առաջին կեսին ավարտվեց վերանվաճման գործընթացը, և երկրում ձևավորվեցին միջին և խոշոր հողատերերի դասակարգերը, որոնք լրիվ անկախ էին կենտրոնական կառավարությունից:

19-րդ դարի 60-ական թվականներին արևմտահայ գյուղացիության հողազրկումը հասավ իր ավարտին: Թեև արևմտահայ գյուղացիության չնչին մասին հաջողվեց պահպանել իր իրավունքները, սակայն նրանց ևս սպասվում էր ունեզրկման դառը ճակատագիրը, որովհետև դրան էր ձգտում կառավարությունը: Այս քաղաքականությունն ավելի սաստկացավ Համիդի իշխանության տարիներին, երբ պայմաններ էին ստեղծվում բռնագրավումների, սեփականատերի թալանի համար:

Երկրում տիրող անիշխանության պայմաններում, զուրկ անձի և գույքի ապահովագրությունից, արևմտահայությունը կորցնում էր տնտեսական ինքնուրույնությունը, դառնում հողատերերի հլու կամակատարը: Մինչև 90-ական թվականները թուրք և քուրդ ֆեոդալները տիրեցին հողերի մեծ մասին: Մուշից օսմանյան պառլամենտի անդամ Գ.Տեր-Կարապետյանը հայտնում է, որ Կարինի նահանգի Խնուսի, Ալաշկերտի, Բայազետի, Բասենի, Քեմախի, Երզնկայի, Դերջանի, Բաբերդի գավառների 129 և ավելի գյուղերում, իր կատարած հաշվումներով, քրդերի և թուրքերի կողմից գրավվել են «հազարավոր արտեր, մարգեր, արոտներ, տներ, ջրաղացներ: Օրինակ՝ Երզնկա-Դերջան՝ ավելի քան 15000 օրավար, 250-350 շենքեր, արոտատեղեր: Բաբերդ, Բասեն, Ալաշկերտ և այլն՝ 25000-ից ավելի արտեր, մարգեր, 270-ից ավելի շենքեր, 7 ագա-

[1] *Голобородко И.Н.,* Турция, М., 1912, стр. 124.

բակներ: Խնուսի 19 գյուղերեն 1000-ից ավելի արտեր, 400 շենքեր»:

«Ընդամենը Կարնո վիլայեթին մեջ ավելի քան 100 000 օրավար»[1]:

Հայ գյուղացիությունը գտնվում էր ոչ միայն հողազուրկ վիճակում, այլև չուներ աշխատանքային գործիքներ, լծակներ: Այսպես՝ 1896-1899թթ. Կարինի նահանգի Բաբերդի, Բասենի, Քղիի, Դերջանի, Սպերի, Կիսկիմի, Թորթումի, Մամրվանի գավառներում 50802 տնտեսություններ ունեին 211446 խոշոր եղջերավոր, 840111 մանր եղջերավոր անասուն, այսինքն՝ ամեն մի տնտեսության բաժին էր հասնում 1,4-7,0 խոշոր եղջերավոր, 10,4-24,4 մանր եղջերավոր անասուն[2]: Նահանգի Բասենի, Բայազետի, Դիադինի, Ղարաքիլիսայի, Ալաշկերտի, Այնթափի գավառների 17086 տնտեսություններ ունեին 7402 սայլ: Ուրեմն, նշված գավառների տնտեսությունների 56,7 տոկոսը զուրկ էր սայլից[3]: Կամ, ինչպես նշում էր Բեկգուլյանցը, կային գյուղեր, որտեղ կար միայն մեկ ձի, մեկ գութան[4]:

Ինչպես տեսնում ենք, հայ գյուղացու հողազրկման և ունեզրկման վրա ոչ մի ազդեցություն չունեցան թանզիմաթներն ու հողային օրենքները, 1876թ. սահմանադրությունը: Հայ գյուղացու հողազրկումը կատարվում էր ցանկացած պատրվակով: Այսպես, հարկահավաքության ժամանակ, երբ գյուղացին չէր կարողանում վճարել, գրավ էր դնում հողը: Վաշխառուն, օգտվելով առիթից, բարձր տոկոս էր նշանակում տրված դրամի վրա: Գյուղացին տարիներ շարունակ վճարում էր պարտքերը, բայց չէր կարողանում ազատվել անգամ տոկոսներից: «Անգամ մը,- գրում էր «Մասիս» թերթի թղթակիցը,- 3000 պարտքի համար գյուղացին մը և իր որդին 123000 ղուրուշ վճարած էին, և սակայն իրենց հողը տակավին գրավի ներքև էր»[5]:

Չվճարված պարտքը տարիներ շարունակ մնում էր գյուղացու ուսերին, և նա, վճարելու ուրիշ միջոց չունենալով, հողը ստիպված թողնում էր պարտատիրոջը կամ էլ պարտքը մարելու նպատակով դիմում էր պանդխտության: «Այդ ուշակորույս ողորմելիքն տարիներով կը թափառին պարտքը վճարել և ապրուստով մը վերադառնալ, այս ժամանակամիջոցին Հայրենյաց արգավանդ հողերը կը մնան անմշակ»[6]:

---

[1] *Տեր-Կարապետյան Գ.,* Հողային հարցը կամ արյուն-արցունքոտ վեճը, տե՛ս «Ազատամարտ», 1911, նո. 485, 14/27 հունվարի:

[2] *Համբարյան Ա.,* Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Ե., 1965, էջ 78:

[3] Նույն տեղում, էջ 79:

[4] *Бекгулянц Р.,* По турецкой Армении, Ростов н/Д., 1914, стр. 46.

[5] «Մասիս», 1880, նո. 2637:

[6] *Միրաքորյան Մ.Կ.,* Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, Պոլիս, 1885, մաս Գ, էջ զ:

Սուլթանի տնտեսական քաղաքականությունը, ուղղված լինելով քրիստոնյա հպատակների ձուլմանն ու ոչնչացմանը, լայն ճանապարհ էր բացում պանդխտության համար: Փրկության ուրիշ միջոց չունենալով՝ հայ գյուղացին գնում էր քաղաք, հուսալով, որ այնտեղ կգտնի աշխատանք, կկարողանա փող կուտակել ու վճարել պարտքերը: Պանդուխտ հայերի պատկերավոր նկարագիրն է տալիս «Հայրենիք» թերթի 1892թ. առաջնորդողներից մեկը. «Երկուշաբթի օր, ի Բերու, ս. Երրորդության եկեղեցիին քովերը մեռել մը կար, եկեղեցին կմերժեր դագաղ մը, քահանա մը, աղոթք մը, ափ մը հող տալ այդ դիակին: Մեռնողը չզղջացող մեղավո՞ր մըն էր: Եկեղեցիին օրենքնե՞րը ոտնակոխ ըրած էր, եկեղեցիեն մերժվա՞ծ մըն էր, նզովյա՞լ մըն էր: Ոչ, ասոնցմե ավելի գեշ բան մըն էր – աղքատ մըն էր, ու աղքատներուն ալ էն գեշ տեսակեն էր, դարիբ մըն էր»[1]:

Տնտեսական ինքնուրույնությունը կորցրած, ստրկական կախման մեջ ընկած արևմտահայ գյուղացին, եթե երբեմն առևտրի շնորհիվ հասնում էր տնտեսական որևէ հաջողության, ապա շուտով զրկվում էր դրանից: Կառավարության հովանավորությանն արժանացած եվրոպացի առևտրականները, հայ վաճառականների մրցակցությունից խուսափելու նպատակով դիմելով զանազան միջոցների՝ նրանց հասցնում էին տնտեսական քայքայման, ապա «շնորհ անելով» ընդունում ծառայության:

Հայ առևտրականների տնտեսական քայքայմանը նպաստում էր նաև կառավարությունը: Վճռական էր, ինչպես նշում է Ռաֆֆին, նաև այն հանգամանքը, որ հայ առևտրականները չունեին ընկերություններ: Այդ պատճառով էլ «...հայերը, լինելով մի ժամանակ գլխավոր ներկայացուցիչը ասիական վաճառականության, սկսում են նրա երկրորդ դերը խաղալ, դառնալով եվրոպացի վաճառականների օգտին գործիք և նոցա շահերուն ծառա»[2]:

Սակայն մեծ վիպասանը չէր մոռանում, որ վաճառականության ու հայ գյուղացուն քայքայող պատճառները սկիզբ էին առնում կառավարական շրջաններից, որը պետական պարտքերը ծածկելու համար հարկային ծանրությունը գցում էր նրանց վրա՝ խլելով ապրուստի վերջին միջոցները: Հայ գյուղացին, չկարողանալով տնօրինել իր աշխատանքի արդյունքը, հողը չէր մշակում՝ իրեն զրկելով գոյության հիմնական միջոցից:

Հայ ժողովուրդը տնտեսական այդ հալածանքներին պատասխանում է պասիվ դիմադրությամբ՝ պանդխտությամբ, որը ոչ մի արդյունք

[1] «Հայրենիք», 1892, նո. 169:

[2] *Ռաֆֆի,* Երկերի ժողովածու, հ.9, Երևան, 1958, էջ 36:

չի տալիս, ավելին, քայքայվում է նրա տնտեսությունը, ընտանիքը դառնում է հարստահարիչի սեփականությունը: Պանդխտությունը չէր շտկում հայ գյուղացու տնտեսական վիճակը, նրա վաստակածն այնքան չնչին էր, այնքան աննշան, «աշխարհե աշխարհ կերթան, երկու պլիկ կվաստակեն, կուգան... էլ մը ծոցեր պարապ տկլոր ու թշվառ կթողնեն իրենց սիրելի հայրենիք, բարեկամ, ու որդիք, ազգ ու ընտանիք անտեր անտիրական, օտար երկիր կերթան»[1]:

Թշվառությունն ու մրցակցությունն էր պանդխտի բաժինը: Մշեցի, կարինցի, վանեցի մշակին սպասում էր ոչնչացումը: Այդ ամենը զգում էին նաև իրենք՝ պանդուխտները, սակայն ընտանիքի գոյությունը պահպանելու, պարտքերը հատուցելու այլ միջոց չկար, բայց դա էլ չէր փրկում հարստահարված պանդուխտին, որովհետև «քանի մը տարի Կ.Պոլիս մնալե և 50, 100, 200 և երբեմն ալ ավելի կարևոր գումար մը հավաքելե ետք հայրենիք կվերադառնա, իր ընտանիքին հետ վայելելու իր վաստակը: Եվ երբ խնայված գումարը սպառի, նորեն ձեռք կառնե ուղևորության ցուպը»[2]:

«Գնաց: Իսկ այնտեղ, Խնուսի կիսավեր գյուղերում, պառավ մայրը՝ մեջքը կորացած, հալումաշ կինը՝ ծծկերը գրկին, և չորս մատղաշները՝ բոբիկ ու ցնցոտիապատ, նրան են սպասում: Նրան են սպասում, երբ պարտատերն է դուռը բախում, կամ երբ հարկահանը որոտալի ձայնով շանթ ու կրակ է թափում: Երեխաների կանչը՝ «հաց» և դատարկված գոմից նվաղած եզան բառաչյունը՝ «խոտ», դադար չունի: Տաշտում՝ հաց, գոմում՝ խոտ չկա,- նրան են սպասում: Գիշերը անձրև եկավ, հողը փափկեց, արտը վարող չկա, նրան են սպասում...

Տուն կա՝ պահող չկա,
Արտ կա՝ վարող չկա...»[3]:

Համատարած դարձած այս երևույթն ընդունել էր ահռելի չափեր, ամեն տեղ էին հայերը, ամեն տեղ հաց էին փնտրում, աշխատանք, ապահով ու անվտանգ կյանք:

«Ամեն տեղ է որոնում հայը ապաստան,
Բացի այն երկրից, որ կոչվում է Հայաստան»[4]:

[1] Նույն տեղում, էջ 6:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, գ. 1, գ. 291, թ. 48:
[3] *Ակնունի Է.,* Դեպի երկիր, Պոսթըն, 1911, էջ 5-6:
[4] Նույն տեղում, էջ 5:

19-րդ դարի երկրորդ կեսին պանդխտությունը ոչ միայն չէր նվազում, այլև ստվարանում էր: Դարի վերջում պանդխտության էին գնում նաև կանայք՝ մերկ ու բոկոտն, հացի կարոտ[1]: «Վաճառականը կգաղթե, երկրագործը կգաղթե, արհեստավորը կգաղթե, բանվորը կգաղթե, մեկ խոսքով՝ ամենքը կգաղթեն, և Հայաստան կմնա շատ տեղ միայն ծերեր, կիներ, մանկունք»,- ցավով գրում էր Մ.Մամուրյանը[2]:

Պանդխտության հիմնական պատճառը հողազրկությունն էր, տնտեսական հալածանքը, որի օղակներից մեկն էլ վաշխառությունն էր: «Վաշխառուն հազար ու մեկ հնարքներ ունի այդ պարտքը ոչ միայն անսպառելի ընելու, այլև զայն միշտ հարյուրապատկելու համար, բարդելով վրա հարյուրին 50, 100, 500 տոկոս»: «Այսօր Տաճկաստանի քաղաքներու մեջ չի կա գրեթե պանդուխտ հայ մը, որուն ազատությունը, կյանքը և հոգին վաշխառուի մը ձեռքը չըլլա»[3]: Այսպիսով, եզրակացնում է «Մշակի» թղթակիցը, «այդ պանդխտության գլխավոր պատճառը վաշխառուն է և հայ վաշխառուն: Մեր տունը միշտ մենք կքանդենք»[4]:

1897թ. տվյալներով՝ Կարինի նահանգի գավառներն ունեին հետևյալ քանակի ապառիկներ[5]:

Կարնո գավառ	- 1,452	հազար ղուրուշ
Կիսկիմի գավառ	- 61	հազար ղուրուշ
Մամրվանի գավառ	- 165	հազար ղուրուշ
Թորթումի գավառ	- 139	հազար ղուրուշ
Բասենի գավառ	- 459	հազար ղուրուշ
Բայբուրդի գավառ	- 633	հազար ղուրուշ
Սպերի գավառ	- 381	հազար ղուրուշ
Դերջանի գավառ	- 1486	հազար ղուրուշ
Քղիի գավառ	- 1928	հազար ղուրուշ
Խնուսի գավառ	- 1815	հազար ղուրուշ

«Պանդխտության աճող երևույթը դանդաղեցնելու, վերջ տալու միակ միջոցը հողը քրդերից հետ գնելն էր, փոխօգնության դրամարկղերի հիմնումը, գյուղատնտեսական բանակի հիմնումը, գյուղացուն հողին

[1] «Մշակ», 1882, նո. 160:
[2] *Մամուրյան Մ.,* Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881, էջ 200:
[3] Նույն տեղում:
[4] «Մշակ», 1882, նո. 160:
[5] *Համբարյան Ա.,* Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում 1856-1914թթ., Ե., 1965, էջ 114:

կապելը: Այս և նման միջոցներ էին առաջարկում ժամանակակիցները և ավելացնում, որ պանդխտելով, հայը իր բացակայությամբ քուրդին ավելի դյուրին ասպարեզ կուտա իր գույքը կողոպտելու, այնտեղ ընտանիքը բռնաբարելու»[1]:

Ինչպես տեսանք, արևմտահայության ստվար զանգվածները տարագիր էին դառնում հիմնականում հողազրկման, հարստահարման պատճառով: Վերը խոսելով հողազրկման մասին՝ նշեցինք, որ դրա կարևոր առանձնահատկություններից մեկը թուրք զինվորականության և վերնախավի կողմից (նվաճողական քաղաքականության ավարտից հետո) կիրառվող հողերի հետնվաճման քաղաքականությունն էր: Այս երևույթն ուներ բազմաթիվ տարատեսակներ, իրականացման ձևեր, որոնք պաշտպանության էին արժանանում տեղական իշխանությունների կողմից: Հիմնական նպատակ ունենալով տնտեսական բարձունքները մահմեդականության ձեռքում կենտրոնացնելը՝ կառավարությունը ձերբազատ իրավունքներ էր բաշխել մուսուլման տարրին՝ նրա համար ստեղծելով թե՛ իրավական և թե՛ բռնության հնարավորություններ: Ելնելով այս ամենից՝ դարի երկրորդ կեսին ուժեղացավ տեղական ֆեոդալների բռնագրավումների քաղաքականությունը, որն արդարացվում, հաստատվում և հովանավորվում էր թուրքական դատարանի կողմից: Անօրինական գաղթումներն ունեին հարատևման մեկ ուրիշ պատճառ՝ Ղուրանի դոգմաները: Հայ գյուղացու հողազրկման հաջորդ աղբյուրը հողի պարտադրված վաճառքն էր: Զրկված լինելով իր աշխատանքի արդյունքը տնօրինելու, ավելին, պահպանելու իրավունքից՝ գյուղացին չնչին գնով վաճառում էր հողը, իրեն ազատում այն պաշտպանելու դժվարին կացությունից, ինքնակամ ունեզրկվում: «Երբ արտ մը, որ 100 ոսկի կարժե, և տասը ոսկիով իրացված է»[2]:

Ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կարինի նահանգում, հողազրկման գործում խոշոր դեր էին խաղում տեղական իշխանություններն ու դատարանները:

Այդ առիթով անգնահատելի վկայություն է հաղորդում Կարինի նահանգի պատվիրակ և նահանգում բարենորոգումների անցկացման հանձնաժողովի հսկիչ Պարտիզակցի Վահան վարդապետը: Հանդիպելով Անգլիայի թուրքասեր դեսպան Լեյարդի հետ՝ նա հայտնում է, որ թուրքական կառավարության նպատակը հայերի հողերը մահմեդական-

[1] *Մամուրյան Մ.,* նշված գիրքը, էջ 200:
[2] «Ազատամարտ», 1911, նո. 492:

ների տնօրինությանը հանձնելն է: Ավելին, կառավարությունը խաբկանքով հայերից վերցնում է կալվածագրերը, հավաստում, որ հողային իրավունքը կգրանցվի հատուկ գրքերում, սակայն կատարվում է հակառակը. «երկար ատեն կանցնի, օր մըն ալ այս խեղճ հայերն կը տեսնեն, որ իրենց հողի տերերն իրենք չեն, այլ այդ երկրներեն քաղաքը բնակվող իսլամանց անվանց վրա արձանագրված է, խեղճ հայ գյուղացին, որ թուրքերեն լեզվին ալ անծանոթ է, այսպես նենգաբար կը կողոպտվի...»[1]:

Նույն Պարտիզակցին Կարինի հյուպատոս Տրոտերին է հանձնում հատուկ տեղեկագիր, որտեղ ընդգծված ներկայացնում է հայության իրավազուրկ ու հողազուրկ վիճակը: Տեղեկագրում կառավարության հողային քաղաքականության մասին Պարտիզակցին մասնավորապես գրում էր. «Շատ անգամ պատահել է, որ թրքերը օրինավոր տերեր են դարձել այն հողերի, որոնք պետական մուրհակներով (թապու) ծախսված են եղել այս կամ այն հայի վրա, թրքերը սպառնալիքներով ու զանազան անելանելի եղեռնագործություններով, պատահում էր, որ մինչև անգամ սպանությամբ խլում են հայերից թապուները և այդպիսով տեր են դառնում հայերի կալվածքներին»:

Հայ գյուղացին բողոքում է իշխանություններին: Սակայն Ղուրանի վրա հենված թուրքական դատարանը հարցերը լուծում էր մուսուլմանների օգտին, որովհետև քրիստոնյաների վկայությունը չէր ընդունվում, թեև, «եթե նրանք (դատավորները- Հ.Զ.) փոքր-ինչ նեղություն կրեն նայել պետական մատյանները, նրանք անշուշտ կգտնեին հայ կալվածատիրոջ անունը, թեպետև այդ նրանց առանց այդ էլ շատ լավ հայտնի է»[2]:

Թուրքական դատարանների ծախվածության ու մուսուլմանապաշտ վարքագծի, հարստահարությունների արդարացման պատկերավոր արտահայտությունն է եվրոպական թերթերից մեկի թղթակցի հաղորդումը, որին կարելի է տալ «փրկարար հորթը» անվանումը:

Հայ գյուղացին իր կորած կովը գտնում է հարևան գյուղի դատավորի տանը: Դատավորը սպասում էր կովի տիրոջ հայտնվելուն, որպեսզի վերցնի կովի փրկագինը և վերադարձնի կովը: Բայց քրիստոնյան չէր կարող օգտվել այդ իրավունքից, և դատավորը պահանջում էր վկաներ: Գյուղացին որպես վկա է բերում իր համագյուղացիներին: Բայց նրանց վկայությունը չի ընդունվում: Ճարահատյալ հայը բերում է կովի հորթին: Կենդանիները, տեսնելով իրար, աղիողորմ բառաչելով վազում են իրար մոտ: Դատավորը ստիպված վերադարձնում է կովը:

[1] «Մշակ», 1879, նո. 209:
[2] Նույն տեղում, 1880, նո. 4:

«Տաճկաստանի մեջ,- եզրափակում է թերթը,- մի հորթի վկայությունը առավել արժեք ունի, քան թե միլիոնավոր քրիստոնյաների»[1]:

Շերի դատարանների միջոցով հողերի հափշտակումն այնպիսի չափերի էր հասել, որ կառավարությունը հատուկ հրամանով տեղական իշխանություններին առաջարկում է հողային բողոքները վճռել նիզամիե դատարաններում, սակայն այդ «զիջումը» ևս չունեցավ որևէ ազդեցություն, որովհետև վերջիններս նույնպես հարցերը վճռում էին ի վնաս քրիստոնյաների:

Կալվածագրերի հափշտակման, տեղական իշխանությունների օգնությամբ հողերի բռնագրավման երևույթները լայն տարածում էին գտել ամբողջ Կարինի նահանգում: Միայն Դերջան գավառում խլվել էին այնքան հողեր, որտեղ կարելի էր ցանել 1500 սոմար ցորեն: Բռնագրավվել են 150.000 դահեկան արժողությամբ կալվածագրեր, քրդերը հայերին քշել էին 35 գյուղերից, տիրացել նրանց ունեցվածքին, հողերին[2]:

Բացի հողազրկման օրինական դարձած այս մեթոդներից, իշխանությունները քրիստոնյա եկեղեցիներին ու վանքերին կարգադրում էին հողերը վաճառել կամ օգտագործման տալ միայն մուսուլմաններին: «Առաքելոց վանքի վանահայր Հովհաննես վարդապետը խոստովանում է,- հայտնում է վերոհիշյալ տեղեկագրի հեղինակ Պարտիզակցին,- որ Բ.Դռնեն առնված հրամանները կը հրամայեին իրենց հողերը քուրդերուն տալ և ոչ երբեք հայոց...»[3]: Հարստահարություններն ու հողազրկումը տարածված էին առանձնապես այն շրջաններում, որոնք բարեբեր էին, օրինակ՝ մուսուլման գաղթականներով լեցուն Կարինի, Բասենի, Ալաշկերտի, Մուշի, Երզնկայի գավառներում: Դեռևս 19-րդ դարի առաջին կեսին Ղ.Ինճիճյանը, հաշվի առնելով այդ քաղաքականության դառը հետևանքները, նկարագրելով Երզնկայի գավառի վիճակը, գրում էր. «Ըստ ոմանց ասելոյ յառաջագոյն ուներ 250 գյուղօրէս: Այլ այժմ ի պատճառս կեղեքելոց իշխանաց, բազում գիվղօրեք նոր լքեալ կան և անմարդաբնակ, և գիվղօրեք ինչ կործանեալք, կամ ըստ կիսոյն քայքայեալք»[4]:

Կամ Բասենի գյուղերի բնակիչների մեծ մասը քրդերի և թուրքերի հարստահարություններից խուսափելու համար «անդադար փոփոխին ի տեղւոջէ ի տեղի»[5]:

[1] «Մշակ», 1879, նո. 95:
[2] Նույն տեղում, 1880, նո. 22:
[3] Նույն տեղում:
[4] *Ինճիճյան Ղ.,* Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, էջ 93:
[5] Նույն տեղում, էջ 93, 98:

Այդ ամենը, սակայն, 19-րդ դարի առաջին տասնամյակում: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ վիճակում կլիներ արևմտահայ գյուղացիությունը դարի երկրորդ կեսին:

Ինչպես գրում է ճանապարհորդ Ջեմս Կրիկը, «ամբողջ երկրները մնում են անմշակ, ու բռնավորությունը, որ ճնշում է բնակիչների վրա, այնքան մեծ է, որ նրանք պատրաստ են հպատակվել ամեն տեսակ կառավարության, որից կարող են սպասել ապահովություն և խաղաղություն»[1]:

Կարինի նահանգի Քղիի գավառը, ուր տեղավորված էին նաև զգալի թվով քրդեր, աչքի էր ընկնում հարստահարությունների, թալանի, բռնագրավումների բազմաթիվ ու բազմատեսակ երևույթներով: Զրկված ապրուստից, քաղաքական տարրական իրավունքներից, մեծ մասամբ հողատերերի ողորմածության տակ՝ գավառը զուրկ էր նաև հայրենասեր ու բանիմաց հոգևոր առաջնորդից, կրոնական օջախներից: Այս ամենին գումարվում էին քրդերի հարձակումները, թալանը, սպանությունները:

«...Այս գավառն ամեն օր գրեթե նոր թատերախաղ մը կունենա, որու դերասանը քուրդն է, տնօրենը պեյերն, և ողբերգությունը հայ երիտասարդներու վրա կը վերջանա...»[2]:

Եղեռնագործությունների անբաժան մաս էին կազմում հողազրկման դեպքերը. «Պեյերն հողային խնդրո մը նկատմամբ այստեղի հայոց գլխուն հազար ու մեկ փորձանքներ» բերելուց հետո[3], երբ նրանց դեմ առ դեմ մնում է հողազուրկ ու մերկ, ունեցվածքից զուրկ հայը, դրանով էլ չեն բավականանում, և նրանց քշում էին տարագրության:

Ասել, թե Բ.Դուռը «անուշադրության» էր մատնում նահանգում տիրող իրավիճակը, սխալ կլինի: Ընդհակառակը, մեծ մասնակցություն էր ցուցաբերում նահանգի հայ բնակչության անապահովության ու հողազրկման քաղաքականության անցկացման հարցում: Երբեմն-երբեմն նահանգ էին գալիս թուրք վերաքննիչները, «ստուգում» հարստահարությունների և հողազրկման բողոքները, «վերականգնում» արդարությունը: Գալիս էին մուրացկանի նման, բայց Կ.Պոլիս էին վերադառնում հղփացած, ձիերի երամակներով: Այդ ամենը նշանակում է «միջոցներ ընդունել չարագործությունների առաջն առնելու համար»[4]:

Կարինի նահանգում հողազրկման գործընթացը կարելի է բաժանել փուլերի. 1. 1828-1830թթ., երբ տեղի ունեցավ նահանգի հայության գաղթը,

[1] «Մշակ», 1880, նո. 92:
[2] Նույն տեղում, նո. 197:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, նո. 175:

և քուրդ ու թուրք, չերքեզ ու աջար տեր դարձան հայերի հողերին: 2. 1853-1856թթ., երբ ուժեղացավ հակաքրիստոնեական շարժումը: 3. 1877-1878թթ. պատերազմից հետո, երբ որպես պետական քաղաքականություն ընդունվեցին հայության ունեզրկումն ու տնտեսական քայքայումը, հայ ժողովրդին իր հայրենիքից հեռացնելու, Հայաստանն առանց հայերի տեսնելու ծրագիրը: 4. 1894-1896թթ. ջարդերի քաղաքականությունը, որը շարունակվեց ընդհուպ մինչև 1915թ.: Հողազրկման գործում անգերազանցելի դեր ունեին քրդերը: «Արև» թերթի հաղորդման համաձայն, նահանգի Կարմիր վանքի 1000 լիրա գնահատվող հողերը զավթել էին երկու բեկեր: Թե՛ վանքի և թե՛ պատրիարքարանի բողոքները մնացին անպատասխան[1]: Թուրքական այն առածը, թե «հայը ցանում է, քուրդը հավաքում», նահանգում հարստահարությունների ու հողազրկման պատկերավոր արտահայտություն լինելուց բացի, ներկայացնում է նաև այն տխուր իրականությունը, որի մեջ ոգորումների գնով իր չարքաշ գոյությունն էր պահպանում հայ գյուղացին: Իրենց բիրտ ու անասնական գործելակերպով քրդերին չէին զիջում բեյերն ու աղաները: Այդպիսի վկայություններից մեկն է նահանգի Հինձք գյուղի հասարակական այգու զավթումն արյունարբու Մյունիֆ բեյի կողմից: Խորամանկ ու նենգ բեյը, տեսնելով հրաշալի այգին, որոշում է տիրանալ նրան: Նա, նախ այգին ավելի գեղեցկացնելու, բարենորոգելու պատրվակով, իբրև հասարակական պարտք, մի քանի ծառեր է տնկում այգու եզրին: Ապա մի քանի տարի հետո, երբ այդ ծառերն աճում են, փարթամանում, իբրև ամառանոց մի փոքրիկ տնակ է շինում: Որոշ ժամանակ անց բեյը դատարանի օգնությամբ իր վրա է գրանցում այդ այգին: «Ներկայումս այս պարտեզն ու շենքը Կարնո մեջ կարելի է ըսել, հրաշալիք մըն է, զոր ձեռք բերած է աղան դավով, նենգությամբ: Տրված բողոքները ոչ մի նշանակություն չունեցան»[2]:

Մեկ ուրիշ օրինակ. Շիվիշլի գյուղի թուրքերը խլում են Մուտուրկա գյուղի արոտավայրերը, երկու ջրաղացներին ջուր մատակարարող և հողատարածությունները ոռոգող առուները: Եվ ահա, հողազրկված գյուղացիությունը, ուրիշ ելք չունենալով, հող է վերցնում իրենց հարստահարած քրդերից:

Նահանգի հայ գյուղացիության ու քրդերի հողային հարաբերությունների ձևերից մեկն էլ օրթախչիությունն էր: Հողազուրկ հայը, ունենալով սերմացու և լծկան, հող է վերցնում քրդից, պայմանով, որ ստաց-

[1] «Արև», 1914, նո. 10:

[2] Նույն տեղում:

ված բերքը կիսվի: Օրթախչիությունը քրդական հողատիրության եկամտաբեր ճյուղերից մեկն էր: Վերջինս ավելի էր մեծացնում բռնագրավումների ծավալը, և քրդերը տեր էին դառնում լավագույն հողերի մեծ մասին: Նահանգի Արշունի գյուղի 21 չորրոց հողերից՝ 210 սոմարի տեղ, 18-ը պատկանում էր երկու բեկերի, 3-ը՝ գյուղի ամբողջ բնակչությանը[1]:

Կամ Մեոր Տիվլիկ գյուղի 39 չորրոց՝ 312 սոմարի տեղ, հողերից 19-ին տիրացել էին բեկերը, 20-ին՝ թուրքերը, իսկ հայերը մնացել էին առանց հողի: Կեչ գյուղում 5 բեկեր զավթել էին 300 սոմարի տեղ՝ 30 չորրոց հողերի, իսկ գյուղի հայ բնակչությունը 20 չորրոց հող ուներ, Մնկառիճ գյուղում 25 տուն թուրքերն ունեին 10 չորրոց՝ 80 սոմարի տեղ հող, 25 տուն հայերը հող չունեին, Սոգութլի գյուղում 30 տուն հայերը՝ մոտ 150 հոգի, ունեին 2 չորրոց, 16 սոմարի տեղ հող, Խլիճա գյուղում հայերն ունեին 10 չորրոց, 80 սոմարի տեղ հող, իսկ բեկերը՝ 25 չորրոց, Հինձք գյուղի 160 տուն հայերն ունեին 20 չորրոց, 160 սոմարի տեղ, 20 տուն թուրքերը՝ 2 չորրոց, 16 սոմարի տեղ, 18 բեկերը՝ 26 չորրոց, 208 սոմարի տեղ, Թվանջ գյուղում երեք աղաները՝ 8 չորրոց, 64 սոմարի տեղ, 40 տուն հայերը՝ 2 չորրոց, 16 սոմարի տեղ հող ունեին: Ընդհանուր հաշվումներով, 8 գյուղի 885 հայերը, թուրքերն ունեին 142 չորրոց, 1136 սոմարի հող, 83 բեկերն ու աղաները՝ 248 չորրոց, 1984 սոմարի տեղ հող[2]: Այսինքն՝ ամեն մի բեկ ուներ 3 չորրոց հող, իսկ 8 գյուղերի 460 տուն, մոտ 2300 շունչ հայերը՝ 40 չորրոց, 460 սոմարի տեղ հող, 8 գյուղերի 400 տուն թուրքերը՝ 90 չորրոց, 720 սոմարի տեղ հող: Այսպիսով, ամեն մի հայ ընտանիք ուներ 1/12 չորրոց, թուրքերը՝ 1/4 չորրոց հող: Կամ՝ բեկերը յուրաքանչյուր հայ ընտանիքից 36 անգամ շատ հող ունեին, ավելին՝ 6 հոգանոց ընտանիք ունեցող հայն ուներ 1/72 չորրոց հող: Հիշյալ Մյունիֆ բեկը միայն Կարնո դաշտում ուներ 10000 արժեքի հող, Մալիմեզ բեկը՝ 2000 սոմարի հող[3]:

Ահռելի չափերի հասած հողազրկումները ոչ մի արձագանք չէին գտնում Կ.Պոլսում: Ճիշտ էր Ա-Դոն, երբ գրում էր, թե կառավարություն այն իմաստով, ինչով որ հասկացվում է «Տաճկաստանի ասիական վիլայեթներում», գոյություն չունի, ավելին, «Օրենք այն իմաստով, որ հասկացվում է այժմ և օրենքի գործադրություն այն մտքով, ինչ մտքով որ ընդունում է առողջ տրամաբանությունը, Տաճկաստանի ասիական վիլայեթներում գոյություն չունի»[4]:

[1] Նույն տեղում, նո. 12:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] *Ա-Դո,* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 264:

Ե.Լալայանցի տեղեկագրով, նահանգի հայ գյուղացիությանն ըստ կարողության կարելի է բաժանել հետևյալ խմբերի. 1. 40-50 անդամ ունեցող ընտանիքն ուներ 1000 գլուխ ոչխար, 5 լուծ գոմեշ, 10 լուծ եզ, 5 կով, 2 մատակ, 100 օրավար հող, 2. միջին կարողություն ունեցողը՝ կես համբա 30-40 հոգանոց ընտանիք, 400-500 ոչխար, 2 լուծ գոմեշ, 4 լուծ եզ, 3 կով, 1 մատակ, 60 օրավար հող, 3. չքավորի և միջակի միջև գտնվող ռուպ դասը՝ 1 զույգ եզ, 4 կով, 15-20 ոչխար, 10 սոմարանոց հող, 4. մաբաբա, 4 լուծ եզ, 1-2 կով, 1 մատակ, 30-60 օրավար հող[1]:

Պետք է նկատել, որ Լալայանցը տեղեկագիրը կազմում է 1829-1830թթ., երբ դեռևս կատարելագործման չէին հասել թալանը, հարստահարումները և բռնագրավումները: Իսկ դարի վերջին նահանգի հայությունն արդեն անցել էր մի ամբողջ հարյուրամյակ շարունակվող բռնագրավումների քաղաքականության միջով, ունեզրկվել ու հարստահարվել էր:

Պարբերաբար կրկնվող քրդական հարձակումները ոչ միայն արգելքների չէին հանդիպում, այլև արժանանում էին պաշտոնյաների հովանավորությանը: «Մշակի» թղթակիցը հայտնում է, որ 1880թ. հոկտեմբերի 27-ի գիշերը քրդերը հարձակվում են Կարինի Ամատ գյուղի վրա: Հայերը պաշտպանվում են մեծ ճիգերով: Թեև գյուղը գտնվում էր գավառանիստ Թոփրակ-Կալեից յոթ վերստ հեռավորության վրա, սակայն ոչ գավառապետը, ոչ էլ ոստիկանապետն օգնելու մտադրություն անգամ չունեին: Հակառակը, նրանք ավելի էին գրգռում քրդերի կրոնամոլությունը[2]:

Հարստահարությունների ու քրդերի անարգել գործունեության պատկերավոր արտահայտությունն է հանդիսանում Է.Դիլոնի հանդիպումը և զրույցը քուրդ դահիճ Մուստիգոյի հետ: Կաշառքի օգնությամբ իրավունք ստանալով հանդիպել բանտարկված մարդասպանին՝ հեղինակը տրված հարցերի օգնությամբ ներկայացնում է հայ ժողովրդի դժոխային վիճակը: Է.Դիլոնի այն հարցին, թե բանտարկության պատճառը հայերի նկատմամբ գործադրված թալանն ու սպանություններն են, վայրենի քուրդը պատասխանում է. «Ինչ են նրանք, որ ես վիճակով տանջվեմ», ապա դահիճը հայտարարում է, որ բանտարկության պատճառը թուրք գնդապետի կնոջ բռնաբարությունն է: Հետո Մուստիգոն պատմում է հայերի նկատմամբ գործադրված իր քաջագործություններից մեկը, երբ Ղարաքիլիսա գյուղից հինգ զինված քրդեր տանում են գյուղի ոչխարի հոտը: Հայերը հետապնդում են, խլում 40 ոչխար, բայց

[1] *Ե.Լալայանց,* Կարնո գավառի տեղեկագիրը, տես՝ ԲՀԱ, 1974, էջ 8-9:
[2] «Մշակ», 1880, նո. 204:

ինչ կարող էին անել անզեն գյուղացիները: Քրդերը ոչխարները հասցնում են Կարին և վաճառում[1]:

«Մենք աշնանը ձեռք ենք բերում այնքան հաց ու դրամ, որքան անհրաժեշտ է մեզ ձմռանը»,- հայտարարում է Մուստիգոն և պատասխանելով հեղինակի հաջորդ հարցին՝ ասում է. «Մի անգամ գայլին հարցնում են՝ պատմիր մեզ որևէ բան ոչխարների մասին, որոնց դու հոշոտել ես, իսկ նա պատասխանում է. ես կերել եմ հազար ոչխար, նրանցից որի՞ մասին եք դուք խոսում»[2]:

Բացի Մուստիգոյից, նահանգի հայության գլխին պատուհաս էր նաև քոռ Հուսեինը: Նրա ասպատակություններից խուսափելու համար ժողովուրդը գաղթում էր հարազատ վայրերից: Միայն մեկ անգամ հարձակման ժամանակ բեկը Ղարաքիլիսա գյուղից տարել է 2500 ոչխար, բազմաթիվ ձիեր, կով, 500 ֆունտ գումար, այրել է 9 գյուղ, սպանել 10 մարդ, կտրել 10 մարդու աջ ձեռքը, մի քանիսի ականջները, քիթը, 1890թ. ընթացքում առևանգել 5 հայ աղջիկ և այլն[3]:

Բայազետի փոխհյուպատոս Շախովսկին Կ.Պոլիս ռուսական դեսպանին ուղղված զեկուցագրում հայտնում էր. «Հայ բնակչությունը գտնվում է քրդերի ձեռքում, նրանք տանում են հոտերը, խլում են հողերը, փախցնում կանանց ու աղջիկներին, և այդ բոլորը միանգամայն բացահայտ, անպատիժ...»[4]:

1883թ. դեկտեմբերին Կարինի անգլիական հյուպատոսը հեռագրում է Պոլիս, որ քրդերը թալանել են, ավերել Բայազետի Ազաբ գյուղը և մնացել անպատիժ[5]:

Իրենց սանձարձակ գործողություններով արևմտահայ գյուղացիության տառապանքները բազմապատկում էին ոստիկանությունը, զինվորական մասերը, համիդիե գնդերը:

Է.Դիլոնի գնահատմամբ, եթե 1847-1891 թվականները Թուրքիայի պատմության մեջ հայտնի էին որպես ամոթալի վարչության տարիներ, ապա 1891թ. սկսվում է բացահայտ կոտորածների շրջանը, որտեղ առաջին դերակատարները համիդիե գնդերի քրդերն էին: 1892թ. այդ գնդերի կապիտաններից մեկը, Բուլանըխի Գեմենշեյկ գյուղից, ձիերի համար պահանջում է անասնակեր: Գյուղապետերը հայտնում են, որ ունեցած

[1] *Дилон Э.*, տես՝ Положение армян, стр. 348.
[2] Նույն տեղում, էջ 348, 349:
[3] Նույն տեղում, стр. 349.
[4] *Лазарев М.С.,* Курдский вопрос 1891-1917, М., 1972.
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 0, 195/1481, էջ 360:

անասնակերը չի բավարարում իրենց անասուններին: Հանդգնության համար կատաղած քուրդը սպանում է երկու գյուղապետի: Նույն գավառում նույն տարում «բացահայտ ու անպատիժ կատարվել են մոտ 30 նման սպանություններ»[1]:

Բասենի Կատաբազ գյուղի բնակիչները, ենթարկվելով անընդմեջ հարձակումների, օր օրի կորցնում էին ունեցվածքը, անասունները, աշխատանքային գործիքները, կահկարասին: Մեկ օրում հիշյալ գյուղից քրդերը տարել էին 22 եզ, 28 ձի, 60 կով, 20 ոչխար[2]:

Հայ գյուղացու տնտեսական ճնշման, շահագործման ուժեղացման կարևոր վկայություն է Ֆ.Դ. Գրինի կազմած հաշվարկը: Այսպես, եթե 1880-1882թթ. աղան ստանում էր 4141 պիաստր տուրք, բացի այդ, օգտագործում էր ճորտացված գյուղացիների աշխատանքը, բանեցնում նրանց 450 ռ. արժեքի 90 լծակները, իր տնտեսության մեջ աշխատեցնում էր 314 մարդու, որոնց աշխատանքը գնահատվում էր 785 ռուբ.: Նշված երեք տարիներին աղան ստացել է 5376 ռուբ. օգուտ: 1891-1893թթ. այդ գումարն արդեն կազմում էր 10.973 ռուբ.[3]:

Եթե այս ամենին գումարենք դարի վերջին ահռելի չափերի հասած հողային զավթումները, ապա հայ գյուղացու տնտեսական վիճակի նկարագիրը կստանա աղետալի բնույթ: Այսպես, Կարինի նահանգի 36 գյուղերից դարավերջին տարբեր տարիներին խլվել են 362 հողակտոր՝ 1632 դեսյատին, 40 արոտավայր՝ 190 դեսյատին, 60 այլ հողակտորներ՝ 280 դեսյատին, ընդամենը՝ 2102 դեսյատին, դրան գումարած այն հողերը, որոնք պարտքի դիմաց բռնագրավվել էին բեկերի, աղաների, վաշխառուների կողմից[4]:

Թուրքական պառլամենտի նիստերից մեկում Կարինի պատգամավոր Պալարյանն իր ելույթում խոսում է այն մասին, որ քրդերի հրոսակախմբերի ղեկավարները, եթե երբեմն բռնվում են, ապա շատ շուտով ազատվում են, որովհետև 1000 ոսկին լուծում է բոլոր հարցերը, և իր դաժանություններով հռչակված երեկվա քուրդ թափառաշրջիկ թալանչին ներկայացվում է որպես անմեղ գառ: Երբ նման դեպքերում պատասխան ենք պահանջում կուսակալներից, շարունակում է Պալարյանը, նրանք պատասխանում են, թե «այդ գործին մեջ պետական գաղտնիք մը կա»[5]:

[1] *Дилон Э.,* նշվ. տեղում, стр. 326.
[2] Նույն տեղում, էջ 338:
[3] *Грин Ф.Д.,* Армянский кризис. . . СПб., 1895, стр. 260.
[4] *Бекгулянц Р.,* նշված գիրքը, էջ 67:
[5] *Ղորմիայան Լ.,* նշված գիրքը, էջ 296:

Գաղտնիքը, սակայն, հնարավոր է պարզել. դա թուրքական կառավարության այն քաղաքականությունն է, որով քրդերի օգնությամբ ոչ միայն ձգտում էր հայրենիքից հեռացնել հայ ժողովրդին, կործանել նրա տնտեսությունը, այլև ճնշել յուրաքանչյուր շարժում, իսկ պատերազմների ժամանակ պատնեշ ստեղծել ռուսական բանակների դեմ:

Այս առումով ճիշտ էր Ա.Թոխմախյանը, երբ գրում էր. «Քրդերը չարագործ ձեռներում միմիայն գործիքներ են, կտրեցեք այդ ձեռքերը, և քրդերը կմնան հայերի մշտնջենավոր բարեկամները»[1]:

Կարինի նահանգի գյուղացիության դրությունն ավելի էր բարդանում ռուս-թուրքական պատերազմների ժամանակ:

«Մշակում» արտատպված «Մասիսի» թղթակցություններից մեկն այդ առթիվ հայտնում էր. «Բասենցիքս, արդեն պատերազմեն առաջ քուրդ, չերքեզ և այլ բարբարոսաց բռնություններեն, գողություններեն և կառավարության ասոնց նկատմամբ անգործադիր և թույլ ընթացք մը ունենալեն զզված էինք: Պատերազմի ատենը ալ շարունակ երկու տարի ոչ վեստակնից մերն էր և ոչ երկրագործական արդյունք, որոնց մեկ մասը կանոնավոր զորաց կուտայինք սենթով, մեկ մասն ալ բանակեն Կարին, Կարինեն բանակ երթևեկող անզորապետ հիվանդ և վիրավորյալ զորքերու կուտայինք առանց սենթի, ձրի մեկ մասն ալ քուրդ ու չերքեզ և գավառներեն եկող թուրք պաշըպոզուկներուն, որ առանց (տիշ քիրասիի) չէին ուտեր յուղի մեջ խորոված ոչխարն ու գառը, և չէին մեկնիր գյուղերեն՝ առանց ավարառութեան ձի, կարպետ, պայուսակ, բանակին մեջ ուտելու համար պաշար և հարսներու արծաթեղենք, և երբեմն հարսներու գլուխ զարդ, ոսկիք և այլն, առանց մեկ ալ ստանալու համար եթե ձեռք ձգեին կանանց, այրերը, մերկ պառկեցնելով հազար ու մեկ տեսակ սարսափելի տանջանքներ կուտային...»: Ապա թղթակիցը հայտնում է, որ միայն Բասենի 25 քրիստոնեաբնակ գյուղերից զորքի կարիքների համար սայլավորների հետ յոթ հարյուր սայլ են տարել, որոնցից վերադարձրել են միայն հինգ հարյուրը: Գյուղացիների բողոքին պետական պաշտոնյաները պատասխանում են. «Ինչ ընենք, պատերազմ է, այսպես կըլլա, ուզեք չուզեք պիտի քաշեք»[2]:

1877-78թթ. պատերազմի ժամանակ ողբերգական վիճակ ստեղծվեց Մուշի, Էրզրումի նահանգի գյուղացիության համար: Շարժվելով Դիարբեքիրից՝ թուրքական բանակը տեղավորվում է նշված շրջաննե-

[1] *Թոխմախյան Ա.,* Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882, էջ 52:
[2] «Մշակ», 1879, նո. 79:

րում: Յուրաքանչյուր հայ ընտանիք պարտավոր էր կերակրել 5-20 զինվոր, 5 ձի: Օգտագործված սննդամթերքի համար վճարվում էր անդորրագիր, իբր պատերազմից հետո վճարելու կամ օգտագործածը հարկերի դիմաց հաշվելու նպատակով: Այդ ճանապարհով հայ գյուղացին անգթորեն հարստահարվում էր: Սակայն պատերազմն ավարտվում է, և կառավարությունը պահանջում է հարկերը: Երբ գյուղացին բողոքում է անօրինական պահանջից, նրան պատասխանում են, թե կառավարությունը զորքին տված օգնությունը ճանաչում է որպես նվիրաբերություն: Նահանջելով Էրզրումից՝ զորապետերը գյուղերից պահանջում էին սննդամթերք: Երբ հայերը բողոքում էին, զինվորները, մտնելով տները, բռնագրավում էին հացահատիկի վերջին մնացորդները: Ավելին, որպեսզի ավելորդ պահանջներ չլինեին, Սաիդ փաշան հրամայում է հավաքել բոլոր անդորրագրերը և ոչնչացնել[1]:

1877-78թթ. պատերազմի ժամանակ Բասենի, Ալաշկերտի, Ղարաքիլիսայի, Դիադինի, Բայազետի շրջաններով թուրքական բանակը 5 անգամ 7 ամսում գնացել է ճակատ և վերադարձել: Այդ բոլոր տեղաշարժերն ուղեկցվում էին թալանով, բռնագրավումով, սպանություններով: Այդ կացությունը նկարագրող հեղինակներից մեկը գրում էր, որ պատերազմից առաջ այն հայերը, «որոնք ունեին լծկան գոմեշներ, մինչև 40 եզներ, 30 մատակներ, մինչև 1000 գլուխ ոչխարներ, մինչև 10-15 հատ քուռկան ձիանք (նժույգներ), այժմ այնպես աղքատացել են, որ մուրացկաններ են դառել»[2]:

Հարստահարություններն ու թալանը ոչ միայն չէին վերջանում, այլև կապված թուրքական ֆինանսների անբավարարության ու օտարերկրյա պարտքերի վճարման անճարակության հետ՝ ավելի էին ուժեղանում:

1877-78թթ. պատերազմից հետո դրախտային խոստումներ տալով՝ Անդրկովկասից ու Հյուսիսային Կովկասից կազմակերպվեց մահմեդականների ներգաղթ:

1879թ. հոկտեմբերին Էրզրումի փաշան Տրոտերին հայտնում է, որ Կարսի, Արդահանի, Կաղզվանի շրջաններից սպասվում է 10.000 ընտանիք, 50-60 հազար մահմեդականների գաղթ[3]: Թերթի հաղորդման համաձայն, նույն թվականին միայն Կարսից գաղթել էին 41.691 մահմեդական[4], Հյուսիսային Կովկասից՝ 25.000 չերքեզ[5]:

[1] *Лазарев Як.Д.,* Причины бедствий армян…, Тифлис, 1895, стр. 5.
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 42, գ. 1, գ. 24, թ. 15, 16:
[3] *Ролен-Жекмен М.Г.,* Армения, армяне и трактаты, Брюссель, 1879, стр. 67.
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 68:

Ընդհանրացնելով անգլիական հյուպատոսների և փոխհյուպատոսների զեկուցագրերում բերված հաղորդումները գաղթականության քանակի, տեղաշարժման մասին՝ Տրոտերը եզրակացնում է. «Կարելի է կարծել, որ մենք վերադարձել ենք ժողովուրդների մեծ գաղթի ժամանակաշրջանը»[1]:

Եվ ինչն է կարևորը: Կառավարությունը, հոգալով գաղթականների «անվտանգությունը», տեղական քրիստոնյաներից «պաշտպանելու» նպատակով, նրանց զինել էր: Գաղթականները, օգտվելով այդ հնարավորությունից, զենքի ուժով տեղավորվում էին հայկական գյուղերում: Կառավարության նման վերաբերմունքը գնդապետ Վիլսոնը գնահատում է որպես «հանցագործություն»[2]:

Թեև կառավարությունը գաղթականներին տեղավորելու համար նշանակել էր կոմիսարներ, սակայն նրանք ոչ թե կատարում էին իրենց օրինական պարտականությունը, այլ բորբոքելով զինված այդ հրոսակների կրոնական մոլեռանդությունը՝ հարձակումներ էին կազմակերպում հայկական գյուղերի վրա: Այդ միջոցների գործադրման հեղինակ կոմիսարներից մեկը կարճ ժամանակում կուտակում է 40 հազար (ավելի քան 90 հազար ֆրանկ) թուրքական լիրա[3]:

«Ես չգիտեմ,- գրում է Ռոլեն-Ժեկմենը,- կարելի՞ է հանդիպել ուրիշ մեկ այլ երկրի, որի կառավարությունը այդպես ձգտեր իր սեփական նահանգները հրապուրել վայրի հորդաներին և նրանց դնել երկընտրանքի առաջ. կամ ապրել թալանով և ավազակությամբ, կամ զոհվել աղքատությունից»[4]:

Եվ իրոք, կառավարության հիմնական նպատակն այն էր, որ արևմտահայ գյուղացիության հաշվին տեղավորեր ու կերակրեր գաղթականությանը: Գաղթական չերքեզները սկզբում տեղավորվեցին լքյալ գյուղերում, որոնց բնակիչները 1828-1830, 1878-1879թթ. գաղթել էին Արևելյան Հայաստան: Իսկ հետո, տեղական իշխանությունների օգնությամբ, խլում էին հարևան հայաբնակ գյուղերի հողերը, տները: Այս գործում աչքի ընկավ Մուշի գավառապետը. «Մահմեդ փաշան այնքան եռանդով իր բարեկամ չերքեզները նպաստավորելու ետևեն էր՝ վարդենիսցիներեն ստորագրություն կը խլեր՝ զանոնք հողազրկելու համար»: Արդյունքը եղավ այն, որ Վարդենիսից խլվեց 2000 օրավար հող և նվիրաբերվեց չերքեզներին[5]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 69:
[4] Նույն տեղում, էջ 68-69:
[5] «Մշակ», 1882, նո. 98:

Նահանգի հարստահարիչների բանակը, հանձին չերքեզների, լրացվեց արյունարբու և մոլեռանդ մի զորաշարով ևս: «Բնակեցված» չերքեզները, ամայացնելով նահանգը, շուտով լքեցին իրենց զավթած գյուղերը: Նահանգի բարեբեր հողերը մնացին անօգտագործելի, որոնք մշակելու իրավունք չունեին նրանց նախկին տերերը՝ հայերը: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ «ժողովուրդների մեծ գաղթը» սկսվել է դեռևս 1879 թվականից, «երբ ռուսական նոր գրված գաւառների թուրք գաղթականները սկսեցին գաղթել դէպի Տաճկահայաստան, նոյն օրերից սկսեալ գյուղացի հայ բնակչաց խաղաղութիւնը վրդովեցաւ, որովհետեւ չը մնաց չարիքներ, որ թուրք գաղթականաց ձեռքով չը գործուէր...»[1]:

Թուրքիան ոչ միայն աչքի էր ընկնում իր թույլ տնտեսությամբ, այլև անհամակարգ հարկային քաղաքականությամբ: Այդ ամենի պատճառն օրենսդրության բացակայությունն էր: Մինչև 16-րդ դարի առաջին կեսը Թուրքիայում չկար մշակված պետական օրենսդրություն: Գործադրության մեջ էին զանազան օրենսդրական ակտեր՝ սկսած մոնղոլական բանավոր ու գրավոր օրենքներից, վերջացրած թուրքմենական քոչվոր ցեղերի, առանձնապես ակ-կոյունլուների ցեղապետ Ուզուն Հասանի օրենքների ազդեցությունը: Յուրաքանչյուր նահանգ, գավառ, գավառակ ղեկավարում էին բազմապիսի, իրար հակասող ու հակադրող օրենքներով: Այսպես, օրինակ, եթե Կարինի նահանգի օրենքներով հողատերն իրավունք ուներ մինչև տասը տարի ժամկետով փնտրել և հետ բերել փախած գյուղացուն, ապա նույն օրենքն անգործադրելի էր, ասենք, Վանի նահանգում կամ այլուր: Ավելին, պետական հարկային ատյանի մշակած սայլային ու ճանապարհային տուրքերը տարբեր նահանգներում ունեին թե՛ տարբեր ժամկետներ և թե՛ վճարման տարբեր չափեր: Հարկային քաղաքականությունն ավելի էր ծանրանում, որովհետև պետությունից բացի, հարկեր նշանակելու իրավունք ունեին թե՛ նահանգապետը, թե՛ գավառապետը և թե՛ զինվորական հրամանատարությունը: Առանձին դաժանությամբ էր իրականացվում հարկահավաքման գործը: Այստեղ որոշիչ դերը պատկանում էր հարկահավաքման իրավունքն աճուրդով գնած կապալառուին, որի իրավասության անբաժանելի մասն էր կազմում հարկերի չափի ու ժամկետի սահմանումը: Բնական է, որ կապալառուն ձգտելու էր ավելի շատ հավաքել, որպեսզի հատուցվի թե՛ կապալավարձը, թե՛ ստեղծվեն հավելյալ միջոցներ:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 42, գ. 1, գ. 24, թ. 27:

Կարինի նահանգի պատվիրակ Վ.Վարդապետ Պարտիզակցին, անգլիական հյուպատոս Տրոտերին ուղղված տեղեկագրում խոսելով հարկահավաքության կողոպտիչ, ավերիչ բնույթի մասին, բերելով նահանգի օրինակը՝ գրում էր. «Ժողովուրդը զինվորական իշխանության ձեռքով վճարում է՝ 1) ուղղակի կայսերական գանձարանին, 2) տեղական ժամանակավոր իշխանությանը, դարձյալ գանձարանի անունով, 3) նա (գյուղացին– Հ.Զ.) տալիս է ազալիկ կամ քեոֆիրիկ կոչված հարկը, 4) նրանք (հայ գյուղացիները– Հ.Զ.) պարտավոր են վճարել այն թափառական ցեղերի 3 կամ 4 տարվա հարկը, որոնք երբեք կառավարությանը հարկ չեն վճարում, և վերջապես ժողովրդի վրա պարտականություն է դրված պետք եղած ծառայությունները անել բանակին և նրանց ձրի կերակրել: Ուրեմն, միայն կառավարության նշանակած հարկը պետք եղածից հինգ անգամ ավելի է, էլ մեկ կողմ թողած այնքան կողմնակի հարստահարությունները, ավարառությունները, կողոպտությունները, հափշտակությունները և հազար ու մի անիրավությունները»[1]:

Ահա թե ինչու թուրքական տեղական պաշտոնյաները, առանց պատասխանատվության զգացումի, անտեսելով օրենսդրությունը, վարվում էին այնպես, ինչպես իրենց ցանկալի ու շահավետ է: Այդպիսի անձինք առավել սանձարձակ էին դառնում հարկային քաղաքականության բնագավառում: Հենց նրանց էլ նկատի ունենալով էր, որ «ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի» փաստաթղթի հեղինակները գրում էին, թե այդ մարդիկ «կամ բոլորովին ապիկար և անհմուտ տեղական պիտոյից և քաղաքական օրինաց, և կամ ավելի օգտակար եղած են իրանց անձին, քան երկրին»[2], ապա ավելացնում. «մեր երկրին մեջ ոչ թե օրենքը կը տիրե, այլ քմահաճ կամքը»[3]:

Օգտվելով այն հանգամանքից, որ օրենքները գրված են թուրքերեն և գյուղացիության մեծ մասը անտեղյակ է այդ օրենքների բովանդակությանը, պաշտոնյաները «ըստ կամի կմեկնեն և կը գործադրեն» դրանք՝ դուռ բացելով հարստահարությունների համար: Եվ քանի որ չկա հարկահավաքման կանոնավոր համակարգ, ապա վերջինս վեր է ածվում հարստահարման միջոցի «առավելապես քրիստոնեից վրա»[4]:

Օսմանյան կայսրությունը տնտեսական ու ֆինանսական փլուզումից փրկելու ուրիշ ելք չգտնելով՝ սուլթանն ու Բ.Դուռն ավելի էին ծան-

[1] «Մշակ», 1880, նո. 4:
[2] *Լեո,* Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 135:
[3] Նույն տեղում, էջ 137:
[4] Նույն տեղում, էջ 139:

բացնում հարկային քաղաքականությունը: Վերջինս, սակայն, կատարվում էր այնպիսի խառնաշփոթությամբ, որ հնարավոր չէր պատկերացում կազմել հարկային համակարգի մասին: Յուրաքանչյուր պետության ներքին քաղաքականության առանցքային հարցերից մեկը հանդիսացող հարկային համակարգն էությամբ բաժանվում է երկու մասի՝ ուղղակի և անուղղակի հարկերի: Բայց այդպես չէր Թուրքիայում, ուր «հարկերը երեք խմբի են, այն էլ իրենց ինքնուրույն բաժանմունքներով: Ուղղակի և անուղղակի պետական կամ օրինական հարկերի վրա ավելանում է… անընմբռնելի մի հարկ ևս, ապօրինի հարկ: Զուր տեղը կորոնեիք դուք քաղաքատնտեսական բառարաններում մի այդպիսի վայրենի հասկացողություն,- գրում է Խաժակը:- Ամեն հարկ օրենքով է գնվում, իսկ ապօրինի հարկ ոչ մի տեղ չի կարելի վերցնել, բացի Տաճկաստանից...»[1]:

Ապօրինի հարկերը «ուժեղի գերագույն իրավունքով»[2] գանձում էին հազարալեզու, հազարադեմ թափառաշրջիկ ցեղերը, քրդերը, չերքեզները, լազերը, ոստիկանները, զինվորական հրամանատարությունը:

Թուրքական հարկային քաղաքականության սկզբնաղբյուրն իսլամի դոգմաներն էին: Այս առումով եթե վերլուծենք հարկային համակարգը, ապա այն կարելի է բաժանել երկու խմբի՝ շարիաթից և սովորույթներից բխող: Առաջին խմբի մեջ մտնում էին աշարը, խարաջը, ջիզիեն:

«Այս շարիաթական հարկերի հիման վրա,- գրում է Մ.Զուլալյանը,- տարբեր ժամանակներում ու տարբեր տեղերում նշանակվել ու կիրառվել են բազմաթիվ ու բազմապիսի գանձումներ (համաձայն թուրք պատմաբանների ուսումնասիրությունների՝ ավելի քան 80 տեսակ)»[3]:

Սովորույթներից բխող հարկերը նշանակվում էին սուլթանի կողմից, հատկապես պատերազմների ժամանակ, որոնք իբր ժամանակավոր էին, բայց արմատավորվում էին և «օրինականացվում»: Այս հարկերի նպատակը պետության հրատապ հոգսերն ու կարիքներն ապահովելն էր:

Հարկային քաղաքականության նման սկզբունքներն անսահմանափակ ասպարեզներ էին բացում թե՛ պետության և թե՛ պաշտոնյաների ու տեղական իշխանությունների համար: Չարագործ համակարգը հակաքրիստոնեական քաղաքականության մի ամբողջ ինստիտուտի էր վերածվել: Այդ պայմաններում անգամ պետական օրինական հարկերը կրում էին կամայական բնույթ:

[1] *Խաժակ,* Հարկերը Տաճկաստանում, Բաքու, 1903, էջ 20-21:
[2] Նույն տեղում:
[3] *Զուլալյան Մ.,* Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 96:

«Մի կարծեք, թե օրինական տուրքերը որոշ սահման մը ունեին, ոչ, անոնք ուզածիդ չափ կընդարձակվեին և առաձգական են բառի ամենավատ իմաստով»[1]:

Քրիստոնյա հպատակները, ի տարբերություն մահմեդական բնակչության, վճարում էին ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, ապօրինի տուրքերն ու հարկերը: Արևմտահայության հարկային լծի տակ անգթորեն տառապելու պատկերավոր նկարագիրն է տալիս Ք.Փափազյանի՝ թուրքական դատարանում արտասանած ճառը: «Այգիի տեր մը պարտի վճարել որոշ մի տուրք այգիի գետնին, այսինքն հողին համար, մի տուրք անոր ծառերուն համար, մի տուրք անոր որթերեն քաղելու խաղողին համար (ռուխսաթ թեզ քերեսի), մի տուրք անոր որթերեն քաղած խաղողին համար, մի տուրք անոր խաղողեն վազած գինիին համար, մի տուրք անոր խաղողին չաչեն (ճիպրե) վազելու օղիին համար, մի տուրք վազած օղիին համար նն, նն», այսինքն՝ այգու տերն ու պետությունն այգու «ընդհանուր արդյունքեն գրեթե հավասար բաժիններ առած են»[2]:

Պարզվում է, որ խաղողի այգու տերը պարտավոր է վճարել յոթ «օրինականացված» հարկ: Վերջին հաշվով ստացվում էր այնպես, որ այգեգործն իր դառն աշխատանքի վաստակը ուղղակի կիսում էր պետության հետ, և դեռ պետք է ավելացներ այդ ամենին նաև ջրի, ճանապարհի, վաճառելու համար սահմանված հարկերը:

Հարկահավաքության պատկերն ավելի ամբողջական է դարձնում հետևյալ փաստը: Հողատերը ստացված բերքի 39,3 տոկոսը վերցնում էր իրեն, որի 12,5 տոկոսը հանձնում էր պետությանը: Բերքի 26,2 տոկոսը բաժին էր հասնում գյուղի տնօրեններին, վաշխառուին, 34,5 տոկոսը մնում էր գյուղացուն: Այսինքն՝ 95 տոկոսը կազմող գյուղացիությանը մնում էր բերքի 34,5 տոկոսը, 5 տոկոսը կազմող հողատեր-վաշխառու-հարստահարիչ խմբին՝ 65,5 տոկոսը[3]:

Այժմ ծանոթանանք և վերլուծենք հողային քաղաքականության առանցքը կազմող հարկերը, նշենք նրանց քայքայիչ ազդեցությունն արևմտահայ գյուղացիության վրա:

Գանձվող հարկերից ամենաածանը աշարն էր:

Աշարը արաբերեն բառ է, որը նշանակում է տասանորդ: Աշարը, ի տարբերություն մյուս հարկերի, ուներ երկու առանձնահատկություն.

[1] *Բեռնշտայն Էդ.,* Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժնև, 1906, էջ 19:
[2] Բռնության դեմ, Աթենք, 1894, էջ 83:
[3] *Алимов А.,* Турция. Տե՛ս Коммунистическая академия (сборник), М., 1934, стр. 27.

նախ, որ գանձվում էր բնամթերքով, երկրորդ, որ հավաքվում էր մյուս հարկերի հետ:

Աշարը հարկվում էր ինչպես երկրագործական աշխատանքից, այնպես էլ այգեգործությունից, իսկ ընդհանրապես այն, ինչ ստացվում էր հողից, ենթակա էր աշարի հարկման: «Մշո դաշտի մեջ ամենափոքր այգու աշարը 2-2,5 ոսկի է, նույնն է ամենափոքր բոստանի համար»[1]:

Խաժակի վկայությամբ, մրգերի աշարը գանձվում էր միայն դրամով:

Կարինի ռուսական հյուպատոսը 1872թ. զեկուցագրում հայտնում է, որ 1866թ. աշարը գանձվել է 15 տոկոս, 1867թ., 1870թ.՝ 12,5 տոկոս, 1866-67թթ. աշարից նահանգում հավաքվել է 152,900, 1867-68թթ.՝ 184,470, 1868-1869թթ.՝ 149,930, 1869-1870թթ.՝ 177,782, 1870-71թթ.՝ 195,000 լիրա[2]:

Չնայած տասանորդը սահմանվում էր 12,5 տոկոս, բայց հավաքման գործընթացում կրկնապատկվում էր: Լ.Սարգսյանցը վկայում է. «Այդ տասանորդ հարկը (աշար), որ օրենքով առաջ 10 տոկոս էր, հիմա 12 տոկոս, 1/2 հավաքելու ձևի շնորհիվ դառնում է 25 տոկոս և ավելի»[3]:

Աշարի հավաքման իրավունքը վաճառվում էր: Գնողը, իր հերթին, ըստ գավառակների, գյուղերի, նույնպես վաճառում էր գանձման իրավունքը: Ստացվում էր այնպես, որ յուրաքանչյուր կապալառու ձգտում էր հավաքել ավելին, որպեսզի փոխհատուցվեր կապալավարձը. «Եվ իրականում հավաքվում էր այնքան, ինչքան ցանկանում էր աղեն»[4]:

1897-1898թթ. տվյալներով, Կարինի նահանգում հավաքվել է 4.100.000 լիրայի աշար[5]:

Խարաջ կամ գլխահարկ – այս հարկի նախնական ձևերը հանդիպում են Հունաստանում, Հռոմում, Եգիպտոսում, մոնղոլական հարկային համակարգում: Ժամանակի ընթացքում խարաջ բառը ստացել է տարբեր իմաստ: Օրինակ, Թուրքիայում այն հիմնականում նշանակում էր ապրելու հարկ: Այսինքն՝ քրիստոնյա հպատակները պարտավոր էին վճարել հարկը որպես հատուցում այն «գթասրտության», որ կայսրությունում ապրելու իրավունք ունեին: Խարաջ հարկը նշանակվել է Օսմանի ժամանակներից: Հարկահավաքը կոչվում էր ղոլճի: Նա երեխայի հարկատու լինելը որոշում էր թելով: Նախ թելով չափում էր երեխայի

[1] *Խաժակ,* նշված գիրքը, էջ 75:
[2] *Համբարյան Ա.,* նշված գիրքը, էջ 108:
[3] *Սարգսյանց Լ.,* Այց Թուրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890, էջ 143:
[4] *Համբարձումյան Վ.,* Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 36:
[5] *Лаврионович Ю.,* Экономическое положение, Տե՛ս Турецкий сборник, СПб., 1909, стр. 154.

վիզը, ապա թելի երկու ծայրերը տալիս էր երեխային: Վերջինս ատամներով պահում էր թելը, իսկ հարկահավաքը օղակը փորձում էր անցկացնել երեխայի գլխից: Եթե օղակը անցնում էր գլխով, ուրեմն երեխան հարկատու էր: 18-րդ դարի վերջում յուրաքանչյուր քրիստոնյա վճարում էր 10 դահեկան, 1834թ.՝ 20 դահեկան: Աբդուլ Մեջիդի ժամանակ խարաջը հասավ 30 փարայի, 1877-78թթ. պատերազմից հետո խարաջը հասավ 37 1/4 դահեկանի: 1850թ. սուլթանական հրամանով խարաջ գանձելու իրավունքը տրվում էր կրոնական պետերին, որոնք յուրահատուկ միջնորդ էին դառնում կառավարության և ժողովրդի միջև[1]:

19-րդ դարում խարաջը կարծես կերպարանափոխվեց՝ ստանալով նաև հողահարկի իմաստ: Խարաջը աշարից տարբերելու համար այն հողերը, որոնցից գանձվում էր գլխահարկը, անվանվում էին խարաջին: Բացի հողահարկի իմաստից, խարաջի մեջ մտնում էր նաև ջիզե–գլխահարկի իմաստ, որը սկզբում 35 ակշե էր, ապա հասավ 35-55-ի[2]:

Խարաջը գոյությունը պահպանեց մինչև 19-րդ դարի առաջին կեսը և հանդես եկավ նոր անվանումով՝ բեդիլի ասկերի, զինվորական ծառայության փոխարեն: Հարկ վճարող ոչ մուսուլմանները կոչվում էին բեդիլչիներ: Բեդիլչի ասկերին գանձվում էր 5-ից մինչև 75 տարեկան տղամարդկանցից: Սկզբնական շրջանում հարկը գանձվում էր 20 դուրուշ, ապա այն ավելացավ՝ հասնելով 37,5 դուրուշի: 1897-1898թթ. Կարինի նահանգում հավաքվել է 886210 թուրքական լիրայի զինվորական հարկ[3]: Կարինի ռուսական հյուպատոսն իր զեկուցագրում նշում է, որ քրիստոնյաներն այս հարկը վճարում են ծնված օրվանից մինչև գերեզման, թեև այն սահմանվում էր 5-50 տարեկան տղամարդկանց վրա: 32 պիաստր հավաքվում է այն ժամանակ, «երբ դեռևս չի ծնվել»:

Նույն զեկուցագրում հեղինակը հայտնում է, որ Կարին քաղաքում կան 8000 զինվորական հարկի վճարողներ:Նրանցից հավաքված հարկը կազմում էր 84.000 պիաստր, այսինքն՝ յուրաքանչյուր քրիստոնյա տղամարդ վճարել է 21 պիաստր[4]:

Էմլաքը կամ կալվածահարկը կազմված է երկու մասից՝ ա) հողային հարկ կամ արագը վերգսի, բ) շինությունների հարկ, էմլաք կամ միվլքի: Հարկը նշանակվում էր կալվածքի արժեքի 4 տոկոսի վրա, հողից ստացված եկամտի 4 տոկոսի վրա: Էմլաքը սահմանվում էր նաև քա-

[1] *Խաժակ,* նշված գիրքը, էջ 34:
[2] *Զուլալյան Մ.,* նշված գիրքը, էջ 98-99:
[3] *Лаврионович Ю.,* նշված գիրքը, стр. 154.
[4] *Джалил Дж.,* Восстание курдов 1880 года, М., 1966, стр. 126.

ղաքների տների, նրանց գնահատված արժեքի հինգ կամ ավելի տոկոսի վրա: 8 տոկոս հարկ էր նշանակվում քաղաքի այն տների վրա, որոնք ունեին 20000 ղուրուշի արժեք: 1897-98թթ. Կարինի նահանգից հավաքվել է 2.511.924 լիրա[1], 1858-67թթ.՝ 73700, 1867-1868թթ.՝ 69.300, 1868-1869թթ.՝ 70.950, 1869-1870թթ.՝ 69.410 թուրքական ոսկե լիրայի կալվածահարկ[2]:

Վերգի կամ եկամտահարկ գանձվում է յուրաքանչյուր բնակչի տարեկան եկամտի 3 տոկոսից: 1871թ. Կարինի նահանգում գանձվել է 16.000 թուրքական ոսկե լիրա[3], 1897-1898թթ.՝ 500.000[4]:

Ուրիշների վկայությամբ, այս հարկը գանձվել է շարժական և անշարժ ունեցվածքի առևտրից, եկամտի 10 տոկոսի չափով: Որոշ շրջաններում, օրինակ՝ Անատոլիայում, հավաքվել է 25 տոկոս, Դանուբի շրջանում՝ 34 տոկոս: Ընդհանուր առմամբ, 1850թ. ամբողջ կայսրությունում հավաքվել է 46 մլն ֆրանկ եկամտահարկ[5]:

Անասնահարկ (աղնամ կամ կամչուր) - 1871-1872թթ. ամեն մի ոչխարից և այծից գանձվում էր երեք դահեկան, իսկ մինչ այդ՝ ոչխարից 60 փարա, 1868-1870թթ.՝ 2 պիաստր[6]: Հարկի գանձման ժամանակ թույլ էին տրվում զանազան ապօրինություններ: Հաշվի չէր առնվում անգամ այն հանգամանքը, որ քրդերի թալանի ժամանակ գյուղացին զրկվել է անասուններից: Հարկահավաքը, հենվելով ձմռանը կատարած հաշվառման վրա, պահանջում էր վճարել: Ավելին, բնական աճը ընդունելով բարձր տոկոսներով՝ հարկահավաքն ավելացնում էր անասունների գլխաքանակը:

Կարինի ռուսական հյուպատոսը վկայում է, որ գյուղացին, չկարողանալով վճարել, հարկի դիմաց առաջարկում էր այծը, գառը[7]:

1871թ. Կարինի նահանգի Կարինի գավառում այս հարկից հավաքվել է 1.697.000, 1872թ.՝ 2.233.301 պիաստր[8], իսկ նահանգից՝ 1897-1898թթ. 1.937.849 թուրքական ոսկե լիրա[9], այն դեպքում, երբ ամբողջ կայսրությունում 1862-1872թթ. հավաքվել է 47.194.100 ֆրանկի անասնահարկ[10]:

---

[1] *Համբարյան Ա.,* նշված գիրքը, էջ 109:
[2] *Джалил Дж.,* նշված գիրքը, стр. 121.
[3] *Лаврионович Ю.,* նշված գիրքը, стр. 154.
[4] *Джалил Дж.,* նշված գիրքը, стр. 121.
[5] *Убичини М.А.,* նշված գիրքը, стр. 110.
[6] *Джалил Дж.,* նշված գիրքը, стр. 122.
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:
[9] *Лаврионович Ю.,* նշված գիրքը, стр. 154.
[10] *Джалил Дж.,* նշված գիրքը, стр. 123.

Բեյն հարկը գանձվում էր յուրաքանչյուր զույգ եզների համար մեկ մերկե՝ մեկ բեռ ցորեն կամ գարի: Նույն հյուպատոսի զեկուցագրում կարդում ենք. «Չնայած բոլոր ջանքերին, ես չկարողացա պարզել այս մշուշապատ հարկը»[1]:

Իտիսաբ կամ Յիստիսաբ հարկը նշանակվում էր անասունների վաճառքից գոյացած յուրաքանչյուր պիաստրի վրա՝ մեկ փարայի չափով: Որպեսզի քիչ վճարեին հարկը, գնողն ու վաճառողը հարկահավաքին հայտնում էին ցածր գին: Հետագա «թյուրիմացություններից» խուսափելու համար հարկահավաքն ինքն էր նշանակում անասունի գինն ու այդ չափով էլ գանձում հարկ:

Ճանապարհային հարկ (յոլ փարասը) - Այս հարկը շրջանառության մեջ մտավ 1877-1878թթ. պատերազմից հետո: Նպատակն իբր ճանապարհների կառուցումն ու նորոգումն էր: Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանում նշված ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև 1914թ., ոչ միայն ճանապարհներ չեն կառուցվել, այլև չեն էլ նորոգվել:

Հարկահավաքները ճանապարհի հարկը սկսում էին գանձել գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում: 20-50 տարեկան տղամարդիկ իրենց սայլերով ու լծկաններով, երեքից հինգ օր ժամկետով, իրենց բնակավայրերից բավականին հեռու անվճար, պարտավոր էին աշխատել ճանապարհների վրա: Քանի որ հարկահավաքը դիտմամբ չէր ընդունում անվճար աշխատանքի փոխարեն սահմանված դրամավճարը, ուստի հասած բերքը կորստի չմատնելու համար գյուղացին կաշառք էր առաջարկում: Գավառապետի, ժանդարմի, հարկահավաքի խորամանկ գործողությունները նկարագրելիս Ա.Մեգիերը հայտնում է, որ նրանք ոչ թե հետապնդում էին հայ գյուղացուն աշխատանքի ուղարկելու նպատակը, այլ սեփական շահը՝ խորամանկորեն հասնելով իրենց պլանների իրագործմանը, դառնության ու զրկանքի մեջ թողնելով հայ գյուղացուն[2]:

Զբաղմունքի հարկ (թեմեթու) - սահմանվում էր գլխավորապես արհեստավորների, վաճառականների վրա: Հարկից ազատ էին, անկախ կրոնական պատկանելությունից, ուսուցիչներն ու հոգևորականները:

Արհեստավորներից տարեկան գանձվում էր 40-60 փարա, վաճառականներից ու առևտրականներից, ըստ կարողության և ստացած եկամտի՝ 60-400 դահեկան:

[1] *Убичини М.А.,* նշված գիրքը, стр. 112.
[2] *Мезиер А.В.,* Турция. СПб., 1907, стр. 72.

Ամուսնական հարկ - գանձվում էր 17 դահեկան, որից 12,5 դահեկանը մտնում էր պետական գանձարան, 4,5 դահեկանն անցնում էր առաջնորդարանին, 2,5 դահեկանը՝ մարդահամարի բաժնին[1]:

Մեկ այլ աղբյուրի հաղորդման համաձայն, հարկը տղամարդկանցից գանձվում էր մեկ դինար, միջին եկամտից ցածր եկամուտ ունեցողներից կամ չքավորներից՝ 12 ակչե: Առաջին անգամ ամուսնացող հարսնացուն մուծում էր 60 ակչե, երկրորդ և ավելի անգամ ամուսնացողը՝ 40 ակչե[2]:

Աղի տուրք - մեկ հոխա աղից գանձվում էր մեկ պիաստր:

Ծխախոտի տուրք - նշանակվում էր ծխախոտի վաճառքի, ներմուծման, արտահանման վրա:

Նահանգում տարեկան հավաքվել էր 22.300 թուրքական ոսկե լիրա հարկ[3]: Մեկ այլ աղբյուր այդ հարկի գումարը հաշվում է 85.480 քսակ կամ 9.830.200 ֆրանկ[4]:

Մաքսային տուրքը գանձվում էր ներմուծված և արտահանված բոլոր տեսակի ապրանքներից: Եվրոպայից ներմուծված ապրանքներից գանձվում էր արժեքի 8 տոկոսը, Պարսկաստանից ներմուծվածից՝ 6 տոկոսը: Բացառություն էին կազմում եվրոպացի առևտրականները, որոնք վճարում էին թե՛ ներմուծված, թե՛ արտահանված ապրանքների 1 տոկոսը[5]:

Կարինի վրայով Եվրոպա արտահանվող պարսկական ապրանքներից որպես տուրք գանձվում էր. 1866-1867թթ.՝ 14.300 լիրա, 1867-1868թթ.՝ 14.190, 1868-1869թթ.՝ 14.410, 1869-1870թթ.՝ 17.050, 1870-1871թթ.՝ 17.840 թուրքական լիրա[6]:

Ձկնորսության տուրք - Արևմտյան Հայաստանում այս տուրքը գանձվում էր հատկապես Վանա լճում, ձկնառատ մյուս լճերում ու գետերում ձկնորսությամբ զբաղվողներից: Կարինի նահանգում այս տուրքի հավաքման մասին տեղեկություններ չկան:

Տեղական առևտրից և պետական հիմնարկների հետ հարաբերությունից գանձվող տուրքը նշանակվում էր սպիրտի, օղու, գինու առևտրի վրա, դրոշմատուրքի դիմաց, անձնագրի, դատարանի համար և այլն: 1866-1867թթ. նահանգում արհեստավորներից և առևտրականներից նշված ապրանքների համար գանձվում է 15.400, 1867-1868թթ.՝ 15.290,

[1] *Խաժակ,* Հարկերը Տաճկաստանում, Բաքու, 1907, էջ74:
[2] Книга закона султана Селим I, М., 1969, стр. 56, 57.
[3] Նույն տեղում:
[4] *Убичини М.А.,* նշված գիրքը, стр. 116.
[5] *Джалил Дж.,* նշված գիրքը, стр. 124.
[6] Նույն տեղում:

1868-1869թթ.՝ 12.540, 1869-1870թթ.՝ 12.210 թուրքական լիրա, իսկ միայն գինու, օղու, սպիրտ թորելու համար նույն թվականներին համապատասխանաբար՝ 1.276.979.660 լիրա[1]:

Մ.Ուբիչինիի տվյալներով, ոգելից խմիչքներից սկզբում գանձվում է եկամտի 10, ապա 20 տոկոսը: Ընդհանուր առմամբ, 1868-1869թթ. այդ հարկից գանձվել է 50-80.000 քսակ կամ 9.200.000 ֆրանկ, դատական տուրք՝ 29.138 քսակ կամ 33.350.870 ֆրանկ և այլն, ծխախոտից՝ 85480 քսակ կամ 9.830.200 ֆրանկ, փոստ-հեռագրից՝ 44.500 քսակ կամ 5.117.500 ֆրանկ[2]:

Ջրաղացի տուրք - Եթե ջրաղացն աշխատում էր շուրջ տարին, գանձվում էր մեկ մյուդ հացահատիկ, վեց ամիս աշխատող ջրաղացից՝ 1/2 մյուդ: Գանձման ժամանակ հարկահավաքն իրավունք ուներ տուրք գանձել մի մասը ցորենով, մի մասը՝ գարով: Կարինի կանունով տուրքի հանձնման ժամկետը հուլիս ամսի իններորդ օրն էր: Երզնկայի կանունով ժամկետ չէր սահմանվում, բայց նշվում էր տուրքի չափը՝ ամսական հինգ ակչե, տարեկան՝ 80 ակչե[3]:

Փեթակի տուրք - Երզնկայի կանունը սահմանում էր տուրքի հետևյալ չափերը՝ լավ փեթակից՝ երկու ակչե, վատից՝ մեկ ակչե, ընդ որում լավ ու վատ փեթակներն ընտրում էր մեղրահավաքմանը ներկա հարկահավաքը:

Գիշերապահության տուրք - առևտրականներից, խանութ ունեցողներից՝ երկու ակչե, արհեստավորներից՝ մեկ ակչե:

Ամուսնության տուրքը գանձվում էր թե՛ տղամարդուց և թե՛ կնոջից: Մահմեդականներն ազատ էին այս տուրքից: Շատ հաճախ զավակ չունեցող քրիստոնյաներին ստիպում էին բաժանվել անժառանգ կնոջից և ամուսնանալ ուրիշի հետ, որպեսզի նրանից գանձեին թե՛ ամուսնության հարկ և թե՛, եթե արու զավակ ծնվեր, նաև զինվորականության հարկ:

Ղան փարաս տուրքը գանձվում էր մորթված անասուններից, ոչխարներից՝ 20 փարայից մինչև 1-1,5 դահեկան, խոշոր եղջերավոր անասուններից՝ 3-4,5 դահեկան:

Ապահովության հարկ - գիշերապահության հարկի տարատեսակն էր, գանձվում էր բնակչության տարբեր զբաղմունքի տեր դասերից՝ երկու դահեկանի չափով:

[1] Նույն տեղում:

[2] *Убичини М.А.,* նշված գիրքը, стр. 113, 115, 116, 117.

[3] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1964, էջ 29:

Կշեռքի տուրքը (խանթար փարասը) գանձվում էր վաճառվող ցանկացած մթերքից, չափն անհայտ է:

Իանե կամ օժանդակության տուրքը սահմանվում էր պետության հրատապ կարիքների բավարարության համար: Առաջին անգամ այն օգտագործվեց 1867թ., երբ Աբդուլ Ազիզ սուլթանը պատրաստվում էր Անգլիա ուղևորության: Սուլթանը վերադարձավ, բայց ժամանակավոր հայտարարված տուրքը պահպանվեց և օրինականացվեց:

Կրթական տուրքը գանձվում էր դպրոցական համակարգի զարգացման ու կարիքների համար: Բայց այն օգտագործվում էր միմիայն մահմեդական կամ մզկիթներին կից դպրոցների կարիքների համար: Տուրքն այնքան անհամապատասխան էր երկրի ներքին հարաբերություններին, որ եվրոպացի հեղինակներից մեկը զարմանքով նկատում էր. «Իսկ կրթական (մետրիֆե) տո՞ւրքը, զոր քրիստոնեայք կը բռնադատվին տալու, առանց վայելելու պետական դպրոցաց մեջ կրթվելու արտոնությունը...»[1]:

Էվկաֆ - եկեղեցու ունեցվածքից գանձվող տուրք: Կարինի նահանգում 1871թ. գանձվել է 6600 թուրքական լիրա[2]:

Բացի նշված հարկերից, սահմանված էին նաև հետևյալ հարկերն ու տուրքերը.

Ռեմսի աղնամ - յուրաքանչյուր աշխատող ձեռքից 1868թ. գանձվել է 1,5 ղուրուշ, 1871թ.՝ 3-5 ղուրուշ:

Ֆերաղ - հողի վաճառքի դիմաց, յուրաքանչյուր հարյուր ղուրուշից՝ 25 ղուրուշ:

Օրման ռեմսի - շինափայտի վաճառքի դիմաց, արժեքի 10-15 տոկոսը, հացի վաճառքի, նոր շենք կառուցելու, քաղաքի փողոցներում սայլ կամ ձի կանգնեցնելու, հանքերի օգտագործման և մի շարք այլ հարկեր ու տուրքեր: Այս բոլորից բացի, հայ գյուղացին անվճար, իր սայլով, գործիքներով, անասուններով պարտավոր էր մասնակցել կամուրջների, զորանոցների, պետական այլ շենքերի կառուցման աշխատանքներին:

Նշված հարկերից ու տուրքերից բացի, հայերն ու մյուս քրիստոնյաները քրդերին վճարում էին հաշտ ապրելու հարկ՝ *սուրեան*: Քրդերը «հովանավորության» համար նույնպես հարկ էին պահանջում: Մի յուրօրինակ տուրք էր նաև ղշլաղ կամ աղլ անվանվող սովորությունը, երբ քրդերը, ձմռանն իջնելով սարերից, տեղավորվում էին քրիստոնյա-

[1] Բռնության դեմ, Աթենք, 1894, էջ 84:
[2] *Джалил Дж.,* նշված գիրքը, стр. 125.

ների գյուղերում, ուր նրանց տրամադրվում էր բնակատեղի, գոմ, ուտելիք և անասնակեր:

Ազգային տուրքը սահմանվեց 1861թ., հարկատուները բաժանվեցին չորս խմբերի.

1. Տարեկան 20-25 դուրուշ վճարողներ
2. Տարեկան 50-60 դուրուշ վճարողներ
3. Տարեկան 100-120 դուրուշ վճարողներ
4. Տարեկան 120 դուրուշից բարձր վճարողներ:

Այս տուրքից տարեկան հավաքվել է 400.000 դուրուշ[1]: Եկեղեցու հավաքած հարկերի շարքում իր հատուկ տեղն ուներ *պտղին*, որի վճարումը պարտադիր էր բոլոր դասերի համար: Մինչև 19-րդ դարը պտղին հավաքվում էր բնամթերքով, հետո՝ դրամով: Պտղիի չափն անորոշ էր: Սրա չափի մասին պատկերացում կարելի է կազմել Վ.Փափազյանի «Ի՞նչ մնաց» պատմվածքից: Վաշխառուից, հարկահավաքից, աղայից հետո գալիս է վարդապետը: Հարկատուն նրան մի քանի կոտ ցորեն տալուց հետո հարցնում է՝ բավակա՞ն է: Վարդապետն ասում է՝ այո: «Փառք Աստծո,- ասաց գյուղացին սառնությամբ,- եղավ մեկը, որ «հերիք» բառը ասաց»[2]:

Մեջբերումից պարզվում է, որ պտղին կամավոր էր, իսկ չափի մասին կարելի է ենթադրել այսպես. մեկ կոտ ցորենը քսան կիլոգրամ է, եթե գյուղացին տվել է երկու կամ երեք կոտ, ապա դա 40-60 կգ ցորեն կամ գարի է:

«Թուրքիան՝ հիվանդոտ հարկերի այդ դասական երկիրը», հարկային քաղաքականության ամբողջ ծանրությունը գցելով հպատակ քրիստոնյաների վրա, չէր էլ մտահոգվում ոչ նրա, ոչ էլ հարկահավաքության ձևերի կանոնավորման մասին, որոնց պատճառով «Թուրքիո արևելյան նահանգները՝ Կարինը, Վանը, Պիթլիսը, անոնց անպատասխանատու շահատակության մշտական կրկեսն էին եղած»[3]:

Ավազակաբար հավաքված հարկերի միայն կեսն էր հասնում գանձարան: Ոստիկանն ու ժանդարմը, հարկահավաքն ու մյուս պաշտոնյաները բավարարություն ստանալուց հետո էին միայն մտածում իրենց հիմնական պարտականության մասին: Իսկ եթե նրանց անկուշտ քսակը չէր լցվում, ապա դիմում էին հայտնի մեթոդներին: Մի քանի օրից հետո

[1] *Մարուխան,* Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1880-1910), հ. 1, Թիֆլիս, 1912, էջ 33:
[2] *Փափազյան Վ.,* Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1958, էջ 116:
[3] *Համբարձումյան Վ.,* Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 34:

նորից հայտնվելով՝ նրանք պահանջում էին նույն հարկը: Երբ հայ գյուղացին նրանց էր պարզում ստացած անդորրագիրը, ոստիկանը ծիծաղելով ասում էր. դա ստացական չէ, այլ «թուրքերեն գրքից պոկված բանաստեղծություն»[1]:

Հաճախ հարկահավաքները սեփական նախաձեռնությամբ գնում էին գյուղերը և հարկահավաքության անվան տակ սկսում կողոպուտը: Նման բազմաթիվ դեպքերի է ականատես եղել Է.Դիլոնը: Դառնորեն վերհիշելով դրանք՝ Է.Դիլոնը հանգում է այն հետևությանը, որ այդ ծրագրված գործողություններն ունեին միայն մեկ նպատակ՝ տնտեսապես քայքայել հայերին, նրանց ստիպել կամ գաղթել, կամ մահմեդականություն ընդունել[2]:

«Կարմիր ֆեսը և թուրքական զինվորի ծանոթ համազգեստը հարուցում է ընդհանուր խուճապ»,- գրում է Մ.Մակ-Կոլը[3]: Հայ գյուղացին, որպեսզի փրկի իր պատիվն ու ունեցվածքը, կանանց թաքցնում էր տան խուլ անկյուններում, իսկ ինքը պատրաստվում էր պաշտպանվելու: Ավելին, հարկահավաքներն ու զինվորները վերցնում էին այն, ինչն իրենց էր անհրաժեշտ, հավաքում էին այնքան, որը գերազանցում էր նշանակված հարկը:

Հատկապես ծանր վիճակ ստեղծվեց 1877-1878թթ. պատերազմից հետո, երբ կառավարությունը, չեղյալ համարելով պատերազմի ժամանակ տրված ստացականները, որոշեց հավաքել հարկերը: Զենքի ուժով տանելով հայ գյուղացու սննդի վերջին մնացորդները՝ այս անգամ էլ զինվորները չէին տալիս վճարման մասին անդորրագրեր, հիմք նախապատրաստելով հարկերի «կրկնակի հավաքման համար, հասկանալի է՝ հանուն իրենց շահերի»[4]:

Սովալլուկ ժողովրդին փրկելու փոխարեն կառավարությունը որոշում է ձմռանը սկսել հարկերի հավաքումը: Սկսվում է թալանը: Կահկարասին, անգամ անձնական օգտագործման իրերն ու հագուստները, գրավ են դրվում, վաճառվում չնչին գներով: Հայ գյուղացուց խլվում էր նույնիսկ սովից փրկվելու համար նվիրաբերված գումարը:

Սովը սկսվեց Ալաշկերտից, ապա անցավ Բասեն, Բայազետ, Բայբուրդ, նահանգի մյուս գավառները: «Ահռելի տեսարաններ կներկայանային հետզհետե, ամեն սեռի ու տեսակի անձինք գետնին վրա տարած-

[1] *Дилон Э.,* նշված գիրքը, էջ. 333.
[2] Նույն տեղում:
[3] *Мак-Коль К.М.,* նշված գիրքը, էջ. 142.
[4] Նույն տեղում, էջ 75:

ված էին անշարժ, անզգա, մահվան թալուկն իրենց դեմք կպատեր և միայն նոցա շնչառության շշնկոցն կլսվեր»,- Ալաշկերտից գրում է ականատեսը[1]:

1889թ. հունվարին պատրիարքարանը կազմեց «Սովելոց խնամատար հանձնաժողով», որի հիմնական նպատակը մթերքներ գնելն ու սովյալներին հասցնելն էր: Հանձնաժողովը, սակայն, Բ.Դռան թշնամական քաղաքականության պատճառով չկարողացավ կատարել իր վրա դրված պարտականությունները: Նախ, կառավարությունն արգելեց սովի մասին թերթերում հաղորդագրություններ տպագրել, հանգանակություն կազմակերպել՝ պատճառաբանելով, թե հավաքված միջոցները նպատակ ունեն զենք գնելու, ոչ թե սովյալներին օգնելու:

1880թ., երբ ամբողջ նահանգը գտնվում էր սովի ճիրաններում, կառավարությունը որոշում է բանակի կարիքների համար հավաքել 15.000 թուրքական ֆունտ գումար կամ 337.500 ֆրանկ[2]:

Թե ինչ դժվարությամբ էր հավաքվելու այդ գումարը՝ պարզ էր, բայց հայտնի չէր, թե հարկահավաքության գիշատիչ ուժերն իրենց կարիքների համար ինչքան էին հավաքելու: Հարկահավաքները տանում էին այն, ինչը հնարավոր էր վաճառել: Տարածի դիմաց նրանց ստացական չէին տալիս, իսկ թե տալիս էին, ապա նվազեցրած թվերով, առանց ստորագրության ու վավերացման:

Սուլթանի անձնական քարտուղար Մուստաֆա Նեդիմը վկայում է, որ հարկահավաքները, վաշխառուները, եթե գյուղացին վճարելիք գումարը չէր ունենում, նրանից բռնագրավում էին տնային իրերը, անգամ թաղիքը, գդալը, շերեփը, կողովը, բահը, լվացքի պարանը[3]:

Իսկ սովը հետզհետե սաստկանում էր: 1880թ. «Մշակին» ուղարկված հեռագրի հեղինակը տեղեկացնում է, որ «Քարաքիլիսէի սովյալներեն, Ալաշկերտի քաղաքին մեջ 2600 հոգի՝ օրական պարենո հետի աստիճան կարոտ են: Ձեր հղած գումարն անբավական է», այնուհետև՝ «Բասենո դաշտի բնակիչք ամենեքեան հացի կարոտ են, կաղաչեմք զի Ալաշկերտի համար ձեր հղած գումարի կեսն Բասենո դաշտին հատկացնեք...»[4]:

Ասել, թե կառավարությունը սովյալներին օգնություն չէր կազմակերպում, սխալ կլինի: Կառավարությունն անվճար օգնում էր մահմեդականներին, իսկ քրիստոնյաներին վճարով անգամ մթերք չէր հատկացնում:

[1] *Լեո,* Գ.Արծրունի, հ. 3, Թիֆլիս, 1906, էջ 140:
[2] *Ролен-Жекмен М.Г.,* նշված գիրքը, стр. 78.
[3] *Նեդիմ Մ.,* Հայ եղեռն, Կահիրե, 1925, էջ 39:
[4] «Մշակ», 1880, նո.5:

Նույն թվականին Ալաշկերտում մի ամսում սովամահ են եղել 100 հայեր: Ղարաքիլիսայի, Ալաշկերտի շրջաններում կային 3500 սովյալներ, կարդում ենք մեկ ուրիշ հոդվածում[1]:

Կառավարական օգնությունից զրկված հայության հույսն արևելյան եղբայրներն էին: 1880թ. հունիսի տվյալներով՝ արևելահայերն ուղարկել են 50.000 ռուբլի, իսկ ընդհանրապես «Մշակն» ուղարկել էր 30.000, Թիֆլիսի «Հայ կանանց կոմիտեն»՝ 10.000, «Փորձի» խմբագրությունը՝ 6000, «Մեղու Հայաստանին»՝ 4000, Պետերբուրգից, Մոսկվայից ուղարկվել էր 6000 ռուբլի գումար[2]:

Լեոյի հաշվումներով, արևելահայերը հանգանակել են 100.000 ռուբլի[3]:

Սովն ավելի ուժեղացավ 1881թ.: Ե.Լալայանցը հայտնում է, թե սովից փրկվելու համար Կարինի նահանգի հայերը երեխաներին փոխանակում էին հացի հետ: «Կարծախցի Գրիգորյանց Ստեփանը երեք կոտ (60 կգ- Հ.Զ.) գարով փոխած է իր երեխային»[4]:

Օգտվելով առիթից, որ հարկերի հավաքման համար ժամկետ նշանակված չէ, պաշտոնյաներն ինքնագլուխ, նպատակ ունենալով սեփական շահը, անգամ այն ժամանակ, երբ բերքը հավաքված չէր, սկսում էին հարկահավաքությունը: «Հարկերը հավաքում են ոչխարի ու այծի խուզից առաջ, բերքահավաքից առաջ, մի խոսքով՝ այն ժամանակ, երբ գյուղացիությունը գտնվում էր անփող վիճակում»[5]:

Չունենալով համապատասխան գումար՝ գյուղացին ստիպված այն բարձր տոկոսներով վերցնում էր հարկահավաքի հետ եկած վաշխառուից: Ներքին պայմանավորվածությամբ, հարկահավաքը վաշխառուի տոկոսներից ստանում էր իր բաժինը: Վաշխառուները երկրի տարբեր շրջաններում ունեին իրենց կամայականորեն սահմանած տոկոսային համակարգը: Եթե Կարինի նահանգում դրամը տրվում էր 30 տոկոս ավելի հետ ստանալու պայմանով, ապա Վանի ու Մուշի շրջաններում՝ 60 տոկոս[6]:

Բացի պաշտոնական հարկահավաքներից, հատկապես անողոք էին գործում այս կամ այն հարկի գանձման իրավունքը կապալով գնած

[1] Նույն տեղում, նո. 107:
[2] Նույն տեղում, նո. 108:
[3] *Լեո,* Գ.Արծրունի, հ. 3, Թիֆլիս, 1905, էջ 147:
[4] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, նո. 3, էջ 91:
[5] *Սարգսյան Լ.,* նշված գիրքը, էջ 121:
[6] *Бекгульянц Р.,* նշված գիրքը, стр. 82:

անձինք: Նրանք գրեթե կամայականորեն էին սահմանում թե՛ հարկի չափը, թե՛ վճարման ժամանակն ու ձևը: Եթե բերքն առատ էր և սպասվում էր հացահատիկի գնի իջեցում, ապա բնամթերային հատուցման փոխարեն հարկահավաքը պահանջում էր դրամավճար, այնքան, որքան գյուղացին չէր կարող ստանալ բերքի վաճառքից: Պաշտոնական և ոչ պաշտոնական հարկահավաքները մի կողմից, հարստահարիչները՝ մյուս կողմից անարգել շարունակում էին իրենց գործունեությունը: Նրանց առաջին հովանավորողները տեղական իշխանություններն էին: Թալանը կիսելու պայմանագիր կնքելով գավառապետի կամ գավառակի պետի հետ՝ քաղցած գայլի ռիմակ հիշեցնող այդ ամբոխը հարձակվում էր անպաշտպան հայ գյուղերի վրա: «Հարստահարիչք գրեթե միշտ պաշտպանության, քաջալերության ու մինչև իսկ պաշտոնապես պատիվ գտած են կառավարության պաշտոնյաներեն, ժողովականներեն և քաղաքաբնակ նշանավոր անձերեն»[1]:

Թուրքական «կազմակերպված ավարառություն» հիշեցնող հարկահավաքության հիմնական «քաջալերանքները» գալիս էին Կ.Պոլսից: Տեղական իշխանություններն էլ, առիթը բաց չթողնելով, բարձրացնում էին անգամ պետական հարկերի չափերը, իհարկե, ավելցուկը յուրացնելու նպատակով: Կամայականորեն բարձրացված հարկերի մասին կառավարությունը տեղեկանում էր ուշացումով և «մոռանալով» հարկի չափերը՝ ընդունում էր նոր սահմանվածը: Այդ ճանապարհով, գրում էր Էդ.Բեռնշտայնը, «տասը տարին անգամ մը տուրքերը կավելանան, ծանրաքամ անելով հայ գյուղացին»[2]:

Հարստահարիչ հարկահավաքների սանձարձակության մասին է վկայում նահանգի գյուղերում հավաքված տասանորդի մասին հաղորդումը: «Էրզրումի նահանգում աշար է գանձվել անգամ լծկաններից»[3]:

Բազմաթիվ բողոքներն ու դեսպանների միջամտությունը ստիպեցին սուլթանին կանոնավորել գոնե տասանորդի գանձման գործը: Կյանքի կոչված ուղղակի և անուղղակի հարկերի խորհուրդների կողքին տեղ զբաղեցրեց աշարի նախարարությունը (1850թ.), որը շուրջ քառասուն տարի (1887թ.) պահպանեց իր գոյությունը, սակայն էական ոչ մի փոփոխություն չմտցրեց աշարի գանձման գործում: «Համիդյան կառավարությունը հաճախ հատկանշված է իբր ընդարձակ կազմակերպություն մը

[1] *Լ.Էռ,* Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 142:
[2] *Բեռնշտայն Էդ.,* Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժնև, 1906, էջ 21:
[3] *Չորմիսյան Լ.,* նշված գիրքը, էջ 272:

կողոպուտի և թալանի համար: Ավելի հարմար բան մը կարելի չպիտի ըլլար ըսել»,- գրում էր Ա. Մանդելշտամը[1]:

Հրամանագրերն ու կարգադրությունները դատարկ կրակոցներ էին: Նրանք ի վիճակի չէին ազդել հարստահարիչների ստվարացող բանակների վրա, որոնց կնքահայրն ինքը՝ սուլթանն էր: Մ.Խրիմյանը 1869թ. Կարինից գրել է. «Բարձրագույն Դրան կողմեն հարստահարությանց առաջն առնելու համար նորանոր անօրինություններ պիտի ըլլան, այս է եղեր շատ անգամ և կըլլան միշտ այդպիսի անօրինությունները, բայց գործադիր պաշտոնյաները ո՞վ են»[2]:

Կառավարությունը պաշտոնից հեռացնելու սպառնալիքով նահանգապետերից անընդհատ խոշոր չափերի գումարներ էր պահանջում: Նահանգապետերը նույն մեթոդներով պահանջում էին գավառների ու գավառակների պետերից: Այդպիսի «հարկահավաքություններից» մեկի ժամանակ Կարինի նահանգի Կամուրջ գյուղի գյուղապետից քուրդ Հաջի-Ահմեդ բեկը պահանջում է 500 ռուբլի: Երբ գյուղապետ Մուրադը հանդգնում է հրաժարվել վճարելուց, բեկի հրամանով նրա ձեռքը կտրում են[3]:

Հայ գյուղացուն կեղեքելու միջոցներից մեկն էլ փոխառություններն էին: Կառավարությունը, որպեսզի գյուղացին կարողանա վճարել հարկերը, տոկոսներով փոխառություն էր տալիս: Հեռուն գնացող նպատակներ հետապնդող այդ «օգնության» պատճառով գյուղացին, չկարողանալով վճարել ոչ փոխառությունը, ոչ տոկոսները, ընկնում էր պարտքերի տակ՝ կորցնելով ունեցվածքը: Կարինի նահանգի Կարինի, Կիսկինի, Մամրվանի, Թորթումի, Բայբուրդի, Սպերի, Դերջանի, Քղիի գավառների պետական պարտքերը կազմում էին 8.522.000 ղուրուշ[4]:

«Մշակի» թղթակիցներից մեկը, նկարագրելով նահանգի գյուղացիության ծանր վիճակը, գրում էր. «Խեղճ ժողովուրդը ապշած, մոլորված, չը գիտե արդյոք թափառական քուրդ ցեղերին իրեն տեր ճանաչել, թե խումբ-խումբ եկող թուրքաց նիզամիներին: Նա ճարահատված հարկ է տալիս թրքաց պետությանը և շրջմոլիկ քուրդ բեյերին…»[5]:

Թուրքիան 19-րդ դարում գտնվում էր ֆեոդալական հարաբերությունների բարբարոսական փուլում: Ուրեմն, բացառված չէր կիսավայ-

[1] Տե՛ս *Մանդելշտամ Ա.,* Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, Կ.Պոլիս, 1919, էջ 19:
[2] «Ամենայն Հայոց Հայրիկ», էջ 161:
[3] Տե՛ս *Դիվանի,* Մի պատկեր Տաճկահայաստանի կյանքից, Բաքու, 1913, էջ 4:
[4] *Համբարյան Ա.,* նշված գիրքը, էջ 414:
[5] «Մշակ», 1880, նո. 4:

բենի տարբերով հարուստ այդ երկրում նաև մարդավաճառությունը: Այս մասին ականատեսներից մեկը գրում է. «Այս տեղերից մեկում բազմաթիվ վրացի աղջիկներ ցուցադրված էին հրապարակային վաճառքի, ինչպես նաև մի քանի տղաներ, որոնք վերջերս թուրքերը ձեռք էին բերել ռուսական ճակատից ուրիշ կողոպուտների հետ»[1]:

Քայքայման եզրին կանգնած երկրում, ուր չկային նորմալ տնտեսական ու քաղաքական հարաբերությունների հետքեր, պարզ է, թե ինչ օրհասական վիճակում էին գտնվելու հատկապես հպատակ քրիստոնյաները: Հալածված քրիստոնյաները, զրկվելով տնտեսական կարողություններից, գոյության պահպանության ուրիշ ելք չտեսնելով, հեռանում էին հարազատ վայրերից: «Ամբողջ երկրները մնում են անմշակ, և բռնավորությունը, որ ճնշում է բնակիչների վրա, այնքան մեծ է, որ նրանք պատրաստ են հպատակվել ամեն տեսակ կառավարության, որից կարող են սպասել ապահովություն և խաղաղություն»,- գրում էր ճանապարհորդներից մեկը[2]:

Շարադրանքում բերված փաստաթղթերը, վկայությունները, հաղորդումները խոսում են այն մասին, որ կարինահայ գյուղացիությունը գտնվում էր տնտեսական հարստահարությունների ու հալածանքների ճիրաններում: Նույն պատկերն էր նաև ամբողջ Արևմտյան Հայաստանում, որի հուզիչ նկարագրությունը տալիս է Գյուտ քահանա Աղայանցը[3]:

Թուրքիան 19-րդ դարի երկրորդ կեսին ներքաշվեց կապիտալիստական երկրների առևտրական հարաբերությունների ոլորտը: Այդ երևույթի անխուսափելի հետևանքը պետք է լիներին ֆեոդալական հարաբերությունների քայքայումը, երկրի առաջընթացի համար հիմքերի նախապատրաստումը: Բայց Թուրքիայում նման տեղաշարժեր չնկատվեցին: Ճիշտ է, գյուղատնտեսության մեջ երևան եկավ նոր երևույթ՝ ձևավորվեց ու հողատերերի հետ սերտ կապերի մեջ մտավ առևտրավաշխառուական դասը, սակայն, ֆեոդալական բիրտ հարաբերությունների վրա հենված տնտեսության ճակատագիրն արդեն վճռված էր, և նոր հարաբերությունները չապահովեցին նրա զարգացումը:

Կապիտալիստական հարաբերությունների մուտքը նշանավորվեց մեկ այլ երևույթով ևս՝ ազգային բուրժուազիայի ձևավորմամբ: Հալածանքների տակ ընկած հույն ու հայ առևտրաարդյունաբերական դասը կորցրեց իր երբեմնի գերակշիռ դիրքը՝ տեղը զիջելով թուրք ազգային

[1] *Հակոբյան Հ.,* Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934, էջ 485:
[2] «Մշակ», 1880, նո. 92:
[3] «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915:

բուրժուազիային, որը, սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, անընդունակ գտնվեց օտար կապիտալի հետ մրցակցությունում, մեծ մասամբ ձուլվեց նրան, դարձավ նրա սպասավորը՝ ավելի ընդարձակելով եվրոպական կապիտալից Թուրքիայի տնտեսական կախվածության սահմանները:

Չնայած հալածանքներին, դարի երկրորդ կեսին Կարինի արհեստավորներն ու առևտրականները դեռևս չէին կորցրել իրենց վճռական դիրքերը:

Նշված ժամանակահատվածում քաղաքում գործում էին 3500 կրպակ, 150 պանդոկ, 180-200 հացթուխ[1], բազմաթիվ այլ արհեստավորներ: Կարինը կապող օղակ էր Վանի, Դիարբեքիրի, Կարսի, Սվազի, Հալեպի, Դամասկոսի և Կ.Պոլսի ու Անդրկովկասի առևտրական կենտրոնների միջև: Էդ.Նաումանի տվյալներով, Կարինով տարեկան անցնում էին 49 մլն մարկ արժեքի ապրանքներ[2], 50.000-ի չափ ուղտեր[3]:

Պարզ է, թե միայն այսքան ապրանքների շրջանառությունից ինչ եկամուտ են ունեցել Կարինն ու հայ առևտրականները:

Կարինի առևտրական խոշոր կենտրոն լինելու փաստը հաշվի առնելով՝ դեռևս 18-րդ դարի վերջերին քաղաքում հիմնվում է Անգլիական առևտրական տունը, որը 19-րդ դարում հայ առևտրականների Մանչեսթրի ընկերության հետ համատեղ հաստատել էր շահավետ կապեր: Լինչը հավաստում է, որ դեռևս 1690թ. քաղաքում բեղուն գործունեություն էին ծավալել անգլիացի առևտրականները[4]: Նահանգին խոշոր եկամուտ էր բերում ոչխարի առևտուրը. «Ոչխարի վաճառականությունը այնչափ նշանավոր է, որ տարեկան հասնում է 1.200.000 տաճկական ոսկու (մոտ 20 մլն մարկ), և այդ գումարի մեծ մասը մնում է Էրզրումի հայերի ձեռքը»,- գրում էր Էդ.Նաումանը[5]:

Գ.Արծրունին, խոսելով Կարինի առևտրաշահ գործունեության մասին, գրում էր. «Կոստանդնուպոլսից եկող ապրանքը պատահում էր Պարսկաստան անցնող անմշակ և հում բերքերի հետ: Այնտեղ թափվում էին, նույնպես ամեն կողմերից, Հայաստանի թե՛ բնական բերքեր և թե՛ հայ ազգաբնակչության ձեռքերի վաստակը, աշխատասեր հայի և հայուհու արդյունագործությունը: Այսպիսով, թե՛ բնիկ և թե՛ օտարական

[1] *Մինախորյան Մ.,* նշված գիրքը, մաս Ա, էջ 153:
[2] *Նաուման Էդ.,* Էրզրում, Թիֆլիս, 1896, էջ 29:
[3] *Քոսյան Հ.,* Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 36:
[4] Նույն տեղում:
[5] *Նաուման Էդ.,* նշված գիրքը, էջ 30:

առևտրականները, նույնպես և պարսիկ, հույն, երբեմն էլ եվրոպացի վաճառականներ, հավաքվելով Էրզրումի մեջ, տալիս էին այդ քաղաքին կյանք և առևտրական նշանակություն»[1]:

Կարինի վաճառականներն արտահանում էին ցորեն, գարի, պղնձյա իրեր, արծաթյա զարդեր, յուղ, պանիր, բուրդ, ոչխար, խոշոր եղջերավոր անասուններ, արհեստագործական իրեր, մորթիներ, մեղր, մեղրամոմ, ճրագու, կապար, ներմուծում էին շաքար, սուրճ, լեղակ, որդան կարմիր, հինա, երկաթեղեն, պողպատ, գոմեշի մորթի, թուղթ, հայելի, սրբիչ, մկրատ, ֆես, կտորեղեն, մահուդ, շալ, մուշտակ, բամբակ: Հ.Էփրիկյանի տվյալներով, Կարինի վաճառականները տարեկան վաճառել են 30 մլն դահեկան կամ 6.875.000 ֆրանկ արժողության ապրանք, որից Ռուսաստանում իրացվել են 850.000, Գերմանիայում՝ 1.500.000, Անգլիայում՝ 800.000, Ավստրիայում՝ 300.000, Թուրքիայում՝ 3.275.000 ֆրանկի ապրանքներ, ներմուծվել 60 մլն դահեկանի (1.395.000 ֆրանկ) ապրանք. Անգլիայից՝ 2.400.000, Ավստրիայից՝1.800.000, Գերմանիայից՝ 2.100.000, Պարսկաստանից՝ 17.000.000, Ռուսաստանից՝ 1.600.000, Շվեյցարիայից՝ 400.000, Թուրքիայից՝ 2.500.000 և տարբեր վայրերից ու երկրներից՝ 1.095.000 ֆրանկի ապրանքներ[2]:

Հենվելով հայ առևտրականների վրա՝ Ռուսաստանը ձգտում է գերակշիռ դիրքի հասնել թուրքական առևտրում: Այդ նպատակով, հաշվի առնելով վառելանյութի մեծ պահանջարկը՝ ռուսական նավթային «Լույս» ընկերությունը Կարինում հիմնել էր վառելանյութի պահեստ՝ իր ձեռքում կենտրոնացնելով ինչպես նահանգի, այնպես էլ հարևան շրջանների վառելանյութի առևտուրը:

Լ.Չորմիսյանը հայտնում է, որ քաղաքում գործել են կերպասեղենի 20, ապակեգործների տասնյակ կրպակներ, հինգ կաշվի, չորս մետաքսի, երկու մետաղագործի, քարյուղի, կոշկեղենի, շաքարի, բրդյա ծածկոցների, գորգագործների և այլ արհեստանոցներ ու կրպակներ, հացահատիկի առևտրով զբաղվող հայ վաճառականների երեք տներ՝ իրենց պահեստներով: Հատկանշական է, որ գործերի առևտուրն ամբողջովին և յոթ դեղատները[3] գտնվում էին հայ վաճառականների ձեռքում: Հիշատակության է արժանի այն փաստը, որ մետաքսաթելի ստացման գործն ու մետաքսագործությունը Թուրքիայում նախաձեռնել և սկսել են հայերը: Նրանց ջանքերով Բուրսայում հիմնվում է Թուրքիայի առաջին շերամա-

[1] *Արծրունի Գ.,* Թուրքահայաստանի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 6:
[2] *Էփրիկյան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 305:
[3] *Չորմիսյան Լ.,* նշված գիրքը, էջ 174:

բուծական կայանը, իսկ այնուհետև Եվրոպայից գնվում և տեղադրվում է մետաքսագործական հաստոց: Կարինցի առևտրականների շարքում իրենց հայտնի տեղն ունեին Բաստուրմաճյան եղբայրները: Նրանք իրենց ձեռքում էին պահում բանակը մսով մատակարարելու մենաշնորհը:

Թերթի թղթակիցն իր ընթերցողներին հայտնելով այդ մասին՝ միաժամանակ նշում է, որ հայ եղբայրների մատակարարած միսը, շնորհիվ հատուկ վերամշակման, կարելի է պահել և օգտագործել երկար ժամանակ[1]:

1863թ. տվյալներով, մեկ տարում Կարին է ներմուծվել 577.000, արտահանվել՝ 14.000 ռուբլու ապրանք[2]: Դարի երկրորդ կեսին առանձնապես աշխույժ առևտրական գործունեություն էին ծավալել քաղաքի հացահատիկի առևտրով զբաղվող հայ վաճառականները: Նահանգում 1866-1890թթ. արտադրվել է 28.997.000 շինիկ կամ 12 մլն փութ հացահատիկ՝ գարի, ցորեն[3], որի մեծ մասը հայ առևտրականների միջոցով վաճառքի էր հանվում Թուրքիայի տարբեր շրջաններ: Միայն Դերջանի գավառը 1884թ. Դերսիմ էր արտահանել 16.000 փութ (1000 սոմար) հացահատիկ[4]:

Ղ.Չարըգի վկայությամբ, քաղաքի կարևորագույն առևտրավաճառականական կենտրոններից էին Խալօղլու, Կամպուսի, Տերվիշ, Թյուրյունի, Գենչ, Հաճի, Բաց, Բրխձի, Ժամի, Փաստրմաճոնց (կամ Բաստուրմաջյանների- Հ.Զ.) և այլ առևտրական տները: Թեև, նշում է հեղինակը, կային նաև մահմեդականներին պատկանող առևտրական տներ, բայց նրանցից ամենակարևորները «հայ վաճառականներու ձեռքն էր»[5]:

Ոչ միայն Կարինի, այլև Թուրքիայի նշանավոր առևտրականներից էին Գրիգոր, Կարապետ, Սարգիս Պալարյանները, Նշկյան, Ասատրյան, Ֆեդգլյան, Յուսուֆյան, Տուզյան եղբայրները, Հաճի Մանուկը, Աբել Կյուլպենկյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց կարողությամբ կարող էին մրցել եվրոպացի առևտրականների հետ: Հիշատակված առևտրականների ձեռքում էր Կարինի առևտրի 90 տոկոսը[6]:

Մեկ ուրիշ աղբյուրի վկայությամբ, Թուրքիայի արտահանման 40, ներմուծման 60 և ներքին առևտրի 80 տոկոսը գտնվում էր հայերի ձեռքում[7]:

---

[1] «Մշակ», 1890, նո.170:

[2] «Оттоманская империя». СПб., 1869, стр. 265.

[3] *Лаврионович Ю.,* Экономическое положение Турции, Տե՛ս «Турецкий сборник», СПб, 1909, стр. 144.

[4] *Колюбакин А.,* Материалы для описания Персии, Азиатской Турции и Закавказского края, Тифлис, 1888, h. 3, մաս I, բաժին 2, էջ 422:

[5] *Չարըգ Ղ.,* Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 107-108:

[6] *Զորմիսյան Լ.,* նշված գիրքը, էջ 174:

[7] Նույն տեղում:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի առևտրական 10 նշանավոր կենտրոններում 1895թ. գործում էին 71 հայ խոշոր առևտրականներ: Թուրքիայի հայ վաճառականության տարեգրությունը հարուստ է նշանակալի շատ փաստերով, որտեղ իր համեստ բաժինն ունի Կարինի հայ վաճառականությունը: Այսպես, օրինակ, կարինցի մի վաճառական 1815-1825թթ., տասը տարում, իր մենաշնորհը դարձնելով Եթովպիայի հետ զանազան ապրանքների առևտուրը, կուտակում է 250.000 ոսկե դրամ[1]:

Առևտրի զարգացման հաջորդ կաշկանդիչ միջոցը կառավարության հայահալած քաղաքականությունն էր: Եթե մինչև 1870թ. հայ առևտրականները համարյա անարգել էին գործում, ապա հատկապես 1877-1878թթ. պատերազմից հետո այդ հնարավորությունները վերացան: Կաշկանդիչ մեծ ուժ էր տարվող ծանր մաքսային քաղաքականությունը: Քաջ գիտենալով, որ Ասիական Թուրքիայի առևտուրը գտնվում է հայ և հույն առևտրականների ձեռքում, կառավարությունն այդ շրջանների համար նշանակում էր մաքսային կողոպտիչ համակարգ: Եվ քանի որ վերջինս որոշակի զենք չուներ և գտնվում էր անորոշության մեջ, տեղական իշխանության ներկայացուցիչները սահմանում էին իրենց շահավետ մաքսային համակարգերը, լրացուցիչ մաքսեր: Հատկապես անորոշ էր շաքարի մաքսը: Հայտնի է, որ շաքարն Արևելքի ամենագործածական սննդի տեսակներից մեկն էր, բայց դա չէր անհանգստացնողը. տարեկան մի քանի անգամ, ելնելով տարվա եղանակից, պահանջարկից, բարձրացվում էր մաքսի չափը: Մաքսի բարձրացումը հետապնդում էր շահադիտական նպատակներ: Մաքսային թալանի պատկերավոր նկարագրությունը տալիս է Ղ.Ինճիճյանը. «Արդ՝ այս է կարգ եւ օրենք մաքսին ի յէրզիռում յավուրս սուլթան Համիտի: Ամեն վաճառք եկեալք ի սահմանած օսմանեան տերութենե, վճարեն 4 առ 100, եւ ամեն վաճառք եկեալք ի սահմանած պարսից, վճարեն 11 առ 100: Բայց ի մաքսեն պարտ է տալ տասնորդս, զոր կոչեն ֆազլա, արանց կամ սպասավորաց մաքսատան: Ի հանելե զվաճառս ինչ յէրզիռումայ առ ի տանել յայլ սահմանս օսմանէան տերութեան, առ մի բեռն՝ պարտ է տալ 2 դուրուշ 8 փարայ: Ի մուծանելն զվաճառ ինչ յէրզիռում, թէ պարսից իցէ, եւ թէ օսմանեանց, թէ սակավ իցէ, եւ թե բազում, պարտ է տալ 22 փարայ ի իհտիսապ անճէսի: (Այս իհտիսապ որ է մալիքեանէ վճառի 600 դուրուշ): Վաճառք եկեալք յօսմանեան սահմանաց, որք մտանեն ի յէրզիռում միայն առ ի անցանել տար այն, եւ ոչ ի վաճառիլ անդէն, ուստի եւ ոչ

[1] Նույն տեղում, էջ 15:

հարկ լինի բանալ զնոյն, եղեալ ի վերա նշան՝ որ կոչի Կեչեր Կէօմիիւյի, տայ վաս այսօր զկեսն նույնչափ մաքսին, որչափ ինչ ունէր տալ, թէ վաճառեալ լիներ ի յէրզիռում: Վաճառք եկեալք յօսմանեան սահմանաց՝ որք մտանեն ի յէրզիռում ի վաճառիլ անդ, եւ ի ոչ վաճառիլն՝ ունին գնալ ի սահմանս պարսից, վճարեն 11 առ 100, այն՝ որչափ ինչ տայ վաճառն եկեալ ի սահմանաց պարսից: Վաճառ փախուցեալ յայսպիսի տրոց, ըստ իմանալն՝ տայ ի տուգանս այնչափ ինչ, որչափ ինչ ուներ տալ ի վճարելն զմաքս, յորմէ մի մասն առնուն սառաֆն, քեաթիպն, եւ արաերճի պաշին, որ է տիտապան, իսկ զմնացեալ մասն առնու մատնիչն, այս է 10 ղուրուշեն, զերիսն առնուն վերոգրեալ երեք անձինք, իսկ մնացեալ եօթն ղուրուշ առնու մատնիչն»[1]:

Թուրքիայում գոյություն ունեին առևտրական ու մաքսային տարբեր օրենքներ: Մի նահանգում օգտագործվող մաքսային համակարգը գործադրելի չէր մյուսում: Երզնկայի կանունը սահմանում էր մաքսային բոլորովին այլ քաղաքականություն, Կարինի կանունը՝ ուրիշ: Այստեղ վճռական դերը պատկանում էր տեղում գործածական առարկաներին ու նրանց պահանջարկին: Երզնկայի կանունը արձանագրում էր. «Տրապիզոնից բերված վուշի գործվածքեղենը, եթե քաղաքում վաճառվի (վաճառողը ինչ ազգից էլ որ լինի), յուրաքանչյուր թոփից տասը ևս ակչե պիտի վճարի: Տրապիզոնից բերված վուշի հագուստներից հարյուր հիսուն սև ակչե են վերցնում: Ռումից բերված պղինձը, շաքարը, գորգը, կաշվեղենը, Բուլգարեն՝ դանակը և այլ մանր ապրանքները, եթե Երզնկայում վաճառվեն, հարյուրից հինգը թամղու են վերցնում: Շաքարի բեռից հինգ հարյուր սև ակչե են վերցնում, իսկ գորգի, սոֆի (կերպասեղեն) բեռից ևս երեք հարյուր սև ակչե: Կաշվի բեռից չորս հարյուր ակչե են վերցնում, Բուլգարիի բեռից՝ հարյուր իննսունութ, որից իննսուն ակչե որպես մեծ բակ, ութսունչորս ակչե Սև Թամղայի և տասնութ սև ակչեն՝ Թերջանի Վարթիկ բերդի բաջն է: Մյուրդենիկի (murdesenk) եկող բեռից վաթսուն սև ակչե են վերցնում: Եթե երզնկացիները մետաքս բերեն, բաթմանից հիսուն սև ակչե են վերցնում, իսկ եթե Ռումի կերպաս բերեն, քսանհինգ ակչե: Վերոհիշյալ կերպասներից և բրնձից, օճառից, հինայից (hina) և նման ապրանքներից եթե քաղաքում վաճառեն, հարյուր սև ակչեից հինգ սև ակչե են վերցնում: Եթե ձիաշուկայում ձի վաճառվի, գնողից՝ քսանութ ակչե և վաճառողից տասներկու սև ակչե են գանձում: Եթե ջորի (վաճառվի), նույնպես է, իսկ ավանակ՝ դրանց կեսը: Եթե սպանդանո-

[1] *Ինճիճյան Ղ.,* Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1806, էջ 71-72:

ցում ոչխար վաճառվի, ամեն մեկ ոչխարի համար չորս սև ակչե, եթե գոմեշ՝ երեսուն, եթե եզ՝ տասնհինգ սև ակչե են վերցնում»[1]:

Կարինի նահանգի առևտրական կարևոր օջախներից էին նաև Երզնկան, Բայբուրդը, Քղին, Տերսինը, Խնուսը, Դերջանը, Թորթունը, Բայազետը: Կարինը հայտնի էր ոչ միայն իր առևտրական հարաբերություններով, այլև հանդիսանում էր Արևմտյան Հայաստանի արհեստագործության խոշորագույն կենտրոններից մեկը: Կարինը վաղուց հայտնի էր իբրև հայրենիք «ոսկերչաց, արծաթագործաց, մանավանդ պղնձագործաց և երկաթագործաց, որ որց կրպակք ընդ մեծի մասին կարգեալ կան՝ ի միամ պողոտայի՝ որ ծածկել է փայտահարկ առաստաղիվք և են յաղագս հայոց»[2]:

Եվ իրոք, Կարինն իր նշանավոր, հմուտ արհեստավորներով գայթակղիչ կենտրոն էր դարձել ոչ միայն Թուրքիայի, այլև օտարերկրյա առևտրականների համար: Քաղաքում գործում էին 18 շուկա, 1200 կրպակ[3], որոնցից առավել նշանավոր էին 40-45-ի հասնող կրպակները[4]:

Կարինի առավել հայտնի արհեստներից էր զինագործությունը: Հայ զինագործներից հռչակի էին հասել «յոթ եղբայրներ» անունով զինագործները, որոնց պատրաստած զենքերն իրենց որակով չէին զիջում եվրոպական զենքերին: Պ.Ա. Չիխաչյովը հայտնում է, որ զինագործ եղբայրներից կենդանի մնացած երկուսը, որպես պատասխան փաշայի ցույց տված նոր ատրճանակի, պատրաստում են նրա կրկնօրինակը, որն իսկականից կարողանում էին տարբերել միայն մասնագետները[5]:

Կարինի զինագործների պատրաստած զենքերը մասնակցել են 1867թ. Փարիզի, 1873թ. Վիեննայի, 1876թ. Ֆիլադելֆիայի ցուցահանդեսներին և շահել մրցանակներ, պարգևներ[6]:

Կարինում և Երզնկայում զբաղվում էին նաև կաշվի վերամշակությամբ, կոշկակարությամբ, բրդյա և բամբակյա, մետաքսյա, գործվածքների արտադրությամբ: 1860թ. Կարինում գործել է 6 կաշվի վերամշակման ձեռնարկություն, ուր մշակվել են 10000 եզան, գոմեշի, 20.000 այծի, ոչխարի մորթիներ: Կարինում նշանավոր էին դերձակները, մորթյա վերարկուներ կարողները: Ապխտած մսի (բաստուրմա- Հ.Զ.) մշակությամբ

[1] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», Ե., 1964, էջ 77:
[2] *Ինճիճյան Ղ.,* նշված գիրքը, էջ 71:
[3] *Проскуряков Я.С.,* Заметки о Турции, Тифлис, 1905, стр. 52.
[4] *Չարըգ Ղ.,* նշված գիրքը, էջ 110:
[5] *Чихачев П.А.,* стр. 32.
[6] *Ղազարյան Հ.,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երևան, 1965,, էջ 185:

հայտնի էին Բաստուրմաճյան եղբայրները: Վ.Փափազյանի խոսքերով՝ բաստուրմայի պատրաստումը Կարինի մենաշնորհն էր, ուր կային «մեծամեծ գործարարներ»[1]: Կարինի աչքի ընկնող ձեռնարկություններից էր նաև ծխախոտի վերամշակման արհեստանոցը, ուր հիմնականում աշխատում էին կանայք: Ձեռնարկությունը շարունակեց իր գործունեությունը մինչև 1888թ.[2]: Կարինի նահանգում կային նաև օղի, գինի թորող, փայտամշակությամբ զբաղվող արհեստանոցներ: Տարածված զբաղմունքներից էր ջուլհակությունը: Կանայք «ման ու փոխ են» անում «և այս մանածը մեկ ու կես բամբակի հետ փոխում և այսպիսով բամբակը ավելացնում, շալ գործում, տնեցիներին հանդերձ կարում»[3]:

Կարինում կտորեղենի, մանր ապրանքների վաճառքով զբաղվում էր 500 մարդ, գործում էին 1000 դերձակներ, ոսկերիչներ, պղնձագործներ, ժամագործներ, որմնադիրներ, հյուսներ[4]:

Հյուսնությունն ու որմնադրությունը զարգացած էին առանձնապես Օձնի, Կրիչք, Կան գյուղերում:

Բայբուրդի գավառում զբաղվում էին մրգերի վաճառքով, փայտամշակությամբ, մետաղագործությամբ: Նահանգում մեծ զարգացում էր ապրել նաև ձիաբուծությունը:

Եվրոպացի ճանապարհորդներից մեկը հիացմունքով էր խոսում նահանգի ձիերի մասին և նշում, որ Կարին նահանգի ձիաբույծները ոչնչով չեն զիջում եվրոպացիներին. «հայ ձիավաճառք իրենց եվրոպական եղբայրակիցներին բանի մը մեջ վար չեն մնար»[5]:

Թեև հայ առևտրաարդյունաբերական դասը հմտության շնորհիվ կարողանում էր պահպանել իր գոյությունը, նվաճված տնտեսական դիրքերը, սակայն, ելնելով տիրող սոցիալ-տնտեսական՝ հալածական բնույթ կրող հարաբերություններից, ժամանակի ընթացքում կորցնում էր ամբողջ կարողությունը՝ վերածվելով, լավագույն դեպքում, եվրոպացի վաճառականների ու արդյունաբերողների կցորդի, սպասարկողի: Արևմտահայ իրականության հեղձուցիչ մթնոլորտն ուրիշ ոչինչ չէր խոստանում, եթե ոչ Օսմանյան կայսրության բիրտ քաղաքականության «պարգևած» ունեզրկումն ու ստրկացումը: Ոտք դնելով իր գոյության յոթերորդ հարյուրամյակը՝ Օսմանյան կայսրությունը չցուցաբերեց առաջընթացի,

[1] *Փափազյան Վ.,* Երկեր, հ. 5, Երևան, 1958, էջ 513:
[2] Նույն տեղում, էջ 193:
[3] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, նո. 3, էջ 88:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 163:
[5] *Տրվըլե Ա.* և *Փիսոն Գ.,* Ուղևորություն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892, էջ 37:

կայուն տնտեսական հարաբերությունների հաստատման միտում: Հենվելով ագրարային համակարգի խարխուլ հիմքերին, պայքարի դրոշակ դարձնելով ձուլման ու ջարդերի մենաշնորհը՝ փրփրաբաշ նժույգի սանձերն արձակած հեծյալի պես այն արշավում էր հետ, դեպի անխուսափելի վայրէջք՝ երիվարների, սմբակների դոփյունների մեջ խլացնելով հպատակ ժողովուրդների թե՛ ազատագրության հասնելու ձգտումները և թե՛ գոյության իրավունք հայցող աղաղակները:

* * *

Քառասնական թվականներին Եվրոպայում սկսված հեղափոխական շարժումները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել եթե ոչ թուրքերի, ապա հպատակ ժողովուրդների վրա:

Այդ ազդեցությունն ավելի ուժեղացավ Ղրիմի պատերազմից հետո: Ազգային զարթոնքը համակեց համարյա բոլոր քրիստոնյաներին: Ազգային գիտակցության վերընթաց ուղին ստրկացված ժողովուրդներին բերեց այն համոզմանը, որ ազատության հասնելու միակ ճանապարհը զինված պայքարն է:

Դարի երկրորդ կեսին տեղաշարժեր նկատվեցին նաև եվրոպական կրթություն ստացած թուրք պաշտոնյաների շրջանում: Նրանք երկիրն անխուսափելի կործանումից փրկելու համար առաջարկում էին վերացնել միջնադարյան ֆեոդալական հարաբերությունները, հաստատել սահմանադրական կարգեր: Սակայն այդ գործիչները, հետամուտ լինելով կայսրության հետամնացությունը վերացնելու խնդիրներին, թշնամանքով էին լցված հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումների նկատմամբ՝ դրանք դիտելով որպես երկիրը դեպի մասնատում տանող ուժեր:

Տնտեսական հետամնացությունը հաղթահարելու, հպատակ քրիստոնյաներին մահմեդականներին հավասար իրավունքներ շնորհելու համարում ունեցող 1839 և 1856թթ. բարձրագոչ հրովարտակները խորթ մնացին թուրքական իրականությանը, և, ի վերջո, բացառվեց դրանց գործադրության հնարավորությունը:

Պարզ է, որ նման պայմաններում ոչ միայն չէին թուլանալու հպատակ ժողովուրդների ճնշումն ու հալածանքը, այլև, ելնելով կայսրության ամբողջականության պահպանման ձգտումներից, ավելի դաժանորեն էր իրականացվելու ձուլման արյունոտ քաղաքականությունը:

«Կարեկցության ոգին վերանում է այնտեղից, ուր թշվառությունն ընդհանուր է լինում: Այդպիսի դեպքերում բանական մարդիքը երկու դասակարգերի են բաժանվում՝ գազանների և անասունների, ճնշողների և ճնշվողների: Տիրապետող ոգին լինում է երկյուղը: Ճնշողը՝ երկյուղից ստիպված, միշտ ճնշված է պահում, ճնշվածը՝ դարձյալ երկյուղից ստիպված, միշտ ճնշված է մնում. . .»[1]:

Այսպիսի փոխհարաբերությունների մեջ գտնվող արևմտահայությունը, համբերությունը զենք դարձրած, սպասում էր: Տեղաշարժեր դեռևս չկային, չկար այն ուժը, որ ի մի բերեր արևմտահայությանը, ոտքի հաներ դարավոր ճնշման դեմ:

Իրավացի էր Գ.Օտյանը, երբ գրում էր. «. . .տասն և իններորդ դարուս մեջ՝ ազգ մը, որ զարգանալու ընդունակություն ունի և չի զարգանար, հրեշ մըն է և իր վախճանը կորուստ է անխուսափելի»[2]:

Արևմտահայության առաջընթացն արգելակողը, հոգեկան կարողությունները դրսևորելու հնարավորությունից զրկողը բռնակալությունն էր: Սակայն, բախվելով կաշկանդիչ ուժերի միջնաբերդին, չէր նշանակում, թե արևմտահայությունը խուսափում էր պայքարից. համակերպվելով ստեղծված դրությանը՝ նա չէր կորցրել հավատը, որովհետև, ինչպես գրում էր Ա.Արփիարյանը. «Ազգ մը, նախ իր ճակատագրին վրա անպարտելի հավատք պետք է ունենա, որ ապրի»[3]:

Դժբախտաբար, դարեր շարունակ ենթարկվելով թուրքական անվերջ կրկնվող կեղեքումներին ու հալածանքներին՝ արևմտահայությունը կորցրել էր իր ուժի նկատմամբ հավատը:

Հայրենիքում տիրող դժոխային, անշարժ այդ վիճակը նկատի ուներ Մ.Պեշիկթաշլյանը, երբ զգաստության ու պայքարի էր կոչում եղբայրներին. «Վասն զի կարծես ալ ժամանակը հասած է: Ի՞նչ, երբ ամեն ազգեր արև ու լույս կվայելեն, մե՞նք միայն մթության մեջ կենանք, ուրեմն միշտ ատելության ոգին մեր մտքին, որոշման ու գործադրության մեջ ահագին պա՞տ մը պիտի քաշե, ու հայոց ազգը Կայենի նման, չէ թե Աստուծոյ այլ բադդին անջնջելի անեծքը միշտ ճակատին վրա բերելով իմաստության ճամբեն մոլորեալ թափառակա՞ն պարտի միշտ, ու վերջապես ուրիշ բան պիտի ըլլա, բայց եթե ճամբաներու վրա ձգված ողորմելի դիա՞կ մը...»[4]:

[1] *Աղայան Ղ.,* Մի երես մեր նորագույն պատմությունից, Մոսկվա, 1891, էջ 2:
[2] *Օտյան Գ.,* Սահմանադրական խոսքեր և ճառեր, Կ.Պոլիս, 1910, էջ 2:
[3] «Նոր կյանք», 1900, նո. 151:
[4] *Պեշիկթաշլյան Մ.,* Քերթվածքներ ու ճառեր, Փարիզ, 1904, էջ 153:

«Ազգը իմաստության կոչունքին» հրավիրող հայրենասեր բանաստեղծը զգում էր, որ կործանումն անխուսափելի էր, որ առանց պայքարի ժողովուրդը «ճամբաներու վրա ձգված ողորմելի դիակ» կմնա, կոչնչանա, կվերանա պատմական ասպարեզից՝ իր տեղը զիջելով բիրտ ու անասնական ուժին:

Թուրքիան՝ «ժողովրդին պրոֆեսիոնալ կարգով» կողոպտող այդ պետությունը, իր գոյությունն ապահովելու ողջ ծանրությունը գցելով հպատակ ժողովուրդների վրա, նրանց ստրկական վիճակի մեջ պահելու նպատակով խլում էր տնտեսական ու քաղաքական ամենատարրական իրավունքները: Մահմեդական կրոնը, տեր ու տնօրեն դառնալով ներքին հարաբերությունների վրա, քրիստոնյա հպատակների ճնշման ու հալածանքի մեջ է տեսնում իր գաղափարախոսության հարատևումն ապահովելու գրավականը: Ելնելով Ղուրանի սկզբունքներից՝ սուլթանները երկրում հաստատել էին ճնշիչ այնպիսի իրավաքաղաքական հարաբերություններ, որոնց մեջ գտնվող քրիստոնյաները, ֆիզիկական գոյությունը պահպանելու հնարավորություններից զրկվելով, կընդունեին մահմեդական կրոնը: Եթե մահմեդական կրոնի առաջին դոգմաներից մեկն անհավատների դեմ պայքարն էր, նրանց վրա տիրապետության հաստատումը, ապա հաջորդ սկզբունքը հպատակ ժողովուրդների ձուլումն էր, ազգային ինքնագիտակցության հալածանքը, այնքան ժամանակ, քանի դեռ այդ հալածանքների հողմերի մեջ ընկածները չէին թեքվի միակ «ճշմարիտ» հավատի՝ մահմեդական կրոնի կողմը:

Այդ նպատակի իրագործման համար սահմանվել էին կանոններ, հրապարակվել էին օրենքներ, մշակվել միջոցառումներ, որոնցից շատերն ունեին հարյուրամյակների պատմություն և կատարելագործելով պահպանել էին իրենց գոյությունը:

«Կանուն ռայան», որ մշակվել էր անհիշելի ժամանակներից, ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ քրիստոնյաներին կեղեքելու, իրավունքներից զրկելու, ոչնչացնելու օրենսգիրք: Ղուրանի սկզբունքների վրա կառուցված այդ, այսպես կոչված, օրենսգիրքը սահմանում էր անհավատների իրավունքները, պարտականությունները: Դա միջոց էր, որով քրիստոնյաները զրկվում էին տնտեսական ու քաղաքական ամենատարրական իրավունքներից՝ վերածվելով ստրուկների, մահմեդականի կամքին հլու ընչազուրկ արարածների, որոնց հետ կարելի էր վարվել ցանկացած ձևով: Քրիստոնյա հպատակների նման վիճակը համարվում էր Աստծու՝ ալլահի կողմից շնորհված կացություն:

Հայերի վիճակը Թուրքիայում, գրում էր Ա.Չոպանյանը, «կացություն մըն էր ստրուկներու, որոնք պարտականություններ ունեն միայն և ոչ իրավունքներ»[1]:

Հիշյալ կանունն անընդհատ կատարելագործվելով ու լրացվելով՝ գոյությունը պահպանում էր նաև թանզիմաթների շրջանում: Կանունի դոգմաներից մեկը, որ «մշակվել» էր 637թ., սահմանում էր քրիստոնյաների «պարտականությունները»: Սկսած հասարակ մահմեդականից, հայտարարում է կանունը, վերջացրած փաշայով, իրավունք ունեն քրիստոնյայից պահանջել հարկաբաժին, սնունդ, նվերներ, դրամ, անգամ կնոջը: Իսկ հյուրասիրվելուց հետո՝ ատամի վարձ: Այդ «պարտադրված հյուրասիրությունը», որի զարդերից մեկն էլ, գրում էր Կ.Մ. Մակ-Կոլը, հայ կինն էր, դարձել էր սովորություն, օրենք[2]:

Բայց հպատակ քրիստոնյաները հաճախ ընդվզում էին կանունի պահանջների դեմ: Հետագայում, նկատի ունենալով դիմադրության դեպքերը, օրենք ընդունվեց, որով նման փորձերի հանդիպելիս, մահմեդականին իրավունք էր վերապահվում սպանել քրիստոնյային:

1695-1808թթ. գործում էր քրիստոնյա հպատակների հանգուցյալների թաղման իրավունքի խիստ արհամարհական օրենք: Թաղման իրավունքը տալիս էր մոլլան: Վիրավորանքներ հասցնելով հանգուցյալին՝ մոլլան թույլատրում էր թաղումը:

Այս սահմանափակումները, չնայած թանզիմաթների խոստումներին, չվերացվեցին և հետագայում ավելի կատարելագործվեցին: Այսպես, օրինակ, կանունի համաձայն, քրիստոնյան իրավունք չուներ ձի նստելու, իսկ եթե պատերազմի ժամանակ նա օգնում էր մահմեդականին, ապա ստանում էր այդ իրավունքը: Եթե հնում քրիստոնյաները կարող էին աշխատել տեղական մարմիններում, ապա 19-րդ դարում նրանք զրկվեցին այդ իրավունքից, որովհետև պաշտոն ունենալու դեմքում կարժանանային մահմեդականի հարգանքին: Մահմեդականը, ինչքան էլ մտերիմ կապերի մեջ լիներ քրիստոնյայի հետ, փողոցում նրան հանդիպելիս, ձեռքով չպետք է բարևեր, որովհետև դա արհամարհանք էր Ղուրանի նկատմամբ: Քրիստոնյան իրավունք չուներ մահմեդականների թաղամասում տուն գնել կամ բնակվել, իսկ եթե չքավոր էր, կարող էր: Քրիստոնյան իրավունք ուներ երթևեկելու միայն էշով, մազերը չպետք է ցուցադրեր, չպիտի հագներ գունավոր գուլպաներ, նոր շորերով չպիտի դուրս գար փողոց, որով-

[1] *Չոպանյան Ա.,* Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 113:
[2] *Мак-Коль К.М.,* նշվ. գիրքը, էջ 140:

հետև այս և մի շարք այլ արգելքները դիտվում էին որպես ըմբոստություն, «ճշմարիտ» հավատքի սկզբունքների ոտնահարում:

Հայերի վրա, բացի վերը նշված սահմանափակումներից, դրված էին նաև ուրիշ ստրկացնող պարտականություններ: Հայը պետք է մաքրեր թուրքի տանիքի ձյունը, բակը, նարգիլեն պետք է կրակ լցներ: Մահմեդականը, եթե գնում էր Մեքքա ուխտի, ապա նրա ընտանիքի և կնոջ պահպանության հոգսը ընկնում էր հայի վրա: Վերջինս իրավունք չուներ նայելու թուրքի կնոջ երեսին, իսկ ընտանիքի մյուս անդամները պարտավոր էին հլու կամակատար դառնալ, մինչև ամուսինը վերադառնար: Հայերն իրավունք չունեին գիշերը տնից դուրս գալու, ռամազանի ծոմապահության օրերին ճաշարան մտնելու, հարսանիք կամ որևէ այլ արարողություն կատարելու:

Նշված սահմանափակումների մեծ մասն իր գոյությունը պահպանեց նաև 1856թ. թանզիմաթից հետո:

«Ընդհանուր առմամբ,- գրում էր Մեզիերը,- երկու մանիֆեստներն էլ (նկատի ունի 1839 և 1856թթ. թանզիմաթները- Հ.Զ.) քրիստոնյաների համար հավասարվեցին զրոյի»[1]:

Ինչպես տեսնում ենք, ստեղծված էր ծանր կացություն, իրավական ու քաղաքական անբարեհույս վիճակ, որին դարեր շարունակ համակերպվել էր արևմտահայությունը: Հայաստանն անվանելով «կիսամեռ մարմին»՝ Մ.Մամուրյանը գրում էր. «Այն երբեմն ազդու և զորավոր հառաչանքներ կարձակե, որմե կենթադրվի թե ի ձորոց սիրտ կզգա և կճանաչե իր ցավերը և թերևս անորոշ՝ բայց սրտաշարժ հեծեծանաց իմաստն է «Հայաստան, Հայաստան» սրբազան բառ մը՝ որ իր մեջ ամբողջ դարեր և մեծ և անկեալ ազգ մը անցյալն ու ապագան կամփոփե»[2]:

Արևմտահայ գավառն ընկած էր տեղական իշխանությունների, ոստիկանության, զինվորականների, հարկահանների, վաշխառուների, անանուն ու օրածին հարստահարիչների կեղեքման ու ճնշման տակ: Եթե քաղաքաբնակ քրիստոնյաները կարողանում էին պատրիարքարանի ու դեսպանների օգնությամբ պահպանել իրենց անձն ու սեփականությունը, զբաղվել առևտրով, հասնել բարձր դիրքի, ապա այլ էր դրությունը գավառներում, ուր «լիակատար իշխում էր հողատերը, որովհետև այնտեղ կամայականության դեմ չկար ոչ մեկ արգելք: Հայտարարված բարենորոգումները գյուղերի համար մնացին որպես մեռած տառ»[3]:

[1] *Мезиер А.,* Турция, СПб, 1907, էջ 51-52:
[2] *Մամուրյան Մ.,* նշված գիրքը, էջ 53:
[3] *Мезиер А.,* նշված գիրքը, էջ 52:

Օսմանիզմը գաղափարաքաղաքական դոկտրին ընդունած սուլթանի գործունեությունը հիմնականում ուղղված էր երկրի ամբողջականության ապահովմանը, որի առաջին հակառակորդները հպատակ քրիստոնյաներն էին, նրանց ազատագրական շարժումները: Քրիստոնյաների դեմ կիրառվող տնտեսական ու քաղաքական հալածանքների քաղաքականությունն ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ օսմանացման գծի իրականացում: Այսինքն՝ Մուստաֆա փաշա Բայրակդարի խոսքերով ասած, «սրով ձեռք բերված պետությունը միայն սրով էլ պիտի պահպանել»[1]:

Գործածության մեջ դրված «օսմանյան ազգ», «օսմանցի» անվանումներն ուրիշ ոչինչ չէին, եթե ոչ այդ նպատակն իրականացնող քաղաքականության ապացույցներ:

Ֆաուզ և Ալի փաշաները՝ «նոր օսմանների» գաղափարախոսության սկզբնավորողները, նպատակ չունեին հպատակներին մահմեդականներին հավասար իրավունքներ բաշխել: Նրանք, սերտ կապերի մեջ գտնվելով շեյխ Ահմեդի «Շարիաթի պաշտպանության ընկերության» հետ, իրականացնում էին նրա ծրագրերը: Նույն քաղաքականությունն էր շարունակում նաև օսմանիզմի ընդգծված գաղափարակիր Միդհատ փաշան, որի ջանքերով 1876թ. ընդունված սահմանադրությունը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ սահմանադրական բնույթ տալ օսմանիզմի գաղափարախոսությանը:

19-րդ դարի երկրորդ կեսից Կարինում և նահանգում սկիզբ դրվեց աշխարհիկ ուսուցմանը: Մինչ այդ, ընդհուպ մինչև 1863թ., հայկական դպրոցները ղեկավարվում էին պետության կողմից դպրոցների սեփականատեր ճանաչված անձի՝ մութելի կողմից:

1876թ. օսմանյան սահմանադրությունից հետո դպրոցների ղեկավարությունն անցավ թաղական խորհուրդների և նրանց կողմից նշանակված հոգաբարձուների ձեռքը:

1878թ. սկսած՝ դպրոցներն աշակերտներին տալիս էին ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ գիտելիքներ:

Միայն Կարինում գործում էին 10 վարժարաններ, 7-ը՝ խառը, 2-ը՝ արական, մեկը՝ իգական[2]:

Հ.Էփրիկյանի հաշվառումներով դարավերջին Արծնյան վարժարանում սովորել են 533 տղա, 70 աղջիկ, Հռիփսիմյան վարժարանում՝ 400 աշակերտ, Մսրյան՝ 186 տղա, 245 աղջիկ, Ազարյան՝ 111 տղա, 120 աղջիկ, Աղաբալյան՝ 71 տղա, 43 աղջիկ, Սանասարյան՝ 200 աշակերտ:

[1] *Миллер А.Ф.,* Мустафа паша Байрактар, М-Л., 1947, стр. 31.
[2] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 165:

Նշված վարժարաններից բացի, գործում էին նաև ամերիկյան որբանոցը՝ 109 երեխա, ամերիկյան վարժարանը՝ 7 տղա, 13 աղջիկ, Մայրապետաց վարժարանը՝ 15 աղջիկ, պետական վարժարանը՝ 5 տղա[1]:

Ա.Դոյի վկայությամբ, քաղաքում գործել են հետևյալ վարժարանները. Արծնյան՝ 334 աշակերտ, Գավաֆյան՝ 271, Մսրյան՝ 175, Տ.Ազարյան՝ 195, Աղաբալյան՝ 230, Մսրյան՝ հնգամյա՝ 104, Տ.Ազատյան՝ հնգամյա՝ 72, Արծնյան՝ յոթնամյա՝ 314, Հռիփսիմյան՝ 291, Սանասարյան՝ 182, ընդամենը՝ 2168 աշակերտ, 98 ուսուցիչ: Կարինի գավառում գործել են 114 դպրոցներ 535 աշակերտով[2]:

Հ.Քոսյանի հաշվումներով՝ քաղաքում գործել են լուսավորչական հայերի 8 վարժարան, երեք մանկապարտեզ, բողոքականների երկու, կաթոլիկ մայրապետների, ամերիկյան, «Գափուչին կրօնաւորաց» վարժարանները՝ 2629 աշակերտներով[3]:

Վարժարաններից ամենահինը Արծնյանն էր: Այն իր անունը ստացել է ավերված Արծն քաղաքից: Վարժարանը գործել է 1811-1912թթ., որից հետո ավերվել է և նրա տեղը կառուցվել է «Խան» իջևանատուն: Քաղաքի և նահանգի կրթական գործի զարգացմանը մեծապես նպաստել է հոգևոր առաջնորդ Գրիգորիս Զորբաբելյանը՝ 1847-1848, երկրորդ անգամ՝ 1851-1859թթ.:

Նրա հայրենասիրական կոչերից հետո քաղաքի և գավառի մեծահարուստների, առևտրականների, արհեստավորների և հասարակ ժողովրդի նվիրատվությունների շնորհիվ մեկը մյուսի հետևից բացվում են նոր վարժարաններ: Միայն Կարինում այդ տարիներին բացվել են 10-11 վարժարաններ: Կարինի վարժարաններում ուսուցանում էին հայերեն, թվաբանություն, պատմություն, կրոն, աշխարհագրություն, իրավագիտություն, գեղագրություն, գծագրություն, երգի ուսուցում, երաժշտություն, մարմնամարզություն:

Կարինի կրթական հիմնարկների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Սանասարյան վարժարանը: Այն հիմնադրվեց 1881թ. Մկրտիչ Սանասարյանի միջոցներով: Միայն շենքի շինարարության վրա ծախսվել է 15.000 օսմանյան լիրա[4]:

Հարություն քահ. Հակոբյանցն իր հուշերում գրում է, որ քաղաքի կաթոլիկ և բողոքական հայերը Ստեփանոս եպիսկոպոսի գլխավորու-

[1] *Էփրիկյան Հ.,* Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1990, էջ 320-321:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 166-167:
[3] *Քոսյան Հ.,* Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 244-245:
[4] «Արարատ», 1885, փետրվար, էջ 73:

թյամբ պայքարում էին վարժարանի հիմնադրման, ապա՝ գործունեության դեմ: Հիշյալ եպիսկոպոսը գնում է Տրապիզոն, այնտեղից հրավիրում եվրոպական կրթություն ստացած ուսուցիչների, որպեսզի բարձրացնի կաթոլիկ վարժարանի նշանակությունը և գցի Սանասարյանի հեղինակությունը: Սակայն, ինչպես նշում է հուշագիրը, ժողովրդի լայն շրջանները հիացմունքով են ընդունում վարժարանի հիմնադրման լուրը և գուրգուրանքով շրջապատում նրան:

«Անկարելի է նկարագրել ժողովրդյան երախտագիտությունը առ բարերարն վարժարանի, բարձր մաղթանքներն և ի խոր սրտե շնորհակալիքն. առ այս, կարծես, կպատրաստեին մի շնորհակալոց ուղերձ ներկայացնելու Աղա Մկրտիչ Սանասարյանին ընդմիշտ երախտագիտություն առ նորին մեծապատվություն ցուցանելով»,- գրում է Հ. քահ. Հակոբյանը[1]:

Վարժարանը, ի տարբերություն Կարինի մյուս վարժարանների, ուներ կաբինետային ուսուցման հնարավորություններ: Կենդանաբանության և պատմության կաբինետներն ունեին հարուստ հավաքածուներ, գրադարանում կար 6000 կտոր գիրք:

Սանասարյան վարժարանի մասին հուշեր ունի հայ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Նրա վկայությամբ, վարժարանն ունեցել է նաև ձեռագրերի արժեքավոր հավաքածու, որի թիվը 1895թ. հասնում էր 43-ի[2]: Հ.Քոսյանի տվյալներով, վարժարանն ունեցել է 94 կտոր ձեռագիր մատյան, 539 կտոր ոսկյա, արծաթյա, պղնձյա հին դրամներ: 1882-1911թթ. վարժարանում սովորել են 840 աշակերտներ, 513-ը գիշերօթիկ, 327-ը ցերեկային բաժիններում, նրանցից՝ 482 աշակերտ թոշակառու, 385-ը անվճար ուսուցմամբ:

Ղ.Չարըգի տվյալներով, 1881-1912թթ. դպրոցը տվել է 1007 շրջանավարտ, որոնցից 70-ը որպես ուսուցիչներ աշխատել են Կարինի և հարևան նահանգների ու գավառների քաղաքային ու գյուղական դպրոցներում[3]:

1851-1908թթ. Կարինում կազմակերպվել են 17 ընկերություններ, որոնք նպատակ ունեին աշխուժացնել կրթական, մշակութային կյանքը, օգնել աղքատներին: Այդ ընկերություններից հիշատակության են արժանի Կրթական, Թատերական, Արշարունի, Արծնյան, Ուսումնասիրաց, Հատուկ, Անձնվեր, Բարձր հայոց միություն, Աղքատասիրաց, Աղքատախնամ և այլ ընկերությունները:

[1] Նույն տեղում:
[2] *Աճառյան Հ.,* Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1900, էջ ԺԷ:
[3] *Չարըգ Ղ.,* նշված գիրքը, էջ 219:

1870թ. «Փունջ» թերթին ուղարկած թղթակցությունում հայտնվում էր, որ մտադրություն կա քաղաքում հիմնել կրթական ընկերություն: Սակայն թուրքական իշխանությունների թշնամական քաղաքականության պատճառով ընկերության կազմակերպման աշխատանքները ձգձգվում են, և միայն 1876թ., Հ.Նշկյանի վկայությամբ, հիմնվում է այն: Կրթական ընկերությունը, բացի իր հիմնական նպատակից՝ լուսավորության տարածումից, մտադրվել էր նաև հրապարակել «Գարուն» անունով թերթ: 1876թ. ընկերության կազմակերպման հետ միաժամանակ իր աշխատանքներն է սկսում նաև «Կրթական» անունով վարժարանը:

Կարինի և, ընդհանրապես, նահանգի, մշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր թատերական ընկերության գործունեությունը: Թեև դեռևս 1870-ական թվականներից հիշատակություն կա քաղաքում թատերական ներկայացումների մասին, սակայն «Մեծն Ներսես» բեմադրությունից հետո թատերական խմբակը դադարում է գործելուց:

Կ.Պոլսի «Օրագիր» թերթում հոդվածագիր Հայկունին, բարձր գնահատելով այդ ողբերգության բեմադրումը, գրում էր. «Արդարև Կարին՝ որ տակավին այսպիսի թատերական ներկայացում մի տեսած չէր ցարդ իր ծոցը՝ կրնա խորին տպավորություն մի գործել նորա բարոյական կենաց վրա, սույնօրինակ սրտաշարժ ողբերգությանց ներկայացմունք»[1]:

Կարինում թատերական կյանքը ծաղկում է ապրում 1878թ.: Օգտվելով այն հանգամանքից, որ քաղաքում էր գտնվում ռուսական բանակը, կազմակերպվում է «Ազգային թատերական ընկերություն», որը նպատակ ուներ «հայուն հին փառքերը կամ տառապանքները ներկայացնելով՝ ժողովուրդը եռանդի բերել, անոնց պաղած սրտերը հրահրել, և վրեժխնդրության հոգին բորբոքել»,- գրում է Հ.Նշկյանը[2]:

Ընկերությունը ստեղծում է նաև իր վարչությունը, որի նախաձեռնությամբ ստեղծվում և 1878թ. օգոստոսի 9-ին ավարտվում է թատրոնի շենքի կառուցումը: Առաջիններից մեկը բեմադրվում է Պ.Դուրյանի «Մև հողերը», 1878թ. ապրիլի 23-ին՝ «Վահեի պատերազմը Ալեքսանդր Մակեդոնացու դեմ» հայրենասիրական թեմայով ներկայացումը, որը տևել է երեք ու կես ժամ: Ներկայացումը դիտել են նաև «10-ի չափ հայազգի զորավարք ռուսաց»[3]:

Ներկայացումները տրվել են տեղական ուժերով, որոնց հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սանասարյան վարժարանի

[1] Օրագիր, Կ. Պոլիս, 1874, նո. 1321 (օգոստոս):
[2] *Նշկյան Հ.,* Առաջին կայծերը, «Պայքարի» տպարան, 1930, էջ 38:
[3] *Չարբգ Ղ.,* նշված գիրքը, էջ 219:

ուսուցիչներն ու բարձր դասարանի աշակերտները: Թեև տեղեկություններ կան այն մասին, որ ներկայացումներին մասնակցել են նաև ռուսական և Կ.Պոլսից հրավիրված դերասան-դերասանուհիներ, սակայն Հ.Նշկյանը վկայում է, որ «ռուսահայ բնավ չկար թատերական ընկերության մեջ, ոչ ալ դերասաններ, կամ դերասանուհիներ բերված Պոլսեն»[1]:

Ընկերությունը բեմականացնում էր Մ.Պեշիկթաշլյանի, Պ.Դուրյանի պիեսները: «Վարդանանց պատերազմ» թատերագրության, ինչպես նաև Մոլիերի զավեշտների և կազմակերպված թուրքերեն բեմադրությունները նպատակ ունեին հեռու մնալ իշխանությունների հետապնդումներից:

Հիշարժան է «Վարդանանց պատերազմ» բեմադրությունը, որից հետո ընդհարում է տեղի ունեցել հայերի ու պարսիկների միջև:

«Վարդանանց պատերազմը» ներկայացմանը հրավիրված է եղել նաև պարսից հյուպատոսը: Նա, ներկայացումից հետո շնորհավորելով դերասաններին հաջող բեմադրության առթիվ, ավելացնում է. «Բայց շատ պարսիկ ջարդեցիք»: Դերասանները կատակով պատասխանում են, թե իրենց ջարդած պարսիկները չեն մահանում:

Երբ Բեռլինի կոնգրեսից հետո ռուսական զորքերը հեռացան Կարինից (1878թ. օգոստոսի 30), նահանգի Ֆազըլ փաշան թշնամաբար տրամադրվեց թատերական ներկայացումների նկատմամբ և իբր հանգստություն ապահովելու պատրվակով, նկատի առնելով ներկայացումից հետո հայ-պարսկական ընդհարումը, դրանք որակեց որպես «վնասակար», «ժողովրդի արթնանալուն» նպաստող, և առիթներ էր փնտրում ընկերության գործունեությունը դադարեցնելու:

Չարըգը, սակայն, չի հաստատում Նշկյանի վկայությունը և գտնում է, որ ընկերությունը գործունեությունը ոչ միայն չի դադարեցրել, այլև 1883-1900թթ. գործել է ընդհատումներով: «Արևելք» թերթի 1900թ. թիվ 1427-ից իմանում ենք, որ նույն թվականի փետրվարի 26-ին բեմադրվել է Հ.Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» գործը, որին ներկա են եղել նաև Ռուաֆ փաշան և 800 հանդիսական:

Տարբեր տարիներ (1909-1914թթ.) Կարինում տպագրվել են «Ազատություն», «Լույս», «Հառաջ», «Սիրտ», «Ալիք», «Երկիր» թերթերը: Բացի այս պարբերականներից, Կարինում տպագրվել են նաև խմորատիպ թերթեր:

[1] *Նշկյան Հ.,* նշված գիրքը, էջ 40:

Առաջին խմորատիպը «Գարուն» թերթն էր (1870թ.): 1895թ. Կարինի երիտասարդության՝ «Մի սիրտ և մի հոգի» անունով թերթ հրապարակելու փորձն ավարտվում է անհաջողությամբ: 1896թ. հունվարի 1-ին լույս են տեսնում «Վոսվոր», «Հանդես ամսօրյա» թերթերը: Վերջինս ունեցավ չորս համար, ընդամենը 98 էջ: 1895թ. ապրիլի 1-ին հրատարակվեց «Ընկերական սիրտ» ձեռագիր թերթը (ընդամենը 24 էջ, երկու համար), նույն թվականին՝ «Մանր երգեր» կիսամյա հանդեսը՝ երկու տետրով:

1865թ. ընդունվեց տպագրության մասին նոր օրենքը: 1867թ., որպես լրացում այդ օրենքի, մշակվեցին տպագրության ժամանակավոր կանոնները, որով հսկողության տակ էին վերցվում հատկապես քաղաքական բնույթի և մասնավորապես ազգային լեզուներով տպագրվող գրքերն ու թերթերը: Կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում միջոցներ գործադրել մամուլի այն օրգանների դեմ, որոնք անբարեհամբույր կլինեին «պետական միասնության և պետական իշխանության» սկզբունքների հանդեպ:

Չբավարարվելով նշված արգելքներով,՝շուտով ստեղծվեց ևս մեկ կաշկանդիչ օրգան՝ «Մամուլի բյուրոն»: Նրա սահմանափակ իրավունքները հնարավորություն էին տալիս ցանկացած ժամանակ արգելել այս կամ այն թերթի տպագրությունը: Այս դրությունը շարունակվեց մինչև 1876թ. սահմանադրությունը, որից հետո թերթերը կարճ ժամանակահատվածում ստացան ազատ գործելու հնարավորություն: Սակայն արյունարբու սուլթանը, կանխատեսելով այդ ազատությունների բերած հետևանքները, ցրեց պառլամենտը՝ գործադրության ընդունելով զուլումի քաղաքականությունը:

Հ.Սվաճյանն ընթերցողներին հայտնելով «Մեղուի» փակման մասին կառավարական որոշումը՝ նշում էր այն պատճառները, որոնց հետևանքով արգելվում էր թերթի տպագրությունը.

«Ազգին առջև՝ անհավատ
Տերության առջև՝ Ապստամբ.
Հեղափոխական...»[1]:

Սերբական թագավորի և թագուհու սպանությունը թուրքական մամուլի օրգանները հաղորդեցին այսպես. «Նորին մեծություն սերբական թագավոր Ալեքսանդրը և թագուհի Դրագան վախճանվել են կայծակի հարվածից»[2]:

[1] *Սվաճյան Հ.,* Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 221:
[2] Նույն տեղում:

Նենգ և սառը բռնակալն առանձնապես դաժան էր «Հայաստան», «հայ» անունների, հայոց լեզվի նկատմամբ:

«Թորթումի հները պատմում էին, որ հայերեն խոսողների լեզուները կտրում էին»,- գրում էր Ֆ.Բ. Բուռչանյանը[1]:

Շարունակվող հալածանքները նոր ուժով էին բռնկվում հայկական հարցի նկատմամբ յուրաքանչյուր հետաքրքրությունից հետո: «Վայ անոնց, որ կը հանդգնին *Հայաստան* բառը արտասանել. . .

Դատական նախարարության կողմե ծանուցագիր մը ղրկվեցավ Պատրիարքարան, խստիվ պատվիրելով սրբազան պատրիարքին, որ այսուհետև չգործածե *Հայաստան* բառը»[2]:

Աբդուլ Համիդի ժամանակ ավելի ծանր վիճակ ստեղծվեց գրքերի տպագրության համար: Թուրքիայում հնարավոր չէր գտնել Վոլտերի, Շիլլերի, Բայրոնի, Տոլստոյի, մյուս նշանավոր գրողների գրքերը: Հետախուզությունն ու գրաքննիչները մաքսատներում ստուգում էին յուրաքանչյուր տառը: Այս ամենին գումարվում էին մահմեդական հոգևորականության ու ոստիկանության գործողությունները, որոնք հետևում, ստուգում և արգելում էին մամուլի ու գրականության տարածումը: Խիստ հսկողություն սահմանվեց թատերական ներկայացումների վրա: Պ.Ադամյանը Վ.Սուրենյանցին Կ.Պոլսից գրած նամակում հայտնում է, որ «իշխանությունները արգելել են «Համլետի» և «Լիրի» ներկայացմունք»[3]:

Սուլթանի հակաքրիստոնեական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկն էլ կրոնական հալածանքն էր: Հ.Ասատուրը, խոսելով վարվող քաղաքական ու կրոնական քաղաքականության մասին, նշում էր, որ «մին մարմինն կստրկացներ, մյուսն հոգին կկաշկանդեր»[4]:

Նույն մտորումներն էր արտահայտում նաև Ղ.Աղայանը, երբ նկարագրելով արևմտահայության ծանր վիճակը՝ գրում էր. «Եթե քաղաքականապես ազատ մի ազգի մեջ ժողովուրդը կարող է ստրուկ լինել, մարդ կարող է իր գլխի տերը չլինել, հայրը կարող է իր որդու տերը չլինել, մարդն իր կնոջ, մայրն իր աղջկա, հովիվն իր ոչխարի, երկրագործն իր արտի ու ամբարի, ի՞նչ կլինի ուրեմն և այն ազգի վիճակը, որ ոչ թե ստրուկ, այլ գերի է համարվում մի այլակրոն և այլացեղ ազգի ձեռքի տակ...»[5] :

---

[1] *Բուռչանյան Ֆ.Բ.,* Մի ակնարկ Հայոց Խոտորջրի անցյալից, տե՛ս «Էջմիածին», 1950, մարտ, ապրիլ, էջ 49:
[2] *Պարոնյան Հ.,* Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1965, էջ 447:
[3] *Ադամյան Պ.,* Նամակներ, Ե., 1959, էջ 212:
[4] *Ասատուր Հ.,* Սահմանադրություն և հայ ժողովուրդն, Պոլիս, 1879, էջ 11-12:
[5] *Աղայան Ղ.,* նշված գիրքը, էջ 2:

Տնտեսական ու քաղաքական ճնշման տակ ընկած արևմտահայությունը եթե սկզբում դիմում էր միայն գաղթի ու պանդխտության օգնությանը, ապա հետո, մի ամբողջ դարաշրջան ասպարեզ իջավ հյուծիչ ու ոչնչացնող մի երևույթ՝ կրոնափոխությունը: Սուլթանը լավ էր հասկանում, որ բարոյական ու տնտեսական ճնշման տակ ընկած քրիստոնյան, ուրիշ ելք չունենալով, կընդունի մահմեդականություն, որովհետև կրոնափոխ քրիստոնյային սպասում էին տնտեսական և քաղաքական «արտոնություններ»:

Գ.Սրվանձտյանցը, ուսումնասիրելով Քղիի գավառի հայության վիճակը, մտահոգություն է հայտնում այն առթիվ, որ տնտեսական ու կրոնական բռնությունների տակ գտնվող ժողովուրդը թե՛ բարոյապես և թե՛ տնտեսապես մաշվում է, գնում դեպի կործանում, «ուստի ներկա պարագայից նկատմամբ ապագայի արգանդը խիստ շատ գայթակղության պատճառելիք սկզբունքներ ակներև կը նշմարվի ահռելի ապացույցներով, որուն նկատմամբ այսօր հայտնապես կը գրեմ, թե Քղիին մեջ քիչ միջոցի տնողությամբ հայ անուն կարող չի պիտի գտնվի, քան որ բռնության առթիվ շատեր կրոնափոխության դիմած են և պիտի դիմեն, ասիկա խիստ հայտնի բան մըն է որ ուր տեղ որ կը թագավորե բռնությունը, հոն չկա ազգային ու կրոնի ազատություն»[1]:

Քղին եզակի օրինակ չէր, նույն վիճակում էին գտնվում նաև արևմտահայ բոլոր գավառները:

Է.Դիլոնը վկայում է, որ իր շրջագայության ընթացքում ականատես է եղել հազարավոր այդպիսի դեպքերի: Բռնություն գործադրելով հայերի նկատմամբ՝ թուրքերն ու քրդերը նրանց ստիպում էին կրոնափոխ լինել: Պարտքատեր մահմեդականը սկսում էր պարտքերն ու նրա տոկոսները հավաքել այն ժամանակ, երբ քրիստոնյան սուղ կարիքի մեջ էր: Խորամանկ մուսուլմանը, ցուցաբերելով «բարերարություն», պարտքի դիմաց, որպես պատանդ, վերցնում էր հայի կնոջը կամ աղջկան, որից հետո ստիպում ընդունել մահմեդականություն: Կրոնափոխության հաջորդ միջոցը առևանգումն էր, բռնաբարությունը, երբ բարոյապես ընկճված հայուհին, չցանկանալով պատվազրկված վերադառնալ հայրական օջախ, դիմում էր կրոնափոխության: Վերջին երևույթը լայն տարածում էր գտել, և Է.Դիլոնը գրում էր, թե դա «համարվում է ծառայություն» մահմեդական կրոնին[2]:

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 173:
[2] *Эм. Дилон,* նշված գիրքը, էջ 369-370:

Առևանգման, կեղծ ու ստոր միջոցներով հայուհիներին կրոնափոխության դրդելու պատկերավոր նկարագրություն է Հ.Ղազարյանի «Խոնխոր» գրքի «Ամրոցի գերուհին» պատմվածք-իրողությունը:

Կրոնափոխության քաղաքականությունը կիզակետին հասավ 1894-1896 թվականներին: Բազմաթիվ դեպքերից մեկը, որ նկարագրում է մեծանուն հայագետ Հ.Աճառյանը, հայտնում է. «Պիրեճեքում թուրքերը 150 հոգի մորթեցին, մնացածները՝ 1500 իրենց ծնողների և ազգականների դիակների առաջ ծունկի չոքած բռնի մահմեդական դարձան, գլուխները փաթթոց կապեցին և իրենց եկեղեցին էլ մզկիթ դարձրին: 240 տուն հայերից մեկը չի մնաց»[1]:

Օգտվելով արևմտահայության ծանր վիճակից ու սուլթանի թողտվությունից՝ անարգել գործունեություն ծավալեցին եվրոպական միսիոներները: Ֆ.Է. Գրինը՝ Վանի ամերիկյան միսիոներական ընկերության անդամը, վկայում է, որ միսիոներների գործունեությանն ուժ ու եռանդ էր հաղորդում եվրոպական պետությունների պահանջով Աբդուլ Մեջիտի ընդունած 1850թ. հրամանագիրը, որով բողոքականներին մահմեդականներին հավասար իրավունքներ էին տրվում[2]:

Հյուսիսային Ամերիկայի հեթանոսների մեջ բողոքականությունը տարածելու նպատակով, 1810թ. Բոստոնում հիմնադրվեց բողոքականների մինիստերական ընկերությունը, որը շուտով իր բաժանմունքը բերեց Մերձավոր ու Միջին Արևելք:

Արևմտյան Հայաստանում կազմակերպված առաջին մինիստերական ընկերությունը Մալաթիայի բաժանմունքն էր: 1860թ. Կ.Պոլսում ստեղծված «Ռոբերտի կոլեգիան» իր բաժանմունքները բացեց Այնթափում և Խարբերդում, որոնք հետագայում ճյուղավորվեցին Մարաշում, Կարինում, Վանում, Բիթլիսում, Մարդինում: Բողոքական միսիան Արևմտյան Հայաստանում ուներ 69 եկեղեցի, 144 երիտասարդական կենտրոն, 150-ից ավելի ուսումնական հաստատություններ, ուր սովորում էին 8323 աշակերտներ[3]:

Կ.Պոլսի գլխավոր կենտրոնն իր բաժանմունքներով ուներ 42-45 հազար անդամներ[4]:

Այն բանից հետո, երբ սուլթանի 1850թ. հրամանը տարածվեց նաև կաթոլիկություն ընդունողների վրա, իրենց գործունեությունն աշխուժացրին կաթոլիկ մինիստերները ևս:

---

[1] *Աճառյան Հ.,* Տաճկահայ հարցի պատմությունը, Ն. Նախիջևան, 1915:

[2] *Грин Ф.Э.,* նշված գիրքը, стр. 270.

[3] *Колюбакин А.М.,* նշված գիրքը, стр. 106.

[4] Նույն տեղում, էջ 107:

Լ.Չորմիսյանի տվյալներով, կաթոլիկություն էին ընդունել 100.000 հայեր[1]: Կարինի նահանգում կաթոլիկական հավատի էին Խոտորջուրը, Սպերը, Կիսկիմը: 1867թ. Կարինում բացվեց տղաների, իսկ 1869թ.՝ աղջիկների վարժարանը, որոնց տնօրեններ էին նշանակվում Վենետիկի Մխիթարյաններից, 1902 թվականից այդ վարժարանների տնօրինությունն իրենց ձեռքը վերցրին Վիեննայի Մխիթարյանները:

1878թ. թուրքական տվյալներով, կրոնափոխ քրիստոնյաների թիվը հասնում էր 530 հազարի[2]:

Ազգի կենսունակությունը, հարատևությունը, ուժը, միաբանության մեջ է, հիշեցնում էր մեծ վիպասան Ռաֆֆին, որը չկար արևմտահայության մեջ, որովհետև «Տաճկաստանում հայոց եկեղեցվո բաժանվելը զանազան դավանությունների եղավ ազգային միության քակտվելու գլխավոր պատճառներից մեկը: Ազգը կորցրեց իր զորությունը, և նորա ուժերը ցրվեցան»[3]:

Թեև ազգի միաբանության համար որոշիչը միայն կրոնը չէ, այլ «արյունը», «լեզուն», «պատմական անցյալը», տնտեսական ու հասարակական շահերը, սակայն կրոնը, այն էլ արևմտահայության միասնության համար, կարևոր գործոն էր, ազգի քաղաքական ճակատագրի վճռորոշ ուժերից մեկը:

Կաթոլիկացման ու եվրոպականացման այս քուրայում, որը թանձր մոխիրի նման կուտակվում էր թուրքական կայսրության անհիմք պետական շենքի վրա, պետք է որ հանուն ճիշտ կողմնորոշման պայքարի ելներ առաջադեմ մտավորականությունը, որպեսզի ժողովուրդը ձերբազատվեր միամիտ այն վարկածից, թե ազատությունը հնարավոր է միմիայն Եվրոպայի օգնության պայմաններում: Հայ առաջավոր մտավորականությունը, պայքար սկսելով կաթոլիկության և կրոնափոխության դեմ, նպատակ ուներ բարձրացնել նիրհող ու ստրկության թմբիրի մեջ գտնվող արևմտահայության ինքնագիտակցությունը, նրան կոչել միաբանության:

Ահա սա էր ժամանակի պահանջը, որն անհապաղ լուծման կարիք ուներ, ընտրված նպատակակետ, Գ.Սրվանձտյանցի խոսքերով՝ «չոր ոսկրակույտ»[4] հանդիսացող հայրենի երկիրը վերակենդանացնելու ուխտ: Անհրաժեշտ էր այդ ոսկրակույտին մարմին տալ, արյուն, ոգի, ուժ, գործունեության ուղենիշ:

[1] *Չորմիսյան Լ.,* նշված գիրքը, էջ 395:
[2] Թուրքիայի հայերը և իրենց դրացիները, Վիեննա, 1890, էջ 10:
[3] *Ռաֆֆի,* Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1958, էջ 49:
[4] *Օտյան Ե.,* Սահմանադրական խոսքեր և ճառեր, Պոլիս, 1910, էջ Ժե:

Արևմտահայության վատթար քաղաքական կացության սրման վճռորոշ գործոնը իրավական նորմերի բացակայությունն էր: Թուրքական իրավական նորմերը, ծնունդ առնելով իսլամի դոգմաներից, պարզ է, որ քրիստոնյա հպատակների համար ստեղծելու էին ընչազուրկ վիճակ:

Ինչպես նշում է Էմիլ դե Ժիրարդենը, Թուրքիայում քրիստոնյաների համար չէր կարող լինել նորմալ դրություն, որովհետև երկու հակադիր կրոններից մեկը, ստանալով գերիշխանության իրավունք, սահմանափակելու էր մյուսի իրավունքները. «Իսլամը-դոգմա է, այն կուռ համակարգ է, որտեղ ոչինչ չի բացառվում: Կամ պետք է ամեն ինչ պահպանել, կամ բոլորը ոչնչացնել»[1]: Այստեղից էլ, եթե մահմեդական կրոնն իր տիրակալությունը հաստատելու համար ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում, ուրեմն, հակակրոն հպատակների նկատմամբ գործադրվող բոլոր միջոցներն արդարացվում էին: Այդ միջոցներից մեկը քրիստոնյաներին իրավական ստրկացուցիչ վիճակի մեջ դնելն էր:

Թուրքիայում գործող դատարանները հետևյալներն էին.

1. Շերիի դատարան, ղեկավարվում էր մահմեդական կրոնական օրենքներով:
2. Նիզամի, որն իր հերթին բաժանվում էր երկու խմբի:
3. Մեջելզ կամ քաղաքացիական իրավունքի, հենվում էր Ղուրանի վրա:
4. Դեստուր, որը գործում էր իբր թանզիմաթների տված իրավունքների ոգով:

Նիզամի դատարաններում զբաղվում էին քրիստոնյա և այլ հպատակների, առևտրական քրեական բնույթի գործերով[2]:

Բոլոր դատարանները ղեկավարվում էին հատուկ օրենսգրքով, որը կոչվում էր Մեճելլեն: Այն բաղկացած էր տասը հատորից, որոնք նախատեսված էին հանցագործությունների խմբերի համար: Վերջին՝ տասներորդ հատորը պատժաչափերի և դատավարության մասին էր[3]:

Արտաքուստ այն տպավորությունն էր ստեղծվում, թե ֆրանսիական դատական կոդեքսով շաղախված թուրքական արդարադատությունը դրված էր բարձր ու հումանիստական սկզբունքների վրա: Բայց այլ էր իրականում: Ինչպես նշում է Ռոլեն-Ժեկմենը, թուրք դատավորնե-

[1] *Э.де-Жирарден,* Позор Европы, СПб., 1877, стр. У.
[2] *Ролен-Жекмен М.Г.,* նշված գիրքը, стр. 80.
[3] «Գործ», 1917, նո. 4, էջ 65:

րի «եվրոպական կոստյումն ու սիրալիր արտաքինը» խաղում են լոկ քողի դեր՝ ծածկելու համար աղաղակող այն հակադրություններն ու կեղծիքը, որ գոյություն ունեն կյանքի, դատական հիմնարկների ու օրենսդրության միջև[1]:

Թուրքական կայսրությունում ստեղծված էին բոլոր պայմանները դատավորների անպատասխանատու և շահամոլ գործունեության համար: Թուրքական դատարաններն առանձին դաժանությամբ էին վարվում քրիստոնյա հպատակների հետ: «Օրենքից դուրս» հայտարարված ռայան թուրքական դատարանի համար ոչ վկա էր, ոչ մեղադրող կողմ, այլ միայն մեղադրյալ, պատասխանատու:

Գործունեության ուղենիշ ընտրելով նախ արևմտահայության տնտեսական վիճակի բարելավումը, ապա քաղաքական մակարդակի ու ազգային ինքնագիտակցության բարձրացումը՝ արևմտահայ գործիչները եկան այն հետևության, որ այդ գործում առաջին քայլերից մեկն ընկերությունների ու միությունների կազմակերպումն է: Այն հնարավորություն կտար օգնության հասնելու տնտեսապես քայքայվածին, բացելու կրթական ու մշակութային հիմնարկներ, որոնց միջոցով կարագացվեր ժողովրդի քաղաքական արթնացումը, հիմքեր կնախապատրաստվեին հետագա բեղուն ազգային գործունեության համար:

Հաշվի առնելով միությունների կազմակերպման անհրաժեշտությունը՝ պատրիարքը կոնդակով դիմեց ժողովրդին: «Միացեք, հայեր»,- կոչում էր պատրիարքը, վարժարաններ բացեք, վանքերը, եկեղեցիները վերաշինեք, նորոգեք, բարեկարգեք, ընկերություններ հիմնեք, միավորվեք[2]:

19-րդ դարի 60-80-ական թվականներին կազմակերպված ընկերություններից հիշատակության են արժանի Կ.Պոլսի «Բարեգործական», «Հայկ», «Օթյակ», «Անձնվեր», Զմյուռնիայի «Եղբայրական», Օրթագյուղի «Արարատյան», «Արևելյան», «Ասիական», «Կիլիկյան», «Պարզասեր հայուհեաց», Վանի «Սուրբ խաչ», Վառնայի «Հայրենասիրաց», Կարինի «Պաշտպան հայրենյաց», «Վարդանանց», «Ղևոնդյան», «Դպրոց», «Ուսումնասիրաց», «Ընթերցասիրաց», «Բարձր Հայոց», «Արծրունյաց», «Թարգմանչաց», «Թատերական» ընկերությունները:

Տեղական իշխանություններն ընկերությունների ազդագրերն ու կանոնադրությունները մանրազնին ուսումնասիրելուց հետո էին միայն գործելու թույլտվություն տալիս: Թեև ընկերությունների կանոնադրու-

[1] *Ролен-Жекмен М.Г.,* նշված գիրքը, стр. 80.
[2] «Փորձ», 1876, նո. 3, էջ 173:

թյունները թողնում էին բարեգործականի տպավորություն, բայց նրանց հիմնական նպատակն արևմտահայությանը թշվառ վիճակից հանելու խնդիրն էր, տնտեսական դրության բարելավումը, ազգային ինքնագիտակցության բարձրացումը:

Ընկերությունների գնահատման հարցում հստակ է արտահայտվում ականավոր պատմաբան Ա.Հովհաննիսյանը՝ գրելով. «Բարեգործականը լեգալ այն պիտակներից մեկն էր, որ օգտագործվելու էր Թուրքիայում հայ ազգային-ազատագրական շարժում կազմակերպելու համար»[1]:

19-րդ դարի երկրորդ կեսը թուրքահպատակ ժողովուրդների ազգային գիտակցության բարձրացման, ազատագրական պայքարի բորբոքման ժամանակաշրջանն էր: Հենց այդ ժամանակահատվածի մասին էր, որ Ստ.Նազարյանցը գրում էր. «Այսուհետև ոչինչ Եվրոպական խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահպանքը, այսուհետև ոչինչ Չինական պարիսպ, որ պետք է փակել լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի Բաբելոնյան գերությունից»[2]:

«Բաբելոնյան գերությունից» դուրս գալու փորձեր էր անում նաև արևմտահայությունը: Դարավոր ճնշումն ու կեղեքումը, քաղաքական իրավազուրկ վիճակը, տնտեսական անմխիթար կացությունը, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը չէին կարող ազդեցություն չունենալ արևմտահայ իրականության վրա:

Լեոն, խոսելով արևմտահայ ազատագրական զարթոնքի մասին, գտնում էր, որ նրա վրա ազդեցություն է գործել նաև Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրությունը: Չբացառելով ռուսական ազդեցությունը, նշելով, որ հայ իրականությունն ուներ «առաջադիմության առաքյալներ, Նազարյանց, Նալբանդյանց, Գամառ-Քաթիփա, Շահազիզ», Գ.Արծրունի, որ «վաթսունական թվականների իդեալների վրա ստացավ իր առաջին դաստիարակությունը», այնուամենայնիվ, գրում է մեծանուն պատմաբանը, «վաթսունական թվականներին մենք դեռ նոր-նոր էինք սկսել զգալ, ապրել, շարժումը մասնավոր ազդեցություն արավ մեզ վրա»[3]:

Այն, որ արևմտահայությունը 60-ական թվականներ թևակոխեց առանց բուռն վերելքի, անժխտելի փաստ է: Սակայն կարևորն այստեղ ոչ թե շարժումների ընդգրկման չափն էր, այլ պայքարի ոգին, խոստում-

[1] *Հովհաննիսյան Ա.,* Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, հ. 1, էջ 476:
[2] *Պարսամյան Վ.,* Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 27:
[3] *Լեո,* Գ.Արծրունի, հ. 2, Թիֆլիս, 1903, էջ 390:

նալից սկիզբը: Այս առումով էլ 1862թ. Զեյթունի հերոսական ապստամբությունը, 1863թ. արևմտահայ ազգային սահմանադրությունն իրենց վճռական դերը խաղացին ազատագրական շարժումների ծավալման, խորացման ու ամրապնդման գործում:

Արևմտահայերի քաղաքական ու գաղափարական մակարդակի բարձրացման տեսանկյունից եթե մոտենանք հարցին, ապա անուրանալի է սահմանադրական շարժման հեղաբեկիչ դերը: Այն նոր որակի հասցրեց ազատագրական շարժման գաղափարախոսությունը, արևմտահայությունն առաջին անգամ զգաց միասնական պայքարի առավելությունը, նրա ուժը:

Սահմանադրական շարժման գաղափարական շարունակությունն է 1879թ. գրված Կարինի բարենորոգումների ծրագիրը: Ծրագիրն առանձնացնելն ու մեկուսի գնահատելը, մեր կարծիքով, չի տա այն արդյունքը, ինչը կարելի է ստանալ այն սահմանադրական շարժման հետ վերլուծելիս:

Կարինի բարենորոգումների ծրագիրն իր պահանջների ու առաջադրած խնդիրների ընդգրկմամբ մի քայլ առաջ էր սահմանադրությունից ու այն լրացնելու նպատակով մշակված «Գավառների բարենորոգումների» ծրագրից:

Կարինի ծրագիրը հենվում էր 1876թ. օսմանյան սահմանադրության, Բեռլինի կոնգրեսի որոշումների վրա:

Ծրագիրը դիտելով որպես սահմանադրական շարժման անմիջական արդյունք՝ ավելի հստակ են երևում ավելի քան մեկ տասնամյակ տևած պայքարի արդյունքը, նրա զարգացման վերընթաց ուղին: Երեք փաստաթղթերում էլ օրգանական կապը նկատելի է: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նրանք նույն շարժման բաղկացուցիչ մասերն են, նրա զարգացման փուլերը:

70-ական թվականները Թուրքիայի պատմության մեջ հայտնի են որպես սահմանադրության համար պայքարի տարիներ: Համառ պայքարից հետո «Նոր օսմաններին» հաջողվեց կոտրել Համիդի դիմադրությունը, և գործադրության ընդունվեց 1876թ. սահմանադրությունը: Դա սուլթանի կողմից ժամանակավոր զիջում էր: Շուտով առիթը ներկայացավ: Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Պատրվակ ընտրելով մայրաքաղաքի վրա կախված սպառնալիքը՝ Համիդը ցրեց պառլամենտը, ասել է թե՝ ոչնչացրեց սահմանադրությունը և անցավ իր երազանքի իրականացմանը՝ զուլումի քաղաքականության գործադրմանը:

Ռուս-թուրքական պատերազմը հույսերի ու երազանքների նոր շրջան բացեց արևմտահայերի համար: Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում ռուսական բանակների հաղթարշավը շրջադարձ առաջ բերեց հայ քաղաքական գործիչների հայացքներում: Ինչպես վկայում է Կ.Իզմիրլյանը, հայ ժողովուրդը միաբանվեց, ազգային ղեկի մոտ կանգնածները մի հոգի դարձան՝ «Այժմ աստ ոչ կուսակցություն կա, ոչ վեճ»[1]:

Հայացքներն ուղղված էին ռազմաճակատ: Թուրքիայի անխուսափելի պարտությունն արագացրեց նաև կողմնորոշման ձևավորման գործընթացը: 1877թ. հոկտեմբերի 21-ին Ազգային ժողովն ընդունեց ազգային հարցի լուծումը Ռուսաստանին վստահելու գաղտնի որոշումը: Ժողովում մշակվեց հայկական հարցի լուծման նոր տարբերակ:

Պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Սան Ստեֆանոյի պայմանագիրը հուսավառ ժամանակներ ծնեց: Մինչ արևմտահայությունը սպասում էր 16-րդ հոդվածի գործադրությանը, Անգլիան, ոտքի հանելով հակառուսական բոլոր ուժերին, պատերազմի սպառնալիքով պահանջում էր պայմանագրի վերանայում:

Բեռլինի կոնգրեսի գումարման լուրը ստանալուն պես ազգային գործիչները որոշեցին նախկին պատրիարք, ճանաչված քաղաքական ու կրոնական գործիչ Մ.Խրիմյանի գլխավորությամբ եվրոպական երկրներ ուղարկել պատրիարքարանի պատվիրակությունը: Ամիսներ շարունակ եվրոպական պալատներ հղելով հայկական հարցի արդար լուծման խնդրագրեր՝ Մ.Խրիմյանը հարյուր հազարավոր անմեղ զոհերի, երեք միլիոն ստրկացված ժողովրդի համար գութ էր աղերսում: Սակայն կարեկցանքը ոտնակոխ էր արվում այնտեղ, որտեղ խոսում էր շահը: Թեև եվրոպական երկրներն ի պաշտպանություն փոքր և ճնշված ժողովուրդների խավաքարտե սրեր էին ճոճում, բայց դրանք անաղմուկ կրակոցներ էին միայն:

«Ճշմարիտ օսմանների» անքուն գերեզմանապահ սուլթանը դիմում է նոր խաղերի, որպեսզի ձախողի հայկական հարցի լուծումը: Նա սկզբում դեմ էր հայկական պատվիրակության առաքելությանը և փայփայում էր այն հույսը, թե հայկական պահանջները խառնաշփոթ կստեղծեն ու չի լուծվի նաև Բուլղարիայի հարցը: Բայց երբ որոշակիորեն պարզվեց, որ բուլղարական հարցն անպայմանորեն լուծվելու է, սուլթանը պատրիարքից պահանջեց հետ կանչել պատվիրակությունը:

[1] *Մարուխան,* Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. 1, Թիֆլիս, 1912, էջ 272:

Թվում էր, թե հասել է այն ժամանակը, երբ հայ ժողովուրդը ևս թոթափելու է ատելի լուծը: 16-րդ հոդվածն այդ հույսերի համար կենդանի երաշխիք էր: Սակայն այլ էր իրականը: Բեռլինում ոչ թե լուծվելու էր հայության արդար պահանջը, այլ բռնադատվելու էր այն: Միջազգային դիվանագիտության խարդախություններին անսովոր հայ գործիչները հավատում էին դիվանագետների խաբուսիկ ժպիտներին: Մինչդեռ, դրանք միայն բարեկրթության արտահայություններ էին, իսկ գործնականում նրանք արյունոտ սուլթանի բացահայտ ու թաքնված գործընկերներն էին:

«Սգավոր Հայաստանի կենդանի պատկերը»[1]՝ հայրենաշունչ գործիչ Մ.Խրիմյանը հույս ուներ, թե արցունքի լեզուն կարեկցանք կծնի, տանջահար ժողովրդի հարցի արդար լուծում կբերի: Բեռլինի կոնգրեսում լուծվում էր ոչ թե ճնշված ժողովուրդների ազատագրության, այլ մեծ տերությունների գերիշխանության հարցը:

16-րդ հոդվածի կարկատան 61-րդ հոդվածից դժգոհ Մ.Խրիմյանը հայ ժողովրդի անունից, որպես դիվանագիտական խարդավանքի դեմ բողոք, հայտարարեց. «Հայ պատվիրակությունը արևելք պիտի դառնա՝ իր հետ տանելով այս դասը»[2]:

Ո՞րն է այդ դասը: Դիմելով Հայոց Մայր եկեղեցում հավաքված ժողովրդին՝ Մ.Խրիմյանը, հայտնելով հարիսայի ու թղթե շերեփի մասին, ասաց. «Հոն, ուր զենքն է խոսողը, ուր սուրերը կշռողոան, հոն ի՞նչ գործ ունին խնդիրք և աղերսություններ»[3]:

Ազատության հասնելու համար, շարունակում է միտքը Մ.Խրիմյանը, պետք է գնալ գավառները, ոչ թե ձեռնբաց, այլ՝ «Մեկ-մեկ զենք տարեք, զենք առեք, և դարձյալ զենք: Ժողովուրդ, ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին և քո բազկին ուժ տուր, մարդ ինքն իրեն պետք է աշխատի, որ փրկվի»[4]:

Հայրենասեր գործիչը ճիշտ էր հասկացել ազատության հասնելու միակ ճանապարհը: Սա գաղափարական շրջադարձ էր ազգային ազատագրական գաղափարախոսության մեջ:

Այդուհետ ազգային կյանք մուտք գործեց սեփական ուժերին հենվելու, նրա օգնությամբ ազատության հարցը լուծելու գաղափարը:

---

[1] *Մ.Չերազ,* Պեռլինեն մինչև Էոզան, տես «Հայաստանի կոչնակ», 1923, նո. 13, էջ 550:

[2] *Ալպոյաճյան Ա.,* Մինաս Չերազ, իր կյանքը և գործը, Գահիրե, 1927, էջ 203:

[3] «Ամենայն Հայոց Հայրիկ», Բոստոն, 1957, էջ 512:

[4] Նույն տեղում, էջ 513:

Երիցս ճիշտ էր Հ.Պարոնյանը, երբ 61-րդ հոդվածով խանդավառված տկարամիտ դիվանագետների մասին գրում էր. «...շատերը պնդեցին այն ատեն, թե ազգը մեծ օգուտ քաղեց... այդ օգուտին ինչ ըլլալը վերջը պիտի հասկցվի»[1]:

Իսկ վերջը անփառունակ էր, արյունով լեցուն: Թուրքական մոլեռանդությունը, որ ռուսական զորքի ներկայությամբ սաստվել էր, սպասում էր այն օրվան, երբ հայերի հովանավորները կհեռանան, երբ կբացվեն թալանի ու հաշվեհարդարի ճանապարհները:

Ռուսական զորքերը հեռանում էին գրաված շրջաններից: Արևմտահայությունը, կանխատեսելով գալիք ծանր ժամանակները, կարինցի ծեր կնոջ բերանով էր արտահայտում իր դժգոհությունը. «Ոչ գալերնիդ լիներ, ոչ գնալնիդ...»[2]:

Ռուսների հեռանալուց հետո, գրում է «Մշակի» թղթակիցը, «Քղիի պեյերն ավելի կսաստկացնեն իրենց բռնությունները, հետևաբար աչքդ որ կողմը դարձնես, ողորմելի տեսարան մը կը ներկայացնե Հայաստանը»[3]: Քրդերի հանցագործությունները նկատի ունենալով, թեև մեկ ամիս առաջ գավառ են մտել կոմիսարները, սակայն դրությունը չի փոխվում. «Հայաբնակ շատ գավառներու պես Կեղի ևս իր հետաքրքրական «այսմավուն» ունի, և ինչպես այլ և այլ ժամանակներու մեջ կրկնված ճշմարտություն մըն է, այս գավառն ամեն օր գրեթե նոր թատերախաղ մը կունենա, որու դերասանը քուրտն է, տնօրենը՝ պեյերն, և ողբերգությունը Հայ երիտասարդներու վրա կը վերջանա»[4]:

1880թ. անլուր տառապանքի ու գազանային հալածանքի արդյունքը գաղթն էր: Զրկված ապահովության տարրական հնարավորությունից, կարինահայությունը բռնեց գաղթի ճանապարհը: Սակայն այս անգամ ևս հայերը չէին փրկվում քրդական հարձակումներից: Սպանությունները, թալանը, առևանգումները շարունակվում էին: Վերջապես կոմիսարների պահանջով «երևելի» քուրդ ավազակները ձերբակալվում են: «...Անոնց բացակայության միջոցին երկիրն եղեմական խաղաղություն մը կը վայելեր. բայց տարին չը բոլորած, պեյերն իրենց տեղերը վերադարձան, ով գիտե ինչ շնորհներով»[5]:

[1] *Երիցյան Ա.,* Մի երես Կարնո նորագույն պատմությունից, տես «Փորձ», 1879, նո.1, էջ 183:
[2] *Պարոնյան Հ.,* ԵԼԺ, հ. 3, էջ 19:
[3] «Մշակ», 1879, նո. 100:
[4] Նույն տեղում, նո. 197:
[5] Նույն տեղում:

Բեյերի վերադարձը նշվում է երեք հայ երիտասարդների սպանությամբ: Վ.Տանիշևան, նկարագրելով վայրագ քրդերի գործունեությունը, գրում էր, թե նրանք ազատ են իրենց գործողությունների մեջ, որովհետև «թուրքական կառավարությունը հովանավորում է նրանց»[1]: Քրդերը, ներխուժելով Խնուսի գավառի Գովանդակ գյուղը, Մուկո անունով հայի տնից ցանկանում են խլել եզան չորս կաշի: Ինքնապաշտպանության ժամանակ Մուկոն ատրճանակով քրդերից երկուսին սպանում է: Գավառապետի հրամանով դեպքի հետ ոչ մի կապ չունեցող 19 հայեր բանտարկվում են: Պահանջված կաշառքը տալուց հետո նրանցից 10-ը ազատվում է, իսկ 9-ը՝ մնում բանտում[2]:

Թե ինչ էր լինելու նրանց ճակատագիրը՝ պարզ էր: Բանտերում քրիստոնյաների նկատմամբ կիրառվող դաժան գործողությունները «երաշխավորված էին թուրքական օրենքներով»[3]: «Նույնիսկ ինկվիզիցիայի գործադրած միջոցները ոչնչություն էին դրանց նկատմամբ: Եթե երկրում կա նման արդարադատություն, ապա հասկանալի է, թե ինչ վիճակում է գտնվում ճնշված ժողովուրդը»,- եզրափակում է Վ.Տանիշևան[4]:

Նահանգում հայ-քրդական հարաբերությունները «կարգավորելու» նպատակով, գավառապետերից մեկի հրամանով, գետում մի քանի քրդերի խեղդվելու պատրվակով, բանտարկվում են հայկական չորս գյուղերի գյուղապետերը: Բայց ճշմարտությունն այն է, հիշեցնում է Է.Դիլոնը, որ այդ օրհացի կարոտ, թափառական քրդերն իրենք էին ջուրն անցնելիս խեղդվել: Թուրք պաշտոնյաները գիտեին, որ հայերն անմեղ են, բայց քրդական մոլեռանդությունը բորբոքելու նպատակով դիմում են այդ ցուցադրական միջոցին: Բանտարկվածներից յուրաքանչյուրից ստանալով 75 ֆունտ կաշառք՝ գավառապետն ազատում է նրանց: «Ես անձամբ տեսել եմ նրանցից երկուսին»,- վկայում է Է.Դիլոնը[5]:

Տեղական իշխանությունների նման վերաբերմունքը թեավորում էր քրդերին: Բասենի Կրտաբազա գյուղում Է.Դիլոնին հայտնում են, որ քրդերն իրենց գյուղից տարել են 22 եզ, 2 ձի, 60 կով, 20 ոչխար[6]:

Թուրքական կառավարությունն ուներ իր պատճառը: Նրան ձեռնտու էր, որ քրդերի օգնությամբ իրականացվեր պետական ձուլման քա-

[1] «Մշակ», 1879, նո. 197:
[2] *Танишева В.,* Позор цивилизации, СПб., 1897, стр. 10.
[3] *Дилон Э.,* նշված հոդվածը, տե՛ս «Положение армян. . .», стр 337.
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, стр. 338.
[6] Նույն տեղում:

դաքականությունը, որն արագացնելու միջոցների մեջ ուրույն տեղ ուներ հարստահարությունների և հալածանքների օգնությամբ քրիստոնյա հպատակների մահմեդականացման ծրագիրը: Ի՞նչ կարելի է սպասել տեղական պաշտոնյաներից, երբ նրանք անձամբ էին մասնակցում հայերի դեմ ձեռնարկվող միջոցառումներին:

1891թ. մարտի 7-ին Կարինի անգլիական հյուպատոսը հայտնում է, որ գավառապետ Հուսեինը, իր ազգականի հետ, Գասպար անունով հայի գեղեցիկ կնոջն առևանգելու նպատակով, ներխուժել է նրա տուն: Գավառապետը, իհարկե, ցանկանում էր գործն ավարտել անաղմուկ, բայց հանդիպելով Գասպարի դիմադրությանն ու կնոջ օգնության կանչերին՝ սպանում է երիտասարդ կնոջն ու հեռանում[1]:

Մեկ ուրիշ դեպք: Քրդերը լծկաններ տանելու նպատակով հարձակվում են Դերջանի Կախ-կյու գյուղի դաշտերից մեկում աշխատող չորս եղբայրների վրա: Հայերը դիմադրում են: Ընդհարման ժամանակ եղբայրներից մեկը սպանվում է, երեքը՝ վիրավորվում: Քրդերից չորսը վիրավորվում են, մնացածները՝ գերվում: Գավառապետը, լսելով այդ մասին, պարսավում է քրդերին և մղում նոր հարձակման: Քրդերն ազատում են գերվածներին և թալանով բեռնված՝ հեռանում[2]:

Նահանգի Ամատ գյուղի վրա հարձակվող քրդերը, ամբողջ գիշեր չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը, հետ են քաշվում: Թոփրակ-կալեի գավառապետը, որ լսել էր դեպքի մասին, փոխանակ օգնության հասնելու, ավելի է գրգռում քրդերի մոլեռանդությունը և դրդում նոր հարձակման[3]:

Նման իրավիճակի պատճառը, գրում է Է.Դիլոնը, ըստ «թուրքական հավաստումների, սկսվում է հայերի ու քրդերի հավիտենական պայքարից: Եվ քանի դեռ այն շարունակվում է և չկա հաշտեցման հնարավորություն, ապա վերանում է նաև տեղական իշխանությունների ու կառավարության պատասխանատվությունը»[4]:

Կարինի անգլիական հյուպատոսը, նկարագրելով նահանգի հայության վիճակը, այն բնորոշում է այսպես. «Սուլթանի հպատակ հայերը բացարձակապես անպաշտպան են...»[5]: Եվ դա՝ այն դեպքում, թուրք բարեկամին ուղղված խոսքում գրում էր Գր.Դինը (Գրիգոր Ջանաշյան),

[1] *Мак-Коль К.М.,* նշված գիրքը, էջ. 145.
[2] Նույն տեղում, էջ. 146.
[3] «Մշակ», 1880, նո. 204:
[4] *Дилон Э.,* նշված գիրքը, էջ. 341.
[5] «Положение армян. . .», էջ. 133.

երբ «հայ հողագործը կերակրում է և՛ իրեն, և՛ ձեզ, եթե Մուշի, Վանի հողագործը չլիներ, արդյոք ով պետք է կշտացներ ձեր անբովանդակ պալատական հարեմի որովայնը իր պարագիտ 600 ծառաներով, 800-ի չափ խոհարարներով, որոնց տրամադրության տակ ամեն օր դրվում էր 12.000 գլուխ ոչխար, որոնք կրվում էին Հայաստանից»[1]:

Սուլթանական Թուրքիայում քրիստոնյայի ունեցվածքը, տունը, անձը պատկանում է մահմեդականին: Նա այդ իրավունքից օգտվում էր պատեհ առիթը ներկայանալիս: Իսկ առիթ ստեղծվում էր ցանկացած պահի: Մահմեդականության իրավունքների ձևերից մեկը հանդիսացող հարստահարությունը երբեմն կրում էր նաև կազմակերպված բնույթ, որտեղ առաջին ջութակի դեր կատարում էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները:

«Մշակի» թղթակից Հայկակը հայտնում է, որ «Կարնո առաջնորդի կողմանե պատրիարքարան գիր մը հասած է, որ կը նկարագրե Խիզանի գավառի ցավալի վիճակը. «Գավառը պաշարված է. քրդերը, տերության պաշտոնյաներն, զորքերն ամեն չարիք կգործադրեն, հազիվ քանի մը հայեր կարող եղած են փախչիլ և գալ ի Կարին ու իրենց դառը վիճակը ներկայացնել»: Այնուհետև՝ «ուր հայ կա, կառավարությունը որևէ ջանք, դավ, խարդավանք չը խնայեր աղքատացնելու, ցրելու, ջնջելու այդ հայությունը»[2]:

Սուլթանի քաղաքականությունը պարզ էր՝ ավերել հայության տնտեսական վիճակը, դրան գումարել քաղաքական ու կրոնական հալածանքը և հայերին դրդել կամ գաղթի, կամ կրոնափոխության:

Հարստահարությունները, առևանգումները հետզհետե նոր կերպարանք էին ստանում: Քրդերը, զգալով տեղական իշխանությունների համակրանքը, ավելի սանձարձակ էին դառնում: Կարինի գյուղերից մեկում քրդերը, սպանելով մի հայի, անդամ առ անդամ կտրատում են ու հայտարարում. «Ահա մենք կսպանենք զքեզ և թող կյավուրներու թագավորն գա զքեզ ազատե և քրիստոնյաների ազատության համար պատերազմներ անե»[3]:

Մահմեդական սանձարձակ ամբոխն առանց վախի ու պատասխանատվության, օրը ցերեկով էր կատարում իր սև գործը: Կարինում այդպես սպանվեցին Խ.Բաստուրմաճյանը, մեկ այլ երիտասարդ, որի «դիակը ժողովուրդը չէր թույլատրում հողին հանձնել, մինչև չպատժվե-

[1] «Ձիթենի», Թիֆլիս, 1915, էջ 317:
[2] «Մշակ», 1879, նո. 2:
[3] Նույն տեղում, նո. 7:

ին հայտնի հանցագործները»: Հայերը մտադրություն են ունեցել զմռսել դիակը և ուղարկել Անգլիա, «իբրև մի նոր ապացույց խոստացած բարենորոգությունների գործադրության»[1]:

Ի՞նչ բարենորոգումների մասին էր խոսքը, երբ «...Թե՛ Թուրքիայի և թե՛ Անգլիայի համար հայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել: Նրանց գաղտնի դաշնությունը նրա մեջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեն Հայաստանի մեջ, աքսորեն հայերին Հայաստանից»[2]:

Սկսված հալածանքների առաջին զոհերից մեկը Մ.Նալբանդյանի բարեկամ, նշանավոր բժիշկ Հ.Քյոթիպյանն էր: Կառավարությունն արգելում է ոչ միայն հետաքննությունը, այլև հետապնդում է նրանց, ովքեր փորձում էին բացահայտել սպանության հանգամանքները, որի արյունոտ ճանապարհը տանում էր դեպի Բ.Դուռը:

Սուլթանն արգելում էր նաև Վ.Մամիկոնյանի, հայ ժողովրդի հերոսական պայքարի դրվագները ներկայացնող նկարների ցուցադրումն ու վաճառքը, Հայաստանի անցյալը, պատմական վայրերը ներկայացնող լուսանկարների օգտագործումը:

«Ավերակք Հայաստանի կառավարության կողմեն ամեն օր կփնտռվին, ինչպես նաև այն ամեն գրքերն, որոնց մեջ Հայաստան բառը կգտնվի: Ամեն օր կձերբակալվին և կբանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն...»[3]:

Հայկական դպրոցներում արգելվում են մարմնամարզությունը, որովհետև այն աշակերտների մեջ ռազմատենչ ոգի է ծնում, հայ ժողովրդի պատմությունը, որովհետև այն աշակերտների մեջ տարածում է ազգային գաղափարներ և այլն:

Կարինից ուղարկված թղթակցություններից մեկում Հայկակը, խոսելով գործադրվող հալածանքների մասին, գրում էր. «...Միայն սա գիտենք, թե ոստիկանության պաշտոնյան երևակայական երկյուղներով կը մոլեգնի և կը կարծե, թե Հայկի և Վարդանի պատկերներն են հայկական հարցի պատճառներն և անխնա կը հալածե զանոնք ուր որ տեսնե: Գրավաճառներն կը ձերբակալվին և խիստ հարցաքննությանց կենթարկվին: Այդ անմեղ պատկերներն 25 տարի է ամեն տեղ կախված են և ոչ ոք կը մտածեր հեղափոխական գաղափար մը ընծայել նոցա»[4]:

[1] Նույն տեղում, նո. 13:
[2] *Պարոնյան Հ.,* նշված գիրքը, էջ 311:
[3] «Փարոս Հայաստանի», 1880, նո. 4:
[4] «Մշակ», 1880, նո. 216:

Դեռևս 1876թ., օսմանյան սահմանադրության տարում, սկիզբ էր դրվել քաղաքական հալածանքին: Նույն թվականին Գալաթասարայի լիցեյից հեռացվում են 95 ոչ մուսուլմանական ծագում ունեցող աշակերտներ, թեև լիցեյի կանոնադրությամբ քրիստոնյաները ևս իրավունք ունեին սովորելու այդ հաստատությունում[1]:

1890թ. Կարինից հայտնում էին, որ թուրքական իշխանություններն արգելել են կաթոլիկ դպրոցում, որի տնօրենները ֆրանսիացիներ էին, աշխարհագրական ատլասների օգտագործումը, որովհետև «Փոքր Ասիայի քարտեզները պարունակում էին նաև Հայաստանի նահանգները...»[2]:

Նույն հեղինակը նկարագրում է մի դեպք ևս, երբ ձերբակալվում է ռուսահայ մի երիտասարդ այն բանի համար, որ նրա մոտ գտնում են թուղթ, որի վրա գրված էին այն գյուղերի անունները, որտեղով անցել էր նա իր ճանապարհորդության ժամանակ[3]:

Շարունակվող քաղաքական հալածանքի պատկերավոր արտահայտությունն է Ա.Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակը: Աղոթքի ուսուցման ժամանակ «ազատագրություն եղբարց մերոց գերելոց», «թագավորաց քրիստոնեից» բառերի փոխարեն քահանան երեխաներին սովորեցնում է հետևյալ արտասանությունը.- «Սա ա»-ն բերնեդ կամացուկ մը կը հանես հազալով մը:- Մարդ ենք, հազերնիս կը բռնե: Ան ալ մեղք չէ յա. «զատ»-ը կուտես. կուտես, տերտեր, կուտես չէ նե ան մեզի կուտե: «Եղբարց մերոցին» հազդ մի քիչ կանցնի: «Գերելոցին»՝ վրայեն, լը փռտելով»[4]:

Թուրքիան խավարամոլ իրավակարգով, ուր բառերն ու արտահայտություններն անգամ բռնադատվում էին, ուր օրենքը ուժն էր, իսկ բանականության ու մտավոր զարգացման մակարդակը՝ թալանի, սպանության հաշիվը պահելը, պարզ է, որ հալածանքի էր ենթարկվելու քաղաքակիրթ ամեն մի ժողովուրդ: Ավելին, քանի որ թուրքերն ընդունակ չէին անգամ յուրացնելու կամ ընդօրինակելու հպատակ ժողովուրդների առաջավոր մշակույթը, ձգտում էին ավերածության, հարստահարման ճանապարհով իրականացնել պատմության մեջ չլսված մի քաղաքականություն՝ հպատակ ժողովուրդների բարձր մշակույթը գանահարելով՝ իջեցնել, հավասարեցնել իրենց ցածր մակարդակին: Այսինքն՝ Ղ.Աղայանի խոսքերով՝ «դժոխքի մեջ հնարավո՞ր է արդյոք բռնակալի մեջ գութ

[1] *Теплов В.,* Смутное время и дворцовый переворот Конполе. СПб., 1897, стр. 9.
[2] *Мак-Коль К.М.,* նշված գիրքը., стр. 176.
[3] Նույն տեղում, էջ 170:
[4] *Ստեփանյան Գ., Արփիարյան Ա.,* Ե., 1955, էջ 239:

ու խնամք փնտրել ու գտնել, հնարավո՞ր է արդյոք ստրկական վիճակի մեջ գտնել քաղաքակրթության և լուսավորության հետքն ու արդյունքը»[1]:

19-րդ դարի 80-ական թվականներին նաև ուժով բռնված հալածանքները սահմանազատում մտցրին հայ հասարակական խավերի մեջ: Պոլսահայ մեծահարուստները կողմնորոշվեցին դեպի սուլթանը՝ պնդելով այն միտքը, թե հնարավոր չէ հայ ժողովրդին դուրս բերել նրա ճիրաններից, ուստի անմտություն է հայ քսակատերերի կարողությունը վտանգի տակ դնելը: Անհրաժեշտ է խոհեմություն ցուցաբերելով վանել թուրքական մոլեռանդությունը: Անկումային տրամադրություն էին ապրում նաև մանր ու միջին կարողություն ունեցողներն ու մտավորականության որոշ ներկայացուցիչներ, որոնք ազգի ապագայի նկատմամբ հավատը կորցնելով՝ սարսափում էին ներկայից:

Ահա այսպիսի վիճակում էր Արևմտյան Հայաստանը, երբ Տաճկաստան-դժոխքից փրկվելու ուրիշ ելք չտեսնելով՝ կարինահայությունը ևս բռնեց գաղթի ճանապարհը:

Է.Ռեկլյուի տվյալներով, 1878-1881թթ. Թուրքիայից գաղթել է 87.760 քրիստոնյա: Ռուսաստանից Թուրքիա են ներգաղթել 21.390 մահմեդական[2]:

Նույն հեղինակը, ժողովուրդների այդ տեղաշարժը համարելով «ռուսական արշավանքների գլխավոր հետևանք», ընդգծում է, որ այդ պատճառով էլ «Հայաստանը Թուրքեստան դարձավ»[3]:

Եթե ռուսական արշավող բանակի գլուխ կանգնած հայազգի գեներալ Լորիս Մելիքովը, անցնելով Արևմտյան Հայաստանի անմարդաբնակ ու ավերված բնակավայրերով, ասում էր՝ «Հայաստանը կտեսնեմ ահա, սակայն հայ չեմ տեսներ հոն»[4], ապա ի՞նչ էր ասելու դարավերջին Հայաստան այցելողը:

1877-1878թթ. պատերազմից հետո սուլթանը հանգեց այն հետևության, որ անհրաժեշտ է «լուծում» տալ այնքան անհանգստություններ պատճառած հայկական հարցին: Այդ նպատակով էլ նա ոչ միայն չիրագործեց Բեռլինում ստանձնած պարտավորությունները, այլև իր ծրագրի կատարումն արագացնելու նպատակով ազատ գործելու ասպարեզ բացեց վայրիվերո բարբարոսների համար:

---

[1] *Աղայան Դ.,* Մի երես մեր նորագույն պատմությունից, Մոսկվա, 1881, էջ 3-4:

[2] *Ռեկլյու Է.,* Լազիստան, Հայաստան և Քրդստան, Վաղարշապատ, 1893, էջ 24:

[3] Նույն տեղում, էջ 25:

[4] «Հայաստանի կոչնակ», 1923, նո. 20, էջ 613:

61-րդ հոդվածի բարեմասնությունների մասին աղաղակող գործիչները հանկարծակիի եկան, պաշտպանության աղերսներով դիմեցին դեսպաններին՝ մոռանալով, որ մեծ տերությունների միջամտություններն ու արշավները հայ ժողովրդին օգնելու, նրա վիճակը բարելավելու նպատակներ չունեն:

Թեև այս կամ այն առիթով դեսպանները սուլթանին հիշեցնում էին իրենց գոյությունը, սակայն անդրդվելի էր Համիդը: Նա մինչև 1894թ. քանիցս խաբեց եվրոպացի ասպետներին, քանիցս Կ.Պոլսի պարիսպների տակ կանգնեցրեց նրանց «խաչակրաց արշավանքները»: Սուլթանի այդ գործելակերպը պատկերավոր է բնութագրում դեսպաններից մեկը՝ գրելով. «Համիդը հաղթում է տերություններին, որովհետև... նա գիտե, թե ինքը ինչ է կամենում, իսկ Եվրոպան չգիտե, թե ինչ է պահանջում»[1]:

19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայ իրականություն մուտք գործեցին իրարամերժ ու հակասություններով լի հոսանքներ:

Արևմտահայության ազատագրության հարցը դարձավ հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական առանցքը: Ի վերջո, ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի կոնգրեսից հետո տեղի ունեցավ գաղափարական շրջադարձ: Եթե մինչև այդ ազատագրության հասնելու ապավեն էր ընտրվում այս կամ այն մեծ տերությունը, ապա այժմ հանդես եկավ նոր՝ սեփական ուժերով բաղձալի նպատակին հասնելու գաղափարը: Կարծես անցնում էր մտավախության ու սեփական ուժերի թերագնահատման շրջանը, հայ ժողովուրդը ոտք էր դնում ազատագրական նոր շրջան՝ բնաբան ունենալով Հայոց Հայրիկի պատգամը. «Օհ, մինչև ե՞րբ անսամ քեզ, որ ինքնազոհ մեռնիլ սովորիս, աշխարհ սորվեցավ այդ դասը, իր մրցանակն առավ, դու դեռ անուս մանուկ մնացիր...»[2]:

Արևմտահայության կյանքում սկսվեց ներքին կազմակերպման շրջանը: Երես թեքելով երկդիմի եվրոպական դիվանագիտությունից՝ արևմտահայությունը պատրաստվում էր սեփական ուժերով լուծել իր ազատագրական հարցը: Ավարտուն վիճակի էր հասնում ազատագրական խմբակների ու կազմակերպությունների, կուսակցությունների ձևավորման գործընթացը: 1869թ. կազմակերպվեց Ալեքսանդրապոլի (Գյումրի) «Բարենպատակ ընկերությունը», 1872թ.՝ Վանի «Միություն ի փրկություն» խմբակը, 1874թ.՝ Ղարաքիլիսայի (Վանաձոր) «Հայրենիքի սիրո գրասենյակը», 1881թ.՝ Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպու-

[1] «Մշակ», 1880, նո. 200:

[2] «Ամենայն Հայոց Հայրիկ», Բոստոն, 1957, էջ 54:

թյունը, 1882թ.՝ Մոսկվայի «Հայրենասերների միությունը», նույն թվականին՝ Երևանի «Հայասեր և ազգասեր» խմբակը, 1882թ. վերջերին, 1883թ. սկզբներին՝ Թիֆլիսի «Հայրենասիրական խմբակը»: 1885թ. կազմակերպվեցին «Արմենականների», 1887թ.՝ «Հնչակյան», 1890թ.՝ «Դաշնակցություն» կուսակցությունները:

Չնայած զգալի տեղաշարժերին, այնուամենայնիվ, արևմտահայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը դեռևս միաձույլ, կուռ տեսության չէր վերածվել: 80-ական թվականներին այն սահմանափակվեց 61-րդ հոդվածն իրագործելու, Եվրոպայի օգնությամբ ազատագրության հասնելու, բուն երկրում ապստամբական շարժում սկսելու շուրջ գործողություններով: Այդ նպատակների իրագործման համար եռանդուն գործունեություն սկսեցին Մ.Փորթուգալյանի «Արմենիա» թերթի շուրջ համախմբված ուժերը, նրանցից անջատված Կ.Հակոբյանի խումբը, որը 1887թ. Լոնդոնում հայերեն և անգլերեն լեզուներով տպագրում էր «Հայաստան» թերթը, Մ.Չերազի Լոնդոնում ֆրանսերեն լեզվով հրապարակվող «Հայաստան» թերթը, 1882թ. Վառնայում հիմնադրված «Հայրենասիրաց ընկերությունը» և այլն:

Արևմտահայ եղբայրներին օգնելու շարժումն իր մեջ ներառեց արևելահայ երիտասարդությանը: «Երկիր» անցնելու շարժման նախակարապետներ Վ.Գոլոշյանի (1889թ.), Ս.Կուկունյանի (1890թ.) խմբերը, որոնք թեև մատնվեցին անհաջողության, սակայն խոր հետք թողեցին արևմտահայ ազատագրության պատմության էջերում.

Հոն, ուր կախաղաններն են ճոճվում,
Ազատագրությունն է ման գալիս.
Հոն, ուր մեռելներն են ննջում՝
Հարությունն է մոտալուտ[1]:

Սա էր դարի երկրորդ կեսի հայ երիտասարդության գործունեության ուղեցույցը: Այս մտայնությունը չփոխվեց նաև 70-ական թվականներին:

Քաղաքի երիտասարդությունը, կանխատեսելով վաղվա օրը, թուրքական սանձարձակությունների դեմ պայքարելու նպատակով ստեղծում էր ինքնապաշտպանական խումբ: Այդ մասին մանրամասն տեղեկություններ է տալիս Ա.Երիցյանը[2]: Ռուսական բանակի մի հայ սպայի

[1] Սիրվարդ, Փարամազ, Փրավիտենս, 1954, էջ 76:
[2] *Երիցյան Ա.,* նշված հոդվածը, տե՛ս «Փորձ», 1879, նո. 1, էջ 175:

հորդորներով Կարինի երիտասարդությունը նախաձեռնում է ինքնապաշտպանական աշխատանքներ, որովհետև արդեն հայտնի էր դարձել, որ ռուսական զորքերը հեռանալու են քաղաքից:

Մահմեդական ամբոխը ոգևորության մեջ էր: Չսպասելով ռուսական զորքի հեռանալուն՝ նրանք խժդժություններ սկսեցին: Քաղաքի հայությունը բողոքի ցույց կազմակերպեց: Գեներալ Լազարևը տեղական իշխանություններից պատասխան պահանջեց: Հանգստության կոչելով մոլեռանդ ամբոխին՝ Ալի էֆենդին զայրացած ասում է. «Անպիտաններ, չէի՞ք կարող քանի մը օր էլ սպասել, որ ռուսները երթային, հետո կսկսեիք»[1]:

1878թ. սեպտեմբերի 8-ին ռուսական զորքերի վերջին միավորումները հեռացան քաղաքից: Կարինի ռուսական փոխհյուպատոս նշանակվեց Կ.Կամսարականը: Նրան և հյուպատոսների մյուս աշխատակիցներին, սակայն, չհաջողվեց կանգնեցնել մահմեդական խուժանին: Ամբողջ նահանգով մեկ սկսվեցին սանձարձակությունները, թալանը, սպանությունները, առևանգումները, կողոպուտը:

Այս շրջանում էլ հենց սկսվում է Կարինի երիտասարդության համախմբման աշխատանքը: Ինքնապաշտպանության, բիրտ իրականության դեմ միավորվելու միտքը խանդավառել էր երիտասարդությանը: Ինչքան սաստկանում էին ճնշումը, հետապնդումներն ու հալածանքը, այնքան ուժեղանում էր «բան մը ընելու» ձգտումը[2]:

Քաղաքի երիտասարդությունը որոշում է նախ ստեղծել «Երկրագործական ընկերություն»: Սակայն ընկերության ծրագիրը մերժվում է տեղական իշխանությունների կողմից: 1880թ. հաճախակի են դառնում երիտասարդական ցերեկույթներն ու երեկույթները: Հավաքույթների ժամանակ ոգևորված երիտասարդությունը երգում էր ազգային հայրենասիրական երգեր. «Կեցցե Հայաստան կը պոռայինք ու «Մեր հայրենիք թշվառ, անտեր» կերգեինք՝ «Թող կործանի Թուրքիան» գոչելով, «Ազատն Աստված» կարտասանեինք՝ բաժակներ քամելով Նալբանդյանի հիշատակին»[3]:

Կարինում սկսված շարժումները չէին կարող դուրս մնալ Վասպուրականի արծվի ուշադրությունից: Տեղեկանալով երիտասարդական խմբավորումների մասին՝ հայրենասեր գործիչը քաջալերանքի խոսքեր էր ուղղում նրանց. «Լսած եք անշուշտ, որ Մասիսի հրաբուխ բորբոքեր է ինքնին, կարծելով Վարագա և Սիփան լեռներու հրաբուխներ ևս բորբոքած են, որոնք հավիտենական սառույցով պատած են: Աստված խելք

[1] Նույն տեղում:
[2] *Նշկյան Հ.Մ.,* նշված գիրքը, էջ 111:
[3] Նույն տեղում, էջ 111-112:

տա Մասիսին, չգիտեմ, ձեր կարծիքն ի՞նչ է այդ մասին»,- գրում էր Մ.Խրիմյանը[1]:

Կարինահայ երիտասարդության շարժումներին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Մ.Օրմանյանը: «Պաշտպանի» կազմավորումից հետո նա անդամագրվեց կազմակերպությանը: Մ.Օրմանյանի միջոցով կազմակերպության մասին իմանում է Ն.Վարժապետյանը, որի «խրախուսիչ գրություններ նոր ոգևորություն ու եռանդ կը բերեր հիմնադիրներուն»[2]:

1881թ. մայիսի սկզբներին «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը սկսեց իր գործունեությունը: Կազմակերպության հիմնադիրներն էին Խ.Կերեքցյանը, Կ.Նշկյանը, Հ.Իշղալացյանը, Հ.Ասատուրյանը, Ե.Տուրսունյանը, Ա.Էթալիկյանը: Խորհրդակցական անդամներից էր հուշագրության հեղինակ Հ.Նշկյանը:

1882թ. նոյեմբերին կազմակերպությունը հայտնաբերվում է: 1883թ. ապրիլի 7-ին սկսվում է դատավարությունը: Մեղադրվում էր 56 մարդ: Անպարտ են մնում 16-ը, դատվում են 40 հոգի: Նրանցից Խ.Կերեքցյանը դատապարտվում է 15, Կ.Նշկյանը հեռակա կարգով՝ 13, Հ.Իշղալացյանը և Հ.Ասատուրյանը՝ 10, Ա.Էթալիկյանը՝ 7 տարվա, չորս հոգի՝ 6, 31-ը՝ 5 տարվա բանտարկության: Մինչև 1884թ. ազատվում են երկրորդ և երրորդ կարգի՝ 5-7 տարի ազատազրկվածները:

1886թ. բանտարկությունից ազատվում են նաև Խ.Կերեքցյանը և Հ.Իշղալացյանը:

Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն արևմտահայ իրականության խոշորագույն իրադարձություններից էր, ազատագրության ու անկախության հասնելու իղձերի, ցանկությունների իրականացման առաջին լուրջ կազմակերպական ձևերից մեկը:

«Պաշտպան հայրենյացի» գործունեությունն իրավացիորեն գնահատվում է որպես Զեյթունի հերոսական ապստամբության նման մի իրադարձություն, որը համազգային արձագանք ստանալով՝ դարձավ մի մարտաշունչ այգանվագ՝ հուշելով արևմտահայությանը, որ իր ազատագրությունը կարող է ձեռք բերել պայքարով, այն էլ կազմակերպված, հետևողական ու զինված պայքարով միայն[3]:

[1] Նույն տեղում, էջ 114:
[2] Նույն տեղում, էջ 119:
[3] *Հովհաննիսյան Ռ.,* նշված գիրքը, էջ 333:

1886-1890թթ. փորձեր են արվում «Պաշտպան հայրենյացի» վերակազմավորման համար: Այդ գործի ղեկավարությունն իրենց ձեռքն են վերցնում Գ.Չիլինկիրյանը, Խ.Կերեքցյանը, Հ.Իշղալացյանը:

Նրանք ոչ միայն ձգտում էին վերականգնել կազմակերպությունը, այլև այն դնել այնպիսի հիմքերի վրա, որ զերծ լինի նախորդ սխալներից:

Կարինահայության պատրաստակամությունն ուժեղացնելու ձգտումները դուրս չէին մնում ոստիկանության ուշադրությունից:

Թուրքական ֆանատիզմն օր օրի ավելի սանձարձակ էր դառնում: Անհրաժեշտ էր պատրվակ հայության հետ դատաստան տեսնելու համար: Առիթ ընտրելու պատիվն իրեն վերապահեց նահանգապետը:

1890թ. հունիսի 18-ին, զենք հայտնաբերելու նպատակով, փաշան հրամայում է խուզարկել Սանասարյան վարժարանը, Ս.Աստվածածին եկեղեցին, Առաջնորդարանը:

Ճիշտ է՝ խուզարկությունները ոչ մի արդյունք չտվեցին, սակայն հնարավորություն տվեցին մուսուլմանական խուժանին թալանելու ուսումնարանի ու եկեղեցու գույքը:

Զայրացուցիչ փաստը ոտքի է հանում քաղաքի հայությանը: Նրանք կազմակերպում են բողոքի ցույց: Ոստիկանությունը դիմում է զենքի: Սկսվում է փոխհրաձգություն: Զինված ոստիկանության նոր հարձակումից հետո հայերը նահանջում են, բայց նրանց նահանջի ճանապարհը փակում է մահմեդական մոլեռանդ ամբոխը: Մի քանի ժամ հայերը պայքարում են, սակայն ուժերն անհավասար էին: Որպես «պզտիկ դեպք» ներկայացված կազմակերպված այս միջոցառմանը զոհ գնացին 70 հայեր, վիրավորվեցին 400 հոգի[1]:

Մտացածին այս կոտորածը բարեհաջող ավարտի հասցնելու համար փաշան ոտքի էր հանել ոստիկանությանը, զինվորականության ուժեր կենտրոնացրել նահանգի գավառների զորամիավորումներից:

Միջադեպը, նոր, բացահայտ հարձակումները որոշ ժամանակով նվազեցնելու, օտար աչքից արյան հետքերը թաքցնելու նպատակով երկու ամսով փակվեցին քաղաքի ելքի ու մուտքի բոլոր ճանապարհները: Քաղաքը ենթարկվեց յուրահատուկ պաշարման, թուրքական իշխանությունները սկսեցին ձերբակալությունները: Հայ «խռովարարներին» մեկուսացնելու, զինաթափելու նպատակով կատարվեցին նոր խուզարկություններ, որոնք այս անգամ ևս ուղեկցվեցին խաղաղ բնակչության ունեցվածքի թալանով:

[1] *Չարբգ Ղ.*, նշված գիրքը, էջ 414:

Կարինի դեպքերը լայն արձագանք գտան արևմտահության մեջ, ինչն ազդակ հանդիսացավ ինքնապաշտպանական ու ազատագրական պայքարի համար, որի բնաբանը դարձավ «Զայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներեն» երգը:

Երգի տողերը մեզ հուշում են, թե ինչ մեծ սպասելիքներ ու հույսեր ուներ հայ ժողովուրդն իր անձնվեր որդիների պայքարից: Եկել էր հայության ազատագրական պայքարի ժամանակը, բոլոր խավերը ոգևորությամբ մասնակցում էին շարժմանը: Մեկ կամք ու ոգի դարձած զավակների պայքարը ցնծություն է ծնում վերքաշատ հայրենիքի սրտում: Այլևս անցել են սգի ու վշտի ժամանակները, մեղմացել է տառապանքը: Այս էր «Պաշտպան հայրենյացի» կատարած մեծ շրջադարձը, այն թե՛ գաղափարական հասունության վկայական է և թե՛ նոր երևույթ հայ ազատագրական շարժումների պատմության մեջ:

Կարինում տեղի ունեցած դեպքերը ոտքի հանեցին հայությանը: 1890թ. հունիսի 15-ին Կ.Պոլսում հնչակյանները կազմակերպեցին բողոքի ցույց, որը հայտնի է Գում-Գափուի ցույց անունով:

Սկսած 1880-ական թվականներից՝ արևմտահայ ազատագրական շարժումների պատմությունը հարստացավ մի նոր երևույթով՝ ֆիդայական շարժումով, որը տասնամյակներ շարունակ հայ ժողովրդի պատմությանը պարգևեց մի քանի տասնյակների հասնող սրբացված անուններ:

Արևմտահայության ազատագրական պայքարը մտավ ճշգրտված հուն: Զինված պայքարն ընտրելով ազատագրության հասնելու միակ ճանապարհ՝ արևմտահայությունը մահու և կենաց պայքարի էր դուրս եկել: Ցավալի է, որ զենքը չդարձավ արևմտահության ստվար մասի անդավաճան ուղեկիցը, ողջ արևմտահայությունը չներգրավվեց հերոսական պայքարին՝ թշնամուն հնարավորություն տալով դաժանորեն ճնշել բուռն վերելք խոստացող շարժումը:

1891թ. սուլթանի նախաձեռնությամբ եռանդուն նախապատրաստություններ էին տարվում համիդիե գնդերի կազմակերպման համար: Միայն Կարինի նահանգում կազմվեց 31 գունդ: Յուրաքանչյուր գունդ ուներ երեքից վեց հարյուրյակ: Այսինքն՝ նահանգում տեղավորված 12 աշիրապետություններից տասը մասնակցում էր գնդերին, որը կազմում էր 10-18 հազարանոց բանակ: Նահանգի համիդիե գնդերի գլխավոր կենտրոնը Ղարաքիլիսա հայտնի գյուղն էր, որը վերանվանվեց Համիդիե: Գնդեր էին տեղավորված նաև Խնուսում և այլ բնակավայրերում:

Անսահմանափակ իրավունքներ տալով քրդերին՝ սուլթանն ազատ արձակեց նրանց: Այդ գնդերը, Կարինից գրում էր անգլիացի հյուպատոսը, քրիստոնյաների շրջանում առաջ են բերել «մեծագույն վտանգ ու անհանգստություն»: Տեղական իշխանությունները, շարունակում էր հյուպատոսը, հայտարարում են, թե գնդերի կազմակերպումը ուրիշ նպատակ չի հետապնդում, բացի «քաղաքակրթելու և կարգապահություն բերելու» այդ քոչվորական հորդային[1]:

Սակայն այլ էր իրականում: Իր կառավարությանը հակառակն ապացուցելու նպատակով հյուպատոսը բերում էր Կարինի, Բայազետի, Ալաշկերտի հայության գլխին պատուհաս դարձած աղաներից մեկի օրինակը, որը բազմիցս բանտարկվելուց հետո ազատ է արձակվել և քառասուն հոգանոց լավ զինված բանդայի գլուխ անցած ավերել է տասը գյուղ, սպանել տասը հոգի, տասնմեկ մարդու քիթ, ականջ, ձեռք կտրել, տարել 2600 գլուխ անասուն, տասը ձի: Միայն 1891թ. նոյեմբերին այդ խումբն ավերել է երեք գյուղ, տարել 300 ոչխար, 150 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, հինգ ձի[2]:

Քրդերը, շարունակում է զեկուցագիրը, իրենց արարքները չեն քողարկում, որովհետև, ինչպես հայտարարում են նրանք, հայերին ջարդելու իրավունք ստացել են սուլթանից, և դատարանն անգամ չի կարող իրենց հանցավոր ճանաչել[3]:

Սուլթանի գործողությունների մեջ գաղտնիք չկար: Ամեն ինչ արվում էր բացահայտ: Համիդիե գնդերը Հայաստանը հայերից մաքրելու քաղաքականության իրականացման միջոցներից մեկն էին:

Գնդերի գործունեությունն այլ կերպ էր մեկնաբանում թուրքական մամուլը, գրելով, թե հայերը՝ քրդերի հարստահարիչները, «խեղճ» քրդերին հասցրել են կատարյալ կործանման: Նրանց փրկելու ուրիշ ելք չտեսնելով՝ կառավարությունը զինում է քրդերին, որպեսզի նրանք կարողանան իրենց պաշտպանել: Ասել է թե, գրում էր «Մշակի» թղթակից Մելիք-զադեն, թուրքական մամուլը բողոքում է «գառների դեմ, որոնք գիշատում են գայլերին»[4]:

Հայկական սարսափները հետզհետե նոր կերպարանք էին ստանում: Պաշտպանական միջոցներից զուրկ արևմտահայությունն ընկել էր տարբեր կողմերից եկող հարվածների տարափի տակ:

---

[1] *Мак-Коль К.М.,* նշված գիրքը, стр. 163-169.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, стр. 163-169.

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 26, գ. 5, գ. 53, թ. 32-32ա:

«Դիմացեք բոլոր արքունաց, մեծամեծ պաշտոնեից և անձնավորությանց...», եթե ոչ «հայությունը պատմության էջերից իբրև կենդանի ազգ պիտի անհետանա, եթե որ ներկա դրությունը շարունակվի մի քանի տարի ևս»,- Մ.Մխիթարյանին գրում էր նամակներից մեկի հեղինակը[1]:

Հայ ժողովրդի դեմ մշակված քաղաքականությունն ավարտին հասցնելու նպատակով «բարենորոգումներն իրագործելու» կեղծ հանձնարարությամբ Արևմտյան Հայաստան գործուղվեց հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Շաքիր փաշան: Դիմակավորված արյունարբուն ուղևորությունն սկսեց Տրապիզոնից, ապա անցավ Կարին: Չարժանանալով ցանկալի ընդունելության, ժամանակ շահելու միտումով՝ փաշան դիմեց խորամանկ քայլի: Հայ երևելիներին իր կողմը գրավելու, նրանց զգաստությունը բթացնելու նպատակով նրանց տեղական իշխանության մարմիններում և ոստիկանությունում աշխատելու առաջարկներ արեց: Հասկանալով փաշայի մտադրությունները՝ հայերը հրաժարվեցին առաջարկից: Փաշան նույնպիսի ընդունելության արժանացավ նաև Վանում, Մուշում, Բաղեշում, Տիգրանակերտում և այլուր: Հայերի մերժումն ավելի գրգռեց մոլեռանդ ամբոխին: Սակայն փաշան զսպեց նրանց և հորդորեց սպասել: Դրությունը սրվում էր: Կոտորածի սպառնալիքը նկատի ունենալով՝ Կարինի անգլիական հյուպատոսը Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանյանին խորհուրդ է տալիս պահպանել հանգստություն, առիթ չտալ «խուժանի գրգռման և համենայն դեպս նախահարձակ չլինել»[2]:

«Խաղաղեցնող շրջագայության» ելած արյունոտ փաշան երկար սպասել չտվեց: Նրա հեռանալուց մի քանի օր անց, 1895թ. հոկտեմբերի 18-ին, տարբեր վայրերից հավաքված 2000-անոց խուժանը, կանոնավոր զորքը, մահմեդական ամբոխը, համիդիե գնդերը, լսելով միջնաբերդից եկող զինվորական փողերի ազդանշանը, սկսեցին քաղաքի հայության կոտորածը:

«Մեռելոց դիակներ երթալով կը ստվարանան, որ կողմ դառնաս՝ դիակաց կույտ, ամբողջ քաղաքը գերեզմանոց է դարձել... կորավ, աղքատացավ, մարտիրոսացավ Կարին,- կարո՞ղ եմ միթե թվել վիրավորելոց անուններն, հարյուրավո՞ր, թե հազարավոր, չգիտեմ...»,- Կարինից գրում էր Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանյանը[3]:

Չորս օր շարունակվող կոտորածի ընթացքում ավերվեցին հայաշատ Չայղարա, Մաճալե պաղ թաղերը: Կոտորածին դիմադրելու հա-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 36:
[2] Կարնո հիշատակին, Վիեննա, 1896, էջ 28:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 70, գ. 5, գ. 55, թ. 1:

մար կազմակերպված ինքնապաշտպանական խմբերից առավել նշանավորը Ավետիսի ջոկատն էր, որը կռվում էր հատկապես դաժանորեն գործող թուրք երիտասարդ ջարդարարների դեմ: Ինքնապաշտպանական խմբերն ուժերի լարումով դիմադրում էին: Նրանց ջանքերի շնորհիվ ջարդից զերծ մնացին հայկական Չամուր սոխախ, Թիմուր այազ, Կանա ճամփա թաղերը: Ջարդից ազատվեցին նաև հյուպատոսություններին մոտ գտնվող փողոցներում բնակվող հայերը:

«...Հազար երանի անոնց, որոնք չեն տեսեր այն սրտաճմլիկ, այն քստմնափուշ կացությունը, որուն ենթարկված են մահվանե հրաշքով միայն ազատվող մնացածները... երեկվա մեծ ու փարթամ գերդաստանները «այսօր դարձել են աղքատ»՝ թշվառ են կատարելապես»,- գրում էր Կարինի առաջնորդը՝ նույն եպիսկոպոս Շիշմանյանը[1]:

Եվրոպական հյուպատոսները՝ զարհուրելի տեսարանների վկաները, ջարդն ավարտած զինվորների գլուխ անցած հավաքում են դիակները, որից հետո համատեղ բողոք ներկայացնում և պատասխան պահանջում: Փաշան՝ ջարդի կազմակերպիչը, «հանկարծակիի» է գալիս, դիմում վճռական «միջոցների»: Հոկտեմբերի 22-ին մունետիկները հայտարարում են, որ վերադարձվում է հայերից խլված գույքը: Հայերը, չհավատալով իշխանությունների խոսքին, հայտարարությունը գնահատելով որպես նոր կոտորած սկսելու պատրվակ, դուրս չեկան տներից: Նահանգապետի հրամանը զարմանք ու դժգոհություն առաջ բերեց ջարդարարների շրջանում: «Ի՞նչ կնշանակե ասիկա,- զայրացած պատասխան էր պահանջում խուժանը,- դուք մեզի հրամայեցիք թալանել, սպանել, հիմակ ալ կստիպեք, որ գյավուրներու ապրանքը շալակենք Սարայ տանինք, որպեսզի նորեն անոնց վերադարձնեք»[2]:

Նահանգապետի «սրտացավությունը» չուներ ուրիշ նպատակ, եթե ոչ քողարկել վանդալիզմի սկզբունքներով իրականացված ջարդի հետքերը, ջարդ, որն իր «հրահանգովն էր» կատարված[3]:

«Երանի այն աչքերուն,- գրում էր Կարինի հոգևոր առաջնորդ Ղ. եպիսկոպոս Շիշմանյանը,- որ չտեսան այդ սոսկալի օրվան աղեկտուր տեսարանը, որու նկարագիրը ոչ մեկ գրիչ պիտի կրնար իր ամեն մանրամասնություններովը ճշգրիտ երևան հանել...»[4]:

[1] Նույն տեղում, թ. 18:
[2] Կարնո հիշատակին, թ. 45-46:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 72, գ. 5, թ. 18:
[4] Նույն տեղում, թ. 1:

Այդքանից հետո էլ լկտիացած փաշան ջարդը կոծկելու, հյուպատոսների «սպառնալիքներին» բավարարություն տալու նպատակով «գազանությանց գիշերը ձերբակալել է քանի մը հայ փաստաբաններ, խիստ տանջանաց ներքև ստիպել է անոնց ստորագրություն տալու, թե հայերն էին, որ կառավարության վրա հարձակվեցան ու տեղի տվին կոտորածին»[1]:

Վերջին միջոցառումն իրոք կհանգստացներ եվրոպական երկրների «զայրացած» հյուպատոսներին, որովհետև նրանց հետաքրքրողը ոչ թե ջարդն էր, նրա համար պատասխանատվության կանչելը կամ «կես միլիոն օսմ. լիրայի» հասնող նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելը, այլ հասարակական կարծիք ստեղծելը, կարծիք, որը Թուրքիային կստիպեր գնալ նոր զիջումների, խոնարհվել եվրոպական կապիտալի առաջ:

Ջարդն անօրինակ դաժանությամբ էր իրագործվել Բայբուրդում: Թուրք խուժանը կրծքի երեխաների հետ այրել էր 14 կին, 10 կին կտրատել, սպանել էին, 50 երիտասարդ տղաներ, բռնաբարված կանայք ինքնասպանություն էին գործել: «Սպանվածների թիվը հասնում էր հազարների»,- շարունակում է լրաբերն ու ավելացնում՝ գավառում քանդվել, ավերվել են 165 գյուղեր, «թուրքերը ոչ մի վայրում կորուստ ու սպանվածներ չունեն»[2]:

Նույն Բայբուրդում ավերվել են «մեծ ու պզտիկ 53 մանուֆակտուրայք», 28 խանութ, «8 էտտարներեն 4-ը մեռած է, 20.000 ոսկիի չափ առաջիններուն և 400 չափ ալ վերջինոց նյութական վնաս եղած է»[3]:

Քաղաքում դիակները հավաքել տալուց և նախօրոք պատրաստած փոսերը լցնելուց հետո նահանգապետի հրամանով բանտարկվում են մի քանի աչքի ընկած ջարդարարներ: «Գթասիրտ» փաշան հավաքում է Բայբուրդի ողջ մնացած հայ երևելիներին, անմարդկային կտտանքների ենթարկում նրանց և ստիպում սուլթանի անունով շնորհակալագիր գրել: Հայերը, գերադասելով մահը, քան դավաճանությունը, չեն կատարում փաշայի պահանջը[4]:

Հայտնի է արխիվային փաստաթղթերից մեկը Երզնկայի մասին. «Գավառից 26 հայաբնակ գյուղերեն բացի երկուսը, բոլորն ալ կողոպտ-

[1] Նույն տեղում, թ. 2:
[2] Նույն տեղում:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 4, գ. 152, թ. 11:
[4] Նույն տեղում:

ված, մի քանիսը հրդեհված են», մոլեռանդ ամբոխը քանդում է, ավերում եկեղեցիները, վանքերը[1]:

Թորդանում ավերվել էին 40, Բասենի գավառում՝ 14, Օվայում՝ 23, Քղիում՝ 9 գյուղեր[2]:

Միայն հոկտեմբերի 20-ին Կարինում սպանվել էին 1200 հայեր, թալանվել էին 1500 կրպակ, հարյուրավոր տներ: Հոկտեմբերի 21-ին սպանվել են 700, վիրավորվել 400 հայեր[3]:

Կոտորածները շարունակվում էին, բայց վայրենացած ամբոխն արդեն ձանձրացել էր սպանությունների միօրինակությունից: Տասնիններորդ դարի վանդալները հորինում են սպանությունների՝ իրենց համար զվարճալի ձևեր: Հատկապես մեծ զովեստների էին արժանանում այն անձինք, ովքեր ավելի շատ հայեր էին սպանել: Դրանցից մեկը, որպես ապացույց իր սպանած հայերի, բերում էր կտրած քթեր, ականջներ և հայտարարում, թե չի հանգստանա, մինչև հարյուրը չլրացնի:

«Էրզրումում,- շարունակում է Յո.Լեփսիուսը,- ամբոխը հրճվում էր երեխային սպանելով այլանդակված հոր դիակի վրա, ումից, մինչև մահանալը, կտրատել էին միսն ու վերքի վրա քացախ լցրել»[4]:

Ֆրանսիական «Դեղին գրքի» տվյալներով, միայն Կարինի նահանգում սպանվել է 6715 քրիստոնյա, թալանվել 2600 խանութ, 1177 տուն և կրպակ, քանդվել 7500 տուն, 55.300 մարդ դարձել է մուրացկան, 2800-ը ենթակա է մուրացկանության[5]:

Հավատ ընծայել ներկայացված տվյալներին՝ հնարավոր չէ, որովհետև ամենահամեստ վկայություններով, միայն Կարին քաղաքում սպանվել են 5000 հայեր[6]: Իսկ թե ինչքան հայեր են զոհվել ամբողջ նահանգում, այդ մասին ամբողջական ամփոփված տեղեկություններ չկան:

Թուրքական իշխանությունները, կազմակերպելով ջարդը, ուշադրությունից դուրս չէր թողել մի կարևոր հանգամանք՝ կրոնափոխությունը: Սահմռկեցուցիչ տեսարաններից սարսափած շատ հայեր, փրկության ուրիշ ելք չտեսնելով, ընդունում էին մահմեդականություն, ինչպես, օրինակ, Բայբուրդի գավառի չորս գյուղերում[7]:

[1] Նույն տեղում, գ. 5, գ. 72, թ. 26:
[2] «Братская помощь...», стр. 136.
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 124:
[6] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 333:
[7] «Братская помощь...», стр. 150.

Նման դեպքեր են արձանագրվում նաև Քղիում, Դերջանում, այլուր:

Զարդերի ականատես հյուպատոսների հաղորդումներից տեղյակ լինելով կատարված իրադարձությունների մասին՝ եվրոպական պետությունները ոչ միայն գործուն միջամտություն չցուցաբերեցին հայ ժողովրդին օգնելու գործում, այլև, կրկնելով թուրքական գլխիվայր շրջած «հաղորդագրությունները», կամ արդարացնում էին սուլթանին, կամ միջադեպերին տալիս էին այլ որակումներ: Կարինի անգլիական հյուպատոսը Լինչին 1898թ. հունվարի 22-ին գրած նամակում տեղեկացնում էր, որ կառավարությունն ինքը զինեց քրդերին, որոնք էլ ամայացրին երկիրը, և հիմա կանգնել են տնտեսական ծանր վիճակի առաջ, բայց չեն համարձակվում զինաթափել քրդերին: Տեսնելով այդ անօրինականությունները՝ հյուպատոսները ոչնչով չեն կարողանում օգնել դժբախտ ժողովրդին[1]:

«Անմեղ» սուլթանին պաշտպանում էր նաև ռուսական ցարիզմը: 1895թ. հոկտեմբերի 31-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարարության՝ Մ.Խրիմյանին ուղղված նամակում այդ առթիվ մասնավորապես ասված էր. «...վերջին ժամանակներս տեղի ունեցած Դիարբեքիրի, Էրզրումի, Զեյթունի արյունալի կռիվներում հայերը, ըստ երևույթին, գրեթե ամենուրեք անկարգությունների նախաձեռնող են հանդիսացել»: Ավելին, «Ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող հավանություն տալ հայ առաջավոր մարդկանց կողմից գործածվող հեղափոխական միջոցներին»[2]:

Ասել է, թե՝ ցարիզմը պաշտպանում էր «Զարդեցեք, վեհափառ տեր, ջարդեցեք» քաղաքականությունը և մտադրություն չուներ անգամ բռնելու սուլթանի արյունաշաղախ ձեռքը: Նույն կերպ էին վարվում նաև եվրոպական մյուս տերությունները՝ բավարարվելով հյուպատոսների ու դեսպանների կարեկցող հաղորդագրություններով:

Կոտորածների «ընդարձակ դաշտի» վերածված Արևմտյան Հայաստանի միակ փրկությունն ազատագրական համընդհանուր պայքարն էր, որին այդպես էլ, դժբախտաբար, չհաստցրին զինվորագրվել արևմտահայության ստվար զանգվածները:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 411, գ. 1, գ. 143, թ. 76:

[2] *Մարկոսյան Ս.,* Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968, էջ 245:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՀԱՆԳԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարինի նահանգը զբաղեցնում է պատմական Հայաստանի Բարձր Հայք նահանգի տարածքի զգալի մասը: «Բարձր Հայք» անվանումն առաջին անգամ հիշատակվում է «Աշխարհացոյցում». «Առաջին աշխարհ Բարձր Հայքը... եւ բարձր ոչ միայն քան զՀայք, այլ զամենայն երկիր. վասն որոյ Կատար երկրի կոչեցին զնա»[1]:

Բարձր Հայքը ջրառատ է. «... ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բղխէ չորս գետս զորեղս, զԵփրատ՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոհ ի հիւսիս...»[2]:

Բարձր Հայքն իր վարչական, տնտեսական, մշակութային կենտրոն Կարին քաղաքի անունով անվանվել է նաև Կարնո երկիր, Կարնո աշխարհ:

Բարձր Հայքի, Տայքի, Փոքր Հայքի տարածքում ձևավորվել է հայասա-ազգի ցեղային միությունը, որը խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի կազմավորման գործում:

Հայաստանի առաջին բաժանումից (387թ.) հետո Բարձր Հայքն անցավ Հռոմեական կայսրության տիրապետության տակ: Շուտով Բարձր Հայքը վերածվեց կոմսության, ուր հայ նախարարները պահպանեցին զգալի ինքնուրույնություն:

Բյուզանդական կայսրությունում Հուստինիանոս կայսրի իշխանության տարիներին (527-565թթ.), 536թ., անցկացվեց վարչական բարեկարգում, որի հետևանքով Բարձր Հայքը մտավ վարչական նոր միավորի՝ Առաջին Հայք անունով պրովինցիայի մեջ:

Ութերորդ դարում Հայաստանի մյուս նահանգների թվում Կարինի գավառը նույնպես գրավվեց արաբների կողմից: 689թ. Բյուզանդական

[1] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881, էջ 29-30:
[2] Նույն տեղում:

կայսրությունն այն նորից հետ նվաճեց: Իններորդ դարի վերջին քառորդից նահանգը, Բագրատունյաց թագավորության կազմում կարևոր վարչաքաղաքական և տնտեսական դեր էր խաղում:

11-12-րդ դարերում Բարձր Հայքը դարձավ սելջուկյան արշավանքների ասպարեզ: 12-րդ դարում կազմվեց Շահարմենների ամիրայությունը, որի կազմի մեջ էին մտնում նաև Բարձր Հայքի մի քանի շրջաններ: Բարձր Հայքի հիմնական մասը մտավ Կարինի Սալդուխյան ամիրայության կազմի մեջ:

13-րդ դարում Բարձր Հայքը ենթարկվեց Ջալալեդդինի ասպատակություններին: 1231թ. Դիարբեքիրի ճակատամարտում Ջալալեդդինի բանակը պարտություն կրեց Իկոնիայի, Այուբյան սուլթանությունների ու Խլաթի ամիրի միացյալ ուժերից:

13-րդ դարում սկսվեցին մոնղոլական արշավանքները: Մոնղոլները կործանեցին Շահարմենների ամիրայությունը և գրավելով Բարձր Հայքը՝ այնտեղ կազմավորեցին իրենց իշխանություններից մեկը: Մոնղոլական տիրապետության քայքայումից հետո Բարձր Հայքը ենթարկվեց ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի իշխանությանը:

Մինչ այս երկու ցեղերն իրար դեմ պայքարելով աստիճանաբար թուլանում էին, սկսվեցին Լենկթեմուրի արշավանքները: Նրա 1387, 1394-1396, 1400-1402թթ. ասպատակություններից զերծ չմնաց նաև Բարձր Հայքը:

1467թ. ակ-կոյունլուների ցեղապետ Ուզուն Հասանին հաջողվեց ջախջախել կարա-կոյունլուներին և նրանց վրա հաստատել իր իշխանությունը:

Ուզուն Հասանի մահից (1479թ.) հետո սկսվեցին երկպառակությունները, և ակ-կոյունլուների իշխանությունը տապալվեց:

Տասներեքերորդ դարում, Սուլեյմանի գլխավորությամբ, Փոքր Ասիա ներխուժեց թուրքական մեկ այլ ցեղախումբ: Սուլեյմանը «հայրենիք» կամ տիրույթ ձեռք բերելու նպատակով, իր ցեղով նախ հաստատվեց Խորասանում, ապա տեղափոխվեց Հայաստանի հարավարևմտյան շրջանները: Բայց նա չկարողացավ իրականացնել իր ծրագրերը: Ենթարկվելով հարձակումների՝ ցեղապետը որոշեց իշխանություն ստեղծել Հալեպի շրջանում: Եփրատն անցնելիս ցեղապետը խեղդվեց: Նրա ցեղը, ցեղապետի որդիներ Էրթոգրալի կամ Էրտոֆիլի, Սենկերոմի, Գյուդագդի, Այդուգդի գլխավորությամբ, վերադարձավ Բասեն, որտեղ եղբայրները բաժանվեցին իրարից: Գյունդագդն ու Այդուգդը զորքի և ցեղի մի մասի հետ անցան Խորասան, իսկ Գենդարն ու Էրթոգրալը 400 հոգանոց

ցեղին և զորքին առաջնորդեցին սելջուկյան Ալաեդդին թագավորի իշխանության սահմանները, ուր արժանացան հովանավորության՝ որպես բնակավայր ստանալով Կարաջա-դաղ լեռան ստորոտը: Սելջուկյան այդ թագավորության վրա մոնղոլական հարձակումներից մեկի ժամանակ աչքի ընկավ Էրթոգրալը՝ սուլթանից ստանալով պատվավոր խալաթ: Կարճ ժամանակ անց Էրթոգրալը հույներից խլեց Կարաջա-հիսար բերդը: Շուտով Ալաեդդին սուլթանը Էրթոգրալին ամուսնացրեց իր աղջկա հետ՝ նրանց որպես կալվածք նվիրելով Բիլեջիք ամրոցն իր տիրույթներով: Էրթոգրալի մահից հետո իշխանությունն անցավ նրա քսանչորսամյա որդուն՝ Օսմանին:

1299թ. Իկոնիայի սուլթանության անկումից հետո Օսմանն իրեն հայտարարեց Բիլեջիքի և Կարահիսարի սուլթան և իր անունով դրամ կտրեց: Այսպիսով, Օսմանը հիմնադրեց թուրք-սելջուկյան պետությունը, որը հետագայում նրա անունով կոչվեց Օսմանյան կայսրություն կամ սուլթանություն:

Օսմանի հաջորդները մեկը մյուսի հետևից գրավելով Փոքր Ասիայի արևմտյան շրջանները՝ 1453թ. գրավեցին Կ.Պոլիսն ու վերջնական պարտության մատնեցին Բյուզանդիային: Ստեղծվեց Օսմանյան հսկայածավալ կայսրությունը, որի կազմի մեջ էր մտնում նաև Կարինի նահանգը:

Շուտով ասպարեզ ելավ Սեֆյան Պարսկաստանը, որի հիմնադիր հանդիսացավ Պարսկաստանում հաստատված ղզլբաշ ցեղի Սեֆի տոհմի ներկայացուցիչ Իսմայիլը: 1502թ. Շարուրի ճակատամարտում պարտության մատնելով Պարսկաստանում հիմնավորված ակ-կոյունլուներին՝ Իսմայիլը գրավեց Թավրիզն ու իրեն հռչակեց շահ:

Այնուհետ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև բորբոքվեց երկարատև ու անզիջում պայքար, որի թատերաբեմերից մեկն էլ Հայաստանն էր:

1555թ. մայիսի 29-ին երկու պետությունների միջև կնքվեց պայմանագիր, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց նրանց միջև: Բաժանման սահմանագիծն անցնում էր Ախուրյան գետով, Հայկական լեռնաշղթայով, Մեծ ու Փոքր Մասիսներով, Կոտուր և Զագրոշ լեռներով:

Սակայն դրանով չավարտվեց նրանց վեճը: Օգտվելով Պարսկաստանի թուլացումից՝ թուրքերը նախահարձակ եղան և 1578-1590թթ., ծանր հարվածներ հասցնելով պարսկական բանակներին՝ գրավեցին ամբողջ Հայաստանը: 1590թ. կնքվեց նոր պայմանագիր, որով Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը, Ատրպատականը՝ Թավրիզով անցան Թուրքիային:

Շուտով դերերը փոխվեցին: Այժմ արդեն անկայուն, խռովահույզ, երկպառակություններով լի վիճակ ստեղծվեց Թուրքիայում: Վերակազմելով բանակը՝ Շահ Աբաս 1-ը 1603թ. գրավեց Թավրիզը, 1604թ.՝ Նախիջևանն ու Երևանը և 1605թ. ծանր պարտության մատնելով թուրքերին՝ նրանց ստիպեց ճանաչել 1555թ. պայմանագիրը:

Թուրք-պարսկական պատերազմներն ընդհատումներով շարունակվեցին մինչև 1639թ., երբ կնքվեց նոր պայմանագիր: Այս անգամ սահմանն անցնում էր Ախուրյան գետով՝ մինչև նրա ստորին հոսանքի մոտ գտնվող պատմական Երվանդաշատ քաղաքի մոտերքը, ապա թեքվում էր դեպի արևմուտք, կտրում Արաքսը, Կողբից հարավ-արևմուտք հասնում Հայկական պար լեռնաշղթային, այնուհետև լեռնաշղթայի ջրբաժան գծով գնում դեպի արևելք՝ մինչև Մեծ ու Փոքր Մասիսների թամքոցը, այստեղից հարավ-արևելք՝ մինչև Մասիսը Կոտուր լեռնաշղթայի հյուսիսային վերջավորության հետ կապող բլրաշարքերը, անցնում այն, ձգվում դեպի Կոտուր և Զագրոշ լեռնաշղթայի ջրբաժան գծերը:

Թուրքիային անցան Տուրուբերանը, Վասպուրականի մեծ մասը, Վան քաղաքը, Աղձնիքը, Ծոփքը, Բարձր Հայքը, Կորճայքը, Մոկքը: Հայաստանի մնացած շրջաններն անցան Պարսկաստանի տիրապետության տակ: Արևելյան Հայաստանում կազմվեցին բեգլար-բեգություններ, Արևմտյան Հայաստանում՝ էյալեթներ: 1864թ. կազմվեցին Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի վիլայեթները (պատմաբանների մի մասի կարծիքով՝ վիլայեթները կազմվել են 1877թ.), որոնցից ամենամեծն Էրզրումի վիլայեթն էր: Այն միաժամանակ հանդիսանում էր սերասկյարի՝ Թուրքիայի արևելյան զորամիավորումների գլխավոր հրամանատարի բնակատեղին:

Էրզրումը ոչ միայն փաշայի նստավայրն էր, այլև, ինչպես գրում է Հ.Կարնեցին. «... Արզրում նստող փաշայի կերուածքն էր»[1]:

Կարինի նահանգն ունի հարուստ բնաշխարհ. «Ունի լերինս մեծ երիս, ունի երէս, եղջերու, այծ եւ քաղս, առն եւ արտի, վիթ եւ կրկիթ եւ խոզ...»[2]:

Սկիզբ առնելով Կարինի հյուսիսում գտնվող Ոսկեանք լեռից՝ Արևմտյան Եփրատն անցնում է Կարինի, Դերջանի, Երզնկայի դաշտերով, ապա թեքվելով հարավ՝ Խարբերդի նահանգում միանում է Արևելյան Եփրատին՝ Արածանիին:

[1] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 24:
[2] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, էջ 30:

Արաքսը, ոռոգելով նահանգի արևելյան շաջանները, անցնում է Բասենի դաշտով և մտնելով Արևելյան Հայաստան՝ թափվում Կասպից ծովը:

Կարինից հյուսիս-արևմուտք գտնվող Կոփ լեռան հյուսիսային լանջերից սկիզբ է առնում Ճորոխ գետը: Այն ունի 160 մղոն երկարություն, նավարկելի է, արագընթաց:

Այծու պտկունք (այժմ՝ Փալան թոքեն) լեռից սկիզբ է առնում մի գետակ, որն իր մեջ առնելով ճանապարհին պատահած աղբյուրների ջրերը՝ Գետակ (Զայղարա) անունով մտնում է Կարին:

Կարինի նահանգի ամենագեղեցիկ ու հարուստ ավանդություններ ունեցողը Գայլատու լիճն է: Իսկ Թորթումի լիճը, որից սկիզբ է առնում Թորթում գետը՝ «Թութում գետը այս լճեն կանցնի», ապա լցվելով նեղ կիրճը, գնում է հյուսիս-արևելք՝ գոյացնելով հիասքանչ մի տեսարան, որի զարդը ջրվեժն է[1]:

Կարինի նահանգն արևելքից սահմանակից էր Երևանի նահանգին, արևմուտքից՝ Փոքր Հայքին, հարավից՝ Ամիդի (Դիարբեքիրի), Վանի նահանգներին, հյուսիսից՝ Տրապիզոնի նահանգին:

17-րդ դարում նահանգն ունեցել է 23 գավառ. Լակզի ձոր, Խորձանյաց երկիր, Ղզլջան, Դերջան, Եկեղյաց, Դարանաղի, Գայլ գետի երկիր, Շեռյան, Կուկանցի ձոր, Խախտյաց, Սպեր, Իշխանանիստ ձոր, Մամրվան, Վերին և Ներքին Բասեններ, Ղարայազի, Ալաշկերտի, Մանազկերտի, Ապահունյաց երկիր, Թաքման[2]:

19-րդ դարում թուրքական վարչական բաժանման համաձայն, նահանգն ուներ երեք սանջակ (սանջակը գավառ հասկացության հետ չի նույնանում)՝ Էրզրումի, Երզնկայի, Բայազետի: Սանջակները բաժանվում էին գավառների (կազաների), գավառները՝ գյուղական համայնքների (նահիների):

Կարինի սանջակը 19-րդ դարում ունեցել է հետևյալ գավառները՝ Կարինի, Բասենի, Խնուսի, Դերջանի, Կիսկիմի, Թորթումի (Մամրվանի), Բայբուրդի (Բաբերդի), Սպերի, Քղիի: Սանջակի ինը գավառներն ունեին 1574 գյուղ[3]:

Երզնկայի սանջակն ուներ հինգ գավառ՝ Երզնկայի, Կամախի, Կերճանիսի, Գուզիշանի, Ղուրաչայի, և 538 գյուղ:

Բայազետի սանջակն ուներ հինգ գավառ՝ Բայազետի, Դիադինի, Ղարաքիլիսայի, Ալաշկերտի, Դութաշի, և 551 գյուղ:

[1] *Էփրիկյան Հ.Ս.,* Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պր. 1, Վենետիկ, 1900, էջ 152:
[2] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 9:
[3] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 6:

Նահանգի երեք սանջակների 27 գավառների 389 գյուղերում և ինը քաղաքներում ապրում էին 23.413 տուն, 159.593 հայ բնակիչներ:

1891թ. նահանգում ապրել են 259.393 հայեր, որից՝ 89.934-ը՝ Կարինի, 34.510-ը՝ Երզնկայի, 134.949-ը՝ Բայազետի սանջակներում[1]:

1895թ. տվյալներով նահանգն ուներ 646.000 բնակչություն, որից 135.000-ը հայեր: Նահանգի քաղաքների 93.000 բնակիչներից 20.000-ը հայեր էին[2]:

Լ.Չորմիսյանի և թուրքական կառավարության 1896թ. խեղաթյուրված վկայությունները վիճարկելով՝ Ա-Դոն հայտնում է, որ դրանք 19-20 տոկոսով հայերին պակաս են ներկայացնում[3]:

Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, 1878թ. նահանգի Կարինի, Դերջանի, Բայազետի, Ալաշկերտի, Կիսկիմի, Բասենի գավառներում ապրում էին 159.000 հայեր, այդ թվում՝ Բասենում՝ 18.000, Դերջանում՝ 12.000, Կամախում՝ 6500, Բայազետում, Ալաշկերտում՝ 13.000, Կիսկիմում՝ 2000, Կարինում՝ 31.000[4]:

Այդ տարիներին Թուրքիայի բնակչությունը կազմում էր 11.905.000, որից հայեր՝ 1.281.900, այսինքն՝ հայերը կազմում էին բնակչության 10 տոկոսը, քաղաքային բնակչության՝ 20 տոկոսը[5]: Այստեղ ևս հայերի թիվը քիչ է ներկայացված, որովհետև Բեռլինի կոնգրես հղված վիճակագրության համաձայն, հայերը 1.330.000 էին, որը, մեր կարծիքով, առավել հավատընծա վկայությունն է:

Հատկանշական է այն փաստը, որ չնայած հայկական նահանգներում պարբերաբար կրկնվող վարչական փոփոխություններին, որոնց հիմնական նպատակը գերակշիռ հայ բնակչություն ունեցող շրջանների ուծացումն էր, կառավարությանը չհաջողվեց իրականացնել իր ծրագիրը, և Կարինի նահանգի հայաշատ գավառներ Բասենում, Խնուսում, Դերջանում, Կամախում, Բայազետում, Բաբերդում, Ալաշկերտում մահմեդականության համար չապահովվեց քանակական գերազանցություն:

Նահանգի գավառների նկարագրությանն անցնելուց առաջ, հետագա թյուրիմացություններից խուսափելու նպատակով, նշենք, որ թեև այս կամ այն գավառում, գավառակում, գյուղում ընտանիքների՝ տների քանակը միտումնավոր կերպով քիչ է հաշվված, ինչը թուրքական «վիճա-

[1] Նույն տեղում, էջ 226, 236-237:
[2] *Չորմիսյան Լ.,* նշված գիրքը, էջ 106:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 224:
[4] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գ. 23, թ. 16-19:
[5] *Չորմիսյան Լ.,* նշված գիրքը, էջ 106:

կագրության» հակահայկական քաղաքականության արդյունք էր, սակայն այստեղ ևս բնակչության ընդհանուր պատկերը պարզելը դժվար չէ, որովհետև այդ տները, ընտանիքները թվական գերակշռություն ունեին մահմեդական ընտանիքների նկատմամբ: Ինչպես նշում է Ա-Դոն, գյուղերի հայ ընտանիքները, միջինը, ունեին յոթ, իսկ քաղաքներում ապրող ընտանիքները՝ վեց անդամ, հանգամանք, որը չէր նկատվում թուրք կամ քուրդ ընտանիքներում: Չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ մահմեդական ազգաբնակչությունն աճում էր ոչ միայն բնական աճի, այլև ներգաղթի և որպես հետևանք՝ հայ բնակչության հարկադրական արտագաղթի, ջարդերի, բռնի կրոնափոխության պատճառով:

Կարինի նահանգի վարչական և տնտեսական կենտրոնը Կարին քաղաքն էր: Կարինը հայոց հինավուրց և մեծ ավանդույթներ, պատմական հարուստ անցյալ ունեցող քաղաքներից էր:

Քաղաքի մասին հիշատակություններ կան Ստրաբոնի, Պլինիոսի, Պրոկոպիոս Կեսարացու, արաբ պատմիչների մոտ, հայկական ավանդություններում, պատմահայր Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Սեբեոսի, Ղազար Փարպեցու, Հովհ. կաթողիկոսի, Ստ. Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու մոտ:

Կարինի մասին հայտնի ամենահին տեղեկություններից մեկը պատկանում է Պլինիոսին: Նա գրում է. «Այստեղ ամենեն հարմարն է Եփրատի վրա խոսելու: Եփրատ Մեծ Հայոց Կարանիդես նահանգեն կը բխե»[1]:

Հույներն ու հռոմեացիներն ինչպես մնացած բնակավայրերին, այնպես էլ Կարինին տալիս էին իրենց անվանումը՝ «Կարանիտիս», «Կարանիդես»:

Պ.Կեսարացին Կարինի կառուցման մասին հայտնում է հետևյալը. «Հայաստանի բաժանումից հետո Թեոդոսիս կայսրը բլուրների վրա ամրոց կառուցեց, որը սակայն մատչելի էր թշնամիներին, և այն Թեոդոսապոլիս անվանեց»[2]:

Արաբ պատմիչ Բալազորիի վկայությամբ, Կարին քաղաքը կառուցել է Արմենակուս իշխանի կինը՝ Կալին: «Հռոմների գործերը երբեմն կարգավորվում էին և (տեղի իշխանները) դարձել էին ինքնագլուխ մանր տիրակալների նման: Նրանց (Հայաստանի) վրա իշխեց նրանցից մի մարդ՝ Արմենիակուսը, որը մեռավ և նրանից հետո իշխեց նրա կինը՝ Կալի կոչված: Սա կառուցեց Կալիկալա քաղաքը և այն կոչեց Կալի

[1] *Քոսյան Հ.,* Բարձր Հայք, հ. 1, Վիեննա, 1925, էջ 22:

[2] *Տեր-Ղևոնդյան Ա.,* Կարին-Թեոդոսոպոլիսը ավանդության և պատմության մեջ, տե՛ս Լրաբեր հաս. գիտ. 1971, նո. 3, էջ 66:

Կալա և որ իմաստն է Կալիի բարեգործության: Ասված է, որ նա պատկերված է նրա դարպասներից մեկի վրա»[1]:

Հայկական համառոտ ժամանակագրության մեջ (գրված է մոտավորապես 700թ.) Կարինի մասին պահպանվել է հետևյալ տեղեկությունը. «Նրա (Արշակ Արշակունի թագավորի) ժամանակ Հայաստանը բաժանվեց. կառուցվեց Թեոդոսոպոլիսը, որը նախկինում գյուղ էր և կոչվում էր Կալե արխե այն պատճառով, որ երբ մեծ առաքյալ Բարդուղիմեոսը Պարթևստան գնալիս Եփրատ գետում մկրտեց Պարսից արքայի եղբոր որդուն և նրա հետ միասին երեք հազար մարդու, այնտեղ նա կառուցեց ամենասրբուհի Աստվածածնի անվան տաճարը և այդ վայրում գտնվող գյուղն անվանեց Կալե արխե (Բարի սկիզբ)»[2]:

Ա.Տեր-Ղևոնդյանը զուգահեռներ է տեսնում Բալազորիի հաղորդման և «Սասնա ծռեր» հայկական ժողովրդական ավանդության ծագման միջև: Այնուհետև շարունակելով իր միտքը՝ ավելացնում է, թե «Կարնո քաղաքի մասին հայկական զրույցի արաբական տարբերակի ծնունդը պատահական չէր, քանի որ այդ քաղաքը արտակարգ մեծ դեր էր կատարել արաբական խալիֆայության Բյուզանդիայի դեմ մղած պատերազմներում»[3]:

Ե.Լալայանը, վկայակոչելով հունական աղբյուրները, գրում է. «Հունաց առասպելական պատմությունների (Պլինիոս և Ստրաբոն) ասելով ոմն *Carenitis*, սիրահարվելով այստեղի պատմական օդին ու հրաշալի դիրքին, հիմնել է քաղաք և կոչել իր անունով, որից հետո Հայքը իբր թե աղավաղել են և կոչել Կարին»[4]:

Քաղաքի ծագման մասին բերված վկայություններից, տեղեկություններից բացի, օտար աղբյուրներում կան մի շարք այլ հիշատակություններ, որոնք ունեն համարյա նույն բովանդակությունը:

Այժմ դիմենք հայկական աղբյուրներին, որոնք այս կամ այն առիթով շահեկան մտքեր են արտահայտում՝ պարզություն մտցնելով վիճարկվող հարցի շուրջ:

Հունա-հռոմեական ավանդությունները, զրույցները, պատմիչների վկայությունները հասկանալի պատճառներով պետք է որ ունենային

[1] Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. Հ.Բարթիկյանի, Ե., 1967, էջ 186:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, նո. 3, էջ 34, տե՛ս Մ.Դարբինյանի հաղորդումը. Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829-1830թթ. գաղթի վերաբերյալ Ե.Լալայանի տեղեկագիրը:

կողմնակալ բնույթ, որովհետև յուրաքանչյուր նվաճողի ցանկությունն էր արդարացնել իր գործողությունները: Այդ պատճառով էլ քաղաքի հիմնադրման հետ կապված ցանկացած հիշատակություն ներկայանում է որպես տվյալ երկրի շահերից բխող քայլ:

Հայկական հնագույն ավանդությունները, սակայն, հերքում են այդ մտացածին տեսակետները:Ահա նրանցից մեկը.

Այս բարելի քաղաք Կարին,
Շինեալ վաղուց՝ ավուրս հին
Ձեռաց Կարին թագավորին,
Հայկյան տոհմի մեր արքայի[1]:

Մանրազնին ուսումնասիրելով քաղաքի հիմնադրման առթիվ գոյություն ունեցող հունա-հռոմեական, արաբական ավանդությունները, սկզբնաղբյուրները, օտարազգի հայագետների եզրակացությունները, որպես կռվան օգտագործելով հայկական աղբյուրների վկայությունները՝ Գ.Ղափանցյանը թե՛ քաղաքի հիմնադրման, թե՛ անվան ծագման հարցերը կապում է հայասա-ազգի ցեղային միության թագավոր Կարինի անվան հետ: Այս տեսակետը, ինչ խոսք, հարցի լուծման միակ ճիշտ և գիտական ուղին է:

Աննկատ թողնելով ժամանակագրությունը՝ նշենք, որ Ղ.Ինճիճյանի ու Գ.Թուրիկյանի մոտ Գ.Ղափանցյանին հակասող մտքեր կան[2]:

Ե.Լալայանը Կարին քաղաքի և գավառի նախաքրիստոնեական շրջանի մասին գրում է. «Ասորեստանի բևեռաձև գրվածներից իմանում ենք, որ Քրիստոսից 8-9 դար առաջ Կարնո գավառը «Մելդիս» անունով մի ինքնագլուխ պետություն էր կազմում, որ հետո Պարսից Դարեհ արքայի ձեռքով նվաճվեց»[3]:

Օգտագործելով հար և նման տեսակետներ՝ Ղ.Ինճիճյանն ու Գ.Թուրիկյանն այն միտքն են հայտնում, թե հնում ևս գոյություն չի ունեցել Կարին անունով քաղաք, բնակավայր, այլ եղել է միայն Կարնո աշխարհ, գավառ անվանումը: Սակայն վերոհիշյալ ուսումնասիրողները մոռանում են բացահայտել թեկուզ Կարնո աշխարհ անվանումը, անվան ծագումը: Ավելին, Ղ.Ինճիճյանն այն տեսակետին է, թե քաղաքը Կարին չի կոչվել, այլ Կարնո քաղաք, այսինքն՝ Կարին գավառի քաղաք[4]:

[1] *Չարբգ Ղ.,* նշված գիրքը, էջ 44:
[2] *Ինճիճյան Ղ.,* Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 75:
[3] Բանբեր Հայաստանի արխիվների, 1974, նո. 3, էջ 84, տե՛ս նշված հոդվածը:
[4] *Թուրիկյան Գ.,* նշված գիրքը, էջ 76:

Գ.Թուրիկյանը, վիճարկելով քաղաքի անվան ծագման հարցը, գտնում է, որ գավառն այդպես է անվանվել ոչ թե Կարինի, Կարեն, Կարին թագավորի, այլ Կար նահապետի անունով: Հակառակվելով քաղաքի ծագման ընդունելի տեսակետին, այդ թվում նաև Հ.Էփրիկյանի բացատրություններին՝ Գ.Թուրիկյանը գրում է. «Եթե սակայն Կարեն թագավորի տեղ հեղինակը բավականանար ըսելով Կար նահապետ, այն ատեն բավական հասկանալի կըլլար, որովհետև Հայկազյան շրջանեն, Հայկ նահապետեն սկսելով քսանհինգերորդ նահապետը կկոչվեր Կար, Վարամին հաջորդը: Թերևս ասոր անունով գավառը կոչված կըլլա Կար կամ Կարին:

Բայց միայն գավառը և ոչ թե քաղաքը»[1]:

Ապա Թուրիկյանը, անցնելով Զ.Գլակի մեկ վկայության բացատրությանը, ուր պատմիչը գրում է. «Զորս գումարել երկնի վերա իշխանին Վրաց, ես զնա փախստական արարեալ, բերին մինչև Կարնոյ քաղաք» պնդում է, թե «Կարնոյ քաղաք» արտահայտությունը պետք է հասկանալ ոչ թե Կարին քաղաք, այլ Կարնո գավառի քաղաք. «Մեր կարծիքով Կարնոյ քաղաք ձևով Գլակ ըսել ուզած է Կարնոյ գավառին քաղաք»[2]:

Ապա Գ.Թուրիկյանը մեծ ջանասիրությամբ վերլուծում է Սիմեոն Ապարանցու մի բանաստեղծությունը և հայտնում այն միտքը, թե Կարնո քաղաքը սկզբում անվանվել է «Թոալուս».

«Եվ զ’Անատոլ ուղեւորեալ
Ըթոալուս քաղաք շինեալ
Թեոտոսի Պոլիս շինեալ
Նախկին անունն խանգարեալ...»:

Այստեղից էլ, եզրակացնում է Գ.Թուրիկյանը, պետք է ընդունել, որ Կարնո քաղաքի անունը «Թոալուս» է, «որ վրացերեն բառ է, ինչպես Թալուսը, որ եղած է Թիֆլիս: Որ ըսել է ջերմուկ, հանքային տաք ջրեր ունեցող տեղ, գյուղ կամ քաղաք»[3]:

Ինչպես տեսնում ենք մեջբերված բանաստեղծության տողերից, Գ.Թուրիկյանին հետաքրքրողը, նրա համար շահեկանն առաջին երեք տողերն են, որով հաստատում է իր տեսակետը: Բայց ավելի հանելուկային է բանաստեղծության վերջին տողը, որը, սակայն, չի հետաքրքրում հետազոտողին և այդպես էլ առանց խոսքի անցնում է քաղաքի

[1] *Ինճիճյան Ղ.,* նշված գիրքը, էջ 65:
[2] Նույն տեղում, էջ 77:
[3] Նույն տեղում:

նախկին անվանման կողքով՝ նշելով, որ այն Անատոլ զորավարի կողմից «խանգարեալ» է:

Այնուհետև Գ.Թուրիկյանը գրում է.

«Կարնո գավառին մեջ կամ Կարին կոչված դաշտին մեջ ջերմուկը այժմ թուրքական ձևով Ըլըճա կամ Իլիճան է, որ գյուղ մըն է Կարին գավառին մեջ: Անատոլիայեն, հինգերորդ դարուն հիմնուած Թեոդոպոլիս քաղաքեն դեպի արևմուտք 15 քիլոմեթր հեռավորության վրա, որ այդ դարուն կըրնայ Կարնոյ կամ Կարին գավառին քաղաքը եղած ըլլալ, ուր ուղեւոր Անատոլիան եկավ քաղաք մը շինելու նպատակով...

Ուրեմն պիտի ընդունինք, թե գավառին Կարին անունեն է քաղաքին ալ անունը և ոչ թե քաղաքին Կարին անունովն է, որ գավառն ալ կոչուած է Կարին:

Արշակունիներեն առաջ, Կարին գավառին քաղաքը կրնա եղած ըլլալ Թվալուսը, կամ ուրիշ մեկ տեղ, որ դարերու հոլովումին ընթացքին, այս կամ այն բնական կամ մարդկային պարտադրունքներով կանհետանայ»[1]:

Սակայն Գ.Թուրիկյանի վերոհիշյալ եզրակացությունները, որոնք ենթադրություններ կարող են լինել միայն, չեն հաստատում կամ հիմնավորում հեղինակի առաջ քաշած տեսակետները: Վերոհիշյալ ընդարձակ մեջբերումները մեծ մասամբ ունենում են հակառակ ազդեցություն և ապացուցում ոչ այն, ինչին ձգտում է Գ.Թուրիկյանը:

Թուրիկյանը նախ ցանկանում է համոզել ընթերցողին՝ մոռանալ Կարին անվանումը. զգալով դրա չհիմնավորված լինելը՝ դիմում է բառախաղին, ապա Կարնո քաղաքը տեղադրում է ջերմուկներով հարուստ Իլիճայում՝ թերևս նկատի ունենալով առ այսօր երևացող բերդի ավերակները, այնուհետև հայտնաբերում է Կարինի նախկին անվանումը՝ Թուալուս, և հանդես բերելով կողմնակալություն՝ պնդում, թե Կարին անունով քաղաք չէր կարող գոյություն ունենալ, որովհետև այդպես անվանվել է միայն գավառը: Կամ՝ եթե գոյություն է ունեցել Կարին անունով քաղաք, ապա մեզ նրա մասին ոչ մի տեղեկություն չի հասել և «բնական կամ մարդկային պարտադրանքներով» անհետացել է պատմության էջերից:

Ապա Գ.Թուրիկյանը, իբրև արդարացում, այնուամենայնիվ, նշում է, թե գուցեն գոյություն է ունեցել Կարին անունով քաղաք:

Դիտելի է նաև այն փաստը, որ Թուրիկյանը չի դրսևորում անաչառություն և հենվելով «Կարնո քաղաք» ձևով հանդիպող վկայությունների

[1] *Ինճիճյան Ղ.*, նշված գիրքը, էջ 77-78:

վրա՝ հայտարարում է ու փորձում համոզել, թե գոյություն է ունեցել միայն Կարնո գավառի քաղաք հասկացությունը:

Մերժելով Կարին անունով քաղաքի գոյությունը՝ Գ.Թուրիկյանն առաջարկում է հանելուկ. սկզբում քաղա՞քն է գոյություն ունեցել, թե՞ հետո այն անվանվել է գավառի անունով:

Բարձր Հայքում Կարին անունով քաղաքի մասին են խոսում ստորև բերվող վկայությունները:

«Կարին անունն կոչի ի Կարեն նախարարեն Հայկազանց, որ բնակեցավ առ ափն Եփրատայ»,- գրում է Երեմիա վարդապետը[1]:

Քաղաքն իր անունը ստացել է կամ հայասա-ազգի ցեղային միության թագավոր Կարանիի, կամ Հայկ Նահապետի շառավիղներից՝ Կար նահապետի անունից և հետագայում դառնալով վարչական, տնտեսական ու ռազմական մեծ կարևորություն ունեցող քաղաք՝ նրա անունով կոչվել է նախ նահանգի կենտրոնական գավառը, ապա՝ նրա նահանգը:

Ե.Լալայանը Կարին քաղաքի անվան ծագումը կապում է հնագույն ժամանակներում Հայկական լեռնաշխարհում ապրած կարինաներ ցեղանվան հետ[2]:

Վերը նշված արաբական ավանդության Կարա-կալա կամ Կալա-կալա բնակավայրը, որը քաղաքի հիմնադրման, քաղաքի անվան ծագման տարբերակներից մեկն է, սոսկ հիշատակություն է, որովհետև այն ոչ մի առնչություն չունի Կարին քաղաքի հետ, այլ խոսում է Իլիճա գյուղի մոտ կառուցված բերդի մասին, որի ավերակներն են պահպանվել միայն: Ավելին, Կարա-կալա նշանակում է Սև բերդ: Այդպես է անվանվել Իլիճայի բերդը, որովհետև այն կառուցված էր սև քարից: Ավերակ այդ բերդի մասին կան ուրիշ այլ կարծիքներ[3]:

Ինչպես հայտնի է, Հայաստանի բաժանումից հետո Բարձր Հայքը մտավ Հռոմեական կայսրության կազմի մեջ: Սկսած չորրորդ դարից՝ Կարինը կռվախնձոր դարձավ պարսիկների և հույների միջև: Կայսրության արևելյան սահմանների պաշտպանության հարցերով անհանգստացած Թեոդոս կայսրը, ամուր բերդաքաղաք կառուցելու առաջադրանքով, այդ շրջաններ է ուղարկում Անատոլիոս զորավարին:

«Անատոլ զորավարն արքունական հրաման ստանալով՝ գալիս է մեր երկիրը և շատ կողմեր շրջելով,- գրում է Մովսես Խորենացին,- հավանում է Կարին գավառին՝ այնտեղ շինելու արգավանդ, առատաջուր և բա-

[1] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 283:

[2] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, նո. 3, էջ 95:

[3] *Հակոբյան Հովհ.,* Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934, էջ 493:

բեբեր քաղաքը, համարելով, որ այն տեղը միջին դիրք ունի, ոչ շատ հեռու այն տեղերից, որտեղից բխում են Եփրատի մի քանի աղբյուրները և հանդարտ հոսանքով առաջ գնալով ծովանում են, ճահճի տեսք ստանում»[1]:

Կատարելով կայսեր հրամանը՝ զորավարը կառուցում է բերդաքաղաքը և նրան տալիս կայսեր անունը: Քաղաքն այդուհետ պատմության մեջ հիշատակվում է Թեոդոսուպոլիս անունով:

«Հայսմավուրքում» քաղաքի վերաշինության մասին կա մի կարևոր ավանդություն: Այն կապված է Սահակ Պարթև կաթողիկոսի՝ Թեոդոս կայսրին գրած նամակի հետ: Նամակով կաթողիկոսը կայսրից թույլտվություն է խնդրում բյուզանդահպատակ հայերի մեջ հայոց գիրը տարածելու համար: «Հայսմավուրքի» այս վկայությունը հաստատվում է Գ.Սրվանձտյանցի հրատարակած «Յաղագս սրբոյ Վարդապետացն Հայոց Մովսես և Դավիթ» երկով, որը պահպանվել է Էջմիածնի կաթողիկոսության դիվանում, ապա հրատարակվել է «Արարատ» ամսագրում՝ «Սրբոյ Վարդապետացն Հայոց Մովսես եւ Դավիթ հարցմունք ըստ երկայնակացն» վերնագրով:

Նկատի ունենալով սույն վկայության բացառիկ արժեքն ինչպես քաղաքի շինության, այնպես էլ հայ ժողովրդի պատմության նշված ժամանակահատվածի համար՝ նպատակահարմար ենք գտնում այն ամբողջությամբ մեջբերել:

Կայսրը, հարգելով կաթողիկոսի խնդրանքը, թույլատրում է իր կայսրության մեջ ապրող հայերի մեջ հայոց գրի տարածումը, պայմանով, որ հայերը մի ամուր բերդաքաղաք կառուցեն կայսրության արևելյան սահմաններում: Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոցը «ընտրեցին աշակերտաւ քառասուն մտաւորս եւ սրագլուխս եւ լեզուս հրեղենս ներկեալ ի Հոգւոյն սրբոյն, եւ ուսուցին զնոսա զշնորհ եւ ելեն արք երեւելիք եւ կատարեալի շնորհօք Հոգւոյն սրբոյ: Եւ յետ աւուրց բազմաց առաքնային արս հինգ Սահակ և Մեսրոպ առ թագավորն Թէոդոս, զի թարգմանեսցի գրեանս: Դաւիթ անյաղթ փիլիսոփայն եւ Մովսես քերթողահայրն, իմաստասերն Մամբրե եւ հռետորն Աբրահամ եւ ոսոցին հմանակիցն Պողոս առաքեցան ի կայսերական պալատն: Եւ թագաւորն Թէոդոս յոյժ ուրախ եղեւ եւ փառավորութեամբ ընկալաւ զնոսա: Եւ զԴավիթ եւ զՄովսես դատաւորս կացոյց ի տուն հայրապետանոցին. Եւ ի թարգմանութենէ ոչ դադարէին: Եւ կամեցան հրամանաւ թագաւորին երթալ ի փիլիսոփայական քաղաքն յԱթենք, իսկ թագաւորն խորհուրդ ի

[1] *Խորենացի Մ.,* Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 302:

մեջ առեալ կամեցաւ շինել քաղաք բ. եւ զնոսա կացուցեալ վերակացուց շինուախոյ քաղաքին. Զի տեսաներ յոյ է իմաստունս եւ հանճարեղս. եւ առաքեալ զնոսա ի Հայք շինել զԿարնոյ քաղաք եւ յիւրոց պաշտոնէից ի կողմն Հայոց Աշխարհին յԱմիթ, զոր էր շինեալ հորն Աբգարու թագաւորին Հայոց: Իսկ Դաւիթ եւ Մովսես որպես զորս քաջս անդադար սկիզբն արարին շինել քաղաքն Կարնոյ: Եւ հրաման թագաւորին սպառնայր եւ իրար տայր նոցա, զօրանայր, եւ կանգնեցան բուրքն խոսրովայէն եւ անահ ի մեքենայից. եւ պարիսպս ի վերայ միոյ հիման քերեալ եւ պեղեալ զհող երից պարսպից, զոհ ի միջին եւեդ կայր պեղեալ հրամայեցին մինչեւ ի պորտս քաղաքին. եւ վեմս անտաշը և խորագոյնս կրով զերեսս անդնդոց փակեցին, եւ ի վերայ միոյ հիման կանգնեցին երիս պարիսպ ի ներքոյ կողմն քաղաքին աստիճանս երկերիւս մի առիմով յետս յետս, զի մի գայթակղեսցի պարիսպն ի փորոոցն: Նույնպես եւ ի դրաց կուսե պարսպին աստիճանս երկերիւս մի առ միով յետս յետս դի անահ լիցի ի փորոոցաց թշնամեաց քաղաքին, եւ այլ հնարս հնարեցան, զի թե գուցե զայցեն թշնամիք եւ էլ ոչ տուն առնել, արարին հնարս փարել եւ ներքոյ գետնոյ խորագոյն եւ գնացեալ ի մեջ դաշտին ճաշոյ մի գնաց ճանապարհ ի տեղին, ուր ժողովջրոցն է եւ շամբ յոյժ, զի եթե նեղեսցեն զքաղաքն կարող են բերել անասնոց խոտ եւ[1] *այլելոց* եղեգն. եւ թշնամիքն զայս ոչ կարասցեն իմանալ: Եւ ի մի կողմն քաղաքին նույնպես գետնափոր, փակած մեծամեծ վիմօք մինչն ի լեառն, որ կոչի Այծու պտկունք, եթե կարիք հասանիցեն հեծելոց, կարող են բերել ձիս եւ հեծելոք մտանիլ և քաղաքն առանց գիտելոց թշնամեանց: Եւ վասն լրոցն կարի գեղեցիկ եւ վայելուչ, զի ոչ ոք է ի քաղաքին հարուստ եւ ոչ աղքատ, որ ոչ ունի ջուրս անոյշս բերեալ զերսօք անդընդոց, ապրինք եւ աշտարակք գեղեցկաշենս եւ սրբագործ փողոցք հրապուրք, սպանդանոցքս եւ վաճառանոցք, սրբատեսիլ եկեղեցիք հրաշալիք տեսողացն, եւ դրոնք քաղաքին բարձրասեմս եւ լայնանիստս եւ կատարեալ պարսպավ վայելուչս, եւ բուրք ամենայն *խոսրովայինք:* Եւ պարապեալ յամենացն գործոց քաղաքին, խաղացին, գնացին յաշխարհ Յունաց առ թագաւորն Թեոդոս, եւ լուեալ վասն քաղաքին, առաւել քան զառաջինն մեծարեր զնոսա. եւ հրամանաւ արքունի առաքեաց զնոսա յԱթենս. եւ մեծաշքեղութեամբ գնացին ի փիլիսոփայական քաղաքն Դաւիթն եւ Մովսես եւ այլ ընկերքն...»[2]: Ինչպես տեսնում ենք, ընդարձակ հղումը ևս հաստատում է Կարին քաղաքի գոյության

[1] «Արարատ», 1879, մարտ, էջ 180-189:
[2] Նույն տեղում:

մասին: Ուսումնասիրողների տարակարծության ակունքը «Կարնո քաղաք» արտահայտությունն է, որը հիշատակվում է նաև այս երկի մեջ՝ «շինել Կարնո քաղաք»:

Հարցն այն է, որ քաղաքի անունով կոչվել է գավառը, և հնագույն վկայությունները, այդ թվում նաև Մովսես Խորենացին, ոչ թե տալիս են քաղաքի անունը, այլ գավառի, այն պարզ պատճառով, որ գավառն արդեն կրել էր իր գլխավոր քաղաքի անունը, և կարծես ավելորդ կինչեր Կարնո գավառի Կարին քաղաք արտահայտությունը, որովհետև չէր զգացվում այդպիսի արտահայտության անհրաժեշտությունը:

Վերոհիշյալ երկու հիշատակություններում նշվում է, որ քաղաքի բերդից գետնափոր ճանապարհ է պատրաստվում դեպի այն տեղը, «ուր ժողով ջրոցն է եւ շամբ յայժ»: Շամբը Կարինի դաշտում Սև ջուր գետի և նրա երկու վտակների հատման կետում գոյացած լիճն է (շամբ - եղեգնուտ, լիճ): Սև ջուր գետը սկիզբ է առնում Խաչափայտի լեռներից:

Այստեղից էլ, չէր կարող քաղաքը կառուցվել Իլիճայում կամ Թուալիսում (ջերմուկների տեղում) և գետնափոր ճանապարհ բացվել դեպի շամբ: Դա նաև աննպատակահարմար կլիներ և անիմաստ, որովհետև թողած մոտակայքի ջրերը, ի՞նչ նպատակ ուներ գետնուղի կառուցել դեպի ավելի հեռվում գտնվող լիճը: Ուրեմն, Կարինի բերդը կառուցելիս շինարարները նկատի են ունեցել տեղանքը, և որպեսզի պաշարումների ժամանակ բերդն ապահովված լիներ ջրով, այն կառուցվել է (շամբի) լճի մոտ և գետնուղի անցկացվել:

Դիտելի է նաև այն վկայությունը, որտեղ հիշատակվում է «Այծու պտկունք» լեռը, դեպի ուր կառուցվում է երկրորդ գետնուղին: Այծու պտկունք լեռը նույն Փալան թոքեն լեռն է: Այն ստացել է Փալան թոքեն անունն այն պատճառով, որ անանցանելի էր թե՛ մարդկանց և թե՛ բեռնավորված ջորիների ու ավանակների համար, և նրանք, չկարողանալով հաղթահարել լեռան սեպաձև ապառաժները, գցում էին իրենց վրայի բեռը, կամ էլ իրենք ևս բեռան հետ գլորվում էին անդունդը: Փալան թոքեն նշանակում է բեռը թափող, գցող:

Այծու պտկունք անունը ևս ունի նույն ծագումը, այսինքն՝ լեռը պատված է այծի պտուկների նման քարերով:

Բերդաքաղաքի շինարարները, նկատի ունենալով լեռան անհաղթահարելիությունը, երկրորդ գետնուղին կառուցում են դեպի լեռը, համոզված լինելով, որ թշնամին չի կասկածի այդ ուղու գոյության մասին, որովհետև լեռն անանցանելի էր, և բերդի պաշտպաններն այդ ճանա-

պարհով կարող էին ստանալ թե՛ զենք, թե՛ սնունդ. «Կարող են բերել ձիս եւ հեծելոք մատնիլ ի քաղաքն առանց գիտելոց թշնամեացն»:

Այսպիսով, կասկածել Կարին քաղաքի (մինչև վերաշինությունը) գոյության մասին՝ անհիմն է, զուրկ համոզիչ կռվաններից:

Հարցի լուծման համար դիմենք նաև լեզվաբանությանը: Հայտնի է, որ Կարնոյ հոլովաձևը գրաբարյան սեռական հոլովն է: Այսինքն՝ ին վերջածանցով բառերը ենթարկվում են գրաբարյան *ո* պարզ արտաքին հոլովաձևին: Եթե Կարնոյ հոլովաձևը վերածենք աշխարհաբարի սեռական հոլովի, կստանանք Կարինի անվանումը: Այստեղից էլ. «Կարնոյ գավառ» արտահայտությունը, եթե ընդունենք թեկուզ ուղիղ ձևով, կստանանք Կարինի գավառ արտահայտությունը և ոչ թե Կարին գավառ: Ուրեմն «Կարնոյ գավառ» հասկացությունը բոլորովին էլ չի նշանակում, թե այն միայն գավառի անվանումն է, այլ հակառակը, նշանակում է Կարին քաղաքի գավառ, իր վարչատնտեսական խոշոր կենտրոնի՝ Կարին քաղաքի անունով:

Հայսմավուրքի վկայության (պարսից սահմանի վրա «հայոց ու հռոմների մեծ ամրություն» կառուցելու մասին) առթիվ Մովսես Խորենացին գրում է. «Մի գեղեցկադիր լեռան ստորոտում գտավ (Անատոլիոս զորավարը– Հ.Զ.) մի տեղ, որտեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ (իսկ Իլիճանի կամ Թուալիսի դիրքը տափարակ է, և աղբյուրներն էլ բխում են ոչ թե լեռից, այլ ժայթքում են հարթ դաշտավայրերում– Հ.Զ.) մաքուր ջրերով, և այդտեղ գծեց քաղաքի տեղը: Նրան շրջապատեց խոր փոսով, շատ խորը դրեց պատվարի հիմքը, նրա վրա ահագին բարձր աշտարակներ շինեց, որոնցից առաջինը կոչվեց Թեոդոս՝ Թեոդոսի պատվին: Սրանից այն կողմ շինեց ժայռաձև աշտարակներ, նավերի ցռուկների նման և անցքեր՝ ներս ընկած խորշերով, որոնք դեպի լեռն են դարձած: Այսպես շինեց նա դեպի հյուսիսային դաշտը (նայող կողմում): Իսկ արևելք ու արևմուտք (դարձած կողմերում) կանգնեցրեց բոլորակաձև աշտարակներ: Իսկ քաղաքի մեջ մի բարձրավանդակի վրա շինեց բազմաթիվ մթերանոցներ և կոչեց Օգոստիոն, Օգոստոսի պատվին: Եվ շատ տեղերից անհայտ ուղիներով ուրիշ ջրեր բերեց մտցրեց քաղաքը: Քաղաքը լցրեց զենքով ու պահապան գնդերով և կոչեց Թեոդուպոլիս, որպեսզի քաղաքի անունը հիշելով անմահ մնա (թագավորի) անունը»[1]:

Բյուզանդական պատմիչներից Կարինի վերակառուցման մասին մանրամասն խոսում է Պրոկոպիոս Կեսարացին: Քաղաքի ռազմական

[1] *Խորենացի Մ.,* Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 302:

բացառիկ դիրքի պատճառով Անաստասիոս կայսրը, ապա Հուստինիանոսը վերակառուցում են և ամրացնում քաղաքը՝ այն դարձնելով անառիկ. «Նախ և առաջ նրա շուրջը շատ խոր խրամ գցեց: Դրանից հետո նշված բարձունքը (որի վրա կառուցվել է քաղաքի բերդը–Հ.Զ.) հարթեց և վերածեց անանցանելի և անելանելի փափարների,- գրում է Պրոկոպիոս Կեսարացին, ապա ավելացնում,- պարսպի ատամնաշարը նա սեղմեց իրար, ատամների միջև թողնելով այնքան տարի միայն, որ բավական լիներ այնտեղից հարվածել պաշարողներին...

Այնուհետև (պարիսպը շրջապատեց նախապարսպով, որի յուրաքանչյուր աշտարակը մի-մի բերդ էր) նա այնտեղ հաստատեց բոլոր զինված ուժերը և Հայքի զորավարին ու այնպես արեց, որ հայերը լինեն ավելի հզոր ու այլևս չսարսափեն պարսկական հարձակումներից»[1]:

Պրոկոպիոս Կեսարացու և Մովսես Խորենացու նկարագրությունները համարյա նույնանում են, և շահեկանն այստեղ այն է, որ թե՛ քաղաքի և թե՛ բերդի ու նրա պարիսպների, աշտարակների մասին հետագա շրջանի թե՛ հայ, թե՛ օտարազգի ճանապարհորդները ևս նույնն են հաստատում:

Ասել է թե՝ եթե քաղաքը, բերդը կառուցված լինեին Իլիճանում, ապա պատմիչներն անպայման կհիշատակեին այդ փաստը: Ավելին, 19-րդ դարում քաղաք այցելած օտարազգի ճանապարհորդները, մանրամասն նկարագրելով Կարինի և բերդի դիրքը, պարիսպները, հաստատում են պատմիչների վկայությունները և Իլիճային անդրադառնում միայն ջերմուկների բուժիչ հատկությունների մասին խոսելիս:

Բերդաքաղաքի կառուցումից հետո ավելի սրվեցին Բյուզանդիայի ու Պարսկաստանի հարաբերությունները: Օգտվելով բարենպաստ առիթից՝ պարսից Կավատ թագավորը 502թ. նենգությամբ ու խաբեությամբ տիրացավ քաղաքին: Սակայն մեկ տարի անց հույներին հաջողվեց վերագրավել Կարինը:

Արևելյան նահանգներին սպառնացող մշտական վտանգը հաշվի առնելով, ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերտցին, Բարսեղ 2-րդ կայսրը (976-1025) 1019թ. իր զորավարներից մեկին հանձնարարում է վերակառուցել բերդաքաղաքը, որը ձեռքից ձեռք անցնելով գրեթե ավերվել էր:

1048-1049թթ. Տուղրիլի արշավանքների ժամանակ հիմնահատակ կործանվեց Կարինից ոչ հեռու գտնվող Արծն քաղաքը: Հիմնականում

[1] *Կեսարացի Պ.,* թարգմ. Հ.Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 196-197:

հույն բնակչությամբ քաղաքի բնակիչների մեծ մասը բնակություն հաստատեց Կարինում:

11-րդ դարից պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է Կարինի նոր անունը՝ Արծն Էրզրում, այնուհետև՝ Արզրում և վերջապես Էրզրում:

1242թ. Էրզրումը գրավում են թաթարները, 1387թ.՝ Լենկթեմուրը, 15-րդ դարում՝ Մուհամեդ Երկրորդ սուլթանը (1451-1481): Ինչպես 1555թ., այնպես էլ 1639թ. թուրք-պարսկական պայմանագրերով քաղաքն ընկնում է Թուրքիայի տիրապետության տակ:

1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, 1829թ. հունիսի 27-ին, ռուսական զորքերը գրավեցին Կարինը, բայց Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով վերադարձրին Թուրքիային:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, 1878թ. փետրվարի 8-ին, ռուսական զորքերը երկրորդ անգամ գրավեցին Կարինը: Յոթ ամիս քաղաքը կառավարում էր հայազգի գեներալ Լազարևը: Ոգևորությունն այնքան մեծ էր, որ Գրիգոր քահանա Արծնյանը 1878թ. հունիսի 14-ին «Առ վսեմափայլ զօրապետ Յ. Լազարով հրամանատար բանակին Ռուսիո ի շնորհաբեր գալստյան ի Բարձր Հայս Կարնո խոնարհ ակնածությամբ» վերնագրով մի «ուղերձ» էր ձոնել: Դժբախտաբար, այս անգամ էլ խայտացող «հայկյան տունը» խամրեց և քաղաքը նորից մնաց թուրքական բռնատիրության տիրապետության տակ[1]:

Կարին-Էրզրումի 17-րդ դարի պատմության մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կարինի Ս.Աստվածածին վանքի միաբան Հակոբ Կարնեցին[2]:

Քաղաքի և Բարձր Հայքի մասին տեղեկություններ կան եվրոպացի ճանապարհորդներ Պիեռ Ժոբերի, Ջեյմս Մորիերի, Ուիլյամ Աուզլեյի հուշագրություններում (1808-1819), որոնք Հովհ.Հակոբյանը տեղադրել է իր «Ուղեգրություններ» գրքում[3]:

Կարինը շրջապատված էր լեռներով: Հարավում Բյուրակնյա լեռներն են՝ նշանավոր Գոհանամք գագաթով: Լեռան անվանման մասին ավանդությունը հաղորդում է, թե ջրհեղեղի ժամանակ, երբ Նոյ նահապետի տապանը կպչում է այս լեռանը, նահապետը երկրպագում է Աստծուն և գոհանում, որ ջրերն աստիճանաբար իջնում են:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 42, գ. 1, գ. 45, թ. 1:
[2] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903:
[3] *Հակոբյան Հովհ.,* Ուղեգրություններ, հ. Զ, Ե., 1934:

Հյուսիսից Կարինը շրջափակվում էր Խաչափայտի լեռներով: Այս լեռան անունը նույնպես կապվում է ավանդության հետ: Բյուզանդական Հերակլ կայսրը, պարսիկներից ազատելով Քրիստոսի խաչափայտի մասունքները, որպեսզի նրանք նորից չընկնեն պարսիկների ձեռքը, թաքցնում է լեռան ստորոտում փորված փոսի մեջ: Վերադառնալով արշավանքից՝ կայսրը, սակայն, չի կարողանում գտնել մասունքները, որովհետև փորված փոսի հետևից բխում էր պարզ ու սառնորակ աղբյուր: Աղբյուրի ջրերից հետագայում գոյանում է լիճ: Լիճը շուտով դառնում է սրբատեղի, ուր առավել շուքով էին կատարվում Վարդավառի տոնակատարությունները: Խաչափայտի հետ կապված ավանդությունից էլ ծագել է լեռան անվանումը:

Կարին քաղաքն արևելքից շրջապատում են Դեւերոյն՝ Ծիրանյաց, Ուղտի պարանոց լեռները: Կարինը շրջապատող մյուս լեռը՝ Այծու պտկունք (Փալան թոքեն) լեռն է, որն իր անունն ստացել է անանցանելի, սուր քարերով պատված լինելու պատճառով:

Կարինի հարավային և հարավարևմտյան սահմանագիծն են կազմում Ձիու թամբ կոչվող լեռները, որոնք այդ ուղղությամբ յուրահատուկ պաշտպանական գիծ են կազմում:

Կարինի հյուսիսարևմտյան կողմում է գտնվում հռչակավոր Կարինի դաշտը: Գեղեցիկ, բարեբեր, տափարակ մի հարթություն, որի սահմանագիծը կազմում են Դումլուի լեռները:

Քաղաքը շրջապատված էր պարիսպներով, որոնք ունեին չորս դռներ, արևմտյան՝ Երզնկայի, արևելյան՝ Թավրիզի, հյուսիսային՝ Օլթիի, հարավարևմտյան՝ Խարբերդի:

Այս չորս դռների մոտ էլ նստում էին հարկահավաքներ, որոնք գանձում էին հողը կոխելու և ծխախոտը թաքցնելու տուրքը:

Կարինի միջնաբերդը կառուցվել է 421-430թթ. Անատոլիոս զորավարի կողմից: Այն ունի 12 աշտարակ: Միջնաբերդի պարիսպներից դուրս նահատակի մատուռն է:

Քաղաքի հիշատակության արժանի հուշարձաններից է Ձիֆթե մինարեն: Այն ունի զույգ աշտարակ, 40 սենյակ: Մինարեի դիմացի զարդանախշերով շինության դուռը 1829թ. Պասկևիչի հրամանով տեղափոխվել է Պետերբուրգ:

Քաղաքի արևմտյան մասում գտնվում է Ազգային պարտեզը (Միլլեթ բախչասին), որը 1876թ. վերանվանվել է Սահմանադրության այգի: 1896թ. նորոգված, բարեկարգված պարտեզի ծառերը, արյունարբու Շաքի

փաշայի խոսքերով. «...պիտի սնեն հայ նահատակների արիւնով և բուսած ծառերը թող դառնան վկայ այդ ոճիրների զոջման»[1]:

Կարինի հայկական հուշարձանների զարդը Ս.Սարգիս եկեղեցին է իր քանդակազարդ արտաքինով և ներսի խոյաքանդակներով: Բարձր Հայքի հայության համար գլխավոր սրբավայր է հանդիսացել Ս.Աստվածածնի եկեղեցին, որ կոչվել է նաև Միաբան Ս.Աստվածածին անունով: Անվան ծագման պատճառը եկեղեցում 629թ. գումարված եկեղեցական ժողովի որոշումն է, որն ընդունել է Աստվածածնի միաբանության մասին տեսակետը:

Կարինի շրջակայքում, 10-25 կմ հեռավորության վրա, գտնվում են երեք վանքեր՝ Ս.Լուսավորչի, Կարմիր և Խաչկավանքը կամ Հուշավանքը: Հուշավանքի կամ Խաչկավանքի կառուցման առթիվ կա մի ավանդություն: Այն նույնպես կապված է Հերակլ կայսեր հետ: Նահանջելով պարսիկների դեմ մղած անհավասար ճակատամարտից՝ բյուզանդական բանակն ընկնում է պարենային ծանր կացության մեջ: Մի ունևոր հայ կին կերակրում է կայսեր զորքին, և վերջինս, ի նշան շնորհակալության, նրան նվիրում է Քրիստոսի խաչի մասունքներից մեկը: Այդ վայրում էլ, որտեղ ստացվել է նվերը, հայ կնոջ միջոցներով կառուցվել է Խաչկավանքը:

Կարինի գավառի Հինձք գյուղում է գտնվում Կարմիր վանքը: Այն կրել է Ս.Աստվածածին անունը: Ավանդության համաձայն, վանքը կառուցվել է Սուրբ Ներսեսի հրամանով: Կարմիր վանքն ունի նաև հարուստ պատմական անցյալ: Կարմիր վանքի դպրոցում են սովորել Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Արիստակես Լաստիվերտցին:

Վանքն առավել բազմամարդ էր լինում Աստվածածնի ուխտին: Այդ օրը կազմակերպվում էին զվարճալի խաղեր, պարեր, երգի մրցումներ: Կարմիր վանքից արևելք գտնվում է Հռիփսիմյան կույսերի հովիտը: Հալածվելով Դիոկղետանիոս կայսրի (284-305թթ.) կողմից՝ կույսերն ապաստանում են քարայրներով հարուստ այդ հովտում:

Ս.Լուսավորչի վանքն ուներ երեք եկեղեցի-մատուռ: Մեծ մատուռը կոչվում էր Գրիգոր Լուսավորչի, երկրորդը՝ Սուրբ Սարգսի անունով, երրորդը, որ նման էր Խոր վիրապին, եղել է ուխտատեղի:

Արաբ պատմիչ Իբն ալ Ֆակինը Կարինի եկեղեցիներից մեկի մասին հաղորդում է մի ավանդապատում:

[1] *Ա-Դո,* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 191, էջ 165:

Քաղաքի եկեղեցիներից մեկում կա մի տուն, հայտնում է պատմիչը, որտեղ, երբ «ծաղկազարդի գիշերն է լինում, մի տեղից սպիտակ փոշի է դուրս գալիս, մինչև առավոտ: Առավոտյան այդ տեղը փակվում է մինչև հաջորդ տարվա նույն ժամանակը: Կրոնավորները այն վերցնում են և բաշխում ժողովրդին: Դա հատուկ դեղաթափ է, թույների, կարիճների և օձերի խայթվածքի դեմ: Նրանից մի ղունգ (0,56 գրամ – ծան.՝ թարգմանչի) ջրի հետ տալիս են խայթվածին խմելու և անմիջապես հանգստանում է: Մի ուրիշ հրաշք էլ այն է, որ թե այդ փոշին ծախվեց կամ փոխարենը որևէ նյութական արժեք վերցվեց, ապա խմողը չի օգտվի և իր ցավից չի բուժվի»[1]:

1505-1825թթ. Կարինի նահանգն ունեցել է 250 կուսակալ, Հ.Կարնեցին Կարինն անվանում է «նստող փաշայի պերուածք», այսինքն՝ կառավարությունը կուսակալին չէր վճարում աշխատավարձ, և այդ «բացը» լրացնելու համար նա ազատ էր իր գործողությունների մեջ և ձգտում էր այն գումարից ավելի հավաքել, կուտակել, որը վճարել էր պետական գանձարանին և որպես կաշառք տվել կառավարական բարձրաստիճան պաշտոնյաներին՝ նահանգապետի իրավունքներ ստանալու համար:

Դեռևս 19-րդ դարում, փաշաների անօրինական գործողությունները, հարստահարությունները Հ.Կարնեցին նկարագրում է այսպես. «Եւ թե քանի որ լաւ և խաղաղասեր փաշա լինի, մեկ կամ երկու կամ երեք տարի մնա, այլ հնար չկայ, թագաւորն կամ վեզիրն մանգալ կանեն և ուրիշ փաշայի կուտան քաղաքն, ապա թե չար և ժանտ լինի փաշան, և անողորմ կողոպտի զերկիր և իր աւան ոչ տա առնել, զոր հինգ հայ որ գնան գանգատ ի Ստամպոլ, վաղվաղակի զգլուխն կկտրե իւրն և խորհրդակցին իւրոյ ծառայի արդարն ընդ ամբարշտին, որ ահաբեկեալ լինին զօրքն և պարոնայքն ամենայն, և տայ զփաշայութիւնն յետին ծառային իւրոյ թագաւորին, և ամենեքեան հնազանդին նմա, զի չունի սահման, որ օձախ ունենա կամ իշխանութիւն որդոց-որդո տալ, այլ ում որ իւրն առաջ է շնորհս գրեալ և սպասաւորեալ եթե վրացու զաւակ է թե Հռոմի կամ Հայի կամ Առնաուտի, նմա տայ զփաշայութիւնն»[2]:

Կարինի բնակչության թվի մասին կան հակասական տեղեկություններ: Այսպես, օրինակ, որոշ աղբյուրներ հաղորդում են, թե 1830թ. քաղաքն ունեցել է 15.000, 1869թ.՝ 90.000, 1874թ.՝ 55.000, 1869թ.՝ 40.192 բնակչություն[3]:

[1] «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, նո. 3, էջ 68-69, տե՛ս նաև՝ *Ա.Ն. Տեր-Ղևոնդյանի* հոդվածը:

2 *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 26-27:

[3] *Քոսյան Հ.,* Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 47-48:

Բ.Ֆերուհխանը 1847թ. իր ճանապարհորդության ընթացքում քաղաքի բնակչությունը հաշվում է 64.500, այդ թվում՝ 6950 հայ լուսավորչական, 600 կաթոլիկ, 150 բողոքական, ընդամենը 7700 հայ[1]:

Վ.Քինեն նշում է, որ քաղաքն ուներ 38.966 բնակչություն, որից հայեր՝ 10.435[2]:

Մեկ այլ աղբյուրի հաղորդման համաձայն, 1853-1856թթ. քաղաքն ունեցել է 60.000 բնակչություն, այդ թվում՝ 10.900 հայ[3]:

Հայերը բնակվում էին քաղաքի հյուսիսային և հյուսիսարևմտյան թաղամասերում, որոնք քաղաքի ամենաբարեկարգ ու մաքուր մասերն էին, ուր տեղավորված էին ինչպես վարչական շենքերը, այնպես էլ անգլիական, ֆրանսիական, ռուսական հյուպատոսարանները:

Քաղաքում հոսում էին 500 աղբյուրներ, առևտուր էին անում 3000 խանութներ ու կրպակներ, որոնց կեսը պատկանում էր հայերին: Քաղաքում գործում էին 500 միայն հայ վաճառականներ: Կարինի բնակելի շենքերը, առավելապես հայկական թաղամասերում, երկհարկանի էին, պարտեզով, օժանդակ հարմարություններով, արտաքին գեղեցիկ տեսքով: Քաղաքում և նրա շրջակայքում աշխատում էին մեծ մասամբ հայերին պատկանող 50-60 ջրաղացներ, 40-45 ոսկերչական խանութներ:

Քաղաքում կազմակերպվել են մի քանի համքարություններ (էսնաֆություններ):

Կարինին առանձնակի աշխուժություն էին հաղորդում արհեստավորները: Քաղաքում գործում էին 1000 հայ արհեստավորներ: Նրանցից աչքի ընկնող դիրքերում էին ոսկերիչները, որոնք իրենց պատրաստած իրերի վաճառքի համար բացել էին 40-45 խանութներ: «Ահա ազնվական արհեստ մըն ալ որ կգտնվի Էրզրումի Հայոց ձեռքը»,- գրում էր «Բյուզանդիոն»-ի թղթակիցը: Հայ ոսկերիչներն այնքան հմուտ էին, որ արծաթն ու ոսկին վերածում էին «մազի բարակությամբ թելի»: Նրանց պատրաստած զարդերը, գոտիները փնտրվում էին ոչ միայն նահանգում, այլև Կ.Պոլսում: Մայրաքաղաքում հատկապես ընդունելի էին կարինցի վարպետների պատրաստած ոսկյա և արծաթյա կոճակները, ծխախոտատուփերը:

Կարինցի կոշկագործները նույնպես համբավավորներ էին: Բայց որովհետև նրանք հնարավորություն չունեին ներդնել դազգահներ ու հաստոցներ թե՛ կաշին մշակելու, թե՛ կոշիկ, հողաթափեր և այլն պատրաստելու գործում, ուստի զիջում էին եվրոպացի վարպետներին:

[1] *Հակոբյան Հ.,* Ուղեգրություններ, հ. Զ, Ե., 1934, էջ 294:
[2] Նույն տեղում, էջ 295:
[3] Նույն տեղում:

Քաղաքում տարածված արհեստներից էր նաև դերձակությունը: Բացի կտորից հագուստ պատրաստելուց, դերձակները, որոնց մեծ մասն արհեստավարժ կանայք էին, բարակ ու նուրբ թելերով կերպասներ էին գործում: «Այս ապրանքին պարզը, ծաղկունը, շերտավորն այնպիսի ճարտարությամբ կգործեն էրզրումցի կիներ և աղջիկներ որ մեքենական ճարտարություններ պիտի նախանձին՝ ձեռքով այնքան մաքուր հանված ապրանքին վրա»[1]:

Կարնեցի վարպետները գործում էին նաև բրդյա հագուստներ, գուլպաներ՝ նուրբ ու գույնզգույն երանգներ տալով դրանց:

Կարինը ոչ միայն ռազմական, այլև առևտրական խոշոր կենտրոն էր: Այն գտնվում էր Պարսկաստանից Սև ծով, Անդրկովկասից Կ.Պոլիս և այլ առևտրական ուղիների հանգուցակետում: Քաղաքում գործում էին մի քանի իջևանատներ, հանգստարաններ, առևտրական տներ: Իջևանատներից ամենաբարեկարգը «Պողոս» անունով հայկական իջևանատունն էր: Գերմանացի ճանապարհորդ Էդ.Նաումանը այդ իջևանատան մասին գրում է, որ այն «մի կուլիսաձև, եռահարկ շենք է՝ կառուցված հին և մեծ մզկիթի մոտ եղած հրապարակի վրա»[2]:

Կարինի եռուն առևտրական ուղիներից էր Տրապիզոն-Ջուղա ճանապարհը: Կարինով էին անցնում դեպի Ամիդ (Դիարբեքիր), Վան, Սեբաստիա (Սվազ), Հալեպ, Դամասկոս, Կ.Պոլիս, Զեյթուն, Կարս, Բաթում, Տրապիզոն, Թիֆլիս, Երևան առևտրական ճանապարհները: Էդ.Նաումանի վկայությամբ, տարեկան Կարին էին մտնում և դուրս գալիս 40 միլիոն մարկ արժեքի զանազան ապրանքներ[3]:

Քաղաքի առևտրական խոշոր կենտրոն լինելու փաստը հաշվի առնելով՝ դեռևս 18-րդ դարի վերջերին այստեղ հիմնվում է անգլիական վաճառականների առևտրական տունը, որը սերտ հարաբերությունների մեջ էր ոչ միայն Կարինի հայ վաճառականների, այլև, հետագայում, Մանչեսթրի հայ առևտրական ընկերության հետ:

Նահանգի առևտրական ընկերություններից ամենաեկամտաբերը ոչխարի առևտուրն էր:

«Ոչխարի վաճառականությունն այնչափ նշանավոր էր, որ տարեկան հասնում է 1.200.000 տաճկական ոսկու (մոտ 20 մլն մարկ), և այդ գումարի մեծ մասը մտնում է Էրզրումի հայերի ձեռքը»[4],- գրում է Էդ.Նաումանը:

[1] *Նաուման Էդ.,* Էրզրում, Թիֆլիս, 1896, էջ 6:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 23:
[4] Նույն տեղում, էջ 30:

Կարինի վաճառականներն արտահանում էին գլխավորապես երկրագործական և արհեստագործական նյութեր, ներմուծում, մեծ մասամբ, թեթև արդյունաբերական և լայն սպառման (երկուսը միասին 30 մլն դահեկան կամ 687.500 ֆրանկ արժողության) ապրանքներ[1]:

Եվրոպացի և հայ ճանապարհորդներն ու հետախույզները, պատմագիրները, պատմաբանները, նկարագրելով Կարին քաղաքի դիրքը, բնական պայմանները, ժողովրդի զբաղմունքն ու վիճակը, նշում են, որ քաղաքն ասիական տիպի բնակավայր էր, ծուռումուռ, անսալահատակ փողոցներով, որոնք մեծ մասամբ գտնվում էին անբարեկարգ վիճակում:

Այդ պատճառով էլ, նշում է Ե.Լալայանցը, «ամռանը սաստիկ փոշի, իսկ ձմռանը անանցանելի ցեխ է լինում: Տները ցած և անկանոն էին, սովորաբար մի հարկանի, փոքր դռներով և պատուհաններով, միայն քրիստոնյաների թաղում կային երկհարկանի տներ»[2]:

Կարին քաղաքի հիշատակության արժանի հուշարձաններից է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զոհված ռուս զինվորների հիշատակին կառուցված կոթողը, որը բացվել է 1878թ. հոկտեմբերի 13-ին:

Բարձր Հայքն ընդհանրապես և Կարին քաղաքը՝ մասնավորապես հայտնի են խիստ կլիմայով: Կարինում դեկտեմբեր-հունվար ամիսներին 35-40 աստիճան ցուրտ է լինում. «Ով որ ցուրտ կուզե, թող երթա Կարին»,- ասում է հռոմեական ավանդություններից մեկը[3]:

Բացի ցրտից, նահանգը նաև ձյունառատ է: Երբեմն այնքան ձյուն է տեղում, որ փակվում են հաղորդակցության ճանապարհները, ծածկվում տները: Հատկապես ձյունառատ է եղել 1843թ. ձմեռը, երբ թե՛ բնակիչներից «բազումք» և թե՛ ճանապարհորդներից ու առևտրականներից շատերը մահացել են ցրտից, մնացել ձյան հաստ շերտի տակ: Միայն ապրիլ ամսվա վերջերին է ձյունը սկսում հալվել, և մայիս ամսվա երկրորդ կեսին կարնեցի երկրագործները լծվում են իրենց աշխատանքին:

Կարինի նահանգին և քաղաքին զգալի վնաս են պատճառել երկրաշարժերը: Առանձնապես աղետաբեր են եղել 1809, 1843 և 1859թթ. երկրաշարժերը, որոնք պատճառել են զգալի թվով մարդկային զոհեր, հասցրել նյութական մեծ վնաս:

[1] *Էփրիկյան Հ.,* Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1900, էջ 304-305:
[2] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, նո. 3, էջ 86:
[3] *Էփրիկյան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 303:

Կարինի նահանգի տարածությունը կազմում է «76.720 քառակուսի մետր», որից «25.500 քառ. մետրը վարելահող է, 15.860 քառ. մետրը այգի, պարտեզ, 25.360 քառ. մետրը անտառ, արոտավայր»[1]:

Կարինի նահանգը տարեկան ստացել է 33.833.000 չինիկ[2] բերք՝ ցորեն, գարի, հաճար, կտավատ, կորեկ, ոսպ, ընկույզ, 6.268.100 հոխա մրգեր, լոբազգի կուլտուրաների բերք, պտուղ, բանջարեղեն[3]:

Կարինի նահանգի ամենախոշոր գավառը Կարինի սանջակն էր, որն ուներ 9 գավառակ: Գավառի և ընդհանրապես նահանգի ամենաբերրի ու ամենամեծ, գեղեցիկ, հարուստ բնություն ունեցող մասը Կարնո դաշտն է կամ օվան, որը գտնվում է ծովի մակերևույթից 1800-2000 մետր բարձրության վրա: Դաշտի երկարությունը 50 կմ է, լայնությունը՝ 23-30 կմ: Սև ջուր գետը, սկիզբ առնելով Խարափայտ լեռներից, Կիրակոսակ գյուղի մոտ իր մեջ է առնում մի վտակ, ապա Կարմիր վանք (Ղզքիլիսե) գյուղի մոտ խառնվելով մեկ այլ վտակի՝ Կարնո դաշտի կենտրոնում գոյացնում է մի լճակ, որը հայտնի է Շամբ անունով: Շամբ այլ կերպ անվանվում է նաև «ծով Կարնո»: Լիճը շրջապատված է բարձրահասակ եղեգներով, հարուստ է ծածան և կարմրախայտ ձկներով: Լճի ջրերը մեծ մասամբ օգտագործվում են ոռոգման համար:

Կարինի դաշտը հարուստ է նաև թռչուններով: Եվրոպացի ճանապարհորդներից մեկը գրում է, թե այնքան շատ են եղել թռչունները, «որ կարելի չէր նշմարել հողի գույնը»[4]:

Նահանգի ժողովրդական ստեղծագործությունների մեջ յուրահատուկ տեղ ունի արագիլի գալստյան հետ կապված ավանդությունը, որն արևմտահայության քաղաքական ու տնտեսական անապահով դրության կարևոր վկայություններից մեկն է: Ավանդության համաձայն, եթե արագիլը բույնը նորոգելու համար վերադառնալիս իր հետ բերում է արյունոտված շորի կտոր, ուրեմն պատերազմ է լինելու, եթե սատկած մողես է բերում, ուրեմն սպասվում էր հայերի կոտորած, եթե ծղոտ կամ կանաչ խոտ էր բերում, ուրեմն բերքի տարի էր լինելու:

Կարնո դաշտն ուներ 48-51 գյուղ՝ 68.750 բնակչությամբ, որից 31.200-ը հայեր էին[5]:

---

[1] Նույն տեղում, էջ 303:

[2] Չինիկը 5.5 հոխա է, քառորդ մասը Կարնո քիլեյի, Կարնո քիլեն մեկ փութ է, իսկ ընդհանրապես քիլեն 8 կգ է: Մեկ քիլեն 12 հոխա է, մեկ հոխան 400 գրամ է:

[3] *Էփրիկյան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 302:

[4] Նույն տեղում:

[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173-174:

Գավառի հատկապես հայկական գյուղերը բարեկարգ էին, կառուցված անեփ աղյուսից: Լեռներին մոտ գտնվող գյուղերի տները կառուցված էին քարից: Գյուղական ամեն մի տուն ուներ իր բակը, անասնակերի և սննդամթերքի պահեստը: Անասնագոմը բնակելի հատվածի մասն էր կազմում:

Կարնո գավառակը կենտրոնական տեղ էր զբաղեցնում նահանգի գավառակների շարքում ոչ միայն տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակով, այլև աշխարհագրական դիրքով: Հյուսիսում նրա սահմանները հասնում էին Թորթումի, արևելքում՝ Դերջանի, Խաղտիքի, Սպերի գավառակներին:

Գավառակի գյուղերը հիմնականում տեղավորված էին Կարնո շամբի շրջակայքում: Շամբը բաժանման գիծ էր դառնում գյուղախմբերի համար, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել Իլիճայի և Աշկալեի գյուղախմբերի:

Ղևոնդ Ալիշանը հայտնում է, որ «Ի դաշտին Կարնո սփռեալ են իբրև 120 գեղօք»[1]: Հ.Էփրիկյանը ներկայացնում է 205 գյուղերի ցուցակ[2], Ա-Դոն համակարծիք է Կարինի Առաջնորդարանի 169 գյուղերի քանակի հետ[3]: Գ.Սրվանձտյանցը հաշվում է 47 հայաբնակ և խառը բնակչությամբ գյուղեր[4]:

Մնացած տեղեկությունները հիմնականում կրկնում են բերված վկայությունները:

Ղևոնդ Ալիշանը, ինչպես երևում է մեջբերումից, նկատի ունի Կարնո դաշտը և ոչ թե գավառակը, որտեղ, ինչպես նշում է Հ.Էփրիկյանը, տեղավորված էին 48 հայաբնակ գյուղեր[5]: «Հայոց նահապետի» հիշյալ տեղեկությունը, ինչ խոսք, չի համապատասխանում իրականությանը, որը հերքվում է իր իսկ վկայությամբ: Մի երկու տող վերև նա հայտնում է. «’ի թեմի եպիսկոպոսին ‘ի գաւառին Էրզիրումայ են իբրև 2000 տունք Հայոց: Են եւ հռովմեական Հայք 80 երդ»[6]:

Եթե 2000 տունք-ծուխը բաժանենք գավառի գյուղերի 169 կամ 205 քանակի վրա, արդյունքում՝ յուրաքանչյուր գյուղում կունենանք 9-11 տուն հայ բնակչություն, որը շատ անհավանական է: Եթե 2000 տունքը

[1] *Ղևոնդ Ալիշան,* Տեղեկագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1853, էջ 36:
[2] *Էփրիկյան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 300-301:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 168:
[4] ԳԱԹ, նշված ֆոնդը, գ. 23, թ. 19:
[5] *Էփրիկյան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 302:
[6] *Ղևոնդ Ալիշան,* նշված գիրքը, էջ 36:

բազմապատկենք ընտանիքի անդամների ընդունված վեց շնչով, ապա կունենանք՝ 205 գյուղի դեպքում, յուրաքանչյուր գյուղում՝ 58-59 ընտանիք կամ տուն, 169 գյուղի դեպքում՝ 71 ընտանիք (2000x6=12000:205=58.5: 12000:169=71): Այսպես, երկու տարբերակներով ունեցանք յուրաքանչյուր գյուղում հայ ընտանիքների քանակը:

Այժմ պարզենք գավառակի գյուղերի քանակը, որոնք, ըստ Ղևոնդ Ալիշանի, ունեն 12.000 բնակչություն: 12.000-ը բաժանելով 58 և 71 ընտանիքների վրա՝ ստանում ենք գյուղերի 169 և 205 քանակը, այսինքն՝ այնքան, ինչքան հիշատակում էին Հ.Էփրիկյանն ու Ա-Դոն: Նշված վկայությունների միջինում կունենանք 187 գյուղ, որն էլ, մեր կարծիքով, կարելի է համարել ընդունելի տարբերակ:

Գավառակի բնակչության քանակի առթիվ ևս առկա են իրարամերժ տեղեկություններ: Ինչպես տեսանք, ըստ Ղևոնդ Ալիշանի, գավառակի բնակչությունը հասնում էր 12.000-ի[1]: Հ.Էփրիկյանն ընդունում է 21.246-ը[2]: Գ.Սրվանձտյանցի 47 գյուղերի հաշվարկում ստացվում է 1979 տուն, 17.486 շունչ հայ բնակչություն[3]: Բայց նույն փաստաթղթում, պատասխանելով «Ինչ է անոնց թիվը» հարցին, Գ.Սրվանձտյանցն ընդգծում է 31.200 շունչ հայերի գոյությունը[4]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գավառակում ապրում էին 2768 տուն, 16.608 հայ բնակչություն[5]: Անվերապահորեն ընդունել բերված հինգ տեղեկություններից որևէ մեկը՝ անկարելի է, որովհետև նրանց միջև եղած տարբերությունները զգալի են: Ուստի, դիմենք միջին տարբերակին, և գավառակի բնակչության միջին քանակը հավասարվում է 19.708-ի:

Չմոռանանք, որ Ղևոնդ Ալիշանի վկայությամբ, գավառակում ապրում էին նաև «80 երդ» կաթոլիկ հայեր, այսինքն՝ 480 շունչ, որը գումարելով մեր ստացած միջին թվին՝ կունենանք գավառակի հայ բնակչության ամբողջական քանակը՝ 20188(19708 + 480 = 20188):

Այսպիսով, միջին տարբերակով 19-րդ դարի երկրորդ կեսին գավառակի 187 գյուղերում ապրում էին 3097 տուն, 20.188 շունչ հայեր:

Գավառակի նշանավոր և հայաշատ գյուղերից էր *Մուտուրկան*: Գյուղը տեղավորված էր Կարին քաղաքից հյուսիս, շամբից հարավ, Շխնոց և Թասմանա գյուղերի հարևանությամբ: Գյուղից հարավ, Ս.Լու-

[1] Նույն տեղում:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 300-301:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդ, գ. 23, թ. 19:
[4] Նույն տեղում, թ. 19 շրջերես:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173-174:

սավորչի կամ Մուտուրկայի վանքն էր, Դևեբոյին լեռների ստորոտում, Սոունք լեռների մոտ, Գողգոչան ջրվեժի հարևանությամբ:

Գյուղում գործում էր Ս.Հակոբ եկեղեցին, որը Մ.Միրախորյանն անվանում է «բաւական ճաշակաւոր»[1]: Եկեղեցին ուներ 2000 լիրա հասույթ[2]: Վարժարանն ուներ Պարթևյան անունը: 50 աշակերտանոց վարժարանի հասույթը կազմում էր 2000 լիրա[3]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է խառը բնակչություն: Հայերը 75 տուն, 700 շունչ էին, թուրքերը՝ 30 տուն[4]: Հ.Էփրիկյանի վկայությամբ, գյուղն ունեցել է 793 շունչ հայ բնակչություն, 7 տուն թուրքեր[5]: Մ.Միրախորյանի հաշվումներով, գյուղն ունեցել է 60 տուն հայ, 14 տուն թուրք բնակչություն[6]: Ա-Դոն ընդունում է 134 տուն հայ, 8 տուն թուրք բնակչություն վիճակագրությունը[7]: Դիմելով միջին տարբերակին՝ կունենանք 100 տուն, 664 շունչ բնակչություն:

Գյուղը բարեկեցիկ էր, ուներ երկու, երեք հարկանի տներ, որոնք վարձով էին տրվում Լուսավորչի տոնին եկած ուխտավորներին:

Մուտուրկայի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Սովուք Ջերմուկ, Սոուղ Ջերմուկ, Սողուք Ջերմուկ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս, շամբից հարավ, Թասմանա գյուղի հարևանությամբ, Կարինից մեկ ժամ հեռավորության վրա: Գյուղում են գտնվում տարբեր ջերմաստիճաններով հանրահայտ ջերմուկները: Հնուց ի վեր այստեղ կառուցվել են լողարաններ, որտեղ բուժման էին գալիս նահանգի գյուղաբնակներն ու քաղաքաբնակները: Գյուղում էր գտնվում նշանավոր Ս.Հրեշտակապետ եկեղեցին, որն ուներ 1000 լիրա հասույթ[8]: Վարժարանը կոչվում էր Լուսավորչակրոն, ուներ 25 աշակերտ, 1000 լիրա հասույթ և ծախք[9]:

Գ.Սրվանձտյանցի վկայությամբ, գյուղն ուներ 25 տուն, 300 հայ և 300 թուրք բնակչություն[10]: Հ.Էփրիկյանը վկայում է 312 շունչ հայ և 212

[1] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 164:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23 թ. 19:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] *Էփրիկեան Հ.*, նշված գիրքը, հ. 2, էջ 301:
[6] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 186:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 29:
[9] Նույն տեղում, թ. 19:
[10] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 19:

շունչ թուրք բնակչության մասին[1]: Մ.Միրախորյանի տեղեկություններով, գյուղում ապրում էր 25 տուն հայ, 35 տուն թուրք բնակչություն[2]: Ա-Դոյի հաշվումներով, գյուղի բնակչությունը կազմված էր 41 տուն հայերից, 55 տուն թուրքերից[3]:

Միջինը կունենանք՝ 33/34 տուն, 256 շունչ հայ, 45 տուն, 312 շունչ թուրք բնակչություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, կային նաև մանրավաճառներ:

Շինոց գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս, Մուտուրկա և Կան գյուղերի արանքում, շամբից հարավ, Զիֆթլիկից Մուտուրկա ճանապարհի վրա, Կարինից 3,5 ժամ հեռավորության վրա: Բռնի մահմեդականացման, հարստահարությունների և հալածանքների քաղաքականությունն իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղի վրա: Շինոց թափանցեցին մահմեդականները, տեր դարձան վարելահողերին ու արոտներին: Երեք-չորս ընտանիք հայերի, այնուամենայնիվ, հաջողվեց պահպանել իրենց ունեցվածքը, արոտները: Գյուղի մոտ գտնվում է նշանավոր Լույս անունով աղբյուրը, որի պատճառով գյուղը երբեմն անվանվել է նաև Լուսաղբյուր, Աղբյուրի գյուղ:

Շինոցի մոտ կա 2-3 մետր խորությամբ ջրհոր, որը լցվում է ջերմուկով: Ջրհորի համար, որը գտնվում էր թուրքերի զավթած հողերի և հայերի դաշտերի սահմանագլխին, անընդհատ թեժ կռիվներ էին բորբոքվում: Արյունահեղությանը վերջ տալու նպատակով ջրհորը փակվեց: Գյուղից շամբ տանող ճանապարհին կա Եփրիանոս անունով ուխտատեղի, որը հատկապես մարդաշատ էր դառնում Համբարձման տոնին:

Գյուղի Ս.Հովհաննես եկեղեցին կառուցվել է 1830թ.[4], ուներ 1000 լիրա հասույթ: Կարինյան վարժարանը կառուցվել է 1868թ., ուներ 50 աշակերտ և 1000 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակությամբ: Գյուղում պահպանվում էր մագաղաթի վրա գրված ավետարան: Գյուղը՝ Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, ունեցել է 36 տուն, 400 շունչ հայ և 70 տուն թուրք բնակչություն[5]: Հ.Էփրիկյանը հաշվում է 612 շունչ հայ, 63 շունչ թուրք[6], Մ.Միրախորյանը՝ 40 տուն հայ, 10 տուն՝ թուրք[7], Ա-Դոն և ար-

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 201:
[2] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 166:
[3] ՀՀ ՊԿՊԱ, թ. 476, գ. 1, գ. 874, թ. 11:
[4] Նույն տեղում:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 17, 18:
[6] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[7] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 167:

խիվային մի փաստաթուղթ՝ 60 տուն հայ, 23 տուն թուրք, բնակչություն[1]:

Միջինը՝ 45 տուն, 560 շունչ, 23 տուն թուրք բնակչություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, կային նաև արհեստավորներ, որոնք հիմնականում արհեստ էին սովորում հանդակից Կան գյուղի վարպետներից:

Թուանճ, Թվանճ, Թուվանջ, Թուանջ, Թվանջ գյուղը գտնվում էր Կարինից 10-12 կմ հյուսիս-արևելք: Գյուղի անունը, համաձայն ավանդության, ծագել է *թիվն անցավ* արտահայտությունից: Մի գյուղացու հանձնարարվում է պարկերով որոշակի քանակի հող տեղափոխել և բլուր կառուցել: Բլուրը կառուցվում է, բայց բերված հողը նշված քանակից անցնում է, և հավաքվածները աղաղակում են՝ «Թիվն անցավ»: Գյուղի լուսավորչական հայերի եկեղեցին, Մ.Միրախորյանի վկայությամբ, արդեն 80-ական թվականներին ավերված էր[2]:

Գյուղի մոտակայքում էր գտնվում Ս.Գևորգ վանքը, որը միջնադարում հանդիսացել է որպես գրչության կենտրոն, որտեղ 16-17-րդ դարերում գրված ձեռագրերից մեկը հասել է մեզ:

Գյուղի Ս.Ամենափրկիչ եկեղեցին ունեցել է 1000 լիրա հասույթով կալվածքներ: Երկսեռ վարժարանը կոչվում էր Փրկչյան և նույնպես ունեցել է 1000 լիրա հասույթ, 40 աշակերտ[3]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 32 տուն, 350 շունչ հայ և 210 շունչ թուրք բնակչություն[4]: Հ.Էփրիկյանի հաշվումներով, գյուղում ապրել են 405 հայեր, 433 թուրքեր[5]: Մ.Միրախորյանի վկայությամբ՝ «Բնակութիւն 60, որմէ 20 տուն Հայ, 33 տուն Թուրք և 7 Հռովմէական»[6]: Ա-Դոն հաշվում է 46 տուն հայ, 100 տուն թուրք բնակչություն[7]:

Միջինը կունենանք՝ 33 տուն, 377 շունչ հայ, 66 տուն, 321 շունչ թուրք բնակչություն:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: 19-րդ դարի առաջին և երկրորդ կեսերին բնակչության մեծ մասը գաղթել էր Արևելյան Հայաստան և Վրաստան:

Հինձք, Հնձուր գյուղ, Հինոք, Հնձոց գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս-արևելք, 4 ժամ հեռավորության վրա՝ Թունջ գյուղի և Կարմիր

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 874, թ. 11:
[2] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 166:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[4] Նույն տեղում:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[6] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 165:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:

վանքի կենտրոնում: Գյուղին բնական գեղեցկություն է տալիս լեզվակի նմանվող դաշտը, որի վրա էլ, Կարինից Թորթում տանող ճանապարհին կառուցվել է գյուղը: Բլրակը (որի վրա տեղավորված է գյուղը) հեռվից դիտողին թվում է, թե կտուրները կառուցված են իրար վրա: Անտառը, Թափիա բլրից սկսած, մեջտեղ առնելով նաև Կարմիր վանքը, հասնում է մինչև գյուղի մատույցները՝ բնական գեղեցկություն պարգևելով գյուղին: Սլացիկ բարդիները, լացող ուռիները նոր հմայք են հաղորդում առանց այն էլ շռայլ բնապատկեր ունեցող գյուղին: Այս առավելությունների պատճառով գյուղն ամռան ամիսներին դառնում է հովեկների սիրած վայրը: Ելնելով այս փաստից՝ գավառային վարչությունը մշակել էր կանոններ հովեկներին սենյակներ տրամադրելու, Թորթումի ճանապարհին տոնավաճառներ կազմակերպելու ուղղությամբ: Ձիերով, ավանակներով, սայլերով, կողովներով այդտեղ էին բերվում այգիների և բանջարանոցների բարիքները[1]:

Գյուղի աջ կողմում Արածանիի վտակն էր, որի վրա «իրար գլխի» գտնվում էին ջրաղացները:

Հինձքի մոտ էր գտնվում հռչակավոր Կարմիր վանքը, որտեղ սովորել են Գրիգոր Մագիստրոսը, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Արիստակես Լաստիվերտցին: Վանքը նաև դպրական կենտրոն էր: Ղ.Ալիշանը հայտնում է, որ վանքը «հիմնարկեալ ՝ի Մեծէն Ներսիսէ յանուն Տիրամօրն...»[2]: Վանքը Հինձք գյուղի մոտ ուներ կալվածքներ:

Հինձքի Ս.Խաչ եկեղեցին ուներ 2000 լիրա հասույթ, որոնք գոյանում էին կալվածքներից ու նվիրատվության միջոցով: Երկսեռ վարժարանը նույնպես կրում էր Ս.Խաչ անունը: Այն ուներ 60 աշակերտ և 2000 լիրա հասույթ[3]:

Ս.Խաչ եկեղեցին կառուցված էր բլրի լանջին, շրջապատված էր տապանաքարերով: Գերեզմանատանը կա մատուռ, որը, ենթադրվում է, եղել է Ներսես Մեծի ճգնարանը:

Գյուղի կաթոլիկ հայերը նույնպես ունեին իրենց եկեղեցի-վարժարանը: Եկեղեցին կառուցվել է 1862թ. և ուներ «Ս.Կույս Աստվածածին» անունը: Կաթոլիկ հայերի մեծ մասը գաղթել է Արևելյան Հայաստան ու Վրաստան[4]:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 787, թ. 29:
[2] *Ղևոնդ Ալիշան,* Տեղեկագիր..., էջ 37:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 17:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 787, թ. 29:

Գյուղի բնակչությունը կազմված էր 80 տուն, 700 շունչ հայերից, 140 շունչ թուրքերից[1]: Հ.Էփրիկյանն ընդունում է 692 շունչ հայեր, 89 շունչ թուրքեր վիճակագրությունը[2]: Մ.Միրախորյանն արձանագրում է 50 տուն հայ լուսավորչական, 20 տուն հայ կաթոլիկ, 10 տուն թուրք բնակչության գոյությունը[3]:

Ա-Դոյի վիճակագրությամբ, գյուղում բնակվել է 20 տուն հայ, 30 տուն թուրք բնակչություն[4]:

Միջինը՝ 57 տուն, 696 շունչ հայ բնակչություն, 43 տուն թուրք:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով, արհեստներով:

Գըգըլ, Քիլիսե, Կարմիր վանք գյուղը կառուցված է գեղեցիկ զառիթափի վրա, Կարինից հեռու է 7 ժամ հեռավորությամբ: Գյուղը բաժանված է երկու թաղերի՝ Վերին և Ներքին: Գյուղն անունն ստացել է բլրի վրա կարմիր քարով կառուցված եկեղեցուց:

1829թ. գաղթից հետո գյուղը բնակեցվել է Տրապիզոնի գավառակից գաղթած մահմեդականներով, և փոխվել է գյուղի բնակչության կազմը: Հնում եղել է բարեկեցիկ գյուղ: Ամռանը շոգից ազատվելու նպատակով գյուղացիները բնակվել են Խաչափայտի լեռներում գտնվող իրենց ամառանոցում:

Ս.Խաչ եկեղեցին կառուցվել է 1865թ., Տեր Մարտիրոս քահանայի և ազգանվեր Սահակ Քեհեյանի ջանքերով[5]: Եկեղեցին ունեցել է 1000 լիրա հասույթ: Գյուղում գործել է Ս.Նշան վարժարանը, որտեղ սովորել են 52 տղա և 12 աղջիկ[6]: Գ.Սրվանձտյանցն աշակերտների թիվն ընդունում է 17 հոգի: Վարժարանն ունեցել է 1000 լիրա հասույթ:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 30 տուն, 230 շունչ հայ բնակչություն, 70 շունչ թուրք բնակչություն[7]: Մ.Միրախորյանը գտնում է, որ գյուղն ունեցել է «40 տուն կիսով չափ մահմեդական» բնակչություն[8]: Հ.Էփրիկյանը գրանցում է միայն 55 թուրքերի գոյությունը[9]: Ա-Դոյի վկայությամբ, գյուղում ապրում էին 30 տուն հայեր, 33 տուն թուրքեր[10]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[3] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 162:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 237, թ. 34:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[8] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 168:
[9] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:

Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է (20-րդ դ. սկզբներին- Հ. Զ.) 15 տուն, 105 շունչ հայ և 105 տուն մահմեդական բնակչություն[1]:

Միջինը՝ 25 տուն, 167 շունչ հայ, 49 տուն թուրք բնակչություն:

Գյուղի բնակչության հիմնական զբաղմունքներն էին երկրագործությունը, անասնապահությունը, արհեստները:

Շեփեկ, Շիփեկ, Շեփիկ, Շեփեկ Իթորթում գյուղը գտնվում էր շամբից հարավ, Կարինից հյուսիս: Գյուղն ուներ Ս.Մինաս եկեղեցի, 2000 լիրա հասույթով, Սմբատյան վարժարան՝ 25 աշակերտներով, 1500 լիրա հասույթով[2]:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 40 տուն, 300 շունչ հայություն և 30 տուն թուրք[3]: Մ.Միրախորյանը գտնում է, որ բնակչությունն ունի հետևյալ հարաբերությունը. «25 տուն, որոյ միաւոր թիւն Մահմետական է և տասնաւորն Հայկական»[4]: Ա-Դոյի վիճակագրությամբ, գյուղի բնակչության կազմն այսպիսին էր՝ 45 տուն հայ, 15 տուն մահմեդական[5]:

Միջինը՝ 38 տուն, 300 շունչ հայ, 17 տուն թուրք բնակչություն:

Դինարիգում, Դինարգում, Դինարկում, Դինարկում գյուղը գտնվում էր Կարինից և շամբից հյուսիս, Հինձք, Արծաթի գյուղերի հարևանությամբ: Կառուցված էր Խաչափայտի լեռան աջ բլրակին և Կարինից հեռու էր 4 ժամ հեռավորությամբ: Աղբյուրաշատ, ջրառատ գյուղ էր, արգավանդ դաշտերով:

Ս.Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1873թ., քարաշեն, զարդանախշերով, զանգակատնով եկեղեցի էր[6]: Մեկ այլ արխիվային փաստաթուղթ հայտնում է, թե գյուղի եկեղեցին ուներ Ս.Մինաս անունը[7]: Գյուղն ունեցել է վարժարան, որը գտնվում էր եկեղեցու պարտեզի մոտ: Վարժարանը երկսեռ էր, ուներ 49 աշակերտ, որից 35-ը՝ տղա, 14 աղջիկ[8]: Փաստաթղթերից մեկն էլ հավաստիացնում է, թե վարժարանն ունեցել է ընդամենը 25 աշակերտ[9]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 237, թ. 24:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[3] Նույն տեղում:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 168:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 1003, թ. 16:
[7] Նույն տեղում, գ. 261, թ. 39:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 1003, թ. 40:
[9] Նույն տեղում, գ. 261, թ. 30:

Հ.Էփրիկյանը գյուղում հաշվում է 138 շունչ հայ, 209 շունչ թուրք բնակչություն[1], Ա-Դոն՝ 49 տուն հայ, 53 տուն թուրք բնակչություն[2]: 50 տուն հայ, 40 տուն թուրք է արձանագրում արխիվային փաստաթղթերից մեկը, մյուսն ընդունում է 40 տուն հայ, 50 տուն թուրք բնակչության փաստը[3]:

Միջինը՝ 49 տուն հայ, 48 տուն թուրք բնակչություն:

Գյուղի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, մասամբ նաև առևտրով:

Չիթհող, Չիթող, Միթավազ - Կարնո դաշտի խոշոր գյուղերից էր: Տեղավորված էր Կարինից ու շամբից հյուսիս: Գյուղը սակավահող էր, այդ պատճառով էլ մեծ թիվ են կազմում պանդուխտները:

Գյուղն ուներ ցածրադիր դիրք, և գարնանը հեղեղումներն անպակաս էին: Հողերի մեծ մասը պատկանում էր Մեսիտ բեկին, որն ապրում էր քաղաքում և գյուղ էր ժամանում բերքահավաքի ժամանակ՝ իր բաժինը ստանալու: Նրա հողերը մշակում էին չորս հայ ընտանիքներ, որոնք մարաբաներ էին: Նրանք բեկից ստանում էին միայն հողն ու սերմացուն և իրենց գործիքներով մշակում հողը: Գյուղի թուրք և քուրդ աղաները ծանր լուծ էին հայ շինականների համար: Հատկապես գարնանն ու ամռանը նրանց քմահաճույքները կրկնապատկվում էին: Հայերը պարտավոր էին իրենց միջոցներով աղաներին ամառանոց տանել, նրանց ոչխար նվիրել, վերադարձնել գյուղ և այլն: Հայ շինականի օգուտն այդ հարաբերություններից այն էր, որ աղաները «նրանց պաշտպան կհանդիսանային»[4]:

Չիթողը Կարնո դաշտի այն գյուղերից էր, որի նկատմամբ վախ ունեին շրջակա թուրքական գյուղերը: Չիթողցիները ստացել էին նաև դհոլ-զուռնայով աղմկալի հարսանիքներ անելու իրավունք:

Գյուղը մշակութային բնակավայր էր: Այդտեղ գործում էր գրադարան-ընթերցարան, որտեղ կային «մի քանի հազար» գրքեր[5]: Գրադարանը պարբերաբար ստանում էր «Դրոշակ», «Հորիզոն», «Ազատամարտ», «Հառաչ» թերթերը[6]: Գրադարանում կազմակերպվում էին թատերական ներկայացումներ: Դարավերջին առավել աշխուժացավ երիտասարդությունը: 1900թ. կազմակերպվեց երիտասարդական միություն[7]:

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 261, թ. 41, գ. 1003, թ. 17:
[4] Նույն տեղում, գ. 792, թ. 14:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 2346, թ. 16:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, գ. 792, թ. 6:

Գյուղն իր համախմբվածությունը ցուցաբերեց համիդյան կոտորածների շրջանում: Կազմակերպվեց ինքնապաշտպանություն, որին սկզբնական շրջանում մասնակցում էին նաև գյուղի թուրքերը, բայց հետո ստանալով հրահանգ՝ նրանք ևս խժդժություններ սկսեցին, բայց հայերի ճնշման տակ մնացին չեզոք դիրքերում: 1895թ. սեպտեմբերի 10-ին ընտրվեց պաշտպանական մարմին, և սկսվեց Զիթողի հերոսական ինքնապաշտպանությունը: Զենքի կոչվեցին գյուղի բոլոր տղամարդիկ: Զենք չունեցողները զինվում էին գյուղատնտեսական գործիքներով: Պաշտպանությունն առավել ուժեղացավ, երբ սկսեցին ծխալ շրջակա հայկական գյուղերը: Թուրք բաշիբոզուկները տասնհինգ օր շարունակ փորձում էին ներխուժել գյուղ, բայց հանդիպելով ուժեղ դիմադրության, կորուստներ կրելով՝ նահանջում էին: 100 ձիավոր թուրքեր անընդհատ փորձում էին խառնաշփոթություն ստեղծել, բայց հայերը, որ ամեն կողմում ունեին 40-50 զինյալներ, հաջողությամբ հետ էին մղում նրանց: Սուլթանական ներման հրամանը թեև գյուղը փրկեց արյունահեղությունից, բայց ձիթողցիները քաջ գիտակցում էին, որ թուրքերը շուտով նորից կսկսեն իրենց հարձակումները: 1896թ. գարնանը սկսվեց կոտորածների նոր ալիքը: Գյուղն անսպասելիորեն շրջապատվեց, բայց հայերը շուտով կազմակերպվեցին և կանգնեցրին թշնամուն: Եռօրյա մարտերը ցույց տվեցին, որ հնարավոր չէ թափանցել գյուղ: Սկսվեցին սպառնալիքները, որոնց նույնպես պատրաստ էին հայերը: Ի վերջո, թուրքերը դիմում են իրենց հարազատ տարբերակին: Իբր, հաշտվելու նպատակով, բանակցությունների են հրավիրում հայերի ղեկավարներին, որոնք էլ, անհեռատես գտնվելով, ընդունում են հրավերը, գնում են բանակցությունների: Նրանց՝ թվով 30 հոգի, թուրքերը ձերբակալում են, բանտարկում, ենթարկում անմարդկային տանջանքների, ապա գրավում են գյուղը, թալանում ու կոտորում: Երկու-երեք շաբաթ անց թուրքական հարձակումը նորից է կրկնվում: Բանտարկվածների նկատմամբ դատ է կազմակերպվում, և շատերը 1-5 տարի ժամկետով ազատազրկվում են:

Գյուղի եկեղեցին կառուցվել է 1860թ., ուներ երեք խորաններ[1]: Ս.Աստվածածին եկեղեցին ուներ կալվածքներ, հասույթը կազմում էր 3000 լիրա[2]: Եկեղեցում պաշտոնավարում էին հինգ քահանաներ: Մ.Միրախորյանը եկեղեցին անվանում է «գեղեցկակերտ»:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 792, թ. 8:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:

Գյուղի Մեսրոպյան վարժարանն ուներ 120 աշակերտ, հասույթը կազմում էր 3000 լիրա, որը գոյանում էր հանգանակություններից[1]:

Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որը գյուղն ունեցել է երկու վարժարան, աշակերտների թվաքանակը հասնում էր 300-ի, որովհետև այնտեղ սովորելու էին գալիս նաև շրջակա գյուղերի երեխաները: Վարժարաններից մեկը գտնվում էր Միացյալ ազգանվեր ընկերության հովանավորության տակ: Վարժարանում ուսանում էին 160 տղա, 160 աղջիկ[2]: Դասավանդվում էին հայերեն, ազգային պատմություն, աշխարհագրություն, գծագրություն, քերականություն, թվաբանություն, երգեցողություն, երկրաչափություն: Շաբաթ օրերին աշակերտները սովորում էին ձեռագործ և զբաղվում էին նկարչությամբ[3]:

Ձիթողցիների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, անասնապահությունը, արհեստները: Մեծ թիվ էին կազմում չորս լուծ եզ, գոմեշ ունեցող ընտանիքները: Տարածված արհեստներից էին քարտաշությունը, որմնադրությունը: Մեծ թիվ էին կազմում խսիր գործողները: Խիտ գործվածքով խսիրները վաճառվում էին քաղաքում: Կային նաև ջուլհակներ, որոնք, հատկապես ճերմակ բրդից, գործում էին շալեր[4]:

1895թ. իրադարձությունների ժամանակ գյուղում փրկություն գտան Մուշից ու Սասունից գաղթած հայերը:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 1150 հայ և 42 թուրք բնակչություն[5]: Հ.Էփրիկյանը հաշվում է 1137 հայ և 72 թուրք բնակչություն[6]: Մ.Միրախորյանը վկայում է, որ գյուղն «Ունի 10 տուն բնակիչ, մեծագույն մասամբ Հայ և մնացեալ Մահմեդական»[7]: Ա-Դոն ընդունում է 216 տուն հայ և 12 տուն մահմեդական բնակչության գոյությունը[8]: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղն ուներ 800 բնակչություն, որից 10-12 տունը թուրքեր էին[9]:

Միջինը՝ 1011 շունչ հայ, 34 տուն թուրք բնակչություն:

Արծաթի, Արջաթի, Արդյեթի, Արծթի, Արծիթի գյուղը գտնվում էր Ծաղկավետ կամ Դյումլլի լեռան հարավարևելյան ստորոտում, Կարի-

[1] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 158:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 792, թ. 17, 8:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 792, թ. 17:
[4] Նույն տեղում, գ. 2346, թ. 3:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[6] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[7] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 158:
[8] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 2346, թ. 16-17:

նից հյուսիս 15 կմ կամ 4 ժամ հեռավորության վրա[1]: Ենթադրվում է, որ անունը ծագել է գյուղի մոտակայքում գտնվող արծաթի հանքից: Հայ պատմիչներից գյուղի մասին հիշատակություն է թողել Ղազար Փարպեցին, երբ նկարագրում է Մուշեղ Մամիկոնյանի 483թ. հաղթանակը պարսիկների դեմ: Գյուղից 2 կմ հեռավորության վրա կա ջերմուկ: Հնագույն ժամանակներից հանքային տաք աղբյուրներն օգտագործվել են որպես բուժման միջոց:

Ս.Աստվածածին եկեղեցին ճարտարապետական հնակերտ կառույց էր, ուներ զարդաքանդակներ և զարդարուն խաչքարեր, 3000 լիրա հասույթ[2]: Երկրորդ եկեղեցին կոչվում է Ս.Նշան: Գյուղի մոտակայքում էր գտնվում Ս.Լուսավորչի վանքը, որտեղ Լուսավորչի տոնին կազմակերպվում էին տոնախմբություններ:

Վարժարանը կոչվում էր Մեսրոպյան: Այս գյուղում է ծնվել նշանավոր հայագետ Հակոբոս Տաշեանը:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ և արհեստներով:

Բնակչության ազգային կազմի մասին աղբյուրներից մեկը հայտնում է, թե գյուղում ապրում էին 40 տուն, 215 շունչ հայեր, 65 տուն, 350 շունչ թուրքեր[3]: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 500 շունչ հայեր, որոնցից 7 տունը լուսավորչական հայեր էին, 47 տունը՝ կաթոլիկ: Թուրքերը կազմում էին 120 շունչ[4]: Մ.Միրախորյանի հաշվումներով, գյուղում կային 10 տուն լուսավորչական, 40 տուն կաթոլիկ հայեր, 20 տուն մահմեդականներ[5]: Հ.Էփրիկյանը վկայում է 210 հայերի, 131 թուրքերի գոյության մասին[6]: Ա-Դոն ընդունում է 30 տուն հայ, 70 տուն թուրք հարաբերությունը[7]: Մեկ այլ աղբյուր գյուղում հաշվում է 80 տուն բնակչություն[8]:

Միջինը՝ 40 տուն, 380 շունչ հայ, 48 տուն, 200 շունչ թուրք բնակչություն:

Ումուտում գյուղը հնում անվանվում էր *Շահապիվան, Բաղնիք,* գտնվում էր շամբից հյուսիս, Գրիչք գյուղի հարևանությամբ: Նրանից արևելք Երկնիստ գյուղն էր: Ենթադրվում է, որ անունն ստացել է թուրքերեն ումուտ՝ հույս, բառից: Արշավանքներից մեկի ժամանակ

[1] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 164:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[3] ՀՀ ՊԿՊԱ, դ. 476, գ. 5, գ. 139, թ. 62:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[5] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 164:
[6] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[8] «Բազմավեպ», 1907, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 472:

սուլթանական բանակը հասնում է այս վայրերը և հանգստի համար տեղ փնտրում: Ի վերջո, երևում է Շահապիվանք գյուղը, և զորքը աղաղակում է՝ «ումուտ», «ումուտ»: Իբր այդ ժամանակվանից էլ գյուղը ստանում է իր նոր անունը:

Գյուղը Կարինից հեռու է երեք ժամ հեռավորությամբ: Շրջակա լեռներում հանդիպում է կովծուծ անունով կենդանի: Այն ունեցել է զառան մեծություն: Գտնելով որսին՝ ոչխարին, այնպես է փաթաթվում ոտքերին, որ կենդանին անշարժ է մնում. ուտելով նրա կաթը՝ վերջում թունավորում է զոհին: Տեղաբնակները մեկ ամիս շարունակ սառնորակ ջրով լվանում են ոչխարի կուրծքը, ապա փորձարկելուց հետո միայն կաթն օգտագործում: Կովծուծ վայրի կենդանին Կարինի նահանգի մյուս գյուղերում չի հանդիպում:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Գյուղն ուներ երկու եկեղեցի՝ Ս.Հակոբ և Ս.Սարգիս, Ամենափրկիչ անունով մատուռ: Մ.Միրախորյանը հայտնում է, որ Ս.Հակոբ եկեղեցին գետնափոր էր[1]: Եկեղեցին ունեցել է 2000 լիրա հասույթ[2]: Արխիվային փաստաթղթերից մեկի վկայությամբ, եկեղեցին կառուցվել է 1129թ.՝ «ի ձեռան Գրիգոր վարդապետի»[3]: Ս.Սարգիս եկեղեցու պատերին կան արձանագրություններ:

Գյուղի երկու՝ հին և նոր գերեզմանոցներում կային արձանագրություններով տապանաքարեր, 11 խաչքար, 11 խոյարձան[4]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 50 տուն, 150 շունչ հայ և 160 շունչ թուրք բնակչություն[5]: Հ.Էփրիկյանը գյուղում հաշվում է 644 շունչ հայ և 160 շունչ թուրք բնակչություն[6]: Մ.Միրախորյանի տեղեկություններով, գյուղն ունեցել է 78 տուն բնակչություն, որից 50 հայ, 28 մահմեդական[7]: Որոշ աղբյուրներ ընդունում են 38 տուն խառը[8] և 75 տուն հայ բնակչության գոյությունը[9]: Ա-Դոն ընդունում է 80 տուն հայ, 55 տուն թուրք հարաբերությունը[10]:

[1] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 163:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 26:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 26:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[6] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[7] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 162:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 26:
[9] «Բազմավեպ», Վենետիկ, 1882, էջ 471:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:

Միջինը՝ 47 տուն, 397 շունչ հայ, 32 տուն, 150 շունչ թուրք բնակչություն:

Գյուղի վարժարանը կոչվում էր Սահակյան, ուներ 70 աշակերտ, 1500 լիրա հասույթ[1]:

Կրիճք, Գրիչք, Կրիչք, Քիրինճ, Կրինճք գյուղը մինչև 1875թ. եղել է զուտ հայաբնակ: Նույն թվականին թուրքերը ներխուժել ու բնակություն են հաստատել գյուղում: Գյուղը գտնվում է շամբից հյուսիս: Արծն քաղաքի իշխանավորներն այդ գյուղում էին բնակեցնում գրողներին, մտավորականներին, ինչից էլ ծագել է գյուղի անունը:

Գյուղի Քրիստոս թագավոր եկեղեցին կառուցվել է 1275թ., նրա հարևանությամբ գերեզմանոցն է, որտեղ կան յոթ նշանավոր խաչքարեր[2]: Եկեղեցին ուներ 2000 լիրա հասույթ: Վարժարանը կոչվում էր Մամիկոնյան և ուներ 1200 լիրա հասույթ, 80 աշակերտ[3]:

Բնակչությունը խառն էր՝ 55 տուն, 590 շունչ հայ և 70 շունչ թուրք բնակչություն[4]: Հ.Էփրիկյանն ընդունում է 519 շունչ հայ, 88 շունչ թուրք[5], Մ.Միրախորյանը՝ 40 տուն հայ, 35 տուն թուրք բնակչության վիճակագրությունը[6]:

Միջինը՝ 47 տուն, 554 շունչ հայ, 35 տուն, 79 շունչ թուրք բնակչություն:

Կրճնկոց, Կրրճընկոց, Կոճնկոց գյուղն ուներ խառը բնակչություն: Գտնվում էր Գրիչք գյուղից հարավ, Գեռախոռից հյուսիս-արևելք: Ս.Խաչ եկեղեցու հասույթը կազմում է 500 լիրա: Նույնանուն վարժարանինը՝ 500 լիրա: Բնակչությունը կազմված էր 18 տուն, 210 շունչ հայերից և 49 շունչ թուրքերից[7]: Հ.Էփրիկյանի վիճակագրությամբ, գյուղում բնակվում էին 180 շունչ հայեր և 36 շունչ թուրքեր[8]: Մ.Միրախորյանը հաշվում է 30 տուն բնակչություն, որից «կիսով չափ» հայեր[9]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է 27 տուն, 300 շունչ հայ, 7 տուն, 30 թուրք բնակչության մասին[10]: Ա-Դոյի վիճակագրությամբ, գյուղում ապրում էին 22 տուն հայեր, 5 տուն թուրքեր[11]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 26:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 28:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[6] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 163:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16, 15:
[8] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[9] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 170:
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 68:
[11] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:

Միջինը՝ 21 տուն, 240 շունչ հայ, 9 տուն, 37 շունչ թուրք բնակչություն:

Գեղախոռ, Գեղախոր, Գեղախո գյուղը գտնվում էր Կարինից 15 կմ հեռավորության վրա, հյուսիսարևելյան կողմում, շամբի հյուսիսային կողմում, Կրճկնոց գյուղի մոտ: Գյուղը հայտնի էր իր «կտրիճ գրաստապաններով»[1]: Բացի գրաստներից, հայտնի էին գյուղում աճեցրած բեռնակիր ընտիր ձիերը: Բնակչության զգալի մասը զբաղվում էր վարձով բեռներ տեղափոխելով:

Եկեղեցին հնակառույց էր և կրում էր Ս.Սարգիս անունը: Այն ուներ 2000 լիրա հասույթ: Գեղուհյան վարժարանում սովորում էր 20 աշակերտ: Վարժարանի հասույթը կազմում էր 1000 լիրա[2]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 33 տուն, 250 հայ բնակչություն, 140 շունչ թուրք բնակչություն[3], 60 տուն, 550 շունչ հայ, 50 տուն թուրք բնակչության մասին է վկայում արխիվային փաստաթղթերից մեկը[4]: Մ.Միրախորյանը բնակչությունը ներկայացնում է հետևյալ հարաբերությամբ՝ 35 տուն հայ, 10 տուն թուրք[5]: Ա-Դոյի հաշվումներով, գյուղում բնակվում էին 37 տուն հայեր, 41 տուն թուրքեր[6]:

Միջինը՝ 64 տուն, 400 շունչ հայ, 38 տուն, 140 շունչ թուրք բնակչություն:

Նշենք, որ Կարնո դաշտի գյուղերում թուրքերը հայտնվել են 19-րդ դարի 70-ական թվականներին: Մինչ այդ բոլոր գյուղերը, աննշան բացառությամբ, ունեցել են զուտ հայ բնակչություն:

Գեղախոռի հայերը զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով:

Դըվնիկ, Դվնիկ, Դվին, Դվիկ, Թվնիկ, Տիվնիկ, Տվնիկ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս, շամբից հյուսիս-արևելք, Կարինից հեռու էր մոտ 16 կմ, Բագառիճ, Մուլք, Գրիճք, Կրճկնոց գյուղերի հարևանությամբ: Հնում զուտ հայաբնակ էր, 19-րդ դարի վերջերին արդեն ուներ խառը բնակչություն: 1587թ. Դվինիկում է գործել Հակոբ Ծաղկողը, որի նկարազարդած Ավետարանն այժմ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Դվինիկի մոտ է գտնվում Արածանիի վրա 4-րդ

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 26:
[2] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 16:
[3] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 16:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 60:
[5] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 166:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:

դարում կառուցված կամուրջը: Գյուղը բաղկացած է եղել թաղամասերից: Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 2000 լիրա հասույթ: Խոսրովյան վարժարանը դադարել է գործելուց: Այս փաստը շեշտում են թե՛ Գ.Սրվանձտյանցը[1], թե՛ Մ.Միրախորյանը[2]: Վերջինս գյուղի հայ բնակչության վիճակն անվանում է «ողբալի»: Գյուղի արևմտյան կողմում է գտնվում 3 մ բարձրությամբ, 2 մ լայնությամբ Ս.Գևորգ խաչքարը:

Դվինիկի հայերը զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ: Գյուղում ապրում էին 65 տուն, 500 շունչ հայեր: Գ.Սրվանձտյանցը թուրք բնակչություն չի արձանագրում[3]: 40 տուն հայ, 15 տուն թուրք է գրանցում Մ.Միրախորյանը[4]: Հ.Էփրիկյանը հաշվում է 505 շունչ հայ, 103 շունչ թուրք[5]:

Միջինը՝ 52 տուն, 1005 շունչ հայ, 15 տուն, 103 շունչ թուրք բնակչություն:

Պատիշեն գյուղը գտնվում էր շամբի հյուսիսային կողմում: Ուներ խառը բնակչություն: Հայերն ու թուրքերը, Մ.Միրախորյանի վկայությամբ, «լաւ յարաբերութեան մէջ են»[6]:

Եկեղեցին կոչվում էր Ս.Գևորգ, ուներ 1000 լիրա հասույթ[7]: Մ.Միրախորյանը դժգոհությամբ է խոսում քահանայի մասին, որի տգիտության պատճառով հայերն «Աստուածմէ ալ ձեռք քաշելու վրայ են»[8]:

Ս.Գևորգյան վարժարանն ուներ 27 աշակերտ, 1000 լիրա հասույթ: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 32 տուն, 310 շունչ հայ, 60 շունչ թուրք[9]: Հ.Էփրիկյանի վկայությամբ, գյուղում ապրել են 278 շունչ հայեր, 52 շունչ թուրքեր[10]: Մ.Միրախորյանը գրանցել է 30 տուն հայ, 10 տուն թուրք[11], Ա-Դոն՝ 34 տուն հայ, 9 տուն թուրք բնակչություն[12]: 45 տուն, 600 հայ բնակչություն, 28 տուն, 120 շունչ թուրք է հաշվում արխիվային փաստաթղթերից մեկը[13]:

---

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[2] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 166:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 28:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 166:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[6] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 168:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[8] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 168:
[9] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[10] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[11] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 168:
[12] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[13] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 67:

Միջինը՝ 35 տուն, 396 շունչ հայ, 16 տուն, 71 շունչ թուրք բնակչություն:

Երկնիստ, Երկնուստ, Երկենիս, Երգնիստ գյուղը գտնվում էր շամբից հյուսիս, Խաչկավանքի մոտակայքում: Գյուղից հյուսիս Ղղտաձորն էր, հարավային կողմում՝ Գոմք գյուղը: Բնակչությունը խառն էր: Զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, մեղվաբուծությամբ: Տեղանքը հարթավայրային էր, որն էլ արգավանդ հողեր էր բաժին հանել գյուղի բնակչությանը: Այս վիճակն առավել բարելավվում էր գյուղի միջով հոսող գետակի պատճառով, որը ոռոգելի էր դարձնում արտերն ու բանջարանոցները, այգիները, պարտեզները: Բնական այս պայմանները հնարավոր էին դարձնում նաև մեղվաբուծությունը:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղում բնակվում էին 13 տուն, 90 շունչ հայեր, 200 շունչ թուրքեր[1]: Հեղինակներից մեկի վկայությամբ, 1877-1878թթ. պատերազմի ժամանակ գյուղն ունեցել է 400-500 հայ և թուրք խառը բնակչություն[2]: Հ.Էփրիկյանը գրանցել է 68 շունչ հայ, 178 շունչ թուրք բնակչություն[3]: Մ.Միրախորյանը մատնանշում է 5 տուն հայ, 23 տուն թուրք բնակչություն[4]:

Միջինը՝ 9 տուն, 79 շունչ հայ, 23 տուն, 136 շունչ թուրք բնակչություն:

Ս.Հրեշտակապետ եկեղեցին ուներ 1000 լիրա հասույթ[5]: Հնաշեն եկեղեցի էր, երբեմն անվանվել է նաև Ս.Աստվածածին: Այնտեղ ժամանակին պահպանվել են մագաղաթյա ձեռագրեր: Եկեղեցու որմերի մեջ տեղադրված է յոթ խաչքար: Եկեղեցու մոտ գտնվող հին գերեզմանոցում կային հայերեն արձանագրություններով չորս խոյաքանդակ, երկու խաչքար[6]:

Ղղտաձոր, Ուղտաձոր գյուղը գտնվում էր լեռների շրջապատման մեջ: Գյուղից հարավ Խաչկավանքն էր, Երկնիստ գյուղը: Մոտակա լեռից բխող աղբյուրի ջրերում կար կարմրախայտ ձուկը:

Գյուղի արևմտյան կողմում է գտնվում Ս.Հարություն փոքրիկ եկեղեցին, որը կառուցվել է ի պատիվ հարություն առած պատանու: Համաձայն այդ ավանդության, կենաց մասունքների տեղափոխության ժամա-

[1] ԳԱԹ, նույն տեղում:
[2] Տեղանունների բառարան (այսուհետ՝ ՏԲ), Բ, հ. 2, էջ 244:
[3] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 170:
[5] ԳԱԹ, նշված ֆոնդը:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 27:

նակ, որը գլխավորում էր Հերակլ կայսրը, նոր մահացած մի պատանի դագաղի մեջ կենդանանում է, որն էլ պատճառ է դառնում եկեղեցու կառուցման համար[1]:

Գյուղի մյուս եկեղեցին կոչվում էր Ս.Հակոբի անունով: Նրա պատերի մեջ կան խաչքարեր: Խաչալույս անվանյալ մատուռի խորանի մեջ ևս տեղադրված էր մեծ խաչքար[2]:

Ս.Հակոբ եկեղեցու հասույթը կազմում էր 1500 լիրա: Տրդատյան վարժարանն ուներ 35 աշակերտ, 2500 լիրա հասույթ: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղում ապրել են 47 տուն, 350 շունչ հայ և 150 շունչ թուրքեր[3]: Մ.Միրախորյանը գրանցել է 35 տուն հայ, 30 տուն թուրք բնակչություն[4]: Հ.Էփրիկյանի հաշվումներով, 292 շունչ հայ, 182 շունչ թուրք բնակչություն է ունեցել գյուղը[5]: Ա-Դոն ընդունում է 50 տուն հայերի և 45 տուն թուրքերի վիճակագրությունը[6]:

Միջինը՝ 44 տուն, 371 շունչ հայ, 37 տուն, 166 շունչ թուրք բնակչություն:

Գյուղի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Գոմք գյուղը հայտնի է նաև *Գոմեր, Կոնք* անվանումներով: Անունն առաջացել է իշխանական անասնագոմերի գոյության պատճառով: Գտնվում է Կարինից հյուսիս-արևմուտք, 16 կմ հեռավորության վրա: Գյուղի միջով թեև անցնում է մի գետակ, բայց առատաջուր չէ: Գյուղը չունի խմելու ջրի աղբյուրներ: Գյուղի միջով էր անցնում Արշամաշատ գնացող հին ճանապարհը: Գոմքից հարավ-արևելք Բագառիճ և Դվնիկ գյուղերն են:

Եկեղեցին կոչվում է Ս.Հակոբ, հնաշեն է, ունի 53 տուն բնակչություն, «մեծագոյն մասամբ Թրքական»[7]: Գ.Սրվանձտյանցի վկայությամբ, գյուղի բնակչությունը բաղկացած էր 27 տուն, 270 շունչ հայերից և 210 շունչ թուրքերից[8]: Հ.Էփրիկյանի վիճակագրությամբ, գյուղում ապրում էին 321 շունչ հայեր, 66 շունչ թուրքեր[9]: Ա-Դոն ընդունում է Կարինի

[1] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 165:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 27:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, էջ 16:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 164:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[7] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 166:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 16:
[9] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:

առաջնորդարանի վիճակագրությունը՝ 45 տուն հայեր, 40 տուն թուրքեր[1]: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղն ունեցել է 70 տուն հայ և թուրք բնակչություն: Նույն փաստաթուղթը նաև վկայում է, թե գյուղում ապրում էին 130 տուն քրդեր: 1900թ. գյուղն ունեցել է 50 տուն բնակչություն, հավաստում է մեկ այլ փաստաթուղթ[2]:

Միջինը՝ 37 տուն, 295 շունչ հայ, 35 տուն, 138 շունչ թուրք, 130 տուն քուրդ բնակչություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում էր հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ, կային նաև արհեստներով զբաղվողներ:

Օձնի, Օզնի, Ոզնի գյուղը գտնվում է բարեբեր հարթավայրում, Կարինից հեռու է մոտ 13 կմ: Հարևան գյուղերն են Պատիշենը, Ղուշճին, Գարարզը: Ս.Երրորդություն եկեղեցու արձանագրության համաձայն, եկեղեցին 858թ. հիմնադրել է Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը: Գյուղի բնակչությունն աչքի է ընկնում հայրենասիրությամբ. «Ընդհանրապէս իրենց ծննդավայրէն չեն հեռանար»,- արձանագրում է գյուղի մասին պատմող հեղինակներից մեկը[3]: Ավանդապահությունը դրսևորվում է նաև կենցաղում, ընտանեկան հարաբերություններում: Այս բարեմասնությունները նկատի ուներ Մ.Միրախորյանը, երբ գրում էր. «Հայերն ունին ընտանեկան և ընկերական գովելի կեանք մը և իրարու հետ սիրով կ'ապրին»[4]:

Գյուղի պատմությանն անդրադարձած հեղինակները եկեղեցին անվանում են Ս.Երրորդություն, բացի Գ.Սրվանձտյանցից, որը եկեղեցին կոչում է Ս.Աստվածածին[5]: Եկեղեցին ունեցել է 3000 լիրա հասույթ, Սմբատյան վարժարանը՝ 2500 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակությունների շնորհիվ: Վարժարանն ուներ 140 աշակերտ[6]: Վարժարանի մասին ՀՍՀ հոդվածի հեղինակը հայտնում է, որ գործել է 1860-ական թվականներից, եղել է երկսեռ և ունեցել է 80-100 աշակերտ[7]: Գյուղի մոտակայքում էր գտնվում Ս.Հովհաննես վանքը:

Օձնի բնակչությունը, մինչև համիդյան կոտորածները, չնայած հալածանքներին, նույնպես աճ էր ապրում: Այսպես, եթե 1872-1873թթ. գյուղն

[1] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 173:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 234, թ. 2, 4, 9:
[3] «Բազմավեպ», նշված համարը, էջ 470:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 158:
[5] ԳԱԹ, նույն տեղում, թ. 16:
[6] Նույն տեղում:
[7] ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 540:

ուներ 158 տուն բնակչություն, ապա՝ 1877-1878թթ.՝ 162 տուն, 1150 շունչ բնակչություն[1]: Գ.Սրվանձտյանցը վկայում է, որ նույն ժամանակահատվածում գյուղն ունեցել է 150 տուն, 1350 շունչ հայ և 300 շունչ թուրք բնակչություն[2]: Հ.Էփրիկյանը հայտնում է, որ գյուղում բնակվում էին 1141 շունչ հայեր, 138 շունչ թուրքեր[3]: Մեկ այլ վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 300 տուն, 4000 հայ և 30 տուն, 150 շունչ թուրք բնակչություն[4]: 169 տուն բնակչություն է հաշվում «Բազմավեպի» հոդվածի հեղինակը[5], իսկ Ա-Դոն գրանցում է 190 տուն հայ, 35 տուն թուրք բնակչություն[6]:

Միջինը՝ 197 տուն, 2164 շունչ հայ, 32 տուն, 199 շունչ թուրք բնակչություն:

Գյուղի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով և արհեստներով: «Տեղւոյս բնակիչքն եւս գրեթե կիսով չափ արհեստաւոր են»,- վկայում է Մ.Միրախորյանը[7]:

Ղարարզ գյուղը տեղավորված էր շամբից հյուսիս, Կարինից հեռու էր ոտնագնա՝ 4.5 ժամ հեռավորության վրա, նրանից արևելք Օձնի, Դվնիկ ու Գոմք գյուղերն են: Գյուղն իր անունը ստացել է սև հողատարածություններ ունենալու պատճառով:

Հայտնվում է այն կարծիքը, թե Արածանիի ակունքների մոտ գտնվող գյուղը կառուցվել է սելջուկների կործանած Արծն քաղաքի տեղում: Որպես վկայություն բերվում են բազմաթիվ ավերակներ, որտեղ երևում են «հինբաղնեաց և այլ շէնքերու հետքեր, պղնձէ անօթք, այլ եւ այլ զարդերու նշաններ եւ Հելլենական դրոշմ կրող դրամներ»[8]:

Ավերակներից մեկն էլ պատկանում է Թեոդոս Բ կայսրի կողմից 433թ. կառուցված բերդին:

Գյուղի զարդը Ս.Աստվածածին եկեղեցին է՝ «սիրուն տեսքով և ճաշակաւոր կառուցմամբ. իւր խաչկալն ճարտարարուեստ գործ մի է, նուրբ և ընտիր»[9]:

Վկայություն կա այն մասին, որ Պետրոս Գետադարձ կաթողիկոսն այցելել է գյուղ և կատարել Զրօրինեքի եկեղեցական արարողությունը[10]:

---

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 67:
[3] «Բազմավեպ», նշված համարը, էջ 470:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[5] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 158:
[6] Նույն տեղում, էջ 151:
[7] Նույն տեղում:
[8] «Բազմավեպ», նշված համարը, էջ 470:
[9] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[10] «Բազմավեպ», նշված համարը, էջ 470:

Հ.Էփրիկյանը, որ Ղարարզ-Խարարզ-Գարարզը անվանում է նաև Արծն, հայտնում է, որ գյուղն ունեցել է 682 շունչ հայ, 138 շունչ թուրք բնակչություն[1]: Մ.Միրախորյանը վկայում է 60 տուն հայ, 30 տուն տաճիկ բնակչության մասին[2]: Ա-Դոն, կրկնելով Կարինի առաջնորդարանի քարտուղար Վ.Սանոյանի վիճակագրությունը, ընդունում է 100 տուն հայերի, 40 տուն թուրքերի ժողովրդագրությունը[3]:

Միջինը՝ 80 տուն, 682 շունչ հայ, 35 տուն, 138 թուրք բնակչություն:

Եկեղեցու բակում էր գտնվում գյուղի վարժարանը, որն ուներ 90 տղա և 70 աղջիկ աշակերտ[4]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Աշկալա, Աշխալա, Աշգալէ, Աշղալա գյուղը, որը հնում եղել է քաղաք, գտնվում է Կարինից 40 կմ հեռավորության վրա, Երզնկա-Բաբերդ ճանապարհի վրա, Աշկալայի բարեբեր դաշտում, որը տարածվում է Եփրատի երկու ափերին, ծովի մակերևույթից բարձր է 1700 մետրով, ունի 30 կմ երկարություն, մոտ 10 կմ լայնություն[5]: Հյուսիսային կողմում փոքր Գելտառիճ գյուղն է, հարավում՝ Դերջանի գավառը: Կլիման խիստ է, ձմեռը՝ ձյունաշատ, ամառը՝ տոթակեզ: Դաշտը հարմար է հացահատիկային կուլտուրաների մշակության համար: Աշկալացիները զբաղվում են նաև խոտաբույսերի մշակությամբ, անասնապահությամբ, արհեստներով, այգեգործությամբ, առևտրով: Գյուղի մոտակայքում է գտնվում Թուզլայն աղահանքը, որն օգտագործվում է մասամբ: Գյուղի մոտակայքում ավերված բերդի ավերակներն են: Աշկալան ունի երկու եկեղեցի և երկու վարժարան: Հ.Էփրիկյանը գյուղը հիշատակում է *Աշքալէ* անունով և վկայում, որ ունեցել է 136 շունչ հայ, 382 շունչ թուրք բնակչություն[6]: Մեկ այլ վկայությամբ, գյուղը 19-րդ դարի սկզբներին ունեցել է 1800 շունչ, 20-րդ դարի սկզբներին՝ 800 շունչ հայ և թուրք բնակչություն[7]: 120 տուն բնակչություն է հաշվում մեկ այլ աղբյուր[8]:

Միջինը՝ 479 հայ, 561 շունչ թուրք բնակչություն, գրեթե 63 և 80 տուն հարաբերությամբ:

---

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[2] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 161:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 793, թ. 97:
[5] Տեղանունների բառարան, հ. 1, էջ 292:
[6] ՏԲ, հ. 1, էջ 292:
[7] «Բազմավեպ», նշված համարը, էջ 471:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:

Ճինիս գյուղը գտնվում էր գրեթե Աշկալայի դաշտում, թիկունքում Այծապտկունք լեռն էր, որով բաժանվում էր Դերջանի գավառից:

Գյուղում գործում էր Ս.Գևորգ եկեղեցին, որն ուներ 1000 լիրա հասույթ: Լևոնյան վարժարանն ուներ 20 աշակերտ և 500 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակություններից[1]: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 22 տուն հայ, 240 շունչ և 700 շունչ թուրք[2]: Հ.Էփրիկյանի վիճակագրությամբ, գյուղն ուներ 297 շունչ հայ և 274 շունչ թուրք բնակչություն[3]: Մ.Միրախորյանը գյուղում հաշվում է 20 տուն հայ և 48 տուն թուրք բնակչություն[4]: Ա-Դոն վկայակոչում է Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը և գրանցում 65 տուն հայ, 140 տուն թուրք բնակչություն[5]:

Միջինը՝ 36 տուն, 179 շունչ հայ, 94 տուն, 487 շունչ թուրք բնակչություն:

Երկան Մասուր, Երկայն Մասուր, Երկայն Մանսուր, Երկայն Մասուր գյուղը գտնվում էր Սերդեմ, Սարդամ գետի կիրճի դիմաց: Հնում եղել է զուտ հայաբնակ գյուղ: Գյուղի ժողովրդագրությունը փոխվեց և այլազգիներով բնակեցվեց 1829 թվականից հետո, երբ բնակիչների մեծ մասը գաղթեց Անդրկովկաս ու բնակություն հաստատեց Ախալքալաքի Կորխ գյուղում:

Գյուղը եկեղեցի և վարժարան չուներ: 7 տուն, 40 շունչ հայ, 400 շունչ թուրք բնակչություն է հաշվում Գ.Սրվանձտյանցը[6]: Մ.Միրախորյանը գրանցում է 20 տուն թուրք, 6 տուն հայ[7], Հ.Էփրիկյանը՝ 133 շունչ հայ, 239 շունչ թուրք[8], Ա-Դոն՝ 18 տուն հայ, 130 մահմեդական[9]: Այլ աղբյուրներ նշում են, որ գյուղն ունի 15 տուն հայ, 28 տուն մահմեդական կամ 15 տուն հայ, 20 տուն մահմեդական բնակչություն[10]:

Միջինը՝ 15 տուն, 86 շունչ հայ, 27 տուն, 256 շունչ թուրք բնակչություն:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Թոփալ Չավուշը ջրառատ, աղբյուրաշատ, ծաղկաստաններով հարուստ գյուղ էր: Բնական պայմաններն օգտագործելով՝ հնագույն ժամա-

[1] Նույն տեղում:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[3] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 164:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[6] ԳԱԹ, նույն տեղում, թ. 16:
[7] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 170:
[8] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[9] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 275, թ. 11, 12:

նակներից բնակչությունը զբաղվում էր մեղվաբուծությամբ: Զբաղվում էին նաև երկրագործությամբ, անասնապահությամբ:

Գյուղն ունեցել է Ս.Հովհաննես եկեղեցի՝ 500 լիրա հասույթով: Բագրատունյանց վարժարանն ուներ 8 աշակերտ և 900 լիրա հասույթ[1]: Հ.Էփրիկյանը հաշվում է 125 շունչ հայ, 174 շունչ թուրք բնակչություն[2]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 12 տուն, 120 շունչ հայ և 450 շունչ թուրք բնակչություն[3]: Մ.Միրախորյանի հաշվումներով, գյուղում ապրում են 8 տուն հայ, 29 տուն մահմեդական[4]: Ա-Դոն ընդունում է 35 տուն հայ, 150 տուն մահմեդական բնակչություն վիճակագրությունը[5]:

Միջինը՝ 18 տուն, 123 շունչ հայ, 89 տուն, 312 շունչ թուրք բնակչություն:

Իլիճա, Ելիջա, Իլիճե, Իլիչա, Իսգու, Կլիջա, Ջերմուկ, Սոուկ Ջերմուկ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս-արևմուտք, 12 կմ հեռավորության վրա, շամբից հարավ: Ենթադրվում է, թե Իլիճան գտնվում է հնագույն ժամանակներից հիշատակվող Էլաեիա բնակավայրի տեղում: Ավանդություն կա այն մասին, որ գյուղի ջերմուկները եղել են Անատոլիոս զորավարի բաղնիքները: Գյուղի հետ կապված է նաև մի իրողություն, երբ 114թ. հայոց թագավոր Պարթամասիրը ներկայանում է հռոմեական կայսր Տրոյանոսին (98-117թթ.) և նրա ոտքերի առաջ է դնում թագը՝ հետ ստանալու հույսով: Սակայն կայսրը նրան գահազրկում է և հեռացնում իր բանակատեղից:

Իլիճայի ջերմուկները Կարնո նահանգի ամենահամբավավոր բուժիչ ջրերն էին, որտեղ տարվա բոլոր եղանակներին, հատկապես գարնանն ու ամռանը, այցելել են բազմաթիվ հիվանդներ ու հովեկներ: Բացի այդ, գյուղը գտնվում էր նաև Տրապիզոն-Էրզրում-Պարսկաստան առևտրային ճանապարհի վրա, և գյուղում կառուցվել են իջևանատներ, սրճարաններ, առևտրական գրասենյակներ, խանութներ, կրպակներ, շուկաներ:

Գյուղի բնակչությունն ուներ բազմազան զբաղմունքներ: Նրանք երկրագործներ էին, անասնապահներ, այգեգործներ, պարտիզպաններ: Տարածված էր հատկապես դերձակությունը:

[1] ԳԱԹ, նույն տեղում, թ. 16:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 300:
[3] ԳԱԹ, նույն տեղում, թ. 16:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 169:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 173:

Տնտեսական և քաղաքական, կրոնական հալածանքներն այստեղ ևս խաղում էին իրենց քայքայիչ դերը: Գյուղի բնակիչների մի մասը, ընկնելով ծանր տնտեսական վիճակի մեջ, դիմում էր պանդխտության:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 2000 լիրա հասույթ, Լուսինյան վարժարանը՝ 30 աշակերտ և 1500 լիրա հասույթ[1]:

1872-1873թթ. գյուղն ունեցել է 33 տուն, 300 շունչ հայ և 15 տուն, մոտ 90 շունչ թուրք բնակչություն[2]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղում ապրել է 40 շունչ հայ և 140 շունչ թուրք բնակչություն[3]: Հ.Էփրիկյանը հաշվում է 455 շունչ հայ, 110 շունչ թուրք բնակչություն[4]: Ղևոնդ Ալիշանը գյուղում հաշվում է 30 տուն բնակչություն[5]: «105 տնուոր բնակչօք» վիճակագրությունն ընդունում է հեղինակներից մեկը[6]: Կարինի առաջնորդարանն ու Ա-Դոն հայտնում են 80 տուն հայերի, 60 տուն մահմեդականների մասին[7]: Գրեթե նույն տեսակետին է արխիվային փաստաթղթերից մեկի հեղինակը: Նա գյուղում հաշվում է 80 տուն, 300 շունչ հայ, 65 տուն, 700 շունչ թուրք բնակչություն[8]:

Միջինը՝ 51 տուն, 484 շունչ հայ, 48 տուն, 462 շունչ թուրք բնակչություն:

Բլուր, Պլուր, Պուլուր գյուղը գտնվում էր Կարինից արևմուտք, 12 կմ հեռավորության վրա, Կարնո դաշտում, Եփրատի ձախ ափին: Գյուղից հյուսիս-արևմուտք Աղորեն գյուղն է, հարավ-արևելք՝ Արշենի գյուղը: Հին, պատմական բնակավայր է: Երկկամարյա կամրջով, որը գցված է Իլիճա գետակի վրա, կապվում է դաշտի մյուս բնակավայրերի հետ: Արծն քաղաքի կործանումից հետո բնակչությունն ապաստանել է Բլուր գյուղում: Հնություններից են գյուղի տարածքում գտնվող սահմանաքարերը, որոնք տեղադրվել են Արտաշես Ա-ի ժամանակներում: Գյուղը բարեկեցիկ է, կան հարուստներին պատկանող երկհարկանի տներ, մնացածները գրեթե գետնափոր են: Գյուղն ունի անուշահամ և սառնորակ աղբյուրներ:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

---

[1] ԳԱԹ, նույն տեղում, թ. 16:
[2] ՏԲ, հ. 2, էջ 513:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[5] *Ղևոնդ Ալիշան,* Տեղեկագիր, էջ 37:
[6] «Բազմավեպ», նշված համարը, էջ 469:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 61:
[8] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 174:

Գյուղի Ս.Գևորգ եկեղեցին ուներ 1000 լիրա հասույթ: Վահագնյան վարժարանի հասույթը գոյանում էր հանգանակությամբ և կազմում էր 2000 լիրա: Վարժարանն ուներ 30 աշակերտ[1]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 20 տուն, 20 շունչ հայ և 130 շունչ թուրք բնակչություն[2]: Հ.Էփրիկյանը հաշվում է 236 շունչ հայ, 145 շունչ թուրք[3]: Մ.Միրախորյանի հաղորդմամբ, հայերը կազմում էին 20 տուն, մահմեդականները՝ 18[4]: Կարինի առաջնորդարանն ու Ա-Դոն գրանցում են 37 տուն հայ, 32 տուն մահմեդական[5]: Հեղինակներից մեկն էլ վկայում է, որ 20-րդ դարի սկզբներին գյուղն ուներ 70 տուն, որից 40-ը հայկական էր[6]:

Միջինը՝ 29 տուն, 213 շունչ հայ, 25 տուն, 137 շունչ թուրք բնակչություն:

Արշունի, Արշնի, Արշանի, Արշավան, Արշակունի գյուղը գտնվում էր Բլուր գյուղի արևելյան մասում, Կարինից արևմուտք, 13 կմ հեռավորության վրա, Մեոր ղիվլիք գյուղի հյուսիսարևելյան կողմում: Գտնվելով Կարնո բարերար դաշտում՝ գյուղում հատկապես զբաղվում էին հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ:

Գյուղի Ս.Մինաս եկեղեցին ուներ 1000 լիրա հասույթ: Տիգրանյան վարժարանի հասույթը 200 լիրա էր և գոյանում էր հանգանակությունից: Վարժարանում սովորում էր 30 աշակերտ[7]:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 23 տուն, 200 շունչ հայ և 6 շունչ թուրք բնակչություն[8]: 1880թ. գյուղն ունեցել է 242 շունչ բնակչություն, որից 227 շունչը հայեր էին[9]: 227 շունչ հայ, 15 շունչ թուրք է գրանցում Հ.Էփրիկյանը[10]: Մ.Միրախորյանի վիճակագրությամբ, գյուղում ապրում էին 17 տուն հայ, 3 տուն թուրք[11]: Ա-Դոն, ընդունում է 30 տուն հայերի, 2 տուն մահմեդականների վիճակագրությունը[12]: 20 տուն բնակչու-

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 17:
[2] ԳԱԹ, նույն տեղում, 17:
[3] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 168:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 174:
[6] ՏԲ, հ. 1, էջ 704:
[7] ԳԱԹ, նույն տեղում, թ. 17:
[8] Նույն տեղում:
[9] ՏԲ, հ. 1, էջ 477:
[10] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[11] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 170:
[12] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 174:

թյան գոյությունը հաստատում է նաև հեղինակներից մեկը[1]: 20-րդ դարի սկզբին 100 տուն բնակչության մասին է վկայում ՏԲ հեղինակը[2]: Արխիվային փաստաթղթերից մեկը տեղեկացնում է, որ 1896թ. գյուղն ունեցել է 30 տուն հայ, 15 տուն թուրք բնակչություն[3]:

Միջինը՝ 27 տուն, 118 շունչ հայ բնակչություն, 17 տուն թուրք բնակչություն:

Զիֆթլիկ, Զիֆթլիք, Զիֆտլիկ գյուղն անվանվում էր նաև Կակառիմ, Կակառիչ: Որոշ աղբյուրների վկայությամբ, համարվում էր գյուղաքաղաք[4]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրության մեջ չի հիշատակվում ոչ Զիֆթլիկ, ոչ էլ Կակառիճ անվանումը: Ցուցակում, սակայն, կա մեկ գյուղանուն՝ *Զիվորջիկ*, որի թե՛ եկեղեցու, թե՛ վարժարանի անվանումները, բնակչության մասին վկայությունները համապատասխանում են Զիֆթլիկ-Կակառիճի տվյալներին: Մնում է ենթադրել, որ գուցե այդ էլ հենց Զիֆթլիկն է, բայց այլ, մեզ անծանոթ անունով, որովհետև հնարավոր չէր, որ ազգային գործիչն անտեսեր գյուղը և նրա մասին տեղեկություններ չհաղորդեր, քանզի Կակառիճը համարվում էր Կարնո գավառի թե՛ խոշոր, թե՛ նշանավոր գյուղերից մեկը:

Գյուղը գտնվում էր շամբից հարավ, Կարինից հյուսիս-արևմուտք, 8 կմ հեռավորության վրա՝ Կան, Շեխնոց, Կեզ գյուղերի հարևանությամբ, Տրապիզոն-Պոլիս ճանապարհի հատման վայրում:

Բնակչությունը, բացի երկրագործությունից, անասնապահությունից, զբաղվում էր նաև արհեստներով: Հատկապես տարածված արհեստ էր հյուսնությունը: Բնակիչների մի մասն էլ զբաղվում էր շամբից, Արածանիից ձուկ որսալով, որովհետև գետից ու լճից հեռու էր գրեթե 2 կմ: Գյուղը հայտնի էր նաև իր սայլապաններով:

Գաբրիել հրեշտակապետին նվիրված եկեղեցին կառուցվել էր 1838թ.[5]: Գյուղի մոտակայքում է Ս.Մինաս ուխտատեղին: Եկեղեցին ուներ 3000 լիրա հասույթ, Հայկազյան վարժարանը՝ 2500 լիրա հասույթ, 120 աշակերտ[6]:

1880թ. գյուղն ունեցել է 1337 բնակիչ, որից 1143-ը հայեր էին[7]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղում ապրում էին 98 տուն,

[1] «Բազմավեպ», նշված համարը, էջ 470:
[2] ՏԲ, հ. 1, էջ 477:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 114, թ. 127, 128:
[4] ՏԲ, հ. 2, էջ 905:
[5] *Քոսեան Հ.,* Բարձր Հայք, հ. Բ, Վիեննա, 1926, էջ 150:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 17:
[7] ՏԲ, հ. 2, էջ 905:

1300 շունչ հայեր, 200 շունչ թուրքեր[1]: Բնակչության գրեթե նույն քանակն է հայտնում նաև Հ.Քոսյանը՝ 200 տուն հայ, 50 տուն թուրք[2]: Հ.Էփրիկյանը գյուղում հաշվում է 1143 շունչ հայ, 234 շունչ թուրք[3]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է 200 տուն հայ, 25 տուն թուրք բնակչություն[4]:

Միջինը՝ 166 տուն, 1221 շունչ հայ, 37 տուն, 148 շունչ թուրք բնակչություն:

Կան, Գան, Կանա, Կեան, Կյան, Քիան, Քյան գյուղը գտնվում է Կարինից հյուսիս-արևմուտք, մեկ ժամ հեռավորության վրա:

Կարծիք կա, թե գյուղի բնակիչները գաղթել են Անիից: 11-րդ դարում, երբ քոչվորները սրի քաշեցին բնակչությանը, ավերեցին ու թալանեցին հայոց տիեզերական մայրաքաղաքը, զարմանքով նկատեցին, որ «նրանք կան»: Այս արտահայտությունից էլ, ենթադրվում է, առաջացել է գյուղի անունը: Ինչպես վկայում է հեղինակներից մեկը, գյուղն իր սովորություններով, կենցաղով, լեզվով տարբերվում է շրջակա և Կարնո դաշտի մյուս գյուղերից[5]:

1879թ. գյուղ է այցելում հայազգի խոշոր զորավար, Բայազետի հերոս, գեներալ Արշակ Տեր-Ղուկասովը: Նրա պատվին կազմակերպվել է ճոխ ընդունելություն:

Գյուղի մասին Մ.Միրախորյանը գրում է. «...դաշտավայրի բոլոր գիւղերու մեջ բազմահայութեամբ առաջինն է, զոր կրնամք գաւառից Գիւղաքաղաք կամ Մայրագիւղ սեպել»[6]:

13-14-րդ դարերում գյուղը համարվել է գրչության կենտրոն: Այնտեղ ընդօրինակվել և գրվել են ձեռագրեր:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Տարածված արհեստներից էին քարագործությունը, որմնադրությունը, հյուսնությունը: «Բնակիչք աւելի արհեստաւոր են քան թէ հողագործ»,- գրում է Մ.Միրախորյանը[7]:

Բացի արհեստներից, կանցիները նաև արհեստասեր էին: Եկեղեցական և ժողովրդական տոնակատարությունների ժամանակ տարածվում էր երգը, խրոխտ պարերից արթնանում էին լեռները:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 17:
[2] *Քոսեան Հ.,* նշված գիրքը, էջ 155:
[3] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 60:
[5] «Բազմավէպ», նշված համարը, էջ 471:
[6] *Միրախորեան Մ.,* Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, հ. Ա, Կ.Պոլիս, 1884, էջ 157:
[7] Նույն տեղում:

Գյուղի Ս.Փրկիչ կամ Ամենափրկիչ եկեղեցին հիմնվել է 1837թ.: Չորս քահանաներ էին պաշտոնավարում եկեղեցում, որի հասույթը կազմում էր 4000 լիրա[1]: Փրկչյան ծաղկոցը կամ վարժարանն ուներ 250 աշակերտ, հանգանակություններով գոյացած 2000 լիրա հասույթ[2]:

Գյուղում կային նաև երկու մատուռներ՝ Լուսաղբյուր և Խանկարուր: Վերջինիս կանցիները դիմում էին, երբ ցանկանում էին վատ եղանակը վանել:

Մ.Միրախորյանը վարժարանի աշակերտների քանակը նշում է 120, որից 25-30-ը՝ աղջիկներ[3], Հ.Քոսյանը՝ 110[4]: Թերևս, այս հակասական տեղեկությունների պատճառը ժամանակը և ձեռքի տակ ունեցած չճշգրտված վկայություններն էին, ինչպես նաև հալածական վիճակը, երբ վարժարանները փակվում ու վերաբացվում էին՝ իրենց ազդեցությունը թողնելով նաև աշակերտների քանակի վրա:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 280 տուն, 2060 շունչ զուտ հայ բնակչություն[5]: Մ.Միրախորյանը հաշվում է 200 տուն հայ, 80 տուն մահմեդական[6]: Հեղինակներից մեկն էլ գրում է, որ 1878թ. գյուղն ունեցել է 313 տուն, 2400 շունչ հայ բնակչություն, 64 տուն, 340 շունչ թուրքեր[7]: Հ.Էփրիկյանի վկայությամբ, գյուղում ապրել են 2242 շունչ հայեր, 312 շունչ թուրքեր[8]: Ղևոնդ Ալիշանը հայտնում է երկու տեղեկություն՝ 500 և 280 տուն, բայց իր վերաբերմունքը չի հայտնում նրանց նկատմամբ[9]: Ա-Դոն, կրկնելով Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը, ընդունում է 290 տուն հայ, 100 տուն մահմեդականների գոյությունը[10]:

Միջինը՝ 212 տուն, 1772 շունչ հայ, 100 տուն, 244 շունչ թուրք բնակչություն:

Կեզ, Կերզ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս-արևմուտք, Զիֆեթլիկից՝ հարավ-արևմուտք, Բլուրից՝ հյուսիս-արևմուտք: Ավանդության համաձայն, գյուղը հնում եղել է մարդաշատ ու ընդարձակ: Բայց ջրհեղեղը տանում է գյուղի ճիշտ կեսը, և գյուղը 19-րդ դար հասնում է այն վիճակով ու բնակչությամբ, որին կծանոթանանք ստորև:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[2] Նույն տեղում:
[3] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 157:
[4] *Քոսեան Հ.,* Բարձր Հայք, հ. Բ, Վիեննա, 1926, էջ 125:
[5] ԳԱԹ, նույն տեղում, թ. 16:
[6] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 157:
[7] ՏԲ, հ. 2, էջ 933:
[8] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[9] «Բազմավեպ», նշված համարը, էջ 471:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 174:

Գյուղի պատմական վայրերից էին 1877-1878թթ. պատերազմի ժամանակ Տեր-Ղուկասովի հրամանով կառուցված դիրքերը, խրամատները, որոնք Ղևոնդ Ալիշանն անվանում է «հողաբլրակներ»[1]:

Գյուղի Ս.Մինաս եկեղեցին կառուցվել է դեռևս 1790թ.: Այն ունեցել է 2500 լիրա հասույթ, Արամյան վարժարանը՝ 2000 լիրա հասույթ և 100 աշակերտ[2]: Գյուղում կային Ս.Կիպրիանոս և Շեկ ավետարան ուխտատեղիները: Կեզն ուներ անուշահամ աղբյուրներ, եղանակը զով էր, ձմեռը՝ ձյունաշատ: Գյուղը գտնվում էր Կարին-Տրապիզոն ճանապարհին և մասնակցում էր առևտրական գործարքներին՝ փոխանակության ու վաճառքի հանելով դաշտերի ու այգիների բերքը:

Բնակչությունը զբաղվում էր նաև անասնապահությամբ, արհեստներով: Արհեստավորներից շատերը, օգտվելով առիթից, որ գյուղը մոտ էր Կարինին, աշխատում էին քաղաքում:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 75 տուն, 800 շունչ հայ և 140 շունչ թուրք բնակչություն[3], Հ.Էփրիկյանը՝ 776 շունչ հայ, 121 շունչ թուրք[4]: Ղևոնդ Ալիշանը գյուղում գրանցում է 40 տուն բնակչություն[5]: Հ.Քոսյանը վկայում է 130 տուն հայերի, 30 տուն թուրքերի մասին[6]: Գրեթե նույն քանակն է ընդունում Ա-Դոն՝ 130 տուն հայ, 30 տուն թուրք[7]:

Միջինը՝ 97 տուն, 735 շունչ հայ, 30 տուն, 130 թուրք բնակչություն:

Կարնո գավառի նշանավոր գյուղերից էին նաև Խաչկավանքը, Խնորշենը, Սալաձորը, Էպլենդին, Ղայափան, Յոզպեքը, Թիթկիրը, Անկառիճը, Մեորդվլիքը, Բրթոնքը, Ճիպոտը, Ագրակը, Արեգին, Կարմրիքը, Մնկասուրը, Սոկիվթլին, Արքունին, Մնկառիճը և այլն:

Գ.Սրվանձտյանցը գավառակում հաշվում է 47[8], Հ.Էփրիկյանը՝ 205[9], Ա.Մելքոնյանը՝ 19-րդ դարի առաջին կեսի համար 120 գյուղ[10]:

---

[1] «Բազմավեպ», նշված համարը, էջ 471:
[2] ԳԱԹ, նույն տեղում, էջ 17:
[3] ԳԱԹ, նույն տեղում, էջ 17:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 301:
[5] «Բազմավեպ», նշված համարը, էջ 471:
[6] *Քոսեան Հ.,* նշված գիրքը:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 174:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 19:
[9] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 201:
[10] *Մելքոնյան Ա.,* Երզրում, Ե., 1994, էջ 160:

Ց ՈՒ Ց Ա Կ

Կարինի գավառների հայաբնակ գյուղերի
(հաշվարկը կատարված է միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Կան	212	1772
Օձնի	194	1760
Ջիֆթլիկ	164	1277
Աշկալա	170	1194
Ջիթող	205	818
Կեզ	97	735
Մուտուրկա	100	664
Հինձք	82	627
Ղարարջ	85	600
Ումուտում	69	467
Կրիճք	89	463
Թարքանի	75	450
Իլիճա	54	450
Դվնիկ	59	428
Շխնոց	55	428
Գեղախոռ	43	348
Ըղտաձոր	46	310
Դիվարգոմ	43	302
Արծաթի	44	297
Ճինիս	37	283
Սովուք Ջերմուկ	33	265
Շեփեկ	35	263
Գոմք	34	261
Թվանջ	38	248
Արշունի	34	245
Թոփալ Չաուշ	19	311

	տուն	շունչ
Բլուր	30	255
Գգըլ Քիլիսե	26	210
Երկան Մանսուր	16	109
Երկնիստ	14	96
	2284	15904

Բաբերդի գավառ

Ճորոխ գետի վերին հոսանքում, նրա ակունքների մոտ տարածված հովիտներում և ալպյան լեռնալանջերում, հյուսիսային Խաղտյաց լեռներ հասնող, արևմուտքում՝ Տրապիզոնի նահանգ, հարավում՝ Կարին, արևելքում՝ Սպերի գավառ սահմանների մեջ տեղավորված է Կարինի նահանգի Բաբերդ գավառը:

Գավառի մասին Հ.Կարնեցին գրում էր. «Ելանէ ձկունքաթիւ եւ զանազան... Եւ է երկիրս այս հայալից, ջրաւետ, խոտալիր, ոչխարօք եւ անասնօք ի լի, իւղ եւ մեղր սպիտակ եւ անթիւ, որ հիանալի է տեսօղոցն. եւ ունի սինօռ մինչեւ ի Հոռոմոցն եւ Սև ծովու յափն եւ Ըսպիրու»[1]:

Արտաշեսյան հարստության ժամանակ Բաբերդի գավառը գտնվում էր Մեծ Հայքի կազմում: Արշակունիների թագավորության ժամանակ գավառը պատկանում էր Բագրատունիների նախարարական տանը: Հայաստանի առաջին բաժանումից հետո (387թ.) Բաբերդի գավառը մտավ Բյուզանդական կայսրության կազմի մեջ (395թ.): 11-րդ դարում գավառը ենթարկվեց սելջուկների ավերիչ արշավանքներին: 13-14-րդ դարերում գավառի վրա իշխանությունը հաստատեց Իկոնիայի սուլթանությունը, ապա հայտնվեցին ակ-կոյունլուները: 17-րդ դարում ավարտվեցին թուրք-պարսկական պատերազմները, և Բաբերդի գավառը վերջնականապես միացվեց Օսմանյան կայսրությանը: Վարչական պարբերաբար կրկնվող բաժանումների ընթացքում գավառն ընդգրկվում էր հարևան այս կամ այն գավառի, նահանգի կազմում: 1882թ. կազմվեց Բաբերդի գավառը, որը մտնում էր Կարինի նահանգի մեջ:

Բացի Բաբերդի գոգավորությունից, որն ունի 18 կմ երկարություն և 10 կմ լայնություն, գավառի մնացած շրջանները ևս նպաստավոր են գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար: Եթե նկա-

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 16:

տի ունենանք նաև գավառի ջրային պաշարները, ապա կարող ենք վստահորեն ասել, որ այն ապահովված էր նաև բարձր բերքատվությունը: Գավառն արտահանում էր հիմնականում հացահատիկ, բանջարանոցային և այգեգործական պտուղներ, մեղր, անասուններ, փայտ: Ունենալով բազմազան կլիմա՝ գավառը նպաստավոր էր նաև անասնապահության համար, որովհետև կային խոտառատ լեռնալանջեր ու արոտավայրեր: Ծաղկավետ մարգագետիններն ու սարալանջերը ծառայում էին մեղվաբուծության զարգացմանը:

Գավառ այցելած բանահավաքներից մեկը նրա բնությունը նկարագրում է այսպես. «...օդը շատ հանդարտ է ու շքեղ, վարդազարդ լեռներ ու շքեղազարդ բլուրներ, ձորեր ու հովիտներ, գույնզգույն ականց պես կանաչ, կարմիր, ալ նարնջի կփողփողին, գեղանկար արտեր ու դաշտեր բյուր հազար պճրանքով շփացած կճխան ու կխայտան: Սոխակի ձայն ընդ բլբուլին, ճնճղուկն ընդ սարեկին, լծե-լծե ընդ ապռնակին հովիտն և ակն, անտառն ու պարկ ի դայլայլիկս կօրորին ու կըփողեն»[1]:

Գավառի տնտեսության զարգացմանը նպաստում էր Տրապիզոն-Թավրիզ առևտրական ճանապարհը: Ճիշտ էր Ա-Դոն, երբ գրում էր. «Բաբուրդի գաւառը տնտեսապէս և մտաւորապէս աւելի բարձր է կանգնած, քան նրան կից միւս գավառները. նախ նա հարուստ է բերքերով, հացահատիկներից և ընդեղէններից բացի նա արդիւնաբերում է այլն. երկրորդ՝ նա գտնւում է Տրապիզոնից դէպի Էրզրում տանող մեծ ճանապարհի վրա, որի շնորհիւ թե նիւթիապէս է շահւում և թէ անմիջապէս կապւած լինելով Տրապիզոնի հետ, նրանից ազդւում է մտաւորապէս և կուլտուրապէս»[2]:

Պարխարյան լեռնաշղթայի Վավուկ և Զիաբեթ գագաթները, Օթլըզ և Քոփ լեռնաշարքն այն ակունքներն են, որտեղից սկիզբ են առնում գավառը ողողող Ճորոխ գետը և նրա մի քանի վտակները: Այնուհետև, Ճորոխը, երկու մասի բաժանելով գավառակենտրոն Բաբերդը, ոլորուն շարժվում է առաջ և ողողելով գավառի հյուսիսային ծայրագյուղերը՝ թափվում է Սև ծով:

Գավառի գյուղերի քանակի մասին ունենք մի շարք տեղեկություններ ու վկայություններ, որոնք, սակայն, իրարամերժ են ու կասկածելի:

Ա-Դոն հայտնում է, որ գավառն ունի 169 գյուղ, որից 30-ը հայաբնակ են[3]: ՀՍՀ համապատասխան բաժինը հավաստում է նույն տեղեկու-

[1] *Տէվկանց Ա.,* Այցելություն ի Հայաստան 1878թ., Երևան, 1985, էջ 28:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 193:
[3] Նույն տեղում:

թյունը[1]: Արխիվային փաստաթղթերից մեկը հաղորդում է, որ գավառակում կային 165 բնակավայրեր: Յուրաքանչյուր բնակավայրում միջին հաշվով բնակվում էր 68 մարդ կամ 13-14 ընտանիք[2]: Ա.Ծոցիկյանը համոզում է, թե գավառն ունեցել է 186 գյուղ, նրանցից 30-ը հայկական են[3]: Ավելի ընդարձակ վկայություն է ներկայացնում ՏԲ համապատասխան բաժնի հեղինակը. «Տարբեր աղբյուրների տվյալներով՝ Բ գավ. 1880թ. ուներ 141 գ. 18710 հայ, թուրք և հույն բնակիչներով: Հայերի թիվը հասնում էր 4472 մարդու, 1898թ. գավառի գյուղերի թիվը ցույց է տրվում 180, հայաբնակը՝ 29, 65.000 խառը բնակչությամբ, որից հայեր՝ 13.000»[4]: Եվս երկու արխիվային փաստաթղթեր հայկական գյուղերի թիվը ընդունում են 29 և 30[5]:

Ընդհանրացնելով ունեցած տեղեկությունները՝ կարող ենք նշել, որ գավառն ուներ 29-30 հայկական գյուղեր, որոնցում ապրող հայերի քանակը, ըստ Ա-Դոյի՝ 11.914 շունչ էր[6]: Արխիվային երկու փաստաթղթեր հաղորդում են հայ բնակչության նույն քանակը՝ 17.595 և 17.865: Վերջնական չի կարելի ընդունել հայ բնակչության նշված քանակը, որովհետև գրեթե բոլոր հեղինակներն անուշադրության են մատնում թեկուզ գավառակենտրոն Բաբերդի բնակչության թիվը: Եթե մեր պայմանական ընդունած 17-18.000 հայերի քանակին ավելացնենք քաղաքի բնակչությունը, ապա գավառակը կունենա 17.000 + 2400 = 19.400: Ավելին, Ա-Դոն, ընդունելով գավառի բնակչության քանակը 11.914 (29 գյուղերի 1702 տների անդամների թիվն ընդունում է 7 և ստանում է այդ արդյունքը), մեկ այլ տեղում, ուսումնասիրելով Կարինի նահանգի մի քանի գյուղերի ընտանիքների անդամների քանակը, հայտնում է, որ նահանգի ընտանիքների անդամների միջին քանակը պետք է հաշվել 11,4 մարդ: Անհասկանալի է մնում նաև այն, թե ինչու Ա-Դոն, Կարինի առաջնորդարանի տեղեկությունն ընդունելով, այն է՝ գավառն ունի 30 հայաբնակ գյուղ, 210 տուն[7], հանգում է 11.914 թվին, այն դեպքում, եթե նշված 11.914-ը բազմապատկենք թեկուզ յոթով, ապա կստանանք 83.398 հայ բնակչություն: Պարզվում է, որ բանահավաքը գավառի ընտանիքի

[1] ՀՍՀ, հ. 2, Ե., 1976, էջ 194:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, գ. 1, գ. 286, թ. 30:
[3] *Ծոցիկյան Ա.,* նշված գիրքը, էջ 1:
[4] ՏԲ, հ. 1, Ե., 1986, էջ 526-527:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 165, թ. 3-5, գ. 146, թ. 2:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 226:
[7] Նույն տեղում, էջ 234:

անդամների միջին թիվն ընդունում է 5,5, քաղաքի ընտանիքներինը՝ 6 մարդ, այսինքն՝ ամենացածր մակարդակը[1]:

Այժմ փորձենք պարզել գավառակի հայկական գյուղերի քանակը՝ համեմատություն անցկացնելով ունեցած տեղեկությունների միջև: Համեմատություններից պարզվում է, որ գավառակում կար 62 հայկական գյուղ: Համեմատությունն անցկացրել ենք Ա-Դոյի, արխիվային երկու փաստաթղթերի միջև, որովհետև մնացած հիշատակությունները նշվածների կրկնությունն են: Այն կարծիքին չենք, թե իրոք գավառակում կար 62 հայկական գյուղ: Մեր նպատակն է ցույց տալ, թե ինչքան են հեռու իրական և ճշմարտացի վկայությունները, որովհետև վիճակագիրներն ու բանահավաքներն ուշադրության կենտրոնում չեն պահել գյուղերի տարբեր անունները, խառը բնակչություն ունեցողները և մեզ են հրամցնում դժվարությամբ ձեռք բերված տեղեկություններ, որոնք, սակայն, հարցին վերջնական լուծում չեն տալիս:

Քանի որ անկարելի է պարզել ստույգ վիճակագրությունը, ուստի ընդունենք, որ գավառակում կային 30 հայաբնակ գյուղեր, միջինը՝ 15.000 բնակչությամբ, 139 թուրքական, քրդական գյուղեր՝ 19.000 բնակչությամբ (3331 x 6 = 19.986՝ ըստ Ա-Դոյի): Այս դեպքում էլ չի հաստատվում հեղինակներից մեկի այն պնդումը, թե գավառակում կային 65.000 խառը բնակիչներ[2]: Այս անհամաձայնությունների պատճառը պաշտոնական վիճակագրության բացակայությունն է և մեր ունեցած տեղեկությունների կողմնակալությունը: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ Ա-Դոն 30 գյուղերից միայն 23-ում է հաշվում մահմեդականներ, իսկ արխիվային փաստաթղթերից մեկը՝ 30-ից միայն 9 գյուղում, ապա անկարելի է ընդունել նշված թվերը: Այսինքն՝ մեր ստացած տեղեկությունները թերի են: Գյուղերի, տների և բնակչության քանակի առթիվ ունենք չորս վկայություն: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գավառակի 30 գյուղերում ապրում էին 2102 տուն, 14.714 շունչ հայեր[3]: Հ.Էփրիկյանը վկայում է 1700 տուն, 11.900 շունչ հայերի մասին[4]: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ հայերի քանակը 17.595 է (2513 տուն- Հ.Զ.)[5]:

[1] Նույն տեղում, էջ 240-241:
[2] ՏԲ, հ. 1, էջ 527:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 226:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 165, թ. 3-5:

Երկրորդ արխիվային փաստաթուղթը վկայում է գրեթե նույն քանակի հայ բնակչության մասին՝ 17.865 (2552 տուն- Հ.Զ.)[1]:

Միջինը կունենանք 2216 տուն, 15.518 շունչ հայ բնակչություն: Գավառակի նշանավոր գյուղերից էր *Ակերակը:* Այն երբեմն հիշատակվում է *Էկերեկ* անունով: Գյուղը գտնվում էր Տրապիզոն-Էրզրում ճանապարհին: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Գյուղի օգտագործելի հողատարածությունը կազմում էր 1300 դեսյատին, որից 600-ը բեկական էր, 700-ը՝ սեփական[2]: Լեռնային դիրք ունեցող գյուղը տարեկան ունենում էր 5000 փութ հացահատիկի և այլ կուլտուրաների բերք: Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 300 եզ (150 լուծ), 160 գոմեշ, 1300 գլուխ էր կազմում նախիրը, 600 գլուխ՝ հոտը: Կային նաև 10 ձի, 40 էշ[3]: Այգեգործությամբ զբաղվողներն աճեցնում էին խաղող, խնձոր, տանձ, այլ հատապտուղներ, բանջարանոցային մշակաբույսեր, որոնք հանվում էին նաև վաճառքի:

Տարածված արհեստներից էր պայտագործությունը: Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին (որոշ ողբյուրներ եկեղեցու անունը հիշատակում են Լուսաղբյուր)[4] ուներ 20 դեսյատին կալվածք: Հավանաբար, եկեղեցու մեծության կամ այլ պատճառով եկեղեցին ուներ երկու քահանա:

Գյուղն ուներ վարժարան, երեք ուսուցիչ, 220 աշակերտ: Դպրոցի գրադարանն ուներ 200 կտոր գիրք[5]:

Բնակչության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: ՏԲ համապատասխան բաժնի հեղինակը հայտնում է, որ 1872-1873թթ. գյուղն ուներ 30 տուն հայ և 30 տուն թուրք բնակչություն, իսկ 20-րդ դարի սկզբին՝ 1909թ., 110 տուն հայ, 90 տուն թուրք բնակչություն (Ա-Դոյի վիճակագրությամբ- Հ.Զ.)[6]: ՀՍՀ Բաբերդ բաժնի հեղինակը վստահեցնում է, որ գյուղը 20-րդ դարի սկզբին ուներ հիշյալ քանակի բնակչություն[7]: Արխիվային փաստաթղթերը հաղորդում են բոլորովին այլ տեղեկություններ: Այսպես, նրանցից մեկը տեղեկացնում է, որ գյուղում կային 990 շունչ հայեր և 540 շունչ թուրքեր, այսինքն, եթե եղած շնչերի քանակը բաժանենք վեցի, կստանանք մոտ 131 տուն հայ և 90 տուն թուրք[8]: Մեկ ուրիշ

[1] Նույն տեղում, գ. 146, թ. 28:
[2] Նույն տեղում, գ. 165, թ. 4:
[3] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[4] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[5] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[6] ՏԲ, հ. 1, էջ 362:
[7] ՀՍՀ, հ. 1, Ե., 1974, էջ 617:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 165, թ. 4:

փաստաթուղթ հայտնում է, որ հայերը 120 տուն էին, 1020 շունչ[1]: Ավելացնենք նաև, որ վերջին երկու փաստաթղթերն անհայտ են եղել բառարանի և հանրագիտարանի բաժինների հեղինակներին, և նրանք կրկնել են Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը, որը ոչ միշտ է համապատասխանում իրականությանը, ինչպես այս պարագայում: Պարզենք միայն մեկ իրողություն: Հիշատակած փաստաթղթերից մեկը վկայում է, որ կոտորածներից հետո (խոսքը 1894-1896թթ. ջարդերի մասին է- Հ.Զ.) գյուղի բնակիչներից փրկվել է միայն 27 մարդ: Ավելին, մյուս փաստաթուղթը նշում է, որ 1877-78 թթ. պատերազմից հետո գյուղում կային 4 ընտանիք բնիկ և 3 ընտանիք եկվոր հայեր, ուրիշ տեղեկություններ հայերի մասին չեն հայտնվում[2]: Երկրորդ փաստաթուղթը հաստատում է առաջինի վկայությունը: Ասվածը հիմնավորելու նպատակով դիմենք ևս մեկ հաշվարկի: Վերևում հայտնեցինք, որ հեղինակներից մեկը 1872-1873թթ. գյուղում ընդունում է 30 տուն հայերի և 30 տուն թուրքերի գոյությունը: Արդ, Ա-Դոն 1909թ. տվյալներով, տեղեկացնում է, որ գյուղում կային 110 ընտանիք հայ, 90 ընտանիք թուրք: Պարզվում է, որ հայկական ընտանիքները 32 տարում տվել են 80 ընտանիքի աճ, թուրքականը՝ 60: Դժվար է հաշտվել այս տեղեկության հետ այն պարզ պատճառով, որ թուրքերի բնական աճը միշտ էլ գերազանցում է հայերի աճին, որովհետև նրանց շրջանում շարունակվում էին բազմակնությունը, աճի բարձր ցուցանիշները, իսկ հայերը ենթարկվում էին հալածանքների, դիմում արտագաղթի, պանդխտության (նշված տարիներին կային 120 պանդուխտներ)[3]:

Թերևս, համոզիչ կլինի, եթե հայերի քանակն ընդունենք Ա-Դոյի և երկու արխիվային փաստաթղթերի հաղորդումների միջինով՝ 120 ընտանիք, թուրքերինը՝ 90 և համապատասխանաբար ընտանիքի անդամների քանակն ընդունելով 6, կունենանք 720 հայ և 540 թուրք բնակչություն:

Հաշվարկ կատարելու հիմնական նպատակն այն է, որ յուրաքանչյուր գյուղի վիճակագրությունը չենթարկենք նմանատիպ քննության՝ հեռու մնալով այն պատկերացումից, թե ընդունում ենք բերված տեղեկությունները և չենք ցուցաբերում վերլուծություն: Պարզապես ավելորդ կլինի յուրաքանչյուր գյուղի համար կատարել նմանօրինակ հաշվարկներ:

Բլուր գյուղը գտնվում է Ճորոխ գետի ձախ ափին, Բաբերդից արևմուտք, 30 կմ հեռավորության վրա, Երզնկա-Տրապիզոն ճանապարհի արևելյան կողմում: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ

[1] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[2] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[3] Նույն տեղում, գ. 146, թ. 2:

և արհեստներով: Ընդհանուր հողատարածությունը, որը սեփական էր միայն, կազմում էր 538 դեսյատին[1]: Գյուղն ուներ 285 եզ, 20 գոմեշ 700 գլուխ նախիր, 800 գլուխ հոտ, ձի, էշ:

Երկրագործները տարեկան ստացել են 5000 փութ հացահատիկային բերք, այսինքն՝ 80.000 կգ բերք[2]:

Գյուղի Ս.Գևորգ եկեղեցին կառուցվել է 1840թ.: Եկեղեցին ուներ մեկ քահանա: Եկեղեցին ունեցել է 8 դեսյատին կալվածք[3]: 1895թ. կոտորածներից հետո եկեղեցին վեր է ածվել մզկիթի, քահանան սպանվել է: Կոտորածից ազատված հայերը բռնի կրոնափոխ են եղել, նրանց թիվը 17 էր[4]: Գյուղից հարավ, Ս.Մարտիրոս եկեղեցու ավերակներն են: Մոտակայքում կան Ս.Եղիա և Ս.Վարվառե սրբավայրերը:

Գյուղն ունեցել է վարժարան, երկու ուսուցիչ, 80 աշակերտ:

Գյուղի հայերն ապրում էին առանձին թաղամասում, կազմում էին 700 շունչ, թուրքերը 2000 շունչ էին[5], կամ՝ հայերն ունեին 116-ից ավելի ընտանիք, թուրքերը՝ 333-ից ավելի (հաշվումները- Հ.Զ.): Մոտավորապես նույն վիճակագրությունն է ընդունում նաև հեղինակներից մեկը՝ 300 տուն, որից 112-ը՝ հայկական[6]: Ա-Դոն հաշվում է 75 ընտանիք հայ, 225 ընտանիք թուրք կամ տուն հարաբերությունը, որը եթե բազմապատկենք վեցով՝ ընտանիքի անդամների իր ընդունած թվով, կստանանք 450 շունչ հայ, 1350 շունչ թուրք արդյունքը: Գրեթե նույն տեսակետին է արխիվային մեկ այլ փաստաթուղթ՝ 75 տուն հայ, 250 տուն թուրք կամ 450 շունչ հայ, 1500 շունչ թուրք[7]:

Այսինքն՝ մենք ունենք հայկական 75-116 տուն, 450-700 շունչ բնակչություն և 188-333 տուն, 708-2000 շունչ թուրք բնակչություն արդյունքը: Ընտրենք միջինը, կունենանք՝ 94 տուն, 568 շունչ հայ բնակչություն, 249 տուն, 1389 շունչ թուրք բնակչություն:

Բլրակ գյուղը գտնվում էր Բալախոռի դաշտում, Ճորոխի ձախ ափին, Բաբերդից 16-17 կմ հեռավորության վրա:

Գյուղի մասին կան հետաքրքրաշարժ վկայություններ: Նրանցից մեկը պատմում է, որ գյուղի մոտակայքում կա «հրաշագործ աղբիւր մը, իբր ուխտավայր Ս. Կիւրակէ անունով», որը բժշկում էր բոլոր հիվանդու-

[1] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[2] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[3] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[4] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[5] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[6] ՏԲ, հ. 1, էջ 704:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2, *Ա-Դո,* էջ 195:

թյունները: Գյուղի հյուսիսային կողմում կար «Կապույտ խաչ» անունով մի խաչքար, որի պաշտամունքը կատարվում էր համբարձման տոնին: «Հարսնաքար» ավանդությունը պատմում է հիասքանչ, անզուգական գեղեցկության տեր մի աղջկա մասին: Նա փորձում էր մրցել արևի հետ և հայտարարում է. «Դուն մայր չի մտած, ես քեզմէ առաջ պիտի մտնեմ գյուղը»: Բայց գեղեցկուհին ինչքան էլ ջանում է, անկարող է հաղթել լուսատուին և մինչև կհասներ մոտակա բլրին՝ հաղթանակած արևը մայր է մտնում[1]: Ենթադրվում է, որ այս ավանդության պատճառով էլ գյուղը կոչվել է Բլրակ: Բնակչությունը զբաղվում էր հողագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Հողը բարեբեր էր: Այն կազմում էր 554 դեսյատին, որից 400-ը սեփական հողատարածություններն էին, 154-ը՝ բեկական: Հողագործները տարեկան ստանում էին 10.000 փութ բերք[2] կամ 160.000 կգ.: Հողագործության մեջ օգտագործվում էին 300 եզ, 30 գոմեշ:

Անասնապահությամբ զբաղվողները խնամում էին 500 գլուխ խոշոր և 800 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Կային նաև ձիեր, գրաստներ: Գյուղից 40 հոգի գտնվում էին պանդխտության մեջ[3]:

Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, նրա հողային կալվածքը 10 դեսյատին էր[4] (արխիվային փաստաթղթերից մեկը եկեղեցին անվանում է Ս.Փրկիչ): Վարժարանը կոչվում էր Ներսիսյան, հիմնադրվել է 1864թ.: Այնտեղ աշխատում էին երկու ուսուցիչներ, դպրոց էին հաճախում 65 աշակերտներ[5]:

Գյուղի բնակչության մասին մեզ հայտնի են հետևյալ տեղեկությունները: 19-րդ դարի սկզբներին, վկայում է հեղինակներից մեկը, գյուղն ուներ 700 տուն հայ բնակչություն[6]: Այսինքն՝ 420 շունչ բնակչություն: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղն ունեցել է 80 տուն, 520 շունչ հայ բնակչություն: Մեկ այլ փաստաթուղթ հայտնում է 547 հայ բնակչության[7], այսինքն՝ ավելի քան 91 տուն բնակչության մասին: Ա-Դոն հաշվում է 65 տուն զուտ հայ բնակչություն[8]: Գյուղի բնակիչներից միայն 17-ին է հաջողվել փրկվել կոտորածից[9]:

[1] Նույն տեղում, ֆ. 476, գ. 1, գ. 160, թ. 29, 34:
[2] Նույն տեղում, ֆ. 57, գ. 5, գ. 165, թ. 5, գ. 146, թ. 2:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[5] Նույն տեղում, ֆ. 57, գ. 146, թ. 2:
[6] ՏԲ, հ. 1, էջ 703:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2, գ. 165, թ. 4:
[8] *Ա-Դո,* էջ 195:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2:

Եթե ընդունենք միջին տարբերակը, կունենանք հետևյալ պատկերը՝ 234 տուն, 1414 շունչ հայ բնակչություն, որը, սակայն, անհավանական է: Սակայն այստեղ գործ ունենք հետաքրքրաշարժ մի իրողության հետ. փաստորեն 109 տարվա ընթացքում՝ 1800-1909թթ., հայերը նվազել են 635 ընտանիքով, ասել է՝ 3810 շնչով: Կարելի՞ է հավատ ընծայել այս փաստին, թերևս՝ այո, որովհետև, եթե 520 բնակիչներից կոտորածների ժամանակ կենդանի է մնացել 17 հոգի, ապա հաշվարկը հավանական կարելի է ընդունել: Ասվածը հաստատում է արխիվային փաստաթղթերից մեկը: Այն հայտնում է, որ պատերազմի վերջում գյուղում կային 12 ընտանիք հայեր, որից երեքը եկվորներ էին[1]: Այսինքն՝ նույն փաստաթղթի հաղորդած 91 տուն հայերից մնացել էին 9 տուն, 54 շունչ բնակչություն, կամ 82 տուն, 493 շունչ հայեր զոհվել էին:

Գրզի, Կրզի, Քրզի գյուղը գտնվում էր Բաբերդից հյուսիս-արևմուտք, հինգ ժամ հեռավորության վրա, բլրի ստորոտում: Կան երկու Քրզիներ՝ վերին և ներքին: Գյուղը երբեմն անվանվում է նաև Գրչի, Կրչի: Բայց ընդունելին և ճիշտը Գրզի, Կրզի, Քրզի ձևն է: Ենթադրվում է, որ անունն առաջացել է գզիր բառից:

Վերին Գրզին բողոքական հայերի գյուղն է, ներքինը՝ լուսավորչական:

Գյուղի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Մեծ թիվ էին կազմում պանդուխտները: Գյուղը գտնվում էր բնական աննպաստ պայմաններում: Գարնանն անընդհատ կրկնվում էին հեղեղները, որոնք մեծ վնասներ էին պատճառում, տիղմածածկ անում բանջարանոցները, դաշտերը: Գյուղում կային 200 եզ, 20 գոմեշ, 250 գլխանոց նախիր, 400 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 6 ձի, 30 էշ: Գյուղի տարեկան բերքը կազմում էր 2500 փութ[2] կամ 40.000 կգ.:

Ս.Պետրոս եկեղեցին կառուցվել է 1848թ., ունեցել է մեկ քահանա: Եկեղեցու ձախակողմյան խորանի մեջ եղել է «ահագնահայեաց պատկեր մը»: 1888թ. վերին Քրզիից հավաքել է 10.900 պիաստր աշար, ներքին Քրզիից՝ 13.600[3]:

Քրզին ուներ 46 տուն, 350 շունչ հայ բնակչություն[4]: Ա-Դոն ընդունում է 50 տուն հայ, 30 տուն մահմեդական բնակչության տարբերակը[5]:

[1] Նույն տեղում, գ. 165, թ. 4:
[2] Նույն տեղում գ. 146, թ. 2:
[3] Նույն տեղում, ֆ. 476, գ. 1, գ. 234, թ. 12, թ. 15, 16:
[4] Նույն տեղում, ֆ. 57, գ. 146, թ. 5:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:

Միջինը՝ 48 տուն, 350 շունչ հայ, 30 տուն թուրք բնակչություն:

Գյուղի վարժարանում սովորել էին 40 աշակերտ, պաշտոնավարել է մեկ ուսուցիչ[1]:

Լըսհոնք, Լսոնք, Լսհոնք, Լուսհոնք, Լուսնհոնգ գյուղը տեղավորված էր Ճորոխի վտակ Լսոնքի ափին, Բաբերդից 16 կմ արևելք: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով: Գյուղի բնակչությունը՝ 100 հոգի, գտնվում էր պանդխտության մեջ[2]: Գյուղն ուներ 155 դեսյատին հողատարածություն, որն ամբողջովին սեփական էր[3]: Տարեկան ստացված բերքը կազմում էր 8000 փութ կամ 128.000 կգ: Լեռնային կլիմա ունեցող անտառաշատ գյուղն ուներ նաև մեծ քանակությամբ անասուններ. 220 եզ, 950 գլուխ նախիր, 1800 գլուխ ոչխարի հոտ: Գյուղի վանքը կառուցվել է 1842թ., ծագումով լըսհոնգցի, արքունի ճարտարապետ Կարապետ Պալյան Ամիրայի միջոցներով, և կոչվում էր Ս.Լուսավորիչ: Ամեն տարի, շրջակա գյուղերի ուխտավորների մասնակցությամբ, նշվում էր «Գիւտ նշխարաց» տոնը: Գյուղի եկեղեցին կոչվում էր Ս.Աստվածածին:

Ղազարյան անունով վարժարանը, որ գործում էր 1870թ., ուներ 200 աշակերտ, դպրոցի գրադարանում կար 100 կտոր գիրք[4]:

Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, թե Լսոնքն ուներ գյուղական համայնք, որի մեջ մտնում էին Քօզի, Վարք, Քառօք, Բօբղա, Բողձոր, Ջրալըզ գյուղերը[5]: Ամենայն հավանականությամբ, այստեղ կա շփոթություն, որը պարզելն այնքան էլ դյուրին գործ չէ, և պարզապես արձանագրում ենք փաստը:

1872-1873թթ. գյուղն ունեցել է 59 տուն բնակչություն, որից երկուսը մահմեդական էր[6]: Մեկ այլ աղբյուր հայտնում է, որ գյուղն ունեցել է 1100 շունչ հայեր, 13 շունչ թուրքեր[7]: Մեկ այլ փաստաթուղթ հայերի քանակը հաշվում է 130 տուն, 750 շունչ[8]: Համիդյան կոտորածների ժամանակ, վկայում է նույն փաստաթուղթը, գյուղի բնակիչներից ազատվել են միայն 18 հոգի[9]: Ա-Դոն հաշվում է 120 տուն հայ, 2 տուն մահմեդական[10]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, գ. 165, թ. 2:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, ֆ. 475, գ. 1, գ. 678, թ. 11:
[6] ՏԲ, հ. 2, էջ 603:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 165, թ. 5:
[8] Նույն տեղում, գ. 1, գ. 146, թ. 2:
[9] Նույն տեղում:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:

Եթե նորից դիմենք միջինի տարբերակին, ապա արդյունքում կունենանք 102 տուն, 945 շունչ հայ, 16 տուն թուրք բնակչություն (հաշվումները կատարված են շարադրանքում ներկայացված չորս վկայությունների հիման վրա- Հ.Զ.):

Հայեք, Խայեք, Հայգք, Խայիք, Խայեկ գյուղը գտնվում է Բալախոռի դաշտում, Ճորոխի ձախակողմյան վտակ Բալախոռի ափին, Բաբերդ քաղաքից հյուսիս-արևմուտք, 8 կմ հեռավորության վրա: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Գյուղի տարեկան բերքը կազմում էր 10.000 փութ: Գյուղում կային 150 եզներ, 30 գոմեշներ, 200 գլուխ խոշոր եղջերավոր և 400 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Տնտեսական պայմանները, սակայն, անբարեհույս էին՝ գումարած ամենօրյա հալածանքները, որի պատճառով էլ 45 տղամարդ գտնվում էր պանդխտության մեջ[1]:

Գյուղն ուներ Ս.Աստվածամայր (կառուցվել է 1848թ.) և Ս.Աստվածածին եկեղեցիներ[2]: Մեկ այլ փաստաթուղթ հայտնում է երրորդ եկեղեցու գոյությունը[3]: Եկեղեցիներից մեկն ուներ 5 դեսյատին կալվածք, քահանայի անունը հայր Տաճատ էր[4]:

Վարժարանն ուներ երկու ուսուցիչ և 60 աշակերտ[5]: Գյուղի բնակչության թվի մասին հայտնվում են տարբեր տեղեկություններ: 19-րդ դարի վերջերին գյուղն ուներ 30 տուն հայ և 15 տուն այլազգի բնակչություն, հայտնում է հեղինակներից մեկը[6]: ՀՍՀ համապատասխան բաժնի հեղինակը 20-րդ դարի սկզբին հաշվում էր 52 տուն հայ բնակչություն[7]: Նույն ժամանակամիջոցում Ա-Դոն գրանցում է 45 տուն հայ և 10 տուն մահմեդական բնակչություն[8]: Արխիվային փաստաթղթերը հաղորդում են բոլորովին ուրիշ տեղեկություններ: Նրանցից մեկը հաշվում է 70 տուն, 700 հայ[9], մյուսը՝ 650 հայ, 100 թուրք[10]: Եթե նորից դիմենք հինգ տեղեկությունների միջինի տարբերակին, ապա արդյունքում կունենանք՝ 61 տուն, 366 շունչ հայ, 12 տուն, 120 շունչ թուրք բնակչություն:

[1] Նույն տեղում:
[2] ՏԲ, հ. 2, էջ 638:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2:
[4] Նույն տեղում, գ. 165, թ. 4, գ. 146, թ. 2:
[5] ՏԲ, հ. 2, էջ 638:
[6] ՏԲ, հ. 2, էջ 638:
[7] ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 10:
[8] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2:
[10] Նույն տեղում, գ. 165, թ. 5:

Հընտի գյուղը գտնվում էր Բաբերդ քաղաքից երկու ժամ հեռավորության վրա, հարավարևմտյան կողմում: Գյուղն ուներ 6000 դեսյատին հողատարածություն, տարեկան բերքը կազմում էր 10.000 փութ:

Երկրագործությունից բացի, բնակչությունը զբաղվում էր նաև անասնապահությամբ: Գյուղում կային 300 եզ, 100 գոմեշ, 502 գլխանոց նախիր, 700 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 30 ձի, 60 էշ[1]:

Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, քահանան՝ Խաչ Չիլկանյան[2]: Մեկ այլ փաստաթուղթ հայտնում է, թե գյուղն ուներ երկու եկեղեցի[3]: Եկեղեցին հանրահայտ էր ոչ միայն իր գեղեցկությամբ, այլև թանկագին սպասքի պատճառով: Եկեղեցում կային ավետարաններ, զանազան մետաղներով պատրաստված խաչեր: Գյուղացիները զբաղվում էին նաև արհեստներով: Նշանավոր էին գյուղի ատաղձագործները: 120 մարդ գտնվում էր պանդխտության մեջ, ինչը խոսում էր գյուղի ծանր սոցիալական վիճակի մասին:

Գյուղի վարժարանում սովորում էր 70 աշակերտ, աշխատում երեք ուսուցիչ[4]: Փաստաթղթերից մեկը վկայում է, որ պատերազմից առաջ գյուղն ունեցել է 65 տուն հայ, 35 տուն թուրք բնակչություն: Մեկ այլ աղբյուրի վրա հենվելով՝ նույն փաստաթուղթը հայտնում է, որ գյուղն ունեցել է 80 տուն հայ բնակչություն[5]: 80 տուն, 1000 շունչ, 900 շունչ հայ, 270 շունչ թուրք բնակչություն են հաշվում հաջորդ փաստաթղթերը[6]: Ա-Դոյի հաշվումներով, 65 տուն հայ, 35 տուն մահմեդական[7]:

Քանի որ վկայությունները տարբեր թվեր են նշում, ուստի նորից դիմենք միջինը որոշելու տարբերակին: Արդյունքում ունենում ենք՝ 88 տուն, 528 հայ, 35 տուն, 270 շունչ թուրք բնակչություն:

Մալասա, Մալամսան անասնապահությամբ, երկրագործությամբ զբաղվող գյուղ էր: Ինչպես գավառակի մյուս գյուղերում, այնպես էլ Մալասայում, բացի հացահատիկային մշակաբույսերից, մշակում էին նաև կտավատ, սիսեռ, լոբի, կաղամբ, շաղգամ բանջարանոցային այլ մշակաբույսեր: Հատապտուղներից հայտնի էին տանձը, խնձորը, կեռասը, աճում էին ընտիր խաղող ու թութ: Կարևոր զբաղմունք էր նաև մեղվա-

[1] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[2] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[3] Նույն տեղում, ֆ. 476, գ. 787, թ. 15:
[4] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[5] Նույն տեղում, ֆ. 476, գ. 1, գ. 787, թ. 15:
[6] Նույն տեղում, ֆ. 57, գ. 5, գ. 146, թ. 2, գ. 165, թ. 5:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:

բուծությունը: Հ.Էփրիկյանը վկայում է, թե «Գավառակս Սպերու հետ միասին ունի 27.000 փեթակ»[1]:

Գյուղի տարեկան բերքը կազմում էր 3500 փութ: Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 150 եզ, 20 գոմեշ, 300 խոշոր և 1200 մանր եղջերավոր անասուններ, ձի, էշ: 50 մարդ գտնվում էր պանդխտության մեջ[2]:

Վարժարանն ուներ երկու ուսուցիչ, 70 աշակերտ[3]:

Բնակչության քանակի մասին հայտնի են հետևյալ տեղեկությունները. 60 տուն[4], 397 հայ, 135 թուրք[5], 60 տուն, 800 շունչ հայ բնակչություն և այլն[6]: Ա-Դոն հաշվում է 45 տուն հայ, 30 տուն թուրք բնակչություն[7]: Միջինի տարբերակով՝ 57 տուն, 342 շունչ (30 տուն) հայ և 135 շունչ թուրք բնակչություն:

Նիլ, Նիվ, երբեմն անվանում էին *Կիվ*, ծառաշատ, ջրառատ գյուղ էր: Բնակչությունն անասնապահությունից, երկրագործությունից բացի՝ զբաղվում էր նաև ծխախոտագործությամբ: Գյուղի համախառն բերքը կազմում էր 2500 փութ: Գյուղում կային 200 խոշոր, 150 մանր եղջերավոր անասուններ, 100 եզ, 16 գոմեշ, ձի, էշ[8]:

50 մարդ գտնվում էր պանդխտության մեջ[9]:

Գյուղն ուներ վարժարան, մեկ ուսուցիչ, 40 աշակերտ[10]:

Խառը բնակչություն ունեցող գյուղում բնակվում էին 50 տուն, 250 շունչ հայեր[11]: Մեկ այլ փաստաթուղթ հաշվում էր 250 շունչ հայ, 98 շունչ թուրք[12]: Ա-Դոն և նրան կրկնելով՝ ՀՍՀ համապատասխան բաժնի հեղինակ Թ.Հակոբյանն ընդունում են 40 տուն հայերի և 210 տուն մահմեդականների գոյությունը[13]:

Համիդյան կոտորածներից փրկվել է 18 հայ[14]: Գյուղի բնակչության միջին քանակը կլինի մոտ 45 տուն, 250 շունչ հայ, 98 շունչ թուրք բնակչություն:

---

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 353:
[2] ՀՀ ՊԿՊԱ , ֆ.57, ց.5, գ.146, թ.2:
[3] Նույն տեղում, գ.165, թ.5:
[4] Նույն տեղում, գ.146, թ.2:
[5] ՀԱՀ, հ.7, Ե., 1981, էջ151:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.165, թ.5:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:
[8] ՀՀ ՊԿՊԱ,ֆ.57, ց.5, գ.146, թ.2:
[9] Նույն տեղում:
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.1, գ.146, թ.2:
[11] Նույն տեղում, գ.165, թ.5:
[12] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195, ՀՍՀ, հ. 8, Ե., 1982, էջ 290:
[13] Նույն տեղում:
[14] Նույն տեղում:

Պալախոռը, Պալախորը գավառի 100 և ավելի տուն ունեցող վեց գյուղերից մեկն էր: Կլիման նպաստավոր էր երկրագործության ու անասնապահության համար: Գյուղում կային նաև արհեստավորներ: Տարեկան բերքը կազմում էր 8000 փութ[1]: Անասնապահներն ունեին 400 խոշոր, 850 մանր եղջերավոր անասուններ, 400 եզներ, 50 գոմեշներ, ձիեր, էշեր[2]:

Գյուղում կային երկու եկեղեցի, որոնցից մեկն էր գործում: Ս.Կարապետ եկեղեցու քահանան Դավիթ Գիզյանն էր, Ս.Լուսավորիչը քահանա չուներ[3]: 70 մարդ գտնվում էր պանդխտության մեջ, կոտորածներից ազատվել էր 40 հոգի[4]: Գյուղի մոտակայքում կար Ս.Գևորգ ուխտատեղին[5]:

Փրկչյան վարժարանում սովորում էր 60 աշակերտ, աշխատում երկու ուսուցիչ[6]:

Խառը բնակչություն ունեցող գյուղում բնակվում էին 95 տուն, 530 շունչ հայեր[6], կամ՝ 530 հայ, 970 թուրքեր[7]: Ա-Դոն հաշվում է 100 տուն հայ, 140 տուն թուրք բնակչություն[8]: Միջինի տարբերակով կունենանք՝ 65 տուն, 390 շունչ 140 տուն հայ, 970 շունչ թուրք բնակչություն:

Ջահմանց գյուղի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Գյուղն ուներ մեղմ կլիմա, անտառածածկ էր, հարուստ էր բուսականությամբ: Օգտագործելի հողատարածությունը կազմում էր 405 դեսյատին: Տարեկան ստացվում էր 2000 փութ բերք[9]: Անասնապահները խնամում էին 300 գլուխ խոշոր և 200 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

Ս.Հովհաննես եկեղեցին ուներ 10 դեսյատին կալվածք: Գյուղի շրջակայքում կային Ս.Սարգիս, Ս.Հակոբ, Ս.Մինաս, Ս.Քրիստափոր սրբատեղիները[10]: Վարժարանում սովորում էր 70 աշակերտ, աշխատում էր երկու ուսուցիչ:

Գյուղն ուներ 60 տուն, 400 հայ բնակիչներ: Ուրիշ փաստաթուղթ վկայում է , որ գյուղում կային 370 շունչ հայ, 500 շունչ թուրքեր[11]: Ա-Դոն

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, գ.165, թ.5:
[4] Նույն տեղում, գ.146, թ.2:
[5] Նույն տեղում, գ.165, թ.2:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[8] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.165, թ.5:
[10] Նույն տեղում, գ.165, թ.5:
[11] Նույն տեղում, գ. 146, թ. 2:

հաշվում է 60 տուն հայ, 40 տուն մահմեդական[1]: Միջինը կունենանք 60 տուն, 370 շունչ հայ, 40 տուն, 560 շունչ թուրք բնակչություն:

Ս.Թորոս գյուղը գտնվում էր Բաբերդից հյուսիս-արևմուտք: Բերքաշատ գյուղ էր, տարեկան հավաքվում էր 15.000 փութ բերք: Օգտագործելի հողատարածությունները կազմում էին 1739 դեսյատին[2]: Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 400 գլուխ խոշոր, 300 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 260 եզ, 30 ձի, 25 էշ[3]: Մշակովի հողերի 308 դեսյատինը բեկական էր, 1431-ը՝ սեփական[4]: Գյուղից 100 հոգի գտնվում էին պանդխտության մեջ[5]:

Ս.Սարգիս եկեղեցին գործող էր, քահանան Սահակ Գինոսյանն էր: Եկեղեցու կալվածքը կազմում էր 32 դեսյատին[6]: Վարժարանում սովորում էր 60 աշակերտ, աշխատում երկու ուսուցիչ, գրադարանն ուներ 130 կտոր գիրք[7]:

Գյուղի բնակչության մասին ունենք հետևյալ տեղեկությունները. 60 տուն հայ, 700 շունչ[8], 620 հայ, 150 թուրք[9], 65 տուն հայ[10], 60 տուն հայ, 40 տուն թուրք[11]: Միջին հաշվով՝ 72 տուն, 432 շունչ հայ, 40 տուն, 150 շունչ թուրք բնակչություն:

Հեղինակներից մեկը հաղորդում է հետաքրքիր տեղեկություններ՝ նշելով, որ գյուղի ընտանիքները բազմանդամ էին, յուրաքանչյուր տուն ուներ 80-90 հոգի բնակիչ: Եթե ընտանիքների նշված քանակը բազմապատկենք նույն հեղինակի հաղորդած 65 տների հետ, կստանանք 5200-5850 հայ բնակչություն[12], որն ընդունելն անհնար է, որովհետև, նախ, գուցե եղել են բազմանդամ ընտանիքներ, կամ գյուղի բոլոր ընտանիքներն էին բազմանդամ, բայց, թերևս, պետք է կրճատվի ընտանիքների թիվը, որպեսզի ստացված արդյունքը համապատասխանի գավառի մնացած գյուղերի ցուցանիշներին. նույնիսկ, եթե գերհաշվարկ կատարենք, ապա նշված թիվը քառակի ավելի է գյուղի բնակչության միջինի ցուցանիշից:

[1] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 195:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.146, թ.2, գ.165, թ.5:
[3] Նույն տեղում, գ.146, թ.2:
[4] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[5] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[6] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[7] Նույն տեղում, գ. 5, գ. 146, թ. 2:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, գ. 165, թ. 5:
[10] ՀՍՀ, հ.4, Ե., 1978, էջ 207:
[11] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 195:
[12] ՀՍՀ, հ. 4, Ե., 1978, էջ 207:

Վարգահան, Վարգբիան գյուղը հանրահայտ է իր կենտրոնագմբեթ եկեղեցով, որը հայ ճարտարապետության եզակի կառույցներից է: Նկատի ունենալով խնդրի մեծ կարևորությունը՝ ամբողջությամբ ներկայացնում ենք եկեղեցու մասին Մորուս Հասրաթյանի վերլուծությունը:

«Վարգահանում կանգուն է ինքնատիպ հորինվածքով ութաբսիդ եկեղեցին (12-րդ դար): Նրա ութանիստ գմբեթատակ տարածության անկյուններում սյուներ են, և միայն բեմի պայտաձև խորանն ունի պատեր: Մյուս աբսիդները, որոնք հատակագծում սեղանաձև են, հաղորդակցվում են միմյանց հետ կամարակապ մեծ բացվածքներով և ծածկված են այդ կամարների և տրոմպների վրա հենվող գմբեթարդներով: Բեմի խորանն ունի երեք, իսկ մյուս աբսիդները՝ կրկնակի լուսամուտներ: Մուտքերը երեքն են՝ հյուսիսից, հարավից և արևմուտքից: Գմբեթը (չի պահպանվել) ունեցել է ութանիստ թմբուկ: Ճակատները դրսից զարդարված են կիսասյունիկներով և միայն դեկորատիվ նշանակություն ունեցող եռանկյունաձև փոքր խորշերով, որոնց մեջ գալարաձև մշակումով սյուներ են: Շքամուտքերի կիսաշրջանաձև ճակատակալ քարերից վերև ձգվում է զարդագոտի, իսկ վերջինի վրա հովհարաձև շարված դեղին ու կանաչ գույնի սեպաձև քարեր են: Ներսում կան որմնանկարների հետքեր: Վարգահանի եկեղեցին իր ուրույն հարդարանքով ու հորինվածքի կարևոր առանձնահատկություններով (միմյանց հաղորդակցվող սեղանաձև աբսիդներ, գմբեթակիր սյուներ) տարբերվում է նույնատիպ հայկական հուշարձաններից (Զորավոր, Իրինդ, Տայոց քար, Անիի Փրկիչ եկեղեցի) և կարևոր տեղ ունի Հայաստանի կենտրոնագմբեթ կառույցների զարգացման պատմության մեջ»[1]:

Գյուղի մշակովի 3850 դեսյատին հողատարածությունից 150 դեսյատինը բեկական էր, մնացածը՝ սեփական: Տարեկան ստացվում էր 8000 փութ բերք[2]: Երկրագործները որպես լծկան օգտագործում էին 400 եզ, 30 գոմեշ: Նախիրն ուներ 500, հոտը՝ 100 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, կային 30 ձի, 50 էշ: Գյուղից 60 հոգի գտնվում էր արտագնա աշխատանքի մեջ[3]:

Բացի վերը հիշատակված «ճարտարապետական նշանավոր շինուածք» եկեղեցուց, կային ևս երկու՝ Ս.Համբարձում և Ս.Աստվածածին եկեղեցիներ: Նրանցից մեկում պաշտոնավարում էր վարդապետ Վրթանես Խաչատրյանը: Եկեղեցիներից մեկն ուներ 30 դեսյատին կալվածք, մեկ

[1] ՀՍՀ, հ.11, Ե., 1985, էջ338:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, գ.5, գ.156, թ.4:
[3] Նույն տեղում, գ. 146, թ. 2:

ջրաղաց: Գյուղի շրջակայքում կային երեք սրբատեղիներ[1]: Մեկ այլ փաստաթուղթ նշում է, որ գյուղի երկու եկեղեցիներն էլ ունեին քահանա:

Գյուղի վարժարանն ուներ 100 աշակերտ, երկու ուսուցիչ: Գրադարանում կային 400 կտոր գրքեր:

Գյուղը հայաբնակ էր, այլազգիներ չկային: Բնակչությունը կազմում էր 90 տուն, 660 շունչ: Հաջորդ փաստաթուղթը նշում է 660 հայ բնակչության մասին[2]: Ա-Դոն նշում է 90 տուն հայ բնակչություն[3]:

Բարեբախտաբար, բոլոր վկայությունները համընկնում են և կարող են արձանագրել, որ գյուղում կար 90 տուն, 660 հայ բնակչություն:

Քարավարակը գավառի ամենամեծ հայաբնակ գյուղն էր: Գտնվում էր Ճորոխ գետի աջ ափին, Բաբերդից հեռու էր 8 կմ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Հողատարածությունը 10.000 դեսյատին էր, որից միայն 100 դեսյատինն էր բեկական, մնացածը սեփական հողեր էին[4]: Տարեկան ստացվում էր 8000 փութ բերք[5]: Գյուղում կար 600 եզ, 80 գոմեշ, 900 գլուխ խոշոր և 1500 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 30 ձի, 100 էշ, 110 հոգի գտնվում էր պանդխտության մեջ:

230 տուն, 2500 հայ բնակչություն է գրանցում փաստաթղթերից մեկը, հաջորդը՝1988 զուտ հայ բնակչություն[6], Ա-Դոն՝ 185 տուն հայ բնակչություն[7]: Անհամեմատ ու անհավանական տեղեկություն է հաղորդում ՀՍՀ համապատասխան բաժնի հեղինակը՝ տների քանակը նշելով 52[8]: Դիմելով միջինի տարբերակին՝ արդյունքում ունենում ենք 246 տուն, 1476 հայ բնակչություն:

Գյուղն ուներ երկու եկեղեցի, նրանցից մեկի քահանան Մինաս Ղարապարոնյանն էր[9]: Ս.Աստվածածին և Ս.Գևորգ եկեղեցիներից ոչ մեկի համար կալվածք չի հիշատակվում: Վարժարանն ուներ 150 աշակերտ, չորս ուսուցիչ, գրադարանում կար 130 կտոր գիրք: Կոտորածներից փրկվել էր 71 հոգի[10]: Զգալի թվով հայեր բռնի կրոնափոխվել էին:

[1] Նույն տեղում, գ. 165, թ. 4:
[2] Նույն տեղում, գ. 146, թ. 2, գ. 165, թ.4:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ195:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, գ.5, գ.165, թ.4:
[5] Նույն տեղում, գ.146, թ.2:
[6] Նույն տեղում, գ. 165, թ. 4:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:
[8] ՀՍՀ, հ.12, Ե., 1986, էջ 425:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, գ.5, գ.165, թ.4:
[10] Նույն տեղում, գ. 146, թ. 2:

Քսանթայը գավառի երկրորդ խոշոր հայաբնակ գյուղն էր: Այն երբեմն հիշատակվում է Քսանթագ անունով: Գտնվում էր Բաբերդ քաղաքից արևմուտք, նրանից 30 կմ հեռավորության վրա: Ուներ 1811 դեսյատին հողատարածություն: Նրանից միայն 41 դեսյատինն էր բեկական[1]: Տարեկան ստացվում էր 300.000 փութ բերք[2]: Բնակչությունը, բացի երկրագործությունից, զբաղվում էր նաև անասնապահությամբ, արհեստներով: Տարածված էր երկրագործության և քարակոփության արհեստը:

Գյուղում օգտագործում էին 850 եզ, 110 գոմեշ: Նախիրն ուներ 1700, հոտը՝ 2700 գլուխ անասուն, կային նաև 50 ձի, 100 էշ: Գյուղն այնքան բերքաշատ էր, պայմաններն՝ այնքան բավարար, որ պանդխտության էր գնում միայն 18 հոգի[3]:

Գյուղն ուներ երեք եկեղեցի, երկու քահանա[4]: Երկու եկեղեցու մասին հիշատակում է մեկ ուրիշ փաստաթուղթ՝ միաժամանակ հայտնելով նրանց անունները՝ Ս.Աստվածամայր, Ս.Եղիա[5]: Ս.Աստվածամայր եկեղեցու քահանան Գրիգոր Ներղեթյանն էր: Եկեղեցին ուներ 11.5 դեսյատին կալվածք[6]:

Վարժարանում սովորում էր 350 աշակերտ, աշխատում 5 ուսուցիչ, գրադարանն ուներ 165 կտոր գիրք[7]:

Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղն ունեցել է 200 տուն, 1773 շունչ հայ բնակչություն[8]: Ա-Դոն ընդունում է 158 տուն հայ բնակչության վիճակագրությունը[9], ՀՍՀ համապատասխան բաժնի հեղինակը՝ 170 հայերի գոյությունը՝ 20-րդ դարի սկզբին[10]:

Միջին տարբերակով կունենանք մոտ 213 տուն, 1278 հայ բնակչություն: Այժմ պարզենք հանրագիտարանի հեղինակի տեղեկությունը:

Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ կոտորածներից փրկվել է միայն 111 մարդ[11]: Այսինքն՝ մոտավորապես 11 ընտանիք: Մեկ այլ փաստաթուղթ էլ նշում է, որ գյուղում կային 8 եկվոր հայեր[12]: Այսինքն՝ հաղորդումը գրեթե համապատասխանում է իրականությանը:

[1] Նույն տեղում, գ. 165, թ. 4:
[2] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, գ. 165, թ. 4:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[8] Նույն տեղում:
[9] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:
[10] ՀՍՀ, հ.12, Ե., 1986, էջ 480:
[11] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.146, թ.2:
[12] Նույն տեղում, գ. 165, թ. 5:

Թուրք բարբարոսները հոշոտել են գյուղի ավելի քան 1100 բնակիչների:

Խուբս գյուղը գտնվում էր Ճորոխի վերին հոսանքի ձախ մասում: Բաբերդից հեռու էր 12 կմ: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ: Տարեկան ստացվում էր 8000 փութ բերք: Գյուղն ուներ 1000 գլուխ խոշոր, 3000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 420 եզ, 13 ձի, 46 էշ, 12 գոմեշ[1]:

Հանրահայտ էին Ս.Փրկիչ, Ս.Եղիշե, Ս.Վառվառե եկեղեցիները: Առաջինը կառուցվել է 541, երկրորդը՝ 1264, երրորդը՝ 1276 թվականներին[2]: Գավառի նշանավոր վանքերից էր Ս.Քրիստափորի վանքը: Հատկապես բազմաթիվ ուխտավորներ էին հավաքվում Վարդավառի տոնին: Վանքն ունեցել է 750 դեսյատին կալվածք՝ «ունի նաև մի գիւղ ամբողջ տներով և այլ կալուածքներով»[3]:

1872-1873թթ., հայտնում է հեղինակներից մեկը, գյուղն ուներ 32 տուն հայ բնակչություն[4]: Մեկ այլ փաստաթուղթ վկայում է 647 շունչ հայերի և 35 շունչ թուրքերի գոյությունը[5], 250 տուն, 1500 շունչ բնակիչ է հաշվում մեկ ուրիշ փաստաթուղթ[6]: Մի շարք հեղինակներ, հետևելով Ա-Դոյին, 20-րդ դարի սկզբին հաշվում են 90 տուն հայ բնակիչ, 5 տուն՝մահմեդական[7]: Միջինը կունենանք՝ 194 տուն, 1164 հայ, 20 տուն թուրք բնակիչ: Գյուղի վարժարանն ուներ 125 աշակերտ, երեք ուսուցիչ[8]:

Գավառի կենտրոնը *Բաբերդ* քաղաքն էր: Քաղաքը շրջապատված է ցածրադիր լեռներով: Հարավային կողմում լեռներ չկան, և այդ հատվածն էլ դառնում է կապի միջոց: Ճորոխ գետի վրա, որ քաղաքը բաժանում է երկու մասի, կառուցվել է հինգ կամուրջ: Որպես բնակավայր և բերդաքաղաք հիշատակվում է դեռևս մ.թ.ա. 3-րդ դարից: Առաջին անգամ հիշատակում է պատմահայր Խորենացին, երբ պատմում է Սանատրուկ թագավորի մահվան հետ կապված անցքերը. «Արդ, երբ Բյուրատի որդի Սմբատը լսում է Սանատրուկի (մահվան) և նրա որդիների կոտորածի զույժը, առնում է իր երկու դուստրերին՝ Սմբատանուշին ու Սմբատուհուն, տանում նստեցնում Բայբուրդում՝ քաջ մարդկանց ամ-

[1] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[2] ՏԲ, հ.2, էջ 813:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ/57, ց.5, գ.165, թ.4:
[4] ՏԲ, հ.2, էջ 812-813:
[5] Նույն տեղում, գ. 146, թ. 2:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.165, թ.5:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.146, թ.2:

րոցին պահապան դնելով, իսկ ինքը իր մի կնոջ և սակավաթիվ մարդկանց հետ գնում է մանուկ Արտաշեսին որոնելու»[1]:

Բերդը գտնվում է Կարինից 121 կմ հեռավորության վրա, ունի խիստ կլիմա, ձմեռները երկարատև են: Բաբերդի մասին Հ.Էփրիկյանը գրում է. «…կարծել կու տան, թէ Հայոց հնագոյն քաղաքներէն մին լինի սա, եւ թերեւս շինուած լինի Հայկազն Երուանդեան Տիգրանի Բաբ որդիէն, կամ լաւեւս բայ անուամբ մէկէ մը. վասն զի հնագոյները Բայբերդ կ'անուանեն: Աւանդութիւն մ'ալ կայ, թէ Սկիւթացիք շինած են Մեծն Աղեքսանդրի ժամանակ», ապա՝«Մեր հին պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Ա դարու վերջերը Երուանդայ օրերը, նոյն ատենները Սմբատ Բագրատեան քաջը»[2]:

Բաբերդը Արտաշեսյանների և Արշակունիների տիրապետությունների ժամանակաշրջանում պատկանում էր Բագրատունիներին: Հայաստանի առաջին բաժանումից հետո Բաբերդն անցավ Բյուզանդական կայսրությանը: 6-րդ դարում, Հուստինիանոս կայսրն ամրացրեց քաղաքը և կառուցեց նոր բերդ-ամրոց: 11-րդ դարում սկսվեցին սելջուկների արշավանքները: Նրանց առաջին արշավանքն ավարտվեց անհաջողությամբ, «…հանդիպի անդ գունդ մի ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փռանկք, որը յանգէաս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան. եւ յողորմութենե Աստուծոյ զօրացան գունդն Հոռոմոց, եւ յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն սպանին եւ զբազումս ընդ նմա, եւ զայլոն ի փախուստ դարձուցեալ, գառ եւ զգերի զամենայն թափեցին», բայց, շարունակում է Արիստակես Լաստիվերտցին. «նրանք չշարունակեցին հետապնդումը, որովհետեւ վախենում էին հանդիպել մեծաթիվ ուժերի»[3]:

Բայց սելջուկները երկրորդ անգամ են հարձակվում Բաբերդի վրա, գրավում են քաղաքը, ավերում, թալանում: Այնուհետև իրար հաջորդեցին Իկոնիայի սուլթանը (13-14-րդ դար), Ջելաիթյան և ակ-կոյունլի ցեղերը (14-15 դդ.), 1514թ. քաղաքը գրավեցին թուրքերը: Այնուհետև, 16-17-րդ դարերում պարսկա-թուրքական պատերազմներից հետո կնքված պայմանագրով քաղաքը վերջնականապես ընկավ թուրքական տիրապետության տակ:

Բաբերդի բնությունը պատկերավոր է նկարագրում Ատրպետը. «Բայբուրդի դաշտը, քաղաքի շրջակայքը 4-5 վերստ երկարությամբ հարաւից հիւսիս եւ քիչ նեղ արեւելքից արեւմուտք, այնպիսի գեղեցիկ

[1] *Խորենացի Մովսես,* Պատմություն Հայոց, Ե., 1962, էջ 172-173:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 350:
[3] Նույն տեղում, էջ 351:

տեսարաններ ունի, այցելուին գրաւում, յափշտակում է: Շուրջն ամեն ինչ դալար է, պարտէզներ, այգեստաններ եւ բանջարանոցներ. դալարի թանձրութիւնը իր բոլոր ջանքը դրած՝ զարդարել, աճեցրել, դրախտի է վերածել քաղաքի շրջապատը: Տարուայ որ եղանակին էլ մտնէք Բայբուրդ, բնութիւնը այնքան առատաբեր է օժտել նրան, որ միշտ զմայլելի տեսարաններ կ'ունենանք»[1]:

Քաղաքի մասին հիշատակություններ են թողել իտալացի ճանապարհորդներ Մարկո Պոլոն, Հ.Բարբարոն: 1829թ. ռուսական զորքերը գրավեցին Բաբերդը, բայց Ադրիանապոլսի պայմանագրով հետ վերադարձրին: Բաբերդից և գավառակի այլ գյուղերից, թուրքական հալածանքներից և հետապնդումներից խուսափելու նպատակով 1000 հայ ընտանիք գաղթեց Արևելյան Հայաստան: Ինչպես Արևմտյան Հայաստանի մնացած գավառներում, Բաբերդում ևս հայերի դրությունը ծանրացավ 1877-1878թթ. պատերազմից հետո: Այդ հալածական վիճակը շարունակվեց մինչև համիդյան ջարդերը, որին միայն քաղաքում զոհ գնաց 1400 հայ: Մեծ թիվ էին կազմում բռնի կրոնափոխվածները:

Բաբերդ քաղաքի նշանավոր վայրերից մեկն էլ բերդն է: Այն կառուցված է քաղաքի հյուսիսային մասում, «քարալերան մը գագաթան վրայ, որ երեք կողմանէ անմատոյց է: Շրջապատուած է կրկին պարիսպներով, որոնց հիմունքը ձգուած են քարալերան անհարթութեան համեմատ տեղ մը բարձր, տեղ մը ցած և ներս ու դուրս»[2]:

Կարծր և սրբատաշ քարերով, կրաշաղախով կառուցված բերդի պարիսպները, սակայն, 1828-1829թթ. պատերազմի ժամանակ չդիմացան ռուսների ռմբակոծություններին և կործանվեցին: Ավերվեցին ոչ միայն պարիսպները, այլև ներքնապարսպի մեջ գտնվող տները, պալատները, պահեստները, զորանոցները:

Բերդը շրջապատված է քարափոր ջրամբարներով, որոնք պաշարումների ժամանակ ծառայել են բերդին ջուր մատակարարելուն: Այժմ կիսավեր վիճակում են դեպի ձոր իջնող ոլորապտույտ քարե աստիճանները:

«Բերդի արտաքին դրան աջ եւ ձախ կողմերը,- գրում է Հ.Էփրիկյանը,- կան առիւծի եւ ընձու անարուեստ բարձրաքանդակ պատկերներ, եւ շատ մը արաբացի արձանագրութիւններ թէ դռներու եւ թէ ներքնապարիսպի վրայ»[3]:

[1] *Ատրպետ,* Ճորոխի ավազանը, Վիեննա, 1829, էջ 87:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 351:
[3] Նույն տեղում, էջ 352:

Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, Բաբերդը հնուց ի վեր եղել է առևտրական խոշոր կենտրոն, որովհետև գտնվում էր Տրապիզոնից Կարին և Պարսկաստան տանող ճանապարհին: Քաղաքը գործուն կապերի մեջ էր նաև առևտրաշատ քաղաքներ Ջենովայի և Վենետիկի հետ: Բացի այդ, Բաբերդը Ճորոխ գետի միջոցով առևտրական կապի մեջ էր 126 կմ հեռու գտնվող Բաթում քաղաքի հետ: Չնայած այս կապերին, այնուամենայնիվ, Բաբերդն այնքան էլ զարգացում չի ապրում և մնում է նույն ասիական տիպի բնակավայրը: Այստեղ մեծ նշանակություն ուներ այն հանգամանքը, որ իշխանությունները խանդոտ, թշնամական վերաբերմունք էին ցուցաբերում առևտրում գերակշռություն ունեցող հայերի ու հույների նկատմամբ և հայտնի ու անհայտ ձևերով փորձում էին սահմանափակել նրանց գործունեությունը, որի պատճառով էլ Բաբերդը մնաց նեղ, տեղային բնույթի առևտրական կենտրոնի մակարդակի՝ չդառնալով միջազգային տարանցիկ առևտրի հանգույց, թեև թե՛ աշխարհագրական դիրքի, թե՛ ձեռներեցության տեսանկյունից լիուլի բավարարում էր համապատասխան պահանջները:

Տոնավաճառների մասին հեղինակներից մեկը գրում էր. «15 օրուա տեւողութեան տօնավաճառութիւն ունի, այս առթիւ ամեն կողմանէ գիւղացիք աստ կը դիմեն, առեւտրոյ գլխաւոր առարկաներն են ցորեն, գարի, ձի, տաւար, ոչխար, եւ այլն»[1]:

Ընդարձակ շուկաներ ունեցող առևտրաշատ քաղաքը ծաղկեցնողն ու հրապույր հաղորդողը հայի ստեղծագործ ու տքնաջան ձեռքն էր: Թուրքերը, որ դուրս չէին եկել քոչվորական մտածողությունից և գոյությունը պաշտպանելու միջոց տեսնում էին թալանը, գողությունը, չէին կարող մրցակցել հայ առևտրականների հետ: Եվ պատահական չէր, որ մինչև համիդյան կոտորածները քաղաքում կար միայն մեկ թուրք առևտրական՝ «լալ Իսմայիլը»:

Դրան հակառակ՝ քաղաքի հայ առևտրականները՝ «իբրև խելացի, ճարպիկ և հմուտ, մրցումի կելլեին Կարնոյ և Տրապիզոնի մեծահարուստ վաճառականներու հետ»[2]:

Իսկ քաղաքում հաշվվում էին ավելի քան 20 խոշոր, դրամագլուխ ունեցող վաճառականներ:

Քաղաքում, մոտավոր հաշվումներով, կային «481 կրպակ և վաճառատունք, 40 խան, 177 ցորենի ջրաղաց, երեք կտաւատի հնձան, 19 փուռ»[3]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.476, ց.1, գ.286, թ.198:
[2] Նույն տեղում, թ.203:
[3] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 352:

Մեկ այլ ականատես՝ Ատրպետը, վկայում է. «Ինչպէս աւերակ է բերդն իր դղեակով, այդպէս էլ աւերակ է քաղաքն իր շուկայով, ուր 3-400 խանութ կայ, բայց ժողովուրդն այնքան աղքատ է, որ ոչինչ չի գնում, այլ առուտուրը միայն արտահանութիւնն է»[1]:

Հեղինակներից մեկն էլ սրտի ցավով նկատում է, որ թեև «Զանգակներու խլացուցիչ ժխորով կարաւանները գրեթե անպակաս էին տարվա բոլոր եղանակներին»[2], բայց այդ չէր նշանակում, թե աշխույժ եռուզեռով էր լցված քաղաքը:

Բերդում գործել են 200 «փոքր առևտրականներ, 20 մեծաքանակ վաճառականներ»: Առևտրականների դրամագլուխը կազմում էր 40.000 ոսկի[3]:

Առևտրից բացի, հայերի ձեռքում էին արհեստները: Նրանք նուրբ գործվածքներ էին գործում, ասեղնագործում, հագուստներ կարում, գորգեր գործում: Հատկապես մեծ համբավ ունեին ոսկերիչները, որոնց պատրաստած իրերը, զարդերը վաճառվում էին հեռավոր շուկաներում, շատ էին ժամագործները, պղնձագործները, ատաղձագործները, կոշկակարները: Քաղաքում ամեն տարի մայիս, հունիս ամիսներին կազմակերպվում էին տոնավաճառներ, որտեղ հավաքվում էին հեռավոր վայրերից եկած առևտրականներն ու արհեստավորները: Բաբերդում գործում էին նաև փոքր ձեռնարկություններ: Դրանցից էին կաշեգործարանը, օճառի երկու, ներկի և մոմի գործարանները, ջրաղացները, որոնցից ամենանշանավորը «Վեջեր» «նոր մեթոդով շինված հսկա ջրաղացն էր»[4]:

Արհեստավորները, որ քաղաքում հաշվվում էին 200 հոգի, ունեին 4000 ոսկի դրամագլուխ[5]:

Բաբերդցիները, որ քաղաքը կիսող Ճորոխին տվել էին նաև «խելառ» անունը, գետն օգտագործում էին նաև բեռնափոխադրումների համար. «Անտառեն կտրուած փայտերու մեծագոյն մասը կը ձգուի յատուկ նշաններով՝ Ճորոխին վրայ, որ առանց վատնելու, բնութեան բնոց հպատակ արագընթաց բեռը կհասցնե Բաբերդ: Իւրաքանչիւրը իւր գծած նշանին նայելով՝ փայտը դուրս կհանէ գետէն»[6]:

---

[1] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 88:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.476, ց.1, գ.286, թ.203:
[3] Նույն տեղում, ֆ.57, ց.5, գ.146, թ.2:
[4] Նույն տեղում, ֆ.476, ց.1, գ.283, մ.1, թ.214:
[5] Նույն տեղում, ֆ.57, ց.5, գ. 146, թ. 2:
[6] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 352:

Հայերը հիմնականում ապրում են չորս թաղերում: Յուրաքանչյուր թաղն ուներ իր եկեղեցին, վարժարանը:

«Հայոց եկեղեցիները թուով չորս են՝ Ս.Աստուածածին, Հրեշտակապետք, Աստուածամայր եւ Ս.Հովհան: Առաջին երկուքը կը յիշուին ԺԷ դարու սկիզբը գրոց յիշատակարանաց մէջ»,- գրում էր Հ.Էփրիկյանը և հայտնում, որ 1848թ. եկեղեցին վերանորոգվել է, իսկ մնացած եկեղեցիները «ներքուստ մթին են եւ արտաքին երեւոյթներեն ալ խեղճ»[1]:

Բաբերդի արևելյան կողմում՝ բլրի վրա, հայկական գերեզմանոցն է, որտեղ, տապանաքարերի վրա, կան 1437թ. արձանագրություններ:

Կրթական գործը բարձր մակարդակի վրա էր: Քաղաքում գործում էին երկու արական, երկու իգական դպրոցներ, որոնք կրում էին Մեսրոպյան, Հռիփսիմյան, Արամյան անունները: Դպրոցներում սովորում էր 420 աշակերտ, աշխատում էր 14 ուսուցիչ, գրադարաններում կար 850 կտոր գրականություն[2]:

Քաղաքում գործում էր նաև հունական մեկ վարժարան: Բաբերդի մշակութային կյանքի մասին մանրամասն տեղեկություններ չունենք: Միայն հայտնի է, որ քաղաքում տպագրվել է «Բողբոջ» անունով թերթ[3], իսկ 13-17-րդ դարերում Բաբերդում գրվել են ձեռագրեր, որոնք հասել են մեզ, ընդօրինակվել են ուրիշ ձեռագրեր:

Հայկական չորս թաղամասերը՝ Անտիքեչեն, Կալերը, Ղազիդաղը, Ղազիզաղեն, թեև թուրքական թաղերի համեմատ բարեկարգ էին, բայց այդ չէր նշանակում, թե կենցաղային պայմանները նույնպես բարվոք էին: Տները հիմնականում գետնափոր էին: Փոքրիշատե բարեկարգ ու հողից բարձր բնակարաններ ունեին առևտրականները, քաղաքի այլ երևելիները:

Իտալացի ճանապարհորդ Հ.Բարբարոն 1474թ. անցել է քաղաքով և ի շարս այլ տեղեկությունների, հայտնում է, թե քաղաքն ունեցել է 1500 ընտանիք բնակչություն[4]:

Համաձայն աղբյուրներից մեկի հաղորդման, 1830-1850թթ. քաղաքն ունեցել է 13.000 բնակչություն, որից 8000-ը հայեր էին: 1870-ական թվականներին քաղաքում ապրում էր 8862 բնակիչ, որոնցից 1823-ը հայեր էին[5]: Ս.Ծոցիկյանը, գրեթե նույն ժամանակահատվածում, հաշվում է 10.000 բնակչություն[6], Ա-Դոն՝ 400 տուն հայ, 2200 տուն մահմեդական[7]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.476, ց.1, գ.283, մ.2, թ.243, 352:
[2] Նույն տեղում, ֆ.57, ց.5, գ.146, թ.2:
[3] *Ծոցիկյան Ս.,* Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 10:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 351:
[5] ՏԲ, հ.2, էջ 527:
[6] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 15:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 195:

Արխիվային փաստթղթերից մեկը հայերի քանակը հայտնում է 450 տուն, 2500 շունչ, մեկ ուրիշը՝ 2478 հայ, 11.000 թուրք[1]:

Վերլուծման համար վերցնենք չորս վկայություններ՝ 450 տուն, 2500 շունչ (մինչև 1914թ. պատերազմը), 2470 շունչ, 413 տուն (19-րդ դարի վերջ), 1823 շունչ, 303 տուն (1870թ.), 400 տուն, 2400 շունչ (1909թ.), միջինը՝ 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին կունենանք 391 տուն, 2300 շունչ բնակչություն: 19-րդ դարի համար ունենք 4301 շունչ բնակչություն: Դրանից հանենք 1895թ. ջարդերի ժամանակ զոհվածներին, կունենանք 2901 շունչ բնակչություն, այսինքն՝ 600 շնչով ավելի, քան միջինն է: 400 տարում՝ 1474-1870թթ., քաղաքը փաստորեն ունենում է 323 հոգու աճ, ինչն ընդունելն անկարելի է: Աստեղից էլ, եթե մեր հանած միջին թվին գումարենք միայն կոտորածին զոհ գնացածների քանակը, ապա կստանանք 3700 շունչ բնակչություն, որը, թերևս, հնարավոր կլինի ընդունել որպես քաղաքի 19-րդ դարի երկրորդ կեսի բնակչության մոտավոր թվաքանակը:

Բաբերդի գավառի հայաշատ գյուղերը
(Հաշվարկը կատարված է միջին տարբերակով)

	տուն	շունչ
Քարավարակ	246	1476
Բլրակ	234	1414
Քսանթաց	213	1278
Խուրս	164	1164
Լսհոնք	123	781
Նիվ	44	740
Ավերակ	120	720
Վարգահան	90	660
Բլոր	94	568
Հնտի	88	528
Ս.Թորոս	72	432
Պալախոր	65	390
Ջահմանց	60	370
Հայեք	51	366
Մալասա	57	342

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.146, թ.2, գ.165, թ.4:

Բաբերդի գավառի նշանավոր գյուղերից էին Ալմաշկա, Ադե, Աղբանոց, Անահիտ, Առյուծկա, Արման, Արտոսա, Արմատլու, Բլուր, Բլրակ, Բաղնիք, Բեռնա, Բաղձոր, Բոբղա, Բոչի, Գելաղբյուր, Գոմեր, Գրչի, Զագրակ, Զարգիղի, Երկի, Թախտ, Թուշտի, Լուսհոնք, Խալեֆ, Խայեկ, Խափուր, Խառնիկ, Կարավանք, Կանկոր, Կիզ, Կոբ, Հնտի, Հավնոց, Մազարա, Մահաջուր, Մամ, Մեծ Գրչի, Մեծ Լոռի, Բալախո, Ջահմանց, Ռուշտի, Ռումելի, Սարաճուղ, Սինոռ, Վարզուհան, Փնջրկա, Քրիսի, Քիվ, Օձտեղ գյուղերը:

Բասենի գավառը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառակներից է: Այն փասիաններ, բասիաններ ցեղախմբի հայրենիքն է եղել: Այս մասին հիշատակում է նաև Քսենոփոնը: Նահանջող հույները, հասնելով Արմենիա երկիր՝ խուլյաբների երկրից «յոթ կայան՝ օրական հինգ փարսաղ»[1], անցնելով, հասնում են Փասիս գետ, այնտեղից առաջ շարժվում, բայց լեռնանցքին չհասած «դեպի դաշտ իջնելիս նրան դեմ ելան խուլյաբները, տառխները, փասիանները»[2]:

Քսենոփոնը վկայում է նաև, որ այդ երկրները գտնվում էին Տիրիբազոս կառավարչի իշխանության տակ: Փասիանները որպես վարձկաններ ծառայում էին կառավարչի բանակում:

Նշված ժամանակահատվածում, գուցե դրանից էլ առաջ, Բասենն ընդարձակ է եղել: Առավել, քան նրա սահմանները նկարագրում է «Աշխարհացոյցը»:

Արտաշեսյան հարստության ժամանակ նրա կազմի մեջ մտնում էին Վանանդը, Հովնունք և Աբեղյանց գավառները (Կարսի և Սարիղամիշի շրջանները): Արշակունիների հարստության ժամանակ գավառից անջատվում են Որդունիների, Աբեղյանք, Գաբեղյանք, Հավնունիք նախարարական տները՝ կազմելով առանձին իշխանություն: Չորրորդ դարում, երբ Մանավազյան նախարարական տան դեմ սկսվում է Որդունիների պայքարը, Խոսրով Կոտակ թագավորը (330-339թթ.) դաժան դատաստան է տեսնում Որդունիների հետ, սրի է քաշում ամբողջ տոհմը՝ կալվածքները հանձնելով Բասեն եկեղեցական թեմին:

Հայ պատմիչները Բասենն անվանել են «հովիտ մեծ», «քաջ ընդարձակ հովիտ», «ընդարձակ դաշտ»: Բասենի գավառը տարածվում է Արաքսի (Երասխի) վերին և նրա ձախակողմյան վտակ Մուրցի ավա-

[1] *Քսենոփոն,* Անաբասիս, Երևան, 1970, էջ 99:
[2] Նույն տեղում:

զաններում: Գավառում իշխողը հարթավայրերն են: Արաքսի և Մուրցի միախառնման տեղում կառուցված է Յոթնակամար կամուրջը, որը վերագրվում է հայ Արշակունի Վաղարշ երկրորդ թագավորին (185-198թթ.):

Բացի Քսենոփոնից, գավառակի մասին հիշատակություններ են թողել Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Հովհան Մամիկոնյանը, Հովհաննես Դրասխանակերտցին, Սեբեոսը, Արիստակես Լաստիվերտցին, արաբ և բյուզանդացի պատմիչները:

Ագաթանգեղոսը վկայում է, որ Բասենի եպիսկոպոսը հոգևորական նվիրապետությամբ զբաղեցնում էր երկրորդ տեղը: Պատմահայր Խորենացու տեղեկությամբ, գավառի կենտրոնը Վաղարշ Բ-ի հիմնադրած Վաղարշավանն էր՝ «մեծ ավան Բասենոյ»: Իսկ Արիստակես Լաստիվերտցին նույն ավանն անվանում է «մեծ դաստակերտ» (11-րդ դար): Փավստոս Բուզանդը հավաստում է, որ գավառակի եպիսկոպոսանիստ ավանը Որդորու ավանն էր, որը գտնվում էր Աղբերականաց դաշտում և նույնանում էր Դու գյուղի հետ, որտեղով 387թ. պարսկա-բյուզանդական սահմանն էր անցնում: 1046-1047թթ. Բասենը ենթարկվել է սելջուկների արշավանքներին: 1639թ. Դիարբեքիրի պայմանագրով Բասենն ընկնում է թուրքական տիրապետության տակ: 1829թ., 1877թ. Բասենը գրավվում է ռուսական զորքերի կողմից, բայց Ադրիանապոլսի պայմանագրով և Բեռլինի վեհաժողովի որոշմամբ վերադարձվում է Թուրքիային:

Երասխ գետը Բասենը բաժանում է երկու մասի՝ Ներքին և Վերին, կամ՝ ներքին կամ Ստորին Բասենի սահմաններն արևելքում հասնում են Ծաղկանց (Ալադաղ) լեռներին, հյուսիսում և հյուսիս-արևելքում՝ Տայոց լեռներին, հարավում՝ հայկական Պար, Բյուրակնյա լեռներին:

Ներքին Բասենի մասին Հ.Կարնեցին գրում է. «իսկ ներքին Բասենն է պարոնանիստը եւ ունի գյուղաքաղաք զԽորասան առ յափն Երասխոյ. եւ ունի բերդ Զիւին, Մէժէնկերտ եւ Կէչէվան. եւ է ի մէջ բերդի գերեզման Խաչատուր Կեչառացուն: Եւ այլ բազում գիւղք ունի եւ մայրիք, որ գնացեալ հասնէ մինչեւ ի Կարս, ի Պարտէզ եւ ի Սողանլուն: Եւ անտի ի լեռան կողմն հարաւոյ են գաւառք երկու, որ ասեն Ղարս Եազի եւ Խեալի Եազի, են բնակարան եւ յեայլանի Քրթաց, որ հանապազ վրանաւ Կեղարու շրջին ոչխարօք եւ անուանօք ի լի, եւ գնացեալ հասանէ մինչեւ ի լեառն Սուկաւէտ»[1]:

1880թ. գավառակի 70 բնակավայրերից 30-ը հայաբնակ էին: Գավառի կենտրոնը Խորասան ավանն էր: Գավառում էին գտնվում Ավնիկ,

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 21:

Զվին, Բութակ (Բերդակ), Խնձոր բերդերը: Հայաբնակ գյուղերից նշանավոր էին Ազաբը, Ալաջան, Աստվածածինը, Աձոն, Արտուղը, Ալվարը, Անատակը, Ավնիկը, Գետիկը, Գոմաձորը, Խոզաղբյուրը, Գերեքը, Արմատլուն (Տանձուտը), Բաշքեռյուն, Խլնոցը, Խոտիքը (Խատիքը), Խոփերանը (Ծոփերան), Ծան, Ծառս, Կարաչուխա (Ղարաչուխա), Կարաքիլսէ (Ղարաքիլիսէ), Կոտաբազ, Հակոբգոմ, Չիթհանք, Սանամեր, Նորակ, Յուզվերան, Զովրուկ, Ջերմիկ, Պետրեվանք գյուղերը:

Ավնիկ բերդն ունեցել է ամուր պարիսպներ, ինքնիշխան քաղաքի կարգավիճակ: 1049թ. գավառի Աջահովիտ վայրում, որը գտնվում է Կարգաբազար լեռների ստորոտում, հայկական, վրացական և բյուզանդական ուժերը ճակատամարտ տվեցին սելջուկների դեմ: Այս ճակատամարտը հայտնի է Բասենի ճակատամարտ անունով: 1051թ. Տուղրիլ բեկը չկարողացավ գրավել բերդաքաղաքը, իսկ Լենկթեմուրը միայն մեկամսյա պաշարումից հետո կարողացավ կոտրել պաշտպանների դիմադրությունը: Հնագույն պատմություն ունեն նաև Ալվար և Գոմաձոր գյուղերը, Ավկամ կամ Ոկոմի գյուղավանը, Բլուր (Բլուրք) գյուղը: Առաջինը փոքր բնակավայրի վերածվեց 1021թ. բուզանդական և 1056թ. սելջուկյան ավերիչ արշավանքներից հետո:

Վերին Բասենը տափարակ է, դաշտավայրային, միայն հյուսիսային շրջաններում կան ծառածածկ տարածքներ: Վերին Բասենը համընկնում է պատմական Գաբեղյան գավառին, որը 10-րդ դարում բաժանվել է Բասենից և անվանվել է Վանանդ: Գավառը հայտնի է սառնորակ աղբյուրներով, արգավանդ հողերով, որոնք բարձր բերքատվություն ունեին, և այդ պատճառով էլ Բասենը համարվում էր Կարինի նահանգի շտեմարանը: Այն վայրում, որտեղ Մուրց գետը թափվում է Արաքսի մեջ, կան 30-40 աստիճան տաքության ջերմուկներ: Ջերմուկների գոյության պատճառով, հատկապես ամառային ամիսներին, գավառը դառնում է հովեկների ու հիվանդների բնակատեղի:

Վերին Բասենի մասին Հ.Կարնեցին պատկերավոր գրում է. «Մամբվանց ուղիղ դէպ արեւելք, է երկիրն Վերին Բասենոյ բազում գիւղք եւ աւանք. եւ ունի ծաղկաւետ լերանք ջրալից եւ տուն հացի, անասնօք եւ ոչխարօք ի լի, իւղ եւ մեղր իբրեւ աղբիւր, գեղեցիկ եւ վարժ քեհլան երիվարք բազում, որ տեսողացն հիացեալ փառս տայի Աստուծոյ, նաեւ գեղեցիկ շինեն ղոյշ եւ կուժ փայտեայ զանազան, յոյե օգուտ ախորժ է ըմպելաց ջոր ի նմանէ. եւ են բնակիչք երկրին Հայ, եւ Թուրք սակավ եւ ունի մեծ բերդ պարսպաւոր ի վերայ վիմի հաստատեալ, որ հայ բարբառով

կոչեն այժմ Դարոնք, եւ թուրք բարբառով Հասան-Ղալա կոչի։ Անցանէ գետն Արազ ընդ դուռն քաղաքին, եւ է առ յափն ջրոյն ջերմ ջուր, որ է յույժ ցաւոք եւ օգտակար է մտելոցն ի ջուրն. եւ ելանեն ձկունք անթիւ եւ ազգի համեղ ճաշակաղացն։ Եւ է բերդս այս մեծ պարոնանիստ եւ հեծելօք ահաւոր խմբող ի պատերազմի… եւ ունի սինօռ Բասենս վերին մինչեւ ի Զարափխանեն եւ ի Կաղզուան եւ ի Թարգմանն»[1]։

Գավառի կենտրոնը Հասանկալան է։ Հիշվում է նաև Հասան-Գալե, Հասանգալ, Հասանղալ անվանումներով։ Երբեմն գավառը կոչվել է նաև իր կենտրոնի անունով։ Կան կարծիքներ, թե բերդը կառուցել է Գրիգոր Մագիստրոսի ազգական Հասան իշխանը։ Իրենց հակապատմական հավատամքին հլու՝ թուրք պատմաբանները պնդում են, թե բերդը հիմնադրել է ակ-կոյունլիների ցեղապետ Ուզուն Հասանը (15-րդ դար)։

Հասան-Կալա բերդը կառուցվել է սեպի տեսք ունեցող լեռան վրա, ունեցել է կրկնակի պարիսպներ։ Հաճախ բերդը նույնացնում են Վաղարշավան քաղաքի հետ, որի կառուցման մասին Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը. «Տիգրանի մահից հետո թագավորում է նրա որդի Վաղարշը իր համանուն Վաղարշի՝ պարսից թագավորի երեսուներկուերորդ տարում։ Սա ավան է շինում այն տեղը, ուր նա ճանապարհին ծնվեց, երբ նրա մայրն Այրարատ ձմեռանոցից գնալու ժամանակ հանկարծ երկունքը բռնեց և ճանապարհի վրա ծնեց Բասեն գավառում՝ Մուրց և Արաքս գետերի խառնուրդի մոտ… Այս ավանը շինելով՝ իր անունով կոչեց Վաղարշավան»[2]։

19-րդ դարի սկզբներին Վաղարշավան-Հասան-Կալան ունեցել է 1700 տուն բնակչություն։ Գ.Սրվանձտյանցի տեղեկություններով, (1879թ.) բերդաքաղաքում ապրել են 15 տուն, 130 հայեր[3]։ Արխիվային մեկ այլ փաստաթուղթ, որը պայմանականորեն անվանում ենք «Անանուն», վստահեցնում է, թե պատերազմից առաջ (1914թ.) բերդաքաղաքն ունեցել է 400 հայ բնակիչ[4]։

Մեկ այլ աղբյուր հայտնում է, թե գավառում 1878թ. եղել են 70 բնակավայրեր[5]։ Նրանցից գրեթե 40-ը հայաբնակ էին։ Զգալի թիվ էին կազմում խառը բնակչություն ունեցող գյուղերը, որոնք, մինչև 1877-1878թթ. պատերազմը, եղել են հայաբնակ։

---

[1] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 19-20։
[2] *Մովսես Խորենացի,* Հայոց պատմություն, Ե., 1968, էջ 200։
[3] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի արխիվ, ֆ.153, գ.23, թ.14։
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.139, թ.45։
[5] ՏԲ, հ.1, Ե.,1986, էջ 611։

Վերին Բասենի նշանավոր գյուղերից էին Վաղավերը, Թորղանը, Ամրագոմը, Գեղավանքը, Թավունցը, Հարսնաքարը (Հարսնավեր), Միատունը, Խաչլուն և այլն (36 գյուղ)[1]:

Գյուղերից շատերը բարեկեցիկ էին, բերքաշատ: Հայերը հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: 1877-1878թթ. պատերազմից հետո թուրքական կառավարությունը ձգտում էր վարչական բաժանումների ու կեղծիքի ճանապարհով հայերի թիվը ներկայացնել եղածից պակաս: Այս գործում մեծ դեր էր խաղում նաև հիշյալ պատերազմից հետո ստեղծված հալածական վիճակի, անօրինական հարկերի ու տուրքերի, բռնագրավումների հանգամանքը, որի պայմաններում, ձգտելով խուսափել հարստահարությունից, հայերն իշխանություններին չէին ներկայացնում իրենց ընտանիքների անդամների լրիվ թիվը:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբիդին փաշան տերություններին ուղղված պատասխան նամակում հայտնում է, թե Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի վիլայեթներում անցկացված «պաշտոնական ցուցակագրությունը հետևյալ արդյունքն է տվել. հայերի թիվն ամբողջ բնակչության համեմատությամբ հասնում է 17 տոկոսի, մյուս ոչ մահմեդական համայնքներինը՝ 4 տոկոսի, իսկ մուսուլմաններինը՝ 79 տոկոսի»[2]:

Հետևողականորեն իրականացնելով իր քաղաքականությունը՝ թուրքական կառավարությունը (1880, 1888 և 1898թթ.) կատարեց վարչական նոր բաժանումներ: Վերջին բաժանումից հետո Կարինի վիլայեթն ուներ երեք սանջակ (գավառ) և 19 գավառակ, որոնցից մեկն էլ Բասենի գավառակն էր[3]: Ա.Կոլյուբեկինը հայտնում է, որ Բասեն գավառակն ընդամենը 6496 տուն ուներ, 200 բնակավայր, որտեղից հավաքվել է 1.772.200 պիաստր աշար, բնակչությունը պահել է 26.070 գլուխ խոշոր եղջերավոր, 223510 մանր եղջերավոր անասուններ, ունեցել է 4549 սայլ[4]: Տեսնում ենք, որ ռուս հեղինակը տառացիորեն կրկնում է թուրքական վիճակագրության տեղեկությունները: Մինչդեռ Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գավառում ուսումնասիրված միայն քառասունչորս հայաբնակ գյուղերում պատկերն այլ էր: Համաձայն այդ վիճակագրության, գավառի 44 գյուղերում կային 1767 տուն հայեր, որոնց ընդհանուր թիվը կազմում էր 18.714[5]:

[1] ՀՍՀ, հ.2, Ե., 1976, էջ 302:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.476, ց.1, գ.541, թ.39:
[3] *Համբարյան Ա.,* նշված գիրքը, էջ 38:
[4] *Колюбакин А.,* Материалы для военно-статистического обозрения Турции, Тифлис 1890, стр. 100,101.
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.139, թ.45:

Ավելին, ՀՀ ՊԿՊ արխիվի կաթողիկոսական դիվանում պահպանվող փաստաթղթերից մեկը վկայում է, որ Բասենի գավառակի 37 գյուղերում, որոնցից 21-ում կար հայ բնակչություն, կամ խառը գյուղեր էին, 20-րդ դարի սկզբին ապրում էին 9210 հայեր: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում Բասենի գավառում ապրում էր 13-14 հազար հայ[1]:

Այժմ մեր ունեցած երկու վերոհիշյալ արխիվային փաստաթղթերի օգնությամբ պարզենք գավառի գյուղերի թիվը: Համեմատությունից պարզվում է, որ Անանուն հեղինակի և Գ.Սրվանձտյանցի գյուղացուցակներում համընկնումով հիշատակվում են միայն 12 գյուղեր: Այսինքն՝ Անանուն հեղինակի մոտ բացակայում են Գ.Սրվանձտյանցի հիշատակած 32 գյուղերը, իսկ Գ.Սրվանձտյանցը չի արձանագրում Անանունի 25 գյուղերը: Նրանցից վերը նշված աղբյուրներին համապատասխանում են միայն 15 գյուղերի անուններ: Այսինքն՝ 98 գյուղ բացակայում է ներկայացված ցուցակներում: Եթե գումարենք երեք ցուցակներում բացակայող գյուղանունները, ընդհանուր թիվը կազմում է 105:

Պատկերը նույնը կլինի, եթե փորձենք համեմատել այդ աղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ: Այս խառնաշփոթի պատճառը պարբերաբար կրկնվող վարչական բաժանումներն էին, 1829, 1878թթ. զանգվածային գաղթերը, 1894-1896թթ. ջարդերը, հալածանքները, ավերումները, գյուղերի թուրքաբնակ, քրդաբնակ, չերքեզաբնակ դառնալը, երևույթներ, որոնք ոչ միայն դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից, այլև վերոհիշյալ ժողովրդագրության փոփոխության պատճառով պարզապես չեն արձանագրվել վիճակագիրների կողմից:

Գավառի գյուղերի ընդհանուր թվաքանակը պարզելու նպատակով դիմենք ևս մեկ համեմատության: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» նշվում են գավառի որոշ գյուղերի անուններ[2]: Համեմատելով դրանք՝ պարզվում է, որ թվարկված անուններից Անանուն հեղինակի մոտ նշված չեն 12 գյուղերից ոչ մեկը: Գ.Սրվանձտյանցը հիշատակում է միայն մեկ՝ Սանամեր գյուղը: Այսինքն՝ մեր ունեցած 105 գյուղանուններին պետք է գումարենք միայն Ներքին Բասենի 11 գյուղերի անուններ, Վերին Բասենի՝ երկու, ընդհանուր արդյունք ունենալով 118 գյուղանուն:

Այժմ նման համեմատություն կատարենք ՀՍՀ ցուցակի հետ: Հանրագիտարանում ներկայացված է Վերին Բասենի 37 գյուղ, նրանցից միայն յոթն է կրկնվում Անանուն հեղինակի մոտ: Ստորին, Ներքին Բա-

[1] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, գ.23, թ.14:
[2] ՏԲ, հ.1, Ե., 1986, էջ 611:

սենի հիշատակված 28 գյուղերից նույնանում են միայն չորսը: Գ.Սրվանձտյանցի ցուցակում Վերին Բասենում կրկնվում է 9 գյուղանուն, Ներքին Բասենում՝ 8: Արդյունքում՝ Անանուն հեղինակի մոտ երկու գավառակներում ավելանում է 54, Գ.Սրվանձտյանցի մոտ՝ 48 գյուղանուն: Եթե գյուղերի մեր ունեցած թվին ավելացնենք Անանունի 54 գյուղերը, որովհետև Գ.Սրվանձտյանցինն արդեն հաշվված է, կունենանք 146 գյուղ: Գաղտնիքն այն է, որ գյուղերի մեծ մասը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր անուններ: Ներգաղթած մահմեդականները, տեր դառնալով լքված հայկական գյուղերին, նրանց տալիս էին իրենց անվանումը: Ընդգծենք նաև, որ հայ վիճակագիրները գրանցում էին հայկական անվանումները միայն՝ չնշելով գյուղերի մահմեդականացված անունները, չփորձելով հիշատակել թեկուզ նախկին անվանումները:

Այժմ, երբ ի մի ենք բերել գյուղերի մասին տեղեկությունները, փորձենք տալ գավառի գյուղերի ամբողջական ցուցակը, որը, սակայն, լիակատար ընդունելը դեռևս անհնարին է: Ներկա ցուցակում ընդգրկված են հայաբնակ, խառը, բայց նախկինում հայաբնակ եղած գյուղեր.

Հերթև գյուղ	Ղըզլզր Ղալե[1]	Ղարաքիլիսէ
Թորդակ	Միջելի	Թավլանճիւղ
Կյուլլյու	Քեօփրուցոյ	Ներքին Թախոճե
Ալվար	Իլխու	Խորասան
Էզրմեկ	Վելիպապա	Զրասոն
Պլղասուն	Ալճակրակ	Քեփենակ
Բլուր	Աէքիաճուղ	Անաակ
Կատապաշ	Մաղարաճիւղ	Արտի
Հագիպատ	Ըղըր Պըղըր	Արփաչայեր
Հարյուրատուն	Իսլամձոր	Ղարախանչլար
Յուղվերան	Մասըրճիւղ	Փորիկ
Թոտե Վերին	Խանաձեա	Փիրալի[2]
Խաչ Գեղ	Սալկորի	Ազաբ
Գոմաձոր	Թանըշման	Ալաջա
Իշխան	Պեարե վանց	Ախո
Խոցավանք	Կամուրջ	Աստվածածին
Թավոնց	Ղարաչուխա	Արմուալու

[1] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, գ.23, թ.14, տե՛ս նաև է.Կոստանդյանի հրապարակումը, «ԲՀԱ»1976, թիվ 2, էջ 55-56:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.139, թ.45-48:

Հարսնեվար	Մեճելափ	Տանձուտ
Եղան	Հարս	Արտոսդ
Եկունի	Կերեկ	Գետիկ
Պատիժված	Սանամեր	Գերեք
Ղալենաեր	Յանցաղ	Թոդևերան
Հարան	Արմուրլի	Խլնոց
Խոտաղբյուր	Մասսադ	Մեղևան
Խոտիք (Խատիք)	Միատուն	Մունուգոմ
Խոփերան	Նաբի	Կոտաբազ
Ծարս (Զարս)	Հակոբդոտ	Արտուղ
Հակոբգոմ	Մանսոր	Թընշման
Պաշգեղ	Սոս (Սոսի)	Տելիպապա
Ղարաքիլիսէ	Սուրբահան	Խոսրովերեն
Բորիկ	Վաղժվան	Ղրրբխ
Ճրասոն	Ուզուն Ահմեդ	Տարախոճա
Տոտի	Քուռնիճ	Ձիթհանք
Ալիճիկրեկ	Օփուկ[1]	Նորակ
Ջովրուկ	Դու	Մաքսուդ
Պետրևանց	Վաղավեր	Փորսուղե
Ջերմիկ	Խըտրրիլյազ	Աճալավ
Ախա	Ծվին	Բերդակ
Ախոռճիկ	Ղզլար	Պայրաքդար
Ամրագոմ	Մշկի	Ղարափանչուր
Արուճագրակ	Արտի	Բլղասոն
Գեղավանք	Դալար	Դիզկա (Դիզկի)
Էգեպար	Թիմար	Ինս
Կեթիվան	Կնտեղի	Ճիճագրակ
Գզրլճա	Ղզլջերմիկ	Գելընքար
Գեղուաճ	Գեղվանք	Երկունի

[1] ՀՍՀ, հ.2, Երևան, 1976, էջ 302:

Ա-Դոն ամբողջ Բասենի գավառում գրանցել է 57 գյուղ[1]: Համեմատելով մեր ունեցած ցուցակների հետ՝ պարզվում է, որ միայն 41 գյուղանուններ են նույնանում, մնացած 16-ը չեն հանդիպում ոչ մեկ ցուցակում: Այսինքն՝ մեր ունեցած 146 գյուղերին եթե գումարենք մեր ունեցած 16-ը, ստացվում է 162 գյուղ, ինչն անհնարին է ընդունել իբրև Բասենի գավառի գյուղերի ընդհանուր թվաքանակ: Քանզի այն գրեթե հավասարվում է Ա-Դոյի գրանցած ամբողջ Կարինի գավառի գյուղերի քանակին, այսինքն՝ գավառի Էրզրումի, Բասենի, Խնուսի, Դերջանի, Քղիի, Բայբուրդի, Սպերի, Կիսկիմի գավառների գյուղերի քանակին, որոնք, ըստ հեղինակի հաստատման, մտնում էին Կարինի սանջակի (գավառի) կազմի մեջ[2]:

Սակայն այստեղ ևս անկարելի է համաձայնել Ա-Դոյի վիճակագրության հետ, որովհետև նշված գավառակների հայության և գյուղերի թիվը ներկայացնելիս, ոչ թե խոստացած քանակը 169 է, այլ 289: Նույն պատկերն է ստացվում նաև ժողովրդագրության պարագայում: Մնում է ենթադրել, որ գյուղերի քանակը պարզելու համար անհրաժեշտ է կատարել թե՛ մանրակրկիտ վերլուծություն, թե՛ համեմատություն, թե՛ հիշատակված հեղինակների թվական տեղեկությունների աղբյուրների ճշտում, ստուգում: Այս անհամապատասխանության հիմնական պատճառն այն է, որ տարբեր հեղինակներ, որոնց անհայտ են եղել մյուսների ներկայացրած ցուցակները, ոչ թե գյուղերն արձանագրել են դրանց հետ համեմատություններով ու ճշգրտմամբ, այլ գրանցել են հանդիպած անունները և չեն հիշատակել անգամ նախկին անվանումը:

Բասենի գավառում ամուր հիմքերի վրա էր դրված դպրոցական գործը: Գրեթե բոլոր գյուղերում գործում էին դպրոցներ, որոնց ծախսերը հոգում էին կամ գյուղերի բնակիչները, կամ հովանավորները, կամ կրթասիրաց ընկերությունները, կամ եկեղեցին: Դժբախտաբար, վայրիվերո, հայահալած քաղաքականությունը, որ վարում էր բռնատիրությունը, իր ազդեցությունն ունեցավ նաև դպրոցական համակարգի վրա: Հայերի զանգվածային արտագաղթը, պանդխտությունը, կոտորածներն ունեցան այն հետևանքը, որ 1879թ. Գ.Սրվանձտյանցը, որ այնքան ոգևորությամբ լծվեց պատրիարքի հանձնարարությունը կատարելուն, որը գրում է, թե՝ «Հայ եղողը՝ Հայաստանի հողին վրայ ինքզինքը կը ճանաչէ, ինքզինքը վեհ և կենդանի կը գտնէ...», ստիպված էր արձանագրել, որ

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 158:

[2] Նույն տեղում:

Բասենի գավառակի միայն 26 գյուղերում կան եկեղեցիներ, ևս երեք եկեղեցի ավերված է՝ դպրոցների քանակը գրանցելով նույնպես 26[1]:

Մեր հիշատակած Անանուն հեղինակը հայտնում է 10 եկեղեցու, 5 դպրոցի մասին, որոնք դադարել էին գործելուց[2]:

Մեկ այլ փաստաթղթում, որը գտնվում է Գ.Սրվանձտյանցի ֆոնդում (ԳԱԹ) և պարզ աչքով անգամ կարելի է տեսնել, որ գրված է մեծանուն հեղինակի կողմից՝ ձեռագրի նմանությունը նկատի առնելով, և վերնագրված է «Բասենու մեջ եղած աւերակ և շեն վանորայք և եկեղեցիք», հիշատակված 13 գյուղերից ոչ մեկում չի արձանագրվում հայություն, դրանք չերքեզաբնակ ու քրդաբնակ էին, բայց գյուղերում կային եկեղեցիներ ու վանքեր, որոնք գյուղերին տիրացած խաշնարած-քոչվորները, լավագույն դեպքում, վեր էին ածել բնակարանի, պահեստի և, դժբախտաբար, նաև անասնագոմի[3]:

Եթե Հ.Կարնեցին վկայում էր, որ Բասենում, իր ապրած 17-րդ դարում, «իւղ եւ մեղր իբրեւ աղբիւր» հոսում էր, ապա նրա արժանահիշատակ հետնորդը՝ Գ.Սրվանձտյանցը, արձանագրել է, որ մեղրի գետերի տեղ տեսել է արյան հեղեղներ: Վկայակոչված վիճակագրական փաստերը միայն այդ են ապացուցում, հաստատում, որ հայության պատմական հայրենիքի ցանկացած անկյուն վեր էր ածվել արնաշաղախ տարածքի և կրում էր անմարդկային բռնակալության ծանր լուծը:

Գավառակի գյուղերի շարքում նշանավոր էր *Ալվարը:* Այն գտնվում էր Երասխի վտակ Մուրցի աջ ափին, բերրի դաշտավայրում, Հասան-Կալա քաղաքից 7 կմ հեռավորությամբ, նրա հարավարևմտյան կողմում: Գյուղի մասին, սկսած 5-րդ դարից, մեզ են հասել հիշատակություններ: 14-րդ դարի մի ձեռագիր արտագրող իրեն անվանում էր Թորոս Ալվրցի: Գյուղը 19-րդ դարի 70-ական թվականներին ունեցել է 154 հայ բնակիչ (22 տուն)[4]: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղը պատերազմից առաջ ունեցել է 300 շունչ հայ բնակիչ (43 տուն)[5]: Միջին տարբերակով կունենանք 32 տուն, 227 շունչ հայ բնակչություն:

Գյուղն ունեցել է եկեղեցի, վարժարան: Գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսությունը հատկապես զարգացած էր Աղբերականց դաշտում, որը հայտնի էր բերրիությամբ:

[1] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի արխիվ, ֆ. 153, գ. 23, թ. 14:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 189, թ. 45:
[3] ԳԱԹ, նշված արխիվ, գ. 50, թ. 5-8:
[4] ՏԲ, հ. 1, էջ 102:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 45:

Ալաճա, Ալա գիլիզե գյուղը գտնվում էր Արտոսդ գետի ափին: Հատկապես նշանավոր էր սպիտակ, կարմիր գույնի քարերով կառուցված եկեղեցին, որն ուներ օրորոցաձև ոճ: Եկեղեցին ավերվել է 1877-1878թթ. պատերազմական գործողությունների ժամանակ:

Գյուղն ուներ 700 հայ բնակիչ, Նարեկյան երկսեռ վարժարան՝ 120 աշակերտով[1]: Սկսած 1830թ.՝ գյուղը դանդաղ դատարկվում էր: Գաղթն առավել ուժեղացավ 1877-1878թթ. պատերազմից հետո: Հետևեցին 1894-1896թթ. ջարդերը, և նախկինում զուտ հայաբնակ գյուղը, վերջնականապես կորցնելով իր բնիկներին, դարձավ քոչվորների բնակատեղի:

Բլուրը (հայտնի է նաև *Բլուրս, Բլուրք, Պլուր* անուններով) գտնվում է Երասխի աջ ափին: Պարսպապատված ու ամրացված բնակավայր է եղել: Երբ սկսվեցին սելջուկների արշավանքները, Բլուրի շրջակայքի գյուղերից, ինչպես նշում է Արիստակես Լաստիվերտցի պատմիչը, ժողովուրդը լցվում է Բլուր՝ պաշտպանվելու և «անօրեններից» փրկվելու համար: Բայց հեղեղի պես եկող զավթիչները խորտակում են պարիսպները և անմարդկային տանջանքներից հետո կոտորում 7000 մարդ: «Ինչ դառն է այս պատմությունը,- գրում էր պատմիչը և ավելացնում,- մենք մեր թշնամու իշխանության տակ ընկանք... և նրանք հաղթանակած վերադարձան»[2]:

Բլուրի գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ, կային նաև արհեստավորներ և առևտրականներ, հիմնականում մանրավաճառներ: Գյուղում կար Ս.Գևորգ եկեղեցի: 19-րդ դարի վերջին գյուղն ուներ 16 տուն բնակչություն, որից վեցը՝ հայկական[3]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղում կար չորս տուն, 35 հայ բնակչություն[4]:

Միջինը՝ 5 տուն, 38 շունչ հայ բնակչություն:

Էգեպատ, Էգեպար գյուղը գավառակի մեծ գյուղերից էր: Որոշ ուսումնասիրողներ անունը բացատրում են այգեպատ ձևի հետ համեմատելով: Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, Հայկազյան վարժարան, որն ուներ 1500 լիրա հասույթ: Աշակերտների թիվը հասնում էր 70-ի[5]:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ուներ 354 տուն, 800 հայ բնակչություն: Ա-Դոյի հաշվումներով, 1909թ. գյուղն ունեցել է 103 տուն հայ բնակչություն: Զուտ հայաբնակ գյուղ էր[6]: Միջինի տարբերակով կունենանք 94 տուն, 760 շունչ հայ բնակչություն:

[1] Նույն տեղում, ֆ. 476, գ. 1, գ. 66, թ. 90:
[2] Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ, Ե., 1968, էջ 113-114:
[3] ՏԲ, հ. 1, էջ 704:
[4] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, գ. 23, թ. 14:
[5] Նույն տեղում:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 179:

Իշխու, Իշխի, Իշխան, Իշխ գյուղը գտնվում էր Երասխի Իշ վտակի ձախ ափին, Հասան-Կալա քաղաքից հարավ-արևելք, 26 կմ հեռավորության վրա: Գյուղի շրջակայքում կան եկեղեցու, պարիսպների, տների ավերակներ: Երբեմն անվանվել է նաև Իշխս, Իլիխվա: Անվանումների առատությունը բացատրվում է նրանով, որ հնագույն ժամանակներից սկսած՝ գյուղը երբեմն տեղի է տվել նվաճողներին, որոնք հիմնավորվելով՝ փոխել են նաև նրա անունը, բայց ժամանակի ընթացքում հայությունը կարողացել է վտարել քոչվորներին՝ վերականգնելով գյուղի իսկական անունը: Այսինքն՝ գյուղի անվան այս շեղումները բոլորովին էլ կապված չեն տառադարձությունների, բարբառների հետ: Գյուղն ուներ Ս.Հարություն եկեղեցի, վարժարան, որտեղ սովորում էր 103 աշակերտ:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ունեցել է 83 տուն, 900 հայ բնակչություն[1]:

Միջինը՝ 18 տուն, 130 շունչ հայ բնակչություն:

Ալիճեկրէկ, Ալի-ճէքրէկ, Ալուճակրագ, Ալիճակրագ, Արուճակրագ գյուղը գտնվում է Երասխի վտակ Ալիճա գետի հովտում: Գյուղը հայտնի է իր ընտիր ցորենով: Գյուղացիների հիմնական զբաղմունքը երկրագործությունը և անասնապահությունն էին: Հողագործությամբ զբաղվում էր 220 մարդ, 10 հոգի արհեստավորներ էին[2]:

Գյուղում կար Ս.Աստվածածին եկեղեցի, վարժարան, որի հասույթը կազմում էր 2000 լիրա: Վարժարանում սովորում էր 100 աշակերտ:

Գյուղը 19-րդ դարի երկրորդ կեսին ուներ 93 տուն, 1050 հայ բնակչություն[3]: Մեկ այլ արխիվային փաստաթուղթ բնակչության թիվը հաշվում է 1000 շունչ[4]: 1878թ. 560 շունչ բնակիչ է հաշվում մեկ այլ հեղինակ[5]: Ա-Դոն վկայում է 110 տուն հայ բնակչության գոյության մասին[6]: Միջինը կունենանք 114 տուն, 906 շունչ հայ բնակչություն:

Գոմաձոր գյուղը գտնվում է Հասան-Կալա-Բայազետ ճանապարհին, Երասխի աջակողմյան վտակներից մեկի հովտում, Խորասան գյուղից հարավ-արևմուտք: 100 հոգի հողագործներ էին, 5 հոգի՝ արհեստավորներ[7]: Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, վարժարան՝ 1000 լիրա հասույթով[8]:

[1] ՏԲ, հ. 2, էջ 531:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 45:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 14:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 45:
[5] ՏԲ, հ. 1, էջ 86:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 179:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 139, թ. 45:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 14:

Գյուղն ուներ 1200 շունչ բնակչություն, որից 300-ը եկվոր հայեր էին[1]: Գ.Սրվանձտյանցը հաշվում է 82 ընտանիք, 900 շունչ հայ բնակչություն[2], Ա-Դոն ընդունում է 160 տուն հայերի գոյությունը[3]: Իսկ ըստ 20-րդ դարի սկզբի՝ 1914թ. հեղինակներից մեկի, գյուղն ուներ 200 տուն հայ բնակչություն[4]: Միջին տարբերակով՝ 153 տուն, 1155 շունչ հայ բնակչություն:

Գավառի ամենահայաշատ տասնմեկ գյուղերից մեկն էլ *Հերթևանն* էր: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 80 տուն, 750 հայ բնակչություն[5]: Ա-Դոն հաշվում է 133 ընտանիք հայ բնակչություն[6]: Միջին տարբերակով կունենանք 106 տուն, 840 շունչ հայ բնակչություն:

Գյուղում կար Ս.Աստվածածին եկեղեցի, Աբեղյան վարժարան՝ 1000 լիրա հասույթով, որը գոյանում էր հանգանակությամբ: Դպրոցում սովորում էր 30 աշակերտ[7]:

Վելիբաբա, Տելիպապա, Դելիբաբա գյուղը գտնվում էր Բասենի արգավանդ դաշտում: Գյուղի հարավարևմտյան մասում հին ժամանակներից գոյություն է ունեցել սրբատեղի-մատուռ: Գյուղացիները, օգտվելով հողի բերրիությունից, զբաղվում էին նաև պտղաբուծությամբ, բոստանային մշակաբույսերի աճեցմամբ: 200 հոգի զբաղվում էին երկրագործությամբ[8]: Բնակչության մնացած մասը զբաղվում էր անասնապահությամբ: Գյուղում կար Ս.Սարգիս եկեղեցի, վարժարան, որն ուներ 2000 լիրա հասույթ: Վարժարանում սովորում էր 100 աշակերտ[9]:

Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, գյուղում ապրում էին 93 ընտանիք, 1050 շունչ հայ բնակչություն[10]: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ հայերի քանակը հաշվում է 1000 շունչ, որից 500-ը՝ տեղացի[11]: Ա-Դոն գրանցում է 134 ընտանիք հայեր, ՀՍՀ հոդվածի հեղինակը, 1914թ. տվյալներով, ընդունում է 1500 հայերի գոյությունը[12]:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 14:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 179:
[4] ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 152:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 14:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 179:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 14:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[9] ԳԱԹ, նշվ. տեղում:
[10] Նույն տեղում:
[11] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[12] ՀՍՀ, հ. 11, Ե., 1985, էջ 360:

Ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս գավառները, այնպես էլ Բասենի գավառը, տանջալից ժամանակներ ապրեց 1877-1878թթ. պատերազմից հետո: Թուրք բաշիբոզուկները, խուժանը, բանակը, ոստիկանությունը, իշխանավորները պատերազմի պատճառով կրած վնասները լրացնում էին հայերի հաշվին: Այդպիսի մի աղեկտուր նամակ էլ տպագրվել է «Մշակ» թերթում, որտեղ, նկարագրելով ծանրագույն կացությունը, նամակագիրը եզրափակում է. «1877-ին հայերու հագուստները կը կողոպտվեին և կողոպտողները քուրդերն էին, իսկ 1879-ին ոսկի և արծաթ զարդերը կը կողոպտեին և կողոպտողը կառավարությունն է»: «Մեկ խոսքով՝ ներկայիս մեջ մեր կյանքն և ստացվածքը վտանգի մեջ է...»[1]:

Հալածական այդ վիճակն ավարտվեց ջարդերով:

Ց ՈՒ Ց Ա Կ

Բասենի գավառի հայաշատ գյուղերի

	տուն	շունչ
Ալաճա	100	700
Ալվար	32	227
Գոմաձոր	153	1155
Եաղան	142	994
Ըգեպար	94	760
Թորթան	50	350
Թայխոջա վերին	12	84
Թայխոջա ներք.	15	105
Իշխու	114	906
Խաչլու	17	119
Խորասան	24	168
Խոռովերան	27	189
Ծանծաղ	47	329
Ծառս	9	63
Կոտապաղ	35	245
Հարսնեքար	42	294
Հերթև	106	840
Միջելդի	12	84
Յուզվերան	64	508
Պատիճվան	26	182

[1] «Մշակ», 1879, թիւ 79:

	տուն	շունչ
Ճառասուն	48	333
Վելիբաբա	145	1122
Տոտի	57	400
Քյոփրիքյո	90	530
Օգոմի	31	217

Գավառի նշանավոր գյուղերից էին Ախան, Ազապը, Արտոսը, Չամուրլին, Էրմեկը, Էզերմեկը, Աճալարը, Ժանամերը, Չիփլիկը, Սոգութլուն, Մենտևանը:

Դերջանի գավառը գտնվում է Արածանիի վերին հոսանքում: Այն Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի գավառներից է: Հիշատակվում է նաև Տերջան, Թերջան անուններով:

Գավառի ընդհանուր տարածքը 9-10.000 քառակուսի վերստ է[1] կամ 2575 կմ[2]: Գավառակը հյուսիսում սահմանակից է Բաբերդի, հարավում՝ Քղիի, արևելքում՝ Կարինի, արևմուտքում՝ Երզնկայի գավառներին:

Գավառի կենտրոնը Մամախաթուն ավանն է: Կլիման դաշտավայրային է: Նշանավոր են Աշկալայի և Դերջանի դաշտերը: Աշկալայի (Աղկալայի) դաշտն ունի 9-10 կմ լայնություն, 30 կմ երկարություն, ծովի մակերևույթից բարձր է 1700 մ: Դաշտով հոսում են Արածանիի Մայմանսուր և Աշկալա վտակները, որոնք ավելի արգավանդ են դարձնում դաշտը: Աշկալայի մոտ կա աղահանք:

Դերջանի դաշտն ունի 90 կմ երկարություն, 30-40 կմ լայնություն: Գտնվում է Կարինի և Երզնկայի դաշտերի միջև: Ծովի մակերևույթից բարձր է 1500 մ: Սև և շագանակագույն հողերը, ոռոգման պայմաններում, ապահովում են բարձր բերք: Դաշտում կան ջերմուկներ, սառնորակ աղբյուրներ, ածխաբեր և նավթաբեր շերտեր: Գավառի նշանավոր լեռներն են Մարիամը, Պախրը, Խալխալը, Խաչդաղը:

Ագաթանգեղոս պատմիչը վկայում է, որ գավառը հանդիսացել է քրիստոնեության տարածման առաջին շրջաններից մեկը: Այդ առթիվ նա գրում է. «Ապա փութացեալ հասանէր ի գաւառն Դերջան, զի եւ անդ յառաջասցի լնուլ զառաքելական քարոզութեանն զարուեստ մշակութեանն երկովք...»[3]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 19:
[2] ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 364:
[3] *Ագաթանգեղոս,* Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 401:

Գավառի մասին հիշատակություն է թողել նաև պատմահայր Մովսես Խորենացին: Խոսելով Մեսրոպ Մաշտոցի գործունեության մասին՝ պատմահայրը հայտնում է. «Սրանից հետո այնտեղ իր աշակերտներից վերակացուներ թողնելով Սպերում Ղևոնդին և Ենովքին, Դերջանում նրանց Գինդ եպիսկոպոսին...»[1]:

Հայաստանի առաջին բաժանումից հետո, մինչև 536թ., Դերջանը գտնվում էր Ներքին Հայքի կազմում, ապա, վարչական նոր բաժանման հետևանքով, կցվեց Առաջին Հայքին:

7-րդ դարում Դերջանը նվաճեցին արաբները: 10-րդ դարում Բյուզանդիան, գրավելով Դերջանը, այն միացրեց Տարոնին, Մանանաղին, Հաշտյանց, Պաղնատուն գավառներին՝ կազմելով բանակաթեմ: 11-րդ դարում սկսվեցին սելջուկ-թուրքերի արշավանքները: Տուղրիլ բեկը, 1054թ. գրավելով Դերջանը, ավերեց, հրի ու սրի մատնեց նրա գյուղերը, և, պատմիչ Արիստակես Լաստիվերտցու կսկծալի վկայությամբ, «...ոչ ոք չի կարող նկարագրել» այդ աղետը[2]:

13-րդ դարում Դերջանը գրավեցին մոնղոլները, ապա ասպատակությունների հերթն անցավ Լենկթեմուրի հրոսակներին, այնուհետև՝ կարակոյունլուներին, որոնց 1435թ. արշավանքի արհավիրքներին չդիմանալով՝ գավառի բնակչությունը գլխապատառ արտագաղթեց Արևելյան Հայաստանի Այրարատ և Սյունիք նահանգները: 1555, 1639թթ. Ամասիայի և Դիարբեքիրի պայմանագրերով Դերջանը միացվեց Թուրքիային:

Գավառի 17-րդ դարի պատմության մասին տեղեկություններ է թողել Հակոբ Կարնեցին. «Եւ արեւմտից կողմն են գաւառք զարմանալիք, առաջին Հայք, որ այժմ Դերջան ասեն. եւ ունի գիւղս բազումս, Հայոց բնակարան. եւ է երկիր դաշտաձեւ, հայալից, անասնոք եւ իւղօք, մեղրօք ի լի. եւ ունի գիւղաքաղաք զԲազառիճ առ ափն Եփրատայ...»[3]:

1829թ. Դերջանը գրավեցին ռուսական զորքերը, բայց Ադրիանապոլսի 1829թ. սեպտեմբերի 2-ի պայմանագրով գավառը նորից վերադարձվեց Թուրքիային:

Գավառի գյուղերի թվաքանակի մասին գոյություն ունեն մի շարք վկայություններ: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գավառն ունի 31 հայաբնակ բնակավայր, 1304 տուն, ապա 32 գյուղ, 700 տուն հայ բնակչություն[4]: Հաջորդ փաստաթղթի հավաստմամբ՝ 31 գյուղ, 12.000

[1] *Մովսես Խորենացի,* նշված գիրքը, էջ 303:
[2] *Արիստակես Լաստիվերտցի,* Պատմություն, Ե., 1971, էջ 58:
[3] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 10-11:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 345, թ. 5,8:

բնակչություն[1]: Մեկ ուրիշ աղբյուր ընդգծում է անգամ բնակչության ազգային կազմը՝ 12.000 հայ, 400 հայ տուն, 12.000 թուրք, 6000 քուրդ[2]:

ՀՍՀ համապատասխան բաժնի և ՏԲ հեղինակներն ընդունում են Ա-Դոյի վիճակագրությունը՝ 31 գուղ, 1304 հայ տուն[3]: Գյուղերի նույն քանակն ընդունում է նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հոդվածագիրը:

Գարեգին Սրվանձտյանցը ներկայացնում է երկու ցուցակ: Առաջինում գյուղերի քանակը 43 է, երկրորդում՝ 71[4]:

Արխիվային ևս երկու փաստաթուղթ ընդունում է 31 գյուղերի ցուցակը[5], հաջորդը՝ 34, մեկ ուրիշը՝ 37, վերջինը՝ 36 և այլն[6]:

Սկզբում համեմատենք 31 գյուղեր ունեցող փաստաթղթերը: Համեմատությունից պարզվում է, որ բոլոր հինգ փաստաթղթերն էլ ունեն նույն ակունքը՝ կամ արխիվային փաստաթղթերից մեկն է այդ, կամ էլ այն Ա-Դոյի (Կարինի առաջնորդարանի) վիճակագրության պարզ կրկնությունն է:

Այժմ անդրադառնանք մյուս աղբյուրներին՝ սկիզբ ընդունելով Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը: Ցուցակների համադրումից պարզվում է, որ մնացած բոլոր ցուցակներում չեն ընդգրկված Գ.Սրվանձտյանցի ցուցակի 9-12 գյուղեր: Բացի այդ, ցուցակներում հայտնվում են նոր գյուղանուններ: Եթե դրանք բոլորը գումարենք Գ.Սրվանձտյանցի ցուցակին (համեմատելուց հետո), ապա գյուղերի քանակը գրեթե հավասարվում է Գ.Սրվանձտյանցի երկրորդ մեծ ցուցակին՝ 71 գյուղ: Հիշեցնենք, որ երբեմն գյուղերի քանակը հաշվվում է 230[7]: Անհնար է համեմատություն անցկացնել վերջին երկու ցուցակների միջև, որովհետև մեծ ցուցակում ընդգրկված են միմիայն օտար անվանումներով գյուղեր: Ամենայն հավանականությամբ, դա կատարվել է համիդյան կոտորածներից, հայերի արտագաղթից հետո, երբ նրանց տեղը զբաղեցրին քոչվոր ցեղերը՝ իրենց անունները «պարգևելով» գյուղերին:

Փորձենք ներկայացված ցուցակների օգնությամբ պարզել նաև գավառի հայության քանակը: Ցուցակ առ ցուցակ համադրելուց հետո

[1] Նույն տեղում, թ. 13:
[2] Նույն տեղում, թ. 14:
[3] ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 365, ՏԲ, հ. 2, էջ 92-93:
[4] ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, 3-րդ թ., գ. 47, էջ 28-30, 1:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 238, թ. 4-8:
[6] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 7-8, գ. 153, թ. 5-10:
[7] ՏԲ, հ. 2, էջ 92:

պարզվում է, որ գավառում կա 23.519[1], 24.473[2], 20.249[3], 20.272[4], 11.609[5], 9128[6] հայ բնակչություն, այսինքն՝ միջինը 19-20.000: Այստեղից էլ դժվար է համաձայնել ՏԲ համապատասխան բաժնի հեղինակի հետ, երբ հայ բնակչության թիվը հաշվում է «մոտ 10 հազար»[7]: Վերջին կարծիքի ծնունդը կապված է Ա-Դոյի վիճակագրության հետ: Անհավանական է, որ 1304 տուն հայություն ունեցող գավառակի գյուղերն ունենային 9128 հայ բնակչություն: Ա-Դոն, ամենայն հավանականությամբ, յուրաքանչյուր տունը հաշվել է յոթ անձով, ինչը քիչ հավանական է նշված ժամանակահատվածում, քանզի, ինչպես նշել ենք շարադրանքի ընթացքում, հատկապես ռուս-թուրքական վերջին պատերազմից հետո հայերն իշխանություններին չէին ներկայացնում ընտանիքի անդամների լրիվ կազմը՝ փորձելով խուսափել հարկերից: Եվ բնական է, որ Կարինի առաջնորդարանն էլ, տեղյակ լինելով կամ չլինելով այդ վիճակին, հեղինակին ներկայացրել է իր ունեցած տեղեկությունները, որոնք այնքան էլ հավաստի չեն, որովհետև նույն ժամանակաշրջանին վերաբերող արխիվային փաստաթղթերը բոլորովին ուրիշ տեղեկություններ են հաղորդում: Նշենք, որ փաստաթղթերից մեկի հեղինակը նույնիսկ վստահեցնում է, որ վիճակագրական տեղեկությունները հավաքել է «իրազեկ անձնավորութիւններէ»[8], որպեսզի հավատ ներշնչի իր ցուցակի հանդեպ: Արդ, եթե համեմատում ենք այդ ցուցակը Ա-Դոյի տեղեկությունների հետ, հանդիպում ենք հսկայական տարբերությունների, ինչը հաստատում է մեր կարծիքը: Բերենք մի քանի օրինակ. Բուլք գյուղը՝ 160 տուն, Ա-Դոն պակաս է ներկայացնում 40 տնով, Էսպէվէրէքը՝ 26 տուն, 11 տնով, Մանցը՝ 120, 60 տնով, Խընզըրին՝ 80 տուն, 55 տնով, Բազառիճը՝ 198 տուն, 48 տնով, Սարիդայան՝ 150 տուն, 50 տնով և այլն: Համեմատությունը չշարունակելու համար հայտնենք, որ գրեթե բոլոր գյուղերի վիճակագրություններն ունեն նման շեղումներ: Նույն պատկերը կստանանք, եթե համեմատենք Գ.Սրվանձտյանցի վիճակագրության հետ: Միակ մխիթարականն այն է, որ ավելի քան 23-35 տարիների տարբերություն կա մեզ հայտնի ցուցակների միջև, և, ամենայն հավանակա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 159, թ. 5-7:
[2] Նույն տեղում, գ. 146, թ. 7-8:
[3] Նույն տեղում, թ. 6:
[4] Նույն տեղում, գ. 152, թ. 11:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 28-29:
[6] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 226:
[7] ՏԲ, հ. 2, էջ 92:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 7:

նությամբ, գրանցվել է նաև բնական աճը: Հակառակ դեպքում հնարավոր չէր լինի վստահել դրանց հավաստիությանը: Մեր միտքը հաստատելու համար բերենք միայն մեկ գյուղի համեմատությունը: Ապրանք (Ապարանք) գյուղը, ըստ Գ.Սրվանձտյանցի վիճակագրության, ունեցել է 35 տուն հայ բնակչություն: Ա-Դոն գրանցում է 40 տուն, իրազեկ անձերով վստահելի արխիվային փաստաթուղթը՝ 72[1]: 33-35 տարում աճը կազմել է 37 ընտանիք, որը, թերևս, ընդունելի ցուցանիշ է: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ, որը ներկայացնում է չափազանց մեծ կարևորություն ունեցող մանրամասնություններ, հայտնում է, որ ինչպես մյուս գյուղերում, այնպես էլ Ապարանք գյուղում, ժամանակի ընթացքում տեղավորվել են նաև եկվոր հայեր՝ 120 հոգի, այսինքն՝ գյուղը նշված ժամանակահատվածում ունեցել է 46 ընտանիք հայ բնակչություն: Բայց նույն փաստաթուղթը հայերի թիվն ընդունում է 750 շունչ[2], այսինքն՝ 290 շնչով ավելի (եթե յուրաքանչյուր ընտանիքում հաշվենք 10 անդամ): Այստեղից էլ, հաստատվում է արխիվային հիշյալ փաստաթղթի վիճակագրությունը, որը հայերի թիվը հաշվում է 750 շունչ[3], թեև հավաստիություն հաստատող փաստաթուղթը ևս մոտենում է այդ սահմանին, բայց 114 շնչով պակաս է հաշվում հայերի քանակը, գրեթե այնքան, ինչքան նախորդ փաստաթուղթը, բայց վերջինիս հայտնի չի եղել եկվոր հայերի (120 շունչ) քանակը, եթե ոչ երկու հաշվարկները կնույնանային:

Չպետք է կարծել, թե հակված ենք հայերի քանակն ուռճացնելու մտքին, այլ հետապնդում ենք իրական պատկերը ներկայացնելու գաղափար, որին հասնելու համար կարելի է կատարել բազմաթիվ նմանատիպ համեմատություններ, որոնք էլ կպարզեն ճշմարտությունը:

Արխիվային հիշյալ փաստաթուղթը հայտնում է նաև, որ գավառում կոտորածներից փրկվել է 2595 հայ[4]: Եթե պայմանականորեն ընդունենք գավառի բնակչության քանակը 20.000, պարզվում է, որ թուրք բարբարոսները կոտորել են 17.405 հայերի, այսինքն՝ գավառի բնակչության 87 տոկոսը ոչնչացվել է:

Գ.Սրվանձտյանցը, կապված գավառակի բնակչության ազգային կազմի հետ, հաղորդում է ևս մեկ արժեքավոր տեղեկություն. 12.000 հայ, 400 հույն, 12.000 թուրք, 6000 քուրդ էին ապրում 12 քրդական ու թուրքական գյուղերում[5]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, գ. 159, թ. 8:
[3] Նույն տեղում, թ. 8-12:
[4] Նույն տեղում, գ. 146, թ. 7-8:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 30:

Համաձայն նույն հեղինակի տեղեկությունների, գավառում կային 33 գործող եկեղեցիներ, 74 ավերված եկեղեցիներ, 2 վանքեր՝ 4 քահանաներով, ևս 22 վանքեր և 18 մատուռներ ավերված էին[1]: Եկեղեցիների և վանքերի քանակի մասին մնացած աղբյուրները հաղորդում են հետևյալ թվերը: Փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գավառում կար 35 եկեղեցի, 47 քահանա, ընդ որում, Մանց գյուղում՝ 4 քահանա[2]: 29 եկեղեցի, 35 քահանա է գրանցել մեկ այլ արխիվային փաստաթուղթ[3], հաջորդը՝ 40 եկեղեցի, 38 քահանա[4]:

Գավառի մշակութային կյանքի, ընկերությունների և դպրոցների վերաբերյալ ունենք հետևյալ վկայությունները. Գ.Սրվանձտյանցը հայտնում է, որ գավառում գործում էր միայն մեկ ընկերություն՝ Բագառիճի «Սանուց ընկերությունը» 10 դպրոցով և 1375 աշակերտով[5]: Ուրիշ փաստաթղթեր հիշատակում են 33 դպրոց, 49 ուսուցիչ, 2207 աշակերտի գոյությունը[6]: Մեկ ուրիշ փաստաթուղթ վկայում է, որ գավառում գործում էր 30 դպրոց[7], հաջորդը տեղեկացնում է 13 դպրոցի, 46 ուսուցչի, 2222 աշակերտի մասին[8]:

Գավառի հայությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Գ.Սրվանձտյանցի վկայությամբ, 23 հայկական գյուղերի հողերը բռնագրավել են թուրքերն ու քրդերը, և «հայք իսկ վռնտված և ցիրուցան եղած» են «մանավանդ քրդերեն, այժմու հայ գյուղացվոյ հողը բավական չէ»[9]:

Սակավահողության և հողազուրկ վիճակի պատճառով գյուղացիությունը գտնվում էր տնտեսական անապահով վիճակում և գոյությունը պաշտպանելու համար կամ դառնում էին մշակներ, կամ դիմում պանդխտության: Հ.Էփրիկյանն այս առթիվ գրում է. «Դերջան գաւառի Հայք շատ յետադէմ կացութեան մեջ կը գտնուին, քահանայք ընդհանրապէս մշակութեամբ կը հայթհայթեն իրենց նիւթական ապրուստն, վասն զի ժողովուրդը առհասարակ աղքատ է»[10]: Գյուղատնտեսության մեջ

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 7-8:
[3] Նույն տեղում, գ. 159, թ. 5-12:
[4] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, էջ 29:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 7-8:
[7] Նույն տեղում, գ. 159, թ. 12:
[8] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[9] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, էջ 29:
[10] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 573:

տարածված մշակաբույսերից էին ցորենը, գարին, կտավատը, կորեկը, ոսպը, սիսեռը, կաղամբը, սեխը, վարունգը և այլն: Օգտագործվում էին նաև աղահանքերը: Նշված մշակաբույսերը, գումարած արջառները, ոչխարը, ձին, ազնիվ քարերը, մորթին, կազմում էին արտահանման առարկաները, որոնց առևտրով զբաղվում էին գավառի գրեթե 120 և գավառի հետ կապված մյուս գավառակները[1]: Գավառի ներքին և արտաքին առևտուրը կազմում էր՝ 20.000 ոսկի՝ ներմուծում, 15.000 ոսկի արտահանում[2]: Գավառը ճանապարհներով կապված էր Կարինի, Երզնկայի, Քղիի, Բաբերդի, Գյումուշխանեի, Քիլքիթի հետ:

Գավառի նշանավոր գյուղերից է *Բուլքը*: Գյուղը գտնվում էր Արևմտյան Եփրատի աջ ափին, առատաջուր էր, բերրի հողերով: Բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ, 10 մարդ զբաղվում էր առևտրով, կային նաև որմնադիրներ, հյուսներ, դարբիններ, կոշկակարներ, դերձակներ, ներկարարներ, խեցեգործներ[3]:

Գյուղի մշակովի հողերը 8000 էին: Սուրբ Գևորգ եկեղեցին ուներ երկու քահանա: Վարժարանում սովորում էր 200 աշակերտ: Գյուղի բնակչության երեք տոկոսը գրագետ էր, 25 հոգի գտնվում էր պանդխտության մեջ[4]:

Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, գյուղի վարժարանում սովորում էր 70 աշակերտ, զուտ հայաբնակ գյուղ էր, դպրոցն ուներ 800 դուրուշ հասույթ[5]: Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 360 լծկան, 400 գլուխ կով, մատակ, 26 ձի, 90 էշ, 12.000 գլուխ ոչխար, 800 մեղվի փեթակ, ցանվում էր 260 սմար սերմացու[6]:

Արխիվային փաստաթղթերից մեկը հաղորդում է հետևյալ տեղեկությունները. գյուղում կար 300 զույգ եզ, 600 խոշոր եղջերավոր անասուն, 6000 գլուխ ոչխար, այծ, 100 ձի, 150 էշ, ջորի, 1000 մեղվի փեթակ[7]:

Գյուղի բնակչության քանակի մասին վկայություններն իրարամերժ են: Գ.Սրվանձտյանցը հաշվում է 55 տուն, 600 շունչ հայ բնակչություն[8]: Արխիվային փաստաթղթերից մեկն ընդունում է, որ հայ բնակչությունը պատերազմից առաջ 1000 շունչ էր[9]: Մեկ ուրիշը հավաստիաց-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 29:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[4] Նույն տեղում:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 29:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 7:
[7] Նույն տեղում, թ. 6:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 29:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 159, թ. 5:

նում է, որ նույն ժամանակաշրջանում գյուղն ուներ 150 տուն, 1500 շունչ հայ բնակչություն[1]: Հաջորդը վկայում է 160 տուն, 1015 շունչ բնակչության մասին[2]: Ա-Դոն և նրան կրկնող ևս երկու հեղինակներ ընդունում են 120 տուն հայերի գոյությունը[3]:

Միջինը՝ 124 տուն, 991 շունչ հայ բնակչություն:

Դվնիկ գյուղը հայտնի է նաև Դվնինկ անունով: Գտնվում է Կարին քաղաքից արևմուտք, 15 կմ հեռավորության վրա: Գյուղի մոտով հոսում է Արևմտյան Եփրատի վտակ Դվնիկը, որը մայր գետին է միանում գյուղի աջակողմյան մասում: Գյուղի մոտ էր կառուցված Արևմտյան Եփրատի կամուրջներից մեկը, որը հայտնի է Դվնիկի կամուրջ անունով: Այն կառուցվել է Հովվի կամրջի հետ, հավանաբար 4-րդ դարում: Կամուրջը եռակամար, քարաշեն է: Դվնիկը հայտնի է նաև որպես գրչության կենտրոն: Հակոբ Ծաղկողը 1587թ. Դվնիկում նկարազարդել է Ավետարան:

Դվնիկցիները հին ժամանակներից զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ: Գյուղն ունեցել է 3000 արտավար օգտագործելի հողատարածություն: Դվնիկցիները ժամանակի նշանավոր առևտրականներից էին: Գյուղի բնակիչներից շատերը զբաղվում էին արհեստներով: Տարածված արհեստներից էին որմնադրությունը, հյուսնությունը, դերձակությունը, կոշկակարությունը: Գյուղն ուներ 7 ջրաղաց:

Անասնապահ դվնիկցիներն ունեին 300 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 3000 ոչխար, էշ, ջորի, ձի, 300 մեղվի փեթակ, 160 զույգ եզ[4]:

Գյուղի ընդհանուր տարածքը կազմում էր 9 քառակուսի վերստ, զուտ հայաբնակ գյուղ էր[5]:

Դվնիկում գործում էր Ս.Սարգիս եկեղեցին, վարժարան, որն ուներ երկու ուսուցիչ և 87 աշակերտ[6]: Գ.Սրվանձտյանցն ընդունում է 70 աշակերտ վիճակագրությունը:

Գ.Սրվանձտյանցը գյուղի բնակչությունը հաշվում է 42 տուն, 450 շունչ հայ[7]: Տարբեր աղբյուրներ ընդունում են 110 տուն, 1000 բնակչություն, 98 տուն, 987 բնակչություն[8], Ա-Դոն՝ 60 տուն հայ բնակչություն և այլն[9]: Միջին տարբերակով կունենանք 75 տուն, 714 շունչ հայ բնակչություն:

[1] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[2] Նույն տեղում, թ. 7:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 187:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[5] Նույն տեղում, գ. 159, թ. 5:
[6] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 7, 6:
[9] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 187:

1894-1896թթ. ջարդերից ազատվել են գյուղի 81 բնակիչներ: Ընդհանուր վնասը կազմել է 19.100 օսմ. լիրա:

Ապրանք-Ապարանք-Ապրանց, գտնվում է Արևմտյան Եփրատի հովտում, Մամախաթուն քաղաքի հարավարևմտյան կողմում, նրանից 15 կմ հեռավորության վրա: Ուներ 3500 արտավար հող[1], ընդհանուր տարածությունը կազմում էր 7 քառ. վերստ[2]:

Հիմնական զբաղմունքներն էին գյուղատնտեսությունը, անասնապահությունը: Կային առևտրով, արհեստներով զբաղվող տներ: Գյուղացիներն ունեին 100 զույգ եզ, 300 գլուխ նախիր, 700 ոչխար, ձի, էշ, 1500 մեղվի փեթակ[3]:

1870թ. գործում էր վարժարանը, որն ուներ երկու ուսուցիչ, 50 աշակերտ[4]: Որոշ աղբյուրներ սաների թիվն ընդունում են 90: Գյուղում գործում էր Ս.Փրկիչ եկեղեցին:

Գյուղն ուներ 354 տուն, 340 շունչ հայ բնակչություն:

1894-1896թթ. կոտորածներից ազատվել է 50 հոգի, այսինքն՝ կոտորվել է 290 շունչ հայ: Գյուղի 80 երիտասարդներ գտնվում էին պանդխտության մեջ: Կոտորածներից գյուղի կրած կորուստները կազմում էին 18.200 օս. լիրա:

Ծաղկարին գավառի նշանավոր գյուղերից էր: Գտնվում էր Դերջանից (Մամախաթուն) 20 կմ հարավ-արևմուտք: Ուներ 6000 արտավար հողատարածություն, ուր ցանվում էին 410 սոմար ցորեն, գարի և այլ մշակաբույսեր: 4 հոգի զբաղվում էր առևտրով, 50 հոգի գտնվում էր պանդխտության մեջ, շուրջ 10 հոգի արհեստավորներ էին, գյուղն ուներ երկու ջրաղաց[5]: Հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր: Գյուղի ընդհանուր օգտագործելի հողերը կազմել են 8 քառ. վերստ[6]:

Անասնապահներն ունեին 450 գլուխ նախիր, 550 գլուխ ոչխար, 25 ձի, երկրագործները՝ 200 զույգ եզ: Արհեստներից ամենատարածվածները դարբնությունն ու պատշարությունն էին:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 45 տուն, 500 հայ բնակչություն[7]: Գյուղի բնակչության մասին կան նաև հետևյալ տեղեկություններ-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[2] Նույն տեղում, գ. 159, թ. 9:
[3] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6, 7:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6, 7:

ը: Որոշ աղբյուրներ ընդունում են 90 տուն, 850 շունչ, 80 տուն, 900 բնակչություն[1], 1600 հայ բնակչություն, 60 տուն և այլն[2]:

Միջինը՝ 9 տուն, 87 շունչ հայ բնակչություն:

Գյուղում գործել է Ս.Աստվածածին եկեղեցին, վարժարան, ըստ Գ.Սրվանձտյանցի՝ 50 աշակերտով[3]: Ուրիշ աղբյուր աշակերտների թիվը հաշվում է 65 կամ 120[4]:

1894-1896թթ. կոտորածներից ազատվել է 300 հոգի, այսինքն՝ կոտորվել է 384 շունչ հայ: Գյուղի կրած վնասները կազմում էին 41.650 օս. լիրա[5]:

Կոթեր գյուղն ուներ 12.000 արտավար հող[6], 7 քառ. վերստ տարածք: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, կային նաև գյուղի կարիքները բավարարող սակավաթիվ այլ արհեստավորներ: 20 հոգի զբաղվում էր առևտրով, 17 հոգի որմնադիրներ էին, 130 հոգի գտնվում էր պանդխտության մեջ: Երկրագործներն ունեին 450 զույգ եզ, նախիրը 1200 գլուխ էր, հոտը՝ 1800 գլուխ:

Ս.Գևորգ եկեղեցին ուներ երեք քահանա, վարժարանը՝ երկու ուսուցիչ, 90 աշակերտ[7]: Գ.Սրվանձտյանցը հաշվում է 100 աշակերտ[8], մեկ այլ աղբյուր՝ 150 և այլն:

Գյուղն ունեցել է 150 տուն, 1500 բնակչություն[9]: Գ.Սրվանձտյանցի հաշվումներով՝ 85 տուն, 900 բնակչություն[10]: Մեկ այլ աղբյուր վկայում է, որ գյուղն ունեցել է 160 տուն, 1600 հայ բնակչություն:

1894-1896թթ. կոտորածներից ազատվել է 122 մարդ: Գյուղի կրած վնասը կազմում է 32.800 օս. լիրա:

Հողիկ գյուղն ուներ 8 քառ. վերստ տարածք, 3500 արտավար հող, ցանվել է 380 սոմար սերմացու[11]: Հողագործությամբ զբաղվողներն ունեին 290 զույգ եզ: Անասնապահները խնամում էին 355 խոշոր և 3300 մանր եղջերավոր անասուն: Գյուղն ուներ երկու ջրաղաց, 800 մեղվի փեթակ[12]: Բնակչությունը, ըստ Գ.Սրվանձտյանցի, 50 տուն, 550 շունչ

[1] Նույն տեղում, գ. 159, թ. 7:
[2] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 187:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6, 7:
[5] Նույն տեղում, թ. 6:
[6] Նույն տեղում, գ. 159, թ. 6, 7, 8:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[9] ԳԱԹ, նույն տեղում, էջ 28:
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6, 7:
[11] Նույն տեղում, թ. 6:
[12] Նույն տեղում, թ. 6:

հայեր էին[1]: Ապա հայտնվում են՝ 115 տուն, 522 հայ բնակչություն, 70 տուն, 650 շունչ, 60 տուն բնակչություն տեղեկությունները[2]:

Միջինը՝ 74 տուն, 560 շունչ հայ բնակչություն:

Կոտորածներից ազատվել է շուրջ 55 մարդ[3], մեկ այլ աղբյուր վկայում է 18 ազատվածների մասին, 22 հոգի գտնվում էին պանդխտության մեջ, կոտորածների վնասները կազմում են 32.100 օսմանյան լիրա[4], մարդկային կորուստը՝ 495 շունչ:

Փիրիչը գավառի մեծ գյուղերից մեկն էր, ուներ 1400 արտավար հող[5], ևս 8 քառ. վերստ տարածք[6], ցանում էին 300 սոմար սերմացու[7]: Բնակչությունը, ըստ Գ.Սրվանձտյանցի հաշվումների, կազմում էր 70 տուն, 700 հայ[8]: Մնացած աղբյուրների հաղորդումների համաձայն՝ 187 տուն, 1484 շունչ[9], ապա՝ 1019 շունչ[10], 160 տուն, 1200 հայ բնակչություն[11]: Ա-Դոն վկայում է 100 տուն հայերի գոյությունը:

Միջինը՝ 135 տուն, 1200 շունչ հայ բնակչություն:

20 հոգի առևտրականներ էին, շուրջ 10 հոգի՝ արհեստավորներ: Գյուղն ուներ երկու եկեղեցի, երկու քահանա, մեկ վարժարան, 108 աշակերտ[12], Գ.Սրվանձտյանցը հաշվում է 100 աշակերտ[13]:

Հողագործներն ունեին 485 զույգ եզ[14]: Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 300 գլուխ խոշոր, 2000 գլուխ մանր եղջերավոր անասուն, 50 ձի: Գյուղում կար 500 մեղվի փեթակ: Մեկ այլ փաստաթուղթ անասունների քանակը ներկայացնում է՝ 984 կով և մատակ, 150 ձի, 180 էշ, 3750 ոչխար, 1000 մեղվի փեթակ:

Կոտորածներից ազատվել է 169 մարդ, կոտորվել է 1031 հայ: Գյուղի 200 տներից, կոտորածներից հետո ավերվել է 175-ը: Ընդհանուր վնասը կազմում է 43.700 օսմանյան լիրա[15]:

---

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6, 7:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, թ. 6:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, գ. 159, թ. 8:
[7] Նույն տեղում, գ. 146, թ. 7:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[10] Նույն տեղում, գ. 159, թ. 8:
[11] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[12] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 187, 7:
[13] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:
[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 6:
[15] Նույն տեղում, թ. 5, 6, 7:

Մանցը Դերջանի գավառի հայաշատ գյուղերից էր: Դիրքը դաշտավայրային էր, ուներ 5,5 քառ. վերստ տարածք: Օգտագործելի հողատարածությունների վրա ցանվում էր 520 սոմար սերմացու: Շուրջ 20 մարդ զբաղվում էր արհեստներով: Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 485 զույգ եզ, 570 գլուխ նախիր, ոչխարի հոտը 2050 գլուխ էր: Կար նաև 65 էշ, 38 ձի, 1215 մեղվի փեթակ[1]:

Հաջորդ վիճակագիրը հաղորդում է, որ գյուղն ուներ 598 գլուխ եզ, գոմեշ, 500 գլուխ կով և մատակ, 60 ձի, 1000 ոչխար, 500 մեղվի փեթակ[2]:

Գյուղն ուներ Ս.Սարգիս եկեղեցի (վիճակագիրներից մեկը եկեղեցին անվանում է Ս.Լուսավորիչ, որն ուներ 80 արտ, 2 մարգագետին կալվածք)[3]: Գ.Սրվանձտյանցի վկայությամբ՝ ուներ 400 ներքին և 800 լիրա պաշտոնեից հասույթ, վարժարանի հասույթը 700 լիրա էր, որը գոյանում էր հանգանակությամբ: Վարժարանում սովորում էր 50 աշակերտ[4]: 100 և 120 աշակերտների գոյության մասին վկայում են երկու վիճակագիրներ[5]:

Տարբեր աղբյուրների հաղորդմամբ, գյուղն ուներ 120 տուն, 1804 շունչ[6], 120 տուն, 1977 հայ և 200 տուն, 623 շունչ թուրք բնակչություն[7]: 1200 շունչ հայ, 1000 շունչ թուրք է հաշվում մեկ այլ վիճակագիր: Կարինի առաջնորդարանի հաղորդմամբ, առկա էր 60 տուն հայ, 60 տուն թուրք[8]: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 35 տուն, 380 շունչ հայ և 500 շունչ թուրք բնակչություն[9]:

Հետաքրքրական է, որ 35-40 տարիների ընթացքում՝ 19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 1914թ. պատերազմը, գյուղի բնակչությունն աճել է գրեթե 3,5 անգամ՝ 35 տնից հասնելով 120 տուն բնակչության: Եթե չլինեին վայրիվերո ժամանակները, թերևս, հնարավոր լիներ ընդունել աճի նման տեմպերը: Այս դեպքում պատերազմից առաջ վիճակագրություն կազմած հեղինակները չեն ներկայացնում իրական պատկերը:

Միջին տարբերակով կունենանք 101 տուն, 1156 շունչ հայ, 123 տուն, 636 շունչ թուրք բնակչություն:

[1] Նույն տեղում, գ. 159, թ. 5-6:
[2] Նույն տեղում, գ. 146, թ. 7, 8:
[3] Նույն տեղում, գ. 159, թ. 7-8:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 19:
[5] Նույն տեղում, գ. 146, թ. 6, 7, 8:
[6] Նույն տեղում, գ. 146, թ. 7:
[7] Նույն տեղում, գ. 146, թ. 6:
[8] ԳԱԹ, նշվ. տեղում, գ. 23, թ. 19:
[9] Նույն տեղում, գ. 159, թ. 9:

Խաչ գյուղը գտնվում է Մամախաթունից հարավ-արևելք, Դերջան գետի աջ ափին: Տեղանքը սարալանջային էր: Գյուղն ուներ 5 քառ. վերստ տարածք[1]: Հողն արգավանդ էր, բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, կային նաև առևտրով ու արհեստներով զբաղվողներ:

Երկրագործությամբ զբաղվողները մշակում էին 820 սոմար ցանվող արտեր[2]: Գյուղացիներն ունեին 600 գլուխ եզ, 710 գլուխ կով, մատակ, 26 էշ, 78 ձի, 960 գլուխ ոչխար, 860 փեթակ[3]:

Վիճակագիրներից մեկը գյուղի եկեղեցին անվանում է Ս.Գևորգ, այն ուներ մի քանի արտ կալվածք[4]:

Գ.Սրվանձտյանցը վկայում է, որ գյուղի եկեղեցին կրում էր Ս.Պողոս-Պետրոս անունը: Եկեղեցու հասույթը կազմում էր 800 լիրա: Վարժարանում սովորում էր 30 աշակերտ[5]: Անանուն վիճակագիրը հայտնում է, որ աշակերտների քանակը 92 էր[6]:

Բնակչությունը խառն էր: 620 և 600 շունչ բնակչության մասին վկայում են երկու արխիվային փաստաթղթեր: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ուներ 50 տուն հայ և 50 տուն մահմեդական բնակչություն[7]: Գ.Սրվանձտյանցը հաշվում է 27 տուն, 300 շունչ հայ և 20 տուն թուրք բնակչություն[8]:

Միջին տարբերակով կունենանք 62 տուն, 465 շունչ հայ, 35 տուն, 245 շունչ մահմեդական բնակչություն:

Բագառիճ գյուղը երկար ժամանակ գտնվել է Երզնկայի գավառի կազմում և միայն 20-րդ դարի սկզբներին է միացվել Դերջանի գավառին: Բայց այն Գ.Սրվանձտյանցի և Կարինի առաջնորդարանի ցուցակներում հիշատակվում է որպես Դերջանի գավառի գյուղ: Հայտնի է նաև Բագառիջ, Բագառիճ, Բագառնիջ և մի շարք այլ անուններով:

Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է, որ Արտաշես թագավորն արշավանքների ժամանակ «Ելլադայումն էլ վերցնելով Դիոսի, Արտեմիդի, Աթենասի, Հեփեստոսի Ափրոդիտեի արձանները՝ ուղարկում է Հայաստան»[9]: Այնուհետև՝ «Արտաշես Առաջինի մահից հե-

[1] Նույն տեղում, գ. 146, թ. 7:
[2] Նույն տեղում, թ. 8:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, գ. 159, թ. 8:
[5] ԳԱԹ, նշվ. տեղում, գ. 23, թ. 19:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 8:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 186:
[8] ԳԱԹ, նշվ. տեղում, գ. 23, թ. 19:
[9] *Մովսես Խորենացի,* Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 144:

տո թագավորում է նրա Տիգրան որդին... Իբրև առաջին գործ նա կամեցավ մեհյաններ շինել... Ոլիմպիական Դիոսի արձանը նա կանգնեցնում է Անի ամրոցում, Աթենասինը՝ Թիլում, Արտեմեդի մյուս արձանը՝ Երզնկայում և Հեփեստոսինը՝ Բագայառիճում»[1]:

Ագաթանգեղոս պատմիչի վկայությամբ, Տրդատ Գ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչը, պայքարելով հեթանոսների դեմ, հասնում են Բագառիճ. «Գայր հասնէր ի Միհրական մեհեանն անուանեալ արդուոյն Արամազդայ, ի գիւղն զոր Բագայառիճն կոչեն ըստ պարթեւերէն լեզուին: Եւ գայն ի հիմանցն ըրեալ խլէին, եւ զգանձս մթերեալս աւոր հարկանէին եւ աղքատաց բաշխէին, եւ զտեղիսն նուիրէին եկեղեցւոյ»[2]:

15-րդ դարում Բագառիճը շեն ու հարուստ գյուղ էր, ուներ 15 քառ. վերստ տարածք, երկու թաղեր՝ Փոքր կամ Մեծ, Վերի և Վարի: Ավանի միջով հոսում էր Եփրատի վտակներից մեկը՝ Ձորը: Գետակի աջ ափին լուսավորչական հայերի Ս.Հակոբ եկեղեցին էր՝ կից վարժարանով: Գետի ձախ ափին բողոքական հայերի սրբատեղին էր ու վարժարանը: Ձախ կողմում էին գտնվում նաև Ս.Սարգիս եկեղեցին, արևելյան կողմում «Վարի վանք» եկեղեցու ավերակներն էին: 19-րդ դարում Բագառիճն ունեցել է 174 տուն, 1268 հայ բնակչություն: Ընդ որում՝ Մեծ Բագառիճն ունեցել է 75 տուն, 329, փոքրը՝ 34 տուն, 373 շունչ հայ բնակչություն[3]: Գ.Սրվանձտյանցը Վերին Բագառիճում հաշվում է 40 տուն, 600 շունչ, Վարի Բագառիճում՝ 70 տուն, 1200 շունչ հայ բնակչություն[4]:

Անանուն հեղինակը Վարի Բագառիճում հաշվում է 196 տուն, 2175 շունչ, Վերինում՝ 110 տուն, 1560 շունչ հայ բնակչություն[5]: Ա-Դոյի տեղեկությունները նույնանում են Կարինի առաջնորդարանի տվյալներին[6]: ՀՍՀ 2-րդ հատորում արձանագրված է, որ 1909թ. Բագառիճն ունեցել է 150 տուն հայ բնակչություն[7]: Մի քանի տող ներքև բերվում է հետևյալ վիճակագրությունը. Վերին Բագառիճ՝ 80 տուն, Ներքին՝130 տուն հայ բնակչություն[8]:

Միջին տարբերակով, համադրելով տեղեկությունները, կունենանք 197 տուն, 1780 շունչ հայ բնակչություն:

---

[1] Նույն տեղում, էջ 147:
[2] *Ագաթանգեղոս,* Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 401-402:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 187, թ. 17:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ բ., ց. 47, թ. 22:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 15:
[7] ՀՍՀ, հ. 2, Ե., 1976, էջ 196:
[8] Նույն տեղում:

Երկու թաղերում էլ գործում էին եկեղեցիներ: Վերին թաղում Հայկյան վարժարանն էր՝ 700 լիրա հասույթով, Վարի թաղում՝ Արմենակյան վարժարանն էր՝ 1500 լիրա հասույթով[1]:

Վերին թաղի դպրոցն ուներ երկու ուսուցիչ, երկու ուսուցչուհի, 200 աշակերտ, Վարի թաղի դպրոցը՝ չորս ուսուցիչ, երկու ուսուցչուհի, 300 աշակերտով[2]: Վերին թաղում ապրում էին 10 առևտրականներ, 25 արհեստավորներ՝ որմնադիր, հյուսն, դարբին, դերձակ, ջրաղացպան, կոշկակար: Բնակիչներն ունեին 80 զույգ եզ, 200 խոշոր եղջերավոր անասուն, 3000 ոչխար, 70 ջորի, 12 ձի, 100 մեղվի փեթակ: 1894-1896թթ. կոտորածների ժամանակ թաղի կրած վնասները կազմում էին 152.500 օսմանյան լիրա (առևտրականների, արհեստավորների, կրոնական հիմնարկությունների, մշակութային օջախների, բնակչության այլ խավերի վնասները միասին վերցրած)[3]: Վարի թաղում գործում էին 20 առևտրականներ, 50 արհեստավորներ՝ որմնադիր, հյուսն, դարբին, կոշկակար, դերձակ, ներկարար, բրուտ, ջրաղացպան, սափրիչ: Թաղի բնակիչներն ունեին 160 զույգ եզ, 600 խոշոր եղջերավոր անասուն, 4000 գլուխ ոչխար, 150 ջորի, 25 ձի, 500 մեղվի փեթակ: Կոտորածների ժամանակ ընդհանուր վնասը կազմել է 185.000 օսմանյան լիրա[4]:

Գավառակի կենտրոնը Մամախաթուն ավանն էր: Այն գտնվում է Կարինից 16 ժամ հեռավորության վրա: Ղ.Ինճիճյանը ենթադրում է, որ ավանը կառուցել է Խաթուն փաշան և «յանուն նորին անուանեալ»[5]:

Մամախաթունը եղել է քարավանային առևտրի կենտրոն, որի պատճառով այնտեղ կառուցվել է «Քարաշէն իջեւան մէջ խան կարաւանաց»[6]:

19-րդ դարի երկրորդ կեսին Մամախաթունը ևս ենթարկվեց քոչվորական պետության հալածանքների ու կոտորածների քաղաքականությանը, վերածվեց անշուք գյուղի, որտեղ 20-րդ դարի սկզբներին ապրում էին 20 տուն, 124 շունչ հայեր[7]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ., գ. 47, թ. 22:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1-2:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 93:
[6] Նույն տեղում:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 8:

Ց ՈՒ Ց Ա Կ

Դերջանի գավառի հայաշատ վայրերի

	տուն	շունչ		տուն	շունչ
Բազառիճ	197	1780	Խընզրի	40	300
Էրանի	35	330	Խումլար	35	350
Թարու	20	200	Ղուրլոզ	30	300
Ապրանք	35	340	Ծաղկարի	100	854
Բուլք	121	942	Կոթեր	131	1333
Դվնիկ	75	714	Էսպեվերք	25	170
Ղարաղուլաղ	35	350	Հողեք	73	535
Խաղաղ ներքին	30	300	Սարիղայա	100	1000
Խաչաղներք	50	500	Մանց	101	1156
Խաչ գյուղ	62	465	Քեռփուր	100	1000
Փիրիչ	132	1936			

Գավառակի նշանավոր գյուղերից էին նաև Աղաթիրը, Վժանը, Չանախչին, Գառնի բերդակը, Վերի Ղազախը, Հերանին, Մյուս Հերանին, Սադոյի գոմը և այլն:

Կարինի նահանգի Թորթումի գավառ

Գավառը հայտնի է նաև Թորդոմ, Թորդում, Թորթոմ, Իշխանանիստի ձոր, Տորտում անուններով: Գտնվում է Կարինի հյուսիսարևելյան կողմում, Թորթում գետի, նրա վտակների, գետակների ավազանում, 70 կմ երկարություն ունեցող, 12-15 կմ լայնությամբ հովտում կամ գոգավորությունում: Տարածքով համապատասխանում է Տայքի Ոքալե և Ագորդացփոր կամ Շատգոմք գավառներին: Վերջինս համապատասխանում է Բարձր Հայքի համանուն գավառին:

«Ըստ արդի աշխարհագրական բաժանման,- գրում է Հ.Էփրիկյանը,- սահմանք են հարաւային արեւմուտքէ Կարնոյ գաւառը, հիւսիսային արեւելքէ Ռուսիա, հարաւ արեւելքէն Բասեն գաւառակը, հարաւէն Օվաճըզ գաւառակը, արեւմուտքէն Սպեր և հիւսիս արեւմուտքէն Կիսկիմ: Թորթումի երկարութիւնն հարաւէ դէպի հիւսիս գետոյն ընթացից համեմատ կը տեւէ իբր 11 ժամ, լայնութիւնը արեւելքէ արեւմուտք 6 կամ 5 ժամ»[1]:

Գավառը 3-9-րդ դարերում Մամիկոնյանների կալվածքն էր: 10-րդ դարում մտնում էր Տայքի կյուրապաղատության կազմում: 1000թ., երբ Դա-

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 48:

վիթ Կյուրապաղատն իր թագավորությունը կտակեց բյուզանդական կայսրին, Թորթումը ևս զավթվեց Բյուզանդիայի կողմից: 11-րդ դարի վերջերին Թորթումը նվաճվեց սելջուկների կողմից: 13-րդ դարի երկրորդ կեսից մինչև 16-րդ դարի վերջերը մտնում էր Սամցխեի աթաբեկության կազմում:

16-րդ դարում սկսվեցին օսմանյան թուրքերի արշավանքները: 1549թ. Սուլեյման Բ սուլթանը երկրորդ վեզիր Ահմեդ փաշային հանձնարարեց նվաճել Վրաստանը. «...կրսուի, 6 շաբաթուան մէջ գրաւեց 20 բերդեր, որոնց գլխաւորներու մէջ առաջին տեղը կը յիշուի՝ Թորթում»,- գրում է Հ.Տաշեանը[1]:

Հայրենիք փնտրող քոչվորական արշավանքներն ուղեկցվում էին ավերով ու թալանով: 1586թ. գրված ավետարանի հեղինակ Առաքելն իր հիշատակարանում գրել է. «...պատուհաս եկաւ ի վերայ մեր՝ սուրն, սովն, զմահ տարաժամն, եւ միւս ցաւն գայլն՝ որ մեռեալ ի գերեզման հանէր եւ ուտէր...»[2]:

1590թ. թուրքերը վերջնականապես նվաճեցին Թորթումը և որպես կազա (գավառ) միացրին Կարնո վիլայեթին: Սկսվեցին կրոնական ու տնտեսական հալածանքները: Գավառակի բնակչության մի մասը բռնի մահմեդականացվեց, մյուս հատվածն ընդունեց կաթոլիկություն:

Պարտադրանքի և ֆիզիկական բնաջնջման սպառնալիքով կատարված մահմեդականացումը, սակայն, չլուծեց խնդիրը: Կրոնափոխ հայությունը պահպանում էր ազգային դիմագիծը՝ ձևականորեն, արտաքուստ իրեն ներկայացնելով օսմանլի: Այսպես ասպարեզ եկավ ևս մեկ տխուր արտահայտություն՝ կեսկես, որոնք համեմատաբար ավելի մեծ թիվ էին կազմում նաև Թորթումի գավառում: Դրանք մահմեդականացված հայերն էին, որոնք խոսում էին երկու լեզուներով էլ, չնայած, նրանց մեծ մասը չգիտեր թուրքերեն և միայն համարվում էր օսմանլի՝ չնշելով ազգությունը: Սա երևույթ էր, որ դիպուկ գնահատականի է արժանացել գերմանացի ուսումնասիրող Կոխի կողմից. «Ասիոյ մէջ ազգերն յաճախ իրենց կրօնքին համեմատ կը զանազանուին, քան իրենց ազգութեան»[3]:

Թորթումն ունի հիասքանչ բնություն: Հ.Կարնեցին գրում էր. «Եւ շրջեալ միւս ձորն Իշխանանիստ, որ ունի բազում գիւղք և փոքր բերդորայք եւ վանորայք ի գլուխս լերանց. եւ ունի բազում յեայլանի ակնաբուխ, անասնոց եւ խաշանց վայելուչ վայրք. եւ ի մէջ ձորոնց է այգիք եւ բուրաստանք եւ պտուղք ծառոց զանազան անթիւ, եւ զինի այնչափ յոլով

[1] *Տաշեան Հ.,* Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Ա, Վիեննա, 1973, էջ 159:
[2] *Տաշեան Հ.,* նշված գիրքը, էջ 161:
[3] Նույն տեղում, էջ 55:

եւ քաղցրահամ, որ մինչեւ է. տարի այնպէս անապական է, որ թուի թէ այսօր հարեալ է ի հնձանէ, որ ոչ սրտի դողումն կամ գլխացաւութիւն բերէ, այլ ախորժէ ըմպելողացն»[1]:

«Բարձր լեռներէ պատուած աշխարհ» Թորթումին[2] «պճնազարդ ձորահովիտները եւ սուր սուր կատարները տալիս են գեղեցիկ տեսք: Բազմաձեւ մեծ ու փոքր վտակներ մայր գետով հանդերձ աջ ու ձախ ակօսում են երկիրը, իրենց գետաբերաններում հիւրը նկատելով պտղատու պարտէզներ եւ խաղողի այգիներ»[3]:

Թորթումի գավառի պատմությանն անդրադարձած գրեթե բոլոր հեղինակները հիացական տողեր են նվիրել գավառի զարմանահրաշ բնական պատկերներին: Ահավասիկ Ն.Սարգսյանի նկարագրությունը. «...գագաթունք լերանց Թորթումայ չհաւասարեն գետնոյ սահմանագլխոյն. յորմէ դիւրաւ գուշակի բարձրութիւն Կարնոյ գավառին, եւ հիացուցանէ զտեսանելիսն անընդմիջական այլատարազութիւն բնութեան կրկին գաւառացդ... Իսկ երկրորդս տեսարան յանդիման առնէ այնպիսի. յորում ‘ի բազմակերտ զանազանութենէն չզգայ ոք տաղտուկ բնաւ. զի եթէ դաշտորէից ոք ցանկանայցէ՝ ոչ սակաւ գտնէ անդէդ, ոչ ամենեւին տափարակս այլ մանր եւ վարկպարազի բլրակօք զուարճացեալս. եւ եթէ ձորոց խոխումից, առուակաց եւ կարկաջահոս գետոց ուրուք իղձ լինիցի՝ անբաւս տեսանիցէ»[4]:

Թորթումին հատկապես մեծ «պճնանք» է պատճառում ջրվեժը: Նրա գոյացման մասին կան տարբեր ենթադրություններ: Բնության այդ հրաշալիքը, որը համեմատում են հանրահայտ Նիագարայի հետ, կատարյալ ստեղծագործություն է: Ատրպետը հայտնում է, որ 1791թ. տեղի է ունեցել երկրաշարժ, և «Խարս լերան վերին կատարը կործանուել եւ լցուել է Թորդում վտակի հունը. ձորն անմիջապէս ծածկել է, ջրի ընթացքը կապել: Այս լիցքը այնպես է պնդել գետի հունն ու նրա ձորը, որ ջրերի ընթացքը խափանել է եւ ջուրը 12 վերստ երկարութեամբ բարձրացել ու լճացել է, տեղ-տեղ մինչեւ 100 մետր խորութեամբ: Ապա ջուրն այսքան բարձրանալուց յետոյ, մօտակայ մի բարձր ժայռից թափվում է իր Թեւ կամ Դեւ առվակը, որի հետ երկու կիլոմետր ճանապարհ առաջ գնալով մտնում է նախկին հունը: Թորդումի լճի բարձունքից այս ջրվեժը 45 մետր լայնութեամբ եւ 70 մետր բարձրութեամբ ջրերը վիժում են ապա-

[1] Նույն տեղում:
[2] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 17:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 200:
[4] *Սարգսեան Ն.,* Տեղեկագրութիւն ի փոքր և ի մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 83:

ռաժների վրայ ահեղ գոչերով, իրար վրայ երեք աստիճանի ջրվեժ են կազմում մինչեւ Թեւին խառնուելը: Ջրվեժի բարձրացրած շառաչիւնը քսան կիլոմետր հեռավորութեան վրայ լսվում է: Աշխարհի ամենագեղեցիկ ջրվեժներից մեկն է...»[1]:

Թորթումի ջրվեժն առավել պատկերավոր է նկարագրում Հ.Էփրիկյանը. «...բնութեան գեղեցկութիւնը կը ներկայանայ իր ամենայն կատարելութեամբ, ժայռերու զանազան ձեւերն, որոնց մէջէն կարկաջելով կը հոսին ջրերը, ջրվեժի հասանաց ձայնը, ջրոյ շոգւոյ կամ ծխոյ նման օդի մէջ ցնդիլն, փրփրագէղ ալիքները, եւ այլ ամենայն պարագայք կը յափշտակեն մարդուս միտքը, եւ այնչափ չքնաղ եւ զմայլեցուցիչ կը դարձնեն տեսարանը, որ մինչեւ անգամ ամբողջ Եւրոպա, Ափրիկէ եւ Ասիա ճանապարհորդող գերմանացի Վակնէրը, ոչ միայն Թորթումի ջրվեժը, չքնաղ եւ վեհագոյն կը համարի բոլոր Եւրոպիոյ, հանդերձ Հելուետիայով՝ ջրվէժներէն, այլ եւ կ'ըսէ, գուցէ ամբողջ աշխարհի մէջ առաջինն ըլլայ, Նիակարայի ջրվէժէն վերջ»[2]: Ռուս հեղինակներից Յա.Պրոսկուրյակովը ջրվեժի գեղեցկությունն անվանում է աննկարագրելի, վեր «պրոզայիկ և պոետիկ նկարագրություններից», որն անկարելի է գրչով պատկերել[3]:

Պակաս զարմանահրաշ չէ նաև Թորթումի լիճը: Այն 12 կմ երկարությամբ, «եւ 1-1,20 լայնութեամբ»[4], 100 մետր խորությամբ պատկերազարդ տարածք է, սեղմված Թեյուն, Մագնուր, Վանուց անտառապատ լեռներով, որն Հ.Էփրիկյանն անվանում է «խոր բաժակ մը լերանց պայծառ եւ ականակիտ աղբիւրներու»[5]:

Գավառի բնական գեղեցկությունը զարդարում էին եկեղեցիներն ու վանքերը, ապարանքները, ամրոցները, բերդերը: Ստեղծվում էր գեղեցիկ ներդաշնակություն բնության և մարդու ստեղծագործության: Բայց հիասքանչ այդ համամասնությունը խաթարվեց, երբ սկսվեցին քոչվորական ցեղերի արշավանքները, որոնք ավերակների ու փլատակների վերածեցին գրեթե բոլոր կառույցները, «նկարչական տեսարանները»:

Թորթումի գավառը զուրկ է դաշտավայրերից: Գերակշռողն անտառածածկ կամ առատ բուսականությամբ սարալանջերն են: Այս պատճառով էլ գավառում զգացվում է հացահատիկային մշակաբույսերի պակասություն: Սարալանջերը բարերար պայմաններ են ստեղծում անասնա-

[1] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 172:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. Բ, էջ 52:
[3] *Проскуряков Я.С.,* Заметки о Турции, Тифлис, 1995, стр. 77-78.
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 172:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. Բ, էջ 50:

պահության և պտղաբուծության համար: Գավառի տարածքի զգալի մասը ծածկված է ընկուզենիներով: Բազմաթիվ գետերն ու գետակները, հնարավորություն տալով այգեգործության զարգացման համար, գավառին տալիս են նաև «գեղատեսիլ և ստվերախիտ պարտեզի տպավորություն»[1]:

Ընկույզից բացի, համբավավոր էին Թորթումի ծիրանը, սալորը, թութը, խաղողը: Մրգերն արտահանման հիմնական առարկաներն էին: Դրանք կամ վաճառվում էին, կամ փոխանակվում հացահատիկի հետ:

«Թորթումի խաղողը,- գրում էր ժամանակակիցներից մեկը,- առատությունով ճոխացնում էր Էրզրումի շուկաները»[2]:

Գավառի արտահանման մեջ կարևոր տեղ էին գրավում չոր մրգերը: 1894թ. կարդացած զեկուցումներից մեկում Գ.Արծրունին հատկապես հիշատակում է այդ փաստը. «Յիսբիր, Թորթում և Ակն իրանց չորացած մրգերով, մանավանդ հռչակված է այդտեղի չորացած թութը»[3]:

Թեև բնական պայմանները հնարավորություն չէին տալիս զբաղվելու հացահատիկի լայնածավալ մշակությամբ, այնուամենայնիվ, մրգերի շտեմարան Թորթումում թեև սահմանափակ, բայց մշակում էին հացահատիկ: Այսպես, 1873թ. փաստաթղթերից մեկը տեղեկացնում է, որ Թորթումի գավառը, Սպերի և Կիսկիմի գավառների հետ միասին, արտադրել է 832.566 փութ ցորեն[4]:

Հատկանշական է, որ ջրառատ Թորթումի գավառը, հատկապես երաշտ տարիներին, չէր զգում ջրի պակասություն, և բազմաթիվ ջրանցքներ, որ կառուցվել էին հնագույն ժամանակներից, ընդարձակվել նոր ժամանակներում, ստեղծում էին պտղի ու հացահատիկի աճեցման պայմաններ: Ոռոգման համակարգի վկայություններն էին դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին պահպանված «Վիշապազանց արձանները», որոնք, Ատրպետի կարծիքով, գոյություն են ունեցել «Ակկատների եւ Էլամի ջրանցքների կառուցման շրջանից»[5]:

Գավառի բնակչության հաջորդ զբաղմունքն անասնապահությունն էր, որի զարգացմանն ու բարգավաճմանը նպաստում էին բուսածածկ սարալանջերը:

1896-1899թթ. Թորթումի գավառի 4088 տնտեսություններն ունեին 21.618 խոշոր և 72.087 մանր եղջերավոր անասուններ: Այսինքն՝ յուրա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1548, թ. 7:
[2] Նույն տեղում, գ. 1546, թ. 5:
[3] *Արծրունի Գ.,* Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 10:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1547, թ. 1:
[5] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 163:

քանչյուր տնտեսության բաժին էր ընկնում 5,2 գլուխ խոշոր և 17,6 գլուխ մանր եղջերավոր անասուն[1]:

Թորթումի գավառի բերքերի մասին մեր նկարագրությունն անհամեմատ թերի կլինի առանց Հ.Կարնեցու գեղեցիկ մեկնաբանության. «Եւ լինի Թորթումս այս տանձ, եւս առաւել խնձոր զարմանալի հոտով եւ համով, որ հիացեալ տացեն փառս Աստուծոյ, որ մէկն այնչափ մեծ է, որ Բճ. գրամ կշռէ, որ է Ա. նուկի, եւ է գունն կարմիր կամ սպիտակ յոյժ, որ հանամաղ ի Ստամպոլ եւ ի դրունս մեծամեծաց ընծայ մատուցեալ լինի, որ անուամբ շահալմասի ասեն»[2]:

Թորթումի գավառում մշակվում էին նաև բրինձ և բամբակ, մեծ պահանջարկ ունեին բալն ու հոնը, կեռասը:

Գավառի Ռաբատ և Պար գյուղերի մոտ կան աղահանքեր, որոնք օգտագործվում էին սահմանափակ քանակով, քանզի արդյունահանումը կատարվում էր նահապետական եղանակով՝ «մրճովք խարխալել զհատորս աղի»[3]:

Թորթումի գավառը հայտնի էր իր ամրոցներով ու բերդերով, որոնցից նշանավոր էին Թորթումի, Ընկուզկա, Էլկիձորի, Քյուչյուքտերեի, Աղջրկու (Աղչրկու), Ղալե, Գեղիկ բերդերը: Ինչպես տեղեկացնում է Ատրպետը, այս բոլոր շինությունները կառուցվել են մետաղի ու կրի օգտագործմամբ, որոնց շնորհիվ եղել են դիմացկուն և անառիկ: Նկատի ունենալով ամրոցաշինության հիշյալ եղանակը՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ երկաթե սեպերով իրար ամրացված, կոփված քարերից շարված, կրով ամրացված այդ շինությունները «5-10 դար վաղաժամեայ են» հունական շինություններից[4]:

Ատրպետը միաժամանակ ցավով նշում է, որ բերդերն ու ամրոցները, դղյակներն այնպիսի բարբարոսությամբ են ավերված, որ «այցելուն հառաչում է այդ ավերակներին մոտենալիս»[5]: Քանդող ցեղի սերունդները պատերազմական ժամանակների ավերը շարունակել են նաև հետագայում՝ հույս ունենալով գտնել գանձ, արժեքավոր իրեր, որոնք կկարողանան վաճառել եվրոպացի ճանապարհորդներին:

Թորթումը նշանավոր էր նաև վանքերով, եկեղեցիներով, որոնք գոյություն ունեին գրեթե բոլոր հայաբնակ գյուղերում: Համբավաշատ վանքերից էին Խախուի, Էգրեկի, Էշկիձորի վանքերն ու եկեղեցիները:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1544, թ. 43:
[2] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 17:
[3] *Մարգսեան Ն.,* նշված գիրքը, էջ 85:
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 165:
[5] Նույն տեղում, էջ 159:

Թորթումի գավառի թե՛ գյուղերի, թե՛ բնակչության քանակի մասին կան հակասական տեղեկություններ, չափազանցություններ ու նվազեցումներ:

Ղ.Ինճիճյանը դարասկզբին գավառում հաշվում էր 30 գյուղ[1], Ալ.Երիցյանը 1880-ական թվականներին՝ 31 գյուղ[2], որոշ աղբյուրներ նույնպես ընդունում էին 31 գյուղերի գոյությունը[3], Ա-Դոն դարավերջին հաշվում էր 73 գյուղ, որից միայն 13-ը հայկական[4]: Հայկական գյուղերի նույն քանակն ընդունում է նաև արխիվային փաստաթղթերից մեկի հեղինակը[5]: Ատրպետը գավառում հաշվում էր 23 հայկական գյուղ[6]: Ղևոնդ Ալիշանի տեղեկություններով, գավառում եղել է 70 գյուղ[7], ՀՍՀ հոդվածի հեղինակն ընդունում է 73 գյուղ, որից 11-ը՝ հայաբնակ[8] և այլն:

Վկայությունների նման առատության պայմաններում դժվար է հստակություն մտցնել կամ ճշգրտել որևէ տեղեկություն, քանզի ձեռքի տակ չունենք առավել հավաստի վկայություն: Եթե դիմենք միջին տարբերակին, ապա կունենանք ընդհանուրը՝ 50-ից ավելի գյուղ (308 / 6 = 50.8) և 15 հայաբնակ գյուղ (60 / 4 = 15):

Առավել խայտաբղետ պատկեր ունեն բնակչության թվաքանակի մասին տեղեկությունները: Ա-Դոն 13 հայաբնակ գյուղերում հաշվում է 2829 տուն բնակիչ[9]: Եթե հաշվումը կատարենք Ա-Դոյի սկզբունքով՝ յուրաքանչյուր տուն 6 բնակիչ, ապա կունենանք 16.974 շունչ բնակչություն: Ալ.Երիցյանը 31 գյուղերում հաշվում է 16.722 բնակչություն, բայց չի նշում հայաբնակ գյուղերի թիվը[10]: Բնակչության նույն թվաքանակը հիշատակում է նաև ՏԲ համապատասխան հոդվածի հեղինակը: Վ.Քինեի թուրքամետ հաշվումներով, 1891թ. գավառում կար 52.591 բնակիչ, որոնցից միայն 2367-ն էին հայեր, այսինքն՝ 50.224-ը մահմեդականներ էին[11]: Ընդունել նման վիճակագրությունը՝ կնշանակեր համաձայնել թուրքական կողմնակալ տեղեկությունների հետ: Չմոռանալով ընդգծել, որ մահմեդականների հիշատակված քանակը կազմված էր նաև բռնի կրոնա-

[1] *Ինճիճյան Ղ.,* նշված գիրքը, էջ 93-94:
[2] *Երիցյան Ալ.,* Թե Տաճկահայաստանում ո՞րքան հայ կա, «Փորձ», 1880, թիւ 6-7, էջ 220:
[3] ՏԲ, հ. 2, էջ 476:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 379, թ. 63:
[6] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 158:
[7] *Ղ.Ալիշան,* Տեղեկագիր Հայոց Մեծաց, էջ 37:
[8] ՀՍՀ, հ. 4, Ե., 1978, էջ 206:
[9] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[10] *Երիցյան Ալ.,* նշված հոդվածը, էջ 220:
[11] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 236-237:

փոխված հայերի, հույների, ասորիների հաշվին, որովհետև գաղտնիք չէր, որ հայ-կեսկեսները հատկապես մեծ թիվ էին կազմում, և նրանք երբեմն չէին հիշատակվում իրենց ազգային պատկանելությամբ:

Արխիվային փաստաթղթերից մեկը նույնպես ընդունում է 2829 հայ բնակչություն թիվը[1]: Ավելորդ չի լինի, եթե հիշենք, որ Ա-Դոյի ներկայացրած 16.974 հայ բնակչության կողքին 6 գյուղերում, ապրում էր 712 տուն, 4272 շունչ թուրք բնակչություն[2]: ՀՍՀ համապատասխան հոդվածի հեղինակը 11 հայաբնակ գյուղերում հաշվում է 2701 շունչ բնակչություն (1915թ. Մեծ եղեռնի ժամանակ)[3]:

Թե՛ գյուղերի, թե՛ բնակչության քանակի մասին հստակ չեն նաև Հ.Էփրիկյանի վկայությունները: Հեղինակը միայն վիճարկում է Վ.Քինեի տեղեկությունները և հիշատակում կամ ընդունում 73 գյուղերի գոյությունը, որը համարում է ազգային վիճակագրության արդյունք[4]:

Այսպիսով, ունենք բնակչության 41.413 ընդհանուր թվաքանակ: Միջին սկզբունքով այն կազմում է 8282: Կարելի՞ է ընդունել հայ բնակչության վերջին թվաքանակը: Թերևս, այո, որովհետև այն արտահայտում է նվազագույն ցուցանիշը, որովհետև հեղինակներից ոչ մեկը, անգամ նրանց տեղեկություններ մատուցողները, անկարող էին հաղորդել հավաստի վկայություններ: Նույնիսկ առաջնորդարաններն էին զուրկ այդ հնարավորությունից, քանզի եկեղեցիներում չէին գրանցվում ոչ ամուսնությունները, ոչ էլ ծնունդները, որովհետև, հատկապես հայերը, նաև մյուս քրիստոնյաները, խուսափելով հարկերից, ընտանիքի անդամների քանակը թաքցնում էին անգամ հոգևորականներից: Եթե սրան գումարենք նաև կեսկեսների գոյությունը, որոնք փաստորեն հայեր էին, ապա գավառի բնակչության թիվը թեկուզ 8282 ընդունելը դառնում է պայմանական: Խնդիրն ավելի պարզեցնելու նպատակով համեմատենք Հ.Էփրիկյանի ցուցակի հետ: Զուտ հայկական անուններ ունեցող Վերին և Վարի Խնձորիկ, Աղասեր, Տանքար, Գեղիկ, Աղբրիկ, Աղջրիկ, Աղբձոր, Ագարակ, Ձկնջուր, Ընկուզեկ, Ղարս, Թև, Բլուր, Ղազարենց, Մեղրագոմ, Վարդաշեն և այլ բնակավայրերում ապրող 9612 շունչ բնակիչների (1602 տուն) ճնշող մեծամասնությունը հայեր էին կամ հայ-կեսկեսներ:

Եթե բնակչության նշված քանակը գումարենք մեր պայմանական ընդունած թվին, կունենանք 17.894 շունչ բնակչություն, որը միայն 1100-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 319, թ. 63:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[3] ՀՍՀ, հ. 4, էջ 206:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. Բ, էջ 51:

1172-ով է ավելի Ա-Դոյի և Ալ.Երիցյանի հաշվումներից: Իսկ եթե չընդունենք գավառում մինչև 3000 շունչ հայ բնակչության մասին անհավանական տեղեկությունները և Ալ.Երիցյանի վիճակագրությունը դարձնելով հիմք՝ գումարենք հայ-կեսկեսների պայմանական քանակը, ապա գավառում կունենանք 26.334 շունչ հայ բնակչություն (16.722+9612 = 26.334): Թիվ, որն ընդունելը չափազանցություն չի լինի, քանզի արտագաղթը գավառից այնքան էլ մեծ թիվ չէր կազմում: Ավելին, սկսած 17-րդ դարից, թեև շարունակվող կրոնափոխության գործընթացը կուլ էր տալիս հայությանը, բայց սերնդեսերունդ փոխանցում էր ազգային նկարագիրն ու հիշողությունը: Այստեղից էլ, չարդարացնելով Վ.Քինեի վիճակագրությունը՝ առավել նկատելի են դառնում այն աղբյուրները, որոնք ուսումնասիրողին էին մատուցում գավառում 1265 հայ լուսավորչականների, 881 հայ կաթոլիկների գոյության՝ զավեշտ հիշեցնող վիճակագրությունը[1]:

Այսպիսով, հաշվարկների միջոցով ստացանք 8282, 2829 հայ բնակչության քանակ: Մեկ տեղեկություն էլ հաղորդում է Հ.Էփրիկյանը՝ 2146 հայ լուսավորչական և կաթոլիկ հայերի մասին: Երեք թվերի գումարը կազմում է 13.257: Միջինը կունենանք 3736 շունչ հայ բնակչություն:

Կրոնափոխությունը կատարվում էր ոչ միայն բռնի մահմեդականացման ճանապարհով, այլև, շահելով սուլթանի հովանավորությունը, կաթոլիկ ու բողոքական քարոզիչներն էին ծավալում գործունեություն՝ հետապնդելով հայտնի նպատակներ: Այս առթիվ դիպուկ է գրել «Մասիսի» թղթակիցը. «Հռոմի պապերուն փառամոլությունը՝ մեր դժբախտ ազգին այս միակ մխիթարությունն ալ կապտել ուզելով, ունիթորներու հրոսակներ հանեց Հայաստանի վրա, որոնք Լենկթեմուրի հրոսակներեն ոչ նվազ վնաս տվին մեր ազգին»[2]:

Իսկ Անգլիան, որի քաղաքականությունը տագնապով էր նշում ռուս հյուպատոսը, նպատակ ուներ հայերին, ասորիներին, սիրիացիներին, եզիդներին միավորել բողոքական համայնքի մեջ, որպեսզի ամրապնդվեր «Անգլիայի ազդեցությունը այդ երկրներում»[3]:

19-րդ դարի 90-ական թվականներից սկսած՝ թուրքական հայակործան քաղաքականությունը հասավ նպատակին, և Արևմտյան Հայաստանը վերածվեց օսմանլի ազգի մենաշնորհային տարածքի, որի ճիրաններում հայտնված հայությունը ծանրագույն պայքար էր մղում ֆիզիկա-

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. Բ, էջ 53:

[2] «Մասիս», 1871, 18 փետրվարի:

[3] *Ներսիսյան Ա.,* Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան 19-րդ դարի առաջին կեսին, Ե., 1962, էջ 87:

կան գոյության պահպանման համար: Ահա սրանք էին այն դրդապատճառները, որ 175 գյուղ ունեցող գավառում նվազում էր հայությունը՝ տեղը զիջելով կիսավայրենի քրդերին ու չերքեզներին, մահմեդականացած, ավելի բիրտ վրացիներին, հայ-կեսկեսներին:

Գավառի նշանավոր գյուղերից էր *Ապռնեսը:* Գյուղը 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբներին ուներ 280 տուն բնակչություն[1]:

Միջինը՝ 275 տուն, 1770 շունչ հայ բնակչություն:

Զուտ հայաբնակ գյուղ էր, ուներ եկեղեցի ու վարժարան: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով, առևտրով:

Գորքեր, Քորքեր գյուղը գտնվում էր Խոտորջրի սահմանագլխին, և որոշ ուսումնասիրողներ երբեմն գյուղը տեղադրում էին Խոտորջրի գյուղախմբում: 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ուներ 90 տուն հայ բնակչություն[2]: Ա-Դոյի հաշվումները գրեթե նույնն են՝ 89 տուն հայ բնակչություն: Նույն քանակի տներ հաշվառում են նաև ՏԲ և ՀՍՀ համապատասխան բաժինների հոդվածագիրները[3]:

Միջինը՝ 89 տուն, 690 շունչ հայ բնակչություն:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով, արգեգործությամբ: Գյուղն ուներ եկեղեցի ու վարժարան:

Խախու գյուղը գտնվում էր Թորթում գետի ձախակողմյան վտակի անտառապատ ստորին հոսանքում: Գյուղի բնական գեղեցկությունը միշտ գտնվել է ուշադրության կենտրոնում: Ատրպետը կարծում է, որ գյուղի իսկական անունը Խախ է եղել, ավելին, նկատի ունենալով գյուղի դիրքը, բնական հիասքանչ նկարագիրը, հոյակապ եկեղեցին՝ տարակուսում էր, «թէ արդեօք այս չէ՞ իսկական Խախը»[4]:

Միջին դարերում գյուղը եղել է նաև պարոնանիստ կամ իշխանանիստ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով, առևտրով: Գյուղը հանրահայտ էր իր նշանավոր Ս.Աստվածածին եկեղեցով, որը երբեմն անվանվում էր նաև վանք: Եկեղեցին ունեցել է ցածր պարիսպ, շրջապատված է եղել լճակներով ու վիշապարձաններով: Եկեղեցին կառուցվել է 9-րդ դարում՝ 868թ.[5]: Ունեցել է կլոր սյուներ, գմբեթ, եղել է կամարակապ շի-

[1] ՏԲ, հ. 1, էջ 312:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 232, թ. 168:
[3] ՏԲ, հ. 1, էջ 958:
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 169:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 125:

նություն: Դռների կողքերի քարերը քանդակազարդ էին, պատուհանները՝ կամարակապ ու սյունով կիսված, քանդակազարդ: Եկեղեցու ճակատին քանդակված է արծիվ՝ ճիրաններում այծյամ: Եկեղեցու կողքին կիսավեր վանքն էր:

Խախուն հայտնի է նաև Խախուր, Խախուլ, Խախուր, Խախուտ անուններով, երբեմն կոչել են գյուղաքաղաք: Ա-Դոն գյուղում հաշվում է 467 տուն հայ, 210 տուն, 1470 շունչ թուրք բնակչություն[1]: Այսինքն՝ հայերի թիվը կազմել է 2802 շունչ: Գյուղի բնակչության քանակի մասին ուրիշ վկայություններ չունենք:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով, առևտրով:

Խոզպրակ, Խոզպրիկ, Խոզքրիկ, Խոսպերեք գյուղը գտնվում էր Թորթում գետի ակունքների մոտ, գեղատեսիլ բնության գրկում: Գյուղը գավառանիստ Թորթումից հեռու էր 12 կմ: Ունեցել է եկեղեցի ու վարժարան: 20-րդ դարի սկզբներին ունեցել է 104 տուն զուտ հայ բնակչություն[2]: Բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ, արհեստներով, անասնապահությամբ, կային նաև մանրավաճառներ:

Կոչանս գյուղը 20-րդ դարի սկզբներին ունեցել է 176 տուն[3] (1056 շունչ) հայ բնակչություն: Զուտ հայաբնակ գյուղի բնակիչների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և անասնապահությունը: Գյուղն ուներ եկեղեցի ու վարժարան:

Նորաշեն գյուղը Կարին քաղաքից հեռու էր 18-20 կմ: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ունեցել է 22 տուն հայ բնակչություն: Մահմեդականները կազմել են 50 տուն, 155 շունչ: Հայերի քանակը տատանվել է 130-300 շնչի սահմաններում[4]: Գյուղի հայերի թիվը պակասեց հատկապես 1829թ. գաղթի ժամանակ: Գյուղն ունեցել է Ս.Հակոբ եկեղեցի, վարժարան: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ:

Շեփեք, Շիփեք գյուղը հայտնի էր Ս.Մինաս հոյակերտ եկեղեցով: Նրան կից գործում էր Սմբատյան վարժարանը, որն ուներ 25 աշակերտ[5]: Արխիվային նույն փաստաթուղթը հավաստում է, որ գյուղն ունեցել է 40

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 865, թ. 15, 29:
[5] Նույն տեղում, գ. 873, թ. 104:

տուն, 300 շունչ հայ և 30 տուն թուրք բնակչություն[1]: Ա-Դոյի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 250 տուն հայ, 46 տուն թուրք բնակչություն[2]:

Միջինը՝ 145 տուն, 1025 շունչ հայ, 38 տուն, 266 շունչ թուրք բնակչություն:

Անհայտ է մնում վիճակագրական նման հակասության պատճառը: Պարզվում է, որ մինչև 1909թ. գյուղն ունեցել է 1200 հոգու աճ: Անհավանական մի վկայություն, որից խուսափելու միակ ուղին այն է, որ հավաստի չընդունենք արխիվային փաստաթղթի հաղորդումը, որովհետև, ինչպես նշեցինք, քանակական այդպիսի աճը, այն էլ հալածանքների ու գաղթերի պայմաններում, հնարավոր չէր: Այս դեպքում չվստահել Կարինի առաջնորդարանին հնարավոր չէ:

Գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունը, անասնապահությունն էր, կային նաև արհեստներով զբաղվողներ:

Ռապատ, Ռապաթ գյուղը նշանավոր էր աղահանքով, որն օգտագործվել է հնագույն ժամանակներից: Գյուղը գտնվում է Թորթումի հովտում, Սաղեր մահմեդականացած գյուղի հարևանությամբ: Գյուղը թեև դիմացավ մահմեդականացման քաղաքականությանը, բայց անկարող լինելով պայքարը շարունակել՝ ընդունեց կաթոլիկություն, գոնե այդ կերպ պահելով ազգային նկարագիրը: Ա-Դոյի հաշվումներով, գյուղն ունեցել է 95 տուն (570 շունչ) հայ բնակչություն[3], որն զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, արհեստներով: Գյուղում գործել են եկեղեցի և վարժարան:

Վախթիկանս գյուղը միջնադարում սկսված հալածանքների ու բռնի կրոնափոխության շրջանում, թեև Թորթումի հովտի շատ գյուղերի նման ցուցաբերեց դիմադրություն, սակայն, ի վերջո, մահմեդական տարրը մուտք գործեց բնակավայր, և 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն արդեն ուներ խառը բնակչություն: Հատկանշական է, որ քոչվորական բնազդով շարժվող լազերը, քրդերը, թուրքերը բնակություն հաստատելու վայր էին ընտրում այնպիսի գյուղեր, որոնք հայտնի էին իրենց բարեբար կլիմայով ու հողերի արգավանդությամբ, որոնք տալիս էին գոյատևելու համեմատաբար դյուրին հնարավորություններ: Ինչպես նկատում է Ատրպետը, տիրելով այդ նպաստավոր պայմաններով գյուղերին՝ «Բարոյապէս եւ տնտեսապէս հիւծուած այս ժողովուրդը ապրում է նախնիքներից մնացած այգիների եւ պարտէզների բերքերով, որոնք տարեց-

[1] Նույն տեղում:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[3] Նույն տեղում:

տարի չորանում, նուազանում են ինչպէս նուազում է, չքանում բնակչութիւնը: Սեռական քրոնիկ ախտերով վարակուած, հիւծուած այս ժողովուրդը ոչ բժիշկ ունի, ոչ դեղագործ, ոչ ուսուցիչ ունի եւ ոչ դպրոց. սպասում է մահին կամ աշխարհավերջի Մահդի մարգարէին, որ փրկուի»[1]:

Ապականելով նվաճված տարածքները՝ քոչվորներն իրենց գոյությունն ապահովում էին հայերից զավթումների միջոցով: Այդ միջոցից նրանք զրկվեցին համիդյան ջարդերից հետո: Նման ճակատագրի արժանացավ նաև Վախթիկանս գյուղը, որը 19-րդ դարի երկրորդ կեսին, 20-րդ դարի սկզբներին ուներ 30 տուն հայ, 75 տուն մահմեդական բնակչություն[2]:

Գյուղում գործել են եկեղեցի, վարժարան: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով:

Քարնկոս, Գարնկոց, Կարնկոց գյուղը գավառի քրիստոնյա մնացած գյուղերից էր, Թորթումի հովտի այն եզակի գյուղերից, որոնք կարողացան դիմագրավել քոչվորական ներխուժմանն ու պարտադրանքներին: Գյուղը գտնվում էր Թորթումի լճից հարավ, Թորթում գետի ակունքների մոտ, Ռապատ գյուղի հարևանությամբ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով: Գյուղում գործել են եկեղեցի, վարժարան: Ա-Դոյի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 60 տուն զուտ հայ բնակչություն[3]:

Պար գյուղը գավառի փոքր, բայց խառը բնակչությամբ բնակավայրերից էր: Փոքր՝ հայության նվազման իմաստով, որովհետև հնագույն շրջաններից սկսած, զուտ հայ բնակչություն ունեցող, աղահանքով հայտնի գյուղը դարձավ հեշտ ապրելու մարմաջով լցված մահմեդականների ուշադրության կենտրոն, և նրանք դանդաղ իրականացրին իրենց նպատակը՝ դարի երկրորդ կեսին գրեթե հայությունից դատարկելով գյուղը, և ստացան բացարձակ գերակշռություն. հայկական 24 տների դիմաց հիմնավորվեցին 130 մահմեդական տներ, փոխելով ոչ միայն գյուղի նախկին բարեկեցիկ վիճակը, այլ արտաքին նկարագիրը:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով, աղի արտահանմամբ, որը հետագայում դարձավ հիմնականում մահմեդականների մենաշնորհը:

Գյուղում գործել են եկեղեցի, վարժարան:

---

[1] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 158:

[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:

[3] Նույն տեղում:

Վերին Գեղ, Վերին Գյուղ: Գավառի նշանավոր գյուղերից էր, ուներ խառը բնակչություն՝ 104 տուն հայ, 245 տուն մահմեդական[1]: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, այգեգործությամբ, արհեստներով, մասամբ նաև առևտրով: Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, Մուշեղյան վարժարան:

Գավառի ամենախոշոր գյուղը զուտ հայ բնակչությամբ *Քցխան* էր: Գյուղը գտնվում էր ձորի մեջ և քրիստոնյաների գերակշռության պատճառով անվանվում էր քրիստոնյա ձոր: Սկսած միջնադարից՝ Քցխան կարողացավ դիմագրավել մահմեդականացման վտանգին և մինչև 19-րդ դարի վերջերը պահպանեց այդ վիճակը: Սակայն, ինչպես ցավով նշում է Հ.Տաշյանը. «...այսօր Քցխայի հայերն այլ եւս մահմեդականացած են»[2]:

Գյուղը գտնվում էր Թորթում գետի աջակողմյան վտակ Քսխայի ափին: Ատրպետը գտնում է, որ գոյություն են ունեցել երկու Քցխաներ՝ արևմտյան և արևելյան, որոնք տեղավորված էին ձորի հարավային և հյուսիսային կողմերում: Նրանցից առաջնությունը շահել է գետակի աջ կողմում, անտառների խորքում գտնվող Քցխան, որն անվանվում էր նաև Քիշ ոստան[3]:

Աջակողմյան Քցխան ձախակողմյանին է միանում լայնահուն ճանապարհով, որը հասնում է մինչև Քցխայի դուռ: Քցխան երբեմն անվանվել է նաև Քսխտ, Կիսխա:

Հ.Էփրիկյանը, Ա-Դոն վկայում են, որ գյուղն ունեցել է 800 տուն[4], ասել է՝ 5600 շունչ հայ բնակչություն: Մինչև դարավերջ զուտ հայաբնակ գյուղ է եղել: Եթե ընդունենք նույնիսկ Հ.Տաշյանի հաստատումը, ապա բացառված չէ, որ դարավերջին ոչ թե դարձել է մահմեդաբնակ, այլ, ամենայն հավանականությամբ, հայ-կեսկեսներով բնակեցված գյուղ:

Քցխան ունեցել է եկեղեցի, վարժարան: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, այգեգործությամբ, արհեստներով, առևտրով:

Գավառի կենտրոնը Թորթում ավանն էր կամ գյուղաքաղաքը: Հ.Կարնեցին Թորթումի մասին գրում էր. «Եւ ունի ձորս այս բերդս անառիկս զԹորթում, որ պարոնանիստ է եւ իշխող է մինչեւ ի բերդն Ագրակ առ յափն Ճորոխ գետոյն»[5]:

---

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[2] *Տաշեան Հ.,* Հայ բնակչութիւնը. . ., Վիեննա, 1921, էջ 64-65:
[3] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, էջ 51, *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[4] Նույն տեղում:
[5] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 17:

Թորթում ավանը գտնվում էր Ճորոխի վտակ Թոթումի վերին հոսանքում՝ «ի ձորամիջի առ բարձր լիրամբ՝ որ կոչի *Հարկեոր*»[1]:

Ավանը շրջապատված էր անտառներով, ծառաստաններով, այգիներով: Թորթում անունն ավանը ստացել է համանուն բերդից, որը, ինչպես ընդգծում է Հ.Տաշյանը, «ոտքն» էր գյուղաքաղաքի կամ ավանի[2]: Թորթումի հանրաճանաչությունը կապված էր վիթխարի ժայռն իբրև պատվանդան ծառայեցրած հնամյա բերդի հետ, որը հայտնի էր անառիկությամբ: «Մեծատարած է բերդս այս քան եւ ահեղ, հիմնացեալ յեզր քարավանն որ առ գետոյն, արկեալ պարսպացն ըստ ձեւոյ քարաժայռին. առաջին դուռնն ‘ի հարաւոյ է, յորոյ ‘ի ներքս կային այլ եւ այլ քարակերտ շինուածք եւ մատուռ մի, այլ արդ առ հասարակ կործանեալ: Իսկ անտի զառ’իվեր ուղի աւերակացն առաջնորդէ ‘ի ներքնաբերդն, արայ պարիսպք շուրջանակի անարատ կան»[3]: Բերդի հյուսիսային կողմում արտաքին պարիսպն է, որտեղից քարաշեն աստիճանները տանում են դեպի գետը: Այստեղ գտնվում է նաև «երկու հնաշէն բաղնիք»[4]:

Ավանը, ինչպես հիշատակում է աղբյուրներից մեկը, 19-րդ դարի սկզբներին ունեցել է 8000 բնակչություն, որից 5000-ը հայեր էին[5]:

Համիդյան ջարդերի ու բռնի կրոնափոխության հետևանքով դարավերջին ավանն արդեն հայաթափվել էր: Ղ.Ինճիճյանը հայտնում է ևս մեկ տեղեկություն: Նրա հավաստմամբ, 19-րդ դարի սկզբներին, ավանում ապրել են 400 տուն բնակիչներ[6]: Ավելին, Ղ.Ինճիճյանն այնուհետև ավելացնում է, թե ձանձրանալով բռնություններից և զրկանքներից՝ Թորթումի «հայկազուն» բնակչությունն ընդունում է «ի կրոնս տաճկաց»[7]: Ահա թե ինչու մեկ այլ երախտավոր՝ Հ.Էփրիկյանը, դարասկզբին ավանում հայեր չի հիշատակում, այլ արձանագրում է, որ ավանում ապրում էին միմիայն 130 տուն թուրքեր[8]:

Այսպիսով, Թորթումի գավառին, ինչպես Կարինի նահանգի մյուս գավառներին, վիճակվեց հայաթափվելու ծանր ճակատագիրը: Խաշնարած, կիսավայրենի, քաղցած ռհմակն ավերակների վերածեց Թորթումի գավառը՝ խժռելով և՛ բնիկներին, և՛ նրանց դարերով ստեղծած մշակույթի հուշարձանները:

[1] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 93:
[2] Նույն տեղում:
[3] *Մարգսեան Ն.,* նշված գիրքը, էջ 85:
[4] Նույն տեղում:
[5] ՏԲ, հ. 2, էջ 476:
[6] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 93:
[7] Նույն տեղում:
[8] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 2, էջ 51:

Ց ՈՒ Ց Ա Կ

Թորթումի գավառի նշանավոր հայաշատ գյուղերի
(հաշվարկը կատարված է միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Քցիսա	800	5600
Խարխու	467	2802
Ապռնես	260	1820
Կոչանս	176	1056
Շեփեկ	145	1025
Խոզպրակ	104	728
Վերին Գեղ	104	728
Ռապատ	95	570
Գորքեր	90	626
Վախթիկանս	80	560
Քարնկոս	60	420
Պար	24	168
Նորաշեն	22	154

Բացի Կարինի առաջնորդարանի տեղեկություններին համապատասխան[1]՝ ցուցակում բերված խառը բնակչությամբ ու հայաբնակ գյուղերից, 19-րդ դարի առաջին կեսի համար Ա.Մելքոնյանը բերում է 53, Հ.Էփրիկյանը՝ 73[2], Անանուն հեղինակը՝ 40 գյուղերի անվանումներ[3], որոնք 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն հայաբնակ չէին և միատարր թուրքաբնակ էին:

Խնուսի գավառ

Խնուսի գավառը զբաղեցնում է պատմական Հայաստանի Խնուս, Հարք, Վարժարունիք գավառների տարածքը՝ ընդգրկելով Խնուսի գոգավորությունը Բյուրակնյա լեռների հետ միասին: Մ.թ.ա. 2-րդ դարում Արտաշես Ա թագավորը (189-160թթ.) Մեծ Հայքի թագավորությանը միացրեց Բարձր Հայքի արևելյան մասը, իսկ հարավային շրջանները մտնում էին Ծոփքի թագավորության կազմի մեջ: Տիգրան Մեծը Մեծ Հայքին միացրեց նաև Բարձր Հայքի արևմտյան շրջանները: Խնուսը դարձավ Մեծ Հայքի

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 201:
[2] *Մելքոնյան Ա.,* Էրզրում, Երևան, 1994, էջ 163:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 5, գ. 357, թ. 45:

թագավորության գավառներից մեկը: Արշակունիների թագավորության ժամանակ ևս Խնուսի գավառը մտնում էր նրա կազմի մեջ:

Հայաստանի առաջին բաժանումից հետո Բարձր Հայքը միացվեց Հռոմեական կայսրությանը և կազմեց Ներքին Հայք անունով բյուզանդական կոմսություն, որի կառավարչի նստավայրը Կարին քաղաքն էր:

Խնուս գավառը, Ներքին Հայքի հետ, վարչական նոր փոփոխությունների ենթարկվեց Հուստինիանոս կայսրի ժամանակ և կորցնելով ինքնավարությունը՝ վերածվեց բյուզանդական նահանգի:

7-րդ դարում Խնուսը ենթարկվեց արաբական արշավանքներին: 9-րդ դարի սկզբներին սկսվեց Թոնդրակյան շարժումը: Առանձին ուսումնասիրողներ գտնում են, որ շարժումն անունն ստացել է գավառի Թոնդրակ գյուղից: Իսկ գյուղի անվան ծագումը կապված է մերձակայքում գտնվող քարե թոնիրների գոյության հետ: Թոնդրակյան շարժումն առավել տարածված էր Հարք գավառում, որի եպիսկոպոս Հակոբը շարժման կազմակերպիչներից էր:

772-775թթ. ազատագրական ապստամբությունից հետո Ապահունիք գավառում բնակվող կայսիկները կազմեցին նոր էմիրություն, որի կենտրոնը Մանազկերտ քաղաքն էր: Խնուս քաղաքը և գավառը մտնում էին այդ էմիրության կազմի մեջ:

Այնուհետև Խնուսի գավառն ընկավ Մերվանյանների իշխանության տակ: 1100թ. Խլաթի Շահարմենների իշխանության հիմնադիր Սոքման-Էլ-Քոդրին Մերվանյաններին դուրս քշեց Մանազկերտից, Խլաթից, Խնուսից և իր տիրապետության տակ առավ այդ տարածքները: 1244թ. Շահարմենների իշխանությունը տապալեցին մոնղոլները: Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանը սկզբում՝ 1236-1256թթ., մտնում էր Արևմտյան զորապետության կազմի մեջ, ապա ընկավ Մանգու խանի հորեղբայր Հուլավուի իշխանության տակ (1256թ.): Հուլավյան ուլուսը գոյություն ունեցավ մինչև 1344թ.:

14-րդ դարում նոր տառապանք բաժին հասավ հայ ժողովրդին: 1386-1387, 1394 և 1400թթ. տեղի ունեցան Լենկթեմուրի ավերիչ արշավանքները: 1405թ. կործանվեց Լենկթեմուրի կազմած պետությունը: Ասպարեզ ելան կարա-կոյունլուները, որոնք Իսկանդարի ժամանակ (1421-1437թթ.) իրենց տիրապետությունը հաստատեցին նաև Բարձր Հայքի վրա: Նրանց հաջորդեցին ակ-կոյունլուները, որոնց ցեղապետ Ուզուն Հասանը 1473թ. Դերջանում պարտություն կրեց օսմանյան թուրքերի կողմից, և Բարձր Հայքի գավառները, այդ թվում Խնուսը, ընկան նրա տիրապետության տակ:

16-17-րդ դարերում սկսվեցին և ավարտվեցին պարսկա-թուրքական պատերազմները: Ամասիայի (1555թ.) և Դիարբեքիրի (1639թ.) պայմանագրերով Արևմտյան Հայաստանն ընկավ թուրքական տիրապետության տակ: Խնուսը մտնում էր Էրզրումի վիլայեթի մեջ: 18-րդ դարում Խնուսը միացվեց նոր կազմավորված Բայազետի փաշայության Խնուսի հյուքյումեթությանը:

19-րդ դարի 60-ական թվականներին կատարվեց վարչական նոր բաժանում, և Խնուսը նորից ընդգրկվեց Էրզրումի վիլայեթի կազմում:

1877-1878թթ. պատերազմի ժամանակ կազմվեց Խնուսի օկրուգը, որը մտնում էր Էրզրումի մարզի մեջ:

Խնուսի գավառը, ինչպես Արևմտյան Հայաստանի մի շարք այլ գավառներ (Սասուն, Մուշ և այլն), կենտրոնական իշխանությունից ուներ ձևական կախվածություն, որն արտահայտվում էր հարկատվությամբ: Գավառի հայությունն անզիջում պայքար էր մղում թե՛ իշխանությունների, թե՛ քրդական հրոսակների դեմ, որոնք գավառի տարածք էին թափանցել 17-րդ դարում, թուրք-պարսկական պատերազմների ժամանակահատվածում՝ որպես վարձատրություն Պարսկաստանի դեմ թշնամական գործողությունների: Այդպես գավառում կազմվեցին քրդական 25 աշիրաթություններ:

Խնուսի գավառակի արևմտյան կողմում են գտնվում Բյուրակնյա լեռները, որտեղից, իրարից գրեթե 500 մետր հեռավորության վրա, սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհի երկու նշանավոր գետերը՝ Երասխն ու Արևելյան Եփրատը՝ Արածանին: Գետերի սկզբնավորման վայրում էլ, հնագույն ավանդության համաձայն, գտնվում էր դրախտը: Ադամն ու Եվան ապրելիս են եղել Բյուրակնյա լեռների արևելյան լանջերին գտնվող Սելի Մորուք բլրի գագաթին գտնվող սառնորակ աղբյուրների ակունքների մոտ: Այդ վայրը գտնվում է Հարամեկ հայաբնակ գյուղից ոչ հեռու: Համաձայն ավանդության, գյուղի անունն առաջացել է Հայկ Նահապետի Հարմա որդու անունից: Հարամեկից հարավ Կայենի բլուրն է: Այդ բլրի վրա է կանգնած եղել Կայենը, երբ նրան վիրավորել է որսորդ Ղամեքի նետը: Այս մասին վկայում է մեկ այլ ավանդություն:

Քանի որ Խնուսը յուրահատուկ կապող օղակ էր Կովկասի ու Սասուն-Տարոնի միջև, մեծ մասնակցություն է ունեցել հայ ազատագրական շարժումներին: Այնտեղով էին անցնում Երկիր գնացող մարտական խմբերը:

Խնուսի գավառն ուներ հարուստ բնություն: Այն ջրառատ էր, բերրի հողերով հարուստ: Բնության հրաշալիք էր ստորգետնյա գետը, որին

տրվել է «Խնուսի Նեղոս» անունը: Գետը երկրի երես է դուրս գալիս Խըռթ գյուղի մոտակայքում և հասնելով Քառասուն Մանուկ ուխտավայրի մոտ՝ բաժանվում է առուների, ոռոգելով գավառակի դաշտերն ու արոտավայրերը:

Բյուրակնյա լեռների 3280 մ բարձրություն ուեցող գագաթից սկիզբ է առնում Արածանիի աջակողմյան վտակ Խնուս գետը, որն ունի 127 կմ երկարություն: Հոսելով Խնուսի դաշտով՝ այնտեղից թեքվում է արևելք՝ դեպի Բուլանըղի գավառ և հարավում միանում է Արածանիին:

Գավառի ամենաարգավանդ դաշտը Խնուսի դաշտն է: Այն գտնվում է Խամուր, Բյուրակնյա, Ծաղկունյաց լեռների միջև, Խնուս գետի հովտում: Դաշտը, բոլոր կողմերից շրջապատված լինելով լեռներով, մուտք ունի միայն հարավարևելյան կողմից, որտեղից էլ դուրս է գալիս Խնուս գետը: Դաշտն ունի 15 կմ լայնություն, 30 կմ երկարություն: Ոռոգման հիմնական միջոցը Խնուս գետի և լեռներից բխող աղբյուրների ջրերն են:

Խնուսի գավառի պատմական նշանավոր վայրերից էր Բերդը, որը գտնվում էր Բյուրակնյա լեռների արևելյան ստորոտում: Ենթադրվում է, որ քաղաքն այս բերդից է ստացել անվանումը: Վանքերից հանրահայտ էին Մժնկերտի Ս.Կարապետ, Թուխ Մանուկ, Մասուր, Նորելաձի վանքերը: Գրեթե բոլոր հայաբնակ գյուղերն ունեին եկեղեցի և վարժարան (դրանց թիվը 19-րդ դարի երկրորդ կեսին հասնում էր 18-ի): 1878-1880թթ. գավառում գործել է «Մամիկոնյան» ընկերությունը:

Բարձր Հայքի գավառների շարքում Խնուսի գավառը հայտնի էր հիասքանչ բնությամբ, հարյուրավոր սառնորակ և հանքային աղբյուրներով, առատ ու վճիտ գետակներով, առուներով, մարգագետիններով, կանաչապատ սարալանջերով, բերրի ու արգավանդ դաշտավայրերով: Բնական հարստությունների ցուցակը լրացնում էին քարածխի, պղնձի, արծաթի, նավթի, աղի, շինարարական քարերի հանքերը:

Գավառի բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, ձկնորսությամբ, արհեստներով: Հանրահայտ էր Խնուսի պանիրը: Մեծ համբավ ունեին գորգագործները: Գավառում պատրաստված «նախշ է ֆարո»՝ չխունացող գույներով նախշազարդ գորգերը մեծ պահանջարկ ունեին: Գորգերի թելերը ներկվում էին ծաղիկներից ու բույսերի արմատներից պատրաստված ներկերով:

Ինչպես Բարձր Հայքի մյուս գավառների, այնպես էլ Խնուսի գավառի բնակչության թվաքանակի և ազգային կազմի մասին կան հակասական տեղեկություններ:

19-րդ դարի երկրորդ կեսին գավառն ունեցել է 46 գյուղ, 1688 տուն բնակչությամբ, որից հայկական էր 955 տունը[1]: 1880թ. գրված մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ գավառում եղել է 171 գյուղ, որից հայաբնակ էին 11-ը, երկուսը թուրքաբնակ էին, 139-ը՝ քրդաբնակ, 19-ը՝ խառը բնակչությամբ: Բնակչությունը կազմում էր 22.518 շունչ: Նրանցից 13.382-ը քրդեր էին, 8552-ը՝ հայեր, 584-ը՝ թուրքեր[2]: 1891թ. տվյալներով, ըստ Վ.Քինեի, գավառում կար 26.967 բնակիչ, որից 10.073-ը հայեր էին, 16.746-ը՝ մահմեդական[3]: Հ.Էփրիկյանի հաշվումներով (1903թ.), Խնուսի 38 գյուղերում կար 1253 տուն հայ բնակչություն[4]:

Ա-Դոյի հաշվումներով, գավառի 32 գյուղերում ապրում էր 1860 տուն, 13.020 հայ բնակչություն[5]:

«Հարք-Խնուս» գրքում Ե.Մելիքյանը հավաստում է, որ պատերազմից առաջ գավառում կային 35-38 հայաբնակ գյուղեր, որտեղ ապրում էին 25.000 հայեր[6]: Վիճակագիրներից մեկն էլ գավառում հաշվում է 1427 տուն, ապա 2172 տուն հայ բնակչություն[7]:

Արխիվային մեկ այլ փաստաթուղթ հայկական գյուղերի թիվն ընդունում է 19 և հաշվում 1065 տուն, 12.202 շունչ հայ բնակչություն[8]: Այս իրարամերժ վկայությունների արդյունքում, միջին տարբերակով կունենանք 31 գյուղ և 1800-1900 տուն հայ բնակչություն՝ 18-19.000 շունչ բնակչությամբ (հաշվումները- Հ.Զ.): Մեր կարծիքով, այս խառնաշփոթի մեջ հավաստին մեր հաշվումներն են, թեև դրանք մոտավոր պատկերացում են տալիս խնդրի մասին:

Այժմ փորձենք հստակեցնել գավառի գյուղերի մեզ հայտնի ցուցակները: Համեմատություններից հետո պարզվում է, որ 30 գյուղեր չեն հիշատակվում բոլոր ցուցակներում: Տարբեր արխիվներից մեր հավաքած գյուղերից յոթ գյուղ նույնպես տեղ չի գտել մեր ցուցակներում: Ստացվում է, որ գավառն ունեցել է 70 գյուղ (համեմատությունները կատարվել են Ա-Դոյի, ՀՍՀ 5-րդ հատորի, ՏԲ 2-րդ հատորի, մեր հավաքած նյութերի միջև): Գավառը բաժանվում էր 5 շրջանների՝ 1. Խնուս-Հարք, 2. Շուշար-Վարժարունիք, 3. Թազման (Թարգման), Մանանդիի (Մարդա-

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 236-237:
[2] «Փորձ», 1880թ., թիւ 6-7, էջ 221:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 236-237:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 605, թ. 21:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 52:
[6] *Մելիքյան Ե.,* Հարք-Խնուս, Բեյրութ, 1964, էջ 10-15:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 21:
[8] Նույն տեղում:

ղի), 4. Խայանզի-Դասնավուրքի, 5. Կեոքսու-Տվարծատափի: Գավառի տարածքը կազմում էր 500 քառ. մղոն[1]:

Գավառի 30-38 գյուղերից Զամրենի, Հարամիկի, Խոզլոնևի, Ենի-քեոյի, Բուռնազի հայ բնակչությունը բողոքական էր: Նրանք հիմնակա-նում գաղթել էին Բիթլիսից: Բնիկ հայերը բողոքական չէին: Ընդհանուր առմամբ, գավառակի 25.000 բնակչությունից միայն 5-600 շունչն էր բողոքական[2]:

Լուսավորչական հայերը 9312 շունչ էին, բողոքականները՝ 761, կաթոլիկները՝ 148: Փաստաթուղթը, որ կազմված է թուրքական աղբյուր-ներից, հայերի ընդհանուր թվաքանակը հաշվում է 10.221 շունչ[3]:

Գավառի ամենամեծ գյուղը *Գարաչոբանն* էր: Գյուղը երբեմն ան-վանում էին նաև Ղարաչոպան, Քարաչոպան, Կարաչոբան:

Գյուղն ուներ երեք թաղ: Ս.Հակոբ եկեղեցին գործող էր: Այն երեք խորանով 6 սյուների վրա կառուցված, երկու մեծ զանգակատներով կառույց էր:

Առավել մեծ հնագիտական նշանակություն ուներ գերեզմանոցը: Տապանաքարերի մեծ մասն ուներ ձիու, ուղտի ձև, որն ընդգծում է հան-գուցյալի տնտեսական կարողությունը, ինչից էլ կարելի էր եզրակացնել, որ գյուղը դասվում էր ունևոր բնակավայրերի շարքին:

Բացի երկրագործությունից և անասնապահությունից, գյուղացիներ-ը զբաղվում էին նաև արհեստներով և առևտրով:

Բնակչության թվաքանակի մասին ունենք մի քանի տեղեկություն-ներ: Մ.Միրախորյանը հաշվում է 150 տուն[4], Հ.Էփրիկյանը՝ 136 տուն[5], Կա-ինի առաջնորդարանը՝ 1895թ. 170 տուն, 1912թ.՝ 220 տուն բնակչություն[6]:

Միջինը կունենանք՝ 164 տուն, 1640 շունչ հայ բնակչություն:

Գովանդուկ գյուղը հայտնի է նաև Գնյանդուկ, Գովանտիք, Գովան-տուկ, Կովանդիկ, Կովանդուկ, Կովնդուկ և այլ անուններով: Գտնվում է Արածանիի վտակ Խնուս գետի ափին: Գյուղացիները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, նաև, մասնա-կիորեն, արհեստներով: Գյուղի մոտակայքում գտնվող քարհանքի քա-րերն օգտագործվում էին ձիթհանքի, ջրաղացի, աղորիքի քարերի պատ-

[1] Նույն տեղում, թ. 23:
[2] Նույն տեղում, գ. 696, թ. 4, 5:
[3] Նույն տեղում:
[4] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 160, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 242, թ. 26:
[5] *Էփրիկեան Հ.,* նշված հատորը, էջ 52, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 242, թ. 26:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 185:

բաստման համար: Գյուղի մոտ գտնվող ձիթհանքը սպասարկում էր նաև շրջակա գավառների գյուղացիներին: Խամլով ձորի արևմտյան կողմում էր գտնվում հիասքանչ գեղեցկությամբ հայտնի Եղեգնաձորը: Նրա հարևանությամբ զուլալ ու պարզկա Աղո լճակն է, որն ունի 200 մարդահասակ խորություն, և այնքան վճիտ է եղել, որ երևում էր լճակի հատակը:

Համբավավոր էին գյուղում աճեցրած ձիերը, որոնք մեծ պահանջարկ ունեին տարածաշրջանում:

Հայերի տնտեսական ճնշումն ուժեղացնելու նպատակով 1892թ. դադարեցվեց նշանավոր աղահանքի օգտագործումը, որն աղ էր մատակարարում շրջակա բնակավայրերին[1]:

Գովանդուկը հայտնի էր նաև բուժիչ ջերմուկներով: Այնտեղ հիմնականում բուժման էին բերում նյարդային հիվանդություն ունեցող երեխաներին: Գյուղի երիտասարդները կրթություն էին ստանում Ս.Կարապետ վանքում: Գյուղում գործում էին եկեղեցին ու վարժարանը:

Բնակչության թվաքանակի մասին մեզ են հասել հակասական տեղեկություններ: Մ.Միրախորյանն արձանագրում է 90[2], Ա-Դոն՝ 120[3], Հ.Էփրիկյանը՝ 80 տուն հայ բնակչություն[4]: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է 80 տուն, 1003 շունչ հայերի[5], երկրորդը՝ 54 տուն հայ բնակչության մասին[6]:

Միջինը՝ 82 տուն, 668 շունչ հայ բնակչություն:

Ելփիս գյուղը հայտնի էր Ելպիս, Ելփուս, Էլբիս, Էլփի անուններով: Գտնվում էր Արածանիի աջ ափին, Խնուսի բերդից 6կմ հեռավորության վրա, ձորահովտի մեջ: Գյուղից 1.5 ժամ հեռավորության վրա էր գտնվում նշանավոր Շառաղնես աղահանքը, որի օգտագործումից բնակչությունը ստանում էր բավարար եկամուտ:

19-րդ դարի երկրորդ կեսին, ինչպես գավառակի մյուս գյուղերը, այնպես էլ Ելփիսն ընկան քուրդ աղաների տիրապետության տակ: Սկզբում «անկոչ» հովանավորին չընդունեցին գյուղում: Գյուղապետի գլխավորությամբ Շուքրի բեյին հեռացրին գյուղից: Սակայն այս անգամ էլ գործեց իրավունքը ուժեղինն է սկզբունքը, և քրդերը հաստատվեցին գյուղում:

[1] Նույն տեղում, գ. 233, թ. 117:
[2] *Միրախորեան Մ.,* նշված գիրքը, էջ 160:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 185:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված հատորը, էջ 52:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 21, 23:
[6] Նույն տեղում, գ. 233, թ. 112, 23:

Վիճակագիրները գյուղի բնակչության մասին հայտնում են իրարամերժ տեղեկություններ՝ արձանագրելով 50-75 տուն հայ բնակչության գոյությունը[1]:

Միջինը՝ 61 տուն, 420 շունչ հայ բնակչություն:

Գյուղում գործում էին եկեղեցի, վարժարան:

Արոս գյուղը հայտնի էր իր քարագործ վարպետներով: Օգտագործելով գյուղի մոտ գտնվող բարձրորակ քարահանքը՝ վարպետները տարբեր տեղերից ստանում էին եկեղեցու, կամուրջների կամարների, ձիթհանքի, ջրաղացի, աղորիքի քարերի պատվերներ: Գյուղի համբավաշատ որմնադիրները տներ էին կառուցում գավառակում, նրա սահմաններից հեռու բնակավայրերում: Այս ամենը նկատի ունենալով՝ գյուղն անվանվում էր նաև գավառակի արհեստագործության կենտրոն:

Գյուղն իր անունն ստացել է հատակագծի պատճառով, որը նման էր արոս թռչունին:

Աղբյուրներից մեկը վկայում է, որ 19-րդ դարում գյուղն ունեցել է 250-300 տուն հայ բնակչություն[2]: Արխիվային փաստաթղթերը հայտնում են 48 տուն, 611 շունչ հայ բնակչության մասին[3]: Ա-Դոն ընդունում է 95 տուն հայ բնակչության վիճակագրությունը[4]:

Միջինը՝ 104 տուն, 783 շունչ հայ բնակչություն:

Գավառի կենտրոնը Խնուս գյուղաքաղաքն էր: Այն գտնվում էր Խնուս գետի ափերին: Ավանդության համաձայն, քաղաքը կառուցվել է այն տեղում, որտեղ Հայկ Նահապետը հաղթել է Բելին[5]: Քաղաքը լեռնաճյուղերով շրջապատված Խնուսի գոգավորության արևմտյան մասում է գտնվում, Բյուրակնյա լեռների արևելյան ստորոտում: Բացի վերը հիշատակված ավանդությունից, քաղաքի կառուցման մասին այլ մանրամասնություններ հայտնի չեն: Հնագույն ժամանակներից Խնուսը համարվել է Վարաժնունիք գավառի կենտրոնը: Միջին դարերից մեզ հասած տեղեկությունների համաձայն (13-րդ դար), Խնուսը գտնվում էր Խոյ-Վան-Բերկրի-Մանազկերտ-Կարին-Բաբերդ-Տրապիզոն բանուկ առևտրային ճանապարհին: Այդ կապը պահպանվեց նաև հետագա ժամանակներում, և Խնուսը 19, 20-րդ դարերում բեղուն առևտրական կենտրոնի վերածվեց:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 696, թ. 21, 23:
[2] Նույն տեղում, գ. 632, թ. 25:
[3] Նույն տեղում, գ. 632, թ. 23:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 185:
[5] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 279:

Խնուսը կառուցված է զառիթափ լեռնալանջին, ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: Տները Խնուս գետի աջ և ձախ մասերում են, մի մասն էլ՝ ձախակողմյան փոքրիկ հարթության վրա: Քաղաքը ջրառատ է, ունի առողջարար օդ, շրջակայքում կան աղահանք, հանքային աղբյուրներ, որոնց վրա կառուցվել են բուժիչ բաղնիքներ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

«50-ի չափ հայ խանութպաններ կան, 60-ի չափ կօնդախչիներ, դարբիններ, ոսկերիչներ, դերձակներ, պայտարներ, սառաջներ եւ այլ տեսակի արհեստաւորներ: Կարելի է ասել, որ Խնուսի առեւտուրը մեծ մասամբ գտնուում է հայերի ձեռքում»,- գրում էր Ա-Դոն[1]:

Խնուսի վաճառականներն առևտրային լայն կապեր էին պահպանում հատկապես Կարինի, Մուշի և Բիթլիսի հետ:

Խնուսը բաժանվում էր թաղերի՝ Խաստալարը, Ճսթմահլին, Բապջեն և Բերդը գտնվում էին գետի աջ ափին, Ժամու թաղը, Խայպաշին, Պալուքիթը՝ ձախ ափին: Տները հողածածկ էին, հարթ տանիքներով, փողոցները՝ ասիական տիպի նեղվածքներով, անբարեկարգ ու անհրապույր: Խնուս գետի վրա կառուցվել է երկու կամուրջ, մեկը՝ քարաշեն, մյուսը՝ փայտաքարային: Առաջինը բավական հաջողված ճարտարապետական կառույց է, քարե կամարներով: Քաղաքի արևելյան կողմի ավերակների պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի հսկայական կենդանու կմախք, որը վերականգնվել և «Հայկական փիղ» անունով գտնվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

Խնուսի աջ ափին, ժայռերի վրա է կառուցված Բերդը: Այն ունի քառակուսի հատակագիծ, երկարությունը 60 քայլ է: Ամրակուռ պարիսպն ու ժայռերը բերդին տալիս են անառիկություն: Բերդի միակ դուռը գտնվում էր հյուսիսային կողմում: Դեպի ձորն իջնող գաղտնուղին բերդը կապում էր արտաքին աշխարհի հետ:

Մշակութային կյանքը բավարար մակարդակի վրա էր: Քաղաքում գործում էր «Միացյալ ընկերությունը», որը զբաղվում էր կրթական և մշակութային հարցերով: Ընկերության միջոցներով էին կառուցվել Ս.Աստվածածին եկեղեցուն կից դպրոցը, «Երիտասարդաց ակումբը», առաջնորդարանը: Վարժարանն ուներ 100 աշակերտ, 4 ուսուցիչ: Քաղաքում գործում էր երկու եկեղեցի, որոնցից նշանավորը Ս.Աստվածածին եկեղեցին էր՝ կամարակապ և քարաշեն մի կառույց, որը քաղաքի աչքի ընկնող ճարտարապետական կոթողներից էր:

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 184:

Քաղաքի բնակչության թվաքանակի մասին կան հետևյալ տեղեկությունները: 1830-1850թթ. քաղաքն ունեցել է 6000 բնակչություն, որից 3000-ը հայեր էին[1]: 1885թ. քաղաքում հաշվվում էր 180 տուն հայ բնակչություն[2], 1903թ.՝ 160[3]: Կարինի առաջնորդարանի հաշվումներով՝ 325 տուն հայ, 600 տուն քուրդ բնակչություն[4]: Մեկ այլ հեղինակ հայտնում է, որ պատերազմից առաջ քաղաքն ունեցել է 8000 բնակիչ, որից 2000-ը հայեր էին[5]: Մեկ այլ փաստաթուղթ հավաստում է, որ 19-րդ դարի վերջին քաղաքն ուներ 160 տուն, 1551 շունչ հայ, 127 տուն քուրդ բնակչություն[6]:

Միջինը՝ 257 տուն, 1942 շունչ հայ, 363 տուն, 2544 շունչ քուրդ բնակչություն:

Ց ՈՒ Ց Ա Կ

Խնուսի գավառի հայաշատ գյուղերի

(հաշվարկը կատարված է միջինի տարբերակով)

	հայ		թուրք	
	տուն	շունչ	տուն	շունչ
Խնուս	257	1942	-	-
Գարաչաբան	169	1183	363	2544 քուրդ
Չներմե	134	940	9	63 քուրդ
Հարամիկ	116	812	30	210 քուրդ
Արոս	104	783	3	21 քուրդ
Կարաքյոփլլու	107	752	12	84 քուրդ
Գովանդուկ	82	668	-	-
Խոզլու	105	609	3	21 քուրդ
Ելփիս	61	480	-	-
Խաչալույս	61	462	17	119 քուրդ
Կոպալ	56	436	16	190 քուրդ
Քաղքիկ	104	452	2	14 քուրդ
Տուման	47	326	10	70 քուրդ
Ենիքեոյ	35	291	4	28 քուրդ
Խլրթ	37	249	19	133 քուրդ

[1] ՏԲ, հ. 2, էջ 754:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 21:
[3] Նույն տեղում:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 185:
[5] ՏԲ, հ. 2, էջ 754:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 695, թ. 23:

Գավառակի նշանավոր գյուղերից էին Մժնկերտը, Մարուֆը, Խրմխայան, Սարլունը, Սարվորին և այլն:

Կիսկիմի գավառը զբաղեցնում է Ճորոխի միջին հովիտները, գտնվում է Համշենի և Թորթումի միջև: Հյուսիսից և հարավից սահմանակից լինելով նշված գավառներին՝ Կիսկիմը, սակայն, առավել սերտ կապերի մեջ էր Սպերի հետ:

Հակոբ Կարնեցին չի հիշատակում Կիսկիմ անունը: Նա երկու անգամ անդրադառնում է գավառակին, բայց նշում է ոչ թե Կիսկիմ անունը, այլ Ագրակ և «բերդն Ագրակ»[1]:

Գավառի սահմանների մասին պատկերացում կազմելու համար դիմենք Հ.Տաշյանի օգնությանը. «Պարխար լերանց ամենաբարձր գագաթն իւր հսկայ լեռնաբնով՝ յատուկ մտօք Քաջքարը կամ Վարսամբէկ՝ ինչպէս կենդրոն էր Համշէնի ձորերուն դէպի հիւսիս, կենդրոն է այն խոր ձորերուն, որոնք դէպի հարաւ եւ հարաւ-արեւելք կ'իջնեն Ճորոխ, եւ որոնք Տայոց աշխարհի վերջին ծայրերը կամ վերնաձորերն էին: Ասոնք մասն էին Տայոց այն գաւառին՝ որ Ճորոխի երկու ափերու հովիտները կը պարունակէր այն կէտէն, ուր կը դադրէր Բարձր Հայոց Սպերի գաւառը, մինչեւ այն կէտն՝ ուր հավանօրէն Գուգարաց Կղարջք գաւառը կը բռնէր միջոց մը Ճորոխի ձախ ափն ալ, այնուհետեւ գալով Եգերաստան եւն: Տայոց այս գաւառին մէջ, կը կոչուէր Արսեաց անուամբ, յետոյ Բերդագրակի եւ այժմ Կիսկիմի անուամբը...»[2]:

Կիսկիմ անունը, հավաստիացնում է Ատրպետը, «առաջին անգամ յիշւում է Ասսուրա-Ուրարդական շրջանների սկզբներում»[3]: Այս պնդման հիմքը Սանդալճյանի սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությունն է, որոնց վկայությամբ էլ հեղինակը հանգում է նոր եզրակացության. «Կիցկան եղել է արքայական, Մալխասեան, Պարթեւ-Պահլաւական, Ամատունի, Ալկունի եւ ուրիշ շատ նախարարութիւնների Ոստանն-ամրոց բերդ եւ գանձարան»: Ապա հենվելով Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ասողիկի, Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակումների վրա, ընդգծում է, որ «այս գաւառն (Կիսկիմի-Հ.Զ.) եղել է պատսպարան եւ նեղուածները այստեղ կամ ավելի խորը – Պահլաւական, Մամիկոնեան կալուածներումն են ապաստան գտել միջին դարերում, երբ հալածուել են Արշակունի, Սասանեան, Բիւզանդական կամ Արաբական իշխանական բռնաւորներից»[4]:

[1] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 17, 51:
[2] *Տաշեան Հ.,* Տայք, Դրացիք եւ Խոտորջուր, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 192:
[3] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 111:
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 111-112:

Կիսկիմի մասին ժլատ տեղեկություններ է հաղորդում Ղ.Ինճիճյանը. «Կիսկիմ. ունի աւան համանուն, եւ այգեստանս պտղաւէտ, կոչեցեալ Խավու պաղէր»[1]: Գավառի մասին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում գերմանացի ուսումնասիրող Կարլ Կոխը, որն իր ուսումնասիրությունը նվիրել է Պոնտոսից Արևմտյան Հայաստան ընկած տարածքի ժողովուրդներին: Գերմանացի հեղինակը, Հ.Տաշյանի խոսքերով, «իբր դրախտ կը նկարագրէ երկիրս»[2]: Ավելացնենք, որ ուսումնասիրողը չէր սխալվում իր եզրակացության մեջ: Իրոք, Ճորոխի այդ հատվածը, որտեղ տեղավորված էր Կիսկիմի գավառը, հեքիաթային տպավորություն է թողել շատերի վրա: Ընդարձակ դաշտավայր, կանաչով պատած սարալանջեր, խոտառատ արոտավայրեր, ոռոգման կատարյալ համակարգ, բարձր բերքատվություն, արգասաբեր հողեր: Այսպիսին է ընդհանուր կարծիքն այն գավառի մասին, որի սահմանները հասնում էին հյուսիսում՝ Համշեն, հարավում՝ Թորդոմ և Օլթի, արևելքում՝ Սպեր, արևմուտքում՝ Պալխար:

Այնուհետև Հ.Տաշյանը խոսում է համատարած մահմեդականացման քաղաքականության մասին, որ վարում էին թուրքական սուլթաններն ու տեղական իշխանությունները, ընդգծում նրա ծանր հետևանքները և, անդրադառնալով Կիսկիմի գավառակին, գրում. «Բերդագրակի կամ Կիսկիմի գաւառը հայ էր էապէս, ասոր տարակոյս չկայ: Եթէ չըլլար ալ ուրիշ փաստ՝ նոյնիսկ տեղւոյ եւ գիւղերու անուանք կը ցուցանեն, ինչպէս եւ ի Թորթում: Բայց ի կարգ մ'անուններէ՝ որոնք շատ հին են,- հաւանօրէն հին Տայոց շրջանէն, ուստի գրաւոր հայերէնի ձեւերով չեն մեկնուիր, ամենայն ինչ գրաւոր հայերէն ձեւով է»:

Ահա սա էր պատճառը, որ թուրքական տեղական իշխանությունը ստիպված իր կենտրոն դարձրեց «մահմեդականացած մերձաւոր Արսիս»[3]:

Գավառակի ոռոգման հիմնական աղբյուրը Ճորոխ գետն էր, նրա մեջ թափվող գետերն ու գետակները: Ճորոխը գավառակում, իր երկու ափերով անտառապատ էր: Բնակչությունն այդ հնարավորությունն օգտագործում էր շինանյութի և վառելիքի ապահովման նպատակով:

Գավառը, ինչպես վկայում են ուսումնասիրողներից շատերը, ուներ բազմաթիվ ավերված բերդերի, քաղաքների, ամրոցների, բնակչաշատ բնակավայրերի ավերակներ: Այս մասին մանրամասնություններ է հաղորդում Ատրպետը՝ միաժամանակ կատարելով արժեքավոր վերլու-

[1] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 132:
[2] *Տաշեան Հ.,* Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 220:
[3] Նույն տեղում, էջ 214, 221:

ծություններ, մեկնաբանություններ, համեմատություններ: Ուսումնասիրող բանահավաքը հիմնավոր վկայություններ է հաղորդում նշանավոր բնակավայրերի անցյալի, պատմական ժառանգության մասին, ընդգծում ճարտարապետական կառույցների յուրօրինակությունը՝ հավաստելով, որ նրանցից յուրաքանչյուրն առանձնահատուկ կառույց էր, չէր կրկնում մեկը մյուսին, ինքնատիպ էր, ուներ ուրույն ոճ ու ճարտարապետական հատակագիծ[1]:

Կիսկիմի գավառում զարգացած էին երկրագործությունը, այգեգործությունը, պարտիզպանությունը, բանջարաբուծությունը: Գավառն Արևմտյան Հայաստանի այն շրջաններից էր, որտեղ աճում էին բրինձ, առաջնակարգ ծխախոտ: Սակայն թուրքական իշխանությունների վարած հալածական քաղաքականության պատճառով հայությունը չէր ընդարձակում այդ կուլտուրաների մշակությունը և արտադրում էր այնքան, որ բավարարվեն սեփական պահանջները:

Կիսկիմի գավառի գյուղերի վերաբերյալ կան մի քանի վկայություններ: Ոչ Ղևոնդ Ալիշանը, ոչ Ղ.Ինճիճյանը, ոչ Մ.Միրախորյանը չեն նշում գյուղերի ընդհանուր թվաքանակը: Գ.Սրվանձտյանցի վիճակագրության համաձայն, գավառակն ունեցել է 15 գյուղ (Խոտորջրի գյուղախմբի հետ միասին– Հ.Ջ.)[2]: Ա-Դոն, նույն հաշվարկով, ընդունում է 13 գյուղերի գոյությունը[3]: Ատրպետը հայտնում է երկու տեղեկություն՝ 17 և 18 գյուղերի ընդգծմամբ, ապա ավելացնում. «Հայութիւնը այնքան հալածանքների եւ կոտորածների ենթարկելուց յետոյ, այնքան բռնի իսլամացումներից յետոյ, վերջին պատերազմի սկզբին դարձեալ քսանուչորս Հայ գիւղեր գոյութիւն ունէին: Խոտորջուրն իր եօթն թաղերով, Սպեր կենդրոնաւան, Կարմրիկ, Վ. եւ Ս. Փրթիկներ, Նիխախ, Կուդրաձեն, Խանթաձոր, Կաղմխուտ, Ծեակոնց, Մոխրկուտ, Վ. եւ Ս. Կաբան, Բաղի, Թորոսենց, Բաղդասարենց եւ Փրտիկներ»[4]:

Բացի վերոհիշյալ ցուցակից, Ատրպետը հիշատակում է նաև մի քանի այլ գյուղերի անուններ. «...Խոտորջուր (Խոտոջուր) իր եօթը թաղերով, առուներով՝ Արեգի, Գիսակ, Գոգանց թաղ, Կրման, Սունենց, Ճիճապաղ, Միջին թաղ, Խանթաձոր, Կուդրաշէն, Մոխրկուտ Վ. եւ Ս., Գեղուտ, Նիխախ, Կամրիկ, Ծետկոնց, Կաղմխուտ, Նիխախ-բերդ, Գարմիջ կիրճ, Օշնակ, եւ Օշնակ-բերդ, Ճալա, Իծաձոր, Խեգեմիկ, Զաքերթան, Մարաշ,

[1] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 116:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 119:

Իրիս-բերդ, Փէտէզրէկ, Սակուտ, եւ Դորդքիլիսայի առուները, որոնք բոլորն էլ անցնում են համանուն գեղերի մօտից...»:

Մեկ այլ առիթով, խոսելով Ճորոխի աջ ափի գյուղերի մասին, հեղինակն ավելացնում է. «Այս առուակները հակառակ կողմից՝ աջից խառնւում են Ճորոխին Կուդրաշէն, Կարմրիք, Քարամէնիք, Նիխախ-աջ, Զարկոնց, Օշնակ, Ղազերնիս կամ Կազերնիս, Կեանգնիս, Լէմս, Կիսկիմ-բերդ, Կոջեթ-ամրոց (Էրսիս), Փէշկով, Քիլլի, Գիվնար, Լագուզետ եւ Ամգիտ, որոնք համանուն գեղերը, բերդերն ու վանքերը ոռոգելով՝ կենդանացնում են շատերը»[1]:

Ընդհանուր առմամբ, Ատրպետը հիշատակում է 44 գյուղեր: Նրանցից 13-ը գրանցված են Գ.Սրվանձտյանցի մոտ, բայց Ատրպետը չի նշում Գ.Սրվանձտյանցի հիշատակած Վընենե, Կիսակ գյուղերը: Ա-Դոն հիշատակում է 12 գյուղեր, իսկ մեկ գյուղ՝ Կրմանը, նշված չէ Ատրպետի ցուցակում: Համադրումից հետո, դուրս գրելով բերդերն ու ամրոցները, ունենում ենք գավառակի գյուղերի հետևյալ ցուցակը. Խնդաձոր, Կուդրաշեն, Մոխրկուտ Վերին և Ստորին, Գեղուտ, Նիխախ, Նիխախ աջ, Կարմրիկ կամ Կարմրակ, Ճետկոնց, Կաղմխուտ, Օշնակ, Ճալա, Իծաձոր, Խեզեմեկ, Զամքերթան, Մարաշ, Փէտէզքէկ, Սուկատ, Դորդքիլիսա, Քարամէնիք, Զարկոնց, Ղազերնիս, Կեանգնիս, Լէմս, Կիսկիմ, Հարշիշ, Փէտկով, Ջիլլի, Գիվնար, Լագուզետ, Ամգիտ, Թրէիկներ, Ծնկոնց, Կաբան, Բաղի, Թորոսենց, Բաղդասարենց, Կրման, Վընենե, Կիսակ: Ավելացնենք նաև Գ.Սրվանձտյանցի լրացուցիչ ցուցակը՝ Կոճեկ, Տյորտ քիլիսե, Ջորկանց, Բերդիկրեկ, Արսիս, Կյունար, Խամրուտ, Քիսփորտ, Քոլիկ, Քարե կամուրջ, Որջնահող, Մյունկյա մեկի, Խորթ, Աշպըշեն[2]:

Այսպիսով, Կիսկիմի գավառն ուներ 55 գյուղ, որոնցից 13-18-ը՝ հայաբնակ: Ատրպետն ընդունում է 24 հայաբնակ գյուղերի գոյությունը:

Միջինը՝ 21 հայաբնակ գյուղ:

Կիսկիմի գավառակի ամենահայաշատ, զուտ հայ բնակչություն ունեցող գյուղը *Կարմրիկն* էր կամ՝ *Կարմրակը*: Գյուղը հայտնի էր նաև *Կարմիրք* անունով: Գտնվում էր Ճորոխ գետի աջ ափին: Գյուղի այգիները տարածված էին Ճորոխի ափին և կրում էին Ողնազ անունը: Գյուղի մոտ գտնվող բլրի վրա էին գտնվում սրբուհի Եղիսաբեթ, Ս.Հովհաննես, Ս.Գևորգ, Ս.Տիրուհի, Ս.Սարգիս մատուռները: Գյուղը բնակեցված էր կաթոլիկ հայերով: Կրոնափոխությունը տեղի էր ունեցել 17-րդ դարում:

[1] Նույն տեղում, էջ 112-113, 114-115:

[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:

Չնայած այդ փաստի գոյությանը, հայերը միշտ անհաշտ դիրք են գրավել թուրքական իշխանությունների նկատմամբ և հայտնի էին իրենց ըմբոստությամբ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, պարտիզպանությամբ: Շեն ու բարեկարգ գյուղը միշտ իր վրա բևեռված էր պահում թուրք-քրդական ավազակաբարո ցեղերին: Ընդհարումները տեղի էին ունենում հաճախակի: Այդպիսի ընդհարումներից մեկի ժամանակ էլ, 1897թ. օգոստոսի 26-ին, բռնկված հրդեհը մոխրակույտի վերածեց ամբողջ գյուղը: Բնակիչներն ապաստան գտան հարևան գյուղերում և հաջորդ տարվա գարնանը վերադառնալով՝ նորից վերաշինեցին իրենց գյուղը:

Գյուղը բեղուն կապերի մեջ էր Սպերի և Կիսկիմի հետ, հատկապես սերտ հարաբերություններ էին պահպանում Խոտորջրի գյուղահամայնքի հետ:

Գյուղն ուներ երկու եկեղեցի՝ Ս.Հովսեփ և Ս.Աստվածածին: Գործում էր երկսեռ վարժարանը:

Գյուղի բնակչության թվաքանակի մասին կան մի քանի վկայություններ: Գ.Սրվանձտյանցն արձանագրում է 150 տուն, 1200 հայ բնակչություն[1]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է 170 տուն, 1140 հայ բնակչության[2], երկրորդը՝ 150 տուն, 580 շունչ բնակչության[3] մասին:

Ա-Դոն ընդունում է 150 տուն հայ բնակչության մասին հիշատակությունը[4]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 150 տուն հայ բնակչություն[5]:

Միջինը՝ 157 տուն, 800 շունչ հայ բնակչություն:

Կուտրաշեն գյուղը գտնվում էր Ճորոխի աջ ափին, նրա համանուն վտակի ափին, Կարմրիք և Որջնահաղ գյուղերի միջև, Մոխրակուտ գյուղի դիմաց: Գյուղում 1508թ. գրվել է «Թուղթ Պանպառու» աշխատությունը[6]:

Գյուղում գործել են Ս.Աստվածածին եկեղեցին, 2 դպրոց: Դպրոցներից մեկը կրում էր Լուսավորչյան անվանումը: Աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր 60-ի: Դպրոցն ուներ 1500 լիրա հասույթ[7]: Գյուղի բնակչության մասին կան խիստ հակասական տեղեկություններ: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է 150 տուն հայ բնակ-

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 716, թ. 14:
[3] Նույն տեղում, թ. 55:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 716, թ. 14:
[6] Նույն տեղում, ֆ. 478, ց. 1, գ. 107, թ. 16:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:

չություն[1]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 66 տուն հայ բնակչություն (650 շունչ): Գյուղում ապրել են նաև 20 տուն թուրքեր[2]: Վերջին տեղեկությունը չափազանց կասկածելի է, որովհետև հեղինակներից մեկը վստահորեն պնդում է, որ «Հայ է նոյնպէս Կուտրաշեն»[3]: Ա-Դոյի հաշվումներով, գյուղն ունեցել է 40 տուն զուտ հայ բնակչություն[4]:

Միջինը՝ 85 տուն 597 շունչ հայ, 20 տուն, 140 շունչ թուրք բնակչություն:

Գյուղի բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, երկրագործությունը: Թերևս եկամտաբեր չէին այդ ճյուղերը, քանզի գյուղի բնակիչներից շատերը գտնվում էին արտագնա աշխատանքի մեկնածների ցուցակում:

Կուդրաշենի մոտ գտնվում են ավերակ բերդի մնացորդներ:

Նիխախ գյուղը գտնվում էր Թորթումի լճից հարավ, մոտ 32 կմ հեռավորության վրա, հարավային կողմում, Թորթում գետի վտակ Նիխախի ափին: Գյուղը շրջապատված էր լեռներով և անտառապատ սարալանջերով: Գյուղին կից պահպանվել են համանուն բերդի ավերակները: Ատրպետը հայտնում է, որ Նիխախ անունով գյուղեր «մի քանի հատ կա Կիսկիմի գաւառում»: Ապա անցնելով գյուղի անվան բացատրությանը՝ ավելացնում, թե խախ, խաղ արմատը «շատ հաւանական է, որ Խալղի աստուածութեան անունի շարունակութիւնն է, որ մնացել է ժողովրդի բերանում...»[5]:

Գյուղի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Եկեղեցին կոչվում էր Ս.Աստվածածին, ուներ 2000 լիրա հասույթ: Գյուղում գործում էր Փրկչյան անունով վարժարան, որն ուներ 200 լիրա հասույթ և 17 աշակերտ[6]:

Համաձայն Գ.Սրվանձտյանցի վիճակագրության, գյուղն ունեցել է 15 տուն, 135 հայ բնակչություն, 80 տուն թուրք բնակչություն[7]: Արխիվային փաստաթղթերից մեկը, վկայակոչելով Կարինի առաջնորդարանի տեղեկությունները, պնդում է, թե գյուղն ունեցել է 7 տուն հայ բնակչություն[8]: Վերջին վկայությունն ընդունում է նաև ՀՍՀ համապատասխան

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, ց. 1, գ. 107, թ. 16:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] *Տաշեան Հ.,* Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 56:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:
[5] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 113:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[7] Նույն տեղում:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 858, թ. 38:

բաժնի հեղինակը: Այս տեղեկությունների աղբյուրն Ա-Դոյի վիճակագրությունն է, իհարկե, չմոռանանք, որ դրանք վերաբերում են 20-րդ դարի սկզբին միայն[1]:

Միջինը՝ 11 տուն, 92 շունչ հայ, 80 տուն, 560 շունչ թուրք բնակչություն:

Մոխուրկուտ գյուղը գտնվում էր Կուտրաշեն գյուղի դիմաց, Կարմրիկ և Որջնահաղ գյուղերի հարևանությամբ, Ճորոխի համանուն վտակի աջ ափին, գրեթե սահմանակից լինելով Խոտորջրի Արեգին գյուղին: Կային երկու Մոխուրկուտներ՝ Վերին և Վարի, որոնք բնակեցված էին կաթոլիկ հայերով և երկուսը միասին ունեին 55 տուն, 400 հայ բնակչություն (40 տուն, 300 շունչ բնակչություն ուներ Վերի Մոխուրկուտը- Հ.Զ.)[2]: Գյուղում այլազգի բնակչություն չկար: Եկեղեցին հիշատակվում է միայն Վերի գյուղում: Այն ունեցել է 3000 լիրա հասույթ: Երկու գյուղերում էլ գործում են Լուսավորչյան վարժարաններ, բայց աշակերտության քանակի մասին տեղեկություններ չեն հաղորդվում[3]: Գյուղի մասին հիշատակություն կա նաև Հ.Տաշյանի մոտ: Հեղինակը հայտնում է, որ գյուղը զուտ հայ կաթոլիկներով էր բնակեցված, և վկայակոչում է նաև իրեն հայտնի օտարազգի հեղինակների տեղեկությունները[4]:

Փրթիկներ գյուղը գտնվում է Խոտորջրի հարևանությամբ: Ունի երկու թաղ՝ Վերին և Ստորին: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով, կային նաև պանդխտությամբ զբաղվողներ: Գյուղն ունեցել է եկեղեցի, վարժարան: ՀՍՀ հոդվածագիր Թ.Հակոբյանը հայտնում է, որ գյուղում ապրել են (Առաջին աշխարհամարտի նախօրյակին) 35 տուն հայեր[5]: Ա-Դոն վկայում է 30 ընտանիք հայերի գոյությունը[6], այսինքն՝ 20-րդ դարի սկզբին՝ միջինը 32 տուն, 227 շունչ հայ բնակչություն:

Գյուղերի ներկայացված ցուցակում կա մի գյուղ՝ *Որջնահաղ*, որի մասին, բացի կցկտուր հիշատակություններից, այլ մանրամասնություններ չեն հաղորդվում, չնայած Որջնահաղը եղել է գավառի շեն ու հարուստ գյուղերից մեկը, հնում հայաշատ ավան: Հ.Տաշյանը գյուղի մասին հայտնում է հետևյալը. «Բայց ինքն Պրջհաղէ ելած էր Կսկիմի վարի մասն...»[7]:

[1] ՀՍՀ, հ. 3, Ե., 1982, էջ 290, *Ա-Դո,* էջ 199:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] Նույն տեղում:
[4] *Տաշեան Հ.,* նշված գիրքը, էջ 55:
[5] ՀՍՀ, հ. 12, Ե., 1986, էջ 377:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:
[7] *Տաշեան Հ.,* Տայք, դրացիք եւ Խոտորջուր, Վիեննա, 1980, էջ 220:

Գյուղի մասին ավելի ընդարձակ խոսում է Ֆ.Բուռչանյանը: Որջնահաղը, գրում է նա. «...այժմ փոքր մի գյուղ է Ճորոխի աջ ափին: Այստեղ նահատակվել է Հմայակ Մամիկոնյանը՝ քաջ Վարդանի եղբայրը: Այս գյուղում, մի թուրք պառավի մոտ, արծաթե տուփի մեջ մի ձեռք կա, որի համար ասում են, թե Հմայակի կամ Համազասպի ձեռքն է լինելու: Որջնահաղից աջ ու ձախ, Ճորոխի ափերին, քարաժայռի վրա, երկու բերդեր կան ավերակ, հին օրերից մնացած:

Որջնահաղից վեց ժամ հեռավորությամբ, Ճորոխ գետի ձախ ափին, գտնվում է Խոտորջրի Ձոր դուռ կոչված վայրը...»[1]:

«Հուշամատեան Խոտորջրի» աշխատության մեջ Որջնահաղի մասին արձանագրված է. «... Ճորոխի շրջանի մէջ է փոքրիկ հովիտ մը՝ Լոճուտի ագարակը, որուն քովէն կ՚անցնի Որջնահաղէն երկարող գլխավոր ճամբան եւ ուր տակաւին կը տեսնուին երբեմնի բարգաւաճ այգեստաններու աւերակները»[2]:

Հիշատակված աշխատության հեղինակներ Հ.Հուլունյանն ու Մ.Հաճյանը մեկ այլ առիթով, խոսելով Ծրարաջուր բերդի մասին, հիշատակում են, որ այդ բերդի մոտից է գնում ճանապարհը դեպի Սպեր և Որջնահաղ. «...քանի որ հոս դուռ է Սպեր և Որջնահաղի...»[3]:

Հ.Տաշյանը, կարծես շարունակելով այս միտքը, խոսելով մահմեդականացման քաղաքականության մասին, որպեսզի ընդգծի, թե Կիսկիմն ու նրա մի քանի գյուղեր դիմացան այդ ահավոր բռնություններին՝ պահպանելով իրենց հավատը, ընդգծում է, որ նույնիսկ «հաղորդակցութեան գլխաւոր գծին վրայ» Որջնահաղի մահմեդականացումը չփոխեց այվ վիճակը[4]: Այսինքն՝ ապացուցվում է այն միտքը, որ Որջնահաղն իրոք կապող օղակի դեր է կատարել Թորթումի, Սպերի ու Կիսկիմի, Խոտորջրի միջև:

Ասվածը հաստատելու համար նորից դիմենք Հ.Տաշյանին: Նկարագրելով Խոտորջրի, Կարինի, Արսիսի, Սև ծովի հետ կապող ուղիների մասին, Հարկևորի լեռնանցքի կարևոր դերի առթիվ նորից կենտրոնական տեղ է հատկացնում Որջնահաղին[5]: Դժբախտաբար, Որջնահաղը եզակի գյուղերից չէ, որ դուրս է մնացել ուսումնասիրողների ու վիճակագիրների ուշադրությունից: Այս հանգամանքի պատճառները ծնվում էին

[1] «Էջմիածին», 1950, թիւ 3-4, էջ 47:
[2] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* Հուշամատեան Խոտորջրի, Վիեննա, 1964, էջ 6:
[3] Նույն տեղում, էջ 12:
[4] *Տաշեան Հ.,* նշված գիրքը, էջ 213:
[5] Նույն տեղում, էջ 209:

թուրքական իրականությունից: Այլապես հնարավոր չէր, որ Գ.Սրվանձտյանցի պես բարեխիղճ ազգայնականն անգամ չհիշատակեր գյուղի անունը, գյուղ, որն, ինչպես տեսանք, ուներ թե՛ պատմական անցյալ, թե՛ կարևոր աշխարհագրական դիրք: Գյուղի մասին ամենահին հիշատակություններից մեկը պատկանում է Ղազար Փարպեցուն: Պատմիչը, նկարագրելով ճակատամարտերից մեկը, գրում է. «...մղէին ճակատամարտ ի գիւղն, որ անուանի Որջհաղ ի գաւառին Տայոց»[1]:

Կիսկիմի գավառակում իրենց առանձնահատուկ տեղն ունեին *Խոտորջրի* գյուղախմբի մեջ ընդգրկված գյուղերը: Գյուղի անվան վերաբերյալ կան մի քանի բացատրություններ: Հ.Էփրիկյանը գյուղի անունը բացատրում է խոտ և ջուր միացությամբ՝ առատ խոտ և ջուր իմաստով[2]:

Երբեմն Խոտորջուր անունը բացատրվում է գետի հունը խոտորվելու պատճառով, կամ անունը կապված է տեղական լեզվով՝ Խոտոր և ջուր բառերի միացումից[3]: Իսկ այս ամենի ակունքը գետի օձապտույտ ընթացքն է, որն առավել պատկերավոր է նկարագրում «Բազմավեպի» հոդվածներից մեկը. «Իր անունը առած է անցնող գետոյն արտաքոյ կարգի ծամածուռ ոլորապտոյտ ընթացքէն. թեեւ ըստ ոմանց Խոտորջուր ըսելն ալ անյարմար չէ, իբր թէ այս երկիրն բնութեան ուրիշ շատ բերքերէ զրկուած՝ խոտ ու ջուր միայն ըլլան իր ճոխութիւնցը...»[4]:

«Յուշամատեան Խոտորջրի» գրքի հեղինակները, սակայն, մերժում են վերջին տեսակետը՝գրելով. «Բայց որքան ջուրը առատ եղած է, խոտը դարձեալ միշտ սակաւ, համեմատաբար եւ այն՝ երկրին բարձրագավառ, լեռնային եւ քարուտ ըլլալուն համար»[5]:

Խոտորջրի մասին ամենահին վկայությունը վերաբերվում է 1586թ.: Մատենադարանի Մաշտոցներից մեկի հուշագրությունում նշվում է «Գրիգոր Խոտաջրայ» անունը[6]:

Հակոբ Կարնեցին իր «Տեղեկագրի» մեջ խոսելով Սպերի մասին, նրա սահմանները նկարագրելով՝ ճշգրտելիս հայտնում է, որ գավառի սահմանները «գնացեալ հասանէ մինչեւ ի գիւղն Խոտեւջուր»[7]:

Խոտորջրի մասին տեղեկություններ կան նաև 18-րդ դարի վերաբերյալ, բայց ինչպես նկատում է ուսումնասիրողներից մեկը՝ «...այդ

[1] *Ղազար Փարպեցի,* Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 136:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. Բ, էջ 197:
[3] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 3:
[4] «Բազմավեպ», 1875, էջ 225:
[5] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 3:
[6] Նույն տեղում:
[7] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 16:

հիշատակությունները ոչինչ չեն ասում Խոտորջուրի անցյալի մասին, դրանցից կարելի է լոկ եզրակացնել, որ այդ թվականներին գոյություն է ունեցել Խոտորջուրը...»[1]:

Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ խոտորջուրցիների նախնիները գաղթել են Անիից: Այս առթիվ ընդարձակ տեղեկություն է հաղորդում Թ.Գևորգյանը. «ծեր խոտորջուրցիները հավատացնում էին, որ Խոտորջուրում կային հին ձեռագիր ավետարաններ, նույնիսկ դեռ Անիից բերված, որոնց մեջ եղած հիշատակարաններում իրենք կարդացել են, որ խոտորջուրցիների նախնիք եկել են Անիից»[2]: Իբր թե Բագրատունի մի իշխան իր ընտանիքով, մերձավորներով ու ծառաներով կամեցել է Սև ծովով անցնել Ղրիմ, սակայն Ճորոխի հովտում, Ոսկեվանի կամրջի մոտ անօրենների հարձակմանն է ենթարկվել: Իշխանը և բոլոր մեծահասակ տղամարդիկ սպանվում են անհավասար կռվում, և միայն կանայք ու երեխաները, ապաստանելով մերձակա ստորգետնյա ժայռաբերդում, փրկվում են և անցնում հանդիպակաց, այն ժամանակ անմարդաբնակ, կուսական անտառներով պատած լեռնաշխարհը, որը և անվանում են Խոտորջուր: Իբր թե այդ փրկվածների ղեկավարը եղել է իշխանի աղանդավոր կինը՝ Տիրուհի անունով, որը մեծ իմաստությամբ ու քաջությամբ կառավարել է իր փոքրիկ ու անօգնական համայնքը:

Մեզ հասած ավանդությունների համաձայն՝ այդ համայնքն արտաքին աշխարհից բոլորովին մեկուսացած, թաքուն ապրել է, գոյատևել դարերի ընթացքում, բնատնտեսության պայմաններում և հայտնաբերվել է միայն այն ժամանակ, երբ օսմանյան թուրքերն արդեն տիրել էին Ճորոխի ամբողջ հովտին: Իբր երկու թուրք հարկահան պաշտոնյա, Ճորոխով անցնելիս, առափնյա խիտ մացառների միջից Ճորոխ թափվող ջրերի մեջ նկատում են մի գդալ և թարմ տաշեղ: Ըստ այդ հարկահանների գիտցածի, այդ տեղերում որևէ շեն, բնակություն չէր լինելու: «Հապա ո՞րտեղից էին գալիս գդալն ու տաշեղը... Կասկածները փարատելու համար հարկահանները ջրերի հետ վեր են գնում և անանցանելի, մթին թավուտների մեջ հայտնաբերում են Խոտորջուրը»[3]:

Ֆ.Բուռչանյանը, չընդունելով խոտորջուրցիների՝ Անիից գաղթելու փաստը, որպես հակառակն ապացուցելու կռվան հայտնում է, թե այդ պնդումը «չի ապացուցվում ոչ լեզուների և ոչ էլ տարազների միջոցով»[4]:

---

[1] *Գևորգյան Թ.,* Խոտորջուր, ԲԵՀ, 1971, թիւ 3 (15), էջ 204:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] *Բուռչանյան Ֆ.,* Մի ակնարկ Տայոց Խոտորջրի անցյալից, «Էջմիածին», 1950, թիւ 3-4, էջ 49:

Խոտորջուրը գտնվում է պատմական Տայքում, նրա հյուսիսարևելյան մասում: Գյուղախմբի սահմանների մեջ են ընդգրկված Ճորոխից հարավ-արևելք, մինչև Պարխար (Խաղտյաց) լեռնաշղթա ընկած տարածքները, Ճորոխի վտակ Խոտորջրի ավազանը:

Խոտորջրի սահմանները հարավ-արևելքում հասնում են Կիսկիմ, Իծաձոր, Քարե կամուրջ, Հարկնոր սար, հարավ-արևմուտքում՝ Ճորոխի ավազան և Հունուտի լեռնաշղթա, հյուսիս-արևմուտքում՝ Մեծ լեռ, Խաղտյաց լեռներ, հյուսիս-արևելքում՝ Կարմիր հովիտ, Մեծ և Քոչին սար: Այսպիսով, գյուղախումբը հիմնականում զբաղեցնում է Խոտորջուր կամ տեղական անվանումով՝ Ճորոխի Մեծգետ վտակի ամբողջ ավազանը, հովիտը:

Գյուղախմբի բնությունը հարուստ է: Կան բազմաթիվ անդնդախոր ձորեր, կիրճեր, բարձր գագաթներ, որոնց զարդը վեհանիստ Քաջքարն է (3937 մ), Հունուտի լեռնաշղթայի Շեքերդաղ գագաթը: Բնությունն առատաձեռն է եղել տարածքի նկատմամբ՝ նրան պարգևելով առողջարար կլիմա, ամառային զովություն, գարնանային գեղեցկություն, առատաձյուն ձմեռ, բերքաշատ աշնան և ամռան հմայք: Գյուղախմբի տարածքը հարուստ է բազմատեսակ ծառատեսակներով, անտառները լի են պտուղներով, լեռնալանջերին տարածված են մրգաշատ պարտեզներն ու այգեստաններ, լեռնալանջերից բխում են սառնորակ աղբյուրներ, որոնք վերածվում են առվակների, ապա գետակների և երբեմն փոքրիկ ջրվեժներ գոյացնելով՝ շտապում են մայր Ճորոխ:

Խոտորջրի դիրքի, նրա բնության, սահմանների պատկերավոր նկարագրություն ունի Հ.Տաշյանը, որը նպատակահարմար գտանք ներկայացնել կրճատումներով. «Խոտորջուրը կը սկսի Քաջքարէ, դէպ ի հարաւ, բայց նաեւ Քաջքարի արեւմտեան-հարաւ ընթացող բարձր լեռնաշղթային մնացեալ ստորոտէն, որ կը մօտենայ վերը յիշուած Սոգորնի գեղի անուն կրող բարձր գագաթին... Այն կէտն, ուսկից Խոտորջուրցին Ռիզէէ գալով եւ Համշենի վրայէ կ'անցնի բարձր լեռնագիծը՝ իջնելու համար ի Խոտորջուր, արդի թուրքական անուանակոչութեամբ «Շաքար»-լեռ կը կոչուի, Սոգորնի գլխուն արեւմտակողմը: Ասոր եւ Քաջքարի ճիշդ ոտքը կ'իյնայ Խոտորջրոյ վերնամասն, որոնք կ'իջնեն խորաձորերն, երեք գլխաւոր ձորերու վերածուելով, որոնք ի վերջոյ կը միանան Խոտորջրոյ գլխավոր հովտին մէջ, ուր կը միանան նաեւ Խոտորջուր գետակը կազմող բոլոր ջրերը, եւ յետոյ նեղ ու երկայն կապան մը կը հասցնէ Ճորոխ: Սոգորնիի եւ Շաքար-լեռան միջեւ բարձր եւ յաղթ լեռնաբազուկ մը կ'իջնէ դէպի Հարաւ-արեւելք՝ հասնելով Ճորոխ: Այս մեծ լեռնագիծը

կը բաժանէ Սպերի վերաբերող Թափձորը Հունուտի ձորէ: Լեռնագիծն սակայն արդէն շատ վերը կ'երկճղի, եւ երկրորդ ճիւղն՝ աւելի խիստ արեւելեան-հարաւ ուղղութիւն մ'առնելով, կը բաժնէ Հունուտէ Խոտորջուրը: Ասիկա Արջունին-Գբեր լեռնագիծն է եւ անկէ վեր Մոխրուստ լեռը: Այնպէս որ Շաքար-լեռնէ իջնող ուղեւորը կ'իջնէ նախ Հունուտի ձորի վերնամասը («եայլա»ն), անկէ ելլելու համար Մոխրուստի կողմէն ի վեր: Ճորոխի հարաւային ափէն, օրինակի համար Կարմիրքի բարձունքէն Հունուտի այս վերնամասն այնպէս պայծառ կ'երեւայ, ինչպէս առհասարակ Խոտորջրոյ ամբողջ վերնամասն եւ Պարխարի լեռնագիծը, որ անկէ զննողին ինքնին կու գա այն գաղափարը թէ Հունուտ ալ թերեւս Խոտորջրոյ հետ կազմէր Տայոց աշխարհի այս կողման ծայրամասը»[1]:

Այսպես, Ճորոխ գետը բաժանում է իրարից Խոտորջուրն ու Կիսկիմը՝ աջ ու ձախ ստեղծելով յուրահատուկ բնաշխարհ:

Խոտորջրի գյուղախմբի գյուղերի քանակի վերաբերյալ կան մի քանի կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը, նրանց թվում նաև Գ.Սրվանձտյանցն ու Ա-Դոն, ընդունում է, որ գյուղախումբը բաղկացած էր յոթ հիմնական գյուղերից[2]: Մյուս մասն ընդունում է այն տեսակետը, որ գյուղախմբերը բաժանվում են երկու խմբի՝ առաջինում՝ 9 գյուղեր, երկրորդում՝ 5[3]: Որոշ հեղինակներ ընդունում են, որ գյուղախումբը բաղկացած էր 9 հիմնական գյուղերից[4]: Հ.Հուլունյանը, Մ.Հաճյանն այդ առթիվ ունեն յուրօրինակ տեսակետ. «Խոտորջուր գաւառակը կը բաղկանայ երեք գլխավոր գյուղախմբերէ, որոնք իրարմէ 2-4 հեռաւորութեան մէջ կը գտնուին: Առաջին եւ մեծագոյն գիւղախումբն է՝ բուն Խոտորջուր՝ ինը թաղերու բաժանուած՝ *Ճիճապաղ, Կրման, Կիսակ, Միջին Թաղ, Խանդաձոր, Սունինց, Կաղմղուտ, Վահնայ, եւ Քեղուտ:* Երկրորդը՝ *Մոխորկուտ* (վերի եւ վարի), *Գորգանց եւ Արեգի:* Իսկ երրորդը՝ Ճորոխի աջ ափին, լայնածավալ բարձունքի վրայ՝ Նորաշէն եւ հոծ տուներով *Կարմրիք* գիւղը»[5]:

Խոտորջրի պատմությունն ուսումնասիրողներից Ֆ.Բուռչանյանը գտնում է, որ գյուղախումբը բաղկացած է ութ գյուղերից՝ Ճիճանպաղ, Կրման, Գիսակ, Խանդաձոր՝ Վարի և Վերի, Սյունինց, Կաղմախուտ, Քեղուտ և Վահնա[6]:

[1] *Տաշեան Հ.,* նշված գիրքը, էջ 193-194:
[2] ՏԲ, հ. 2, ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12, *Ա-Դո,* էջ 199:
[3] ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 82:
[4] ԲԵՀ, 1971, թիւ 3 (15), էջ 205:
[5] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 17:
[6] «Էջմիածին», 1950, թիւ 3-4, էջ 48 (տե՛ս *Ֆ.Բուռչանյանի* հոդվածը):

Մեզ հայտնի յոթ ցուցակները համեմատելուց հետո պարզվում է, որ Խանդաձոր, Սունենց, Կաղմխուտ, Գեղուտ, Ճիճապաղ, Կիսակ, Կրման գյուղերը, տարբեր տառային շեղումներով, կրկնվում են բոլոր հեղինակների մոտ: 12 գյուղեր բացակայում են տարբեր ուսումնասիրողների կազմած ցուցակներում՝ Արեգին, Վնենե, Վահնա, Մուխուրկուտ, Գորգեր, Կարմրիք, Միջին Թաղ, Քեղուտ, Թոլոշենց (հիշատակում է միայն Ղ.Ինճիճյանը– Հ.Զ.), Մասրուտ, Գորգանց, Գորքեր:

Վերջին ցուցակի և ոչ մեկ գյուղ չի հիշատակվում Ա-Դոյի մոտ, Գ.Սրվանձտյանցի մոտ կա Արեգին գյուղը, և ավելացված է Վնենե գյուղը: Մնացած հեղինակների կազմած ցուցակներում կրկնվում են Միջին Թաղ, Կարմրիք, Արեգին, Մուխուրկուտ գյուղերը: Արդյունքում՝ պարզվում է, որ գյուղախումբն ունեցել է 9 գյուղ՝ իրենց նորակազմ և ձևավորված, նոր միացված թաղ-գյուղերով: Հիշեցնենք նաև, որ ցուցակներում չարտացոլված գյուղերից մի քանիսն էլ ներկայացված են որպես Կիսկիմի գավառի գյուղեր, ինչպես, օրինակ, Կարմրիկ-Կարմրիքը, Մուխուրկուտը, որոնց մենք արդեն անդրադարձել ենք:

Փաստերի բացակայությունը մեզ զրկում է գյուղախմբի ցուցակը ճշգրտելու հնարավորությունից:

Խոտորջրի պատմական անցյալը կապված է Մամիկոնյան տոհմի հետ: Հայտնի է, որ 3-7-րդ դարերում այն հանդիսացել է այդ հանրահայտ նախարարական տան սեփականությունը: Մամիկոնյանները գավառակում սկսեցին կառուցել ու ամրացնել մի քանի բերդեր ու ամրոցներ: Խոտորջրի համբավավոր բերդերից էին Ծրարաջրի կամ Ծրարա, Ոսկակալ բերդը, որը գտնվում էր Գիսակ գյուղի մոտ, Սռին օղ կոչված բարձունքի վրա, Սյունենց գյուղի մոտ գտնվող ստորերկրյա ճանապարհով քարաբերդը, որի մասին հիշատակում է Ղազար Փարպեցին և այլն:

Հատկապես մեծարժեք ճարտարապետական կառույց է ժայռափոր Ծրարա կամ Ծրարաջրի բերդը: Քանի որ այն հայկական ճարտարապետության եզակի նմուշներից է, ուստի խոսքը տանք 20-րդ դարի սկզբին այնտեղ այցելած Մ.Հաճյանին:

Անցնելով Ճորոխի աջ ափը՝ ուխտավորները հասնում են մի ծմակի, որից հետո նրանց առաջ բացվում են Ծրարաջրի ավերակները: Նորից բարձրանալով վեր, անցնելով Լոճուտից՝ երևում է մաղարան, «որ մեր նպատակակէտն էր: Այս մաղարան քիչ մը ծանոթ էր հնուց... Չորս կողմ ապառաժ ժայռ. քարի մէջն ի վէր ելանք. միայն այրին առջեւին մեկ մուտք կայ. ան ալ դժուար եւ վտանգաւոր: ...Քսան արշինէն աւելի բարձր

ելանք՝ զուտ ժայռ ընդարձակ կապան: Ճորոխէն մինչեւ հոս 50 մետր բարձրութիւն ունի, իսկ մաղարայէն դար վեր 300 մետր կայ, նոյնքան էլ լայնութիւն, զուտ ապառաժ: Պարիսպը գաջով հաստատուն շինուած ու փլատակած, դեռ երկու կանգուն բարձրութիւն ունի: Երկու քիւերէն ալ հանգիստ ելանք պարսպին գլուխը: Ինչ հիանալի տեսարան ներսը. գիտես թէ մէկ պալատ մ'է աւերակ:

Այրին բերանը Ճորոխի վրայ դէպի Խոտորջրի գետակը կը նայի, մինչեւ հինգ ժամ հեռու տեղէ կը նշմարուի յայտնապէս: Հարթյատակ ուղղակի քայլեցինք, լուսաւոր ու շատ պայծառ, այնքան կանոնաւոր, ոչ մէկ տեղ մը ներս մտած կամ դուրս ելած է. կարծեմ թէ դանակաւ կտրուած է: Ճոպանը ձեռքերս՝ չափեցինք այրին եռանկիւն բերանին լայնութիւնը՝ 15 արշին, բարձրութիւնը՝ 2,5 արշին պարսպով մէկ տեղ: Առաջ գացինք 35 արշին: Հոս կիսուած է այրն իբրեւ միջնապարիսպ: Վարի մասը մէկ արշնի չափ բնական քար է, իսկ վեր կրախառն որմ ելած է մինչեւ առէքն. երկու կողմանէ ալ փոքր լուսամուտներ թողուած են, մէկն իրեն բնական քարին միջէն: Մէջ տեղէն դուռ ունի, որուն քովերէն երկու սիւներ՝ սպիտակ կարծր քարէ բարձրացած են վարէն մինչեւ ձեղունը կպած – մէկը՝ ման անցած: Երկու մոմ լուսացած՝ ներս մտանք, լոյս քիչ կար կտրուածքին պատճառաւ: Հոս ալ բավական ընդարձակ է, բայց աւերակած (= փլատակած) կոյտ: Մէջ տեղը նշմարեցինք ծակ մը՝ սաստիկ մութ...: Մէյ մէն կուկուզելով ներս մտանք: Բերանն աւերակներէն լեցուած էր: Ներսն աւելի ընդարձակ: ...Ետ դարձանք, չափելով եկանք միջին մաղարան: ...Նեղ այրին երկարութիւնը 24.5 արշին էր: Միջին մաղարան 14 արշին երկարութիւն ունի, բարձրութիւնը՝ 5 արշին, լայնութիւնը՝ 10 արշին, որուն մէջ աւերակ սենեակներու քարուկիր որմերը միայն կը մնան: Մտանք մեծ մաղարան: Հոս ամբողջ յատակը գաճ քսուած է: Վերի ճակատն՝ միջնորմին մօտ յատակն ի վար քարի մէջ փորուած երկու համբար կան՝ ողջ անարատ: Ճոպանով վար կախուեցանք. երեք արշին խորութիւն ունի, հինգ արշին լայն, ներսը կլորաձեւ՝ ամբողջ քար, գաճով ապիկած են եւ բերանները վեր գործած, մեկը՝ քիչ մը փոքր, նեղ բերանն ողջ անարատ, անշուշտ մէկը՝ ջրոյ համար, մէկն ալ՝ հացի: Մեծին բերանը՝ քիչ մը փակուած է: Ձեղունն ալ իրեն բնական քարն է: Հոս երկու կողմանէ ալ հինգ բնակարաններ կը տեսնուին, որոնց քարուկիր որմերը փլատակ կը մնան. մէջինեղէն սրահ կը մնայ: Բերանին մոտ աջակողմն այրուած քարեր կան. հոս անշուշտ իրենց կերակուր եփելու տեղն էր. անկիւնաքարեր՝ ինկած: Ձախակողմը մուտք մը կը գտնուի – բերանէն

հինգ արշին վեր, մէկուկես արշին լայն ու երեք արշին ալ բարձր, յատակէն երկու երեք աստիճան բարձր: Ներս մտանք եւ արձակ քալեցինք, եկանք գահավէժ տեղ մը, դուրս ելանք բերնին շիտկութեամբ: Հոս ալ քարուկիր փոքր որմ մը կայ. երկու կողմէ ալ լոյս ունի: ...Ասոր երկայնութիւնը 13 արշին չափեցինք. անշուշտ գործածուած է այս ալ թշնամին լրտեսելու եւ անոր հետ նետով կռվելու: ...Դրան պարսպին հաստութիւնը մէկուկէս արշին կայ, որուն քովն ի վար ներսի կողմէն մուտք կայ իջնելու, որմեր կ'երեւան զոյգ զոյգ, սակայն հողով եւ քարով ծածկուած: Անշուշտ մաղարային մուտքը տակէն էր. պարիսպը մեծ բերնէն՝ կէսը գոցած ըլլալու էր: Իսկ մնացածն իբրեւ լուսամուտ կը ծառայէր: Ավանդութեամբ կ'ըսեն թէ ասոր մէջէն մուտք մը մինչեւ գետը կ'իջնայ, ակնյայտ՝ ջուր առնելու համար: ...Պարսպէն դուրս ելանք: ...Քիչ մ'ալ վեր եկանք, մտանք մաղողը (քարի մէջ՝ նեղ տեղ): Հոս ճամբու վրայ քարի մէջ փորուած երկու հատ պահականոց կը գտնուին. մէկ մարդ միայն կարող է կանգուն կենալ. այնքան ծածուկ են, որ վարէն բնաւ չեն նշմարուիր»[1]:

Զորերու ճանապարհով, նեղ ու երկար արահետներով, հաղթահարելով փոքր առուների ընձեռած դժվարությունները, ներքև իջնելով, հետևում թողնելով Ծրարաջրի բերդը՝ ջորիներով կամ հետիոտն հեղինակը հասնում է Մեծ գետի ու Խավի ձորի խառնման տեղը, ուր կառուցված է Խոտորջուր գետի վրայի առաջին մեծ կամուրջը՝ Սորինք կամուրջ անունով, որն ունի 20 մետր երկարություն, 2.5-3 մետր լայնություն և 10 մետր բարձրություն: Կամուրջը կառուցված է 1850թ., դիմացկուն և ամուր գերաններով, վանդակապատ եզերքներով: Կամուրջը ծածկված է[2]:

Այնուհետև անցնելով Աղին ձորը, որը հատվում է Կարինից եկող ճանապարհին, էրկեն ճամփով, վայելելով Յոլդնուկի աղբյուրի սառնորակ ջուրը, անցնելով քանդված մատուռների կողքով՝ հասնում է Կզինց կամրջի տարածքը, որտեղից էլ մուտքն է դեպի Խոտորջրի առաջին թաղ-գյուղ՝ *Ճիճապաղը:*

Մինչև գյուղերի նկարագրությանն անցնելը՝ անդրադառնանք մինչև 19-րդ դարի երկրորդ կես ընկած ժամանակահատվածում Խոտորջրի գյուղախմբի տարեգրությունը, հակիրճ գծերով ներկայացնելով տարածքի հայության անհավասար գոտեմարտը քոչվորական պետության դեմ, որի արդյունքում՝ 17-րդ դարում տեղի ունեցան Խոտորջրի հայության մահմեդականացումն ու կաթոլիկություն ընդունելը՝ ընդհանուր

[1] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 10-12:
[2] Նույն տեղում, էջ 15:

գծերով անդրադառնալով նաև գյուղախմբում տիրող տնտեսական ու համայնքային հարաբերություններին:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Խոտորջրի պատմությունը սկսվում է 16-րդ դարից, թեև, ինչպես նշեցինք վերևում, Խոտորջուր անունը հիշատակվել է հնագույն ժամանակներից, ինչպես, օրինակ, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու հիշատակությունները:

16-րդ դարի գնահատելի տեղեկություններն այնքան սահմանափակ են, որ պատկերացում չեն տալիս գյուղախմբի ամբողջական պատմության մասին: Իսկ եթե դրան գումարենք նաև իրարամերժ տեսակետները, ենթադրությունները, ապա ստացվում է մի խճճված ավանդապատում: Այնուամենայնիվ, հնարավոր է դառնում կարծիք կազմել գյուղախմբերի տնտեսական, քաղաքական կացության մասին:

Օգտվելով տարածաշրջանի առանձնակի վիճակից, ճանապարհների բացակայությունից՝ թուրքական իշխանությունները դեռևս ուշադրության կենտրոնում չէին պահում գավառամասը: Հայերը, գտնվելով կիսանկախ վիճակում, զգուշանալով ապագա վտանգներից, ստեղծում են իրենց վիճակն ապահովող կառույցներ ու հարաբերություններ: Նախ՝ յուրօրինակ լուծում է ստանում հողային հարցը: Օգտագործելի հողատարածությունները բաժանվում են մասնատիրական, գյուղապետական և համայնապատկան հատվածների: Անուններն անգամ խոսում էին այն մասին, որ հնարավորին չափ բացառվել է շահագործվելու սկզբունքը, համայնքում հավասարների դաշնություն ստեղծելու նպատակով, որպեսզի միահամուռ լիներ նաև գոյատևման համար պայքարի գաղափարը: Երկրորդ կարևոր խնդիրը գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումն էր: Այստեղ բացառվել է անձնական հասկացությունն այն առումով, որ թե՛ վարը, թե՛ ցանքը կատարվել են ընդունված կարգի համաձայն, հովիտներից մինչև լեռնալանջերը սկզբունքով, նկատի չունենալով, թե մշակվող հողատարածքն ում էր պատկանում: Այդ աշխատանքները կատարվում էին տիրոջ բացակայության պայմաններում անգամ: Ահա համերաշխության ևս մեկ հիմնավորում, որը գյուղախմբերին դարձնում էր բռունցք:

Առավել մեծ կարևորություն էր ստանում նաև տնտեսապես վատ վիճակում հայտնվածներին օգնելու գործը, երբ ծանր կացության մեջ գտնվող ընտանիքն անհայտ անձից ստանում էր օգնություն:

Նշանակալի երևույթ էր նաև գործիքներից, լծկաններից օգտվելու կարգը: Դրանով պատասխանատվության զգացմունք էր սերմանվում, հոգատարություն թե՛ անասունների, թե՛ գործիքների նկատմամբ:

Ոռոգման համակարգը ևս գտնվում էր ընդհանուր հոգածության տակ: Կառուցվում էին նոր ջրանցքներ ու առուներ, ամբարտակներ, փոքրիկ ջրամբարներ, ոռոգվում էին անգամ խոտհարքները: Կենցաղային պայմաններն այնքան բարձր մակարդակի վրա էին, որ առանձին գյուղեր, իրենց խմելու ջրով ապահովելու նպատակով, կառուցել էին մետաղյա և կավե խողովակներով ջրմուղներ:

Համայնական օգտագործման էին ինչպես ձմեռանոցները, այնպես էլ ամառանոցները կամ յայլաները, որոնց թիվը համապատասխանաբար 10 և 17 էր[1]:

Այս ամենը նկատի ունենալով էր, որ Գ.Արծրունին Խոտորջուրն անվանում էր «փոքրիկ հանրապետություն»[2]:

Ընդհանուր, անվճար օգտագործման էին նաև ջրաղացները: Ստեղծված ներքին հավասարների ինքնավարությունը համաձայնության էր եկել իշխանությունների հետ և իրականացնում էր հարկահավաքությունը՝ արգելելով թուրք հարկահավաքների մուտքը գյուղ:

Գերմանացի ազգագրագետներից մեկը հիացմունքով է խոսում Խոտորջրի կազմակերպվածության մասին՝ ընդգծելով, թե «...Խոտորջուր հանրապետությունում դրսևորվում են հնագույն ազատության հիանալի մնացորդներ: Նրա բնակիչները ևս ըստ սովորության պարտավոր են իրարու ցույց տալ այնպիսի ծառայություններ, որոնք նրանց հանգեցնում են համայնական սեփականության»[3]:

Յուրաքանչյուր գյուղ ուներ իր ընտրովի գյուղապետը: Գյուղի վարչական ժողովը կազմվում էր ժողովրդապետ քահանայի և գյուղի ավագանու մասնակցությամբ: Վարչական ժողովն իրականացնում էր հարկերի գանձման, դպրոցական ու եկեղեցական գործերի կառավարման, աղքատախնամ միջոցների տնօրինման, անտառների պահպանման ու հատման, հողատարածությունների օգտագործման, հասարակական կարգի պահպանության, վեճերի լուծման պարտականությունները: Ժողովի վճիռը կարելի էր բողոքարկել մեծավորի առաջ: Մեծավորն ընտրվում էր Ճիճապաղ գյուղի Ֆենդա թաղի մեջ, հատուկ ժողովների համար առանձնացված, ժողովների արտում՝ ժողովարտ: Դա բոլոր թաղերի ներկայացուցիչների ընդհանուր ժողովն էր: Մեծավորն ընտրվում էր հոգևորականներից, որովհետև մեծավորն իր մեջ ամփոփում էր քաղաքացիական

[1] *Գևորգյան Թ.,* Խոտորջուր, տե՛ս ԲԵՀ, 1971, թիւ Տ (Ֆ), էջ 206:
[2] *Արծրունի Գ.,* Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 22:
[3] *Ратцельф,* Народоведение, т. П, СПБ, 1892, стр. 794.

և հոգևոր իշխանություն՝ կատարելով մեծ դատավորի ու պատերազմի ժամանակ զինվորական առաջնորդի պարտականությունները[1]:

Խոտորջրում իսպառ դադարել էին հանցագործությունները, տիրում էին բարեկամությունն ու իրավահավասարությունը, բարյացակամությունը: Թ.Գևորգյանը վստահեցնում է, որ Խոտորջրում եղել է ընդամենը երկու գող, որոնցից մեկին արտաքսել են, մյուսին, գտնելով, որ անուղղելի է, որպես վատ մարդու սպանել են[2]:

«Բազմավեպում» տպագրված հոդվածներից մեկի հեղինակը՝ Հ.Ա.Պ. ստորագրությամբ, հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Խոտորջրի կենցաղի մասին. «...Եւ այս գիւղերը ոչ թէ եւրոպական օրինի իրարմէ ցրուած կը կենան, այլ խումբ առ խումբ իրարու կպած են տներն. եւ իւրաքանչիւր գիւղը 60 կամ 70 տներէ բաղկացած է, եւ ամէն մէկ տունը իւր ախոռն ունի, վասնզի հօս չկայ Հայաստանի ուրիշ տեղերու պէս տունը եւ ախոռը մի եւ նոյն յարկի տակ շինելու սովորութիւնը, այլ մանաւանդ ընդհանրապէս գիւղը երկու մաս կը բաժանուի. մէկ մասն ամբողջ գոմ՝ կամ ըստ տեղւոյն հնչման գում, և միւսն ալ տուն: Տները սովորաբար կամ կրկնայարկ են կամ միայարկ, իսկ գումերը եռայարկ, առաջին յարկը կը բնակին, կով, ջորի, ձի և այլն. երկրորդին մէջ մանր ոտանիներ, այս ինքն այծ, ոչխար, երրորդին մէջ ալ խոտ կը պահուի...»[3]:

Տների երկրորդ հարկից դուրս են գալիս գերանների ծայրերը, որոնց վրա դարսվում են գարնանն ու ամռանը հավաքված ճյուղերը, տերևները, խոտը և այլ խոտաբույսեր, որոնցով կերակրում էին մանր եղջերավոր անասուններին:

Այնուհետև հոդվածագիրը տեղեկություններ է հաղորդում տոնակատարությունների մասին, նշում, որ հատկապես համընդհանուր խանդավառությամբ էին կատարվում գարնանային առաջին աշխատանքների սկսման, առաջին բերքի բերքահավաքի ավարտի և եկեղեցական մյուս տոնակատարությունները:

17-րդ դարը Խոտորջրի համար սկսվում է հալածանքների ուժեղացմամբ: Թուրքական բռնատիրությունը վճռել էր վերջ տալ հայկական գյուղահամայնքի կիսանկախությանը: Սկսվում են տնտեսական ու քաղաքական, կրոնական հալածանքները: Հ.Կարնեցին այս վիճակը նկարագրում է խավար գույներով՝ գրելով. «...եղեւ հրաման մեծ կայսերէն Ստամպօլայ ի վերայ մօլլայի միոջ, որ էր յոյժ անուանի եւ առաջա-

[1] *Գևորգյան Թ.,* նշված գիրքը, էջ 208-209:
[2] Նույն տեղում, էջ 209:
[3] «Բազմավեպ», 1896, էջ 193-194:

կայ էր քաղաքիս Արզրումայ եւ փաշաներաց՝ Ջաֆար անուն ժանտաբարոյ եւ քրիստոնէից թասիպ, յաշխարհագիր առնել զբոլոր շրջակայ երկրիս Արզրումայ: Եւ ելեան արար դաւտար եւ կապեաց ծանր խարաճ, եւ ելից մեծ եւ փոքր ի թագաւորական դաւտարն...»[1]:

Այդ աշխարհագրից հետո «ի յահէ խարաճին» բնակչության մեծ մասը դարձավ մահմեդական, ինչպես, օրինակ, վրացիները, մնացածն ընդունեց կաթոլիկություն, ինչպես Խոտորջրի մի քանի գյուղերը: Այնուհետև սկսվեցին Լալա Մուստաֆա փաշայի աննախադեպ արշավները, արյունալի դատաստանները, երբ «...հայերեն խոսողների լեզուները կտրում էին»[2]:

Պետական քաղաքականությանը զուգընթաց, սուլթանի հովանավորությամբ, հայոց հոգեկան միասնությունը կործանելու նպատակով, Խոտորջուր թափանցեցին նաև կաթոլիկ քարոզիչները, որոնք իրենց կենտրոն դարձրին Բաբերդը, և 1855թ. Միլվան անունով մի ճիզվիտ ձեռնադրվում է կաթոլիկ եպիսկոպոս: Վերջինը կրոնափոխության բույնի է վերածում նաև Խոտորջուրը: Սակայն այդ գործընթացը երբեմն հանդիպում էր դիմադրության, ինչպես, օրինակ, Կրման գյուղը, որը պայքարեց մինչև 80-ական թվականները և վաստակեց «կաղնի կոպալ արջ» անունը: Կաթոլիկացման գործընթացի հաջողությունն ապահովելու համար տեղական իշխանությունները թուրք և քուրդ հրոսակներից պաշտպանում էին կաթոլիկություն ընդունած հայերին, ինչպես, օրինակ, 1872թ., երբ Շերիֆ բեկը (հիշատակվում է նաև Հուսեին անունով) կրակի մատնեց Միջնաթաղ գյուղը, սակայն բեկը ձերբակալվեց, Պոլսում դատ կազմակերպվեց, և ավազակը պատժվեց:

Բայց սուլթանը դժգոհում էր կաթոլիկացման գործընթացի դանդաղումից, և թուրքական իշխանություններն ասպարեզ բերեցին մի նոր պատուհասի՝ Դոսուն բեկին: Հայերը համբերությամբ տարան բեկի կամայականությունները, որովհետև լուր էին առել, թե դիմադրության դեպքում կմիջամտեն նաև իշխանությունները: Խնդաձոր գյուղից Քերոբ Ոսկանյանը, որ պանդխտության մեջ էր Թիֆլիսում, խնայված միջոցներով հրացան է գնում և վերադառնալով հայրենիք՝ սպանում է ժողովրդի գլխին պատուհաս դարձած բեկին, որից հետո նրա ավազակախումբը ցրվում է, և Խոտորջուրն իր նահատակված հերոս որդու արյան գնով ազատ շունչ է քաշում:

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 18:
[2] *Բուռչանյան Ֆ.,* նշված հոդվածը:

Այնուհետև թուրքական իշխանությունները դիմեցին տնտեսական շրջափակման քաղաքականությանը: Քանի որ Խոտորջուրն առևտրական կապերի մեջ էր Ռիզե նավահանգստային քաղաքի հետ և միջնորդ օղակի դեր էր կատարում տարածաշրջանի թե՛ հայ, թե՛ մուսուլմանական գյուղերի համար, իշխանությունների հրամանով, մահմեդական գյուղերը փակեցին հաղորդակցման ճանապարհները, և հարկադրանքի, դաժան հալածանքների հետևանքով Խոտորջուրը վերջնականապես դավանափոխ եղավ: Դա 1899 թվականն էր: Ամբողջ գյուղախմբի դավանափոխության իրականացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ ֆրանսիական ներկայացուցիչների միջամտությամբ, 1894-1896թթ. ջարդերը չիրագործվեցին Խոտորջրի գյուղախմբի գյուղերում: Կարինից և Թորթումից դեպի Խոտորջուր ճանապարհն անցնում է Էրկէնով, ապա Կզինց կամրջով, և առաջին հանդիպած գյուղը *Ճիճապաղն* է: Գյուղի մասին առաջին հիշատակությունը թողել է պատմահայր Խորենացին. «Իսկ քաջ և բարեբախտ Ներսես Ճիճրակեցին, որ զորագլուխ էր դարձել, հավաքեց հայոց նախարարներին իրենց զորքերով, պարսից գնդի դեմ պատերազմ մղեցին, նրանց զորքերը կոտորեցին...»[1]:

Ենթադրվում է, որ հիշատակված Ճիճրակ գյուղը հենց Ճիճապաղն է[2]:

Ճիճապաղը գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա, շրջապատված է Երեւող կամ Երանող լեռով, որը ծովի մակերևույթից բարձր է 3150 մ:

Լեռան կատարին էլ կառուցված է Ս.Գևորգ մատուռը, որի ուխտավորներն իրենց հետ տիկերով ջուր էին տանում, որովհետև լեռան գագաթը զուրկ էր աղբյուրից: Գյուղը շրջապատող հաջորդ լեռն Ազուինն է, ունի 2150 մետր բարձրություն, անտառածածկ է: Այնտեղ է գտնվում Ս.Խաչ մատուռը, լեռան ստորոտում Կիսակ գյուղի ամառանոցներն են:

Գյուղն առևտրական բեղուն կենտրոն է: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ գյուղում կառուցվել է իջևանատուն[3]:

Ճիճապաղը կառուցված է երկու խորունկ ձորերի վերջնամասում, և քանի որ ձորը ջրառատ է նաև, քանզի այնտեղով են անցնում Խանդաձոր, Կրմանու, Աղբնու, Քարահովտի, Մեծ դիու և վերջապես Մեծ գետը, ուստի գարնանն անպակաս են հեղեղումները: Ահա թե ինչու Կզենց կամուրջը, որ դիմացել է բազմաթիվ հեղեղումների, կառուցված է 4 մետր բարձրության վրա, ունի 10,5 մ երկարություն, մոտ 3 մ լայնություն[4]:

[1] *Մովսես Խորենացի,* նշված գիրքը, էջ 297:
[2] *Բուռչանյան Ֆ.,* նշված հոդվածը, էջ 48:
[3] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 18:
[4] Նույն տեղում:

Հիշյալ գետերը ճիճապաղը բաժանում են Կզենց, Խոճիկանց, Մուրթատանց, Մելիքանց, Անեղինց, Խիզիկանց, Ֆենտայ, Պալճայ, Գայինցեց թաղերի: *Կզենց* թաղի անունը ծագել է Կուզիկյան, Կուզյանց ազգանունից: Թաղում կա Ամենափրկիչ մատուռ, առևտրական տուն:

Խոճիկանցում էր գտնվում թաղի ամենահին դպրոցը: Այն բնակարանի վերածվեց 1865թ., երբ կառուցվեցին մայր եկեղեցին ու նոր դպրոցը: Խոճիկյանները, որոնց ազգանունից էլ առաջացել է թաղի անունը, քահանայական գերդաստան են, եկեղեցուն տվել են հինգ քահանա:

1894թ. հրդեհից հետո հիմնովին, բազմահարկ տներով վերակառուցվեց *Մուրթատանց* թաղը: *Մելիքանց* թաղը նշանավոր էր իր երկու ջրաղացներով: *Անեղին* թաղամասում էին գտնվում Ս.Փրկիչ մայր եկեղեցին, գյուղի գերեզմանոցը:

Խիզականց թաղամասը գտնվում է Գիսակի ներքին մասում: Այն կարծիքը կա, թե թաղամասը հիմնադրել է Ասատուր Պալճյանը, որը հայտնի էր որպես խիզախ մարդ, և այդ բառից էլ առաջացել է թաղամասի անունը: Խիզակում սկզբում հիմնվել են մոտ հինգ տներ, ապա բազմացել են, իսկ հետագայում ճյուղավորվել Յազիճյան կամ Մոլլյան ազգանուններով: Թաղամասը հայտնի էր համեղ թթով:

Պալճայ թաղամասն անջատվել է Կրմանից: Հիմնադիրը Խուրսյան ազգանունով էր: Ֆ.Բուռչանյանը հայտնում է այն կարծիքը, թե հիշատակված Խուրսյանը հենց ինքը Գարդմանի իշխան Խուրսն է, որին Մեսրոպ Մաշտոցը «ուղիղ ճանապարհի է բերում... Գարդմանցիների իշխանին, որի անունն էր Խուրս»[1]: Թերևս, հետագայում իշխանը բնակություն է հաստատում Խոտորջրում, կամ նրա սերունդները, որոնք էլ հիմնադրում են թաղամասը: Համենայն դեպս, այդպես պետք է ենթադրել հոդվածագրի մտքից[2]:

Պալճայ թաղամասում էր գտնվում Ս.Գևորգ Լուսավորչի ուխտատեղին: «Խելառ» գետի վրա կառուցված կամրջով Պալճան կապվում է *Գայինցեց, Գայինցից* թաղի հետ, որտեղ գտնվում է Սիմեոն ծերունի քարաշեն մատուռը: *Ֆանտայ, Ֆենտայ* թաղի հիմնադիր համարվում է Ֆինտյան ավագանին: Նա իր անունով ամառանոց է ունեցել: Ամեն տարի ամառանոց գնալն ու վերադառնալը նշել են գյուղի երիտասարդները, ապա ամառանոցը բնակելի է դարձել ու վերածվել թաղամասի:

Ֆ.Բուռչանյանը, բացի Հ.Հուլունյանի և Մ.Հաճյանի ներկայացրած մեծ ու փոքր թաղերից, հիշատակում է նաև *Յուցուլա, Վահնա* թաղամա-

[1] *Մովսես Խորենացի,* նշված գիրքը, էջ 303:
[2] *Բուռչանյան Ֆ.,* նշված հոդվածը, էջ 48:

սերը: Ի դեպ, վերջիններս որպես առանձին թաղամասեր ներկայացնում են թե՛ Թ.Գևորգյանը, թե՛ ՀՍՀ հոդվածագիր Ռ.Մաթևոսյանը, Հ.Հուլունյանը, Մ.Հաճյանը[1]: Իսկ Գ.Սրվանձտյանցի մոտ այն հանդես է գալիս Վընենե անվանումով[2]: Վահնա անունը կապվում է այն փաստի հետ, թե, իբր, այդ թաղում ժամանակին ապրել է Վահան Մամիկոնյանը[3]:

Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ունեցել է 95 տուն, 830 շունչ հայ բնակչություն[4]: Հաջորդ աղբյուրները հայտնում են, որ մինչև 1914թ. գյուղն ունեցել է 184 տուն, 1272 բնակչություն, եկեղեցի, յոթ մատուռ, վարժարան[5]:

Գյուղը մշակութային կենտրոն էր նաև: Այնտեղ գործում էր թատերասիրաց խումբը[6]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Ինչպես նշեցինք վերևում, գյուղը համարվում էր Խոտորջրի և շրջակա մյուս գավառների առևտրի կենտրոնը: Գյուղում գործում էին արհեստանոցներ, խանութներ, վաճառատներ:

Կրմանը Խոտորջրի երկրորդ թաղն է: Ծովի մակերևույթից բարձր է 1400 մետր, ունի տաք կլիմա, երկու մեծ և չորս փոքր թաղամասեր՝ Խոշորանց թաղ, Խոճիկանց, Տեմուրճանց, Թովմասենց, Մելիքեանց, Գասպարանց:

Կրմանի մասին ավելի լայն պատկերացում կազմելու համար մեջբերենք գյուղին նվիրված Ֆ.Բուռչանյանի «Գովերգ» բանաստեղծությունից մի հատված.

Ինչպէս թեմ գեղեցկութիւնն այն խոր ձորուն,
Ընկուզենօք եւ թըթենօք զանգ զարդարուն.
Բարձրագագաթ կանաչ լեռներ սիրուն հովտաց
Նոր Հարսի պէս պճնեալ են, տերեւազգեաց,
Ջինջ աղբիւրներ խոխոջելով անուշահամ
Հոսանք կու տան դէպի խորունկ վիհերն տարտամ.
Անդ պտղիներ, ուռենիներ, խիթ, սաղարթուն
Բանան ծիգերն, առաւօտեան քաղցր զուարթուն:
Կաղամախներ ու մայրիներ լի ամէն տեղ,

[1] *Գևորգյան Թ.,* նշված հոդվածը, էջ 205, ՀՍՀ, հ. 5, էջ 82; *Հուլունեան Հ.,* էջ 17:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] *Բուռչանյան Ֆ.,* նշված հոդվածը, էջ 48:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[5] ՀՍՀ, հ. 7, Ե., 1981, էջ 98, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 797, թ. 24:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 797, թ. 24:

Ուր թռչուններ բիւր դայլայլով յօրինեն գեղգեղ.
Կարմիր կակաչք ծընած ծաղկունք, հանդէպ լոյսին
Հետ կը ձգեն վարդենեաց հետ ի միասին...[1]

Խոշորանց կամ *Խոշիրենք* թաղում է գտնվում «Ս.Յակոբ Մծբնայ Հայրապետին»[2] եկեղեցին, որը, համաձայն թողած արձանագրության, կառուցվել է 1676թ.: Ֆ.Բուռչանյանն ընդունում է, որ եկեղեցին կառուցվել է 1627թ.[3]: Սակայն դա հիմնավորված չէ, որովհետև շինարարության վերաբերյալ արձանագրությունը հայտնում է, որ «Յեկեղեցիս շինուեցաւ թւին ՈՃԻԵ»[4]:

1785թ. եկեղեցին Կարնեցի Առաքել աղայի նվիրատվությամբ վերանորոգվել է, ունի 15,5 կանգուն երկարություն, 12,5 կանգուն լայնություն, բարձրությունը 5 կանգուն է[5]:

Խոշորենց թաղը Կնտաձոր գետի աջ ափին է և ձախ ափի հետ հաղորդակցվում է Խոշորենց կամրջի միջոցով: Նույն գետի ձորակով Խոշորենցը բաժանվում է Խոճիկանց և Տեմուրճանց թաղերից: Վերջին թաղում է գտնվում Ս.Երրորդություն մայր եկեղեցին, որն ունի երեք խորան՝ Ս.Երրորդություն, Ս.Ընտանիք և Ս.Գրիգոր Լուսավորիչ: 1893-1895թթ. կառուցված եկեղեցու համար հիմնական միջոցները տրամադրել է Կրմանի համայնքը, որոշակի օգնություն ստացվել է նաև մյուս թաղերից: Եկեղեցու մոտակայքում, Պոչքենու և Չիչկա պարտեզների շրջանում, սարահարթի վրա կառուցվել է դպրոցը:

Կրման գյուղի մոտ է գտնվում Ս.Գևորգ զորավարին նվիրված մատուռը, որը կառուցվել է 1694թ.[6]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, Կրմանն ունեցել է 60 տուն, 450 զուտ հայ բնակչություն[7]: ՀՍՀ հոդվածագիրը 1914թ. համար հայտնում է 90 տուն, 712 շունչ հայ բնակչության գոյությունը[8]: Գրեթե նույն քանակության մասին է հայտնում նաև Հ.Հուլունյանը[9]:

Միջինը՝ 70 տուն, 581 շունչ հայ բնակչություն:

---

[1] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 22:
[2] Նույն տեղում, էջ 23:
[3] *Բուռչանյան Ֆ.,* նշված հոդվածը, էջ 50:
[4] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 23:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, էջ 26:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[8] ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 696:
[9] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 24:

Կրմանի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ:

Կիսակ գյուղը գտնվում է Մեծ գետի ձախ ափին, Խնդաձոր և Միջնաթաղ գյուղերի դիմաց, թիկունքում Ճիճապաղն է: Ենթադրվում է, թե գյուղն իր անունը ստացել է Գիսակ կամ Կիսակ զորավարից: Գյուղը ծովի մակերևույթից բարձր է 1350 մետր: Գյուղի միջով հոսում են երեք վտակներ, գետակներ, որոնք մեծապես նպաստում են ոռոգման աշխատանքներին: Հենց այդ գետակներն էլ գյուղը բաժանում են երեք թաղերի՝ Լիպարենց կամ Լիպարտենց, Հորքուրանց, և Հին Կիսակ: Կիսակը հայտնի է նրանով, որ այնտեղ է գտնվում Խոտորջրի գյուղապետարանը, ասել է՝ հանդիսանում է գյուղախմբի կենտրոնը: Գյուղապետարանի մերձակայքում են գտնվում Լիպարյան բերդի ավերակները: Ենթադրվում է, որ բերդում եղել է Ս.Գրիգոր Լուսավորչին նվիրված մատուռ: Կարծիք կա, թե Խուլ կամ Խոխոլ աղբյուրից խողովակներով ջուր է հասցվել բերդ[1]:

Լիպարենց թաղում է գտնվում 1770-1780թթ. կառուցված մայր եկեղեցին, որը կոչվում էր Գրիգոր Լուսավորչի անունով: 1896-1898թթ. եկեղեցին վերակառուցվել է, որովհետև չէր բավարարում արդեն աճած գյուղի պահանջները[2]: Եկեղեցու կողքին երկհարկանի վարժարանն է:

Հորքուրանց թաղում են տեղավորված Ճանիկյան եղբայրների դարբնոցը, Էմիշյանների վաճառատունը, թաղի գերեզմանոցը:

Հին Կիսակ թաղը անունը ստացել է ժամանակին դատարկված լինելու պատճառով, որի բնակիչները ցրվել ու բնակություն են հաստատել տարբեր թաղերում ու գյուղերում: Այս թաղում են գտնվում հոնի և թթի ծառերի մեծ մասը, գյուղի երկու ջրաղացները, իսկ մոտակա ժայռի ստորոտում Ս.Հրեշտակապետի մատուռն էր:

Կիսակցիները զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ունեցել է 41 տուն, 350 զուտ հայ բնակչություն[3]: 20-րդ դարի սկզբներին գյուղն ունեցել է 62 ընտանիք, 434 հայ բնակչություն[4]: Նույն վկայությունն են տալիս նաև Հ.Հուլունյանն ու նրա համահեղինակը[5]:

[1] Նույն տեղում, էջ 28:
[2] Նույն տեղում, էջ 29:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[4] ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 444:
[5] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 31:

Միջին թաղ կամ *Միջնաթաղ* գյուղի գոյությունը վիճարկելի է: Ինչպես խոստովանում է Հ.Հուլունյանը. «Խոտորջուրի տեղագրութեամբ եւ պատմութեամբ զբաղողներէ ոմանք, նոյնին եօթը թաղերը յիշատակած ատեն՝ Միջին թաղ չեն յիշեր, զայն Խանդաձորի թաղամասերէն մէկը համարելով»[1]: Այդ հեղինակների թվում են Հ.Էփրիկյանը, Ղ.Ինճիճյանը, Ա.Երիցյանը, անգամ Կարինի հոգևոր առաջնորդը: Թերևս, հեղինակին հասու չի եղել, որ ուսումնասիրողների ցուցակին պետք է ավելացնել նաև Գ.Սրվանձտյանցի, Ա-Դոյի, Ֆ.Բուռչանյանի և ուրիշների անունները: Հարցն այն է, որ մի քանի տուն ամառանոցը կամ ձմեռանոցը երբեմն անվանվել է Խոտորջրի թաղ կամ գյուղախմբի մի միավոր: Այստեղից էլ ծնվում է խառնաշփոթը, փաստերի տարակարծությունը, տեսակետների բազմազանությունը, որտեղ վճռական դեր խաղացել է մի բան ավելացնելու կողմնակալությունը: Հաճախ էլ, ցուցաբերելով ավելորդ զգուշավորություն, հիշատակություններից զրկվել են գյուղերից և բնակավայրերից շատերը: Նշված տեսակետը, դժբախտաբար, օրինաչափության է վերածվել հատկապես Արևմտյան Հայաստանի պատմությունն ուսումնասիրողների մեծ բանակի համար:

Կիսակից Միջին թաղ ճանապարհի Խաչի ձոր հատվածի մոտ, Պոլոզ արտերի աջ կողմում, ժայռի մեջ է գտնվում Ս.Դավթի մատուռը: Պոլոզ արտերի վերևում են տեղավորված Ս.Պողոս և Ս.Պետրոս առաքյալներին նվիրված մատուռները, որոնք 19-րդ դարի 60-ական թվականներին վերածվել են մայր եկեղեցու: Այս ամենը Խաչի ձորի ձախ կողմում է: Իսկ աջ կողմում Միւին թաղի տներն են: Թաղի կենտրոնում 1864թ. կառուցված Անարատ Հղության մայր եկեղեցին է, որն ունի 24 կանգուն երկարություն, 20 կանգուն լայնություն և 13 կանգուն բարձրություն[2]: Եկեղեցու հարևանությամբ երկհարկանի վարժարանի շենքն է: Թաղի ստորոտում թթաստաններն են, պարտեզները, բանջարանոցները: Թաղի բնակիչները զբաղվում էին այգեգործությամբ, պարտիզպանությամբ, բանջարաբուծությամբ, երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

Ըստ Հուլունյանի և Մ.Հաճյանի, գյուղը 1915թ. ունեցել է 90 տուն, 690 զուտ հայ բնակչություն[3]: Բնակչության թվաքանակի վերաբերյալ ուրիշ տեղեկություններ հայտնի չեն:

[1] Նույն տեղում, էջ 32:
[2] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 54:
[3] Նույն տեղում, էջ 35:

19-րդ դարի 70-80-ական թվականների իրադարձությունների կենտրոնում հայտնվեց նաև *Միջնաթաղը*: Գրավել այդ գյուղը՝ նշանակում էր տեր դառնալ ողջ Խոտորջրին: Ունենալով թուրքական իշխանությունների հովանավորությունը՝ Հունուտցի Հուսեին բեկը որոշում է իշխանություն հաստատել Խոտորջրում: Նրան հաջողվում է իր ավազակախմբով հասնել ու հրդեհել Միջնաթաղը: Թեև Խոտորջրի մեծավորին հաջողվում է բանտարկել տալ և 101 տարվա պատիժ սահմանել ավազակի վրա, բայց Հուսեինը շուտով փախչում է բանտից և շարունակում ավերել ու թալանել: Այս անգամ հայերը դիմում են կտրուկ քայլերի և Տեր-Կարապետ մեծավորի գլխավորությամբ, մարտերից մեկի ժամանակ, ամուր օղակի մեջ առնելով բեկին, գերում են և, անցյալի փորձը նկատի ունենալով, գլխատում նրան: Այնուհետև, 1886թ., սկսվում են մեկ այլ ոճրագործի՝ Դուրսուն բեկի ասպատակությունները, և նորից հարվածն ուղղվում է Միջնաթաղի վրա, որտեղ էլ, ինչպես նշել ենք շարադրանքի սկզբում, արժանանում է հայ վրիժառու Քերոբ Ոսկանյանի դատաստանին:

Խանդաձոր (Գ.Սրվանձտյանցը հիշատակում է *Խանդակոր* անունով) գյուղը Խոտորջրի ամենամեծ գյուղն է թե՛ բնակչության թվաքանակով, թե՛ զբաղեցրած տարածքով: Բաժանվում է երկու գյուղերի՝ Վերի և Վարի: Վերին Խանդաձորն այլ կերպ անվանվում է նաև Վերնագեղ: Ընդհանուր առմամբ, Խանդաձորը բաժանվում է ութ թաղի՝ Խոշորանց, Իրիցանց, Ներքին Այլինց, Քիշմիշին, Վերին Այլինց, Կողոսուն, Փանոսուն և Կլախինց: Նշված թաղերը տեղավորված են Խանդաձորի աջ և ձախ մասերում: Բնությունն առատաձեռն էր գյուղի նկատմամբ: Նրա դիրքը, բնական հիասքանչ տեսարանները հմայիչ տեսք են տվել գյուղին: Հենց նույն ոգևորությունն է եղել Վ. Քշուրյանի Խանդաձորին նվիրված բանաստեղծության ներշնչանքի առանցքը: Վարդ, մանուշակ, անուշ բույրեր, մաքուր օդ, «եդեմական պարտեզներ», մաքուր ու վճիտ, սառնորակ աղբյուրներ, փառավոր պալատներ: Այս ամենը բանաստեղծին իրավունք է տալիս գյուղն անվանել «Դրախտ»[1]:

Չափազանցություն չկար բանաստեղծի նկարագրություններում, որովհետև բոլոր ուսումնասիրողները գրեթե նույն տպավորությունն են ստացել գյուղից:

Միջնաթաղից սկսվող ճանապարհը, հատելով դժվարանցանելի Արեւինց ձորը, Խոշորանց ջրաղացի մոտից տանում է դեպի մի բար-

[1] Նույն տեղում, էջ 36:

ձունք, որի վրա Խանդաձորի Խոշորանց թաղն է: Բնությունն այստեղ ևս հրաշալի է: Բարձունքից երևում են Խանդաձորի գեղեցկությունը, կանաչների մեջ թաղված տները: Ահա թե ինչու ուսումնասիրողներից մեկը՝ Թ.Գևորգյանը, այն կարծիքն է հայտնում, թե գյուղի անունը ծագել է խինդ, խնդության ձոր անվանումից, որը, իրոք, համապատասխանում է իրականությանը[1]:

Խոշորանց թաղը «պաշարված» է մրգատու ծառերով, պարտեզներով, բանջարանոցներով: Թաղի կրկնօրինակն է Իրիցանց թաղամասը, որը նույնպես զարդարված էր բնական շնորհներով, բազմաթիվ, գեղեցիկ տներով, բարեկարգ փողոցներով, շրջապատված փշատերև և սաղարթավոր ծառերով, որոնք հետո վերածվում էին անտառի:

19-րդ դարի 90-ական թվականներին, պատահաբար, գյուղը դառնում է հրդեհի ճարակ: Բայց համառ իրիցանցիները, մյուս թաղերի օգնությամբ, նորից վերակառուցում են իրենց բնակավայրը՝ այս անգամ կառուցելով ավելի բարեկարգ ու բազմահարկ բնակարաններ:

Իրիցանց թաղին գրեթե կից է Ներքին Այլինց թաղը, որտեղ գտնվում է Մայր Աստվածածին ուխտատեղին, որի թիկունքում Խշրուտի հորդառատ աղբյուրներն են: Թաղամասից արևմուտք տանող ճանապարհը կտրում է Լիգաձորը, որից անցնելով՝ երևում է Խանդաձորի նորակառույց, երկհարկանի վարժարանի շենքը: Հարկերից մեկը հատկացված էր տղաներին, մյուսը՝ աղջիկներին:

Վարժարանի մոտակայքում հին ու նոր Մայր եկեղեցիներն են: Հին եկեղեցին ունի երեք խորան, որոնք նվիրված են Տիրամորը, Գրիգոր Լուսավորչին և Սահակ Պարթևին: Նոր եկեղեցին գտնվում է հին եկեղեցու արևելյան կողմում, կառուցված է սրբատաշ քարից, ունի հինգ խորան: Նոր՝ Ս.Երրորդություն եկեղեցու մոտ գտնվող գերեզմանոցում է հանգչում արդեն հիշատակված Քերոբ Ոսկանյանը: Քիշմիշին, Փանոսուն, Կլախինց, Կողոսուն թաղամասերն առանձնապես նոր վկայություններ ու փաստեր չեն ավելացնում գյուղի պատմությանը:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, Վերին Խնդաձորն ունեցել է 96 տուն, 800 զուտ հայ բնակչություն, Վերի Խնդաձորը՝ 63 տուն, 550 զուտ հայ բնակչություն[2]:

Հ.Հուլունյանի և Մ.Հաճյանի հաշվումներով, 1915թ. ամբողջ Խնդաձորում եղել է 220 տուն, 1540 զուտ հայ բնակչություն[3]:

[1] ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 11:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 43:

Սունինց գյուղը գտնվում է Մեծ գետի ձախ ափին, ծովի մակերևույթից բարձր է 1400 մետր: Ծառաշատ ու պարտեզաշատ, քարե եռահարկ, պատշգամբներով տներ ունի: Բարեկարգ գյուղ է, գտնվում է Խոտորջրի թաղերի գրեթե կենտրոնում և ունի հինգ թաղամաս՝ Խաչկա, Լատվինց, Մելիքանց, Քամարինց, Կողեր:

Խաչկա թաղամասն ունի ընդամենը 7-8 տուն: Ընդարձակվելու սահմաններ չունի, որովհետև շրջապատված է ժայռերով ու գետով: Թաղն ունի Ս.Աստվածածին եկեղեցի:

Լատվինց թաղում է գտնվում Ս.Անտոն Բադուացին նշանավոր մատուռը, որն ունի 7 կանգուն լայնություն, 8 կանգուն երկարություն և 5 կանգուն բարձրություն[1]:

Մելիքանց թաղը տեղավորված է Լատվինցի արևմտյան կողմում: Թաղի մոտակայքում է գտնվում կավի և կավճի հանքը, որն օգտագործում են թե՛ սունինցիները, թե՛ գավառակի մյուս գյուղերը: Սունինցի մեծ կամրջի մոտ է գտնվում Քամարինց թաղը: Անունն առաջացել է թաղ հարս բերված աղջկա մետաղյա գոտուց:

Կողեր, Կողերու թաղը հայտնի է Ս.Սարգիս մատուռով, որն ուխտատեղի է Խոտորջրի բոլոր գյուղերի համար: Թաղի մոտ է կառուցված Սունինցի նոր եկեղեցին, որի ներսում նստարաններ չկան: Յուրաքանչյուր հավատացյալ, ունենալով իր տեղը, նստում էր իր հետ բերված բարձիկի կամ գորգի վրա:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, Սունինց գյուղն ունեցել է 82 տուն, 770 զուտ հայ բնակչություն[2]: ՀՍՀ հոդվածագիրն ընդունում է 100 տուն, 850 շունչ զուտ հայ բնակչության գոյությունը 20-րդ դարի սկզբին[3]:

Հ.Հուլունյանի և Մ.Հաճյանի վկայությամբ, գյուղը 1915թ. ունեցել է 180 տուն, 1260 շունչ հայ բնակչություն[4]:

Կաղմխուտ, Կախմխուտ գյուղը գտնվում է համանուն գետի ափին, անտառապատ լեռան ստորոտում: Խոշոր թաղեր չունի: Կան չորս թաղիկներ: Հին եկեղեցին կոչվում էր Ս.Հովհաննես: Նորը, որ կառուցվել է 1794թ., կրում է Պողոս-Պետրոս առաքյալների անունը: Եկեղեցին գտնվում է գյուղի հարավային կողմում, անտառի ստորոտում: Նրա հարևանությամբ տղաների վարժարանն է:

Գյուղի անունը ծագում է անտառում տարածված կաղամախիից:

[1] Նույն տեղում, էջ 48:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] ՀՍՀ, հ. 10, Ե., 1994, էջ 473:
[4] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 51:

Գյուղի ձախ կողմում Ս.Հովհաննեսի ձորն է, ուր գտնվում են համանուն մատուռը, սառնորակ աղբյուրը, ջրաղացները, կավի հանքը: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ, այգեգործությամբ, պարտիզպանությամբ, արհեստներով:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ուներ 80 տուն, 770 շունչ զուտ հայ բնակչություն[1]: Հեղինակներից մեկն էլ հայտնում է, որ 20-րդ դարի սկզբին գյուղն ուներ 115 տուն, 740 շունչ զուտ հայ բնակչություն[2]: «Յուշամատեան Խոտորջրի» հուշապատումի հեղինակները հայտնում են, որ 1915թ. գյուղն ուներ 107 տուն, 749 շունչ զուտ հայ բնակչություն[3]:

Վահնա գյուղը, համաձայն ավանդության, իբր եղել է Վահան Մամիկոնյանի ամառանոցը, և այդ կապակցությամբ էլ ստացել է իր անունը: Ծովի մակերևույթից բարձր է 1800 մետրով: Եկեղեցին կոչվում էր Ս.Հովհաննես Մկրտիչ: Այն ուներ 17 կանգուն երկարություն, 10 կանգուն լայնություն և 9 կանգուն բարձրություն:

Վահնան 1915թ. ունեցել է 23 տուն, 231 շունչ հայ բնակչություն[4]:

Գեղուտ, Քեղուտ նաև *Յուզուլա* գյուղը գտնվում է համանուն գետի ափին: Գետը կազմվում է Աղբնու և Քարահովիտ գետակների միավորումից, որը հետագայում անվանվում է Մեծ գետ: Ճորոխի վտակներից է: Գյուղը երբեմն անվանվում է Խոտորջրի թաղերից մեկը, երբեմն հանդես է գալիս որպես առանձին գյուղ: Հ.Հուլունյանն ու Մ.Հաճյանը, որ գյուղը համարում են Խոտորջրի թաղերից մեկը, հայտնում են, թե «Այս թաղը թաղամասերու բաժանում չունի»[5]:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» համապատասխան բաժնի հոդվածագիրը պնդում է, որ գյուղը բաժանվում է երկու թաղերի՝ Ներքին կամ Ստորին և Վերին[6]: Ավելին, երկու հեղինակներն էլ, կրկնելով իրար, գյուղի բնակչության և տների քանակի մասին հայտնում են նույն տեղեկությունը՝ 55 տուն, 385 շունչ բնակչություն[7]: Մինչդեռ Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ունեցել է 75 տուն, 700 շունչ զուտ հայ բնակչություն[8]: Եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ 1894-1896թթ. կոտորածների ժամանակ

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[2] ՏԲ, հ. Բ, Ե., 1988, էջ 911:
[3] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 53:
[4] Նույն տեղում, էջ 59:
[5] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 60:
[6] ՏԲ, հ. 1, Երևան, 1986, էջ 832:
[7] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 62, ՏԲ, հ. 1, էջ 632:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:

ամբողջ Խոտորջրի գյուղախմբում չեն իրականացվել ջարդերը, ապա անհասկանալի է մնում բնակչության քանակի նվազումը, որը կազմում է 20 տուն, 315 շունչ բնակչություն: Խնդիրը հանգուցալուծվում է նաև այն պատճառով, որ «Բառարանի» հեղինակը, բացի բաժանումն արձանագրելուց, չի նշում Վերին և Ներքին թաղամասերի բնակչության թվաքանակը:

Մնում է ենթադրել, որ, իրոք, գոյություն են ունեցել երկու թաղամասեր և, նրանցից մեկի բնակչության քանակի մասին չունենալով վկայություն, հեղինակները ներկայացնում են միևնույն թիվը: Ավելացնենք նաև, որ արխիվային փաստաթղթերից մեկը ևս հաստատում է Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը[1]: Հիշատակված աղբյուրներից բացի, մեզ հայտնի որևէ աղբյուր նոր վկայություններ չի հաղորդում:

Խնդրի լուծման նպաստավոր վկայություններ են բերում նույն «Յուշամատեանի» հեղինակները՝ գրելով. «Քեղուտի Հիւսիսային կողմն է *Պալճայ Կորթ*, որ համանուն թաղամասին ամարանոցն է: Անոր վերեւն է գեղեցիկ Յուցուլան, իր 12 տներով եւ 70 գլուխ բնակչութեամբ»[2]:

Հիշեցնենք նաև, որ Գեղուտ, Քեղուտ գյուղը հաճախ անվանվել է Յուցուլա: Պարզվում է, որ վերոհիշյալ հեղինակները գյուղը բաժանում են թաղերի և մերժում թաղերի գոյությունը՝ ինքնակամ հաստատելով, որ, իրոք, գյուղը բաժանված է եղել թաղերի, որոնցից մեկն էլ Յուցուլան էր, ամենայն հավանականությամբ՝ Վերին Գեղուտը, որովհետև թաղը գտնվում էր ավելի բարձր դիրքում, քան ներքին թաղը: Եթե չընդունենք նաև այս տեսակետը, ապա պետք է կարծել, թե Գեղուտն ունեցել է ուրիշ թաղամասեր, որոնցից մեկն էլ Յուցուլան էր: Եթե գումարենք Յուցուլայի տների և բնակչության քանակը Գեղուտի մասին մեր ունեցած տեղեկություններին, ապա գյուղի բնակչությունը կազմում է 67 տուն, 455 շունչ բնակչություն, որը պակաս է Գ.Սրվանձտյանցի վիճակագրական տվյալներից 7 տուն, 245 շունչ բնակչությամբ: Թերևս, մեզ անհայտ թաղամասերից մեկի գոյության հայտնաբերումից հետո կունենանք Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը՝ համապատասխան բնակչության թվաքանակը:

Գեղուտը պարտեզներով, այգիներով ու բանջարանոցներով հարուստ, գեղեցիկ բնաշխարհով գյուղ էր, կլիման՝ առողջարար, աղբյուրները՝ սառնորակ, որոնք բխում էին Պոլոզքար կոչված ժայռի Պապաղբյուր ակունքից: Աղբյուրի մոտ Ս.Աստվածածին քարակերտ մատուռն է: Գյուղի ջրի հաջորդ աղբյուրը Պճպճան, Պղպջան աղբյուրն է:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 235, թ. 81:

[2] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 63-64:

Գեղուտն ունեցել է երկու՝ Ս.Ստեփանոս և Ս.Գևորգ եկեղեցիներ, վարժարան: Ս.Աստվածածին եկեղեցին ունեցել է 28 կանգուն երկարություն, 17 կանգուն լայնություն, 7 կանգուն բարձրություն[1]:

Գեղուտցիները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, պարտիզպանությամբ, բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ: Գյուղը հարուստ էր կաղնիներով:

Արեգին, Արեգի, Արեգդեմ գյուղը գտնվում է Ճորոխ գետի, նրա վտակ Մեծ գետի, Երեւանող լեռան (լեռն ունի 3150 մ բարձրություն), Մոխրակուտի միջև: Խոտորջրի գյուղախմբից բավական հեռու է, գյուղախմբի հետ հաղորդակցվում է Էրկէն ճանապարհով: Կտրելով Ճիճապաղի Ընկուզկեն, Խոռ ամառանոցները, ապա Ս.Հակոբի մատուռը՝ ճանապարհը տանում է դեպի գյուղ: Արեգին աչքի է ընկնում գեղեցիկ դիրքով, այգիների ու պարտեզների, բանջարանոցների առատությամբ: Բացի երկրագործությունից, այգեգործությունից, անասնապահությունից, պարտիզպանությունից, արեգցիների հիմնական զբաղմունքներից մեկն էլ մեղվաբուծությունն էր: Յուրաքանչյուր տուն ուներ փեթակներ: Չնայած սակավաջրությանը, արեգցիները, խելամտորեն օգտագործելով ջրի եղած քանակությունը, աճեցնում էին բազմազան բանջարանոցային կուլտուրաներ, հատապտուղներ, մրգեր: Առանձնապես հանրահայտ էին Արեգի սալորը, ընկույզը, դեղձը, սերկևիլը, խաղողը: Հատկապես առատ էին մսամթերքները:

Գյուղն ուներ իր Ս.Աստվածածին փոքրիկ եկեղեցին, դպրոցը: Գյուղից 1.5 կմ հեռավորության վրա, ինչպես նշեցինք վերևում, գտնվում է Ս.Հակոբի մատուռը, որը սկզբում փայտաշեն էր, իսկ 1885-1890թթ.՝ 1200 նվիրաբերված ոսկով, վերաշինվեց քարով[2]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 20 տուն, 150 զուտ հայ բնակչություն[3]:

Հեղինակների մեծ մասն էլ, կրկնելով Հ.Հուլունյանի վկայությունը, ընդունում է, որ 20-րդ դարի սկզբին գյուղն ունեցել է 25 տուն, 125 շունչ հայ բնակչություն[4]:

Միջինը՝ 22 տուն, 137 շունչ հայ բնակչություն:

Գավառի կենտրոն *Կիսկիմ* գյուղ-ավանը գտնվում էր Ճորոխ գետի աջ ափին: Գավառակենտրոնը հիշատակվում է նաև Գասապա, Կիցկիմ,

[1] Նույն տեղում, էջ 60:
[2] Նույն տեղում, էջ 84:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[4] *Հուլունեան Հ., Հաճեան Մ.,* նշված գիրքը, էջ 85:

Կիցկա, Կեսիշիմ անուններով: Հիշատակումները մեծապես կապված են Կիսկիմի բերդի հետ, որը Մամիկոնյանների սեփականությունն էր: Այդ առիթով Հ.Տաշյանը գրում էր. «Կիսկիմ, յամենայն դէպս կարեւոր տեղ մըն էր հնութեան ատեն ալ: Ասոր վկայ է իւր բերդը...»[1]:

Կիսկիմը հայտնի է 1283թ. Կարինի Կան գյուղում գրված հիշատակարանով: Վայրիվերո ժամանակահատվածում, երբ թալանվում ու ավերվում էին հայ մշակութային արժեքները, կիսկիմցի մի ազգանվեր հայ մաղագործ, Հովհաննես անունով, 1512թ. գնում է ավետարանը և բոլորագիր տառերով տեղեկություն թողնում իր մասին՝ կատարած հայրենասիրական քայլը նվիրելով իր ծնողների հիշատակին: «Գերեալ» ավետարանը ազատելով՝ պահվում է այդ գերդաստանում:

Հ.Տաշյանը, անդրադառնալով ավետարանի հիշատակությանը, գտնում է, որ այնտեղ նշված Կսկիմ անվանումը «աւելի հայաձեւ է քան արդի «Կիսկիմ»[2]:

Կիսկիմը 16-րդ դարում ենթակա էր Սպերի իշխանին: Հետագա ժամանակաշրջանի համար, բացի հատ ու կենտ հիշատակումներից, Կիսկիմի մասին առավել ընդարձակ վկայություններ չեն պահպանվել:

19-րդ դարի երկրորդ կեսին Կիսկիմ-Գասապան ունեցել է Ս.Աստվածածին եկեղեցի, Հայկազյան վարժարան՝ 50 աշակերտով: Եկեղեցու հասույթը եղել է 1000 լիրա, դպրոցինը նույնպես կազմում էր 1000 լիրա, որը գոյանում էր հանգանակությունից[3]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, Կիսկիմում ապրել են 41 տուն, 400 շունչ հայեր, 50 տուն թուրքեր[4]: Ա-Դոն նշում է 15 տուն հայեր[5]: Հեղինակներից մեկը Կիսկիմի հայ բնակչությունը 1910թ. հաշվում է 10 տուն[6]:

Միջինը՝ 22 տուն, 192 շունչ հայ, 50 տուն, 350 շունչ թուրք բնակչություն:

Կիսկիմի գավառակի հայ բնակչության թվաքանակի մասին կան հետևյալ վկայությունները. Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, Խոտորջրի գյուղախմբի հետ միասին գավառակում ապրում էին 909 տուն, 8385 շունչ հայեր, 200 տուն թուրքեր[7]:

---

[1] *Տաշեան Հ.,* նշված գիրքը, էջ 223:
[2] Նույն տեղում, էջ 224:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[4] Նույն տեղում:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:
[6] ՏԲ, հ. 1, Ե., 1986, էջ 795:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:

Ա-Դոն գավառակում հաշվում է 242 տուն, Խոտորջրի գյուղախմբում՝ 850 տուն հայեր[1]:

Ղևոնդ Ալիշանը միայն Խոտորջրի յոթ գյուղերում հաշվում է 400 տուն, 2000 շունչ հայեր[2]:

Միջինը՝ 580 տուն, 901 շունչ հայ, 200 տուն, 1400 շունչ թուրք բնակչություն:

Տեսնում ենք, որ զգալի տարբերություններ կան ներկայացված վկայություններում: Լրացուցիչ այլ աղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չէ ճշգրիտ պատկերացում կազմել հայ բնակչության թվի վերաբերյալ, որովհետև, եթե հիմք ենք ընդունում Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը, ապա հետագա շրջանի մասին վկայությունները, բնակչության աճ ցույց տալու փոխարեն, տեղեկացնում են հակառակի մասին: Ավելորդ չի լինի, եթե նորից հիշեցնենք, որ 1894-1896թթ. ջարդերից կրոնափոխված Կիսկիմի գավառակը, Խոտորջրով հանդերձ, չէր տուժել, և հայաթափման գործընթացն ավարտին հասավ միայն Մեծ եղեռնի ժամանակ:

Ց ՈՒ Ց Ա Կ

Կիսկիմի գավառի հայաշատ գյուղերի

(հաշվումները կատարված են միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Խանդաձոր	189	1445
Կարմրակ	155	1026
Վրննե	140	974
Սունինց	181	960
Կաղմխոտ	101	756
Միջին թաղ	90	690
Կուտրաշեն	85	597
Կրման	75	566
Գեղուտ	65	513
Մոխուրկուտ	55	400
Կիսակ	52	392
Վահնա	23	231
Փրթիկներ	32	227
Արեգին	22	137
Նիխախ	11	92

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:

[2] *Ղևոնդ Ալիշան,* Տեղեկագիր Հայոց Մեծաց, էջ 38:

Գավառի նշանավոր գյուղերից էին Ճիճապաղը, Արսիսը, Կոճիկը, Դյուրթը, Քիլիսաին, Ջուրկանցը, Կիյնարը, Խամրուրը, Խարթը:

Կարինի առաջնորդարանը, Խոտորջրի գյուղական համայնքի յոթ գյուղերից (թաղերից) բացի, ներկայացնում է ևս 5 գյուղ[1], իսկ արխիվային փաստաթղթերից մեկը՝ 37 գյուղ[2]:

Գավառի մյուս նշանավոր գյուղերը ներկայացված են շարադրանքում:

Սպերի գավառակն արևմուտքից սահմանակից է Բաբերդին, Կարինին, արևելքից՝ Կիսկիմին, հյուսիսից՝ պոնտական Խաղտիքին: Ճորոխ գետը, իր մեջ ընդունելով Բալախոռն վտակը, մտնում է Սպերի հովիտ, որը երկու կողմերից շրջապատված է անտառներով: Շնորհիվ առատաջրության, գավառն ունի բարեբեր այգեստաններ, պարտեզներ, բանջարանոցներ, հացահատիկային կուլտուրաների մշակության տակ դրված դաշտեր:

«Իսփիր վիճակ լեռնային յարեւմտից Կարնոյ ունի զսահմանս հնոյ գաւառին Սպերու, շրջապատել ի Ճորոխ գետոյ, որ եւ ի նմին բղխե»,- գավառի մասին գրում էր Ղևոնդ Ալիշանը[3]:

Սպերի մասին պատմիչներից վկայություն է թողել Արիստակես Լաստիվերտցին, որը նկարագրում է պարսկական զորքերի ներխուժումը. «...եւ ցայտուկս հեղեղատին կալաւ զչորս անկիւնս երկրին. յարեւմուտս՝ մինչեւ ի Խաղտեաց գաւառն. իսկ ի հիւսիս՝ մինչեւ ի Սպեր...»[4]:

Գավառը, որտեղ «լի են այգեստանեայց եւ պարտէզք պաղալիցք»[5], հնուց ի վեր հայ ժողովրդի օրրաններից էր, նրա կազմավորման գործընթացի մեջ ընդգրկված տարածքներից մեկը: Ունենալով ընտիր բնակլիմայական պայմաններ, օգտակար հանածոներ՝ գավառը միշտ գտնվել է իրադարձությունների կենտրոնում: «...Բիւրաւոր աղբերակներով»[6] ոռոգվող գավառն ուներ բոլոր հնարավորությունները անասնապահության և երկրագործության, մեղվաբուծության զարգացման համար: Բայց գավառակը գայթակղիչ էր հատկապես հնագույն ժամանակներից օգտագործվող ոսկու և արծաթի հանքերով: Սկսած Դարեհ Ա թագավորից՝ այդ

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 199:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[3] *Ալիշան Ղ.,* նշված գիրքը, էջ 38:
[4] «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», Ե., 1963, էջ 67:
[5] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 94:
[6] *Ատրպետ,* Ճորոխի աւազանը, Վիեննա, 1929, էջ 97:

հանքերը դարձել են Աքեմենյան թագավորների սեփականությունը: Սպերը 18-րդ սատրապության կազմում էր, երբ սկսվեցին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները: Վերջինս Մեմոն անունով զորավարին ուղարկում է այդ հանքերը գրավելու: Հայերը, սակայն, ջախջախում են Մակեդոնացու զորքը, սպանում զորավարին: Բագրատունիների իշխանական տան տիրույթը 387թ., Հայաստանի առաջին բաժանումից հետո, միացվեց Բյուզանդական կայսրությանը: Արաբական տիրապետության շրջանում գավառը մտնում էր «Արմենիա» ոստիկանության կազմում: Արաբական լծի տապալումից հետո Սպերը միացվեց Բագրատունիների թագավորությանը: 11-րդ դարում սկսված սելջուկյան արշավանքներից անմասն չմնաց նաև Սպերը: 1207թ. հայ-վրացական ուժերն ազատագրեցին գավառը: Բայց երեք տասնամյակ անց՝ 1242թ., գավառ ներխուժեցին մոնղոլները: Էլխանությունների քայքայումից հետո հայտնվեցին կարակոյունլի և ակ-կոյունլի քոչվորական ցեղերը: 1502թ. նրանք պարտություն կրեցին շահ Իսմայիլից, և գավառի վրա տարածվեց պարսկական տիրապետությունը: 1639թ. անվերջանալի թվացող թուրք-պարսկական պատերազմներն ավարտվեցին, և Դիարբեքիրի պայմանագրով Սպերը միացվեց թուրքական բռնապետությանը:

Գավառի ամենաարգավանդ տարածքը Սպերի հովիտն էր: Այն սկսվում է Ճորոխի Նիգեյ վտակից և ավարտվում Հնուտ վտակով: Հովիտն ունի մոտ 40 կմ երկարություն:

Սպեր ավանից արևմուտք, մինչև 4 կմ հեռավորության վրա Մեծանձ գյուղն է, որի մոտ գտնվող ավերակները վկայում են, թե հնում այդտեղ է գտնվել գավառի աթոռանիստը:

Անկարելի է անուշադրության մատնել Ատրպետի բացատրություններից մեկը՝ կապված թե՛ գավառի, թե՛ Բագրատունիների տան պատմության հետ: Նախ՝ ուսումնասիրողը կասկած է հայտնում, որ Սպերը պատկանելիս է եղել միմիայն Բագրատունիներին, այդ վարկածը հաստատելով գավառում տարածված մի շարք անուններով, որոնք, ենթադրվում է, եղել են տվյալ տարածքի իշխանների անունները: Օրինակ՝ Քայանց՝ Քարանց, Գալկոնց՝ Գազարաց, Ալէզանց՝ Արեգանց և այլն: Ապա Ատրպետը փորձում է բացատրել նաև Բագրատունի անվան ծագումը՝ այն կապելով գավառակի Բագդանա-Վագանդա գյուղերի անունների հետ: Այնուհետև ստուգաբանելով Բագ բառը՝ հանգում է այն եզրակացությանը, թե հենց այդ զոհասեղանի անունից էլ առաջացել է Բագրատունի անունը[1]:

[1] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 106-108:

17-րդ դարում, գրում է Հ.Կարնեցին, «բնակիչք երկրին բովանդակ հայք» են[1]: Արդեն 18-րդ դարում այդ բովանդակ հայ բնակչությունը նվազում էր, և գյուղերի թիվը հասել էր 150-ի[2]: Այնուհետև եկավ ահասարսուռ 1723թ., երբ Ահմեդ փաշայի հրամանով ավերվեցին գավառի գյուղերը: Բնակիչները սրի քաշվեցին, իսկ կենդանի մնացածները բռնի կրոնափոխվեցին:

Հակոբ Կարնեցին իր պատկերավոր նկարագրություններից բաժին է հանել նաև Սպերին. «Եւ անտի հասնէ ի ձորն մեծ եւ անհուն, որ ունի դղեակ մի պարսպաւոր շինեալ ի վերայ Ճորոխ գետոյն, որ այժմ Ըսպիր ասեն, եւ է սա պարոնանիստ, եւ ունի գիւղս եւ մաղր այս Գճ. եւ մայրիս յոլով. եւ է ձորն այդիք անթիւ եւ ծառաց պտուղք յոլով հոտով եւ համով. եւ ունի վանք մի հրաշալի անուն սրբոյն Հովհանու Մկրտչին կառուցեալ, որ է այժմ միաբնակեցաց տեղից... Եւ ունի ի գլուխս լերանցն յեայլաներ յոյժ խոտաւէտ եւ ջրաբուխ, որք բազում հօտք ոչխարաց եւ անասնաց ճարակաւորեալ. լինի իւղ եւ մեղր անթիւ...»[3]:

18-րդ դարից սկսած՝ թուրքական հալածանքների, բռնի կրոնափոխության արդյունքում հայ բնակչության թիվը սկսեց անկում ապրել: Հայությունը նվազեց նաև 19-րդ դարի առաջին քառորդին՝ կապված 1829-1830թթ. գաղթի հետ, ապա վրա հասան 1894-1895թթ. կոտորածները, և գավառում մնացին 18-25 հայաբնակ գյուղեր, ինչպես նաև հայեր, որոնք ապրում էին այս կամ այն խառը բնակչությամբ գյուղերում, որոնք ժամանակի ընթացքում չդիմանալով հալածանքներին՝ կամ կրոնափոխ եղան, կամ բռնեցին գաղթի ճանապարհը:

Գավառի հայ բնակչության թվաքանակի մասին կան մի շարք տեղեկություններ: Ինչպես նշեցինք վերևում, Հ.Կարնեցին գերակշռությունը տալիս է հայերին: Ղ.Ալիշանը գտնում է, որ «Գեղօք իբրեւ 50 են վիճակին Սպերու»[4]: Ատրպետը հաշվում է գրեթե 90 գյուղեր, բայց չի նշում, թե դրանցից որքանն է հայաբնակ[5]: Գ.Սրվանձտյանցն ընդունում է 22 գյուղերի գոյությունը[6], Ա-Դոն հաշվում է 18 գյուղեր, ՀՍՀ համապատասխան բաժնի հեղինակ Գ.Բաղալյանը՝ 24[7] և այլն:

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 16:
[2] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 110:
[3] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 16:
[4] *Ալիշան Ղ.,* Տեղեկագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 38:
[5] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 101-105:
[6] ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 23, թ. 12:
[7] ՀՍՀ, հ. 11, Ե., 1985, էջ 70:

Հիշյալ հեղինակներից միայն Ա-Դոն և Գ.Սրվանձտյանցն են հայտնում գյուղում տների և հայ բնակչության քանակը: Որպեսզի կարողանանք հաշվարկ կատարել, անհրաժեշտ է լուծել գավառի գյուղերի քանակի հարցը: Մենք վերևում ներկայացրինք հինգ տեղեկություն, որոնցից Ղ.Ալիշանն ու Ատրպետը չէին նշում հայկական գյուղերի իրական թվաքանակը, ուստի մեր հաշվարկները կատարենք մնացած վկայությունների հիման վրա: Ունենք գյուղերի երեք քանակ՝ 21 (64/3-21): Ա-Դոն հայտնում է նաև, որ գավառակի 18 գյուղերում կային 446 տուն, 3122 շունչ հայ բնակչություն (հաշվարկը կատարվել է յուրաքանչյուր տուն յոթ անձով– Հ.Զ.)[1]: Ըստ Գ.Սրվանձտյանցի՝ գավառակում կար 398 տուն, 4000 շունչ հայ բնակչություն, 2540 օտարազգի (հաշվարկը կատարվել է յուրաքանչյուր տուն 10 անձով– Հ. Զ.)[2]: Այստեղից էլ պարզ միջինով կունենանք՝ 422 տուն, 3561 շունչ հայ բնակչություն (446+398=844/2-422: 3122+4000=7122/2=3561): Երկրորդ տարբերակով հաշվելով յուրաքանչյուր տուն միջինը 8 անձով՝ կստանանք 3376 (422x8=3376): Եթե յուրաքանչյուր գյուղում ընդունենք 20 տուն հայ (422/21=20 տուն, ամեն մի գյուղում), ապա 21 գյուղերում կունենանք՝ 420 տուն, 3360 շունչ հայ (420x8=3360): Վերջապես, երեք թվերի միջոցով 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբներին կստանանք հայ բնակչության միջին թիվը, այն է՝ 420 տուն, 3432 շունչ հայ բնակչություն (3360+3561+3376=10297/3=3432):

Այժմ փորձենք կազմել հայկական գյուղերի մոտավոր ցուցակը: Համեմատություններից հետո պարզվում է հետևյալը. Ա-Դոյի և Գ.Սրվանձտյանցի ցուցակների համեմատությունից հետո տեսնում ենք, որ Գ.Սրվանձտյանցը չի հիշատակում Ա-Դոյի ներկայացրած հինգ գյուղեր՝ Միզրիկ, Ցիլէն, Քրէօղ, Տղանց, Հոզեկ: Ա-Դոն չի գրանցում 10 գյուղեր՝ Գող, Աղբուրիկ, Հիշեն, Հըշանց, Մեզեկրեկ, Վարշենց, Հիղպա, Ճիտկունս, Ղազենց, Սալազոր: ՀՍՀ և Գ.Սրվանձտյանցի ցուցակների համեմատությունից պարզվում է, որ ՀՍՀ ցուցակում չեն գրանցված Գ.Սրվանձտյանցի չորս գյուղերը, իսկ Գ. Սրվանձտյանցը չի հիշատակում յոթ գյուղեր: Ա-Դոյի գյուղերից ՀՍՀ ցուցակում չկան երկու, իսկ Ա-Դոյի մոտ՝ յոթ գյուղեր: Այսինքն՝ 28 գյուղեր հիշատակված չեն այս կամ այն ցուցակում: Նշենք նաև, որ թե՛ Ա-Դոն, թե՛ Գ.Սրվանձտյանցը չեն գրանցում ՀՍՀ բոլոր 10 գյուղերի անունները: Իսկ Ա-Դոյի և Գ.Սրվանձտյանցի ցուցակներում բացակայում են 15 գյուղեր, այսինքն, եթե բացակա գյուղերը գումարենք ներկայացված ցուցակներին, ապա Գ.Սրվանձտյանցի ցուցակում կլինեն

[1] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 226:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, էջ 12:

27, Ա-Դոյի ցուցակում՝ 28 գյուղեր: ՀՍՀ ցուցակում՝ 26 (Ա-Դոյի ցուցակի համեմատությամբ), Ա-Դոյի մոտ՝ 25, Գ.Սրվանձտյանցի մոտ՝ 29 (ՀՍՀ ցուցակի համեմատությամբ), ՀՍՀ ցուցակում՝ 28 գյուղեր: Ասել է՝ Սպերի գավառակում կար միջինը 27 զուտ հայաբնակ գյուղ: Կիրառելով վերը նշվածների միջինների հաշվարկը՝ կունենանք 540 տուն (27x20=540) 4320 շունչ հայ բնակչություն (540x8=4320):

Գ.Սրվանձտյանցը կատարում է ևս մեկ հավելում: Նա հայտնում է, որ ցուցակի մեջ մտած, բայց տների ու բնակչության թիվը չնշված Ղազենց և Սալաձոր գյուղերում բնակվում են, համապատասխանաբար՝ 5 և 50 տուն հայեր[1]: Այս քանակությունը մենք չէինք մտցրել ընդհանուր հաշվարկների մեջ, որպեսզի պատկերն ավելի քան հստակ երևար: Այժմ, երբ գտել ենք միջին մակարդակը, դրան գումարենք նաև 55 տուն, 540 շունչ բնակչություն, որ կային վերը նշված երկու գյուղերում, ու կստանանք Սպերի գավառակի հայության ամբողջական պատկերը՝ 595 տուն, 4760 շունչ հայ բնակչություն: Տների ու բնակչության այս քանակին պետք է ավելացնել ևս 15 տուն, 120 շունչ, որովհետև Ա-Դոն հաշվարկի մեջ չի մտցրել Սպերի գավառանիստ քաղաքի տներն ու բնակչությունը, որը հաշվում է 40 տուն[2]: Այնքանով, որ մենք ընդհանուր քանակի մեջ ընդունել ենք Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը Սպերի մասին, այն է՝ 25 տուն, 230 շունչ, ապա դրան գումարենք տարբերությունը՝ 15 տուն, 120 շունչ, և կստանանք գավառակի բնակչության վերջնական քանակը՝ 610 տուն, 4880 շունչ բնակչություն:

Գավառակի գյուղերի ցուցակը կունենա հետևյալ պատկերը. Աղբրիկ, Ավեր, Գանձ (Գանձասար), Գող (Կյող), Էգեձոր, Խշաձոր (Դշաձոր), Խոզաղբյուր, Կաժ, Հիշեն, Հիղպա, Հողեկ, Հունուտ, Ձկնաջուր (Ջենեջուր), Ղազենց, Ճիտկանս, Ճիպոտ (Ջիփոթ), Մանց (Մաթուսանց, Մաթսանց), Մեզեգրեկ, Ցիլեն, Շեհրիստանց, Ջուրակենց, Սալաձոր, Սպեր կամ Գասապա, Վանք, Վարիզոնց, Տշանց, Քրեոզ, Օձուտ (Օձտեղ):

Գավառի բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ: Մեղվաբուծության մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ղ.Ինճիճյանը՝ գրելով. «...ամի ամի տայ այս գաւառ յարքունիս 600 գանդար մեղրամոմ»[3]: Գավառի գլխավոր հարստությունը

[1] Նույն տեղում:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 196:
[3] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 94:

արծաթի, ոսկու, պղնձի հանքերն էին, որոնք էլ ոսկերչության ու արծաթագործության զարգացման հիմնական նախապայմաններն էին:

Աղբրիկ գյուղը գտնվում էր Ճորոխ գետի համանուն վտակի ափին, Սպերից արևելք: Հնում եղել է զուտ հայաբնակ: Սկսած 18-րդ դարից՝ հալածանքների և կոտորածների, գաղթի պատճառով գյուղը հայաթափվել է, և Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, 19-րդ դարի վերջերին ուներ 15 տուն, 120 շունչ հայ բնակչություն: 150 շունչ էին կազմում այլազգիները[1]: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ:

Ավեր գյուղը, ինչպես գավառի մյուս գյուղերը, դաժան ճակատագրի արժանացած բնակավայրերից էր: Հնում եղել է բազմամարդ ու զուտ հայերով բնակեցված: Երկու հարյուր տարիների անլուր տառապանքները պատճառ դարձան, որ գյուղը 19-րդ դարի վերջերին մի կերպ պահպաներ գոյությունը և ունենար շուրջ 30 տուն հայ բնակչություն[2]: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ: Գյուղում ժամանակին գործել են Ս.Աստվածածին եկեղեցին, վարժարանը:

Էգեձոր, Էգիձոր գյուղը 1872-1873թթ. ունեցել է 38 տուն բնակչություն[3]: Դարի վերջին, Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, ունեցել է 10 տուն հայ, 60 այլազգի բնակչություն[4]: Ա-Դոն հաշվում է 12 տուն հայ, երեք տուն մահմեդական բնակչություն: Մեկ այլ հեղինակ հայ տների թիվը նույն ժամանակամիջոցում հաշվում է 15[5]:

Միջինը՝ 18 տուն, 93 շունչ հայ, 5 տուն, 40 շունչ թուրք բնակչություն:

Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, վարժարան: Եկեղեցում էր գտնվում «Կարմիր ավետարանը», որի անվան ծագման մասին կա ավանդություն. ավազակները գողանում են ավետարանը և վրայի արծաթյա զարդերը հանելով՝ ցանկանում վերադարձնել, բայց գետն անցնելիս ավետարանն ընկնում է ջուրը: Մի ծեր կին երազ է տեսնում և հայտնում, որ ավետարանը ժայռի տակ է: Եվ իրոք, ավետարանը գտնում են ժայռի տակ բխացող կարմիր ջրի մեջ, որի պատճառով էլ անվանվում է «Կարմիր»:

Թշաձոր, Դշաձոր, Թեշաձոր, Տեշաձոր, Տեշատցոր գյուղը գտնվում էր անտառապատ հովտում, Ճորոխ գետի աջ ափին, նրա վտակներից

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[2] ՏԲ, հ. 1, Ե., 1986, էջ 362:
[3] ՏԲ, հ. 2, էջ 325:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[5] ՀՍՀ, հ. 4, Ե., 1978, էջ 6:

մեկի հովտում: Գյուղը նշանավոր էր նրանով, որ նրա մոտակայքում էին գտնվում արծաթի ու պղնձի հանքերը: Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, վարժարան, 10 տուն, 70 շունչ հայ բնակչություն, 120 շունչ այլ-ազգի[1]: Ուրիշ աղբյուրներ հաղորդում են, որ գյուղը 1872-1873թթ. ունեցել է 30 տուն հայ բնակչություն[2]: Ա-Դոն հաշվում է 15 տուն հայ, 11 տուն մահմեդական բնակչություն[3]:

Միջինը՝ 15 տուն, 122 շունչ հայ, 14 տուն, 47 շունչ թուրք բնակչություն:

Խոզաղբյուր գյուղը գտնվում էր Սպերից հարավ-արևմուտք, 42 կմ հեռավորության վրա, Ճորոխի համանուն վտակի ափին: Երբեմն հիշատակվում է նաև Խոզազբյուր անունով: Գավառակի ութ մեծ գյուղերից մեկն էր: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: 1873թ. ունեցել է 30 տուն բնակչություն, որից 16 տունը՝ հայ[4]: Ա-Դոն և նրան կրկնող հեղինակները գրանցում են 30 տուն հայ, 16 տուն թուրք բնակչություն[5]: Մեկ այլ աղբյուր վկայում է 27 տուն, 250 շունչ հայության գոյությունը[6]:

Միջինը՝ 27 տուն, 191 շունչ հայ, 15 տուն, 106 շունչ թուրք բնակչություն:

Գյուղն ունեցել է եկեղեցի Ս.Աստվածածին անունով, վարժարան՝ 30 աշակերտով[7]: Գյուղն ունեցել է նաև մեկ մատուռ:

Կաժ գյուղը գտնվում էր Սպերից հյուսիս, Ճորոխի աջ ափին: Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, ուներ 35 տուն, 200 հայ բնակչություն[8]: Ա-Դոյի հաշվումներով, գյուղն ունեցել է 18 տուն հայ բնակչություն[9]:

Միջինը՝ 26 տուն, 163 շունչ հայ բնակչություն:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցուն կից կար Ռուբինյան վարժարանը, ուր սովորում էր 25 աշակերտ: Վարժարանն ուներ 1000 լիրա հասույթ և ծախք[10]: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ:

---

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[2] ՏԲ, հ. 2, էջ 462:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:
[4] ՏԲ, հ. 2, էջ 759:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 682, թ. 18:
[7] Նույն տեղում, թ. 20:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:
[9] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:
[10] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:

Հիշեն գյուղն ունեցել է 30 տուն, 250 շունչ հայ բնակչություն, Ս.Աստվածածին եկեղեցի, Վարդանյան վարժարան, ուր սովորել է 25 աշակերտ, 500 լիրա հասույթ և ծախք: Գյուղում կային նաև 60 տուն այլազգիներ[1]: Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և անասնապահությունը:

Հունուտը գավառակի երրորդ մեծ գյուղն էր: Այն կարծիքը կա, թե գյուղն իր անունը ստացել է «շրջակա ձորերի եւ լեռների մէջ տարածուած Հունի (կըզըլ, կըզլջըկ) անտառից»[2]:

Հունուտը գտնվում էր Ճորոխի ձախ ափին: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Գյուղում գործում էին Ս.Աստվածածին եկեղեցին, 30 աշակերտ ունեցող Աշոտյան ծաղկոց վարժարանը: Վարժարանի հասույթը կազմում էր 500 լիրա, որը գոյանում էր հանգանակությամբ[3]:

1830թ. հունուտցիները գաղթեցին և բնակություն հաստատեցին Ախալցիխա քաղաքում և նրա շրջակա գյուղերում: Բայց գաղթը չհայաթափեց գյուղը, որովհետև բնական լավագույն պայմաններ ունեցող գյուղ տեղափոխվեցին հարևան գյուղերի հայերը:

Համաձայն Գ.Սրվանձտյանցի վիճակագրության, գյուղում ապրում էին 25 տուն, 260 շունչ հայեր, 1200 այլազգիներ[4]:

Կարինի առաջնորդարանի հաշվումներով, գյուղում բնակվում էին 40 տուն հայ ընտանիքներ, 300 տուն մահմեդականներ[5]:

Աղբյուրներից մեկն էլ վկայում է, թե գյուղի բնակչությունը կազմված էր 50 տուն հայերից[6]:

Միջին տարբերակով կունենանք 38 ընտանիք, 330 շունչ հայ և 114 տուն, 750 շունչ թուրք բնակչություն:

Մանց, Մածանց, Մայուցանց գյուղը գավառի ամենահայաշատ բնակավայրն էր: Բնակչության հիմնական զբաղմունքներն էին երկրագործությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը: Գործում էին Ս.Աստվածածին եկեղեցին, 70 աշակերտ ունեցող Մուշեղյան վարժարանը: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 40 տուն, 350 շունչ հայ բնակչություն[7], Կարինի առաջնորդարանը՝ 45 տուն զուտ հայ բնակչություն (մոտ 360 շունչ– Հ.Զ.)[8]: Միջինը կստանանք 42 ընտանիք, շունչ հայ բնակչություն:

[1] Նույն տեղում:
[2] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 102:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[4] Նույն տեղում:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:
[6] ՀՍՀ, հ. 6, Երևան, 1980, էջ 679:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[8] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:

Շեհրիստանց, Շեհրիստանս գյուղը գտնվում էր Ճորոխի համանուն վտակի ափին: «Շեհրիստանցը Պարթեւական շրջանից է. ամրոցն ու դղեակը այդ դարի գործ է. ընդարձակ է, բայց այնպէս փլուած եւ կործանուած, որ ամէն ինչ հողին է հաւասարած»,- գրում է Ատրպետը[1]: Գյուղն ունեցել է 16 տուն, 130 շունչ հայ բնակչություն, 15 աշակերտով Վահանյան վարժարան, Ս.Աստվածածին եկեղեցի[2]:

Ա-Դոյի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 15 տուն զուտ հայ բնակչություն[3]:

Միջինը՝ 16 տուն, 117 շունչ հայ բնակչություն:

Մեզեզրեկ, Մեզեկրեկ, Մեզէզրեկ գյուղը գտնվում է Ճորոխ գետի համանուն վտակի ափին: Ենթադրվում է, թե այս և հարևան մի շարք գյուղեր հեթանոսական ժամանակներում նվիրված են եղել Անահիտ աստվածուհու տաճարին, հանդիսացել են նրա սեփական կալվածքը: Այդպես էլ Ճորոխի ավազանի այն գյուղերը, որոնք ունեն Ս.Աստվածածին եկեղեցի՝«յիշեցնում են Մեծ մօրը»[4]: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ: Գյուղն ունեցել է 19 տուն, 150 շունչ հայ բնակչություն, Լուսավորչյան վարժարան, 20 աշակերտ, Ս.Աստվածածին եկեղեցի: Գյուղում ապրում էին 150 շունչ այլազգիներ[5]:

Զկնաջուր գյուղը Ճորոխի ավազանում էր, բերքաշատ, ծաղկավետ գյուղ էր: Բնակչությունը, բացի երկրագործությունից ու անասնապահությունից, զբաղվում էր նաև արհեստներով: Գյուղի վարժարանն ուներ 25 աշակերտ, կոչվում էր Սմբատյան:

Բնակչությունը՝ 29 տուն, 222 շունչ հայ:

Զիփոթ, Ճիպոտ գյուղը Ճորոխի աջ ափին էր: Քանի որ գյուղը շրջապատված էր փարթամ բուսականությամբ, նպաստավոր պայմաններ էին ստեղծվում մեղվաբուծության զարգացման համար:

Բնակչությունը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ, երկրագործությամբ:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 22-40 տուն, 200-300 շունչ հայ բնակչություն[6], Կարինի առաջնորդարանը՝ 40 տուն զուտ հայ բնակչություն[7]:

[1] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 104:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 103:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:

Միջինը՝ 31-40 տուն, 480-1500 շունչ հայ բնակչություն:

Գյուղում գործում էին Ս.Աստվածածին եկեղեցին, 25 աշակերտ ունեցող Պարթևյան վարժարանը[1]:

Սպերի հովտի կենտրոնում, Ճորոխի աջ ափին գավառակի կենտրոն *Սպեր* ավանն էր:

Ավանը հնուց ի վեր հանդիսացել է միատարր հայությամբ բնակավայր: Ատրպետը հայտնում է, թե «1530 Իբրահիմ փաշայի ցուցակներում (վարչության կենտրոն) 4500 ծուխ է արձանագրված»[2]:

Այնուհետև Ատրպետը, շարունակելով իր նկարագրությունը, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Սպերի մասին. «Միջնաբերդի ապարանքի, տաճարների եւ ամրոցների աւերակները, մեծ մասամբ սրանց թումբերը ցոյց են տալիս, որ նա եղել է հովտի թագուհին. նրա բարձր աշտարակներից երեւում է շատ հեռից Ճորոխի օձապտոյտ շարժումներով առաջ սողալը: Ինչպէս նախապատմական շինուածները, այնպէս աշքադարեան պարիսպները ցոյց են տալիս քաղաքակրթութեան աստիճանական զարգացումը այս հովտում ու այսօրուան թշուառաւերակ կացութիւնը:

Այս աւերակները եւ Սպեր անունը յիշեցնում են Ակկատ-Սումմիրների Շիպար արդիւնագործական քաղաքը, ինչպէս երեւում է, նրանց հետ միաժամանակ ապրել եւ գործել է իր երկրամշակութեամբ, անասնապահութեամբ եւ հանքագործութեամբ: Սպերի հանքերի մշակութիւնը եւ այդ բովերի հալոցներից դուրս թափուած, վերստին քարացած նիւթերը ցոյց են տալիս արուեստների զարգացման աստիճանները: Սպեր ոչ միայն ծանօթ էր հելլէն եւ հոռոմ պատմիչներին, ինչպէս ցոյց են տալիս ասորա-բաբելական պեղումներից դուրս բերած նիւթերը. Սպեր յայտնի է եղել նոյն իսկ Քաղդէացիների շրջանում: Բացի Սպեր մեծամեծ աւերակները, հովտի հիւսիսային եւ հարաւային բազմաթիւ բովերի ընդարձակ խորշերը, հալոցներից դուրս թափուած մոխրակոյտերը, քառասուն կիլոմետր երկարութեան վերայ քառասունից շատ ամրոցների եւ բերդերի, հարիւրաւոր դղեակների եւ գեղերի հետքերը ցոյց են տալիս, թէ որքան շէն, ճոխ եւ առաջադիմած է եղել երկիրը»[3]:

Ականատեսի աչքերով կատարված այս նկարագրությանը վստահելը նույնքան դյուրին է, որքան պատմական Հայաստանի յուրաքանչյուր գավառի նկատմամբ նմանօրինակ պատկերներ ստեղծելը: Այնու-

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 12:

[2] *Ատրպետ*, նշված գիրքը, էջ 99:

[3] Նույն տեղում, էջ 100-101:

հետև Ատրպետը, օրինակ բերելով բռնի կրոնափոխված հայության շառավիղներին, նշում է, որ նրանք դեռևս չեն մոռացել իրենց հուշերը և կարող են վկայություններ բերել շրջակայքից, նշել անուններ, որոնք ժողովելով՝ «ահագին անցքերի պատմութեան աղբիւր» կարող են դառնալ[1]:

Սպերը բարգավաճ քաղաք է եղել մինչև 16-րդ դարը: 1548թ. Պարսկաստանի Թահմազ շահը գրավել ու ավերել է քաղաքը: Սպերը նաև առևտրաշահ քաղաք էր: Այնտեղ ամեն տարի կազմակերպվում էին տոնավաճառներ: Տրապիզոնից, Էրզրումից այլ վայրերից գալիս էին վաճառականներ, տոնավաճառը վերածվում էր նաև տոնախմբության: Առանձնապես մեծ պահանջարկ ունեին Սպերի մեղրը, չորացրած մրգերը, հատկապես սպիտակ թթի չամիչը, սալորը, նրա չիրը, տնայնագործական իրերը, ջորիները, որոնք հայտնի էին որպես զորեղ բեռնատար կենդանիներ:

Ղ.Ինճիճյանը, նկարագրելով քաղաքը, գրում է. «Սպեր կամ Իսփիր: Բերդաքաղաք գլխաւոր համօրէն գաւառին՝ յարեւելս հարաւոյ Ճորոխ Գետոյն յորոյ վրայ ունի կամուրջ ‘ի տափարակ վայրի, զորով շրջապատեալ կան լերինք բարձրաբերձք. հեռի է յԷրզիռումայ իբր երկօրեայ յարեւմուտս հիւսիսոյ»[2]:

Բազմավաստակ Ղևոնդ Ալիշանը գտնում է, որ Սպերի գավառն «ունի զսահմանս հնոյ գաւառին Սպերու», ապա քաղաքը, որն անվանում է «Գլխաւոր տեղի վիճակին», նմանեցնում է Սմբատավան ավանի հետ, որը եղել է «նախկին բնակութիւն Բագրատունեաց»[3]:

Պարսիկ շահի ավերումից երեսուն տարի անց, 1578թ., սկսվեց անագորույն Լալա Մուստաֆա փաշայի արշավանքը: Քոչվորական զորախմբերը կործանեցին դարավոր շինությունները, արվեստի կոթողները, սրի քաշեցին քրիստոնյաներին, բռնի կրոնափոխեցին կենդանի մնացածներին: Բաբերդը, Սպերը, Կիսկիմը, Օլթին գրեթե կոտորվեցին: «Թէեւ,- գրում է Ատրպետը,- Լալա փաշան կոտորեց Սպերի Հայութիւնը, բայց անտառների եւ այրերի մէջ ապաստանած Հայերից շատերը վերադարձան և վերաշինեցին իրենց գեղերը: Հարիւր տարի առաջ Իսլամ ընդունած սեպուհները, Բեյ դարձած իրենց հասոյթն ապահովելու համար, այդ ճորտերին հովանաւորեցին եւ վերաշինեցին-շէնացրին աւերակները»[4]:

[1] Նույն տեղում, էջ 101:
[2] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 94:
[3] *Ալիշան Ղ.,* Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 38:
[4] *Ատրպետ,* նշված գիրքը, էջ 109-110:

Սակայն դրանով չփրկվեցին ոչ քաղաքի, ոչ գավառակի հայերը: Եկան ավելի դաժան ժամանակներ: 17-18-րդ դարերի կիսատ մնացած հայակուլ քաղաքականությունը գտավ իր շարունակող կարմիր սուլթանին, որն իրականացնելով զուլումի քաղաքականությունը՝ հայաթափեց Սպերը: 1894-1896թթ. կոտորածներից հետո Սպերը վերածվեց փոքրիկ ավանի:

Սպերը Մեծ Հայքի մշակութային, հոգևոր կենտրոններից էր: Աղբյուրներից մեկը վկայում է, որ գավառակում պահպանվում էին 12 հնագույն ձեռագիր ավետարաններ[1]:

Գավառակի և քաղաքի հոգևոր յուրահատուկ կենտրոն էր Ս.Հովհաննես Մկրտիչ վանքը: Ղևոնդ Ալիշանը գտնում է, որ վանքն անվանվել է նաև Ս.Կարապետ[2]: Իսկ Հ.Կարնեցին գրում էր. «...եւ ունի վանք մի հրաշալի անուն սրբոյն Հովհանու Մկրտիչին կառուցեալ, որ է այժմ միաբնակեցած տեղիք»[3]: Նույն հեղինակի հաղորդումից պարզվում է նաև, որ ամեն տարի սուրբ Խաչվերացի տոնին վանք են գալիս «ուխտաւորք բազումք»:

Վանքն անվանվել է նաև Քարձորու, Բարձրավանք, որովհետև կառուցվել է բարձր վայրում, Գոհանամ լեռան ստորոտում[4]: Վանքը շրջապատված էր պարտեզներով ու անտառներով՝ բնության հետ կազմելով գեղեցիկ ներդաշնակություն:

Վանքը նաև գրչության կենտրոն էր: 1687թ. վանքում է գրվել Կարմիր ավետարանը[5]:

Ինչպես նշել ենք շարադրանքում, գավառակի գրեթե բոլոր գյուղերում կային եկեղեցի, վարժարան: Իսկ բուն Սպեր քաղաքում գործել է Ս.Աստվածածին եկեղեցին: Քաղաքի մշակութային կենտրոններից էր Բագրատունյան վարժարանը, որն ունեցել է 1000 լիրա հասույթ, 26 աշակերտ[6]:

Սպեր քաղաքի բնակչության մասին կան մի քանի տեղեկություններ: Ղ.Ինճիճյանը հայտնում է, որ քաղաքն ունեցել է 900 տուն բնակչություն՝ «մեծի մասին տաճիկք»[7]:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, ց. 1, գ. 107, թ. 22:
[2] *Ալիշան Ղ.,* Տեղեկագիր…, էջ 38:
[3] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր…, էջ 16:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, ց. 1, գ. 107, թ. 21:
[5] Նույն տեղում:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:
[7] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 94:

Նույն թիվն է կրկնում նաև ՀՍՀ համապատասխան բաժնի հեղինակը[1], ապա ավելացնում, թե 19-րդ դարի 70-ական թվականներին քաղաքն ուներ 25 տուն, 230 շունչ հայ բնակչություն[2]: Վերջին տեղեկության հիմքը Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունն է[3]: Ա-Դոյի տեղեկություններով, քաղաքն ունեցել է 40 տուն հայ և 300 տուն մահմեդական բնակչություն[4]: Մահմեդականների վերջին քանակն ընդունում է նաև Սրվանձտյանցը[5]:

Միջինը՝ մոտ 45 տուն, 327 հայ, 330 տուն, 2100 շունչ թուրք բնակչություն:

Մեծանուն Հակոբոս Տաշյանը Սպերի գավառակի նկարագրությունն ավարտում է եզրակացությամբ. «...այսօր ալ Սպերի գաւառը (պետք է այսօրը ենթադրել 20-րդ դարի առաջին քսանամյակը, երբ գրվել է գիրքը- Հ.Զ.) հայ նկարագիրը պահած է նաեւ անով որ գիւղերու, լեռանց եւն բոլոր անուանք հայկական մնացած են... թէեւ ոմանք ծանօթ թրքական աղաւաղմանց ձեւով են՝ ինքնին կը հասկացուին հայ անունները»[6]:

Շարունակելով իր բացատրությունները՝ Հ.Տաշյանը հանգում է շատ կարևոր մի հետևության, որից էլ պարզվում է, թե ինչու էին պակաս ներկայացնում հայկականը, բնիկը: Այս հանգամանքին, դժբախտաբար, արժանի ուշադրություն չեն դարձրել թե՛ հայ, թե՛ եվրոպացի վիճակագիրները, ուսումնասիրողները, հուշագիրները, և ծնվել են իրարամերժ տեղեկություններ, որոնք գրեթե չեն օգնում կոնկրետ լուսաբանումներին, ավելի են խճճում խնդիրը, ինչպես, օրինակ, գյուղերի անունները: Պատճառը, եզրակացնում է Հ.Տաշյանը, այն է, որ «ուղեւորք իրենց տեղեկութիւնները» քաղում են ուղեկցող թուրք պաշտոնյաներից:

Գավառի նշանավոր գյուղերից էին նաև Գանձ, Գող, Հիղպա, Ղազենց, Ճիականս, Մաթսանց, Ցիլեն, Ջուրակենց, Վանք, Վարիզնոց, Քրեոզ, Օձուտ գյուղերը:

[1] ՀՍՀ, հ. 11, Ե., 1985, էջ 70:
[2] Նույն տեղում:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 197:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 12:
[6] *Տաշեան Հ.,* Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 52:

Ց ՈՒ Ց Ա Կ

Սպերի գավառի հայաշատ գյուղերի
(հաշվարկը կատարված է միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Մանց	42	355
Հունուտ	38	303
Ճիպոտ	40	300
Հիշեն	30	250
Ձկնաջուր	29	222
Ավեր	30	210
Թշաձոր	18	192
Խոզաղբյուր	28	164
Կաժ	26	153
Մեզեզրեկ	19	150
Աղբրիկ	15	120
Շահրիստանց	15	108
Էգեձոր	18	93

Քղիի գավառը հայտնի է նաև *Գուրզան, Խորզա, Խորձայնի, Խորձայն, Խորձեն, Խորձենք, Խորձյանք, Խորձյունի գավառ, Խորձունյաց երկիր* անուններով: Գտնվում էր Չորրորդ Հայքում, Արածանիի վտակ Քղի-Գայլի հովտում: Ինչպես նշում է Ն.Ադոնցը՝ Կարինից մեկ օրվա կամ 40 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնելով Չորրորդ Հայքի հյուսիսարևելյան հատվածը[1]:

Հ.Կարնեցին գավառի մասին գրում էր. «Եւ անտի (Լակզի ձորից այն կողմ- Հ.Զ.) երկիրն Խորձունեաց, բազում գիւղք եւ գավառք, այգեստանօք եւ մրգաւէտ ծառօք զարդարեալ է եւ ունի գիւղաքաղաք զԿեղի փոքր դղեակ...»[2]:

Խորձեանը հյուսիսային կողմում սահմանակից էր Բարձր Հայքի Մազուր և Մանանաղի, հարավից՝ Չորրորդ Հայքի Պաղնատուն, Հաշայանց, Տուրուբերանի Արշամունիք գավառներին, արևմուտքում՝ Դիարբեքիրի էյալեթն է, հյուսիս-արևմուտքում՝ Երզնկայի գավառը, արևելքում՝ Խնուսի գավառն է, հարավ-արևելքում՝ Թիֆլիսի նահանգը:

Խորձեանը 7-րդ դարում հիշատակվում է որպես Չորրորդ Հայքի առաջին գավառ: Մինչև 13-րդ դարն անվանվել է Խորձեան, իսկ հետո՝

[1] *Адонц Н.,* Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 14.
[2] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 10:

Քղի կամ Կեղիի գավառակ: Հայաստանի երկրորդ բաժանումից և 591թ. Մորիկ կայսեր բարենորոգումներից հետո, Քղին Մնձուրի հետ միասին մտնում էր Մյուս Չորրորդ Հայք կամ Հուստինիանոսյան Հայք եպարքոսություն վարչական միավորման մեջ: Նկատի ունենալով գավառի ռազմական կարևոր նշանակությունը՝ 387թ. բաժանումից հետո Բյուզանդական կայսրությունը հատուկ ուշադրություն էր դարձնում սահմանների պաշտպանության ուժեղացմանը:

15-17-րդ դարերում Քղին ենթարկվեց թուրքերի աղետալի արշավանքներին, բնակչությունը սրի քաշվեց, գաղթական դարձավ, և նրանց տեղը սկսեցին զբաղեցնել քրդական ցեղերն ու քոչվոր թուրքերը: Փոխվեց գավառակի ոչ միայն ժողովրդագրությունը, այլև տնտեսական ու քաղաքական կյանքը դուրս եկավ բնականոն զարգացման ուղուց: Սկսված հալածանքները, բռնի կրոնափոխությունը, հարստահարությունները, համիդյան կոտորածները գավառակի հայությանը կանգնեցրին նոր փորձությունների առաջ:

Քղի գավառի տարածությունը կազմում էր 4500 քառ. կմ: Գավառն ունի լեռնային դիրք: Ընդարձակ հարթավայրեր չկան: Լեռների միջև գոյություն ունեն փոքրածավալ հովիտներ կամ դաշտեր, որոնք էլ կազմում են բնակչության երկրագործական տարածքները: Գավառը հիմնականում ծածկված է անտառներով: Բնակչությունը մեծապես օգտվում է անտառների վայրի պտղատու ծառերի բերքից: Անտառներն օգտագործվում են թե՛ որպես վառելանյութ, թե՛ որպես շինանյութ: Լեռները, որոնց մեծ մասն անտառածածկ է, հանդիսանում են նաև գավառակի արյունատար անոթների՝ աղբյուրների ու գետակների ակունքները: Այդ ջրերն են, որ ոռոգում են պարտեզները, այգիները, ցանցերը: Լեռների մի մասն էլ ծածկված է խոտաբույսերով: Դրանք էլ հիմնականում արոտավայրերն են ու ամառանոցները: Սկսած 17-րդ դարից՝ անլուծելի էր մնացել թե՛ ջրաբաշխությունը, թե՛ արոտներից օգտվելու խնդիրները, քրդերն ու թուրք բեկերը դրանք ծառայեցնում էին իրենց շահերին, անընդհատ ոտնահարում հայ շինականի իրավունքները:

Արոտավայրերի առատությունը հնարավորություն էր տալիս անասնապահության զարգացման համար: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ 1896-1899թթ. գավառում եղել են 42.778 խոշոր, 152.314 մանր եղջերավոր անասուններ, որոնց քանակը բաժանելով գավառակի 7970 տնտեսությունների վրա՝ արդյունքում կունենանք մեկ տնտեսության ունեցած անասունների քանակը, այն է՝ յուրաքանչյուր

տնտեսություն ուներ 5.3 խոշոր և 19.1 մանր եղջերավոր անասուն, որ բավական բարձր է նահանգի նման ցուցանիշի միջինից[1]:

Քանի որ գավառն ուներ լեռնային կլիմա, ուստի ճանապարհները ևս բարվոք չէին: Այս պատճառով էլ առևտուրը, մանրավաճառությունը հիմնականում կենտրոնացված էին ձի և ջորի ունեցող տնտեսությունների ձեռքում:

Գավառի երկրագործությամբ զբաղվող տնտեսությունները կարողանում էին ապահովել սեփական կարիքները և բերքի երեք քառորդը հանում էին վաճառքի:

Գավառում կային արծաթի և երկաթի հանքեր: Գավառի կլիման մեղմ էր ու առողջարար, թեև ձմեռը երկարատև էր և ձյունառատ:

Հետագա ժամանակահատվածում գավառակը բաժանվում է Վերին և Ներքին մասերի. «Վերին Կեղի սկսեալ ‘ի գառկալք գեղջէն՝ ձգի ‘ի հարաւային կողմն քէօշմէր լերին. իսկ վարինն սկսեալ ‘ի գիւղն զայագայական: Ուստի քէօշմէր լեառն եւ շէյթան տէրէսին բաժանէս զերկոսին կեղի ‘ի միմեանց»,- գրում էր Ղ.Ինճիճյանը[2]:

Գավառում զբաղվում էին նաև մեղվաբուծությամբ: Վիճակագրված 47 գյուղերում, որի մասին տեղեկացնում է արխիվային փաստաթղթերից մեկը, խնամվում էր 2070 փեթակ մեղու[3]: Քղիի մեղրն աչքի էր ընկնում որակով ու մաքրությամբ և մեծ պահանջարկ ուներ թե՛ նահանգում, թե՛ մայրաքաղաքում:

Բացի երկրագործությունից, անասնապահությունից և մեղվաբուծությունից, բնակչությունը զբաղվում էր նաև արհեստներով և առևտրով: Գավառի վիճակագրված 20 գյուղերում, 20-րդ դարի սկզբներին, գործում էին 49 դարբին, 4 կաշեգործ, 48 կոշկակար, 16 ներկարար, 38 բրուտ, 8 թիթեղագործ, 68 հյուսն, ատաղձագործ, 111 քարակոփ-որմնադիր, 22 սափրիչ, 60 ջրաղացպան, 164 առևտրական[4]: Ընդ որում, գործող կրպակխանութներ կային Ապաղնակ, Աստղաբերդ, Առեք, Խուբս գյուղերում[5]:

Ավանդություն կա գավառում որմնադրության սկզբնավորման առթիվ: Պատմվում է, որ Չանախչի գյուղից Զատուռ Ամիրխանյանը, պանդխտության գնալով Պոլիս, իր ուշիմության շնորհիվ այնտեղ սովորում է որմնադրություն, քարկոփություն և վերադառնալով հավաքում է իր գյուղացիներից խումբ, նրանց սովորեցնում այդ արհեստը,

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1544, թ. 42, շրջերես 43:
[2] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 106:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 9, շրջերես 10:
[4] Նույն տեղում, թ. 11, շրջերես 12:
[5] Նույն տեղում, թ. 9, շրջերես 10:

նրանք էլ, իրենց հերթին, գավառակի մյուս գյուղերի երիտասարդներին, և այդպես որմնադրությունը տարածվում է գավառակում[1]:

Գավառում գործել են 38 եկեղեցի, 3 վանք, 3 մատուռ, 41 երկսեռ, 2 արական, 2 իգական վարժարաններ, որտեղ աշխատել է 60 ուսուցիչ, սովորել 2530 աշակերտ[2]: Մեկ այլ աղբյուր հայտնում է, թե 20-րդ դարի սկզբներին գավառի 50 հայաբնակ գյուղերում գործում էր 27 դպրոց, որոնք ունեին 1700 աշակերտ[3]: Հակասական տեղեկությունների աղբյուրն այն է, որ վերջին վկայության հեղինակը չի հաշվարկել խառը բնակչություն ունեցող գյուղերում գործող վարժարանները և, ամենայն հավանականությամբ, Քղի և Խուբս գյուղերում գործող չորս արական և իգական վարժարանները:

Առավել հակասական տեղեկություններ են հայտնվում գավառի գյուղերի և հայաբնակ գյուղերի առթիվ: Ռուս հեղինակ Ա.Կոլյուբակինը գավառի 237 գյուղերում հաշվում է 39.606 շունչ բնակչություն, որից 13.688-ը՝ քրիստոնյաներ, 25.918-ը՝ մուսուլման և ղզլբաշ[4]: Ալ.Երիցյանը գավառում հաշվում է 218 գյուղ, որից 11-ը՝ թուրքաբնակ, 6-ը՝ թուրքմենաբնակ, 118-ը՝ քրդաբնակ, 6-ը՝ ղզլբաշ, 24-ը՝ հայաբնակ, 1-ը՝ հունաբնակ, 47-ը՝ խառը: Տների քանակով՝ 392 թուրքական, 2104՝ քրդական, 112՝ թուրքմենական, 74՝ ղզլբաշ, 1940՝ հայկական, 28՝ հունական, ընդամենը՝ 4650 տուն: Որտեղից՝ 10.228 շունչ մահմեդական, 15.814՝ քրիստոնյա: Ընդամենը՝ 37.037 շունչ: Բնակչության 46 տոկոսը հայեր էին, 41-ը՝ քրդեր, 6.5-ը՝ թուրքեր, 2-ը՝ թուրքմեն, 1.5-ը՝ ղզլբաշ, 0.5-ը՝ հույներ[5]:

Ա-Դոյի վիճակագրությամբ (նույն Կարինի առաջնորդարանի տեղեկություններն են), գավառակի 50 հայաբնակ գյուղերում ապրում էին 2676 տուն, 18.705 շունչ հայեր, 6334 շունչ թուրքեր (մահմեդականներ)[6]: Այսինքն՝ մեկ բնակավայրում ապրում էին 54 տուն, 374 շունչ բնակիչներ[7]: Փաստաթղթերից մեկն էլ հայտնում է, որ գավառակն ուներ 41.225 բնակչություն, որից 28.836-ը՝ մահմեդական էին, 12.389-ը՝ հայեր, որից 11.301-ը լուսավորչական հայեր էին, 739-ը՝ բողոքական, 276-ը՝ կաթոլիկ, 73-ը՝ այլ քրիստոնյաներ[8]:

[1] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 325, թ. 30 շրջերես:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 6, գ. 161, թ. 13-16:
[3] ՀԱՀ, հ. 5, էջ 90:
[4] *Колюбакин А.М.,* Материалы..., т. 3, ч. П, Тифлис, 1890.
[5] «Փորձ», 1880, թիւ 6-7, էջ 222:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191-192:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1033, թ. 8:
[8] Նույն տեղում, թ. 9:

Փաստաթղթերից մեկն էլ հայտնում է, որ 20-րդ դարի սկզբներին գավառակում կար 4833 տուն բնակչություն, որից 3490 տունը հայկական էր[1]: Մեկ ուրիշը նույն ժամանակաշրջանում հաշվում էր 363 մեծ ու փոքր գյուղեր, որոնք բաժանված էին 18 շրջանների և ունեին 100.000 բնակչություն, որից միայն 5-6000-ն էր թուրք[2]: Մյուս տեղեկությամբ, գավառակում կար 25.500 բնակչություն և այլն[3]:

Եթե դիմենք միջին տարբերակին, ապա գավառում կունենանք 215 գյուղ, 33.691 բնակչություն:

Ինչպես նշեցինք վերևում, քրդերը, թուրքերը և մահմեդական այլ ցեղերը Քղիի գավառ սկսեցին թափանցել դեռևս 16-րդ դարից, բայց նրանց հոսքն առավել ստվարացավ 19-րդ դարի 1-ին կեսին: Այս գործում հատկապես ակտիվություն էին դրսևորում քրդական ցեղերը: Նրանց հետ նոր հայրենիք էին փնտրում նաև թուրքերը՝ իրենց բեկերի առաջնորդությամբ, բայց նրանք չկարողացան տիրապետող դառնալ, և սկսվեց անզիջում պայքար «վաթան» որոնողների միջև, պայքար, որն իր բացասական ազդեցությունն էր թողնում հայերի տնտեսական ու քաղաքական կյանքի վրա:

Այդ արյունահեղ պայքարից հետո քարերցիք քրդական ցեղը տիրացավ Քղիի հարավարևելյան շրջաններին: Գավառում հիմնավորվեցին նաև Զմեդցիք, Օխջանցիք, Տրմըզցիք, Հաստացիք: Հայերը, սակայն, պարզ դիտողի դերում չէին և հաճախ դիմում էին պայքարի՝ իրենց իրավունքների, կյանքի ու անձի պաշտպանությունից դրդված: 1862թ. հայերն ակտիվ պայքար սկսեցին քրդերի հարստահարությունների դեմ: Ոչ կառավարությունը, ոչ էլ քրդերը չէին սպասում նման համարձակության, և որպեսզի պայքարը չստանար համաժողովրդական բնույթ, իշխանությունները դատ կազմակերպեցին քրդերի դեմ, նրանց վտարեցին գավառակից, բայց երկու տարի անց նրանք նորից վերադարձան ու շարունակեցին իրենց սև գործը: Հայերը 1868թ. նորից են ըմբոստանում իշխանությունների դեմ, որոնք ցանկանում էին խնդիրը լուծել քրդերի օգնությամբ, բայց վերջիններս, հիշելով 1862թ. դեպքերը, հրաժարվում են բռնություններից, իսկ հայերը խուսափում են ճանապարհների վրա անվճար աշխատելուց: Այդ պայքարը շարունակվեց մինչև 1872թ.:

Գավառի կենտրոնը Քղի ավանն էր: Հնում անվանվում էր Կողաբերդ: 1616թ. ավերիչ երկրաշարժից հետո բնակիչները տեղափոխվում ու

[1] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 9, շրջերես 10:
[2] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 1033, թ. 2:
[3] Նույն տեղում, գ. 327, թ. 17:

բնակություն են հաստատում Քարական ձորի երկու կողմերում: Ավանի միջով հոսում է Արածանիի վտակ Քղի գետը: Մետեխեռում և Քարագլուխ լեռների ստորոտները, որոնց վրա կառուցված է ավանը, նրան գեղեցիկ բնապատկերի տեսք են տալիս: Հ.Կարնեցին ավանի մասին գրում էր. «Այժմ պարոնանիստ և կարի ախորժահայք, վարդապետաց սրբոց երաժշտականաց դամբարան եւ բնակարան. եւ կայ վանք երկու, այժմ միաբնակեցած տեղիք, մինն անուն սուրբ Կարապետին եւ միւսն սուրբ կուսին Մարիամու Աստվածածնին եւ է անդ գերեզման եպիսկոպոսին սրբոյ Խաղայ, որ պահպանութիւն է աշխարհին...»[1]:

Կառուցված լինելով լեռնալանջերի վրա՝ հեռվից դիտողն այն պատկերացումն է ստանում, թե ավանի տները կառուցված են իրար վրա: Մետեխեռում լեռան գագաթը միշտ ձյունածածկ է: Նրա լանջից բխում է Ս.Աստվածածին աղբյուրը, որը գավառի քրդերի պաշտամունքի վայրն է: Քարագլուխ լեռը լերկ է: Նրա ստորոտներում են գտնվում քարահանքերն ու կավահանքերը: Հատկապես օգտագործելի են կարմիր կավահանքերը, որոնցից, Ղ.Ինճիճյանի վկայությամբ՝ «շինեն անօթս, եւ սփռեն ‘ի զանազան գիւղօրէս»[2]:

Հիշյալ երկու լեռների արանքում Քարական կամ Քարակաձորն է: Այն ծածկված է փարթամ բուսականությամբ, նրա լանջերից բխում են սառնորակ աղբյուրներ, որոնք գետակի վերածվելով՝ ոռոգում են ավանի այգիներն ու բանջարանոցները:

Քղի ավանը բաժանվում է թաղերի: Հայերը բնակվում են Ս.Հակոբ, Ս.Սարգիս, Ս.Լուսավորիչ և Վարի թաղերում: Տները քարաշեն են, փողոցները՝ օձագալար, երբեմն հանդիպում են երկհարկանի տներ, որոնք պատկանում են հայազգի առևտրականներին ու արհեստավորներին:

Ավանի մոտակայքում, Հազստուն գյուղ չհասած, գտնվում են հին բերդի ավերակները: Ենթադրվում է, որ դրանք Արշակունի թագավորների կառուցած բերդի ավերակներն են: Քղին կամ Խորձեան գավառն աչքի էր ընկնում առատ բուսականությամբ ու անտառներով, որոնք լի էին վայրի կենդանիներով և հանդիսացել են հայ թագավորների որսատեղին: Հնում Քղին նաև գրչության կենտրոն էր: Երեմիա սարկավագը 1464թ. այնտեղ ընդօրինակել է «Մաշտոց» և «Գանձարան» աշխատությունները: Կա տեղեկություն այն մասին, որ «Հազարուն (երևի Հազստուն– Հ.Զ.)» գյուղի Ս.Կարապետ վանքում եղել է «ձեռագիր մեծ Այսմաւուրքը»[3]:

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 10:
[2] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 106:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 6:

Քղին գտնվում էր Կարինից 132 կմ կամ 48 ժամ հեռավորության վրա, հարավարևմտյան կողմում: Ավանի միջով են անցնում Երզնկա-Մուշ, Երզնկա-Խարբերդ երկարացված ճանապարհները: Երզնկայից եկող ճանապարհը Քղին օգտագործում է նաև Կարինի հետ կապվելու համար:

Ավանի բնակիչները զբաղվում էին առևտրով և արհեստներով, կային երկրագործությամբ, հիմնականում այգեգործությամբ զբաղվողներ: Արհեստներից տարածված էին կոշկակարությունը, դերձակությունը, գինեգործությունը, երկաթագործությունը, հյուսնությունը, դարբնությունը, թիթեղագործությունը, շերամապահությունը, ջրաղացպանությունը, քարագործությունը, որմնադրությունը, ներկարարությունը, ժամագործությունը և այլն:

Քղիի վաճառականներն արտահանում էին հում նյութեր, բոստանային հատապտուղներ, կուղբի, այծի, ոչխարի մորթի, կաշի: Արտահանության մեջ զգալի կշիռ ուներ ոչխարի, այծի, եզան, ձիու, ջորու առևտուրը: Ներմուծման մեջ գերակշռում էին ոսկյա, արծաթյա զարդերը, հագուստը, կտորեղենը և այլն:

Կապված 19-րդ դարի երկրորդ կեսի հալածանքների ու հարստահարությունների սաստկացման հետ՝ ստվարացան պանդուխտների շարքերը:

Քաղաքում գործում էին 90 արհեստավոր, 75 առևտրական[1]:

Քղի ավանն ուներ երկու եկեղեցի՝ Ս.Սարգիս և Ս.Հակոբ: Իգական և արական վարժարաններում սովորում էին 350 աշակերտ՝ 150 աղջիկ, 200 տղա: Քաղաքում գործում էր մանկապարտեզ, որն ուներ 250 սան: Ուսումնական այս երեք հաստատություններում աշխատում էր 13 ուսուցիչ[2]:

Քղիում եղել են ավերիչ երկրաշարժեր: Հատկապես հիշատակվում են 1415 և 1616 թվականներինը: 1895 թվականի երկրաշարժն իր ուժգնությամբ և պատճառած վնասներով զիջում էր նախորդներին:

Քաղաքի բնակչության մասին ունենք հետևյալ տեղեկությունները. Ա-Դոն և այլ հեղինակներ, հիմք ընդունելով Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը, հայտնում են, որ գյուղաքաղաքն ունեցել է 350 տուն, 2450 շունչ հայ և 1050 շունչ մահմեդական բնակչություն[3]: Է.Սրապյանը հավաստիացնում է, որ Քղին ունեցել է 5000 թուրք և հայ բնակչություն,

[1] Նույն տեղում, գ. 151, թ. 11, շրջերես 12:
[2] Նույն տեղում, թ. 17-18:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:

որից 20-40 տունը բողոքական հայեր էին[1]: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ հաղորդում է երկու իրարամերժ տեղեկություն. Քղիում ապրում էին 500 տուն հայեր, ասել է՝ մոտ 3000 շունչ: Մի քանի տող ներքև նույն փաստաթուղթը նշում է, որ քաղաքն ուներ 2000 հայ բնակչություն[2]: Մինչև Մեծ եղեռնը հայերի 650 տուն, թուրքերի 150 տուն բնակչության մասին է հայտնում մեկ ուրիշ փաստաթուղթ: Եթե վերջին տեղեկությունը վերածենք շնչերի, կունենանք մոտ 3900 շունչ հայ, 900 շունչ թուրք բնակչություն: Թերևս, հնարավոր է 3900 շունչ հայերի մասին տեղեկությունը իրական համարել:

Նույն փաստաթուղթը հայտնում է, որ քաղաքի 1780 հայ բնակչությունը գլխովին զոհ է գնացել կոտորածին[3]: Իսկ 650 տուն, 3900 շունչ վիճակագրություն հաղորդողը հայտնում է, որ կատարածից ազատվել է միայն 18 մարդ, իսկ 250 հոգի գտնվում էր արտասահմանում[4]: Միջին տարբերակով կստանանք 3087 շունչ հայ բնակչություն (2450+3000+3900+3000=12350/4=3087):

Հարկ է նշել, որ Ա-Դոն այս անգամ էլ պակաս է ներկայացնում բնակչության քանակը, քանզի Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը չի համապատասխանում տունը վեց շնչով հաշվարկելու սկզբունքին, ինչը հանդիսանում է այդ վիճակագրության հիմնական հավատամքը: Այստեղից էլ, եթե 350 տունը բազմապատկենք վեցով, կունենանք 2100 շունչ, մինչդեռ, այս անգամ հաշվարկը կատարվել է 7-ով, որովհետև Առաջնորդարանի քարտուղար Վ.Սանոյանը ևս կասկածել է իր վիճակագրությանը: Խնդիրն այն է, որ յոթով կամ վեցով հաշվարկն արտահայտում է իրականությունը, որովհետև յուրաքանչյուր գավառ, գավառակ, գյուղ ունեցել է իր յուրահատկությունը՝ կապված ընտանիքի անդամների քանակի հետ: Ընդունելի է, որ լեռնային շրջաններում ընտանիքներն ավելի բազմամարդ էին, քան դաշտավայրային շրջաններում: Քղին, որ նույնպես գտնվում էր լեռնային շրջանում, դժվար թե ընտանիքի անդամների քանակով հասներ 8-10 հոգու սահմանին և ընդունելով 9 հոգանոց ընտանիքների տարբերակը՝ քաղաքում կունենանք մեր պայմանականորեն ընդունած 3000 շունչ բնակչությունը:

Գավառի ամենամեծ հայաշատ գյուղը *Դարմանն* էր: Գյուղը հիշատակվում է նաև *Թեմրան, Դերման, Թերման, Թեմիրան, Տերման* անուններով:

[1] *Մրապեան Լ.* ,Քղի, Անթիլիաս, 1960, էջ 16:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 6, 6 շրջերես:
[3] Նույն տեղում, գ. 140, թ. 7:
[4] Նույն տեղում, գ. 161, թ. 18:

Դերմանը գտնվում էր Քղիից հարավ-արևելք, 15 կմ կամ 4 ժամ հեռավորության վրա: Գյուղը կառուցված էր գեղեցիկ, անտառածածկ լանջի վրա, Հանգստուն, Ինախ գյուղերից հարավ, Օրոր գյուղից հյուսիս-արևելք: Գյուղից հարավ-արևելք Ս.Կիրակոս վանքն էր:

Դարմանն ուներ երկու եկեղեցի: Նրանցից Ս.Սարգիսը կառուցվել էր 1181թ.: Գյուղն ուներ երկու վարժարան: Նրանցից մեկի աշակերտների քանակը 300 էր: Նույն դպրոցն ուներ չորս ուսուցիչ[1]: Դարմանում աշխատում էր 39 արհեստավոր՝ դարբին, ներկարար, կոշկակար, թիթեղագործ, հյուսն, որմնադիր[2]: Գյուղի 16 առևտրականներն իրենց գործունեությունը ծավալում էին ինչպես գավառում ու նահանգում, այնպես էլ հարևան նահանգներում, Կ.Պոլսում[3]: Գյուղում գործում էին 15 խանութ-արհեստանոց-կրպակներ[4]: Գյուղն ուներ նաև երկու ձիթհանք, որը սպասարկում էր թե՛ գյուղի, թե՛ շրջակա գյուղերի բնակիչներին: Ղ.Ինճիճյանի վկայությամբ, գյուղում աճում էր ընտիր ընկույզ[5]: Գյուղի հնություններից էին հյուսիսային կողմում գտնվող, ընդարձակ տարածք զբաղեցնող հին ամրոցի ավերակները:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ուներ 350 տուն, 2450 շունչ հայ բնակչություն: Մահմեդականներն ունեին 40 տուն, մոտ 210 շունչ բնակչություն[6]: Արխիվային ուրիշ փաստաթղթեր հայտնում են, որ գյուղն ունեցել է 500 տուն, 2100 շունչ հայ, 10 տուն թուրք բնակչություն[7]: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ 20-րդ դարի սկզբներին գյուղում ապրել են 400 տուն, 2650 շունչ հայեր[8]:

Միջինը՝ 416 տուն, 2400 շունչ հայ, 25 տուն, 175 շունչ թուրք բնակչություն:

Խուբը գավառի ամենանշանավոր և հայաշատ գյուղերից էր: Գտնվում էր Քղիից հարավ-արևմուտք, երկու ժամ[9], կամ 12 կմ հեռավորության վրա, Խաչկոնց փոքր լեռան ստորոտում, Քղի գետի ձախ ափին: Գյուղի հյուսիսում Խավարծիլ լեռն է, արևմտյան կողմում՝ Բևիկներ, հարավային կողմում՝ Բուրբուկոյր լեռներն են՝ ոչ բարձր լեռնա-

[1] Նույն տեղում, գ. 161, թ. 11-12:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] ՏԲ, հ. 2, էջ 62:
[5] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 108:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 45:
[8] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[9] Նույն տեղում, գ. 140, թ. 10:

գագաթներով: Այս բնական դիրքը գյուղին տալիս էր պաշտպանական անհրաժեշտ հնարավորություն: Գյուղը, բացի բնական նշված դիրքից, նաև անտառներով էր շրջապատված:

Գյուղի անունը ծագել է արաբական տիրապետության ժամանակներից: Արշավանքներից մեկի ժամանակ արաբական մի զորագունդ գալիս է գյուղ՝ պարենի պակասը լրացնելու նպատակով և պահանջում է հաց՝ «խուպս»: Ավանդության համաձայն, այդ ժամանակաշրջանից էլ գյուղն անվանվում է Խուբս:

Խուբսը ոչ միայն գավառակի խոշոր հայաբնակ գյուղերից էր, այլև մշակութային ու տնտեսական կենտրոն: Գյուղում 1879թ. գործում էին արական և իգական վարժարաններ՝ 160 և 100 սաներով: Վարժարաններում աշխատում էր 7 ուսուցիչ: Գյուղում գործում էր նաև մանկապարտեզ: Այն ուներ երկու ուսուցիչ և 170 սան[1]: Վարժարանների ու մանկապարտեզների ծախքերը հոգում էին արտասահմանում գտնվող պանդուխտ խուբսեցիների ընկերությունները: Սկզբում կազմավորվեց «Արամյան» ընկերությունը, ապա նրան փոխարինեց «Արարատյան», «Հայկազեան ուսումնասիրաց ընկերութիւն Խուբս գիւղի», որոնց նվիրատվությունների շնորհիվ էլ հալածանքների ու հարստահարությունների տարափների տակ ընկած խուբսեցիները պահպանում էին իրենց կրթական հաստատությունները:

Գյուղն ուներ երկու՝ Ս.Կարապետ և Ս.Սարգիս եկեղեցիներ, մեկ մատուռ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Գյուղում գործում էր 126 արհեստավոր՝ դարբիններ, կաշեգործներ, բրուտներ, երկաթագործներ, հյուսներ, որմնադիրներ, ջրաղացպաններ, կոշկակարներ: 12 առևտրականներ իրենց գործունեությունը տարածում էին գյուղում, ուր բացվել էին խանութ-կրպակ-արհեստանոցներ, ինչպես նաև գավառակում, նահանգում և այլուր[2]: Փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղն ուներ «առևտրական մեծ եռուզեռ»[3]:

Գյուղի համար բախտորոշ էր 1895թ.: Թուրքական խուժանը, զինակցած կիսավայրենի քրդերի հետ, 1895թ. սեպտեմբերի 22-ին պաշարեց Խուբսը: Բարեբախտաբար, գավառապետը, չենթարկվելով սուլթանի հրամանին, օգնություն էր ցույց տալիս հայկական գյուղերին: Այս անգամ էլ նա զինվորներ ուղարկեց Խուբս, բայց առաջին իսկ մարտերի

[1] Նույն տեղում, գ. 161, թ. 17, 18:
[2] Նույն տեղում, գ. 161, թ. 11, 12:
[3] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 1032, թ. 10 շրջերես:

ժամանակ թուրք զինվորները դրսևորեցին իրենց ցեղին հատուկ նենգությունը, և խուբսեցիներն ստիպված, որպեսզի գնդակ չընդունեն թիկունքից, հրաժարվեցին նրանց օգնությունից և հեռացրին գյուղից: Սկսվեց ինքնապաշտպանությունը: Ոտքի էին ելել գյուղի բոլոր տղամարդիկ: Նրանց ոգևորում էին կանայք: Երկրորդ հարձակման ժամանակ, արժանի հակահարված ստալանուց հետո, քրդերը սկսեցին հավաքագրել գավառակի քրդական գյուղերի թալանչիներին: Հոկտեմբերի 10-ին, համալրված ուժերով, քրդերը դիմեցին նոր հարձակման և նորից հանդիպելով ուժեղ հակահարվածի՝ նահանջեցին: Քրդական ցեղապետերից մեկը որոշեց դիմել ավանդական միջոցին՝ խաբեությանը, առաջարկելով հանդիպում: Մերժում ստանալով՝ հոկտեմբերի 14-ին նրանք դիմեցին հախուռն գրոհի: Հակահարվածն այնքան հուժկու էր, որ բաշիբոզուկները զոհվածների դիակներն ու վիրավորներին թողնելով մարտադաշտում՝ անկանոն նահանջեցին:

Նույն օրվա երեկոյան գումարված խորհրդակցության ժամանակ որոշվեց հեռանալ գյուղից, քանզի գնալով ստվարանում էին թշնամու շարքերը, իսկ Խուբսը զուրկ էր որևէ օգնությունից: Գիշերային աննկատ երթի շնորհիվ գյուղը փրկվեց կոտորածից: Հաջորդ օրը խուժանը, դիմադրության չհանդիպելով, ներխուժեց գյուղ, թալանեց այն և հեռացավ:

Ինքնապաշտպանական մարտերի ընթացքում խուբսեցիները տվեցին 8 զոհ, հինգ վիրավոր: Թշնամու կորուստներն ու վիրավորներն անհամեմատ ավելին էին[1]:

Ընդհանրապես համիդյան ջարդերի շրջանում, բացի Խուբսից, Քղիի գավառակի մյուս գյուղերը ևս զերծ մնացին կոտորածներից: Միայն վեց գյուղերում, որտեղ չէր կազմակերպվել ինքնապաշտպանություն կամ թույլ էր հայության համախմբվածությունը, թուրքերին ու քրդերին հաջողվեց իրականացնել իրենց սև գործը:

Խուբսի տնտեսական կյանքի մասին պատկերացում կազմելու համար հարկ է անդրադառնալ անասնապահական նվաճումներին: Ս.Կարապետ եկեղեցին կառուցվել էր 17-րդ դարում, կաղնիների անտառում: Նրանից քիչ հեռու Ս.Դավիթ սրբատեղին էր, նույնպես կաղնիներով շրջապատված, սրբավայրից հյուսիս-արևելք եկեղեցու ոչխարների ու այծերի գոմերն էին, մակաղանոցը: Անասունների թիվը հասնում էր գրեթե 3000-ի: Ոչխարի կաթն օգտագործվում էր բարձրորակ պանիր ստա-

[1] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 683, թ. 83:

նալու համար, և քանի որ անտառում հնարավոր չէր մշակել կաթը, ուստի Ս.Մինաս սրբավայրից մինչև գյուղ կառուցվել է հողե (ամենայն հավանականությամբ՝ կավե- Հ.Զ.) խողովակաշար, որով՝ «25 վայրկեան» ճանապարհ անցնելով, կաթը հասնում էր գյուղ[1]:

Բացի անասուններից, եկեղեցին ուներ նաև ընդարձակ հողատարածություններ, որոնք զոյացել էին նվիրատվությունից: Խուբսն աչքի էր ընկնում իր հայրենասեր զավակներով, որոնք դիրքերի հասնելով քաղաքներում՝ հոգու պարտք էին համարում օգնել հարազատ գյուղին: Անմասն չէին նաև պանդուխտները, որոնք իրենց չարքաշությամբ վաստակած գումարից բաժին էին հանում թե՛ վարժարաններին, թե՛ եկեղեցուն:

Խուբսը գավառակում հայտնի էր նաև իր երկարակյացներով: Գյուղում կային մինչև 120 տարեկան ծերունիներ, որոնք գյուղի վերաբերյալ ավանդական պատմությունները դարձնում էին սերունդների սեփականությունը:

Խուբսի բնակչության թվաքանակի մասին տեղեկությունները հիմնականում կրկնում են իրար, որովհետև հեղինակների մեծ մասը, սկսած Ա-Դոյից, հիմք է ընդունում Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը, համաձայն, որի, 19-րդ դարի վերջերին, 20-րդ դարի սկզբներին գյուղն ունեցել է 200 տուն, 1400 շունչ հայ բնակչություն: Նույն փաստաթուղթը գյուղում օտար բնակչություն չի արձանագրում[2]: Արխիվային փաստաթղթերը հաղորդում են, որ գյուղն ունեցել է 300 տուն, 1700 շունչ հայ բնակչություն[3], կամ 280 տուն, 1980 շունչ զուտ հայ բնակչություն[4]:

Եթե դիմենք միջին տարբերակին, ապա կունենանք 260 տուն, 1693 շունչ հայ բնակչություն, ինչը կարելի է նաև ընդունել որպես գյուղի տների ու հայ բնակչության վերջնական ցուցանիշ, որովհետև հեղինակներից մեկն էլ վկայում է, որ 1915թ. գյուղն ունեցել է 2400 շունչ հայ բնակչություն[5]: Այսինքն՝ գրեթե 20 տարում (1890-1915թթ.) Խուբսի 260 տուն հայերն ունեցել են (յուրաքանչյուր ընտանիքը կամ տունը) 2,7 մարդու բնական աճ, ինչն ընդունելի ցուցանիշ է:

Արեգ, Առեկ գյուղը գտնվում էր համանուն գետակի ափին, Քղիից հարավ-արևելք, Ճերմակ գյուղից արևմուտք, կես ժամ հեռավորության վրա, Հանգստունից հարավ-արևմուտք, Դերման, Միրզա, Օրոր գյուղերի հարևանությամբ: Զուտ հայաբնակ, ընկուզաշատ գյուղ էր:

[1] Նույն տեղում, գ. 140, թ. 10 շրջերես:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 10:
[4] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[5] ՏԲ, հ. 2, էջ 953:

19-րդ դարի 70-ական թվականներին գյուղն ուներ 74 տուն հայ, 1 տուն թուրք բնակչություն[1]: Դարավերջին, անցնելով արհավիրքների միջով, Արեգը ոչ միայն պահպանեց իր բնակչությունը, այլև նկատելի աճ ունեցավ: 300 տուն, 1680 շունչ հայ բնակչություն էր ապրում նշված ժամանակահատվածում[2]: 20-րդ դարի սկզբներին գյուղն ուներ 150 տուն, 1050 շունչ բնակչություն[3]: Մեկ այլ աղբյուր վկայում է, որ Մեծ եղեռնի նախօրյակին գյուղն ուներ 225 տուն, 1570 շունչ հայ բնակչություն[4]:

Միջին տարբերակով կունենանք 187 տուն, 1204 շունչ բնակչություն: Եթե կատարենք աճի տեմպերը պարզաբանելու գործողություն, ապա պարզվում է, որ գրեթե 45 տարում՝ 1870-1915թթ., գյուղի բնակչությունն աճել է 326 տնով և 1162 շնչով: Այսինքն՝ աճը կազմել է յուրաքանչյուր տան գծով 25,8 մարդ, կամ՝ յուրաքանչյուր տարում մեկ ընտանիքը տվել է 0,5 շնչի աճ:

Արեգի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Գյուղում աշխատում էր 38 արհեստավոր՝ դարբին, կոշկակար, թիթեղագործ, հյուսն, որմնադիր, ներկարար, ժամագործ, սափրիչ, ջրաղացպան: Գյուղի 6 առևտրականների միջոցով էր հիմնականում կատարվում առևտուրը՝ արտահանությունն ու ներմուծումը[5]:

Գյուղում գործում էին Ս.Հովհաննես եկեղեցին, վարժարանը՝ 3 ուսուցչով, 160 աշակերտով[6]:

Արեգից արևելք Ս.Աստվածածին վանքն էր, որի մոտակայքում կան ավերակներ: Գյուղի բնակչությունն ուներ բարեկեցիկ կյանք, հողը եկամտաբեր էր, անասնապահության համար կային բավարար պայմաններ: Օգտագործելով բնական պայմանները՝ արեգցիները զբաղվում էին նաև մեղվաբուծությամբ և խնամում էին 150 փեթակ մեղուներ[7]:

Ճերմակ, Ջերմակ գյուղը գտնվում էր բարեբեր հովտում, Քղիի հարավարևելյան կողմում: Ղ.Ինճիճյանը հայտնում է այն տեսակետը, թե գյուղի անունն առաջացել է գյուղում բխող ջերմուկներից՝ «թերեւս կոչեցաւ ջերմուկ»[8]:

---

[1] ՏԲ, հ. 1, էջ 418:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 47:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8:
[5] Նույն տեղում, թ. 11-12:
[6] Նույն տեղում, թ. 17-18:
[7] Նույն տեղում, թ. 8:
[8] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 110:

Ճերմակ-Ջերմակը Քղիից հեռու էր երեք ժամ, գտնվում էր Արածանիի Գյունեկսու վտակի ափին, Աստղաբերդ գյուղից հարավ-արևելք: Գյուղը երբեմն անվանվել է Ծերմակ: Իր դիրքի և հողերի բերրիության համար Ճերմակը գտնվում էր թուրք և քուրդ բեկերի ուշադրության կենտրոնում: Բայց քանի դեռ նրանք չէին հովանավորվում իշխանությունների կողմից, վճռական գործողություններ չէին ձեռնարկում: 19-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվեցին այդ հնարավորությունները, և առաջինը գյուղում հայտնվեցին քրդերը: Հայերը դիմադրություն ցույց տվեցին, սակայն խաշնարածներին հաջողվեց հաստատվել գյուղում:

Ճերմակ գյուղն ուներ Ս.Գևորգ եկեղեցի, երկսեռ վարժարան՝ 120 աշակերտով, 2 ուսուցչով[1]:

Գյուղը հայտնի էր արհեստավորներով, որոնց թիվը հասնում էր 42-ի: Նրանք կատարում էին դարբնի, զինագործի, կոշկակարի, հյուսնի, որմնադրի աշխատանքներ: Ճերմակի 10 բնակիչ զբաղվում էր առևտրով[2]:

Երկրագործությունից, անասնապահությունից, արհեստներից բացի, բնակչության մի մասի եկամտաբեր զբաղմունքներից էր մեղվաբուծությունը: Գյուղում խնամվում էր 110 փեթակ մեղու[3]:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղի բնակչությունը բաղկացած էր 150 տուն, 1050 շունչ հայից, 70 տուն մահմեդականներից[4]: 200 տուն, 1500 շունչ հայություն, 14 տուն թուրքեր է հաշվում արխիվային փաստաթղթերից մեկը[5]: Հաջորդ վիճակագրության համաձայն, 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբներին գյուղում եղել է 165 տուն, 1100 շունչ հայ բնակչություն[6]: Միջին տարբերակով գյուղում կունենանք 171 տուն, 1216 շունչ հայ, 42 տուն, 294 շունչ թուրք բնակչություն:

Աստղաբերդ գյուղը գտնվում էր Ս.Կիրակոս վանքի հարավարևմտյան մասում, Քղի գետի վերին հոսանքում փռված հովտում, որն աչքի էր ընկնում իր բնական գեղեցկությամբ: Գյուղի անունը ծագել է Աստղիկ աստվածուհու մեհյանից, որի տեղում հետագայում կառուցվել է Ս.Գևորգ եկեղեցին՝ հիմնականում պահպանելով մեհյանի թե՛ արտաքին, թե՛ ներքին ձևավորումը: Կա նաև ենթադրություն, թե գյուղն անունն ստացել է Աստղ թագավորի անունից[7]: Ղ.Ինճիճյանը նշում է, որ գյուղը սահ-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 17-18:
[2] Նույն տեղում, թ. 11, 12:
[3] Նույն տեղում, թ. 8:
[4] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 26:
[6] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[7] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 108:

մանակից էր Մուշ գավառին, այսինքն՝ Քղիի ծայրագավառային գյուղն էր: Այնուհետև Ղ.Ինճիճյանը հայտնում է, որ Աստղաբերդն ունի «առատ ու պատուական» ընկույզ, քառորդ ժամով է հեռու Ս.Կիրակոս վանքից[1]:

Գյուղի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Տարածված արհեստներից էին կոշկակարությունը, հյուսնությունը, որմնադրությունը քարակոփությունը: Աստղաբերդում գործում էին նաև 4 առևտրականներ[2], գյուղում կար 150 մեղվի փեթակ[3]:

Աստղաբերդն ունի երկու եկեղեցի՝ Ս.Սարգիս և Ս.Գևորգ, որոնք կառուցվել էին 1001 և 1121թթ.: Գյուղի վարժարանը երկսեռ էր:

19-րդ դարի վերջերին, 20-րդ դարի սկզբներին գյուղն ուներ 250 տուն, 1500 շունչ հայ, 10 տուն քուրդ բնակչություն[4]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղում կար 130 տուն, 910 շունչ հայ, 100 շունչ մահմեդական բնակչություն[5]: Մեծ եղեռնից առաջ գյուղում ապրում էր 180 տուն, 1250 շունչ հայ, 10 տուն թուրք բնակչություն[6]:

Միջինը՝ 186 տուն, 1220 շունչ հայ, 11 տուն, 120 շունչ թուրք բնակչություն:

Փաստաթղթերից մեկն էլ վկայում է, որ գյուղը գավառակի բարեկեցիկ բնակավայրերից էր, կային կարողության տեր հայեր[7]:

Չանախչի, Չանախճի, Չահանգչի գյուղն ունի հարուստ պատմություն: Ա.Եզիկյանի վկայությամբ, գյուղի բնակիչները 13-րդ դարում, մոնղոլական արշավանքների ժամանակ, գաղթել են Արցախի Չանախչի գյուղից և տեղավորվելով ավերված գյուղերից մեկում՝ այն վերաշինել են և նրան տվել իրենց հայրենի գյուղի անունը: 1780թ. խուսափելով պարսկական շահի հետապնդումներից՝ գյուղում բնակություն է հաստատում մեծահարուստ Ամիրխանյանը կամ խոջա Ամիրխանը: Նա կարողանում է իր շուրջը համախմբել գյուղի բնակիչներին, գյուղից քշում է քրդերին, դառնում տանուտեր, գյուղացիներին սովորեցնում որմնադրության արհեստը[8]:

Չանախչին գտնվում էր Քղիից, Առեք, Դարման, Սարիբաշ գյուղերից հարավ-արևմուտք: Չանախչին «խիստ զարգացած և հարուստ գյուղ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, գ. 161, թ. 11, 12:
[3] Նույն տեղում, թ. 8:
[4] Նույն տեղում, գ. 140, թ. 26:
[5] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8:
[7] Նույն տեղում, գ. 140, թ. 26:
[8] *Եզիկեան Ա.,* Պատմություն Կարնո կուսակալության Քղի գավառի Չանախչի գյուղի, Բելիվիլ, 1977, էջ 63-65:

մըն էր»,- հիշեցնում էր հեղինակներից մեկը և ավելացնում, որ բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Գյուղի 31 բնակիչներ զբաղվում էին արհեստներով՝ դարբնությամբ, կոշկակարությամբ, հյուսնությամբ, քարակոփությամբ, որմնադրությամբ, հինգ հոգի ջրաղացպաններ էին, 16-ը՝ առևտրականներ[1]: Չանախչիում կային 125 մեղվի փեթակ, 2000 գլուխ այծ, ոչխար, 45 լուծ եզ, 700 գլուխ խոշոր եղջերավոր անասուն[2]:

Գյուղի եկեղեցին կառուցվել է հիշյալ Ամիրխանյանի միջոցով: Գործում էր վարժարան, որն ուներ երկու ուսուցիչ և 140 աշակերտ[3]: Դպրոցի ծախքերը հոգում էին գյուղացիները, պակասը լրացնում էր եկեղեցին: Վարժարանին մեծապես օգնում էին պանդխտության մեջ գտնվող չանախչեցիները, որոնք ԱՄՆ-ում կազմել էին «Ուսումնասիրաց ընկերություն»[4]:

Ա.Եզիկյանը վստահեցնում է, որ գյուղն ունեցել է 350 տուն զուտ հայ բնակչություն[5]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 100 տուն, 700 շունչ հայ և 15 շունչ մահմեդական բնակչություն[6]:

Փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղն ունեցել է 220 տուն, «1400 անձով» բնակչություն[7]: Հաջորդ փաստաթուղթը վկայում է 200 տուն, 1400 շունչ բնակչության մասին[8]: Միջին տարբերակով գյուղում կունենանք 217 շուն, 1400 շունչ հայ, 15 տուն, 105 շունչ թուրք բնակչություն:

Սերկևիլ գյուղը գտնվում էր Քղիից հարավ-արևմուտք՝ «ճիշտ սերկևիլի նման» հատակագծով կառուցված[9]: Գյուղը շրջապատված էր խնձորի, տանձի, սերկևիլի, բալի, կեռասի, ընկույզի, կարմիր և սպիտակ ալոճի, բալի այգիներով: Գյուղի ստորոտից հոսում է Խուբս գետակը, մոտակայքում, բլրի վրա Ս.Փրկիչ վանքն է: Վանքի վերաշինության համար պոլսահայ հարուստ տիկին Օդետա Մուրադյանը նվիրաբերում է 6000 ոսկի, բայց գործը հանձն առած հաճի Ասատուր աղան թերանում է իր պարտականությունների մեջ, վանքը մնում է նույն վիճակում, չեն կառուցվում ուխտավորների համար նախատեսված 25-30 սենյակները:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 11, 12:
[2] Նույն տեղում, թ. 8:
[3] Նույն տեղում, թ. 17-18:
[4] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 1032, թ. 17:
[5] *Եզիկեան Ա.,* նշված գիրքը, էջ 65:
[6] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 191:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 25 շրջերես:
[8] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[9] Նույն տեղում, գ. 140, թ. 9:

Դրա փոխարեն, օգտագործելով ժողովրդի խանդավառությունը, աղան 1870թ. կառուցում է Ս.Սարգիս անունով մի «պարզ եկեղեցի»[1]:

Ս.Փրկիչ վանքն ուներ ջրաղաց, որից ստացած միջոցները հոգաբարձուները մտցնում էին վանքի ու վարժարանի ծախսերի մեջ:

Սերկևիլ գյուղի վարժարանը երկսեռ էր, ուներ երկու ուսուցիչ, 60 աշակերտ[2]: Գյուղի երիտասարդությունը, վկայում է հեղինակներից մեկը, ապրում էր «զարթնումի շրջան», հայրենասերներ էին ու «յեղափոխական ռահվիրաներու դերին մէջ էին»[3]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, երեք մարդ առևտրականներ էին[4]:

Գյուղն ուներ 100 մեղվի փեթակ, 1500 գլուխ մանր եղջերավոր և 600 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 50 զույգ եզ, 70 էշ, ձի, ջորի[5]:

Գյուղի բնակչության մասին ունենք հետևյալ տեղեկությունները. 170 տուն, 1200 շունչ հայ, 10 տուն թուրք[6], 92 տուն, 644 շունչ հայ, 120 շունչ մահմեդական[7], 85 տուն, 650 շունչ հայ, 20 տուն թուրք բնակչություն[8]:

Միջին տարբերակով կունենանք 115 տուն, 831 շունչ հայ, 18 տուն, 110 շունչ թուրք բնակչություն:

Խոսնակ, Օսնակ, Օռնակ, Հուսնակ գյուղը համարվում էր նաև համանուն գյուղախմբի կենտրոն: Գտնվում էր Քղիից երեք ժամ կամ 20 կմ հեռավորության վրա, հարավարևելյան կողմում, Աստղաբերդ գյուղից 4.5 կմ հյուսիս-արևմուտք, Դարման գյուղի հետ գրեթե նույն հարթության վրա: Ս.Կիրակոս վանքը երբեմն կոչվում էր Խոսնակի անունով: Գյուղը կառուցված էր բարձունքի վրա, անտառախիտ վայրում: Ս.Կիրակոս վանքը պարսպապատ էր, ուներ մի քանի եկեղեցիներ: Այնտեղ էր գտնվում Քղիի առաջնորդարանը: Վանքում կային հարուստ ձեռագրեր: 19-րդ դարում վանքը վերանորոգել է Ավետիս վարդապետը:

Խոսնակ գյուղը գտնվում էր հովտում, որտեղից հոսում էր Աստղաբերդ գետակը: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Գյուղում գործում էին շուրջ 20 արհեստավոր, 6 առևտրական:

---

[1] Նույն տեղում, թ. 9 շրջերես:
[2] Նույն տեղում, գ. 161, թ. 17-18:
[3] Նույն տեղում, թ. 9 շրջերես:
[4] Նույն տեղում, թ. 11-12:
[5] Նույն տեղում, թ. 8:
[6] Նույն տեղում, գ. 161, թ. 9 շրջերես:
[7] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8, 8 շրջերես:

Անասնապահությամբ զբաղվողներն ունեին 2000 գլուխ այծ, ոչխար, 40 զույգ եզ, 450 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 100 գլուխ էշ, ջորի, ձի:

Գյուղում կային Ս.Մինաս եկեղեցի, վարժարան, որն ուներ 90 աշակերտ, երկու ուսուցիչ[1]:

1872-1873թթ. գյուղում ապրում էին 55 տուն հայ, 33 տուն թուրք բնակչություն[2]: Փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է 120 տուն, 1000 շունչ հայ և 15 տուն թուրք բնակչություն[3]: 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբների բնակչության վերաբերյալ հաջորդ փաստաթուղթը հայտնում է, որ գյուղում բնակվում էին 80 տուն, 580 շունչ հայ և 350 շունչ թուրքեր[4]:

Հաջորդ փաստաթղթի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 95 տուն, 850 շունչ հայ և 55 տուն թուրք բնակչություն[5]:

Միջին տարբերակով կունենանք 70 տուն, 517 շունչ հայ, 38 տուն, 205 շունչ թուրք բնակչություն:

Հողաս գյուղը գտնվում էր Խուբս գետի հովտում, Քղիից հարավ-արևմուտք, երկու ժամ հեռավորության վրա: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Գյուղի 13 արհեստավորները և երկու առևտրականները հիմնականում հոգում էին տեղական կարիքները[6]: Հեղինակներից մեկի վկայությամբ, Հողասի հայությունը «նյութական, տնտեսական և բարոյական ու կրթական բավական զարգացած աստիճանի մէջ էին»[7]:

Գյուղն ուներ եկեղեցի, վարժարան, ուր կրթություն էին ստանում 60 երկսեռ աշակերտներ[8]: Վարժարանի ծախքերը հոգում էին հողասցիների ԱՄՆ-ում գտնվող պանդուխտները, որոնք կազմել էին «Ուսումնասիրաց ընկերություն»[9]:

19-րդ դարի վերջերին, 20-րդ դարի սկզբներին գյուղն ունեցել է 50 տուն, 350 շունչ հայ և 100 շունչ մահմեդական բնակչություն[10]: Մեկ այլ

[1] Նույն տեղում, գ. 161, թ. 11-12, թ. 8, 8 շրջերես, թ. 18:
[2] ՏԲ, հ. 2, Ե., 1988, էջ 783:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 26 շրջերես:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8, 8 շրջերես:
[6] Նույն տեղում, գ. 161, թ. 11, 12:
[7] Նույն տեղում, գ. 140, թ. 8 շրջերես:
[8] Նույն տեղում, գ. 161, թ. 18:
[9] Նույն տեղում, գ. 140, թ. 8 շրջերես:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:

հաղորդմամբ՝ 150 տուն, 995 շունչ հայ և 15 տուն թուրք բնակչություն[1]: Հաջորդ վկայությամբ, գյուղի 80 տներից 55-ը՝ 450 շունչ բնակչությամբ, հայկական էր[2]: Միջին տարբերակով կունենանք 85 տուն, 588, 3 շունչ հայ 16 տուն, 127 շունչ թուրք բնակչություն:

Ապողնակ, Ապղնակ, Աբողնաք գյուղը գտնվում էր Բաթգյոլ լեռան լանջին, Դարման գյուղից հյուսիս-արևելք, Ս.Կիրակոս վանքից հյուսիս, Քղիից հարավ-արևելք: Գյուղի մոտ էին գտնվում Ապողնակ բերդի ավերակները: Ենթադրվում է, որ հենց այս բերդի անունից էլ առաջացել է գյուղի անունը:

Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, անասնապահությունը, կային նաև փոքրաթիվ արհեստավորներ և առևտրականներ: Գյուղի Ս.Հակոբ եկեղեցին գործող էր, ուներ քահանա: Վարժարանում սովորում էր 60 աշակերտ[3]: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, կային նաև առևտրով և արհեստներով զբաղվողներ: Գյուղն ուներ 700 գլուխ այծ, ոչխար, 50 զույգ եզ, 600 գլուխ նախիր, 55 ձի, ջորի, էշ[4]:

Զուտ հայաբնակ փոքրիկ գյուղ էր: Ուներ 45 տուն, 315 շունչ բնակչություն[5]: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, թե գյուղն ունեցել է 120 տուն, 1000 շունչ հայ, 7 տուն թուրք բնակչություն[6]: 70 տուն, 450 շունչ հայ, 5 տուն թուրք բնակչության մասին է վկայում հաջորդ փաստաթուղթը[7]: Միջին տարբերակով կունենանք 78 տուն, 588 հայ, 6 տուն, 42 շունչ թուրք բնակչություն:

Ճպռ գյուղը հիշատակվում է նաև *Ճպր* անունով: Գտնվում էր Քղիից հարավ-արևմուտք, կես ժամ հեռավորության վրա[8]: Դիրքը դաշտային է, երկրագործության համար բարենպաստ: Բացի երկրագործությունից, բնակչությունը զբաղվում էր նաև անասնապահությամբ, մասնակիորեն՝ առևտրով, արհեստներով: Անասնապահներն ունեին 500 գլուխ խոշոր, 500 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 50 զույգ եզ[9]:

Ինչպես գավառի մյուս գյուղերում, Ճպռում ևս տարածված էր պանդխտությունը: Շուրջ 200 ճպռցիներ աշխատում էին ԱՄՆ-ում, այն-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 8 շրջերես:
[2] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[3] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[4] Նույն տեղում, թ. 8 շրջերես:
[5] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 191:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 26 շրջերես:
[7] Նույն տեղում, գ. 161, թ. 8:
[8] Նույն տեղում, գ. 140, թ. 7 շրջերես:
[9] Նույն տեղում, գ. 161, թ. 8 շրջերես:

տեղ կազմել էին «Ուսումնասիրաց ընկերություն» և օգնում էին գյուղի վարժարանին: Վարժարանի հաջորդ հովանավորը ժողովուրդն էր և Ս.Աստվածածին եկեղեցին, որն իր հասույթից բաժին էր հանում վարժարանին:

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբներին գյուղն ունեցել է 50 տուն, 350 շունչ հայ և 6 շունչ մահմեդական բնակչություն[1]: Մեկ այլ վկայության համաձայն, գյուղն ունեցել է 100 տուն, 1100 շունչ հայ բնակչություն[2]: Երրորդ աղբյուրը հայտնում է, որ գյուղում ապրել է 64 տուն, 480 շունչ հայ և 11 տուն թուրք բնակչություն[3]:

Միջին տարբերակով կունենանք 71 տուն, 643 շունչ հայ, 8 տուն, 59 շունչ թուրք բնակչություն:

Ղազի գյուղը կառուցված է հարթ բլրակի վրա: Ծառաշատ, աղբյուրաշատ, բարեկեցիկ ու հարուստ գյուղ էր: Սկսած 80-ական թվականներից, երբ սաստկացան հալածանքներն ու բռնագրավումները, գյուղը կորցրեց նախկին փայլը և ընկավ թշվառության մեջ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Գործում էին նաև տեղական կարիքներն ապահովող արհեստավորներ և կտավագործներ: Գյուղն արտահանում էր խնձոր, տանձ, ընկույզ, առանց ոստերի բարդու տախտակ:

Գյուղն ուներ Ս.Եղիա անունով եկեղեցի, որը կառուցվել էր 1870թ.: Եկեղեցուն կից գործում էր վարժարան, ուր սովորում էր 20 աշակերտ[4]:

40 տուն, 400 շունչ հայ, 20 տուն, 150 շունչ թուրք բնակչություն է գրանցել փաստաթղթերից մեկի հեղինակը[5]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 15 տուն, 105 շունչ հայ և 168 շունչ թուրք բնակչություն[6]: 25 տուն, 180 շունչ հայ և 50 տուն թուրք բնակչության մասին է հայտնում մեկ այլ փաստաթուղթ[7]:

Միջին տարբերակով կունենանք 26 տուն, 226 շունչ հայ և 74 տուն, 222 շունչ թուրք բնակչություն:

Սագաձոր գյուղը գտնվում էր ձորակի մեջ, շրջապատված հարավային կողմից Խոշգելդի և հյուսիսային կողմից՝ Մարտիկ դաղ լեռներով: Քղիից հեռու էր երկու և կես ժամ հեռավորության վրա, նրանից հարավ-

[1] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 7 շրջերես:
[3] Նույն տեղում, գ. 161, թ. 8 շրջերես:
[4] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 793, թ. 6:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 7 շրջերես:
[6] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ, 161, թ. 8:

արևելք՝ Յոլմեչ և Չոմլակ գյուղերի հարևանությամբ: Գյուղն ուներ եկեղեցի և նրան կից վարժարան՝ 55 աշակերտով[1]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ արհեստներով և առևտրով՝ «գազի խեժի ու շրեշի արտադրությամբ, բաւական բարեկեցիկ վիճակ մը ունեին»,- գրում էր հեղինակներից մեկը[2]:

Գյուղի մոտ կար ածխահանք: Մոտակայքում կան խորունկ փոսեր, որոնք գետնափոր, լաբիրինթոս հիշեցնող ուղիներով կապվում են արտաքին աշխարհի հետ: Համաձայն ավանդության, հայ Արշակունի թագավորներն այդտեղ պահել են իրենց սագերին, որտեղից էլ առաջացել է գյուղի անունը[3]:

80 տուն, 640 զուտ հայ բնակչություն ուներ գյուղը, հավաստում է փաստաթղթերից մեկը[4]: Գյուղի 120 բնակիչներ գտնվում էին ԱՄՆ-ում: Կարինի առաջնորդարանը ներկայացնում է հետևյալ տեղեկությունը՝ 60 տուն, 420 շունչ զուտ հայ բնակչություն[5]: Մեկ այլ փաստաթուղթ վկայում է 65 տուն, 450 շունչ հայ բնակչության գոյության մասին[6]: Միջին տարբերակով գյուղում կունենանք 58 տուն, 503 շունչ հայ բնակչություն:

Հերտիֆ, Հերտիվ, Հարթիվ, Հերտիճ, Հերթն գյուղը գտնվում է Քղիից չորս ժամ հեռավորության վրա, նրանից հարավ-արևմուտք, քրդացած հայերի Կմեք և Խըռ գյուղերի հարևանությամբ, տափարակ հովտում, որի հարավային կողմում պատմական Ս.Լույս լեռն է: Ավանդությունը պատմում է, որ ջրհեղեղի ժամանակ, երբ Նոյ նահապետի տապանը քսվում է լեռան կատարին, նահապետը նայում է պատուհանից, տեսնում լեռը, բացվող առավոտը և լեռը կնքում «սուրբ Լույս» անունով: Ս.Լույսից հյուսիս-արևելք կա ևս մեկ լեռ. այն պահին, երբ նահապետը պատուհանից նայելիս է եղել, մի սքանչելի տեսարան է երևացել: Այնտեղ մի հրաշալի մանկիկ գրկած՝ նստած էր Հայր Աստվածը: Այդ լեռանը նահապետը տալիս է Միածին անունը:

Այս երկու լեռներն էլ մինչև 19-րդ դարի վերջերը սրբատեղի էին համարվում նաև քրդերի համար: Տոնախմբությունը կատարվում էր Վարդավառի տոնին: Գիշերով ճանապարհ էին ընկնում հայերն ու

[1] Նույն տեղում, թ. 18:
[2] Նույն տեղում, գ. 140, թ. 9:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8:

քրդերը՝ իրենց հետ տանելով մատաղացու գառներ ու ոչխարներ: Այնտեղ, լեռան կատարին ստանալով հայ քահանայի և քուրդ սեյիաների օրհնանքներն ու աղոթքը, կատարվում էր զոհաբերությունը, մատաղը բաժանվում էր ներկաներին, ապա ուխտավորները գնում էին Սուրբ Լույս աղբյուրը և երեկոյան վերադառնում իրենց գյուղերը:

Հերտվը, գավառակի բարեկեցիկ և հայաշատ գյուղերից մեկը լինելուց բացի, աչքի էր ընկնում նաև կազմակերպվածությամբ, համախմբվածությամբ:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Հատկապես տարածված էին կտավագործությունը, բրդի և բամբակի վերամշակությունը[1]:

Գյուղն ուներ գործող եկեղեցի, կից վարժարանն էր՝ «գեղեցիկ ու նոր շինուած»[2]:

Զուտ հայաբնակ գյուղ էր՝ 150 տուն, 1500 շունչ[3]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 90 տուն, 630 շունչ բնակչություն[4]: Մեկ այլ աղբյուրի հաղորդմամբ՝ 100 տուն, 700 շունչ բնակչություն[5]:

Միջին տարբերակով կունենանք 113 տուն, 943 շունչ զուտ հայ բնակչություն:

Խոլխոլ գյուղը գտնվում էր Քղիից հարավ-արևմուտք, Ս.Լույս լեռան հարավարևելյան լանջին: Ունի պատմական անցյալ: Քղիի գավառակի մասին «Վշտապատումի» հեղինակ, Խուբս գյուղացի, ավագ ուսուցիչ Նազարեթ Փոստոյանը վկայում է, որ իր շրջագայության ժամանակ գյուղի գերեզմանոցում հանդիպել է մի տապանաքար, որը «657 տարուան տապանագիր է, վրան այսպես գրուած է. «Աստ հանգչի Պեշար իշխանի որդի... (աւրուած) վաղամեռիկ, որն՝ ի քսանամեայ ծաղիկ հասակին հանգեաւ ի տէր»»[6]:

Այս տապանագիրը հիմք ընդունելով՝ հայտնվում է այն կարծիքը, որ գյուղը հանդիսացել է Խորխոռունի իշխանների սեփականությունը, իսկ գերեզմանը պատկանել է Խորխոռունի Պեշար իշխանի որդուն[7]:

Բացի պատմական այս վերլուծությունից, հեղինակը հայտնում է այն կարծիքը, թե շրջակա գյուղերից մեկի քրդերն իրենց համարում են

[1] Նույն տեղում, գ. 140, թ. 22 շրջերես:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 191:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8:
[6] Նույն տեղում, գ. 140, թ. 23:
[7] ՏԲ, հ. 2, Երևան, 1988, էջ 764:

նույն շառավղի շարունակությունը և իրենց ցեղապետի տանը պահելով սուրբ գրքեր, խաչեր՝ պաշտում էին դրանք[1]:

Խոլխոլը, սկսած 18-րդ դարի վերջից, հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսից, ենթարկվեց քրդական ցեղերի ներթափանցմանը, հայերը դիմեցին արտագաղթի, և ի վերջո, ըստ հեղինակի, գյուղում մնացին 12 ընտանիք, 70-80 շունչ հայեր[2]:

Գյուղի եկեղեցին, վարժարանը ավերվել են 1895թ. կոտորածների ժամանակ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, հատկապես անասնապահությամբ:

Ավրանիկ, Ավրդնիկ, Ավրահնք գյուղը ենթադրվում է, որ հնում անվանվել է Վարդենիք, որովհետև, ինչպես վկայում է փաստաթղթերից մեկի անհայտ հեղինակը, Վարդաստանը «գոտիի նման կգրկե գյուղի մեջքը»[3]:

Ավրանիկը գտնվում էր Քղիից հարավ-արևելք: Գյուղի մոտ գտնվում էին բերդաքաղաքի ավերակները:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Գյուղի Ս.Հակոբ եկեղեցին կառուցվել էր 1249թ.: Կից գործում էր վարժարանը:

1872-1873թթ. գյուղն ունեցել է 20 տուն հայ, 26 տուն քուրդ բնակչություն[4]: Մեկ այլ աղբյուր պնդում է, թե գյուղում ապրել են 40 տուն հայ, 25 տուն քուրդ բնակիչներ[5]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղի բնակչությունը կազմված էր 20 տուն, 140 շունչ հայերից և 174 շունչ քրդերից (մահմեդականներից)[6]:

Միջինը՝ 20 տուն, 187 շունչ հայ, 26 տուն, 180 շունչ թուրք բնակչություն:

Օրոր գյուղը գտնվում էր Քղիից հարավ-արևելք, Քղի գետակի վտակ Օրոր գետակի հովտում: Գյուղի մասին Ղ.Ինճիճյանը հայտնում է. «...անցնէ վտակն Օրոր, որ խառնի յԵփրատ, յորոյ վերայ կառուցեալ կայ կամուրջ քարաշէն կամարակապ, ‘ի խելս կամրջին երեւին մեծամեծ մարմարիոնեայք աստ եւ անդ անկեւանք»[7]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 110:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, ֆ. 476, ց, 1, գ. 110, թ. 110:
[4] ՏԲ, հ. 1, Ե., 1986, էջ 369:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 110, թ. 116:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:
[7] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 108:

Հիշյալ հոյակերտ կամուրջն անվանվում էր նաև Քահանայի կամուրջ: Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին կառուցվել էր 1131թ., նրան կից 19-րդ դարի 80-ական թվականներից սկսել է գործել վարժարանը, որն ունեցել է 15 աշակերտ[1]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: 1873թ. գյուղն ունեցել է 73 տուն հայ բնակչություն (մոտ 511 շունչ- Հ.Զ.)[2]: Հաջորդ վկայությամբ, գյուղում ապրել են 90 տուն, 630 շունչ հայ և 140 շունչ մահմեդականներ[3]: Մեկ այլ աղբյուր հայտնում է, թե գյուղն ունեցել է 105 տուն, 700 հայ բնակչություն[4]:

Միջին տարբերակով կունենանք 89 տուն, 613 շունչ հայ, 20 տուն, 140 շունչ թուրք բնակչություն:

Առինջ, Առինձ, Առինչ, Առիչ, Առուզ գյուղը գտնվում էր Քղիից հյուսիս-արևելք, Մելիքան, Ջերմակ, Խոփձոր գյուղերի հարևանությամբ, Քղի գետի հովտում: Մինչև ավերիչ երկրաշարժը, 19-րդ դարի առաջին կեսին գյուղն ուներ 200 տուն, 1200 շունչ բնակչություն: Երկրաշարժից հետո, մինչև գյուղի վերականգնումը, այնտեղ մնացին ընդամենը 70 տուն, 600 շունչ հայ բնակիչներ[5]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղում ապրել են 30 տուն, 210 շունչ հայեր[6]:

Միջինը՝ 50 տուն, 450 շունչ հայ բնակչություն:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով, մասնավորապես նաև առևտրով:

Գյուղն ուներ եկեղեցի, վարժարան, ուր սովորել է 30 աշակերտ:

Քղիի գավառի նշանավոր գյուղերից էին Ապեվանքը, Քարբոյսը, Ագրակը, Սարիպաշը, Ինախը, Ամառիճը, Մելիքան, Շեն, Ջերման, Խարապեկ, Լիչիք, Չիֆթլիկ, Բերկրի, Արեգ, Ասեղ, Խաչաթուր, Խաս գյուղը, Հաբկապ և այլ գյուղերը, որոնք մեծ մասամբ հայաբնակ էին կամ խառը բնակչություն ունեին:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 13:
[2] ՀՍՀ, հ. 12, Ե., 1986, էջ 602:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 191:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 8:
[5] Տբ, հ. 2, էջ 326:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 192:

Ց ՈՒ Ց Ա Կ

Քղիի գավառի հայաշատ գյուղերի
(որոշ հաշվարկներ կատարված են միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Դարման	416	2400
Խուբս	260	1693
Չանախչի	217	1400
Աստղաբերդ	186	1220
Ճերմակ	171	1216
Ասեք	187	1204
Հերտիվ	113	943
Սերկևիլ	115	831
Ճպո	71	643
Օրոր	89	613
Ապողնակ	78	588
Հողաս	85	588
Խոսնակ	70	517
Սագաձոր	58	503
Առինջ	50	405
Ղազի	26	228
Ավրանիկ	30	210
Խոլխոլ	12	80
Ակիպիվան	18	123
Յոլ-մէջ	18	123
Օռնակ	80	530
Չան	30	210
Քերպոզ	50	350
Աղբղուտ	15	105
Սարիպաշ	15	105
Չըլբպե-մըզչե	15	105
Աղային-շենլիկ	20	140
Հազստուն	50	350

	տուն	շունչ
Տինեկ	18	126
Խարաբեկ	40	280
Մելիքան	40	280
Ջերմակ	27	175
Ամառիջ	27	175
Խուպեք	20	140
Աղբակ	30	210
Լղիք	40	280
Չիֆթլիկ	35	385

Բայազետի գավառը հիմնականում համապատասխանում էր պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի Կոգովիտ գավառին: Հյուսիսարևելյան կողմում սահմանակից էր Կարսի մարզին և Երևանի նահանգին, հյուսիս-արևմուտքից՝ Կարինի գավառին, արևմուտքից՝ Իրանին, հարավում՝ Բիթլիսի և Վանի նահանգներին: Գավառի բնական սահմանները հյուսիսում հասնում էին Հայկական պար լեռնաշղթային, հարավում Թոնդուրեկի, Ծաղկունյաց լեռներն էին:

Մինչև 14-րդ դարը գտնվում էր Բյուզանդական կայսրության կազմում: 15-16-րդ դարերում ենթարկվեց թուրքերի թալանչիական արշավանքներին: 1555թ. Ամասիայի պայմանագրով միացվեց Օսմանյան կայսրությանը և կառավարումը հանձնվեց քրդական Սլիվանլի (Սլիվան) ցեղին: Այս կարգավիճակը պահպանվեց մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը: 18-րդ դարում կազմավորվեց Բայազետի փաշայությունը, որի կազմի մեջ էին մտնում նաև Բայազետի, Դիադինի և Ալաշկերտի գավառները: 19-րդ դարի երկրորդ կեսին փաշայությունը վերացվեց, և գավառը միացվեց Կարինի նահանգին՝ այդ կարգավիճակով մնալով մինչև 1920թ.:

«Եւ ի ստորոտ լերինն է երկիր մի մեծ եւ դաշտային. գիւղք եւ աւանք բազում, եւ բերդորայք անառիկք առ ստորոտով լերանց մօրն Մասիսոյ. եւ ունի բերդ պարոնանիստ որդոցէ որդիք՝ Շաւշիկ, Պայազիտ, Խամութ դալան եւ Դիադին ի գլուխս դաշտին»,- գրում էր Հ.Կարնեցին[1]:

Ասել է՝ Բայազետի գավառը սկսվում էր Արարատի հարավարևմտյան լանջերից, որը հինավուրց Գոգհովիտն էր, Բայազետի գոգա-

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 21:

վորությունը կամ դաշտը, որն անվանում են նաև Գռնավուկի դաշտ: Այն ունի 20-25 վերստ երկարություն և գրեթե նույնքան էլ լայնություն:

Դաշտը բաժանվում է երկու մասի՝ վարելահողեր, արոտավայրեր, խոտհարքներ և լճեր, ճահիճներ, որոնք պատած են եղեգներով:

Կլիման թեև չորային է, բայց շրջակայքի գետակները, լճակները կարծես փոխում են գավառակի բնությունը՝ այն դարձնելով բարեխառն ու առողջարար:

Գավառի զարդը Գայլատվա լիճն է (Բալդ-գյոլը): Լճի մասին գրեթե բանաստեղծական տողեր է գրել Ա-Դոն. «Արարատից դէպի արեւմուտք լեռնաշղթայի բարձունքներում, Սինէկի եւ Կըզլ-Ջիարէթի լեռների մի խորունկ հովտում նիրհում է Բալըդ-գեոլը, պատմական Գայլատուա լիճը. դա, կարծէք այդ լեռների գերւած կոյսը լինի, որն անվերջ ծփալով, բախւում է իրեն օղակի պէս շրջապատող լեռնանման ափերին եւ փրկութիւն չգտնելով, իր կուսական ողբն է ողբում»[1]:

Լիճն ունի հրաբխային ծագում, ծովի մակերևույթից բարձր է 2247 մ, երկարությունը 4 կմ է, լայնությունը՝ գրեթե 1-2 կմ: Լիճը երբեմն նմանեցվում է Սևանա լճին: Ենթադրվում է, որ անունն ստացել է մոտակայքում գտնվող ավերված դաստակերտից: Ձկնառատ լիճ է, հայտնի է հատկապես կարմրախայտ ձկով, որն իբր բերվել է Սևանից: Լճի մեջ թափվում են մի քանի գետակներ, սկիզբ է առնում Գայլաուտ գետը, որը երբեմն անվանում են նաև Առու:

Լճի գոյացման մասին գոյություն ունի մի ավանդություն, համաձայն որի, լճի տեղում նախկինում գոյություն է ունեցել մի սառնորակ աղբյուր: Յուրաքանչյուր անգամ ջուր վերցնելուց հետո փակում էին նրա ակը: Պանդխտությունից վերադարձած եղբոր մասին լսելուց հետո ջրի գնացած քույրը մոռանում է փակել աղբյուրի ակը, հասնում է տուն, բռնվում զրույցի, որն այնքան երկար է տևում, որ երբ քույրը հիշում է աղբյուրի ակը չփակելու մասին, արդեն ուշ էր, և ջրերը, լցվելով գոգավորության մեջ, գոյացնում են Գայլատու լիճը: Լիճը հայտնի է նաև Գայլատու ծովակ, Գայլատվա ծովակ, ծով Գայլատո, Ձկնաբեր ծովակ անուններով:

Գավառի բնությունը բարենպաստ էր երկրագործության, անասնապահության, այգեգործության համար: Հ.Էփրիկյանի հաշվումներով, գավառում արտադրվել է 2.080.000 չինիկ-5 հոխա ցորեն, 1.569.000 չինիկ գարի, 34.000 չինիկ կտավատ, 26.000 չինիկ կորեկ, 1000 չինիկ ոսպ, ընդամենը՝ 3.660.000 չինիկ: Այնուհետև՝ 7000 հոխա լոբի, 2000 հոխա բակ-

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 202:

լա, 50.000 հոխա սեխ և պաստեղ, 25.000 հոխա սոխ, 25.000 հոխա եգիպտացորեն, 2000 հոխա գետնախնձոր, 2000 հոխա ծիրան, 15.000 հոխա շաղգամ, 55.000 հոխա կաղամբ, ընդամենը՝ 183.000 հոխա[1]:

Գավառում զարգացած էր նաև անասնապահությունը: Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում էր 701.100 գլուխ, խոշոր եղջերավորներինը՝ 147.000, ձիերինը և քուռակներինը՝ 26.500, էշերինը և ջորիներինը՝ 13.500, ընդամենը՝ 333.100 գլուխ[2]: Բացի նշված բերքից ու անասունների գլխաքանակից, գավառում արտադրվում էր նաև 80.000 հոխա բուրդ, 7000 հոխա այծեմազ, 2000 կտոր եզան և գոմշի կաշի, 2000 կտոր ոչխարի և այծի կաշի[3]:

19-րդ դարի երկրորդ կեսին գավառն ուներ հինգ գավառ (կազաններ), Բայազետի, Դիադինի, Կարաքիլիսեի, Ալաշկերտի, Այնթափի կամ Դութաղի: Գավառի բնակչության թվաքանակի մասին ունենք հետևյալ տեղեկությունները. Բայազետ քաղաքում, 350 տուն, 2450 շունչ հայ բնակչություն, գավառակում՝ 210 տուն, 1470 շունչ, Դիադինի գավառակում՝ 156 տուն, 1992 շունչ, Կարաքիլիսե քաղաքում՝ 350 տուն, 2450 շունչ, գավառակում՝ 274 տուն, 1918 շունչ, Թոփրակ կալե քաղաքում՝ 200 տուն, 1400 շունչ, Ալաշկերտի գավառակում՝ 640 տուն, 4400 շունչ, Դութաղի գավառում՝ 203 տուն, 1421 շունչ[4]:

Ռուս հեղինակ Ա.Կոլյուբակինը հայտնում է հետևյալ վիճակագրությունը. Բայազետի գավառում 107 բնակավայր, 2458 տուն, որից 230 տուն հայ, 2228 տուն մահմեդական բնակչություն: Գավառում հավաքվել է 144.300 պիաստր աշար: Բնակչությունն ունեցել է 35.345 գլուխ խոշոր եղջերավոր, 95.380 գլուխ մանր եղջերավոր անասուն: Դիադինի գավառում՝ 36 գյուղ, 518 տուն, որից 20-ը՝ հայկական, 498 տուն՝ մահմեդական: Գավառում եղել է 4680 գլուխ խոշոր, 12.350 գլուխ մանր եղջերավոր անասուն: Կարաքիլիսեի գավառում՝ 86 բնակավայր, 1664 տուն, որից 396 տուն հայ և 1295 տուն մահմեդական, հավաքվել է 286.250 պիաստր աշար, խնամվել է 12.655 գլուխ խոշոր, 13.845 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Ալաշկերտի գավառում՝ 117 բնակավայր, 2647 տուն, որից 644 տուն հայ, 2003՝ մահմեդական: Բնակչությունն ունեցել է 21.350 գլուխ խոշոր, 540 գլուխ մանր եղջերավոր անասուն: Այնթափի կամ Դութաղի

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 1, էջ 394:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 319, թ. 63 շրջերես:

գավառում՝ 113 բնակավայր, 2244 տնից 99 տուն հայ, 2145 տուն մահմեդական: Հավաքվել է 20.269 պիաստր աշար, 18.960 գլուխ խոշոր և 31.500 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Ընդհանուր առմամբ, Բայազետի գավառում կար 7 գավառակ, 50 նահի (վիճակ), 5 քաղաք, 1005 բնակավայր, 22.206 տուն, որից 3369 հայկական, 18.837 մահմեդական: Հավաքվել է 2.312.969 պիաստր աշար: Անասունների գլխաքանակը կազմում էր՝ 1.224.154 գլուխ խոշոր, 428.145 գլուխ մանր եղջերավոր[1]:

Մեկ այլ աղբյուր հայտնում է, որ Բայազետ գավառն ուներ 33.360 բնակչություն, որից քրիստոնյաներ էին 5810-ը, մահմեդականներ՝ 27.550-ը[2]:

Ալ. Երիցյանի վիճակագրությամբ, Բայազետի գավառում ապրում էին հետևյալ թվով բնակիչներ. Բայազետ քաղաքում՝ 18 տուն հայ, 108 տուն քուրդ, 134 տուն թուրք: Գավառակում՝ 759 տուն թուրք, 660 տուն քուրդ, 121 տուն հայ: Կամ, բնակչության 50 տոկոսը թուրք էր, 43-ը՝ քուրդ, 7-ը՝ հայ: Նահիե Խամուր՝ 41 գյուղ, 40 քրդական, 1 եզիտական, 6760 շունչ քուրդ, 210 եզիտ, 93 շունչ հայ կամ 96.5 տոկոս քուրդ, 1 տոկոս հայ: Բաղնոց նահիե՝ 19 գյուղ, 11 քրդական, 4 հայկական, 1 թուրքական, 3 խառը. 94% քուրդ 2.5% թուրք և 4.3% հայ:

Ղարաքիլիսեի գավառում՝ 53 գյուղ, 27 քրդական, 5 եզիտական, 7 պարսկական, 10 հայկական, 4 խառը: Գյուղերում կային 639 տուն քուրդ, 96 տուն եզիտ, 352 տուն պարսիկ, 243 տուն հայ: Այսինքն՝ գավառակի 10.866 բնակչությունից քրդեր էին՝ 4856 շունչը, եզիտներ՝ 680, 2708՝ պարսիկներ էին, 2622՝ հայեր: Կամ՝ 44.5%-ը քուրդ էր, 6%-ը՝ եզիտ, 25%-ը՝ պարսիկ, 24.5%-ը՝ հայ:

Ալաշկերտի գավառակում՝ 70 գյուղ, որից 53-ը քրդական, 2-ը՝ եզիտական, 7-ը՝ հայաբնակ, 6-ը՝ խառը: Ըստ շնչերի՝ 9040 քուրդ, 156՝ եզիտ, 2978՝ հայ, կամ՝ 74.5%-ը՝ քուրդ, 24%-ը՝ հայ, 1%-ը՝ եզիտ:

Այնթափ գավառակ՝ 44 գյուղ, որից 30-ը քրդական, 9 եզիտական, 1 հայաբնակ: Ըստ շնչերի. 4416 քուրդ, 1396 եզիտ, 150 հայ: Այսինքն՝ բնակչության 74.5%-ը քրդեր էին, 23%-ը՝ եզիտ, 2%-ը՝ հայ[3]:

Վ.Քինեի վիճակագրությամբ, Բայազետ քաղաքն ուներ 2000 շունչ բնակչություն, որից 1200-ը՝ հայեր, 669-ը՝ մահմեդականներ, 131 այլ ցեղեր, գավառը՝ 5210 մահմեդական, 575 հայեր, ընդամենը՝ 5785 շունչ բնակչություն: Դիադինի գավառը՝ 11.158 բնակչությունից, մահմեդա-

[1] *Колюбакин А.,* նշված գիրքը, էջ 235, 255, 261, 316, 317, 400, 401, 406, 409:

[2] Оттоманская империя, СПБ, 1868, 209.

[3] «Փորձ», 1880, թիւ 6-7, էջ 223, 224, 225, տես՝ Ալ.Երիցյանի հոդվածը:

կաններ էին՝ 10.706 շունչ, 364 հայեր, 88 այլ ցեղեր: Կարաքիլիսեի գավառ, 4704 շունչ մահմեդական, 2092 հայեր, 142 այլ ցեղեր, ընդամենը՝ 6938 շունչ բնակչություն:

Ալաշկերտի գավառ, 20.181 շունչ բնակչություն, որից՝ 13.943 մահմեդական, 6060 հայեր, 173 այլ ցեղեր: Դութաղի գավառ՝ 6482 շունչ բնակչություն, որից՝ 6239 մահմեդական, 214 հայեր, 29 այլ ցեղեր[1]:

Ընդամենը՝ 52.544 բնակչություն, 41.471 մահմեդական, 10.505 հայեր, 5681 այլ ցեղեր:

Հ.Էփրիկյանի հաշվումներով, գավառն ուներ 52.544 բնակչություն, որից 41.471 մահմեդականներ, 8652 հայ լուսավորչականներ, 1754 հայ կաթոլիկներ, 99 հայ բողոքականներ, 508 այլք[2]: Այսինքն՝ հայերը կազմում էին 10.496 շունչ բնակչություն:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գավառն ուներ 37.000 բնակչություն, 20.000 քրդեր, 3000 եզիտներ, 1000 թուրքեր, 13.000 հայեր[3]:

Այսպիսով, ունենք գավառի բնակչության մասին վեց վկայություն՝ 13.000 հայ բնակչություն (1557 տուն) Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, Կարինի առաջնորդարանի հաղորդմամբ՝ 2033 տուն (14.231 շունչ), Հ.Էփրիկյանի վիճակագրությամբ՝ 1499 տուն, 10.496 շունչ, ըստ Վ.Քինեի՝ 1500 տուն, 10.500 շունչ, Ալ.Երիցյանի հաշվումներով՝ 1337 տուն, 11.675 շունչ, Ա.Կոլյուբակինի վիճակագրությամբ՝ 3369 տուն, 23.583 շունչ հայ բնակչություն (բնակչության կամ տների քանակի պարզեցումը կատարում ենք տունը 7 շնչի հարաբերությամբ – Հ.Զ.):

Նշված վկայություններից ամենաիրականը Գ.Սրվանձտյանցինն է, որովհետև այն կատարված է անձամբ, առանց միջնորդ օղակների կամ պաշտոնական հաղորդումների: Վստահության երկրորդ նախապայմանն այն է, որ դիմելով միջին տարբերակին՝ ստանում ենք գրեթե նույն ցուցանիշները՝ 1987 տուն, 13.915 շունչ հայ բնակչություն:

Առավել հակասական տեղեկություններ են հաղորդվում գավառի գյուղերի քանակի վերաբերյալ: Հ.Էփրիկյանը հայտնում է, թե գավառն ունեցել է 418 գյուղ, որոնք բաղկացած էին 8448 տներից[4]: Գ.Սրվանձտյանցը, բացի հայաբնակ և խառը բնակչությամբ 38 գյուղերից, որոնք ներառել է իր ցուցակում, հայտնում է նաև, որ գավառում «ցանուցիր ընդամենը 250 գյուղ կելնե»[5]: Սակայն, այստեղ պարզ չէ, թե հեղինակը

[1] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 236-237:
[2] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 1, էջ 395:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[4] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 1, էջ 394:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 1:

250 գյուղերի մեջ նկատի ունի՞ իր ցուցակագրածները, որոնք պետք է ավելացնենք այդ քանակին: Ա-Դոն, որ հենվում է Կարինի առաջնորդարանի վիճակագրության վրա, իր ցուցակում տեղ է տվել գավառի 54 գյուղերի[1]: Ա.Կոլյուբակինը գավառում հաշվում է 548 բնակավայր: Ալ.Երիցյանի տեղեկությամբ, գավառում կար 323 գյուղ: Ունեցած չորս տեղեկությունների միջինով կունենանք 384 գյուղ, որը, սակայն, վերջնական ընդունելը հեռու է իրականությունից:

Մեր կարծիքով, խնդիրը կարելի է լուծել Գ.Սրվանձտյանցի օգնությամբ: Հայրենասեր բանահավաքի ԳԱԹ արխիվի նյութերի մեջ պահպանվել է մի փաստաթուղթ, որով ցուցակագրվել են այլազգի գյուղերը: Դրանց թիվը հասնում էր 168-ի[2]: Նույն հաղորդման վերջնամասում, ինչպես նշեցինք վերևում, Գ.Սրվանձտյանցը հայտնում է ցրված 250 գյուղերի մասին: Եթե այդ թիվը և իր ցուցակագրած 38 գյուղերը գումարենք իրար, կստանանք Հ.Էփրիկյանի նշած քանակից ութ գյուղ ավելի՝ 456: Եթե այս քանակին ավելացնենք հեղինակներից մեկի հաղորդումը, թե 1877-1878թթ. պատերազմի ժամանակ քրդերն ավերել են 24 հայկական գյուղեր[3], ապա գավառում (սանջակում) գյուղերի քանակը հավասարվում է 480-ի, ինչը չափազանցություն չի լինի և առավել վստահելի վկայության բացակայության պայմաններում կարելի է ընդունելի համարել, որովհետև մեկ այլ առիթով Գ.Սրվանձտյանցը միայն Բայազետի և Ալաշկերտի գավառներում հաշվում է 137 եկեղեցի[4], այսինքն՝ եղել են 137 հայկական, հայաբնակ կամ խառը բնակչությամբ գյուղեր: Այն դեպքում, երբ փաստաթղթերից մեկի վկայությամբ, միայն Ալաշկերտի գավառում եղել է 115 գյուղ[5]: Ավելին, ամբողջ Բայազետի գավառում հաշվվում էին 136 այլազգիներով բնակեցված գյուղեր[6], որոնք ուսումնասիրողներից ոչ մեկը չի գրանցել իր ցուցակներում:

Այստեղից էլ, եթե գումարենք Գ.Սրվանձտյանցի վկայությունը՝ 99 գյուղ (հանած 38 ցուցակագրվածները) այլազգիներով բնակեցված գյուղերի և Դիադինի, Կարաքիլիսեի, Դութաղի գավառների մասին Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը (290 գյուղ)՝ հանած 39 հայաբնակները, որոնք ցուցակագրված են, կունենանք 525 գյուղ, 45-ով ավելի Հ.Էփրիկյանի հաշվումներից:

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 206, 210, 212, 215, 217:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 1:
[3] ՏԲ, հ. 1, Ե., 1986, էջ 583:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 180, թ. 31:
[6] Նույն տեղում, գ. 182, թ. 5:

Գավառի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն էր, անասնապահությունը, արհեստները, առևտուրը: Տնտեսության ու քաղաքական կյանքում հայերը թեև գտնվում էին հալածական վիճակում, այնուամենայնիվ, կարողանում էին պահպանել իրենց դիրքերը: Այդ մասին վկայում է Գ.Սրվանձտյանցը՝ ընդգծելով. «հայք հոտ բավականին հողատեր են»[1]: Գավառում և նահանգում հայտնի անուններ էին Սարգիս Մանուկյանը, Օհան Մկրտչյանը, բայազետցի Մարգար Դանիելյանը, Մուսան գյուղից՝ Սարգիս Գալստյանը, Ղարաքիլիսայից՝ Հովհաննես Նուպարյանը, Արծափցի Հովսեփ Քալոյանը, Ղազի գյուղից՝ Սահակ Ապրոյանը, Սարիպեխցի Սարգիս Գրիգորովը, որոնք ոչ միայն հողատերեր, վաճառականներ էին, այլև նվիրված ազգային գործիչներ, բարերարներ:

Գավառում գործել են 2 վանք, 137 եկեղեցի: Գ.Սրվանձտյանցի առաքելության ժամանակ կիսականգուն է եղել Ս.Հովհաննես՝ «լուսավորաշեն, հոյակապ» վանքը[2]: Պետք է կարծել, որ նշված 137 եկեղեցիներին կից, ավանդության համաձայն, Բայազետի ու Ալաշկերտի գավառներում գործել են նաև վարժարաններ, գումարած Դութանի, Կարաքիլիսեի, Դիադինի հայաբնակ 39 գյուղերի դպրոցները:

Բայազետի գավառն առևտրական կապերի մեջ էր Կարսի, Երևանի, Մուշի, Կարինի, Վանի, Բասենի, Մակուի և շրջակա մյուս շրջանների հետ:

19-րդ դարում Բայազետի գավառի հայությունը ենթարկվեց նոր փորձությունների՝ վերածվելով ռուս-թուրքական 1828-1829, 1854-1856, 1877-1878 թվականների պատերազմների թատերաբեմի: 1829, 1878թթ. գավառի հայությունը դիմեց համատարած գաղթի՝ պատմական հայրենիքը թողնելով կիսավայրենի քոչվորների տնօրինության տակ:

Գավառի հայությունը ծանր կորուստներ կրեց 1894-1896թթ. կոտորածների շրջանում: Ավերվեց գավառի 24 գյուղ, սրի քաշվեցին հազարավոր մարդիկ: Այդ անմարդկային հաշվեհարդարը նկարագրող, ֆրանսիական դեսպանին ուղղված դիմումի մեջ արձանագրված է. «...տաճիկ դրացիներ մեր մատղաշ մանկիկները կտոր-կտոր անդամատելով մարաց գոգնոցներու մէջ ծրարիլ տուին և դուրս թափել բռնադատեցին... Հայ քրիստոնեից արիւնը ջուրի պէս կ'թափուէր...»[3]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, ց. 1, գ. 127, թ. 1:

Գավառի տոկուն հայությունը հսկայական ջանքերի շնորհիվ, հանուն իր գոյատևման, դիմակայեց քոչվորական պետության բնազդային քաղաքականությանը:

Գավառի վարչական, մշակութային և տնտեսական կենտրոնը *Բայազետ* քաղաքն էր: Բայազետը կառուցված էր Ծաղկանց լեռների Թոնդուրեկ ճյուղի հյուսիսային լանջին, բլրաշատ տեղանքում: Քաղաքը երեք կողմից շրջապատված էր Քարաքիթ, Անրաքար, Շարան քարեր, Բալաբանի, Խլխլեք, Կօշաբուլաղ և Թաքեարդաղ լեռներով: Բաց էր միայն հյուսիսային կողմը, որտեղից էլ սկսվում էր Գոնավուկի դաշտը:

Արևնաքար լեռան վրա էր կառուցված քաղաքի հին բերդը, որը հնում հայտնի էր Դարոյնք անունով: Բերդը Բագրատունիների հայրենական կալվածքն էր, այնտեղ էին պահվում Բագրատունիների տոհմական հարստությունները: Գերմանացի ճանապարհորդ Վագները բերդի մասին գրել է. «Հանդուգն և հրաշակերտ մի շինվածք է՝ այնպիսի մի տեղի վրա հաստատված, որ բազեներն ու անգղերը հազիվ թե կհամարձակվեն բուն դնելու»[1]:

Նոր բերդը կառուցվել է 18-րդ դարում, Բալաբան լեռան ստորոտում: Կարծիք կա, որ քաղաքի անունը կապվում է սուլթան Բայազետի հետ: Բայց այդ տեսակետը ժխտվում է հայ պատմիչների վկայություններով: Առաջին հիշատակությունը քաղաքի մասին թողել է Առաքել Դավրիժեցին: Նա քաղաքն անվանում է «Բերդի Բիազտի»: Այսինքն՝ մինչև Բայազետ Ա-ի գահակալությունը (1389-1402թթ.), քաղաքն արդեն անվանվել է Բայազետ:

Քաղաքը գտնվում էր Կարինից դեպի արևելք: Սերովբե Կարնեցին պնդում է, թե Բայազետը Կարինից «հեռու է ոտքով 7 օրվա ճանապարհով... 12 մղոն դեպի հյուսիս» Արարատն է[2]:

1555թ. Ամասիայի պայմանագրով Բայազետն անցավ թուրքական տիրապետության տակ, և քաղաքը գավառի հետ ընկավ քրդական սլիվանլի ցեղի իշխանության տակ՝ դառնալով գավառակենտրոն:

Բայազետն, ունենալով կարևոր դիրք, ռազմական կարևոր նշանակություն և գտնվելով Պարսկաստան-Կարին-Տրապիզոն առևտրական ճանապարհին, ներգրավվել է ժամանակաշրջանի բոլոր կարևոր իրադարձությունների ոլորտ: Այդ դերն ավելի մեծացավ 19-րդ դարում՝ կապված Ռուսաստանի նվաճողական ծրագրերի հետ: Քաղաքը 1828,

[1] ՏԲ, հ. 1, Երևան, 1986, էջ 584:

[2] *Կարնեցի Ս.,* Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին, Ե., 1968, էջ 159:

1854, 1878 թվականներին գրավվել է ռուսական բանակի կողմից, բայց Ադրիանապոլսի, Փարիզի պայմանագրերով, Բեռլինի կոնգրեսի որոշմամբ, նորից վերադարձվել Թուրքիային: Յուրաքանչյուր պատերազմից հետո հայ ազգաբնակչությունը ենթարկվել է անլուր տառապանքների, թալանի, բռնագրավումների թե՛ իշխանությունների, թե՛ քուրդ ու թուրք խուժանի կողմից: Քաղաքի 300 տներից միայն 100-ն է ազատվել կոտորածից ու թալանից և Մակու, Կարս փախչելով՝ խուսափել ոչնչացումից[1]:

Պատերազմներից բացի, քաղաքին մեծագույն վնաս է պատճառել 1840թ. հունիսի 20-ից սեպտեմբերի 28-ը տևած երկրաշարժը:

1828թ. հուլիսի 28-ին Բայազետի Բահլուլ փաշան, ենթարկվելով հայերի պնդումներին, որ դիմադրությունն ավելորդ է, քաղաքն առանց կռվի հանձնեց ռուսներին: 1829թ. հունիսի 20-21-ին տեղի ունեցավ Բայազետի հերոսական պաշտպանությունը, որը գլխավորում էին գեներալներ Պոպովը և Պանյուտինը: Ռուսական 1500 հոգանոց կայազորին օգնության հասավ 1000 հոգանոց հայկական գումարտակը, և 32 ժամվա պաշտպանությունն ավարտվեց թուրքերի պարտությամբ, որտեղ մեծ էր Մկրտիչ և Բարսեղ Արծրունիների դերը, որոնց գլխավորությամբ կռվում էին հայ կամավորները: Նրանց մասին Պասկևիչին ուղղված նամակում հիացմունքով է խոսում գեներալ Պոպովը:

Առավել ծանր ինքնապաշտպանություն կազմակերպվեց 1877թ. հունիսի 6-ին, երբ փոքրաթիվ ռուսական կայազորը 100 հայ կամավորների հետ, 23 օր, մինչև հունիսի 28-ը պայքարում էր 10 հազարանոց թուրքական բանակի դեմ, որոնց օգնության էին հասել թալանի հույսեր փայփայող թուրքական խուժանը, քրդական ավազակները: Պաշարվածների փրկությունը կախված էր Տեր-Ղուկասովի օգնությունից, որը, իրականացնելով իր հանրահայտ նահանջը, անտեղյակ էր Բայազետի պաշարումից: Լուր հասցնելու բոլոր փորձերն ավարտվում էին անհաջողությամբ: Ի վերջո, այն իրականացրեց քրդերենին գերազանց տիրապետող, Ապարանի գավառի Արա գյուղից կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը՝ Ռաֆֆու «Խենթ» վեպի հերոս Վարդանի կերպարի նախատիպը, հայ ազատագրական շարժումների ապագա հերոս, Ապարանի հերոսամարտի կազմակերպիչներից Արսեն Տեր-Պողոսյանի հայրը:

Բայազետը, բացի տնտեսական ու ռազմական, քաղաքական կենտրոն լինելուց, նաև մշակութային կենտրոն էր: Արևելքից արևմուտք տարածված քաղաքում կային 3 մզկիթ, երկու հայկական եկեղեցի՝ Ս.Կա-

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 1, էջ 393:

բապետ և Ս.Վարդան: Առաջինը քարաշեն էր, փայտածածկ, վերանորոգվել էր 1754, 1818, 1879թթ.: Ապտիկոր հայկական թաղամասում էր կառուցված Ս.Վարդան եկեղեցին:

Հայկական գերեզմանատանը, որը քաղաքի հարավարևմտյան մասում էր, գտնվում էր Ս.Ամենափրկիչ հինավուրց եկեղեցին: Ավանդության պնդմամբ, այս եկեղեցում է թաղված Սմբատ անունով սպարապետը:

Քաղաքն ուներ նաև սուրբ ուխտատեղեր: Դրանք էին Դարույնք, Լուսաղբյուր մատուռները, Թուխ Մանուկ, Ս.Սիմոն, Ղզրո, Գառնիկ աղբյուր «նուիրական ուխտատեղիք»[1]:

Քաղաքի ճարտարապետական հուշարձանների զարդը հիասքանչ պալատն էր, որը կառուցվել էր Մահմուտ փաշայի ժամանակ: Ճոխության գերի, ծագումով քուրդ, Քեշ մականունով փառամոլ փաշան ներկայացված առաջարկներից ընտրում է հայ ճարտարապետի նախագիծը, և կառուցվում է երկհարկանի այդ հրաշալիքը, որը «ճարտարապետական հազվագյուտ կառույց է (ամբողջ) Պարսկաստանում և Թուրքիայում»[2]: Հ.Էփրիկյանի վկայությամբ, այդ պալատը կառուցող հայ ճարտարապետն ունենում է ողբերգական վախճան: Անագորույն փաշան, որպեսզի ճարտարապետին զրկի նոր պալատ կառուցելու հնարավորությունից, հրամայում է կտրել նրա ձեռքերը, ինչն էլ հետագայում նրա մահվան պատճառ է դառնում[3]: Պալատի շինարարության վրա փաշան ծախսել է 300.000 պիաստր[4]:

Հայերն ապրում էին քաղաքի Ավդիզյոռի թաղում, որտեղ էլ գտնվում էր Արամյան վարժարանը: Այն ուներ 2000 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակությունների միջոցով: Վարժարանում սովորում էր 150 աշակերտ[5]: Բայազետի հայերը զբաղվում էին արհեստներով, առևտրով: Տարածված արհեստներից էին պղնձագործությունը, թիթեղագործությունը, դարբնությունը, բրուտագործությունը, ներկարարությունը, խոհարարությունը, եվրոպական դերձակությունը, կային նաև հնակարկատներ, որոնք նորոգում էին հագուստ և կոշիկ: Զմռանը դերձակներից շատերը տեղավորվում էին սրճարաններում: Քաղաքում գործում էին նաև 2-4 գինետներ, որոնք գտնվում էին շուկայից դուրս,

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 1, էջ 394:
[2] *Կարնեցի Ս.,* նշված գիրքը, էջ 159:
[3] Նույն տեղում, էջ 391:
[4] Նույն տեղում, էջ 159:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:

որպեսզի չգրգռեին մահմեդականներին: Խմիչքը հիմնականում ներմուծվում էր Կարինից, իսկ օղին՝ Ալաշկերտից, որը բարձրորակ էր և պատրաստվում էր չամիչից: Արհեստավորներն ունեին իրենց խանութ-արհեստանոցները: Գործում էր մանրավաճառների 25 կրպակ: Մանրավաճառները զբաղվում էին հատկապես զարդերի վաճառքով, որոնք հիմնականում իրացնում էին քրդական գյուղերում: Պատկառելի թիվ էին կազմում նաև նպարավաճառները: Քաղաքում գործում էին 1000 մանրավաճառ, 1000 նպարավաճառ: Նրանց առևտուրը կազմում էր 1000 օսմանյան ոսկի[1]:

Առևտուրը հիմնականում գտնվում էր հայերի ձեռքում: 1879-1890թթ. քաղաքի առևտրականները, որ «բոլորովին հայ էին», «լավ հաջող վիճակի մեջ էին»[2]:

Ղ.Ինճիճյանը վկայում է, որ քաղաքում առևտրական լայն գործունեություն էին ծավալել «դէվրիզցիք»[3]:

Ս.Կարնեցին հայտնում է, որ Բայազետ իր այցելության ժամանակ (1812թ.) քաղաքն ունեցել է 12.000 բնակչություն, «որի մեծամասնությունը հայեր են»[4]:

Ղ.Ինճիճյանի հաղորդմամբ, գյուղն ունեցել է 5000 տուն, որից 700-ը՝ հայկական[5]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, քաղաքն ունեցել է 125 տուն, 1000 շունչ բնակչություն[6]: Կարինի առաջնորդարանի հաշվարկներով, քաղաքում ապրել են 350 տուն, 2450 շունչ հայեր[7]: Հ.Էփրիկյանը հայտնում է, որ քաղաքն ունի 2000 բնակչություն, որից 1200-ը հայեր են, 669 շունչ քրդեր ու թուրքեր, 131 շունչը՝ այլք[8]: Միջին տարբերակով կունենանք 134 տուն, 2387 շունչ հայ բնակչություն: Սակայն բոլոր վկայություններից, մեր կարծիքով, առավել իրականը Կարինի առաջնորդարանի ժողովրդագրությունն է, որովհետև մեր հենց միջինի մակարդակն է պահպանել և հեռու է չափազանցությունից:

Բայազետի առաջին գավառակը Բայազետն է: Այն, ինչպես նշեցինք վերևում, հյուսիսարևելյան կողմում սահմանակից էր Կարսի մարզին և Երևանի նահանգին, Իրանին, արևմուտքում՝ Կարինի գավառին, Դիադինի գավառին, հարավում Բիթլիսի և Վանի նահանգներն էին:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 181, թ. 90:
[2] Նույն տեղում, թ. 91:
[3] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 114:
[4] *Կարնեցի Ս.,* նշված գիրքը, էջ 159:
[5] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 114:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[7] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 226:
[8] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. 1, էջ 394:

Գավառն ունեցել է 110 գյուղ: Թեև Ա-Դոն, հիմնվելով Կարինի առաջնորդարանի վիճակագրության վրա, նշում է, թե նրանցից միայն երեքն են հայաբնակ[1], բայց Գ.Սրվանձտյանցի ցուցակում, որը վերնագրված է «Պայազետ եւ Ալաշկերտ», կան խառը բնակչություն ունեցող մի քանի գյուղեր, որոնք արժանի են հիշատակության:

Գավառակի ամենամեծ հայկական գյուղն *Արծափն* էր: Գտնվում էր Արծափաքար լեռան ստորոտում, Իգդիր-Բայազետ ճանապարհի աջ կողմում, Զինգլի լեռնանցքի մոտ, Բայազետից հյուսիս-արևմուտք:

Գյուղի մասին առաջին հիշատակությունը պատկանում է 7-րդ դարում Դվինին զումարված եկեղեցական ժողովին: Երկրորդ հիշատակությունը կապված է Թեոդորոս Ռշտունու 643թ. գյուղում արաբների դեմ տարած հաղթանակի հետ, որի շնորհիվ գերությունից ազատվեցին հազարավոր հայեր, և արաբները մինչև 650թ. այլևս նոր արշավներ չկազմակերպեցին: Հետագա ժամանակաշրջանում Արծափը հիշատակվում է որպես ամուր, անառիկ բերդ:

Գյուղի միջով անցնում է համանուն գետակը, որը ոռոգում է բերքաշատ Արծափի հողերը, այգիները, որոնցից մեկը, որը գտնվում էր գեղեցկատեսիլ սարալանջին, անվանվում էր «Պարնոց այգի»:

Գյուղի բնակչությունը երկու անգամ՝ 1829 և 1878թթ., դիմել է գաղթի, որն, ինչ խոսք, ծանր ազդեցություն է ունեցել գյուղի ճակատագրի վրա:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 2500 լիրա հասույթ, Հայկազյան վարժարանը՝ 2000 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակություններով: Վարժարանում սովորում էր 70 աշակերտ[2]:

Գյուղի բնակչությունը, համաձայն Գ.Սրվանձտյանցի վիճակագրության, կազմում էր 65 տուն, 60 շունչ զուտ հայ բնակչություն[3]: Հայերը հիմնականում զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, արհեստներով:

Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, Արծափն ուներ 120 տուն հայ բնակչություն (մոտ 840 շունչ– Հ.Զ.)[4]:

Միջինը՝ 92 տուն, 720 շունչ հայ բնակչություն:

Քորուն գյուղը գտնվում էր Բայազետից ու Արծափից հյուսիս-արևմուտք, Մոսուն և Տաճառի կամ Թաճտոլի գյուղերի հարևանությամբ, Գայլատու լճից հարավ-արևելք, Հայկական պար լեռնաշղթայի Զնգլ և

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 203:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[3] Նույն տեղում:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 206:

Զոռ գագաթների հարավային ստորոտում: Գյուղի Ս.Սարգիս եկեղեցին ուներ 1500 լիրա հասույթ, Վահանյան վարժարանը՝ 500 լիրա հասույթ, 40 աշակերտ[1]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղի հայերը կազմում էին 31 տուն, 300 շունչ[2]: Ա-Դոն ընդունում է 30 տուն հայ բնակչության գոյությունը[3]:

Միջինը՝ 30 տուն, 255 շունչ հայ բնակչություն:

Քորունի բնակիչները զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով:

Մուսան, Մուսուն, Մոսուն գյուղը գտնվում էր Քորունի հարևանությամբ, նրա հյուսիսարևմտյան կողմում: Գյուղն ուներ Ս.Ստեփանոս եկեղեցի: Նրա հասույթը կազմում էր 2500 լիրա, Տիգրանյան վարժարանինը՝ 1000 լիրա: Վարժարանի աշակերտների թիվը հասնում էր 50-ի[4]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով և առևտրով: Գյուղում գործել է 20 կրպակ, որոնցից 3-ը պատկանում էին հայերին[5]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, Մուսանն ուներ 53 տուն, 500 շունչ հայ բնակչություն[6]: Կարինի առաջնորդարանի հաշվումներով, գյուղում ապրում էին 60 տուն հայեր[7] (մոտ 420 շունչ– Հ.Զ.):

Միջինը՝ 56 տուն, 460 շունչ հայ բնակչություն:

Գյուլլիջա, Գյուլլիջե, Գյուլուջա, Խոլամ, Կուլաբ, Սոնալու գյուղը գտնվում էր Գայլատու լճից հարավ-արևելք, 12 կմ հեռավորության վրա, փոքրիկ ձորակի մեջ: Մոտակայքում Կուլաբ կոչվող ճահճային մարգագետինն էր: Այս պատճառով էլ գյուղը երբեմն անվանվել է Կուլաբ: Գյուղի նախկին անունը Սոնալու էր: Հողը բերրի էր, շրջակայքում կար ընդարձակ արոտավայր, որն էլ հնարավորություն էր տալիս անասնապահության զարգացման համար: Գյուղն ունեցել է եկեղեցի և վարժարան: 1878թ. Գյուլլիջայում ապրել են 7 տուն, 48 շունչ հայեր, 1894թ.՝ 115 տուն հայեր (մոտ 805 շունչ– Հ.Զ.)[8]:

Միջինը՝ 61 տուն, 426 շունչ հայ բնակչություն:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[2] Նույն տեղում:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 206:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 204:
[6] ԳԱԹ, գ. 23, թ. 11:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 206:
[8] ՏԲ, հ. 1, էջ 908:

Զանկաձոր, Զանգյազուր, Զանկյազուր գյուղի մասին հիշատակություններ են թողել Ղ.Ալիշանը[1], Ղ.Ինճիճյանը[2]: Վերջինի հաղորդմամբ, գյուղը գտնվում էր Բայազետից կես ժամ հեռավորության վրա և քանի որ կառուցված էր բլրի վրա, ուներ «բերդաձև շինուած»[3]:

1829, 1878թթ. գյուղի բնակչությունը գաղթել է Արևելյան Հայաստան:

Թափարիզ, Թեփերիզ, Թուփարիզ, Տոպարիզ գյուղը գտնվում էր Բայազետ քաղաքից հարավ-արևմուտք, 12 կմ հեռավորության վրա: Գյուղի հարավարևմտյան կողմում գտնվում էին հնագույն բերդի ավերակները: Իսկ գյուղի մոտակայքում գտնվող ժայռի վրա եղել են արձանագրություններ, որոնք վայրի քոչվորները վերացրել են: Գյուղն ունեցել է եկեղեցի, վարժարան: Հայերը 1878թ. գաղթել են Արևելյան Հայաստան, և դրանից հետո գյուղը դարձել է քրդաբնակ:

Ց ՈՒ Ց Ա Կ

Բայազետի գավառի հայաշատ գյուղերի

	տուն	շունչ
Արծափ	65	300
Բատնոց	30	285
Գոբղրոն	30	250
Գյուլլիջա	115	805
Զանգիզոր	20	140
Թափարիզ	12	840
Ղըզըլ դայե	20	180
Խալու	41	350
Հավիկ	6	50
Մարիամանա	12	100
Մուսան	53	500
Քորուն	31	300
Ֆռանգերեցու	11	280

Գավառի հայաթափման պատկերն առավել ներկայանալի դարձնելու նպատակով նշենք, որ եթե դարի առաջին կեսին գավառակում

[1] *Ալիշան Ղ.,* Տեղեկագիր…, էջ 48:
[2] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 114:
[3] Նույն տեղում:

հաշվվում էր 165 գյուղ[1], ապա Կարինի առաջնորդարանի և Ա-Դոյի տեղեկություններով, 1912թ. գավառում մնացել էին ընդամենը երեք հայաբնակ գյուղեր[2]:

Ալաշկերտի գավառը եղել է պատմական Հայաստանի Այրարատյան աշխարհի Բագրևանդ գավառի բաղկացուցիչ մասը: Հյուսիս-արևելքում սահմանակից էր Երևանի նահանգին, հյուսիսային կողմում՝ Կարսի մարզին, հյուսիս-արևմուտքում Բասենի գավառն էր, հարավում Դութաղի և Դիադինի գավառները, արևելքում՝ Բայազետի գավառը: Գավառի ամենաբերրի և հացաշատ մասն Ալաշկերտի դաշտն էր: Այն գտնվում էր Շարին և Ծաղկանց լեռնաշղթաների միջև: Երկարությունը 85 կմ էր, լայնությունը՝ 50 կմ, ծովի մակերևույթից բարձր էր 1900 մետրով: Դաշտի հարավարևելյան մասը կոչվում էր Ձիրավի դաշտ, որտեղ 371թ. հայոց բանակը Մուշեղ սպարապետի գլխավորությամբ փառավոր հաղթանակ է տարել պարսիկների նկատմամբ:

Ալաշկերտի դաշտը հռչակված էր ընտիր ցորենով: Այն վաճառվում էր գավառի և շրջակա նահանգների ու գավառների լեռնային շրջանակներում կամ փոխանակվում էր մրգերի ու պտուղների հետ:

Դաշտն ունի խստաշունչ ձմեռ, զով ամառ: Գլխավոր գետն Արածանին է, կան բազմաթիվ փոքր ու միջին գետակներ, որոնք ոռոգում են դաշտը:

Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գավառակն ունի 111 գյուղ, որոնցից միայն 12-ն էին հայաբնակ և ունեին 840 տուն բնակչություն[3]:

Արխիվային փաստաթղթերից մեկի հաղորդմամբ, գավառն ունեցել է 11 հայկական գյուղ, 640 տուն, 4480 շունչ բնակչություն[4]: Ալ.Երիցյանը Ալաշկերտի գավառում հաշվում է 70 գյուղ, որից 53-ը՝ քրդական, 7-ը՝ հայկական: 9040 շունչ քրդեր էին, 2978 շունչ հայեր[5]: Կան նաև մի շարք այլ վկայություններ: Օրինակ՝ 1880թ. Ալաշկերտի գավառի 14 հայաբնակ գյուղեր ունեին 604 տուն բնակչություն: 1893թ.՝ 876 տուն[6]: Գավառի 115 գյուղերում ապրում էր 20.111 բնակչություն, որից 13.863-ը մահմեդական էին, 3217-ը՝ հայ լուսավորչական, 2754-ը հայ կաթոլիկներ էին, 99 հոգի՝ հայ բողոքականներ, 178 հոգի՝ այլ հավատի ներկայացուցիչներ[7]: Այսինքն՝ հայերի թիվը հասնում էր 6070 շնչի:

[1] *Մելքոնյան Ա.,* նշված գիրքը, էջ 165:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 206:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 213, 215:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 319, թ. 63 շրջերես:
[5] «Փորձ», ամսագիր, 1880, թիւ 6-7, էջ 216, 229, տե՛ս նշվ. հոդ.:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 180, թ. 30:
[7] Նույն տեղում, թ. 35:

Միջին տարբերակով ունենում ենք հետևյալ արդյունքը՝ 708 տուն, 4961 շունչ հայ բնակչություն, որը կարելի է ընդունել որպես 20 տարիների բնական աճի ցուցանիշ: Այսինքն՝ 1880թ. 604 տուն հայությունն աճել է 104 տնով, որն ընդունելի տեսակետ է, քանզի Ա.Համբարյանի հաշվումներով, 1880-1900թթ. արևմտահայության աճը կազմել է 458.672[1], ասել է՝ 3.063.676 բնակչությունը տարեկան ունեցել է 22.933 շնչի աճ, իսկ 20 տարում գավառի բնակչության աճը կազմել է 1652 շունչ, կամ տարեկան աճը կազմել է 82,6 շունչ:

Գավառի կենտրոնն *Ալաշկերտ* քաղաքն էր: Այն գտնվում էր Արածանիի վերին հոսանքի շրջանում, Սակավետ լեռան հարավարևելյան կողմում, Շահգեոլի վերելքի տեղում՝ «մի բանաստեղծական դիրքի վրա»[2], Տրապիզոն-Կարին-Մակու-Թավրիզ ճանապարհին: Մինչև 19-րդ դարն անվանվել է Վաղարշապատ: Կարծիք կա, թե քաղաքը կառուցել է Արտաշես Բ-ի թոռ Վաղարշ Ա թագավորը (117-140թթ.): Այնուհետև քաղաքն անվանվել է Ալաշկերտ: Ենթադրվում է, որ այդ անունը ծագել է քաղաքին մոտ գտնվող Արարատյան թագավորության Անաշե բնակավայրի անվանումից: Քաղաքը համարվում էր Գրիգոր Լուսավորչի և նրա շառավիղների կալվածքը: Ներսես Գ կաթողիկոսի ժամանակ կառուցվել է քաղաքի Ս.Աստվածածին Կաթողիկե եկեղեցին, որն այնուհետև դարձել է Բագրևանդի և Արշակունիքի թեմական կենտրոնը: Քաղաքի բարգավաճումը կապված էր Բագրատունիների թագավորության շրջանի հետ: Այդ շրջանում Վաղարշակերտը վերածվում է առևտրական խոշոր կենտրոնի, հատկապես 893թ. Սմբատ Ա-ի Բյուզանդիայի հետ կնքած առևտրական պայմանագրից հետո:

Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս-պատմիչը (845-50 - 929թթ.), իր «Հայոց պատմության» մեջ նկարագրում է արաբների և նրանց միացած Վասպուրականի թագավոր Գագիկի արշավանքը. «...Գագիկ թագավորին իր նախարարների հետ միասին մեծ զորքով առաքում է Վաղարշակերտի ամրոցը՝ շրջապատելու, պաշարելու ու գրավելու այն: Նրանք գնացին եւ շատ օրեր կռուեցին ամրոցի դէմ, բայց ոչ մի վնաս չկարողացան տալ նրան: Եւ թէպետ եւ շատ մարդիկ են վիրավորուում ամրոցում եւ գետին տապալուում թշնամիների կողմից, սակայն այն մոլեգնածի հրամանով չեն յամարձակուում որեւէ բան անել, այլ նստում, պահում են ամրոցը բազում օրեր»[3]:

[1] *Համբարյան Ա.,* Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, տե՛ս ԲԵՀ, 1963, թիւ 2, էջ 113:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 214:
[3] *Հովհաննես Դրասխանակերտցի,* Հայոց պատմություն, Ե., 1995, էջ 233:

Քաղաքի հետագա շրջանի մասին հիշատակություն է թողել Հակոբ Կարնեցին[1]: Ղ.Ինճիճյանը Ալաշկերտի մասին մասնավորապես գրում էր. «’ի գլուխ լերին ունի բերդ պատեալ պարսպաւ, ուր են պահնակք եւ բերդակալ. եւ կոչեցաւ Թօփրագ գալէ, իբր զի շինեալ է ի վերայ լերին որ է հողային, եւ ոչ ապառաժուտ»[2]:

16-17-րդ դարերի թուրք-պարսկական պատերազմներից հետո Ալաշկերտն ընկավ թուրքական տիրապետության տակ և դարձավ կազմավորված գավառի կենտրոն: 1829, 1878թթ. բնակչության մեծ մասը գաղթեց Արևելյան Հայաստան, իսկ մնացած մասը զոհ գնաց սուլթան Համիդի կազմակերպած կոտորածներին, և երբեմնի հայաշատ քաղաքը ստացավ «մի խղճուկ պատկեր»[3]:

Ալաշկերտի հայությունը զբաղվում էր արհեստներով, առևտրով, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, կային նաև երկրագործությամբ զբաղվող ընտանիքներ: Քաղաքի շուկայում կար 50-60 կրպակ, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին: Հայերը հիմնականում բնակվում էին Բելեջան, Սորանցոց, Փեթակչոց թաղերում, որտեղ էլ գտնվում էին նրանց հոգևոր և մշակութային, կրթական հաստատությունները:

Ալաշկերտի շրջակա տարածքում կային Արարատյան թագավորության շրջանի արձանագրություններ, ավերակների մնացորդներ:

Քաղաքն ունի Ս.Աստվածածին եկեղեցի: Նրա ներքին և պաշտոնեից հասույթը կազմում էր 4500 լիրա[4]: Ալաշկերտում գործել է երկու հայկական և մեկ թուրքական դպրոց: Հայկական դպրոցներից մեկը կոչվում էր Բագրատունյան և ուներ 2000 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակությունների միջոցով: Վարժարանն ուներ 80 աշակերտ[5]:

1877-1878թթ. քաղաքն ունեցել է 145 տուն քրդական և 122 տուն հայկական ընտանիք[6]: Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, հայերն ունեցել են 82 ընտանիք կամ տուն, 50 թուրք, 1500 քուրդ բնակչություն[7]:

Արխիվային փաստաթղթերից մեկն էլ վկայում է, որ քաղաքում ապրել են 200 ընտանիք, 1400 շունչ հայ բնակչություն[8]: Բնակչության նույն քանակն ընդունում է նաև Ա-Դոն[9]:

---

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 21:
[2] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 117:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 215:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[5] Նույն տեղում:
[6] ՏԲ, հ. 1, Ե., 1986, էջ 64:
[7] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 319, թ. 63 շրջերես:
[9] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 215:

Թեև միջին տարբերակով ստանում ենք 151 տուն, 1101 շունչ հայ բնակչություն արդյունքը, բայց, մեր կարծիքով, այս անգամ հավանականը Կարինի առաջնորդարանի վկայությունն է, որովհետև Գ.Սրվանձտյանցի նշած 82 ընտանիքները 20 տարում ինչպես աճ են ապրել, այնպես էլ քաղաքում են հանգրվանել համիդյան կոտորածներից մազապուրծ շատ ընտանիքներ, որոնց քանակի մասին մոտավոր վկայություն գտնելն անհնար է:

Գավառի ամենամեծ հայաշատ գյուղը *Համատն* էր: Գյուղը հայտնի էր նաև *Ամատ, Ամաղ, Ամատա* անուններով: Գյուղն Ամատունիների սեփականությունն էր: Ենթադրվում է, որ գյուղի անունն էլ ծագել է նախաբարական այդ տան անվանումից: Գտնվում էր Արածանիի վերին հոսանքում, Արածանիից հյուսիս-արևելք: Գյուղից հյուսիս, 5 կմ հեռավորության վրա, լեռան գագաթին գտնվում են Ամատա բերդի ավերակները: Այդ նույն ուղղության վրա է տեղավորված Նորելուկ անունով ծառաստանը, որը որպես ուխտատեղի գոյություն է ունեցել հեթանոսական շրջանից: Ծառաստանը հեթանոս հայերի ծառերի պաշտամունքի վկայությունն է: Մինչև 19-րդ դարի վերջերը գյուղը բարեկեցիկ էր: Սկսված հալածանքների պատճառով գյուղը կորցրեց նախկին պայմանները, աղքատացավ, բնակչության մեծ մասը գաղթեց՝ ասպարեզը թողնելով քոչվորներին: Ասվածի ապացույցն են գյուղի 4 ջրաղացները, 2 կրպակխանութները: Հալածանքների պատճառով կորցնելով տնտեսական անկախությունը՝ հայերից շատերը, մոտ 80 հոգի, դիմեցին պանդխտության:

Գյուղն ուներ եռախորան Ս.Աստվածածին եկեղեցի, 2000 ներքին և 2500 լիրա պաշտոնեից հասույթով: Արշակունյաց վարժարանի հասույթը կազմում էր 2000 լիրա, որը հավաքվում էր հանգանակությամբ: Վարժարանն ուներ 70 աշակերտ[1]:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 100 տուն, 950 շունչ հայ բնակչություն: Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը համընկնում է Գ.Սրվանձտյանցի վկայությանը: Մեկ այլ աղբյուր հայտնում է, թե գյուղն ունեցել է 113 տուն բնակչություն (մոտ 791 շունչ– Հ.Ջ.)[2]:

1880թ. գյուղն ունեցել է 66 տուն, 641 շունչ բնակչություն, 1893թ.՝ 113 տուն[3]: Այսինքն՝ 13 տարում գյուղն ունեցել է 47 տան կամ 329 շնչի աճ, և բնակչությունն էլ պետք է կազմեր 970 շունչ: Այստեղից էլ, Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը պետք է ընդունել իրական:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 11:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, g. 1, գ. 79, թ. 52:
[3] Նույն տեղում, թ. 48:

Գավառի հայաշատ գյուղերից էր նաև *Յաղնի Թեփե* կամ *Եխնի Թեփե* գյուղը, որը հիշատակում են Գ.Սրվանձտյանցն ու Ա-Դոն, սակայն չեն նշում նրա տեղագրությունը:

Այստեղ եղել է Ստեփանոս անունով եկեղեցի՝ 1000 ներքին և 1500 լիրա պաշտոնեից հասույթով, Եփրատյան անունով վարժարան, հանգանակությամբ գոյացած 1500 լիրա հասույթով: Վարժարանն ուներ 37 աշակերտ[1]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 29 տուն, 260 շունչ հայ բնակչություն:

Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղի հայ բնակչությունը 90 տուն էր (630 շունչ– Հ.Զ.)[2]: Որո՞նք էին այս մեծ տարբերությունների պատճառները: 1878թ., պատերազմի ավարտից հետո թուրքքրդական խուժանը սկսեց իր սանձարձակությունները: Գյուղի հայերը, թերևս զգուշանալով այդ հաշվեհարդարից, դիմել են գաղթի: Սա՝ որպես լավագույն տարբերակ: Բացառված չէ, որ կոտորածների ալիքներն իրենց մեջ առած լինեն նաև գյուղի հայերին, և նրանք տված լինեն զգալի կորուստներ: Երրորդ տարբերակով՝ գյուղից փախած հայերը և նրանց հետ նաև այլ գյուղերի բնակիչներ, վերահաստատվելով գյուղում, ստեղծում են բնակչության հիշյալ քանակությունը: Առաջնորդարանի վկայությունը, արխիվային փաստաթղթերից մեկը ներկայացնում են 1915թ. Բայազետի և Ալաշկերտի կոտորածի ենթարկված գյուղերի ցուցակը, արձանագրում են, որ Մեծ եղեռնի ժամանակ Յաղնի թափե գյուղն ունեցել է 150 տուն հայ բնակչություն, որից 130 հոգի, մոտ 20 տուն, կոտորվել է[3]: Այսինքն՝ Կարինի առաջնորդարանը նույնիսկ 60 տնով պակաս է ներկայացնում գյուղի հայ բնակչության թվաքանակը:

Մոլլա Սուլեյման, Մոլլա Սյուլեյման գյուղը գտնվում էր Ալաշկերտից հարավ-արևմուտք, Սուկավ լեռան ստորոտում: Ղ.Ինճիճյանը գյուղն անվանել է «Գիւղ մեծ հայոց»[4]:

Գյուղն ունեցել է 100 տուն հայ բնակչություն, որից 20 տուն՝ հայ լուսավորչական, 80 տուն՝ կաթոլիկներ էին: Բնակչությունը կազմում էր 1000 շունչ: Ս.Հակոբ եկեղեցին ուներ 500 ներքին և 1000 լիրա պաշտոնեից հասույթ: Արշարունյան վարժարանի՝ հանգանակությունից գոյացած հասույթը կազմում էր 1000 լիրա: Վարժարանն ուներ 120 աշա-

[1] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 215:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 160, թ. 6:
[4] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 117:

կերտ[1]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 80 տուն հայ բնակչություն[2]: Աղբյուրներից մեկի վկայությամբ, 20-րդ դարի սկզբներին գյուղն ունեցել է 170 տուն հայ բնակչություն, որից 300 հոգի զոհ են գնացել Մեծ եղեռնին, 82 հոգի առևանգվել են[3]: Ունեցած տեղեկությունների հանրագումարում առավել հավաստի է դառնում Գ.Սրվանձտյանցի վիճակագրությունը:

Գյուղի, ինչպես և Ալաշկերտի գավառակի մյուս գյուղերի բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով և առևտրով:

Զետկան, Զեյտիկյան, Զեյթկան, Զեյտիկան, Զեյդիգյան, Զեյդեկան գյուղը գտնվում էր Ալաշկերտից հարավ-արևմուտք, Շառիան գետակի ձախ ափին, Բայազետ-Տրապիզոն ճանապարհին:

Գյուղն ուներ արգավանդ հողեր, որոնց մեծ մասը ջրովի էր: Գյուղն ուներ գեղեցիկ դիրք, շրջակայքում եղել են հնությունների ավերակներ, խաչքարեր: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով: Զետկանում կային 1500 գլուխ ոչխար, 2000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 30 գութան, 200 սայլ: Տարեկան բերքը կազմում էր 60-65 տուն, 1878թ.՝ 35 տուն[4]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 47 տուն, 400 շունչ հայ բնակչություն[5]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղի հայ բնակչությունը կազմում էր 80 տուն[6]: Այս վկայությունների մեջ հավանականը և համոզիչն իր ժամանակաշրջանի համար՝ Գ.Սրվանձտյանցի վկայությունն է, իսկ Կարինի առաջնորդարանի տեղեկությունն իրական է, որովհետև 131 տարում, 1878-1903թթ., փաստորեն գյուղը տվել է 131 տուն, 315 շնչի աճ: Պետք է հիշեցնել նաև, որ լինելով զուտ հայաբնակ գյուղ՝ այնտեղ բնակություն հաստատած լինեն շրջակա խառը բնակչություն ունեցող գյուղերի հայերը՝ խուսափելով կոտորածից ու հարստահարումից:

Միջինը՝ 56 տուն, 415 շունչ հայ բնակչություն:

Գյուղի Ս.Գևորգ եկեղեցին ուներ 2700 լիրա հասույթ: Նուպարյան վարժարանի հասույթը՝ 1000 լիրա, աշակերտների թիվը 50 էր: Մեկ այլ

[1] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[2] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 215:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 160, թ. 6:
[4] ՏԲ, հ. 2, Երևան, 1988, էջ 287:
[5] ԳԱԹ, նշվ. տեղը, թ. 11:
[6] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 215:

աղբյուր հայտնում է, որ դպրոցն ուներ 70 աշակերտ, 2 ուսուցիչ, 40 օսմանյան ոսկի հասույթ[1]:

Խաստուր, Խանզըր, Խանզիր, Խասդուր, Խասթուր, Խացտուր, Հացտուր գյուղը գտնվում էր Ալաշկերտից հարավ-արևմուտք, 12 կմ հեռավորության վրա, Զետկանից հարավ-արևելք: Ընդարձակ մարգագետիններով, այգիներով, բանջարանոցներով հարուստ բնակավայր էր: Բարդիների և ուռենիների շրջապատում էր գտնվում գյուղը, որը հայտնի էր նաև ջրառատությամբ ու սառնորակ աղբյուրներով: Հատկապես հացաշատ գյուղ էր, որտեղից էլ հավանաբար ծագել է գյուղի *Հացտուր* անունը: Ավանդություններից մեկի վկայությամբ, հայ նախարարներն այս գյուղից հետ են դարձրել Վարդան Մամիկոնյանին, որը ցանկանում էր գնալ Բյուզանդիա: Գյուղը նաև մշակութային կենտրոն էր: Այնտեղ գործել են գրիչներ, գյուղում է գտնվել «Կարմիր Ավետարանը», որը հափշտակվել է 1899թ. հոկտեմբերի 26-ին, Խանի՝ Բարսեղ Թիրաքյանի զինակիր խմբի և քրդերի միջև տեղի ունեցած ընդհարման ժամանակ, երբ Խաչիկ վարժապետի տանը թաքնված խումբն ընկնում է շրջապատման մեջ: Ազատամարտիկներին հաջողվում է դուրս գալ օղակումից, բայց քրդերը, խուժելով գյուղի վարժապետի տուն, որպես ավար տանում են նաև ավետարանը:

Խաստուրի դպրոցի գրադարանից բացի, գործել է նաև Խաչիկյան գրադարանը[2]:

Տնտեսապես բարեկեցիկ էր Խաստուրը: Գյուղապետ Խաչատուր Սարգսյանի հուշերից տեղեկանում ենք, որ գյուղն ունեցել է 2000 գլուխ ոչխար, 1000 կով, եղել են տներ, որոնք ունեցել են մինչև 15 կով: 200 էգ գոմեշ, 200 լծկան գոմեշ, 300 զույգ եզ, 100 ձի, 50 էշ, 100 գութան, 30-40 ռուսական սիստեմի գութան, 200 սայլ, 300-400 արոր. սա էր գյուղացիների ունեցած սեփականությունը: Բերքատվության առումով ևս Հացտուրը չէր զիջում գավառի գյուղերին: Յուրաքանչյուր տարի ստացվում էր 8-10.000 սոմար հացահատիկ, 400 սոմար կտավատ (մեկ սոմարը 128 կգ է–Հ.Զ.)[3]: Գյուղում գործել են 10 ջրաղաց, ձիթհանք: Ներսես Շնորհալի կաթողիկոսի (641-661թթ.) նախաձեռնությամբ գյուղում կառուցվել է Ս.Աստվածածին եկեղեցին, որը «800 տարուան հնութիւն ունի»[4]: Գյուղի շրջակայքում էր գտնվում Թուխ Մանուկ կամ Ս.Ամենափրկիչ ուխտա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 440, թ. 20:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 425, թ. 1:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

տեղին, 1890թ. այստեղ գտնվել է սեպագիր արձանագրություն, որը հետագայում տեղափոխվել է Ալաշկերտ:

Ս.Աստվածածինն ուներ ընդարձակ դահլիճ, խաչաքանդակներով զարդարված խորաններ: Լենկթեմուրի արշավանքների ժամանակ եկեղեցին երկու անգամ թեև հրդեհվել է, բայց նորից վերաշինվել է: Վերջին անգամ եկեղեցին նորոգվել է 1862թ.[1]:

Գյուղի հյուսիսային կողմում էր գտնվում 5000 քանդակազարդ տապանաքարերով գերեզմանոցը, որն ավերվել է 1894-1896թթ. իրադարձությունների ժամանակ:

Խաստուրն ունեցել է 200 տուն հայ բնակչություն, որից 90 տուն հայ լուսավորչականներ էին, 80-ը՝ կաթոլիկ, 4-ը՝ բողոքական, մնացած 26 տունը քրդեր էին[2]: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 28 տուն, 250 շունչ հայ բնակչություն[3]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 55 տուն բնակչություն[4]: 20-րդ դարի սկզբներին գյուղն ունեցել է 160 տուն բնակչություն[5]: Հեղինակներից մեկն էլ հայտնում է, որ 19-րդ դարի վերջերին գյուղն ունեցել է 300 տուն հայ բնակչություն[6]:

Միջինը՝ 148 տուն, 1051 շունչ հայ բնակչություն:

Հայտնված վկայությունները, սակայն, չեն արտահայտում գյուղի բնակչության քանակի իրական պատկերը, որովհետև դարասկզբին գյուղն ունեցել է 500 տուն հայ բնակչություն, որի մի մասը 1859թ. գաղթել ու բնակություն է հաստատել այժմյան Շիրակի մարզի Փանիկ գյուղում: Գաղթածների թվաքանակը, սակայն, հայտնի չէ, վկայություններ չկան նաև 1894-1896թթ. կոտորածների ժամանակ զոհվածների մասին: Ուստի, միջին տարբերակով կունենանք 123 տուն, 1014 շունչ հայ բնակչություն, որը, ինչ խոսք, թեև չի համապատասխանում հայաշատ այդ գյուղի բնակչության իրական թվաքանակին, բայց չունենալով հավաստի մեկ այլ վկայություն՝ ընդունենք որպես գյուղի բնակչության մոտավոր քանակ:

Խաստուրցիները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, արհեստներով, առևտրով:

Ս.Աստվածածին եկեղեցին ունեցել է 2000 ներքին, 1000 լիրա պաշտոնեից հասույթ, Արագածյան վարժարանը՝ հանգանակություններով

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[4] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 215:
[5] ՏԲ, հ. 2, էջ 682:
[6] Նույն տեղում:

հավաքված 1000 լիրա հասույթ, 35 աշակերտ[1]: Փաստաթղթերից մեկը հայտնում է, որ աշակերտների թվաքանակը 200 էր[2]:

Խաչլու, Խաշլյու, Խաշլու, Խատխուլու, Խաչլուս գյուղը գտնվում էր Ալաշկերտից հյուսիս-արևելք, 4-5 կմ երկարության վրա, Արածանիի Շառիան վտակի գետակներից մեկի ձախ ափին: Գյուղի անունը ծագել է մոտակա բլրի վրա գտնվող խաչից, որից, ավանդության համաձայն, իբր լույս է բխել: Գյուղի բնակիչները գաղթել են Բասենից, Մանազկերտից, Խնուսից և Բուլանըղից: Հողերը բարեբեր էին: Գյուղը ջրառատ էր, ուներ 6 հորդառատ աղբյուր: Գյուղի հարևանությամբ էր գտնվում Դուռնագյոլ լճակը:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 1000 ներքին և 1500 լիրա պաշտոնեից հասույթ, Արծրունյան վարժարանը՝ 1000 լիրա հասույթ, 50 աշակերտ[3]: 1877թ. գյուղն ունեցել է 72 տուն հայ բնակչություն: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ՝ 41 տուն, 350 շունչ[4], Կարինի առաջնորդարանի հաշվումներով՝ 80 տուն հայ բնակչություն[5]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է 110 տուն հայ բնակչություն 20-րդ դարի սկզբներին[6]:

Միջին տարբերակով կունենանք 76 տուն, 467 շունչ հայ բնակչություն, ինչը գրեթե համընկնում է դարի երկրորդ կեսի՝ 1877թ. ցուցանիշի հետ:

Երիցու գյուղ, Իրիցգյուղ, Իրիցու գեղ, Ֆրանկ իրիցու գեղ, գտնվում էր Ալաշկերտից հարավ-արևելք, Մանգասար գետակի աջ ափին:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Հողը բարեբեր էր, գրեթե կիսով չափ ջրովի: Քիչ ընտանիքներ զբաղվում էին նաև այգեգործությամբ, բանջարաբուծությամբ:

1880թ. գյուղն ունեցել է 43 տուն, դարավերջին՝ 50-60 տուն հայ բնակչություն[7]: Գ.Սրվանձտյանցը հաշվում է 30 տուն[8], 250 շունչ, Կարինի առաջնորդարանը՝ 40 տուն հայ բնակչություն[9]:

[1] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 425, թ. 1:
[3] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[4] Նույն տեղում:
[5] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 215:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 685, թ. 147:
[7] ՏԲ, հ. 2, էջ 550:
[8] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[9] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 215:

Եվս երկու աղբյուր 1914թ. համար հայտնում է 60[1] և 110 տուն վկայությունները[2]:

Միջին տարբերակով կունենանք 57 տուն, 405 շունչ հայ բնակչություն:

Ղայաբեկ, Ղայապեկ գյուղը գտնվում էր Ալաշկերտից հարավ-արևելք, Իրիցու գյուղից հյուսիս-արևմուտք, Ալաշկերտ-Կարաքիլիսե ճանապարհին, Մանգասար գետակի ձախ ափին:

Գյուղն անտառապատ է, այգիների մեջ ծվարած, ունի բերրի հող: Հիմնական զբաղմունքներից մեկը գոմշապահությունն է, ոչխարաբուծությամբ չեն զբաղվում արոտավայրի պակասության պատճառով: Գյուղում կա մի մեծ գերդաստան, որը քրդերն անվանում են Գորոններ՝ գայլեր: Ավանդության համաձայն, այդ գերդաստանն իբր սերվել է Գայլ Վահանից: Եկեղեցին գետնափոր է, այնտեղ պահվում է ավետարան[3]: Գյուղն ունեցել է ջրաղաց և ձիթահանք:

Գ.Սրվանձտյանցը վկայում է, որ եկեղեցին ուներ Ս.Աստվածածին անունը, նրա ներքին և պաշտոնեից հասույթը կազմում էր 2500 լիրա: Մասիսյան վարժարանում սովորում էր 29 աշակերտ: Վարժարանն ուներ հանգանակությամբ գոյացող 1000 լիրա հասույթ[4]:

Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 40 տուն հայ բնակչություն[5]: Արխիվային փաստաթղթերից մեկը գյուղում հաշվում է 30 տուն բնակչություն[6]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ՝ 27 տուն, 200 շունչ բնակչություն[7]: Միջին տարբերակով կունենանք 32 տուն, 230 շունչ հայ բնակչություն:

Չկան, Ջկան գյուղը գտնվում էր Ալաշկերտից հարավ-արևելք: 19-րդ դարի վերջերին, 20-րդ դարի սկզբներին Նազար Ղազարյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ գյուղն ունեցել է 90 տուն հայ բնակչություն, 2 տուն քուրդ, 1000 գլուխ ոչխար, 1200 գլուխ կով, գյուղացիներն ունեցել են նաև գոմեշներ, ձիեր, եզներ: Տարեկան բերքը կազմել է 1500 խալվար ցորեն ու գարի: Հողամշակներն օգտագործում էին 40 գութան, խոտհարքներից հավաքվում էր 750 սայլ խոտ[8]: Ս.Աստվածածին եկեղե-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 160, թ. 6:
[2] ՏԲ, հ. 2, էջ 550:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 240, թ. 82:
[4] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[5] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 215:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 240, թ. 82:
[7] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 440, թ. 4:

ցին, բացի 2500 լիրա ներքին և պաշտոնեից հասույթից[1], ուներ նաև 350 օսմանյան ոսկի, որն օգտագործում էր եկեղեցու և վարժարանի վրա, խիստ անհրաժեշտության դեպքում[2]:

Գյուղի Թորգոմյան վարժարանի հասույթը կազմվում էր հանգանակությունից և հասնում էր 1500 լիրայի: Վարժարանն ուներ 27 աշակերտ[3]:

Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղի հայությունը 60 տուն էր (420 շունչ– Հ.Զ.)[4]: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 20 տուն, 160 շունչ հայ բնակչություն[5]:

Միջինը՝ 40 տուն, 290 շունչ հայ բնակչություն:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

Ց ՈՒ Ց Ա Կ

Ալաշկերտի գավառի հայաշատ գյուղերի

	տուն	շունչ
Աշխալե	10	60
Ամատ	100	600
Զետկան	80	480
Երիցու գյուղ	41	470
Եխնի թեփե	90	540
Ղազի	15	120
Ղայսբեկ	27	200
Խալչու	80	480
Խաստուր	111	786
Խոշյան	5	30
Հաճի Սաֆար	13	110
Համատ	100	950

Գավառի նշանավոր գյուղերից էին Ալեքսանը, Բոշեկը, Բյուրապատը, Դավոն, Երանոսը, Զատոն, Զիրոն, Խըտրրը, Կոբալը, Մաժկերտը, Նավիկը, Ներքին Ղազին, Շահնազարը, Զամբլուն, Զարակը, Ջաջուռը, Տոման, Տումարը, Քարաձորը: Գավառակում հաշվվում էր շուրջ 80 գյուղ, որոնցից առավել հայաշատ էին հիշատակված գյուղերը:

[1] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 440, թ. 4:
[3] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[4] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 215:
[5] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:

Դիադինի գավառը հյուսիսային կողմում սահմանակից էր Երևանի նահանգին, հարավում՝ Վասպուրականին կամ Վանի նահանգին, արևելքում Բայազետի գավառն էր, արևմուտքում՝ Ալաշկերտի գավառը: Տարածքով հիմնականում համընկնում էր հնագույն Ծաղկոտն գավառին: Գավառի միջով հոսում է Արածանի գետն իր բազմաթիվ վտակներով, որոնք ոռոգում են Դիադինի դաշտը, որը կազմում է Ալաշկերտի դաշտի մի մասը: Հ.Կարնեցին այս առթիվ գրում էր. «...աստի ելանէ մեծ մասն Եփրատայ, եւ քուքուրդ բազում, եւ գնացեալ ի մէջ դաշտին, եւ լինի գետ մեծ եւ անհուն»[1]:

Գավառն ունի գեղեցիկ, հիասքանչ բնություն, խոտավետ լեռնալանջեր, ջերմուկներ, սառնորակ աղբյուրներ, ծառաստաններ: Ղ.Ինճիճյանը, նկարագրելով գավառակը, գրում է. «’Ի գարնանային ժամանակս առհասարակ չքնաղ վայելչութեամբ զարդարի բիւրազգի երփներանգ ծաղկոք, որոյ վրա ‘ի վաղ ժամանակաց անտի եղաւ անուանուն *Ծաղկոց*»[2]:

Արածանին գավառում հրաշակերտություն է հեղինակում: Գետի երկու ափերը զարդարված են ծաղկավետ լանջերով, բայց ամենահմայիչը ձորն է, որը, լինելով գետի հունը, ներկայանում է «որպես լեռ քարերի վիթխարի ձուլուածքներ, շեշտակի բարձրանում են վեր, ինչպէս պարիսպներ, մէջտեղ թողնելով մի անցք Եփրատի կոհակների համար. այդ ձուլուած կողերը եւ բարձր եւ գեղեցիկ եւ տպավորիչ. կարծէք մարդկային ձեռքը յոկիչ գործիքներով յոկել է այդ քարափ պարիսպները»,- գրում է Ա-Դոն[3]:

Դիադինից հարավ, 5-6 կմ հեռավորության վրա գտնվում է բնության հրաշալիքներից մեկը՝ բնական կամուրջը, որն ունի 21 մետր բարձրություն: Այն ունի ծծմբա-կրաքարային ծագում և հանդիսանում է նրանց միացության արդյունք:

Կամրջի տակ «գալարվող Եփրատը հմայք և երկիւղ է ազդում», գրում է Ա-Դոն[4]: Կամրջի երկու կողմերից բխում են հանքային ջրեր: Կամրջից վերև Գերմավն է՝ հանքային ջրերի ակունքը, որն ամռանը վերածվում է մի հսկա բուժարանի:

Գավառի հաջորդ հրաշալիքը Ուչքիլիսեի վանքն է: Այն գտնվում է Դիադինից 15 վերստ հեռավորության վրա, Նպատ լեռան հյուսիսային լանջին: Հինավուրց Բագավանի Ս.Հովհաննես վանքը պաշտամունքի

[1] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 21:
[2] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 115:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 207:
[4] Նույն տեղում:

վայր է եղել դեռ հեթանոսական ժամանակներից: Վանքում տեղի են ունեցել եկեղեցական ժողովներ, այդտեղ է օծվել Դանիել Սուրմալեցի կաթողիկոսը: Վանքը շրջապատված էր պարսպով, ուներ կալվածքներ, ջրաղացներ, անասունների հոտեր ու նախիրներ: Քոչվոր թուրքերի և քրդերի հայտնվելուն պես խաթարվեց ոչ միայն մարդկային, այլև բնության բնականոն զարգացումը, կասեցվեց հայության ու նրա պապենական հայրենիքի հոգևոր ու տնտեսական կյանքը:

Գավառի բնակությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ: Փոքր թիվ էին կազմում արհեստներով ու առևտրով զբաղվողները:

Բնակչության քանակի վերաբերյալ ունենք հետևյալ վկայությունները: Ա.Կոլյուբակինի հաղորդմամբ, գավառակում եղել են 125 բնակավայր, 1583 տուն, որից միայն 72 տունն էր հայկական: Հավաքվել է 90.050 պիաստր աշար: Անասնապահներն ունեին 8035 գլուխ խոշոր եղջերավոր, 23.370 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 206 սայլ[1]: Երկրորդ հաղորդմամբ նույն հեղինակը նշում է, որ գավառն ուներ 36 գյուղ, 518 տուն բնակչությամբ, որից միայն 20 տունն էր հայկական: Իսկ 22 գյուղերում կային 4680 գլուխ խոշոր և 12.350 գլուխ մանր եղջերավոր անասուններ[2]:

Ալ.Երիցյանը գավառակում հաշվում է 16 գյուղ, որից 11-ը՝ քրդական, 2-ը՝ եզիտական, 2-ը՝ հայկական, 1-ը՝ խառը: Տների քանակը հետևյալն էր, 1598 տուն քուրդ, 82 տուն՝ եզիտ, 41 տուն՝ հայ, ընդամենը՝ 1721 տուն: Բնակչության քանակը՝ 11.028 էր, 10.140 շունչ քուրդ, 510՝ եզիտ, 378՝ հայ: Այսպիսով, ըստ հեղինակի դասակարգման, քրդերը կազմում էին բնակչության 92 տոկոսը, 4,5 տոկոսը եզիտներ էին, 3,5 տոկոսը՝ հայեր[3]:

Վ.Քինեի վիճակագրությամբ, գավառակում ապրում էին 10.706 մահմեդական, 364 հայ, 88 այլազգի, ընդամենը՝ 11.158 բնակչություն[4]:

Կարինի առաջնորդարանի տեղեկությամբ, գավառում կային 7 հայկական գյուղեր, որոնք ունեին 156 տուն, 1092 շունչ բնակչություն[5]:

Հեղինակներից մեկի վկայությամբ, 1878թ. գավառն ուներ 78 բնակավայր, 1600 տուն, 12000 շունչ բնակչություն[6]:

---

[1] *Колюбакин А.,* նշված գիրքը, стр. 280-281.
[2] Նույն տեղում, էջ 254, 255:
[3] «Փորձ» ամսագիր, 1880, թիւ 6-7, տե՛ս *Ալ. Երիցյանի* հոդվածը:
[4] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 236-237:
[5] Նույն տեղում, էջ 226:
[6] ՏԲ, հ. 2, էջ 97:

Արխիվային փաստաթղթերը հայտնում են, որ 1886թ. գավառն ունեցել է 1178 տուն, 11.748 շունչ բնակչություն, 88 գյուղ, այսինքն՝ յուրաքանչյուր գյուղ ունեցել է 20 տուն, 113 շունչ բնակչություն, կամ ամեն տուն ունեցել է 6,6 շունչ: Նույն փաստաթղթերի երկրորդ հաղորդմամբ, 1886թ. գավառն ունեցել է 73 գյուղ[1]:

Այս խառնաշփոթ, իրարամերժ վկայություններից որևէ մեկին նախապատվությունը տալ հնարավոր չէ:

Միջինը՝ 6 գյուղ, 289 տուն, 495 շունչ հայ բնակչություն, քաղաքը՝ 721 շունչ, հավասար է 1216 շունչ հայ բնակչություն գավառում:

Գ.Սրվանձտյանցն առանձին վկայություն չի թողել գավառի մասին, բայց նրա կազմած «Բայազետ և Ալաշկերտ» ցուցակում նշված է գավառի ընդամենը երեք գյուղ[2]:

Թերևս իրականությանը մոտ է Կարինի առաջնորդարանի վիճակագրությունը, բայց վերջինը սահմանափակ է ներկայացնում գյուղերի, բնական է՝ նաև հայության թիվը, ինչը որպես հիմնավոր վկայություն ընդունելը դառնում է անկարելի: Սակայն ձեռքի տակ չունենալով առավել համոզիչ փաստարկ՝ Կարինի առաջնորդարանի վիճակագրությունն ընդունենք որպես միայն յոթ գյուղերի, այլ ոչ թե ամբողջ գավառի մասին վկայություն:

Վ.Քինեի և Ա.Կոլյուբակինի վկայություններից մեջբերումները նպատակ ունեին ևս մեկ անգամ ընդգծել, որ պաշտոնական անաչառ վիճակագրության բացակայության պայմաններում կողմնակալ տեղական պաշտոնյաների հաղորդումների վրա հենված վիճակագրություն անվանյալը, որը մեզ են ներկայացնում հիշյալ հեղինակները, ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլև, անգամ անասունների քանակի առավել ճշգրիտ ներկայացմամբ հաստատվում է այն միտքը, թե անասնապահ ցեղերն էին տիրականը Արևմտյան Հայաստանում, որոնք էլ կազմում էին բնակչության գերակշիռ հատվածը:

Գավառի կենտրոնը *Դիադին, Թիադին, Տիադին, Տիատին* գյուղաքաղաքն էր: Այն գտնվում էր Բայազետից արևմուտք, 38 կմ հեռավորության վրա, Արածանիի աջ ափին, Հ.Կարնեցու խոսքերով՝ «գլուխս դաշտին» Գռնավուկ[3]:

Ենթադրվում է, որ անունը ծագել է Դիատուն անվան հետ, որը կապված է 371թ. Ձիրավի ճակատամարտի հետ, երբ զոհված հույն զին-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 180, թ. 61, 65:
[2] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[3] *Կարնեցի Հ.,* նշված գիրքը, էջ 21:

վորներին թաղում են այդ վայրում և Դիատուն բառից էլ հետագայում, երբ այնտեղ հիմնվում է բնակավայր, ծագում է *Դիադին* անունը:

Դիադինը, գտնվելով Տրապիզոն-Կարին առևտրական ճանապարհին, սակավ մասնակցություն էր ունենում կատարվող առևտրին: Քաղաքում գողծող 40-50 կրպակ-արհեստանոցները նույնպես չէին կարող հիմնավոր դերակատարում ունենալ գավառակի տնտեսության մեջ: Արհեստներն ու առևտուրը հիմնականում սահմանափակվում էին գավառակի, տեղական սահմաններում և մեծ մասամբ կրում էին մանրավաճառության կնիքը:

Մինչև 19-րդ դարի 20-ական թվականները Դիադինի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը: Դարի երկրորդ կեսից պատկերը կտրուկ փոխվեց: Այստեղ դեր խաղացին 1829թ. գաղթը, թուրքական իշխանությունների հալածական քաղաքականությունը, և դարի 70-ական թվականներին Դիադինը ներկայանում է կիսահայաթափ բնակավայր, այդ գործընթացն ավարտին հասցվեց 1894-1896 և 1915թթ.:

Ղ.Ինճիճյանը հայտնում է, թե Դիադինն ուներ 500 տուն քուրդ և հայ բնակչություն[1]: Կարինի առաջնորդարանը վկայում է 15 տուն հայերի գոյության մասին[2]: 19-րդ դարի 80-ական թվականներին քաղաքում 80 տուն է հաշվում հեղինակներից մեկը[3]:

Կարաբազար, Գարաբազար, Խարաբազար, Ղարաբազար գյուղը գտնվում էր Դիադինից հյուսիս-արևմուտք, Ուչքիլիսայի Ս.Հովհաննես վանքի հարևանությամբ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, կային նաև տեղական պահանջները բավարարող արհեստավորներ:

Գյուղն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, որի հասույթը կազմում էր 500 լիրա՝ ներքին և 1000 լիրա՝ պաշտոնեից: Վարժարանը կոչվում էր Տրդատյան, ուներ 25 աշակերտ և հանգանակությունից գոյացած 500 լիրա հասույթ[4]:

1877-1878թթ. գյուղն ունեցել է 30 տուն բնակչություն[5]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 20 տուն հայ բնակչություն[6]: Նույն վկայությունը հաղորդում է նաև Գ.Սրվանձտյանցը[7]:

[1] *Ինճիճեան Ղ.,* նշված գիրքը, էջ 115:
[2] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[3] ՏԲ, հ. 2, էջ 973:
[4] ԳԱԹ, նշվ. տեղում, գ. 23, թ. 11:
[5] ՏԲ, հ. 2, էջ 973:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 210:
[7] ԳԱԹ, նշվ. տեղում, գ. 23, թ. 11:

Միջինը՝ 23 տուն, 163 շունչ հայ բնակչություն:

Կարաբազարի բնակչությունը հարված ստացավ համիդյան ջարդերի ժամանակ, ցիրուցան եղավ, ապա տարբեր տեղերից հավաքվեցին մի քանի հայ ընտանիքներ, բնակություն հաստատեցին գյուղում, սակայն նրանք էլ զոհ դարձան 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ:

Գումլուպուճախ, Ղումլիպուճախ, Ղումլիբուջախ գյուղը գտնվում էր Դիադինից հյուսիս-արևմուտք, Նպատ լեռան ստորոտում:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 1500 լիրա, Խոսրովյան վարժարանը՝ 500 լիրա հասույթ: Վարժարանում սովորում էր 30 աշակերտ:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 24 տուն, 200 շունչ հայ բնակչություն[1]: Կարինի առաջնորդարանը հաղորդում է, որ գյուղի հայ բնակչությունը կազմում էր 35 տուն[2]:

Միջինը՝ 29 տուն, 222 շունչ հայ բնակչություն:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ՝ արհեստներով:

Ջուջան գյուղը տեղավորված էր Դիադինից հյուսիս-արևմուտք, Սելտո և Բաղաղի քրդաբնակ գյուղերի հարևանությամբ: Գավառի ամենամեծ հայաբնակ գյուղն էր, ուներ 45 տուն (մոտ 315 շունչ– Հ.Ջ.) բնակչություն[3]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 29 տուն, 250 շունչ հայ և 120 շունչ թուրք բնակչություն: Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 1500 լիրայի ներքին և պաշտոնեից հասույթ: Սմբատյան վարժարանի հասույթը նույնպես զոյանում էր հանգանակությամբ և կազմում էր 500 լիրա: Վարժարանի աշակերտների թիվը 37 էր[4]:

Գավառի հայկական գյուղերից էին նաև Ուչքիլիսան, Սեյդոն, Միրզաջանը:

Գավառի նշանավոր գյուղերից էին Ադբաձորը, Բուդաղին, Գորանին, Գմբեթը, Դավիթին, Թոխրուջան, Լաշկոն, Դոբեկը, Մարտիկը, Միրզաջանը, Սորան:

Գավառում հաշվվում էր շուրջ 40 գյուղ, որոնցից Կարինի առաջնորդարանի տեղեկություններով՝ միայն 7-ն էր հայաբնակ[5]:

[1] Նույն տեղում:
[2] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 210:
[3] Նույն տեղում:
[4] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[5] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 210:

Ց ՈՒ Ց Ա Կ

Դիադինի գավառի հայաշատ գյուղերի

	տուն	շունչ
Գումլուպուճախ	35	200
Ջուջան	37	113
Կարաբազար	29	222
Միրզաջան	7	50
Նավրուզ	85	600
Սքրապեղ	27	200
Սեյդո	7	50
Վանքի գյուղ	20	180
Փոթի	15	120

Դութաղի կամ Անթափի գավառ. Սահմաններն էին՝ հարավում Բիթլիսի նահանգը, հյուսիս-արևելքում՝ Ղարաքիլիսեի, հյուսիս-արևմուտքում՝ Ալաշկերտի գավառները, արևմուտքում՝ Կարինի գավառը, արևելքում՝ Դիադինի գավառը:

Գավառի միջով հոսում էր Արածանին, և գավառի սահմանները նկատի ունենալով, այն երբեմն նմանեցնում են Տուրուբերանի Տվարածատափ գավառին:

Դութաղի գավառի կլիման բարեխառն է, ջրառատ, հողը՝ բերրի, արոտավայրերը՝ խոտառատ, որոնք էլ հնարավորություն են տալիս զարգացնելու հատկապես անասնապահությունը, որովհետև գավառի բնակչության հիմնական մասը կազմում են քրդերը: Հայերը, որոնք փոքրաթիվ են, հիմնականում զբաղվում են երկրագործությամբ, մասամբ՝ անասնապահությամբ և արհեստներով: Բնակչության, հատկապես հայերի զբաղվածության խորացման, ընդարձակման վրա մեծ ազդեցություն էր թողնում քրդերի վերաբերմունքը, որոնք ապրուստի միջոցներից հիմնականը համարում էին թալանը և կարիքի կամ անհրաժեշտության դեպքում իրենց պակասությունները լրացնում էին հայերի հաշվին: Շահագրգռվածության բացակայության պատճառով էլ հայերն արտադրում էին այնքան, որքան կբավարարեր ընտանեկան պահանջները: Պարբերաբար կրկնվող այդ ավարառություններն էլ պատճառ էին դառնում, որ հայերը դիմում էին գաղթի, և գավառում մնում էին միայն նրանք, ովքեր կարող էին համբերությամբ տանել այդ ծանր լուծը, «իսկ

նրանք, ովքեր անկարող են եղել տանել այդ գազանությունները, փախել են այդ շրջանից առանց յետ նայելու»,- գրում է Ա-Դոն[1]:

Ահա այդպես հայաթափվել է երբեմնի հայաշատ գավառը:

Դութաղի գավառի ամենաբերրի մասը դաշտն էր: Այն տարածվում էր Ծաղկանց լեռների արևմտյան բարձրությունների, Շառիան լեռների հարավային լեռնաբազուկների միջև: Դաշտի երկարությունը հավասար էր 30 կմ-ի, լայնությունը՝ 25 կմ-ի:

Գավառը 19-րդ դարի վերջերին ունենցել է 80 բնակավայր՝ 3900 բնակչությամբ[2]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գավառը 1877թ. դեկտեմբերի վիճակագրությամբ, ունեցել է 69 գյուղ, 1449 տուն, 7837 շունչ բնակչությամբ, որից 4138-ը տղամարդ էին, 3699-ը՝ կին: Թուրքերն ու քրդերն ունեին 4025 տղամարդ, 3602 կին, ընդամենը 7627 շունչ, հայերից 118-ը տղամարդ էին, 97 կին, ընդամենը 215 շունչ[3]:

Ա-Դոյի հավաքած տեղեկություններով, գավառն ունեցել է 96 գյուղ, որոնցից միայն 22 գյուղերում կային հայեր, 203 տուն, 1657 շունչ բնակչություն[4]:

Գավառի Պանդոս գյուղում ապրում էին 50 տուն հայեր, Նադարշեյխ գյուղում՝ 24 տուն, Խրբասոր գյուղում՝ 19, Ղարաքեոյում՝ 15, Քոշկ գյուղում՝ 18, Մըլան գյուղում՝ 12, Մոլլա-հասանում՝ 8 տուն, Շամե գյուղում՝ 10 տուն հայեր: Մնացած 11 գյուղերում տեղավորված էին 1-5 տուն հայեր[5]:

Գավառակենտրոնը Դութաղ գյուղն էր, որն ուներ 6 տուն հայ բնակչություն: Հեղինակներից մեկը հայտնում է, որ գավառանիստը Թունաք գյուղն էր, որը, սակայն, ստուգման և պարզաբանման կարիք ունի:

Գավառի հիշված 22 գյուղերում քրդերն ունեին 1657 տուն: Եթե համեմատություն անցկացնենք, ապա գավառի 22 գյուղերում ապրում էին 203 տուն, 1657 շունչ հայ և 1657 տուն, 11.599 շունչ քուրդ բնակչություն[6]:

1894-1896թթ. կոտորածներից հետո հայերի եղած թիվը ևս պակասեց, մի մասը գաղթեց այլ վայրեր, իսկ մնացածը կոտորվեց Մեծ եղեռնի ժամանակ:

---

[1] Նույն տեղում, էջ 216:
[2] ՏԲ, հ. 2, էջ 235:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 129, թ. 1-4:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 217:
[5] Նույն տեղում:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 217:

Ց Ո Ւ Ց Ա Կ

Դութաղի (Անթափի) գավառի հայաշատ գյուղերի

	տուն	շունչ	
Դութաղ	6	42	
Բաղուն	11	100	
Նաղարշեյխ	24	168	
Ղարդալըղ	5	30	
Ղարաքեոյ	15	90	
Ջամալվերդին	5	30	
Մոլա Հասան	8	48	298
Խարխալըղ	5	30	
Խըբասոր	19	114	
Մուսիկ	5	30	174
Մըլան	12	72	
Շամե	10	60	132
Պաղնոս	50	300	
Քոշկ	13	78	378

Կարինի առաջնորդարանի տեղեկություններով, գավառի մնացած 10 գյուղերում հայերն ունեին 1-5 տուն բնակչություն[1]:

Ցուցակում ներկայացված 13 գյուղերն ունեին 177 տուն, 1247 շունչ հայ բնակչություն: Այսինքն՝ յուրաքանչյուր գյուղում 96 շունչ, կամ յուրաքանչյուր տուն՝ 7,05 շունչ: Ստացված քանակը Ա-Դոյի ցուցակից պակաս է 26 տուն, 410 շնչով: Եթե մեր ունեցած արդյունքին գումարենք հիշատակված 11 գյուղերի միջին ցուցանիշները՝ 33 տուն, 247 շունչ, ապա կստանանք 210 տուն (177-33-210), 1494 շունչ (1247-247-1494): Գումարած Դութաղ գավառակենտրոնի բնակչության քանակը՝ 6 տուն, 42 շունչ, կստանանք 216 տուն, 1536 շունչ: Գրեթե Ա-Դոյի հաշվարկած 203 տուն, 1657 շունչ (պակաս է 16 տուն, 212 շունչ):

Կարաքիլիսեի գավառ: Գավառի սահմաններն էին հարավ-արևմուտքում՝ Դութաղի, հյուսիս-արևմուտքում՝ Ալաշկերտի գավառները, հյուսիս-արևելքում՝ Դիադինի գավառը, հարավում՝ Դութաղի և Դիադինի գավառները:

Գավառը Բայազետի գավառներից ամենամեծն էր: Հողը բերրի էր, գավառի միջով անցնում էր Արածանին: Գավառի տնտեսական աճի վրա դրական ազդեցություն էր թողնում Տրապիզոն-Պարսկաստան ճանապարհը:

[1] Նույն տեղում:

Մինչև 17-րդ դարը, քանի դեռ չէր սկսվել քրդական ու թուրքական ցեղերի զանգվածային ներհոսքը, գավառը տարածաշրջանի զարգացման և տնտեսական հեռանկարներ ունեցող շրջաններից էր: Հողի բերրիությունը, առևտրի ու արհեստների բավարար մակարդակը տալիս էին այդ հնարավորությունը: Այս հարցում մեծագույն նախադրյալ էին նաև ներքին կապերը, որոնցով գավառը կապված էր Կարինի նահանգի գրեթե բոլոր շրջանների հետ: Ստացված հարուստ բերքը փոխանակվում և վաճառվում էր նահանգի շուկաներում:

Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գավառն ուներ 155 գյուղ, որոնցից միայն 10-ն էր հայաբնակ[1]: Ալ.Երիցյանը հայտնում է, որ գավառն ունեցել է 53 գյուղ, որից 27-ը՝ քրդական, 5-ը՝ եզիտական, 7-ը՝ պարսկական, 10-ը՝ հայաբնակ, 4-ը՝ խառը: Տների քանակով՝ 639 տուն քուրդ, 96 տուն եզիտ, 352 տուն՝ պարսիկ, 243 տուն հայկական, ընդամենը՝ 1429 տուն: Քրդերը կազմում էին 4856 շունչ, եզիտները՝ 680, պարսիկները՝ 2708, հայերը՝ 2622 շունչ, ընդամենը՝ 10.866 շունչ բնակչություն: Տոկոսային հարաբերությունը հետևյալն էր՝ 44,5 տոկոս քուրդ, 6 տոկոս եզիտ, 25 տոկոս պարսիկ, 24,5 տոկոս հայ[2]:

Ա.Կոլյուբակինի հաշվումներով, գավառի բնակչության կազմն այսպիսին էր. 86 բնակավայրերում ապրում էին 369 տուն հայեր, 1295 տուն մահմեդականներ[3]:

1887թ. վիճակագրությամբ գավառում եղել է 58 գյուղ, 1420 տուն, 8869 շունչ բնակիչներից 4648-ը տղամարդ էր, 4221-ը՝ կին: Այդ հարաբերության մեջ թուրքերի տղամարդիկ 3463 հոգի էին, կանայք՝ 3288, ընդամենը՝ 6751 հոգի: Հայերն ունեին 1185 տղամարդ, 933 կին, ընդամենը՝ 2118 շունչ հայ բնակչություն[4]:

Գավառի 9 գյուղերում և Կարաքիլիսե քաղաքում բնակվում էին 624 տուն, 4368 շունչ հայեր, որը վկայում է Կարինի առաջնորդարանը[5]:

Մեկ այլ արխիվային փաստաթուղթ հայտնում է, որ գավառի և Կարաքիլիսա քաղաքի հայերն ունեին 600 տուն[6]:

Հաջորդ արխիվային փաստաթուղթը և հեղինակների վկայությունները կրկնում են մեր ունեցած տեղեկությունները: Այս խառնաշփոթ հա-

[1] Նույն տեղում:
[2] «Փորձ» ամսագիր, 1880, թիւ 6-7, տե՛ս *Ալ. Երիցյանի* հոդվածը:
[3] *Колюбакин А.,* նշված գիրքը, стр. 316-417.
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 129, թ. 30-33:
[5] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 226:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 180, թ. 58:

ղորդումներից որևէ մեկին հնարավոր չէ տալ առաջնություն, ուստի խնդիրը նորից լուծենք միջին տարբերակով և գավառում կունենանք 530 տուն, 3562 շունչ հայ, 574 տուն, 4023 շունչ թուրք բնակչություն: Կարծում ենք, որ ստացված արդյունքը, իրոք, միջինն է այն ծայրահեղությունների նկատմամբ, որոնց արդեն ծանոթ ենք, և կարելի է ստացված թվերն ընդունել գոնե որպես մոտավոր հաշվումներ:

Գավառի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

1890թ. տվյալներով, գավառակում կար 12.655 խոշոր և 13.845 մանր եղջերավոր անասուն[1]:

Տրապիզոն-Կարին-Պարսկաստան ճանապարհը, ինչպես նշեցինք, բարերար ազդեցություն էր ունենում գավառի առևտրական կյանքի վրա: Դարի երկրորդ կեսից Կարաքիլիսեում, Երնջալու, Մանկասար, Մեզրե գյուղերում բացվեցին կրպակներ, արհեստավորների խանութ-արհեստանոցներ: Անգամ հայ եկեղեցին, եկեղեցու և վարժարանների հոգսերը հոգալու նպատակով, բացում էր կրպակներ, ինչպես, օրինակ, Կարաքիլիսեում, որտեղ կրպակների թիվը հասնում էր 13-ի[2]: Գավառի առևտուրը հիմնականում գտնվում էր Բաղեշի հայ առևտրականների ձեռքին, որոնք ունեին 100 կրպակ և աչքի էին ընկնում «անգութ վաշխառությամբ»[3]:

60-70-ական թվականներին սկսված աշխույժ առևտուրը, սակայն, դադարեց այդպիսին լինելուց 90-ական թվականներին, և գավառակի կենտրոնում, գյուղերում հազվադեպ էին երևում անգամ մանրավաճառները:

Արհեստներից զարգացած էր բրուտագործությունը: Գավառի բրուտագործներն իրենց արտադրանքը վաճառում էին գավառում կամ փոխանակություն կատարում: Մնացած արհեստավորները՝ որմնադիր, հյուսն, դարբին, գործում էին տեղային նեղ պայմաններում՝ բավարարվելով գյուղատնտեսական գործիքների նորոգմամբ, նախնական աշխատանքային գործիքների պատրաստմամբ, հազվադեպ պատահող բնակարանաշինությամբ: Այս ամենը նկատի ուներ Ա-Դոն, որը ցավով նշում էր, թե երբեմնի բարեկեցիկ գավառը վեր է ածվել մի շրջանի, ուր «թագավորում են քաղցն ու թշուառութիւնը»[4]:

[1] *Колюбакин А.,* նշված գիրքը, стр. 317.
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 181, թ. 70:
[3] Նույն տեղում, թ. 72:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 212:

Գավառի կենտրոնը *Կարաքիլիսե, Կարաքյոսի, Ղարաքիլիսե* քաղաքն էր: Ենթադրվում է, որ անունն առաջացել է սև քարով կառուցված եկեղեցու պատճառով:

Քաղաքը գտնվում էր Արածանիի աջ ափին, Տրապիզոն-Կարին-Պարսկաստան ճանապարհին: Այս հանգամանքը պատճառ էր դառնում առևտրական եռուն կյանքի, որտեղ հիմնական դերակատարները հայերն էին: Նրանց էր պատկանում քաղաքում գտնվող 200 կրպակների կեսը: Հայ եկեղեցին, հեղինակներից մեկի վկայությամբ, քաղաքում ուներ 25 կրպակ[1]: Քաղաքը նկարագրող հեղինակներից մեկը նշում է, որ հայերը մեծ մասամբ առևտրականներ էին, մնացած կեսը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ[2]:

Քաղաքի հայերը, ընդգծում է նույն հեղինակը, ունեին 6000 անասուն, 3000 ոչխար, ամեն տուն ուներ իր սայլը, կար 150 գութան և այլն[3]:

Քաղաքի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ երկու քահանա, 1000 լիրա ներքին և 2000 լիրա պաշտոնեից հասույթ: Հայկազյան վարժարանի հասույթը 1500 լիրա էր, որտեղ մեծ էր եկեղեցու օժանդակությունը: Վարժարանում սովորում էր 60 աշակերտ[4]:

Ընդհանրացնելով իր վկայությունները քաղաքի մասին՝ հուշագիրներից մեկը նշում է, որ հայերը «բոլորն ալ նիւթական բարւօք վիճակի մէջ կը գտնուին»[5]:

Նույն հուշագիրը հայտնում է, թե 1914թ. պատերազմից առաջ քաղաքն ուներ 1000 տուն հայեր, «նոյնքան մ'ալ թիւրք-քիւրտ»[6]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, քաղաքն ունեցել է 350 տուն, 2450 շունչ հայ բնակչություն[7]: Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, Կարաքիլիսան ուներ 90 տուն, 800 շունչ հայ բնակչություն[8]:

Նկատի ունենալով, որ մեր ունեցած երկու վկայությունները ծայրահեղություններ են, դիմենք միջին տարբերակին. կստանանք 480 տուն, 3416 շունչ հայ բնակչություն արդյունք, որն ընդունել հնարավոր չէ, և հենվենք վերջին երկու տեղեկությունների վրա և գավառում կունենանք 220 տուն, 1325 շունչ հայ բնակչություն:

[1] ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 311:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 434, թ. 1:
[3] Նույն տեղում:
[4] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 226:
[8] ԳԱԹ, նշվ. տեղում, թ. 11:

Գավառի հայաշատ գյուղը *Եոնջալուն, Յոնջալուն* էր: Գյուղը գտնվում էր Կարաքիլիսեից հարավ-արևելք: Ուներ բերրի հող, ջրառատ էր, ծառաշատ, բայց դրանք մրգատու ծառեր չէին:

Գյուղն ուներ 2000 ոչխար, 1000 խոշոր եղջերավոր անասուն[1]: Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 1000 լիրա ներքին և 1500 լիրա պաշտոնեից հասույթ, Լուսավորչյան վարժարանը՝ 1000 լիրա հասույթ, որը գոյանում էր հանգանակությամբ: Վարժարանում սովորում էր 60 աշակերտ[2]: Եկեղեցում կային Կարմիր ավետարան, ուրիշ հին ձեռագրեր՝ «բոլորն ալ թանկարժեք»[3]:

Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ առևտրով, մասամբ՝ արհեստներով:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղում ապրում էին 40 տուն, 350 շունչ հայեր[4]: Կարինի առաջնորդարանի տեղեկությամբ՝ 80 տուն (560 շունչ– Հ.Զ.) հայեր[5]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է 90 տուն, 900 շունչ հայ բնակչության մասին[6]: Միջինը՝ 70 տուն, 630 շունչ հայ բնակչություն:

Մանկասար գյուղը գտնվում էր Կարաքիլիսեից հարավ-արևելք, Խրդրը գյուղի հարևանությամբ: Ուներ Ս.Հարություն եկեղեցի՝ 4500 լիրա ընդհանուր հասույթով, Գուրգենյան վարժարան՝ հանգանակությամբ գոյացած 2000 լիրա հասույթով, 70 աշակերտով:

Գյուղի բնակչության թվաքանակի մասին կա 2 վկայություն՝ 80 տուն, 700 շունչ[7] և 60 տուն[8]:

Միջինը՝ 70 տուն, 560 շունչ հայ բնակչություն:

Մեզրէ, Մազրա գյուղը Գ.Սրվանձտյանցն անվանում է Նոր գյուղ: Գտնվում էր Կարաքիլիսայից հյուսիս-արևելք: Գ.Սրվանձտյանցն իր ցուցակում եկեղեցի և վարժարան չի նշում, սակայն հայտնում է, որ գյուղում ապրում էին 14 տուն, 130 շունչ հայեր[9]:

Միջինը՝ 27 տուն, 250 շունչ հայ բնակչություն:

Կարինի առաջնորդարանը գյուղում հաշվում է 40 տուն (280 շունչ– Հ.Զ.) բնակչություն[10]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 440, թ. 6:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 11:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 440, թ. 6:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[5] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 212:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 440, թ. 6:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 11:
[8] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 212:
[9] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 11:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 212:

Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ՝ առևտրով ու արհեստներով:

Երանոս գյուղը գտնվում էր Կարաքիլիսեից հյուսիս-արևելք, մինչև 12 կմ հեռավորության վրա, Դարաբիչայ գետակի հովտում: Հողը բերրի էր: Ս.Հակոբ եկեղեցին ուներ 900 լիրա ընդհանուր հասույթ: Արմենակյան վարժարանի հասույթը կազմում էր 500 լիրա: Վարժարանում սովորում էր 15 աշակերտ[1]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղում ապրում էր 20 տուն (140 շունչ– Հ.Զ.) հայ բնակչություն[2]:

Զիրո գյուղը գտնվում էր Կարաքիլիսեից հարավ-արևելք, Կարաքիլիսա-Դիադին ճանապարհի ձախ կողմում, Ղազի և Յոնջալու գյուղերի հարևանությամբ: Գյուղի մոտակայքում կա Մելի անունով ավերված բերդ: Ս.Հարություն եկեղեցին ուներ 2000 լիրա ընդհանուր հասույթ, Վաղարշյան վարժարանը՝ 1000 լիրա հասույթ և 40 աշակերտ:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղի հայերը 280 շունչ էին՝ 33 տուն[3]: Կարինի առաջնորդարանի հաշվումներով, հայ բնակչությունն ուներ 15 տուն[4]: Մեկ այլ աղբյուր հայտնում է, որ հայերն ունեին 50 տուն[5]:

Միջինը՝ 32 տուն, 265 շունչ հայ բնակչություն:

Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, անասնապահությունը:

Դաշլըջա, Դաշլիչայ գյուղը գտնվում էր Արածանիի վերին հոսանքում: Հիշատակվում են Վերին և Ներքին Դաշլըջաներ գյուղերը: 1877-1878թթ. Ներքին Դաշլըջան ունեցել է 422 շունչ հայ բնակչություն (63 տուն), 20-րդ դարի սկզբներին՝ 650 բնակիչ:

Միջինը՝ 77 տուն, 546 շունչ հայ բնակչություն: Վերին Դաշլըջան ունեցել է 20 տուն բնակչություն[6]: Կարինի առաջնորդարանը հաշվում է 15 տուն հայ բնակչություն[7]:

Միջինը՝ 17 տուն, 122 շունչ հայ բնակչություն: Երկու գյուղերը միասին՝ 94 տուն, 668 շունչ հայ բնակչություն:

Գավառի նշանավոր գյուղերից էին նաև Խրդրը, Խաչիթափը, Ջաղլուն, Ջամրլուն, Նավիկը, Ջաջուռը, Ղազին, Մարուդխանը և այլն:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 11:
[2] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 212:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 11:
[4] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 212:
[5] ՏԲ, հ. 2, էջ 310:
[6] Նույն տեղում, էջ 29:
[7] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 212:

Ց ՈՒ Ց Ա Կ

Կարաքիլիսե գավառի հայաշատ գյուղերի

	տուն	շունչ
Կարաքիլիսե	22	1625
Դաշլիճայ Վերին	17	122
Դաշլիճայ Ներքին	17	546
Եոնջալու	70	630
Երանոս	20	140
Զիրո	49	265
Խաչիթափ	7	70
Խըդր	2	20
Չաղլու	80	480
Մանկասար	70	560
Մեզրե	27	250
Մեզրե Մազրա	40	280

Երզնկայի գավառը համընկնում է պատմական Եկեղյաց գավառի տարածքի հետ: Երզնկայի մասին առաջին տեղեկությունները պատկանում են հնագույն ժամանակներին: Գավառի մասին հայտնվում է մ.թ.ա. 9–րդ դարում, Արարատյան թագավորության արձանագրություններում: Երզնկա անվանումը ծագել է երիզ բառից, որը նշանակում է երկար ու բարակ կապոց[1]: Որոշ ուսումնասիրություններ հավաստում են, որ գավառի կենտրոն Երզնկայի անվան ծագումը կապվում է խեթական *«Urussa»* անվան հետ, որը հնչյունափոխվելով վերածվել է Երզնկայի[2]:

Վկայություններ են բերվում այն մասին, որ եգիպտական Ռամզես փարավոնը խեթերի հետ պայմանագիր կնքելիս վկաներ է տանում: Վկաների թվում էր նաև «Թերբանթ-Արիզայի աստվածը»[3]:

Մ.թ.ա. Երիզան գրավվել է Արարատյան տերության կողմից: Ուսումնասիրողներից մեկն էլ այն կարծիքն է հայտնում, թե «...քաղաքը առաջին անգամ յիշատակւում է Քրիստոսէ դար մը առաջ»[4]:

Եկեղյաց գավառը Մեծ Հայքի թագավորությանն է միացվել Արտաշես Ա թագավորի կողմից (մ.թ.ա. 189-160թթ.): Եկեղյաց գավառը հիշատակվում է նաև Եկելեսենե, Ակիլեսենե անուններով: Հին ժամանակնե-

[1] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 154:

[2] *Քուրտյան Հ.,* Երիզա և Եկեղյաց գավառ, Վենետիկ, 1853, էջ 5:

[3] Նույն տեղում, էջ 6:

[4] Նույն տեղում, էջ 5:

րում գավառի կազմում էին Մանազի, Դարանդի և Դերջանի գավառները: Գավառը հաճախ անվանվել է նաև Անահտական, որովհետև այնտեղ էր գտնվում Անահիտ աստվածուհու մեհյանը, իսկ գավառը հանդիսանում էր նրա կալվածքը: Գտնվելով Հայասա ցեղային միության կազմում՝ գավառը հանդիսացել է հայ ժողովրդի կազմավորման կենտրոններից մեկը: Այնուհետև գավառը մաս է կազմում Երվանդունիների թագավորության:

Ճիշտ է՝ եկեղեցիներն առատ էին, բայց այն ենթադրությունը, թե եկեղյաց է կոչվել հենց այդ պատճառով, հերքում է ուսումնասիրողներից մեկը՝ գրելով, թե անվանումն առնչություն չունի այդ փաստի հետ և անունը հունարենից թարգմանաբար նշանակում է դաշտի գավառ, դաշտային գավառ[1]:

Ինչպես նշեցինք, գավառը երբեմն անվանվել է նաև Անահտական: Անահիտի մեհյանն ուներ 6000 սպասավորներ ու քրմեր: Աստվածուհու տոնը կատարվում էր հայոց Նավասարդ ամսվա 15-ին, Արամազդի տոնից 15 օր հետո: Անահիտը սիրո և պաշտամունքի էր արժանանում ոչ միայն հայերի, այլև հարևան ժողովուրդների կողմից: Օրինակ՝ եգիպտական Ռամզես փարավոնն իր աղջկան անվանել է Պենթ-Անաթ (Անահիտի աղջիկ): Մ.թ.ա. 5-6 դարերում Եկեղյաց գավառը գտնվում էր Աքեմենյան 13-րդ սատրապության կազմում և վճարում էր 400 տաղանդ կամ 2.240.000 ոսկե ֆրանկ[2]:

Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո գավառը դառնում է Գրիգոր Լուսավորչի սեփականությունը և կոչվում է «Գավառ Լուսավորչի»: 387թ. Հայաստանի առաջին բաժանումից հետո գավառը միացվում է Բյուզանդական կայսրությանը: 8-րդ դարում գավառը գրավել են արաբները: Թոնդրակյան շարժման կենտրոններից էր: 10-11-րդ դարերում գավառը նորից ընկավ բյուզանդական տիրապետության տակ: 1071թ. Մանազկերտի ճակատամարտից հետո Արևմտյան Հայաստանի մի շարք այլ գավառների հետ Եկեղյաց գավառը ևս ընկավ քոչվորների տիրապետության տակ: Այնուհետև գավառի վրա իրենց իշխանությունը հաստատեցին Ջալալեդդինը, Իկոնիայի սուլթանը, մոնղոլները: Ոսկե հորդայի քայքայումից հետո գավառն ընկավ մոնղոլ զորապետների, մուսուլման հողատերերի, ապա կարա-կոյունլուների, ակկոյունլուների տիրապետության տակ և միայն 1502թ. այստեղ պարսկա-

[1] ՏԲ, հ. 2, էջ 178:
[2] *Քուրտյան Հ.,* նշված գիրքը, էջ 7:

կան իշխանություն հաստատվեց: 1514-1516թթ. գավառը գրավեցին թուրքերը: 1555թ. Ամասիայի պայմանագրով գավառն անցավ Թուրքիային և ընդգրկվեց Էրզրումի վիլայեթի կազմում՝ որպես առանձին գավառ:

Եկեղյաց գավառը հին ժամանակներից հայտնի էր որպես զարգացած արհեստների կենտրոն: Մեծ համարում ունեին կտավագործները, ոսկերիչները, ժամագործները, որմնադիրները: 13-րդ դարի վերջին իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլոն Չինաստան ուղևորվելիս այցելել է Եկեղյաց գավառ և հիացմունքով է խոսել նուրբ գործված բամբակյա կտավի մասին: Նույն միտքն է արտահայտում նաև արաբ պատմիչ Իբն-ի Բատուտան՝ գրելով. «...շինում են գեղեցիկ կերպասներ...»[1]:

Գավառը նաև մշակութային խոշոր կենտրոն էր: 14-15-րդ դարերում կառուցված Ավազ և Կապոսի վանքերին կից բացվում են դպրոցներ, որտեղ կատարվում էին նաև ձեռագրերի ընդօրինակումներ:

Գտնվելով Թավրիզ-Էրզրում-Երզնկա առևտրական ճանապարհին՝ գավառում զարգացած էր նաև առևտուրը: Կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ գավառով էին անցնում Տրապիզոն, Սեբաստիա, Հալեպ գնացող առևտրական ուղիները: Որոշ աղբյուրներ ընդգծում են, որ գավառում զարգացած էր սուրճի առևտուրը, որտեղ առաջնությունը պատկանում էր ծագումով Կամախեցի առևտրականներին[2]: Գավառում տարին մեկ անգամ կազմակերպվում էին տոնավաճառներ: Նշանավոր վաճառականներից էին Տեր-Ստեփանյանը, Հեթյանը, Վարդապետյանը[3]:

Գավառը երկրագործական էր: Հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ, դաշտավարությամբ, անասնապահությամբ: Հողի բերրիությունը պայման էր դառնում, որ գավառն առավել լայնորեն ներգրավվեր նահանգի առևտրին: 1873թ. Կարինի նահանգում արտադրված 4.473.551 փութ ցորենից Եկեղյաց գավառին բաժին էր ընկնում 457.489 փութը[4]:

Նույն թվականին գավառում կային 484.202 այծ, ոչխար, խոշոր եղջերավոր անասուն[5]:

19-րդ դարի երկրորդ կեսին գավառում արտադրվել է 6750 հոխա խաղող: 1896թ. տվյալներով, գավառում կային 11.303 ձի և ձիու քուռակ,

[1] Իբն-ի Բատուտա, Ե., 1940, էջ 31:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, ց. 1, գ. 291, թ. 25:
[3] Նույն տեղում, գ. 288, թ. 64:
[4] Նույն տեղում, գ. 1547, թ. 1:
[5] Նույն տեղում, թ. 6:

լծկան և հեծնելու ձի, 20.525 էշ ու ջորի, 97.885 եզ, կով, գոմեշ, ցուլ, հորթ[1]: Մանր եղջերավոր անասունների քանակը ևս զգալի թիվ էր կազմում՝ հասնելով 435.361-ի[2]: Այնուամենայնիվ, ինչպես նկատում է ուսումնասիրողներից մեկը, «եթե ընդունենք, որ խոշոր եղջերավոր անասունների մոտ կեսը բանող էր, իսկ կեսը՝ կաթնատու, ապա դժվար չէ համոզվել, որ այդ թիվն անբավարար էր քիչ թե շատ կանոնավոր տնտեսություն վարելու և ընտանիքը պահելու համար»[3]: Եթե դրան գումարենք նաև սահմանված օրինական և անօրինական հարկերը, թալանը, ապա նշված կարծիքն առավել մեղմ բնույթ է ստանում: Այսպես, բերենք միայն մեկ օրինակ. յուրաքանչյուր այծից գանձվում էր երեք պիաստր՝ 20 փարա: Երզնկայի գավառում կային 495.361 այծ, ուլ, ոչխար, խոյ, գառ, նոխազ[4]: Եթե միջինն ընդունենք, որ յուրաքանչյուր գլխից գանձվում էր նշված քանակի հարկ, ապա գումարը կազմում է 1.486.083 պիաստր:

Առավել ծանր վիճակ էր ստեղծվել գյուղատնտեսությամբ զբաղվողների համար: Գյուղացիության մեծ մասը հողազուրկ էր: Երզնկայի գավառի հողերի մեծ մասը գտնվում էր յոթ բեյերի ձեռքում: Եթե միայն հաշվենք աշարն ու հողավարձը, ապա պատկերն ավելի քան պարզ կլինի:

Ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Երզնկայի գավառի հողային և հարկային քաղաքականության վրա մեծ էր «Երզնկայի կանունի» ազդեցությունը, որով «անհավատների» վրա սահմանվում էին համեմատաբար ծանր հարկեր ու պարտականություններ: Օրինակ, քրիստոնյաների հողաբաժիններից գանձվում էր հինգից մեկ հարկ, իսկ մահմեդականներից՝ յոթից մեկ: Կարինի նահանգում ամուրիության համար վճարելու էին միայն քրիստոնյաները և այլն[5]:

Գավառի ամենաբերրի դաշտը Երզնկայի դաշտն էր: Այն ուներ 40-45 կմ երկարություն, 13-15 կմ լայնություն, ծովի մակերևույթից բարձր է 1200-1400 մետրով: Դաշտի կլիման բարերար է հացահատիկի, բրնձի, այգեգործության ու բանջարաբուծության համար: Գավառը գտնվում է երկրաշարժերի գոտում: 1045-1874թթ. տեղի է ունեցել 12 երկրաշարժ, որոնցից ավերիչ էին 1254թ. երկրաշարժը՝ 14.000 զոհ, 1268թ.՝ 15.000 զոհ, 1482թ.՝ 30.000 զոհ, 1584թ.՝ 15.000 զոհ և ևս 5000 փլատակների տակ մնացած, ավերվել է հինգ եկեղեցի[6]:

[1] Նույն տեղում, գ. 1544, թ. 11, 12:
[2] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 1544, թ. 29:
[3] Նույն տեղում, թ. 43:
[4] Նույն տեղում, թ. 61, 29:
[5] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1964, էջ 35-37:
[6] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 154-155:

Մինչև 1867թ. Երզնկան առանձին նահանգ էր, նշված թվականին, վարչական նոր բաժանման հետևանքով, այն որպես գավառ մտավ Էրզրումի նահանգի կազմի մեջ: 1877-1878թթ. գավառն ուներ 1174 գյուղ, 23962 տուն՝ 180.374 բնակչությամբ, որից 8237 տուն, 76.220 հայեր էին[1]: Մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ Երզնկայի գավառը 19-րդ դարում ունեցել է 184 մեծ ու փոքր գյուղ, որոնցից միայն 31-ն էր հայաբնակ[2]: Հաջորդ փաստաթուղթը նշում է, որ նույն ժամանակաշրջանում գավառն ուներ 39.754 բնակիչ, որից 11.746-ը հայեր էին[3]:

Պատերազմից առաջ, համաձայն կաթողիկոսական դիվանում պահպանվող փաստաթղթերից մեկի, գավառում կային 30 հայաբնակ գյուղեր, 1631 տուն, 15.064 բնակչությամբ[4]: Ս.Ծոցիկյանը նշում է, որ մինչև 1915թ. գավառն ուներ 60.000 բնակչություն, որից 25.000 հայ, 21.000 թուրք, 11.000 քուրդ, 3000 հույն, որ գավառում կար 80 գյուղ, 40-ը՝ հայաբնակ[5]: Ա-Դոյի հաշվումներով, գավառում կային 31 հայաբնակ գյուղեր, որոնք ունեին 1024 տուն[6]: Արխիվային փաստաթղթերից մեկն էլ հաստատում է, որ գավառն ուներ 34.518 հայ բնակչություն, որից 34.145-ը լուսավորչական հայեր էին, 285 բողոքական, 88 կաթոլիկ[7]:

Փաստաթղթերի համեմատությունից պարզվում է, որ բոլոր աղբյուրներում նշվող հայաբնակ գյուղերի քանակը տատանվում է 30-40-ի սահմաններում: Համակարծիք լինելով Կարինի առաջնորդարանի տեղեկությունների վրա կազմած փաստաթղթին՝ հայտնենք նաև, որ ՀՍՀ երրորդ հատորի համապատասխան բաժնի հեղինակը (Ռ.Մաթևոսյան) ընդունում է, որ 1915թ. գավառն ունեցել է 28 հայաբնակ գյուղ[8]:

Նկատելի է, որ հեղինակների ու փաստաթղթերի հաղորդումները տատանվում են հատկապես դեպի 20-րդ դար անցումային շրջանում: Պատճառները հայտնի են, և հետևությունների մեջ չխորանալու նպատակով չթվարկենք այդ խառնաշփոթը ծնող պատճառները և ընդունենք, որ բազմաթիվ փորձություններ անցած գավառի 184 գյուղերը (19-րդ դարի վիճակագրությամբ) տալով 154 գյուղերի կորուստ, ոտք են դրել ճակատագրական 20-րդ դար: Նվազումը բնական է, բայց այն հնարավոր

[1] ՏԲ, հ. 2, էջ 237:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 286, թ. 4:
[3] Նույն տեղում, գ. 287, թ. 13:
[4] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[5] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 155:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 222:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, ց. 1, գ. 287, թ. 18:
[8] ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 498:

կլիներ առավել հավաստի ընդունել, եթե ունենայինք նաև խառը բնակչությամբ և մահմեդականություն ընդունած գյուղերի ցուցակը: Խնդիրը լուծելու միակ միջոցը նորից մնում է գյուղերի ներկայացված՝ մեզ հայտնի ցուցակների համեմատությունը, որից հետո կարելի է կազմել գավառի գյուղերի մոտավոր, ոչ լրիվ ցուցակը:

Համեմատություններից հետո պարզվում է, որ եթե հիմք ենք ընդունում Ա-Դոյի ցուցակը, գավառի գյուղերի քանակը հասնում է 45-ի: Դրանք են՝ Ս.Օհան, Գօլչէքէնի բալանկա, Մթննի, Կարմրի և Էսէսի, Եալընզպաղ, Տոնկետէկ, Ախոռճյուղ, Հայրապետի, Շեխլի, Խնձորեկ, Ս.Նիկողայոսի վանք, Բթառիճ, Կարաքիլիսե, Աղճաքենդ, Ագարակ վերին, Կամուրջգլուխ, Քուրդ, Տաճրակ, Եկան, Կելենցիկ, Հոռոմ-ագարակ, Ուռեկ, Ծաթ, Մեղուցիկ, Կարաթուշ, Մեծ-ագարակ, Բզվան, Մահմուդցիկ, Ագրակ վարի, Դարատեկին, Գյուլիճե, Նոր գյուղ, Ս.Գրիգոր, Ճանճիկ, Փրկիչ, Վասկեր, Մեղրաջուր, Մեղուսի, Վարդան շահ, Լուսնահոնք, Զաթ, Մոլլա գյուղ, Վարի Չիֆլիկ, Վերի Չիֆլիկ, Ս.Թորոս:

Եթե ընդունենք սույն ցուցակը, ապա կարելի է գտնել նաև գավառի գյուղերի բնակչության թիվն այն գյուղերի նկատմամբ, որոնց բնակչության թիվը, համաձայն տան թվերի, հայտնի չէ և հայտնի տների թիվը բազմապատկելով պայմանականորեն միջին յոթ թվով՝ 45 գյուղերում կստանանք 19.558 բնակչություն, ասել է՝ յուրաքանչյուր գյուղում 434 բնակիչ:

Տարբեր արխիվներից հավաքել ենք գավառի գյուղերի վերաբերյալ տեղեկություններ: Մեր ունեցած ցուցակում նշված չեն այնպիսի նշանավոր գյուղեր, ինչպիսիք են Խարը, Ուլան, Զմեռը, Կոտերը, Արբեհանը, Գողդուքենին, Փշկաթաղը[1]: Այժմ, եթե դրանք ավելացնենք մեր ունեցած վերոհիշյալ գյուղերի ցուցակին, ապա գավառում կունենանք 52 գյուղ: Վերջին գյուղերից միայն երեքի բնակչության թվի մասին ունենք տեղեկություններ. Գողդեքենի՝ 10 տուն, Կոտերը՝ 100, Արբեհանը՝ 5 տուն: Այսինքն՝ այդ գյուղերն ունեցել են 805 հայ բնակչություն: Մնացած չորս գյուղերի համար պայմանականորեն ընդունենք միջինը 50 բնակիչ և ստացված 1005 շունչը գումարենք 19.558, բաժանելով 52-ի, կստանանք գավառի գյուղերի բնակչության մոտավոր քանակը, ինչպես նաև գյուղերի բնակչության միջին թիվը՝ 20.553 բնակչություն, միջինը՝ 395 շունչ բնակչություն գյուղում:

Եթե ի մի բերենք գավառի բնակչության հայտնի տվյալները, կստանանք հետևյալ պատկերը: Աղբյուրների հաղորդմամբ, 1878-1914թթ. ժամանակահատվածում գավառի բնակչության թիվն ունի հե-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 164, թ. 48, գ. 130, թ. 54, գ. 232, թ. 33:

տնյալ զարգացումը. 76220-25000-34518-15064-20553-10240: Այսինքն՝ մինչև Ա-Դոյի վիճակագրությունը, բնակչությունը նվազել է 66.980-ով: Մեզ հայտնի են այդ նվազման պատճառները: Բերենք միայն մեկ օրինակ. արխիվային փաստաթղթերից մեկի հաղորդմամբ, գավառի ամենամեծ գյուղերից մեկը՝ Մեզուցիկը, մինչև 1894-1896թթ. կոտորածները, ուներ 1700 բնակիչ, Երկանը՝ 1000, Մահմուտցիկը՝ 1500, Գյուլիճեն՝ 2000, Մթննին՝ 1750: Կոտորածներից նշված գյուղերում համապատասխանաբար փրկվել են՝ 33, ոչ մեկը, 4-ը, ոչ մեկը, ոչ մեկը: Այսինքն՝ միայն հինգ մեծ գյուղերում կոտորվել են 7862 մարդ: Ավելին, նույն փաստաթուղթը հավաստում է, որ գավառի 30 գյուղերում կար 15.064 հայ բնակչություն: Կոտորածից փրկվել է միայն 206 մարդ[1]: Այսինքն՝ կոտորվել է 14.858 հայ բնակչություն:

19-րդ դարից մինչև 1915թ. գավառում գործել են 28 եկեղեցի, 10 մատուռ, 9 վանք[2]: Արխիվային փաստաթղթերից մեկը վանքերի քանակը հաշվում է 12[3]: Ս.Ծոցիկյանը գտնում է, որ գավառում եղել են 35 եկեղեցի, 20 վանք[4]: ՏԲ հոդվածագիրը հավաստում է 11 վանքերի և 33 գործող ու կանգուն եկեղեցիների մասին[5]: ՀՍՀ համապատասխան հոդվածի հեղինակը նշում է ընդամենը երկու վանքի անուն: Նրանցից միայն մեկը չի արտացոլված մեր ունեցած ցուցակում: Այդ Կապուսի վանքն է[6]: Մեզ հայտնի վանքերն էին. Ս.Գրիգոր, Ավագ, Շողակաթ, Ս.Կիրակոս, Ներսես հայրապետ, Ս.Հակոբ, Ս.Գևորգ, Ս.Կարապետ, Կապուսի վանքերը[7]:

Կրթական գործը գտնվում էր բավարար մակարդակի վրա: Դպրոցները, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս գավառներում էր, պահպանում էին իրենց գոյությունը նվիրատվությունների, հանգանակությունների, գյուղացիների, եկեղեցու միջոցներով: Գավառում, համաձայն միայն մեկ փաստաթղթի վկայության, գործում էր 28 վարժարան, որոնք ունեին 1985 աշակերտ, աշխատում էր 48 ուսուցիչ-ուսուցչուհի[8]: Դպրոցների թիվն ավելացնելով Երզնկա քաղաքում գործած ութ վարժարաններին, իրենց 1600 աշակերտով[9], կունենանք ամբողջ գավառի դպրոցների և աշակերտության քանակը՝ 36 վարժարան, 3585 աշակերտ:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 164, թ. 11:
[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 139, թ. 19, 20:
[4] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 155:
[5] ՏԲ, հ. 2, էջ 237:
[6] ՀՍՀ, հ. 3, էջ 498:
[7] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 155:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 164, թ. 11:
[9] ՏԲ, հ. 2, էջ 237:

Երզնկայի գավառի մեջ էին մտնում Երզնկայի, Կամախի, Կնճանիսի և Գարուչայի գավառները:

Երզնկայի գավառի գյուղերից էր *Թիլը:* Այն անվանվում է և՛ գյուղ, և՛ ավան: Գյուղը Սեպուհ լեռան ստորոտներին է, Երզնկա, քաղաքից 8 կմ հեռավորության վրա, հյուսիսարևմտյան կողմում: Լինելով Մեծ Հայքի հնագույն բնակավայրերից մեկը՝ հիշատակվում է Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի կողմից: Պատմահայր Խորենացին Թիլ ավանի մասին խոսում է Վրթանես կաթողիկոսի առիթով, երբ նա, լինելով Տարոնում, այցելում է Արիստակես եղբոր գերեզմանին, որը գտնվում էր Թիլում[1]:

Ագաթանգեղոսը, նկարագրելով Երիզայի Անահիտ աստվածուհու ոսկեձույլ արձանի կործանումը, այնուհետև գրում է. «Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, եւ քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն յաւանի: Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն Աստուծոյ թողուին տեղեօքն հանդերձ»[2]:

Թիլը հայոց հեթանոսական պաշտամունքի նշանավոր կենտրոններից էր: Այնտեղ էր գտնվում հայոց մայրության աստվածուհի Նանեի մեհյանը: Այն հաճախ անվանվել է նաև Նանեական դիրք, բարձունք իմաստով, քանզի մեհյանը կառուցված էր բարձունքի վրա: Հետագա ժամանակներում, ինչպես վկայում են որոշ ուսումնասիրողներ, Տիգրան Մեծն այստեղ տեղադրել է Աթենաս աստվածուհու արձանը: Թեև, ինչպես տեսանք Ագաթանգեղոսի վկայությունից, քրիստոնեության ընդունումից հետո ավերվեց Նանեի մեհյանը, բայց նրա փոխարեն կառուցվեց հիասքանչ Կաթողիկե եկեղեցին, որի նախաձեռնողը Գրիգոր Լուսավորիչն էր: Ներսես Մեծի ժամանակներից սկսած (353-372թթ.) Կաթողիկե եկեղեցին դառնում է կաթողիկոսական նստավայր, որտեղ գործել են տասնհինգ կաթողիկոսներ: Փավստոս Բուզանդը Թիլ ավանը հիշում է՝ կապված Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակեսի թաղման հետ. «...իսկ նրա որդուն, սուրբ Արիստակեսին, նրա խոստովանական մահից հետո, Ծոփաց գավառից տարան Եկեղյաց գավառը և թաղեցին Թիլ ավանում...»[3]:

Թիլը հիշատակելու հաջորդ դեպքը կապված է Դանիել կաթողիկոսի հետ: Երբ մահանում է Հուսիկ կաթողիկոսը, Տիրան թագավորը (338-350թթ.) որոշում է նրա փոխարեն ձեռնադրել Դանիելին և մարդիկ է

[1] *Մովսես Խորենացի,* Պատմություն հայոց, Ե., 1960, էջ 240:
[2] *Ագաթանգեղոս,* Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 400:
[3] *Փավստոս Բուզանդ,* Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 15:

ուղարկում նրան փնտրելու: Իշխանները Դանիելին գտնում են ոչ թե Հացենիների պարտեզում, այն աղբյուրի մոտ, որտեղ Գրիգոր Լուսավորիչը մկրտել է Տրդատ Գ թագավորին և որի մոտ էր գտնվում «Դանիելի բնակության խցիկը», այլ «Նախարարները եկան, նրան գտան Եկեղյաց գավառում Թիլ գյուղի եկեղեցում, որտեղ նա զբաղված էր աստծո մշակության գործով»[1]:

Արիստակեսից բացի, Թիլում են թաղվել Ներսես Մեծը, Պապ թագավորը: Թիլը որպես հոգևոր կենտրոն իր գոյությունը պահպանեց մինչև 7-րդ դարը: Արաբական արշավանքների ժամանակ Կաթողիկե եկեղեցին ավերվեց, այլևս չվերականգնվեց և կորցնելով իր նախկին համբավն ու համարումը՝ անվանվեց «Հանգած» եկեղեցի: Ահա այդ պատճառով էլ, 1273-1275թթ., Արիստակեսի և Ներսես Մեծի աճյունները Թիլից տեղափոխում են Երիզա:

Թիլը եղել է նաև գրչության և թարգմանչության կենտրոն:

Հետագա ժամանակները դանդաղ մարեցին Թիլի հռչակը: Ահա թե ինչու Ա-Դոն ցավով գրում էր. «Այժմ պատմական Թիլ ավանը մի բոլորովին յետ ընկած գիւղ է, ուր ապրում են բացառապէս տաճիկներ»[2]:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղն ուներ 29 տուն, 200 շունչ հայ բնակչություն:

Երիզայի գավառակի նշանավոր գյուղերից էր նաև *Խախը:* Այն համարել են Պապ թագավորի ապարանքավայրը: Փավստոս Բուզանդը վկայում է, որ հենց այս ավանում էլ Պապ թագավորը թունավորում է Ներսես կաթողիկոսին, գրելով. «...ուստի կեղծավորաբար այնպես ձևացրեց, իբրև թե ուղղության է դառնում, և աղաչում էր աստծո քահանայապետին, որ իրեն ապաշխարանք նշանակե: Նրան հրավիրեց իր ապարանքը Եկեղյաց գավառի Խախ ավանում. նրա համար ընթրիք պատրաստեց...»[3]:

Խնձորեկ գյուղը գավառի հայաշատ գյուղերից չէր, բայց միատարր էր և ուներ 40 տուն, 420 շունչ զուտ հայ բնակչություն: Արդեն կոտորածներից հետո գյուղ են թափանցում օտարները, պակասում է նաև հայ բնակչությունը՝ ունենալով 30 տուն հայ, 25 տուն քուրդ, թուրք[4]:

Միջինը՝ 35 տուն, 315 շունչ հայ, 25 տուն, 175 շունչ թուրք բնակչություն:

[1] Նույն տեղում, էջ 63:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 221:
[3] *Փավստոս Բուզանդ,* նշված գիրքը, էջ 331:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 684, թ. 53:

Գյուղն ունեցել է վարժարան, 65 աշակերտ, երկու ուսուցիչ: Արհեստներից տարածված էին որմնադրությունը, հյուսնությունը: Գյուղն ուներ ջրաղաց, 1275 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, 150 մեղվի փեթակ:

1894-1896թթ. կոտորածների ժամանակ գյուղի բնակիչներից ոչ մեկը չի փրկվել: Գյուղը կրել է 25.000 օսմանյան լիրայի վնաս[1]:

Մթննին գավառի ամենամեծ գյուղերից մեկն է: Գտնվում է Երզնկայի արևմտյան կողմում: Բարեկեցիկ, հարուստ գյուղ է: Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ գյուղում «աղքատ ընտանիք գրեթե չկար»[2]: Գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Ունեին 9000 արտավար հող, 140-150 մարդ որմնադիր էին, ատաղձագործ, հյուսն, կոշկակար, դերձակ, երկուսը՝ ջրաղացպան: Գյուղում կար 5300 խոշոր և մանր եղջերավոր անասուն, 200 մեղվի փեթակ[3]:

Ինչպես վկայում է վիճակագիրներից մեկը, գյուղում բազմանդամ նահապետական ընտանիքների առատություն էր: Այդպիսի յուրաքանչյուր ընտանիք ուներ 25-30 անդամ[4]: Մեկ ուրիշ աղբյուր հաստատում է, որ գյուղն ուներ 150 տուն հայ ընտանիք, 1750 բնակչությամբ[5]: Ա-Դոն, հետևելով Հ.Էփրիկյանին, ընտանիքների թիվն ընդունում է 85[6], մեկ այլ աղբյուր՝ 200[7]: Դպրոցում պաշտոնավարում էին երեք ուսուցիչ, սովորում էր 300 աշակերտ[8]: Թեև գյուղի շրջակայքում կային թուրքական ու քրդական գյուղեր, բայց նրանք, չնայած ոստիկանության դրդումներին, չհամարձակվեցին հարձակվել գյուղի վրա, որովհետև գյուղի տղամարդիկ ունեին քաջի համբավ:

Գյուղն ուներ դպրոց, նրան կից գրադարան-լսարան, «որուն մեջ ձմեռները թատերական ներկայացումներ ալ կտրվին»[9]:

Ինչպես նշեցինք վերևում, գյուղի բնակիչներից ոչ մեկին չհաջողվեց ազատվել թուրք բարբարոսների կոտորածից: Ոչնչացնելով 1700-2000 հայերի՝ թուրք խուժանը խժռեց բարեկեցիկ այդ գյուղի ողջ ունեցվածքը, դարձավ նրա տների տերը: Կոտորածների ժամանակ հայության կրած վնասը կազմում էր 131.000 օսմանյան լիրա[10]:

[1] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11-12:
[2] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 799, թ. 16:
[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[4] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 799, թ. 17:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[6] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 222:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 799, թ. 19:
[8] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[9] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 799, թ. 18:
[10] Նույն տեղում, ֆ. 57, գ. 5, գ. 164, թ. 12:

Գիւլլիձե-Գյուլլուձե գյուղը գավառի ամենահայաշատ գյուղն էր: 120 ընտանիքներում ապրում էին 2000 շունչ հայեր: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, տարածված արհեստներից էին որմնադրությունը, հյուսնությունը[1]: Վկայություն կա, որ գյուղի տարածված արհեստներից էր նաև մանածագործությունը[2]: Նույն աղբյուրը հաղորդում է, թե գյուղն ունեցել է ընդամենը 40 տուն հայ բնակչություն, որ այգեգործությունը նույնպես եկամտաբեր զբաղմունքներից էր[3]: Ա-Դոյի տեղեկություններով, գյուղն ունեցել է 66 տուն հայ բնակչություն[4]:

Գյուղում կային Ս.Գևորգ եկեղեցին, մեկ մատուռ, երկու քահանա, մեկ վանք, երկու վարժարան, հինգ ուսուցիչ-ուսուցչուհի, 100 աշակերտ[5]: Խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում էր 1700: Կոտորածից ոչ ոք չի փրկվել: Գյուղի ընդհանուր վնասը կազմում է 225.000 օսմանյան լիրա[6]:

«...Եւ ահա լեռը, որոյ զոգեն կբխեն Գայլ գետի աղբիւրականք»[7],- հիացած գրառել է Գ.Սրվանձտյանցը, երբ կատարելով պատրիարքի հանձնարարականը՝ հասել է *Չիֆթլիկ-Չիֆթլիկ* գյուղ: Դա գավառի բարեկեցիկ Վերի Չիֆթլիկ գյուղն էր: Այն գտնվում էր Գայլ ակունքի մոտ, ուներ 45 տուն, 500 հայ բնակչություն, մեկ եկեղեցի: Գլխավոր զբաղմունքներից էին հողագործությունն ու անասնապահությունը: Արհեստներով զբաղվողների մասին տեղեկություններ չկան: Գյուղի վարժարանում սովորում էր 60 աշակերտ, աշխատում էին երկու ուսուցիչ: Գյուղացիներն ունեին 540 խոշոր և մանր եղջերավոր անասուն, ձի, գրաստ, 20 մեղվի փեթակ: Համիդի կազմակերպած ջարդերից փրկվել է երկու մարդ: Կոտորածների ժամանակ կրած ընդհանուր վնասը կազմում էր 36.100 օսմանյան լիրա[8]:

Վարի Չիֆթլիկն ուներ 35 տուն, 400 հայ բնակչություն, եկեղեցի, վարժարան՝ 40 աշակերտով: Անասունների ընդհանուր քանակը 705 գլուխ էր, կար 50 մեղվի փեթակ: Կոտորածների ժամանակ կրած վնասը կազմում է 36.100 օսմանյան լիրա[9]:

---

[1] Նույն տեղում, թ. 11-12:
[2] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 240, թ. 124:
[3] Նույն տեղում:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 222:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 5, գ. 164, թ. 11:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, ց. 1, գ. 240, թ. 96:
[8] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11-12:
[9] Նույն տեղում, թ. 12:

Մեղուցիկ գյուղը Երզնկայից հեռու էր չորս ժամ հեռավորությամբ: Հայաշատ գյուղ էր: Ուներ 300 տուն, 1700 հայ բնակչություն[1]: Ա-Դոն հաշվում է 185 տուն հայ, 45 տուն թուրք բնակչություն[2]: Մեկ այլ աղբյուր գրանցել է 400 տուն խառը բնակչություն[3]:

Գյուղի երկսեռ վարժարանում աշխատել է 7 ուսուցիչ-ուսուցչուհի: Աշակերտների թիվը հասնում էր 200-ի[4]: Մեկ այլ աղբյուր վկայում է, որ դպրոցն ուներ 250 աշակերտ[5]: Հոգևոր կենտրոններն էին վանքը, եկեղեցին, մատուռը: Բնակչությունը զբաղվում էր հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Մշակութային յուրահատուկ կենտրոն էր դպրոցի գրադարանը, որն ուներ բեմ: Այն ձմռան ամիսներին օգտագործվում էր թատերական ներկայացումների համար: Գյուղի բնակիչներից 3-ն առևտրականներ էին, շուրջ 50 մարդ զբաղվում էր դարբնությամբ, պատշարությամբ, հյուսնությամբ, կոշկակարությամբ, ներկարարությամբ: Գյուղն ուներ 4 արոտ, 900 արտավար հող: Համիդյան ջարդերից ազատվել է 33 մարդ, կոտորածների ժամանակ կրած վնասները կազմում են 205.500 օսմանյան լիրա[6]:

Կարաքիլիսե գյուղը հայտնի էր իր խեցեգործ վարպետներով: Գյուղի 50 տուն, 400 բնակչության մեծ մասը զբաղվում էր այդ արհեստով, որովհետև հողը, մոտ 810 արտավար, կավային էր ու անբերրի[7]:

Ժամանակակիցներից մեկը գյուղի մասին գրում էր, որ գյուղացիներն «իրենց իշուկներին վրա բեռնելով կամ մերձակա գիւղերը կտանէին եւ պտղի, արմտիքի հետ կփոխանակէին եւ կամ քաղաք բերելով դրամի կվերածէին ու այսպիսով ապրուստ մը կհանէին»: Նույն հեղինակն առավել պատկերավոր է ներկայացնում խեցեգործությամբ զբաղվող գյուղի օրը: Երբ կավեղենը թրծելու համար վառվում են թոնիրները, «...այս գիւղէն ծուխի խոշոր ամպեր կբարձրանային: Մարդ կկարծէր, թէ ամբողջ գիւղը հրդեհի բռնուած կայրի»[8]:

Գյուղն ուներ եկեղեցի, վանք, մատուռ, մեկ քահանա, վարժարան, ուսուցիչ և 50 աշակերտ: Արհեստներից տարածված էին որմնադրությունը, հյուսնությունը: Հողագործությամբ զբաղվողներն ունեին 50 զույգ

[1] Նույն տեղում, թ. 11:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 222:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 827, թ. 112:
[4] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[5] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 827, թ. 112:
[6] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 12:
[7] Նույն տեղում, թ. 11:
[8] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 242, թ. 81:

եզ, անասնապահները՝ 195 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձի, էշ և այլն: Կոտորածներից փրկվել է 5 մարդ: Ընդհանուր վնասը կազմում է 1900 օսմանյան լիրա[1]:

Աղճաքենդ գյուղում ևս հիմնական զբաղմունքը բրուտագործությունն էր: Գյուղի բնակչության մասին հայտնում են հակասական տեղեկություններ: Ա-Դոն հաշվում է 6 տուն հայ, ուրիշ աղբյուրներ՝ 25 և 50 տուն:

Միջինը՝ 45 տուն, 189 շունչ հայ բնակչություն:

Գյուղացիների երկրորդ զբաղմունքն անասնապահությունն էր: Գյուղում կար 1460 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուն, լծկան: Գործում էին եկեղեցի, վարժարան: Կոտորածի ժամանակ գյուղի վնասը կազմում էր 225.200 օսմանյան լիրա[2]:

Ճորոխ գետի աջ ափին էր գտնվում *Կարմրի* գյուղը: Այն ուներ 35 տուն, 300 հայ բնակչություն[3]: Որոշ աղբյուրներ հաշվում են 22 և 80 տուն[4]:

Միջինը՝ 46 տուն, 338 շունչ հայ բնակչություն:

Գյուղում կային եկեղեցի, վարժարան՝ 60 աշակերտով, 22 մարդ որմնադիր էր, հյուսն, ջրաղացպան ու սափրիչ: Անասունների քանակը 1940 էր, կար նաև 50 զույգ եզ: Կոտորածից ոչ ոք չի փրկվել, ընդհանուր վնասը կազմում է 300.000 օսմանյան լիրա[5]:

Երզնկայի գավառի հիշատակության արժանի գյուղերից էին նաև Կոտեր, Բզվան, Տաճրակ, Հոռոմ, Ագարակ, Մեծ Ագարակ, Մոլլա, Քուրդ, Տաճտակ, Ախոռժաղ, Հայրապետի, Կելենձիկ, Կարաթուշ գյուղերը:

Գավառի կենտրոնը պատմական հարուստ անցյալ ունեցող *Երիզա-Երզնկա* քաղաքն էր: Երբեմն հիշվում է որպես ավան, երբեմն՝ քաղաք: Գտնվում է Արածանիի միջին հոսանքում, Երզնկայի դաշտի արևմուտքում, Գայլ գետի ակունքների մոտ: Հին ժամանակներում քաղաքն ունեցել է Արեգ, Երիզա, Երիզավան անունները: Պարբերաբար կրկնվող երկրաշարժերի պատճառով, որոնք մեծ ավերածություններ են պատճառել, քաղաքը, նաև գետի ողողումներից փրկելու նպատակով, իր հին տեղից տեղափոխվել է դեպի հյուսիս: Նախկին քաղաքատեղին անվանվում էր «Հին քաղաք»: Քաղաքի կլիման բարեխառն է: Տարեկան տեղումները կազմում են 700-750 մմ: Բարձրաստիճան շոգերի պատճառով Երզնկա-

[1] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 12:
[2] Նույն տեղում, թ. 83:
[3] Նույն տեղում, գ. 716, թ. 52:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11-12:

յում աճում է բամբակ: Երզնկան որպես բնակավայր առաջին անգամ հիշատակվում է Արարատյան թագավորության արձանագրություններում: Այդ ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. 8-րդ դարում, Երզնկան կրոնական կենտրոն էր և որպես այդպիսին առավել հանրահայտ է դառնում հատկապես մ.թ.ա. 1-ին դարում: Քաղաքում էր գտնվում Անահիտ աստվածուհու տաճարը, որտեղ տեղադրված էր նրա ոսկեձույլ արձանը: Արձանի ճակատագրի առնչությամբ կան տարբեր կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը, հենվելով Պլինիոս ավագ պատմիչի հիմնավորման վրա, այն կարծիքին է, որ Անտոնիոսը, 35թ. գրավելով տաճարը, արձանը կոտրել է տալիս ու բաժանում զորապետերին: Ոմանք էլ այն կարծիքին են, որ Անտոնիոսն արձանն իր հետ տարել է Եգիպտոս: Գիտնականների մի մասն էլ այն տեսակետին է, որ աստվածուհու արձանի ոչնչացումից կամ անհետացումից հետո նրա տեղը դրվում է նոր արձան: Երրորդ կարծիքով՝ արձանը հափշտակած Անտոնիոսը կորցնում է այն: 1910-1915թթ. Երիզայի նահանգապետն իբր գտել է այն ու վաճառել անգլիացի հնահավաք Քասթելանին, որն էլ այն հասցրել է Բրիտանական թանգարան[1]: Կարծիք կա նաև, որ արձանը ոչնչացվել է Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավորչի կողմից: Հիշատակվում է, որ ավերելով տաճարը՝ թագավորն ու ապագա կաթողիկոսը նրա տեղում կառուցում են աստվածամոր անունով մի տաճար, որը հետագայում ավերվել է:

Այս իրադարձությունների մասին Ագաթանգեղոս պատմիչը գրում է. «Եւ ապա ձեռ այսորիկ անդէն ի սահմանակից գաւառն Եկեղեաց ելանէր: Եւ անդ երեւալ դիւացն ի մեծ եւ ի բուն մեհենացն Հայոց թագաւորացն, ի տեղիս պաշտամացն, յԱնահտական մեհենին, յԵրէզն աւանին. ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին: Որք փախստականք եղեալք, եւ ընդ փախչել նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան: Եւ որք դիմեալ հասեալ էին զգաստացեալ զօրօքն, սուրբն Գրիգոր թագաւորուն հանդերձ, փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն. եւ ամենեւին զտեղին քանդեալ վատնէին, եւ զոսկին եւ զարծաթն աւար առեալ»[2]:

Երիզայի մասին վկայություններ ու հիշատակություններ կան նաև Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Հովհան Մամիկոնյանի, Մատթեոս Ուռհայեցու, Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Կամախեցու, Մթիխար Այրիվանցու և օտարազգի հեղինակների ու ճանապարհորդների մոտ:

[1] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 153:
[2] *Ագաթանգեղոս,* նշված գիրքը, էջ 400:

Քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո Երիզան անցավ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Հուստինիանոս կայսրի (527-565 թթ.) ժամանակ քաղաքը վերաշինվեց: Սակայն այս փաստը չպետք է պատճառ դառնա, որպեսզի որոշ ուսումնասիրողներ հայտնեն այն կարծիքը, թե Երիզան բավական ժամանակ անվանվել է Հուստինիանապոլիս[1]: Գաղտնիքն այն է, որ Երիզայից հարավ-արևելք ընկած տարածքում կայսրը կառուցել է իր անունով կոչվող բերդաքաղաք, որը, սակայն, չի կարելի նույնացնել Երիզայի հետ[2]: 885-1045թթ. Երիզան Բագրատունիների թագավորության կազմում էր, ապա նորից անցավ Բյուզանդիային:

Երիզան, որպես իշխանության կենտրոն, գոյությունը պահպանեց մինչև սելջուկ-թուրքերի արշավանքը, 1057թ. գրավվեց նրանց կողմից, ինչի հետևանքով ժամանակավորապես դանդաղեց նրա զարգացումը: Արդեն 13-րդ դարում Երիզան վերածվել է առևտրաշահ, արհեստաշատ քաղաքի: Վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն և արաբ պատմիչ Իբն-ի Բատուտան հավաստիացնում են, որ քաղաքն ուներ միատարր հայ բնակչություն:

1243թ. մոնղոլական զորքերը Զմանկատուկի ճակատամարտում պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանին և գրավեցին Երիզան: Մոնղոլական հրոսակները մեծ ավերածությունների ու թալանի ենթարկեցին վաճառաշահ Երիզան՝ պատճառելով նաև մեծաթիվ մարդկային զոհեր: Այդ առթիվ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ նրանք քիչ թվով մարդկանց կենդանի թողեցին, իսկ կենդանի մնացածներին «...վարեցին ի գերութիւն...»[3]:

Քոչվոր ցեղերի ասպատակությունների ասպարեզի վերածված Առաջավոր Ասիան չխուսափեց նաև ակ-կոյունլու, կարա-կոյունլու ցեղերի, Լենկթեմուրի արշավանքներից:

Ինչպես նշել էինք վերևում, Երիզան ավերվել է նաև երկրաշարժերից: 1045-1784թթ. տեղի են ունեցել 25 ավերիչ երկրաշարժեր: Նրանցից մեկի՝ 1045թ. երկրաշարժի մասին իր «Ժամանակագրություն» աշխատության մեջ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «...ահավոր ու սոսկալի երկրաշարժ եղավ, բովանդակ տիեզերքը սասանվեց... Եկեղյաց գավառում բազում եկեղեցիներ խարխլվելով հիմնահատակ կործանվեցին: Երզնկա

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1050, թ. 3:
[2] ՏԲ, հ. 2, էջ 235:
[3] *Կիրակոս Գանձակեցի,* Պատմություն հայոց, Ե., 1961, էջ 284:

կոչված քաղաքն ամբողջությամբ վերացվեց, գետինը պատռվեց, և տղամարդիկ ու կանայք սուզվեցին անդունդի խորխորատները»[1]:

Չնայած բնական ու արհեստական արհավիրքներին, քաղաքը, որ գտնվում էր Թավրիզ-Սեբաստիա-Էրզրում-Հալեպ առևտրական ուղու վրա, կարողանում էր պահպանել իր գոյությունը: Քաղաքի 17-րդ դարի պատմության մասին արժեքավոր վկայություն է հաղորդում Հակոբ Կարնեցին: Խոսելով Եկեղյաց գավառի մասին՝ նա գրում է. «Եւ ունի քաղաք մեծ զԵրզնկա, որ լի է ամենայն բարութեամբ, բամբակօք, այգեստանօք եւ մրգաբեր ծառօք... Եկեղեցի քահանայիւք եւ ժողովրդեամբ լի, եւ է դամբարան սրբոյ վարդապետացն Հովհաննէս Պըլուզին, որ Լուսավորչին Անձինքն է ասացեալ, Կեղեցի Ղուկաս վարդապետին, որ Հռոմեացեցոց տօմարն եւ այլ բազում ոտանաւորս է շարադրեալ, եւ Կիլիկիո Մինաս կաթողիկոսին, որ մականուամբ Քացախ կոչիւր. ... Եւ կայ ի վերայ ճանապարհին վանք մի հռչակաւոր՝ Միաւոր սուրբ Կարապետ անուն առ ստորոտով լերին մեծի...»[2]:

Երիզա քաղաքում բնակչության կազմի փոփոխությունները սկսվեցին դեռևս 14-րդ դարից: Խախտվեց քաղաքի ազգաբնակչության միատարրությունը, այնտեղ բնակություն հաստատեցին թուրքմենական ցեղերը, ապա, 1514թ., երբ քաղաքն ընկավ օսմանյան տիրապետության տակ, ստվարացան նաև թուրք ընտանիքները: Սկսված հալածանքները բնակչության արտագաղթի ու պանդխտության պատճառ էին դառնում: Այդ վիճակի նկարագրությունը տեղ է գտնում նաև ժողովրդական ստեղծագործությունների մեջ[3]: Նրանցից մեկում երգվում էր.

Երզնկայի մէջ թռչուն մը կայ,
Որուն թեւին վրայ արծաթ կայ,
Գնաց իմ սիրածս ու չեկաւ,
Անշուշտ ասոր մէջ գէշ բան մը կայ...

19-րդ դարի առաջին կեսին՝ 1830թ., քաղաքն ուներ 15.000 հայ բնակչություն[4], 11.746 (2700 տուն)[5], 1880թ. «Մշակ» թերթը հայերի թիվը հաշվում էր 1150 տուն[6], «Հայաստանի և հարակից...» բառարանը նույն թվականին գրանցում է 1800 տուն[7], Ս.Ծոցիկյանը 3 թաղերում ապրող

[1] *Մատթեոս Ուռհայեցի,* Ժամանակագրություն, Ե., 1973, էջ 65:
[2] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 12:
[3] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 160:
[4] ՏԲ, հ. 2, էջ 236:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 287, թ. 13:
[6] «Մշակ», 1880, թիւ 31:
[7] ՏԲ, հ. 2, էջ 236:

հայերի քանակն ընդունում է 15.000[1]: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ կամ 20-րդ դարի սկզբներին քաղաքն ուներ 24.000 հայ բնակչություն[2]:

Երիզան հայտնի էր զարգացած արհեստագործությամբ: Արհեստներից տարածված էին ոսկերչությունը, արծաթագործությունը, բրուտագործությունը, դարբնությունը, ասեղնագործությունը, պղնձագործությունը, մանածագործությունը, զինեգործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, փականագործությունը, քարակոփությունը, ժամագործությունը, թիթեղագործությունը, հացագործությունը, դեղագործությունը, ներկարարությունը, ջրաղացպանությունը, մսավաճառությունը, լուսանկարչությունը: Երիզայի վարպետների պատրաստած պղնձյա կաթսաները, թասերը, ափսեները, ինքնաեռները, զանազան ջրամանները ցուցադրվել են եվրոպական ցուցահանդեսներում: Քաղաքում գործել են 425 մանրավաճառ, 70 առևտրական[3], 124 պտղավաճառ, 45 նպարավաճառ: Նույն արխիվային փաստաթղթի վկայությամբ, քաղաքում կար 905 արհեստավոր[4]: Հայկական երեք թաղերում (Վարի, Կեզիր աղբյուր, Սյուրմե մահլեսի) էին տեղավորված նրանց արհեստանոցներն ու շուկաները, որոնց մասին Իբն-ի Բատուտան գրել է. «նրա (Արզինջանի) բնակիչներից մեծագույն մասը հայ է, ...կան լավ կարգավորված շուկաներ. շինում են գեղեցիկ կերպասներ, որ իր անունով (քաղաքի) է կոչվում»[5]:

Քաղաքում կային 85-90 մեծահարուստ ընտանիքներ, որոնցից ամենահայտնիներից էին Հեփյանները: Մեծահարուստ առևտրական էր Սարգիս Տեր-Ստեփանյանը[6]: Իր կարողություններով աչքի էր ընկնում նաև Վարդապետյանը: Փաստաթղթերից մեկը վկայում է, որ երիզացի 23-ամյա Ավետիս Թասլակյանն իր ուժերով պատրաստել է հեծանիվ[7]:

Բրուտագործներն ու մանածագործներն այնքան էին հմտացել ու կատարելագործել իրենց արհեստը, որ նրանց արհեստանոցները երբեմն անվանվում էին գործարաններ:

Թուրքական իշխանությունները, որ հայ արտադրողների նկատմամբ վարում էին թշնամական քաղաքականություն, նրանց գործունեության արգելման ճանապարհով պայմաններ ստեղծեցին թուրք մրցակից-

[1] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 180:
[2] Նույն տեղում:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 9 շրջերես:
[4] Նույն տեղում, թ. 9, շրջերես 10:
[5] Իբն-ի Բատուտա, Ե., 1940, էջ 31:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 283, մ. 2, թ. 76, գ. 283, թ. 64:
[7] Նույն տեղում, թ. 163:

ների համար: Իշխանությունները զարգացման հնարավորություններից զրկում էին տեղական արտադրությունը՝ նպաստելով երկրի հետամնացության խորացմանը: Իշխանություններն այդպես վարվեցին լուցկու ձեռնարկության հետ, միայն այն պատճառով, որ լուցկու տուփի վրա գրված էր «Լուցկիք Հայաստանի»: Քաղաքի արհեստավորները միավորված էին եղբայրակցությունների կամ էսնաֆությունների մեջ:

Երիզայում գործում էր հինգ եկեղեցի՝ Ս.Նշան, Ս.Երրորդություն, Ս.Սարգիս, Ս.Փրկիչ, Ս.Աստվածածին, և մեկ մատուռ: Քաղաքի շրջակայքում կար տասը վանք[1]: Վանքերում և եկեղեցիներում աշխատում էր 20 քահանա[2]:

Երիզայի մշակութային կյանքը ևս պատշաճ մակարդակի վրա էր: Քաղաքում գործում էին թատրոն՝ 25 դերասանով, 3 գրադարան, 4 ընթերցասրահ, 2 բաղնիք[3]:

19-րդ դարի 70-ական թվականներին քաղաքում գործում էին 8, դարի վերջին՝ 12 վարժարան, որոնք ունեին 2500 աշակերտ, 70 ուսուցիչ, 30 ուսուցչուհի: Վարժարաններից 10-ը արական էր, 2-ը՝ իգական[4]: Նշանավոր էին Ներսես Հայրապետի գիշերօթիկը, Ս.Նշան, Ս.Սարգիս, Ս.Լուսավորիչ, Ս.Փրկիչ վարժարանները:

Երիզան նաև հայ մշակույթի կենտրոններից էր: Քաղաքում ընդօրինակվել են ավետարաններ, մաշտոցներ, Գրիգոր Տաթևացու «Քաղուածոյ մեկնութիւն Մատթէոսի Ավետարանին» աշխատությունը և այլն: Սեպուհ լեռան ստորոտում կառուցված Ավագ և Կապոսի վանքերին կից դպրոցները մեծ համբավ ունեին: Այնտեղ էին դասավանդում ժամանակի նշանավոր մանկավարժ-գիտնականներ Գևորգ Երզնկացին և Հովհաննես Համշենցին:

Երիզան ծնել է մշակութային նշանավոր գործիչներ: Նրանցից են Կոնստանդին, Հովհաննես, Մարտիրոս Երզնկացիները, 15-րդ դարի գրիչ Ամիր Դավիթը, 17-րդ դարի տաղասաց և գրիչ Ամիրոս Երզնկացին, Գևորգ պատմիչը, Գևորգ, Մեսրոպ, Կիրակոս, Գրիգոր, Հովհաննես վարդապետները, որոնք հայտնի են իրենց պատմություններով ու բանաստեղծություններով: Երիզայից էր նշանավոր հայ ֆիդայի Քեռին:

Երիզայի հայության տնտեսական ու մշակութային կյանքն ընդհատվեց արյունոտ սուլթանի 1894-1896թթ. կոտորածներով: Կոտորածն

[1] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 9 շրջերես:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

սկսվեց 1895թ. հոկտեմբերի 9-ին: Միայն այդ օրը վայրենի խուժանի զոհը դարձավ 100 հայ: Ականատեսներից մեկն այսպես է նկարագրում կոտորածը. «Վեց ժամ տևող այս կոտորածին մեջ վայրագ խուժանը նմանը չտեսնված խժդժությամբ կոտորեց անզեն հայերը սուրով, դաշույնով, դանակով, տապարով, լախտով ու հրազենքով»: Այդ օրը գտնվեցին ևս 90 մորթոտված հայերի դիակներ[1]:

Իշխանությունները կատարվածը թաքցնելու նպատակով նախօրոք էին մտածել միջոցների մասին և, պատրաստված փոսերի մեջ լցնելով դիակները, փորձում էին չքմեղանալ: Կոտորածի ժամանակ քաղաքի հայությունը կրեց 5.935.000 օսմանյան լիրայի վնաս[2]:

Ց ՈՒ Ց Ա Կ

Երզնկայի գավառի հայաշատ գյուղերի
(հաշվումները կատարված են միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Մեղուցիկ	295	1931
Մթննի	217	1280
Չիֆթլիկ	80	900
Չիուլլիճի	75	896
Մահմուդցիք	67	499
Ծաթ	52	364
Կարմի	45	338
Ագրակ Վերին	42	294
Կարաքիլիսե	38	291
Խնձորեկ	30	210
Թիլ	29	200
Աղճաքենդ	27	189
Ագրակ Վարի	23	161
Բթառիճ	50	350
Ախոռճուղ	13	78
Բալանկա	10	50
Բզվան	54	324
Գյուլլիճե	36	396
Դարատեկին	19	114

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 152, թ. 5:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 9 շրջերես:

	տուն	շունչ
Եկան	67	402
Կարաթուշ	20	120
Կելենցիկ	31	186
Հայրապետի	20	120
Հոռոմ-ագարակ	18	108
Մեծ-ագարակ	57	342
Շիվլի	9	54
Ս. Օհան	17	102

Գավառակի նշանավոր գյուղերից էին Բլուրը, Էրմենին, Քիլիջին, Ս.Կիրակոսը:

Գուրուչայի գավառը գտնվում էր Կարինի նահանգի արևմտյան, լեռնոտ շրջանում, հատկապես այստեղ էին կենտրոնացվել թուրք-քրդական խաշնարած ցեղերը՝ մշտական ճնշման տակ պահելով բնիկ հայությանը: Սկսած 19-րդ դարի առաջին կեսից՝ այդ ճնշումներն ավելի ուժեղացան: Սակայն հայությունը ոչ միայն տեղի չտվեց, այլև ցուցաբերելով կազմակերպվածություն՝ պայքարում էր նրանց դեմ, ստիպելով թե՛ տեղական, թե՛ կենտրոնական իշխանություններին հաշվի նստել իրենց պահանջների հետ:

Գավառի նախնական և մեզ հետաքրքրող ժամանակահատվածի պատմության վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ չունենք: Եղածներն էլ կցկտուր, այս կամ այն առիթով ժլատ վկայություններ են:

Գավառի կազմում էին Մեծ և Փոքր Արմտանները, Թեղուտը, Հափշտան կամ Ապուշտան, Հասան օվան կամ Հասանովան, Տանձի (Տանձիկ) գյուղերը: Հիշատակվում են նաև Դարսակին (Դասկներ), Խարախտյան գյուղերը, որոնց մասին, սակայն, բավարար տեղեկություններ չունենք, բացի արխիվային փաստաթղթերից մեկի՝ Դասկների մասին հայտնած վիճակագրությունից[1] և Գ.Սրվանձտյանցի հիշատակությունից[2]:

Գավառի գյուղերը Գ.Սրվանձտյանցի վիճակագրական ցանկում ներկայացված են Կամախի գավառի գյուղերի հետ միասին: Նման մոտեցման շարժառիթը, թերևս, այն է, որ հեղինակը չի ցանկացել առանձնացնել փոքրաթիվ գավառը: Ուրիշ ենթադրություն անելու հիմքեր մեզ հայտնի չեն:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[2] *Սրվանձտյանց Գ.,* Երկեր, հ. 2, էջ 476:

Մեծ և Փոքր Արմտաններ: Առաջին տեղեկությունները պատկանում են մ.թ.ա. 15-14-րդ դարերին: Խեթական արձանագրություններում հիշատակվում է Արմատան ձևով: Արմատան-Արմտանը մտնում էր Հայասա ցեղային միության կազմում: Ենթադրվում է, որ անվան ծագումը կապված է արմեն ցեղի հետ: Գյուղը, որ իր մեծության պատճառով անվանվում էր նաև ավան, գտնվում էր Եփրատի աջ ափին, Երզնկայից արևմուտք մի լեռնադաշտի փոքր բլրակի վրա: Գյուղի մասին հիշատակություն է թողել նաև 17-րդ դարի պատմիչ Հ.Կարնեցին: Մեծ Արմտանն ուներ Ս.Աստվածածին եկեղեցի, դպրոց, շեն պարտեզներ, որոնք տեղավորված էին Գարապատաք գետի ափին: Մշակում էին տարբեր կուլտուրաներ: Զբաղվում էին շերամի աճեցմամբ: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ: Գյուղի վարժարանը կոչվում էր Արամյան և ուներ 200 աշակերտ, 4000 լիրա հասույթ: Գյուղի շրջակայքում էին գտնվում Ս.Նշան վանքը, Քառասուն Մանկանց եկեղեցին, Ս.Լուսավորիչ կաթողիկե եկեղեցին: Մեծ Արմտանում են ծնվել հայ անվանի արձակագիր Հակոբ Մնձուրին, ֆիդայական շարժման նշանավոր ներկայացուցիչ Գալուստ Արխանյանը:

Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, Մեծ Արմտանն ունեցել է 270 տուն, 3000 հայ բնակչություն[1]: Ա-Դոն հաշվում է 246 տուն, 1173 հայ բնակչություն[2]: Աղբյուրներից մեկն էլ հավաստում է, որ Մեծ Արմտանն ունեցել է 1400 հայ բնակիչ[3]: Երբեմն Մեծ Արմտանում հաշվում են 350 տուն հայ բնակչություն (մոտ 1750 շունչ)[4]: Միջին տարբերակով կունենանք 239 տուն, 1630 շունչ հայ բնակչություն: Մեծ Արմտանում կային նաև 250 շունչ թուրքեր[5]:

Փոքր Արմտանն ունի կիսադաշտավայրային բնություն: Գյուղին հարակից կան լեռներ, որոնց վրա աճում են մացառներ: Բնակիչները դրանք օգտագործում են որպես վառելանյութ և անասնակեր: Ցորենը, գարին, մրգերը չեն արտահանվում: Ներմուծվում էին 2500 ոսկու արժեքի զանազան ապրանքներ: Խարապուտախ գետը, որ սկիզբ է առնում Ղանտիլ լեռից, ոռոգում է Փոքր Արմտանի այգիները, աշխատեցնում ջրաղացները: Գյուղում կային վաճառականներ: Բնակիչների մեծ մասի զբաղմունքը պանդխտությունն էր: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ՝ «...այրերը ծույլ են, բայց կիները աշխատասեր»[6]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 23:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 15:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 163, թ. 52:
[4] Նույն տեղում, թ. 35:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 23:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 115, թ. 55, 36:

Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվել է 130 տուն, 1300 հայ բնակչություն[1], Ա-Դոն՝ 76 տուն, 530 բնակչություն[2]: Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, Փոքր Արմտանն ունեցել է 56 տուն, 416 հայ բնակչություն[3]: Ս.Ծոցիկյանը Մեծ Արմտանում ընդունում է 2000, Փոքրում՝ 1000 հայ բնակչություն[4]:

Փոքր Արմտանում գործում էր Արամյան վարժարանը, որն ուներ 400 աշակերտ:

Միջին տարբերակով Փոքր Արմտանում կունենանք 101 տուն, 811 շունչ հայ բնակչություն: Փոքր Արմտանում թուրք բնակչություն չկար:

Թեղուտ գյուղը գավառի խոշոր, հայաշատ բնակավայրերից էր: Բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ առևտրով և արհեստներով:

Գյուղի Ս.Գևորգ եկեղեցին ուներ 2500 լիրա հասույթ, Ս.Գևորգյան վարժարանը՝ 1500 լիրա հասույթ և 70 աշակերտ[5]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 120 տուն, 1200 շունչ հայ և 150 շունչ թուրք բնակչություն[6], Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 93 տուն, 631 շունչ հայ և 25 տուն թուրք բնակչություն[7]: ՏԲ հեղինակը, շփոթելով տեղեկությունները, հայտնում է, թե 631 շունչ բնակչությունից միայն 500 շունչն էր հայ, ինչը չի համապատասխանում իրականությանը[8]:

Միջին տարբերակով կունենանք 106 տուն, 915 շունչ հայ բնակչություն:

Հափշտա, Ապուշտա գյուղը փոքր, զուտ հայաբնակ գյուղ էր: Այն ուներ 15 տուն, 100 շունչ հայ բնակչություն[9]: Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 21 տուն, 124 շունչ բնակչություն[10]: Միջին տարբերակով կունենանք 12 տուն, 72 շունչ հայ բնակչություն:

Գյուղի Ս.Գևորգ եկեղեցին ուներ 500 լիրա հասույթ[11]: Վարժարանի մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 22:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 15:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 115, թ. 53:
[4] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 281:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 23:
[6] Նույն տեղում:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 225:
[8] ՏԲ, հ. 2, էջ 434:
[9] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 23:
[10] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 223:
[11] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 23:

Գ.Սրվանձտյանցը Կամախի գյուղերի ցուցակում հիշատակում է երկու Հափշտա: Առաջինին մենք արդեն անդրադարձել ենք: Երկրորդ Հափշտան ունեցել է 3 տուն, 20 շունչ հայ և 20 շունչ քուրդ բնակչություն, Ս.Աստվածածին եկեղեցի՝ 400 լիրա հասույթ, Պարթևյան վարժարան՝ 700 լիրա հասույթ, 8 աշակերտ[1]:

Հասանովա, Հասան օվա գյուղն ուներ 1700 լիրա հասույթով Ս.Աստվածածին եկեղեցի, 700 լիրա հասույթով, 40 աշակերտով Սալահունյան վարժարան: Զուտ հայաբնակ, 31 տուն, 500 շունչ հայ բնակչությամբ գյուղ էր[2]: Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 44 տուն, 211 շունչ հայ բնակչություն[3]: Միջինը կունենանք 37 տուն, 355 շունչ հայ բնակչություն:

Դասկներ, Դարսակին գյուղն ուներ 50 տուն, 450 շունչ զուտ հայ բնակչություն: Օգտագործելի հողատարածությունը կազմում էր 800 արտավար: Երկսեռ վարժարանն ուներ 95 աշակերտ: Գյուղում կար մեկ եկեղեցի և երկու մատուռ: Արհեստներով զբաղվում էր չորս մարդ, երեք մարդ ջրաղացպան էր: Գյուղն ուներ 70 զույգ եզ, 200 գլուխ նախիր, 2600 գլուխ ոչխար, 140 ձի, էշ, ջորի[4]:

Տանձի, Տանձիկ գյուղն ուներ խառը բնակչություն՝ 6 տուն, 45 շունչ հայ և 200 շունչ քուրդ[5]: Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ուներ 50 տուն օտար, 7 տուն, 56 շունչ հայ բնակչություն[6]:

Գյուղի Ս.Նշան եկեղեցու հասույթը կազմում էր 200 լիրա: Գյուղը վարժարան չուներ[7]: Միջին տարբերակով կունենանք 6 տուն, 50 շունչ հայ բնակչություն:

Վ.Քինեի վիճակագրությամբ, գավառն իբր ուներ 2610 շունչ հայ բնակչություն[8], որը մեր հաշվարկից պակաս է 1873 շնչով (4483-2610=1873):

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 225:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 23:
[6] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 225:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 23:
[8] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 236-237:

Ց ՈՒ Ց Ա Կ

Գուրուչայի գավառի հայաշատ գյուղերի
(հաշվարկը կատարված է միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Մեծ Արմտան	239	1830
Փոքր Արմտան	101	811
Թեղուտ	106	915
Դասկներ	50	450
Հասանովա	37	355
Հափշտա	12	72
Տանձի	6	50

Կերճանիսի գավառում հիմնականում հիշատակվում են չորս հայաբնակ բնակավայրեր՝ Կերճանիս կամ Ռափահինե քաղաքը և Հոռոփուլ կամ Հրոփիլ, Մելիք շերիֆ, Կարսազան գյուղերը:

Կերճանիսի գավառին ևս բաժին հասավ Գուրուչայի ճակատագիրը: Հայությունը համառ դիմադրություն էր ցույց տալիս թուրք-քրդական ձուլման քաղաքականությանը, հալածանքներին: Սակայն ժամանակ առ ժամանակ, երբ սպառվում էին հայության հնարավորությունները կամ առավել էին սաստկանում հալածանքները, գավառակի հայերի մի մասը, փրկության ուրիշ ելք չտեսնելով, կրոնափոխվում էր: Շուրջ 200 տարվա պայքարի արդյունքն էին այլազգիների ավելացումը, կրոնափոխվածները: Թերևս սա, ինչպես նաև հատկապես քրդերի սովորություններն ու կենցաղը նկատի ուներ Ս.Էփրիկյանը, որ համարձակորեն հայտարարում էր, թե գավառի քրդացած ու թրքացած բնակչության նախնիները ժամանակին եղել են «հայ քրիստոնյաներ»[1]:

Կերճանիս գավառանիստ քաղաքը, Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, ունեցել է 35 տուն, 225 շունչ հայ բնակչություն[2]:

Հոռոփուլ, Հրոփիլ, Հոռոփիլ գյուղը գտնվում էր Կամախից 8 ժամ հեռավորության վրա: Գյուղը շրջապատված էր լեռներով ու թուրքաբնակ գյուղերով: Հողն արգավանդ էր: Բնակիչները հյուրասեր էին, բարեկեցիկ կենցաղով, ինչը դառնում էր շրջակա գյուղերի թրքության նախանձի ու թշնամանքի պատճառ: Գյուղի համեմատաբար հարուստ լինելը պայմանավորված էր նաև նրանով, որ մեծ թվով պանդուխտներ կային Պոլսում, որոնք օգնում էին հարազատներին:

[1] *Էփրիկեան Հ.,* նշված գիրքը, հ. Ա, էջ 178:
[2] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 224:

Գյուղը հանրահայտ էր Ցնցոր վանքով, որտեղ հաճախակի էին կազմակերպվում տոնախմբություններ, եկեղեցական արարողություններ: Հոռոփիլ այցելած ուխտավորները վայելում էին գյուղի համբավավոր կաթի սերն ու մեղրը: Հատկապես մեծ շուքով էր տոնվում Վարդավառը: Այդ օրը գավառակի ու հարևան գավառի հայերը լցվում էին գյուղ, տոնախմբությունը երգով ու երաժշտությամբ շարունակվում էր մինչև երեկո:

Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 1800 լիրա հասույթ, Մնձուրյան վարժարանը՝ 1000 լիրա հասույթ և 50 աշակերտ: Գյուղի բնակչությունը միատարր էր, զուտ հայաբնակ էր, ուներ 40 տուն, 700 շունչ հայ բնակչություն[1]:

Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ուներ 59 տուն, 775 շունչ հայ բնակչություն[2]: Հեղինակներից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է 45 տուն հայ բնակչություն[3]: Նկատի ունենալով, որ տները բազմամարդ էին (ունեին 15-17 շունչ– Հ.Զ.), կարելի է վստահեցնել, որ 45 տներում ապրում էին առնվազն 765 շունչ հայեր:

Միջին տարբերակով կունենանք 52 տուն, 770 շունչ հայ բնակչություն:

Մելիք Շերիֆ գյուղն ուներ խառը բնակչություն: Օտարներն ունեին 150 տուն, հայերը՝ 42 տուն, 421 շունչ բնակչություն[4]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, 30 տուն, 400 շունչ հայ և 500 շունչ թուրք բնակչություն կար գյուղում: Ս.Գևորգ եկեղեցու հասույթը 1500 լիրա էր, Սեպուհյան վարժարանինը՝ 700 լիրա: Վարժարանում սովորում էր 41 աշակերտ:

Միջին տարբերակով կունենանք 36 տուն, 410 շունչ հայ, 110 տուն, 775 շունչ թուրք բնակչություն:

ՑՈՒՑԱԿ

Կերճանիսի (Ռեփահիե) գավառի հայաբնակ բնակավայրերի (հաշվարկը կատարված է միջինի տարբերակով)

	տուն	շունչ
Հոռոփուլ (Ռեփահիե)	52	770
Մելիք շերիֆ	36	410
Կերճանիս քաղաք	25	225

Գավառում հիշատակվում է նաև Կարսագա գյուղը:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 23:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 224:
[3] *Պաղտիկեան Գ.,* Տարեգրի մը ճամփան և Քեմախի պատմութիւնը, Լոս Անջելես, 1984, էջ 387:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 23:

Կամախի-Քեմախի գավառ. Կամախը Բարձր Հայքի նշանավոր գավառներից էր: Տարածքով համապատասխանում էր պատմական Դարանաղի գավառին: Հյուսիսում նրա սահմանները հասնում էին Կերճանիսին, հարավում՝ Եփրատին, արևելքում՝ Երզնկայի գավառին, արևմուտքում՝ Արմատանին: Գավառը լեռնային է, հարուստ աղի, երկաթի, պղնձի, արծաթի հանքերով:

Գավառի մասին հիշատակություններ են թողել Ագաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը: 17-րդ դարին վերաբերող գնահատելի տեղեկություններ է հաղորդում Կարինի Ս.Աստվածածին վանքի քահանա Հ.Կարնեցին: Նա գավառի և քաղաքի մասին գրում է. «Եւ անտի յառաջ գնացեալ ի միւս կողմն հասնէ երկիրն Դարանաղեաց, որ ունի գիւղք եւ աւանք եւ բերդ ամուր եւ անառիկ ի վերայ գետոյն Եփրատայ. զի ինքն Տրդատ շինեաց եւ եդ անձ զԱշխէն տիկինն եւ զքոյր իւր Խոսրովադուխտն. եւ է յոյժ վայելուչ եւ մրգաբեր փոքրիկ քաղաք եւ բնակչութիւն ազգիս Հայոց եւ ունի պայծառ եկեղեցիք եւ վանորայք. եւ ունի յոյժ ախորժ զարմանալի պանիր, որ ի Ստամպօլ եւ յԱրզրում փաշային ազերս կու մատուցանեն»[1]:

Գավառի և քաղաքի անվան մասին կան տարբեր կարծիքներ: Ոմանք ենթադրում են, որ անունը ծագել է կաղամախի ծառի անունից, որը շատ տարածված է գավառում: Կարծիք կա, որ անունն առաջացել է կմախք բառից, քանզի գավառի Անի ավան-քաղաքում էին գտնվում Արշակունի թագավորների գերեզմանոցը, Ս.Խաչ եկեղեցին, որտեղ թաղված են Տրդատ Գ թագավորը, նրա կին Աշխենը, քույր Խոսրովադուխտը, Գրիգոր Լուսավորիչը, Լուսավորչի թոռներն ու որդիները: Հաճախ այս իրողությունը նկատի ունենալով՝ Ս.Խաչ եկեղեցին անվանել են նաև «Ինն գերեզմանք»[2]:

Կամախ անվան ծագումը բացատրվում է նաև հինավուրց մայրաքաղաք Կումմախանի անունով:

Գավառն ունեցել է 5 վանք, 11 եկեղեցի: 19-րդ դարի առաջին կեսին գավառն ունեցել է մինչև 210.000 բնակչություն, 360 գյուղ: Դարի երկրորդ կեսին սաստկացած տնտեսական, քաղաքական ու կրոնական հալածանքների պատճառով բնակչության զգալի մասը, գոյության պահպանման այլ միջոցներ չտեսնելով, դիմեց կրոնափոխության կործանարար քայլին: Դրան գումարվեցին 1894-1896թթ. կոտորածները, և գավառի

[1] *Կարնեցի Հ.,* Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 12-13:
[2] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 281:

գյուղերի մեծ մասն ավերվեց, վերացավ պատմական հիշողությունից, իսկ գյուղերի մեկ այլ խմբի վրա ամրագրվեցին թուրք-քրդա-չերքեզական օտարամոլ անուններ, որոնք ժամանակի ընթացքում իսպառ անհետացրին հայկականության հետքերը: Ահա թե ինչու դարի երկրորդ կեսին գավառում հիշատակվում էր 21 գյուղ՝ 7000 բնակչությամբ: Որոշ աղբյուրներ հիշատակում են 13 կամ 26 գյուղ[1]:

Միջինը՝ 20 գյուղ:

Հնագույն ժամանակներում (հեթանոսական շրջան) գավառակի տարածքի լավագույն հողերից շատերը գտնվում էին տաճարապատկան վիճակում՝ լինելով մեհյանների կալվածքները: Վիճակը չփոխվեց քրիստոնեության ընդունումից հետո, և ավանդությունը շարունակվեց, քանզի ավերված տաճարների փոխարեն կառուցվում էին վանքեր ու եկեղեցիներ, որոնց ևս տրվում էին կալվածքներ:

Գավառակի կենտրոնը հինավուրց Անի բերդ-ավան-քաղաք բնակավայրն է: Հետաքրքիր բացատրություններ են տրվում Անի անվան վերաբերյալ: Որոշ ուսումնասիրողներ անվան ծագումը կապում են Անահիտ աստվածուհու անվան հետ: Տարածված է նաև այն կարծիքը, որ անունն առաջացել է արև, լույս արտահայտությունից, այսինքն՝ Անի նշանակում է արև, լույս: Նորագույն ուսումնասիրությունների արդյունքում համոզմունք է հայտնվում, որ անունը բնակավայրին տվել է Հայկազյան թագավոր, Հայասայի ամենաեռանդուն գահակալներից մեկի՝ Հուկկանասի հետնորդ Աննիասը (մ.թ.ա. 1345-1316թթ.)՝ Անիի պատվին:

Հետաքրքիր բացատրություն է տալիս Վարդան Բարձրաբերդցի պատմիչը՝ գրելով. «...Անի, որ կոչի Խնամք»[2]:

Անի-Կամախը հեթանոս հայության Արամազդ աստծո գլխավոր պաշտամունքի վայրն էր: Անի-Կամախը նաև դպրության կենտրոն էր: Այնտեղ է աշխատել Բարդածան պատմիչը:

Անի-Կամախը, որ Փոքր Հայքի կենտրոնն էր, Մեծ Հայքին է միացվել Տիգրան Մեծի կողմից: Այդուհետ, Կամախն իբրև հայտնի ամրոց հիշատակվում է Արտաշեսյան և Արշակունի հարստությունների ժամանակ՝ հանդիսանալով նաև արքունի գանձերի պահպանման հուսալի վայր: Շապուհ Երկրորդը, գրավելով Կամախը (369թ.), գանձ գտնելու հույսով, ավերածության երթարկեց Արշակունիների թագավորական գերեզմանոցը: Սկսած 12-րդ դարից՝ Անիի մասին վկայությունները դադա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10: ԳԱԹ, ց. 5, գ. 163, թ. 1-2, ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 22-23:

[2] *Վարդան Բարձրաբերդցի,* Պատմութիւն տիեզերական, Մ., 1891, էջ 117:

րում են, և շրջանառության մեջ է մտնում Կամախ անունը: Թուրքիայի տիրապետության տակ անցնելուց հետո Կամախը դառնում է Դարանաղյաց գավառի կենտրոնը՝ հաճախ կոչվելով Քեմախ:

Հեթանոսական ժամանակներում Անի-Կամախը հայտնի էր Արամազդ աստծո տաճարով: Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո Գրիգոր Լուսավորիչը կործանեց այդ մեհյանը՝ տեղը կառուցելով եկեղեցի: Կամախի հնագույն հուշարձաններից է բերդը, որը կառուցվել է 2-րդ դարում: Այն հզոր պարիսպներով աշտարակավոր կառույց է եղել, ունեցել է երեք դուռ: Բերդի տարածքում եղել են մի քանի եկեղեցիներ: Բերդի հյուսիսային կողմում դեպի բարձր աշտարակը տանող ժայռափոր գաղտնաճանապարհ է գործել: Գավառանիստ քաղաքը մշակութային կենտրոն էր: Հատկապես 15-րդ դարում Կամախը դարձավ գրչության կենտրոն: Այնտեղ ընդօրինակվել են Քրման խաթունի պատվերով գրված Ճաշոցը (15-րդ դար) և մի Մաշտոց:

Քաղաքը և գավառը հայ մշակութային ու ազատագրական շարժմանը տվել են արժանահիշատակ գործիչներ: Նրանցից էր 16-րդ դարի պատմիչ Գրիգոր Դարանաղացին, որին երբեմն անվանել են նաև Կամախեցի:

Ազատագրական շարժման խոշոր ներկայացուցիչ էր Արմտանցի Գրիգոր Արխանյանը (1855-1904 թթ.), ներքին Բագառիճցի էր Սողոմոն Թեհլերյանը (1896-1960թթ.):

19-րդ դարի 70-ական թվականներին Կամախն ունեցել է 2000 հայ և թուրք խառը բնակչություն, իսկ 20-րդ դարի սկզբներին բնակչությունը հասնում էր 15.000-ի, որի զգալի մասը հայեր էին[1]:

Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, նույն 19-րդ դարի 70-ական թվականներին Կամախն ունեցել է 35 տուն, 300 հայ բնակչություն[2]: Ա-Դոն վկայում է, որ իր ուսումնասիրած ժամանակաշրջանում Կամախն ունեցել է 48 տուն, 298 հայ բնակչություն[3]: Կաթողիկոսական դիվանի արխիվային ֆոնդում պահպանվող մի փաստաթուղթ հավաստում է, որ քաղաքը 1914թ. պատերազմից առաջ ունեցել է 52 տուն, 500 շունչ հայ բնակչություն[4], իսկ 1909թ. 50 տուն, 298 շունչ բնակչություն[5]:

Միջինը՝ 46 տուն, 349 շունչ հայ բնակչություն:

[1] ՏԲ, Ե., 1988, հ. 2, էջ 913:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 22:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 225:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 163, թ. 1:
[5] ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 196:

Տեսնում ենք, որ ներկայացված չորս տեղեկություններն էլ իրարից զգալի տարբերություններ ունեն: Ձեռքի տակ չունենալով առավել համոզիչ և հավաստի վիճակագրական տեղեկություն՝ մեզ մնում է ենթադրել, որ հնագույն ժամանակներից Կամախը հանդիսացել է Մեծ Հայքի հայաշատ կենտրոններից մեկը և միայն քոչվորական ցեղերի արշավանքների վայրիվերո ժամանակներում խաթարվել է նրա բնակչության միատարրությունը: Ավելին, հատկապես 19-րդ դարում, կապված ռուս-թուրքական պատերազմների, դրանց հաջորդած հալածանքների ժամանակաշրջանների, գաղթի և այլ տեղաշարժերի, զանգվածային կոտորածների հետ, ինչպես Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքում, այնպես էլ Կամախում ժողովրդագրությունը փոխվում է հոգուտ եկվորների: Հատկապես մեծ դեր է խաղում կրոնափոխությունը: Հալածանքների շրջանում զանգվածային էր դառնում պանդխտությունը: Ժամանակակիցներից մեկը, նկարագրելով այդ վիճակը, պանդխտության ահռելի չափերը, արձանագրում էր. «Քամախի հայ գիւղերու մէջ հանդիպող եւրոպացի որևէ մարդ դիւրաւ կրնար իր թարգմանը գտնիլ»[1]:

Գ.Սրվանձտյանցը վկայում է, որ Կամախում գործել է Տրդատյան վարժարանը, որն ուներ 28 աշակերտ: Վարժարանի հասույթը ստեղծվել է հանգանակությունից և կազմել է 1000 ղուրուշ[2]:

Մեկ այլ աղբյուր հայտնում է, թե քաղաքում Ս.Աստվածածին եկեղեցուն կից գործել է վարժարան, որտեղ 20-րդ դարի սկզբին սովորել է 75 աշակերտ, աշխատել 3 ուսուցիչ, իսկ 1872-1873թթ. սաների թիվն ընդամենը 24 էր[3]:

ՀՀ ՊԿՊԱ կաթողիկոսական ֆոնդում պահպանվող փաստաթղթերից մեկը հավաստում է, որ քաղաքում գործել է (պատերազմից առաջ) երկսեռ վարժարան, որն ունեցել է երկու ուսուցիչ, 75 աշակերտ[4]:

Առավել հակասական տեղեկություններ են հաղորդվում գավառի գյուղերի վերաբերյալ: Հեղինակներից մեկը գտնում է, որ 19-րդ դարի առաջին կեսին Կամախի գավառն ունեցել է 360 գյուղ, 168-210.000 բնակչություն՝ «մեծագույն մասը հայեր և բռնությամբ մահմեդականացված հայեր»[5]:

Ա-Դոն վստահեցնում է, որ գավառակում կար 21 գյուղ: Իր երեք մասից կազմված ցուցակի առաջին մասում նա տալիս է Կերճանիսի և

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 11:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 22:
[3] ՏԲ, հ. 2, էջ 914:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 2:
[5] ՏԲ, հ. 2, էջ 914:

Գուրուչայի գյուղերը, երկրորդում՝ վեց գյուղանուններ և 12 գյուղ էլ «Վիճակագիր Քեմախի հայ ժողովրդի» ցուցակում[1]:

Գ.Սրվանձտյանցը գրանցում է 26 գյուղ[2]: 18 գյուղ է ցուցակագրում Անանուն հեղինակը և այլն[3]:

Հետաքրքիր համեմատական է անցկացնում արխիվային մեկ այլ փաստաթուղթ՝ համադրելով Ա-Դոյի, Հ.Էփրիկյանի, Գ.Սրվանձտյանցի և Սյուրմելյանի գյուղացուցակները: Հարկ ենք համարում ներկայացնել դրանք.

Ա-Դո	5. Փոքր Փազառիճ	6. Արեգակ Ս.Նշան
1. Քեմախ	6. Ս. Նշան վանք	7. Ուռի
2. Մարիք	7. Զաքարի	8. Գոմեր
3. Հազարք	8. Ուռի	9. Թորդան
4. Մեծ Բազառիճ	9. Գոմեր	10. Թաւկընիր
5. Փոքր Բազառիճ	10. Թորդան	11. Կառնի
6. Ս.Նշան վանք	11. Թաւկեր	*Սյուրմելյան*
7. Զաքարի	12. Գառնի	1. Քեմախ
8. Ուռի	13. Թողատի	2. Մարեկ
9. Գոմեր	14. Հոռոփող	3. Վերին Բազառիճ
10. Թորդան	15. Մարիք Շերիֆ	4. Վարի
11. Թաւկներ	16. Ավազ վանք	5. Ս. Նշան
12. Կառնի	*Գ.Սրվանձտյանց*	6. Զաքարի
Հ.Էփրիկյան	1. Քեմախ	7. Գոմեր
1. Կամախ	2. Մարեկ	8. Թորդան
2. Մարիք	3. Հազարք	9. Թաւկըներ
3. Հազարի	4. Բազառիճ վերի	10. Կարնի[4]
4. Մեծ Փազառիճ	5. Բազառիճ վարի	

Թե ինչ սկզբունքով է կատարված այս համեմատությունը՝ դժվար է կռահել, բայց մեզ համար շահեկան է գյուղերի ցուցակը, որի պարզ համեմատությունից կարող ենք կազմել գավառի գյուղերի ցուցակը՝ դրան գումարելով այլ աղբյուրներից հավաքած գյուղանունները: Ցուցակում, ընդհանուր առմամբ, նշվում է 16 գյուղ: Գ.Սրվանձտյանցի մեկ այլ ցուցակում կա 26 գյուղանուն, որոնցից նույնանում են 13-ը, բացա-

[1] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 224-225:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 22-23:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, թ. 1-2:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 473, թ. 19, շրջերես 20:

կայում են Հոռոփոս, Թողատ, Ավագ վանք գյուղերը: Դրան հակառակ, Գ.Սրվանձտյանցը հիշատակում է Հափշատ, Չափարք, Հողաս, Չափարի, Քարտակ, Ս.Թադևոս, Մեծ և Փոքր Արմտաններ, Թեղուտ, Տանձիկ, Հասանովա, Հոռոփիլ ի Կեճառիս գյուղերը[1]: Հիշենք, որ Հափշատ գյուղը կրկնվում է, ուրեմն Գ.Սրվանձտյանցի ցուցակում կա 25 գյուղանուն: Մեր ունեցած ցուցակին ավելացնենք 12 գյուղանուն, կունենանք 28 գյուղ: Նշենք նաև, որ սույն ցուցակը գրեթե նույնանում է Ա-Դոյի ցուցակին, միայն բացակայում են Չափարիկ, Քարտակ, Ս.Թադևոս գյուղերը[2]:

Ավագ վանք գյուղը հիշատակում է նաև Անանուն հեղինակը, որ ներկայացնում է 13 գյուղ[3]:

Այժմ մեր ունեցած 28 գյուղին ավելացնենք տարբեր արխիվներից հավաքած ևս 4 գյուղ՝ Ավշեն, Հողաս, Հոռոփիլ, Զաքրքյոյ[4], և կունենանք գավառակի գյուղերի ոչ լրիվ ցուցակը, որովհետև արխիվային փաստաթղթերից մեկը հաղորդում է, որ Կամախի գավառակն ունեցել է 86 գյուղ, 3076 տուն, 18.872 բնակչություն, որից մահմեդական՝ 14.547, հայ լուսավորչական՝ 3503, բողոքական հայեր՝ 189, հունադավան՝ 639[5]:

Այսինքն՝ մեզ անհայտ է մնում 54 գյուղ (86-32-54): Կարելի՞ է հավաստի ընդունել հիշատակված արխիվային փաստաթղթի վկայությունը: Գուցե այո, սակայն, դժբախտաբար, փաստաթուղթը չի նշում, թե որ ժամանակին է վերաբերում տեղեկությունը: Նկատի ունենալով պարբերաբար կրկնվող վարչական մանր ու մեծ փոփոխությունները՝ թերևս, հնարավոր լինի ընդունել վկայությունը, եթե հաշվի նստենք այն փաստի հետ, որ 19-րդ դարում բուռն թափով առաջ էր տարվում կրոնափոխության գործընթացը, ռուս-թուրքական պատերազմներից հետո տիրող իրավիճակը, հայտնի ու անհայտ կոտորածները, տեղահանությունները, Հյուսիսային Կովկասից մահմեդականների ներգաղթը, հայերի արտագաղթերը և այլն ասպարեզից հանեցին գյուղերի հայկական անունները: Այստեղ մեզ օգնում է Գ.Սրվանձտյանցի մեկ այլ վկայությունը: Պատասխանելով այն հարցին, թե ինչ ազգեր են ապրում գավառում, մեծ երախտավորը նշում է՝ հայ թուրք, քուրդ, չինկյանե, որոնց թիվն է «6000 քուրդ, 4000 թուրք, 6500 հայ ի Կամախ: 300 քուրդ, 200 թուրք, 6250 հայ ի Բուրիշա, 3000 քուրդ, 2000 թուրք, 1100 հայ, 1500 հույն ի Կերճանիս = 14.000 հայ»[6]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 22-23:
[2] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 224-225:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1:
[4] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 10, թ. 103, գ. 292, թ. 53, գ. 344, թ. 20, գ. 789, թ. 27, 70:
[5] Նույն տեղում, ֆ. 478, ց. 1, գ. 286, թ. 54, 56:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, էջ 23:

Այժմ կատարենք ևս մեկ անդրադարձ. ինչպես նշեցինք շարադրանքում, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» նշվում է, որ գավառը 19-րդ դարի առաջին քառորդում ունեցել է 360 գյուղ՝ 168-210.000 բնակչությամբ[1]: Ներկայացված արխիվային փաստաթղթերից մեկը հավաստում է, որ գավառն ունեցել է 86 գյուղ, 18.872 բնակչություն[2]: Հավանաբար, վկայությունը վերաբերում է 19-րդ դարին, որովհետև դժվար թե դրանից առաջ գավառում հիմնավորված լինեին հայկական բողոքական և կաթոլիկ համայնքները, քանզի փաստաթուղթն ընդգծում է նաև այդ հավատներին կրոնափոխվածների քանակը: Գ.Սրվանձտյանցը վիճակագրել է 26 գյուղ՝ 14.000 հայ բնակչությամբ[3], Անանուն հեղինակը՝ 12 գյուղ, 9268 բնակչությամբ[4], «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»՝ 21 գյուղ, 7000 բնակչությամբ[5], Ա-Դոն՝ 21 գյուղ, 3927 բնակչությամբ[6]:

Այստեղից էլ՝ 19-րդ դարի առաջին քառորդին գավառակն ունեցել է 360 գյուղ՝ 210.000 բնակչությամբ: Պայմանականորեն ընդունենք երկրորդ փաստաթուղթը. 19-րդ դարի կեսին՝ 86 գյուղ, 18.872 բնակչություն: Բնակչությունը նվազել է 191.128-ով: 1879թ. գավառում եղել է 14.000 բնակչություն՝ նվազել է 196.000-ով, 1919թ.՝ 206.073-ով, 1912-1914թթ. նվազել է 200.732-ով: Պատկերն ավելի քան պարզ է: Թուրքական բռնատիրությունը կարողացել է կրոնափոխության, հալածանքների, արտագաղթերի, կոտորածների ճանապարհով գավառակը գրեթե հայաթափել:

Գավառի կրոնական հաստատությունների առթիվ կան հետևյալ տեղեկությունները: Այսպես, Գ.Սրվանձտյանցի հաշվումներով, գավառում եղել են 5 վանք, 14 եկեղեցի[7]: Մեկ էջ անց հեղինակն այլ առիթով նշում է ևս երկու վանք՝ Անարծաթ Բժշկաց և Ս.Աստվածածին[8]: Անանուն հեղինակը հաշվում է 4 վանք, 13 եկեղեցի և 15 մատուռ[9]: ՏԲ-ում հիշատակվում են 5 վանք, 11 եկեղեցի[10]: Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գավառում ժամանակին գործել են նաև Ս.Թորոս, Ս.Մինաս, Ս.Կարապետ, Ս.Գևորգ վանքերը[11]:

[1] ՏԲ, հ. 2, Ե., 1988, էջ 914:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 478, ց. 1, գ. 286, թ. 54, 56:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 23:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1:
[5] ՏԲ, էջ 914:
[6] *Ա-Դոն,* նշված գիրքը, էջ 224-225:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, էջ 75-77:
[8] Նույն տեղում, էջ 78:
[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1:
[10] ՏԲ, հ. 2, էջ 914:
[11] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 19:

Բոլոր աղբյուրների տեղեկությունների համադրմամբ, գավառի եկեղեցիների ցուցակը կունենա հետևյալ պատկերը. Ավագ վանք, Ս.Աստվածածին, Անարծաթ Բժշկաց, Ս.Փրկիչ, Ս.Նշան, Արեգակ, Ս.Նշան, Ս.Լուսավորիչ, Սերովբե և Քերովբե, Ս.Թադևոս, Ս.Թորոս, Ս.Մինաս, Ս.Գևորգ, Ս.Կարապետ, թվով 10-12 վանք և 11-14 եկեղեցի: Գ.Սրվանձտյանցի ուսումնասիրության ժամանակ դրանցից ավերված էր վեցը: Ավերված էր նաև 108 եկեղեցի[1]: Պետք է հիշեցնել, որ 108 եկեղեցու փաստը չափազանցված չէ: Քանզի, եթե գավառում, տարբեր ժամանակներում եղել է 86-860 գյուղ, «168-210.000 բնակչով՝ մեծագույն մասը հայեր և բռնությամբ մահմեդականացված հայեր»[2], ապա եկեղեցիների նշված քանակը նույնիսկ պակաս է ներկայացված, որովհետև գավառի բոլոր մեծ գյուղերն ունեցել են երկու և ավելի եկեղեցիներ, ինչպես, օրինակ, Կամախ քաղաքը, Բագառիճները, Արմտանները: Անանուն հեղինակը հայտնում է նաև, որ գավառի 13 գյուղերի եկեղեցիներից միայն երկուսում չկային քահանաներ: Մնացած եկեղեցիներում պաշտոնավարել է 11 քահանա[3]:

Գավառի նշանավոր վանքերից էր Ս.Թադևոս Առաքյալի վանքը, որը, ավանդության համաձայն, կառուցել է Թադևոս Առաքյալը: Այն միաժամանակ անվանվում էր Լուսավորչի անապատ[4]:

Թորդան գյուղում էր գտնվում Ս.Խաչ վանքը, ուր թաղված են Տրդատ Գ թագավորը, նրա կին Աշխենը, Խոսրովադուխտ քույրը, Գրիգոր Լուսավորիչը, Դանիել եպիսկոպոսը: Ս.Խաչ վանքը կոչվել է նաև Ինը գերեզման[5]:

Արխիվային փաստաթղթերից մեկը հաղորդում է. «Այս վանքին մէջ էր կենաց փայտի մասունքը, մեծն Տրդատայ ականակուռ շքանշանը, ինչպես նաեւ ուրիշ արծաթեաց եւ ոսկեից խաչեր. այս վանքին հնութեան վերաբերող իրերը եւ արժեքավոր խաչերն ու Ս. անօթները Քամախի կառավարութիւնը գրավելով... պարոն Մխիթար Բրօխորոնիան կը պատմէ թե, հաւատի աղբիւրներէ տեղեկացած ենք որ արժեցած են (վանքի սպասքը– Հ.Զ.) աւելի քան մեկ միլիոն օսմ. ոսկի»[6]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 23:
[2] ՏԲ, հ. 2, էջ 914:
[3] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1:
[4] *Ծոցիկյան Ս.,* նշված գիրքը, էջ 281:
[5] Նույն տեղում:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 13:

Կամախ քաղաքի հյուսիսարևմտյան կողմում էր Ս.Անարծաթ Բժշկաց վանքը, որը թալանվել է Լենկթեմուրի արշավանքի ժամանակ, իսկ վանահայրը բռնությամբ մահմեդական կրոն է ընդունել[1]:

Թուրքական բռնատիրության հայահալած քաղաքականությունն իր ազդեցությունն էր ունենում կրթական համակարգի վրա: Դպրոցները մի կերպ, եկեղեցու, հանգանակությունների, նվիրատվությունների, երբեմն նաև գյուղացիների սուղ միջոցներով էին երկարաձգում իրենց գոյությունը: Գ.Սրվանձտյանցն իր ուսումնասիրած ու գրանցած 26 գյուղում հիշատակում է 19 վարժարան՝ 1159 աշակերտով: 7 գյուղում վարժարանները փակվել էին[2]: Անանուն հեղինակի տեղեկություններով, 13 գյուղում կար 10 վարժարան՝ 1125 աշակերտով: Դպրոցներում աշխատում էին 16 ուսուցիչ, 8 ուսուցչուհի[3]:

Արխիվային փաստաթղթերը հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաև Կամախի և գավառակի հայության զբաղմունքի, արհեստների, պանդխտության, մեծահարուստների մասին, որոնք ավելի քան ամբողջական են դարձնում գավառի պատմությունը: Այսպես, քաղաքում և գավառում աշխատում էին 86 առևտրական, 126 արհեստավոր, որմնադիր, հյուսն, դարբին, կոշկակար, դերձակ և մեկ ոսկերիչ, գործում էր 18 ջրաղաց: 10.975 օրավար էր կազմում օգտագործելի հողատարածությունը, 852 մարդ գտնվում էր պանդխտության մեջ[4]: Գ.Սրվանձտյանցի հաշվումներով՝ 2000 մարդ[5]: Գյուղերում կար 1960 մեղվի փեթակ, 538 զույգ եզ, 22.310 ոչխար, նախիրում հաշվվում էր 1720 գլուխ անասուն[6]:

Կամախ քաղաքում, Վերի և Վարի Բազառիճներում, Մեծ ու Փոքր Արմտաններում, Գոմեր, Թեղուտ, Հոռոփիլ, Մելիք շերիֆ գյուղերում նշանավոր և մեծահարուստ էին 17 հայ, որոնք աչքի էին ընկել իրենց «թե՛ հարստությամբ և թե՛ գործունեությամբ»[7]:

Հողօգտագործման, հողատիրության առթիվ Գ.Սրվանձտյանցը հայտնում է, թե «Ընդհանրապես թրքաց և քրդաց՝ թափու են, շատ քիչ՝ վագըֆ, հայերը շատ քիչ հող ունին և պանդխտությամբ կապրին, և բաղդատմամբ թրքաց հետ հողային ընդարձակությունին 100-են մեկ է»[8]:

[1] Նույն տեղում:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 22:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 2:
[4] Նույն տեղում:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 23:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 2:
[7] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, թ. 22:
[8] Նույն տեղում:

Գավառում գործում էր մեկ ընկերություն՝ «Ժողովրդական ընկերություն ի Մեծն Արմտան», որի հիմնական նպատակը դպրոցի ծախսերը հոգալն էր[1]:

Գավառից արտահանվում էին ցորեն, գարի, աղ, կտավատ, կտավատի ձեթ, միրգ, բանջարեղեն, մեղր, բուրդ, յուղ, ոչխար, արջառ: Ներմուծվում էին մետաղյա իրեր, բրինձ, ծխախոտ: Ընդհանուր առմամբ, արտահանվել է 1000 ոսկու, ներմուծվել՝ 30.000 ոսկու արժեքի ապրանք[2]:

Գավառն առևտրական սերտ կապերի մեջ էր Երզնկայի, Ակնի, Օվաճազի, Կերճանիսի, Կարահիսարի, Սվազի հետ:

Գավառի բնությունը լեռնային է: Մեծ թիվ են կազմում բերրի հողերը: Բուսականությունը ճոխ է: Այս ամենին նպաստում է ջրառատությունը: Գավառով են հոսում Եփրատ, Կամախ գետերը, նրանց վտակներ Գառնին, Թանաձորը, Գարապուրուն, Գուրիկան:

Գավառը հայտնի է նաև իր լեռնազանգվածներով: Նրանցից նշանավոր են Սեպուհ, Մնձոր, Քըրքք թաշ, Գանալի, Դումանլու, Գուրտլու թեփե լեռները, Ղզըլ տաղը և այլն: Ամենամեծ դաշտավայրը Թերեպյուտն է, որն ունի 4 ժամ երկարություն, 2,5 ժամ լայնություն[3]:

Երբեմնի հայաշատ Կամախ գավառակը ծանր հարված ստացավ 1894-1896թթ. կոտորածների ժամանակ: Այդ էր պատճառը, որ 168-210.000 բնակչություն ունեցող գավառի 21 գյուղերում, որտեղ հայերը զգալի թիվ էին կազմում, 1913թ. մնացել էր 1256 տուն, 8927 շունչ հայ բնակչություն[4]: Կոտորածների ժամանակ թալանված կահկարասիների արժեքը 1.172.000 օսմանյան լիրա էր, կրոնական հաստատություններից թալանվել էին 1.072.000 օսմանյան լիրայի զարդեր, սպասք, անոթներ, վաճառականները կրել են 81.400, արհեստավորները՝ 5050 օսմանյան լիրայի վնաս, հափշտակված ընդհանուր անասունների ընդհանուր արժեքը կազմում էր 149.050 օսմանյան լիրա[5]:

Գավառի գյուղերից պատմական հարուստ կենսագրություն ունի *Թորդանը:* Այն գտնվում էր Սեպուհ լեռան արևելյան կողմում, գավառի հոգևոր կենտրոնն էր: Գյուղի մասին ամենահին հիշատակությունը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարին: Այդ ժամանակաշրջանում էլ Տիգրան Մեծը Միջագետքից Թորդան է տեղափոխում Բարշամ աստծո փղոսկ-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 2-րդ Բ, գ. 47, թ. 23:
[4] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 224-225:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 2:

րից պատրաստված, արվեստի կատարելություն հիշեցնող արձանը: Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո մեհյանն ավերվել է, և նրա փոխարեն կառուցվել Ս.Խաչ եկեղեցին (նաև Ս.Նշան): 4-րդ դարում կառուցված այս եկեղեցին գավառի, և ոչ միայն նրա, հայ ազգաբնակչության սիրված պաշտամունքային վայրն էր: Նրա դերն առավել բարձրացավ, երբ Գրիգոր Լուսավորիչը Թորդանում կառուցել տվեց իր առանձնատունը, որն ուներ փոքրիկ պարտեզ: Հետագայում առանձնատան տեղում կառուցվում է քառակուսի հատակագծով գմբեթավոր եկեղեցի, որտեղ էլ թաղվում են Տրդատ Գ թագավորը, Գրիգոր Լուսավորիչը, նրա սերունդները և ուրիշներ:

Գ.Սրվանձտյանցն արձանագրում է, որ Թորդանում կար 25 տուն, 425 հայ բնակչություն[1], Անանուն բանահավաքը՝ 48 տուն, 450 հայ բնակչություն[2]: Ա-Դոյի հաշվումներով, գյուղն ուներ 43 տուն, 419 հայ բնակչություն[3]:

Միջինը՝ 39 տուն, 431 շունչ հայ բնակչություն:

Թորդանում գործել են մեկ եկեղեցի, մեկ վանք: Գյուղում եղել է նաև մեկ մատուռ[4]: Եկեղեցին և վանքն ունեցել են քահանաներ: Գյուղից 80 հոգի գտնվել է պանդխտության մեջ: 700 արտավար հողերի մեծ մասը գտնվել է օտարների ձեռքին: Գյուղացիներն ունեցել են 70 զույգ եզ, 200 գլուխ նախիր, 2800 ոչխար, 20 գրաստ, 20 ձի, 60 ջորի: Ջարդերի ժամանակ գյուղի կրած կորուստները հաշվվում էին 1.045.300 օսմանյան լիրա[5]:

Գյուղում գործել է Պարթևյան երկսեռ վարժարանը, որն ունեցել է 700 լիրա հասույթ[6]: Մեկ այլ աղբյուր հայտնում է, որ վարժարանն ունեցել է մեկ ուսուցիչ, մեկ ուսուցչուհի և 90 աշակերտ[7]: Արհեստներից տարածված էին պատշարությունն ու հյուսնությունը[8]:

Բագառիճը նշանավոր հայաշատ գյուղ էր: Երկար ժամանակ գտնվել է Դերջանի գավառի կազմում, այդ պատճառով էլ գյուղին անդրադարձել ենք Դերջանի գյուղերի շարքում:

Գոմեր, Քյումուրը գտնվում էր Կամախից հյուսիս-արևելք, 6 կմ հեռավորության վրա: Գյուղը հայտնի էր իր աղի լճակներով, քարածխի պաշարներով: Աղի լճակները գոյանում էին աղի աղբյուրների հոսքով:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, 3-րդ Բ, գ. 47, թ. 22:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 15:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1-2:
[5] Նույն տեղում:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, նշվ. էջը:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 2:
[8] Նույն տեղում:

Ամռանը լճակները լցվում էին ջրով, և արևի ճառագայթները, չորացնելով լճակները, գոյացնում էին «անհատնում դեզերով աղ»[1]: Ապա այդ աղը բարձվում էր ուղտերի և գրաստների վրա ու տեղափոխվում գավառի, նահանգի գյուղերը: Գ.Պաղտիկյանն աղի կույտերի գոյությամբ փորձում է նաև բացատրել Կամախ անունը՝ գրելով. «Վստահ կարելի է ըսել, թե Քէմախ կամ Կամախ անուան ստուգաբանութիւն ալ այդ աղին կապուած ըլլալու է, «զումերա» աղ բառէն, որ սղուելով դարձած է Կամախ»[2]:

Գոմերի հայությունը պարզամիտ էր ու ավանդապաշտ: Դարեր շարունակ գտնվելով Մարեկ գյուղի հարևանությամբ՝ նրա հետ խնամիական կապեր չէին հաստատում, որովհետև Մարեկը հարուստ էր սառնորակ աղբյուրներով, որոնք ամռան ամիսներին ևս գոյացնում էին սառույց: Ընդունելով, որ սառույցն ու աղը քույր ու եղբայր են, գյուղերի միջև բարեկամություն չէր հաստատվում, և նման փորձը համարվում էր սրբապղծություն:

Մեկ ուրիշ առիթ նույնպես հաստատում է գյուղի հայերի պարզամտությունը: Ավանդությունը պատմում է, որ օգտվելով գյուղացիների դյուրահավատությունից, ցանկանալով առավել ընդգծել գյուղի հայության պարզամտությունը՝ հարևան գյուղացիներից մեկը խորհուրդ է տալիս, թե ավելի շատ աղ ստանալու համար հարկավոր է աղը ցանել: Գոմերցիները ցանում են աղը և սպասում, որ ծլի: Բայց անցնում է երկար ժամանակ, իսկ աղը չի ծլում: Նույն խորհրդատուն հավաստում է, թե անպայման աղը ծլել է և ավազակները գողացել են այն: Ուստի, անհրաժեշտ է նորից ցանել աղը և պահակներ նշանակել: Գոմերցիներն այդպես էլ վարվում են և վաստակում «աղ ցանող» անունը:

Գյուղի Քյոմուր անունը կապվում է քարածխի հանքերի հետ:

Գոմերը 1872-1873թթ. ունեցել է 40 տուն հայ և թուրք բնակչություն[3]: Գ.Պաղտիկյանը վկայում է, որ գյուղն ունեցել է 75 տուն հայ, 45 տուն թուրք բնակչություն[4]: Քեմախի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ուներ 50 տուն թուրք, 54 տուն, 365 շունչ հայ բնակչություն[5]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, հայերն ունեին 45 տուն, 500 շունչ, և կար 150 շունչ թուրք բնակչություն[6]: Միջին տարբերակով կունենանք 49 տուն, 382 շունչ հայ, 61 տուն, 464 շունչ թուրք բնակչություն:

[1] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 384:
[2] Նույն տեղում, էջ 385:
[3] ՏԲ, հ. 1, էջ 938:
[4] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 384:
[5] *Ա-Դ,* նշված գիրքը, էջ 225:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 29:

Գոմերի Ս.Աստվածամայր եկեղեցին ուներ 2500 լիրա հասույթ: Արամյան վարժարանի հասույթը կազմում էր 2000 լիրա: Վարժարանում սովորում էր 70 աշակերտ[1]:

Բնակչությունը, բացի աղի, ածխի արդյունահանումից, զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, պարտիզպանությամբ: Հատկապես հայտնի էր Գոմերի թութը: Արհեստներից տարածված էին կավագործությունը, պայտարությունը: Համբավավոր էին գյուղի սափրիչները, որոնք աշխատում էին նաև քաղաքներում: Գյուղի «ութ աչքերով» ջրաղացը սպասարկում էր նաև շրջակա գյուղերին:

Մարեկ, Մարեք, Մարիք գյուղը «…Ճրագ Հոյլ կոչուած բարձրաւանդակին առջեւ եւ Սեպուհ լեռան հանդիպակաց կողմին վրայ, երկու սեպաձեւ սարերու գրկին է: Հարաւի կողմին Մնձուր լեռը եւ մշտնջենական ձիւնապատ Հյուսիսային Բազաձորի լեռնաշղթան: Անոր մոտակայքը կային քաղաքին իշխող Անի Ամրոց բերդը, Եփրատ գետը օձապտոյտ իրանով, հիւսիս արեւելքին Գոհանամը երկնակարկառ»[2]:

Մարեկի դիմաց Գոմերի պսպղուն աղաջրերն են: Գ.Պաղտիկյանը վստահեցնում է, թե հայրենի գյուղն այնքան գեղեցիկ բնություն ունի, որ անգամ Խրիմյան Հայրիկը չի կարողացել նկարագրել այդ գեղեցկությունը և օգնության է կանչել «բանասեր գիտուն Հովհաննես Պլուզը պատմելու Քեմախի գեղեցկությունները»[3]: Գյուղին առանձնահատուկ գեղեցկություն պարգևողը ծառաստաններն են, այգիները: Համբավավոր Վարի և Վերի սառնորակ, սառցի կտոր աղբյուրները ոռոգում են պարտեզներն ու այգիները, աշխատեցնում ջրաղացները: Գյուղի մոտ էր գտնվում հռչակավոր բնական սառնարանը: Քարանձավի մեջ տեղավորված սառցաբեկորներն ամառվա ամիսներին ջրով ապահովում էին իրենց: Քարանձավի կողքին Ծածկ անունով անձավն էր, որտեղ պահում էին հազարավոր պարկեր ու տիկեր լցրած պանիրը:

Գ.Պաղտիկյանը, նկատի ունենալով գյուղի մոտ գտնվող Անի ամրոցի ավերակները, վստահորեն հայտնում է, թե գյուղը հնում եղել է «արքայանիստ վայր մը, իր իշխանական տներով «մեծահռչակ մեհենատեղիներով», Վահագնի և Տիրի, Վանատուրի բագիներով»[4]:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին հայտնի էր իր «հսկայ զանգակով»: Եկեղեցու տարեկան հասույթը կազմում էր 2500 լիրա, Վարդանյան վարժարանինը՝ 1000 լիրա: Վարժարանում սովորում էր 400 աշակերտ[5]:

[1] Նույն տեղում:
[2] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 388:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 389:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 28:

Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղն ունեցել է արական և իգական վարժարաններ, աշակերտության ընդհանուր թիվը 135 էր: Վարժարաններում աշխատում էին երկու ուսուցիչ, մեկ ուսուցչուհի: 13 մարդ զբաղվում էր արհեստներով: Նրանք որմնադիրներ էին, հյուսներ, դերձակներ, ջրաղացպաններ: 3 հոգի առևտրականներ էին: Նույն փաստաթուղթը հայտնում է, որ գյուղն ուներ 1300 արտավար հողատարածություն, 80 զույգ եզ, 275 գլուխ նախիր, 4650 գլուխ ոչխարի հոտ, 130 էշ, ջորի, ձի, 170 մեղվի փեթակ:

Գյուղի բնակչությունը կազմված էր 105 տուն, 735 շունչ հայերից, 25 տուն թուրքերից[1]:

Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ուներ 47 տուն, 500 շունչ հայ, 100 շունչ թուրք բնակչություն[2]: Կամախի առաջնորդարանի տվյալներով, գյուղում ապրում էր 30 տուն թուրք, 78 տուն, 586 շունչ հայ[3]: Գ.Պաղտիկյանը վկայում է 112 տուն հայերի, 28 տուն թուրքերի գոյության մասին[4]:

Միջին տարբերակով կունենանք 85 տուն, 626 շունչ հայ, 24 տուն, 171 շունչ թուրք բնակչություն:

Թավկներ, Դավկներ, Թըվկներ, Թվնիկ, Դվնիկ գյուղը գտնվում էր Թորդան գյուղի և Ավագ վանքի միջև, Սեպուհ լեռան արևմտյան ստորոտում: Գյուղն ուներ 5 վանք, որոնցից ամենանշանավորներն էին Ս.Սերովբեն և Ս.Քերովբեն: Հատկապես Ս.Սերովբե վանքը շրջապատված էր «թաւշյա մրգերով եւ անտառային ու վայրի շրջապատով սքանչելի զբօսավայր մըն էր», ուր այցելած ուխտավորներն ստանում էին հոգեկան մեծ բավականություն[5]: Գյուղի բնակչությունը հայտնի էր իր քաջությամբ և խիզախությամբ, այն աստիճանի համարձակ էին, որ խախտելով «ընդունված» կարգը՝ չէին բռնում գյուղ այցելած թուրք պաշտոնյաների ձիու սանձը:

Գյուղի հյուսիսարևելյան կողմում էին գտնվում գետնափոր հինավուրց մատուռը, գերեզմանոցը, որտեղ կային արձանագրություններով տապանաքարեր, խաչքարեր:

Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 800 լիրա հասույթ, Խոսրովյան վարժարանը՝ 500 լիրա հասույթ, 25 աշակերտ[6]: Արխիվային փաստա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[2] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 23:
[3] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 225:
[4] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 388:
[5] Նույն տեղում, էջ 372:
[6] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 23:

թղթերից մեկը հայտնում է, որ վարժարանն ուներ 95 աշակերտ, մեկ ուսուցիչ և մեկ ուսուցչուհի[1]: Հեղինակներից մեկն էլ պնդում է, թե վարժարանը երկսեռ էր և սկզբում ունեցել է 20-30 աշակերտ, ապա՝ 20-րդ դարի սկզբին, 100 աշակերտ[2]:

Գյուղն ուներ 700 արտավար ցանքատարածություն, 70 զույգ եզ, 200 գլուխ խոշոր, 2600 գլուխ մանր եղջերավոր անասուն, 140 էշ, ջորի, ձի[3]: Երկու որմնադիր, երկու դերձակ, երեք ջրաղացպան բավարարում էին գյուղի պահանջները:

Բնակչության թվաքանակի մասին կան մի շարք տեղեկություններ, վկայություններ: ՏԲ հոդվածագիրը համոզում է, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին գյուղն ուներ 60-80 տուն, 450-610 շունչ հայ բնակչություն[4]: Գ.Սրվանձտյանցը վկայում է, որ գյուղն ունեցել է 17 տուն, 350 շունչ հայ բնակչություն[5]: Անանուն հեղինակներից մեկի տեղեկությամբ, գյուղում ապրել են 50 տուն, 450 շունչ հայ բնակիչներ[6]: Օտարազգի բնակչության մասին փաստաթուղթը տեղեկություն չի հաղորդում: Այդ առումով նրան կրկնում է Կամախի առաջնորդարանի վիճակագրությունը, որը 41 տուն, 374 շունչ հայություն է հաշվում գյուղում[7]:

Միջին տարբերակով կունենանք 42 տուն, 446 շունչ հայ բնակչություն:

Գառնի, Գարնի, Կառնի, Գռանի գյուղը գտնվում էր խոր ձորի մեջ, Սեպուհ լեռան ստորոտում, Կամախ քաղաքից հյուսիս-արևելք, մոտ 19 կմ հեռավորության վրա, Թորդան և Թավկներ գյուղերի հարևանությամբ: Գյուղի անունը կապվում է բարեբեր այգիների ու պարտեզների գոյության, գեղատեսիլ բնության հետ: Գյուղի նշանավոր, պատմական վայրերից էին հինավուրց գերեզմանատան հուշարձանները: Սկսած 17-րդ դարից՝ քոչվորական պետության հարվածներն ուղղվեցին հատկապես ազգային արժեքների դեմ, և բնական է, որ Գառնին ևս պետք է ենթարկվեր յուրահատուկ «վերաբերմունքի»: Ահա թե ինչու հուշագիրներից մեկը սրտի ցավով հայտնում է, որ ոչ միայն գյուղը, այլև նրա հուշարձաններն ու սրբավայրերը կործանվեցին «վանտալ ներխուժողների» կողմից[8]:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[2] ՏԲ, հ. 2, էջ 148:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 23:
[4] ՏԲ, հ. 2, էջ 148:
[5] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 23:
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[7] *Ա-Դռ,* նշված գիրքը, էջ 225:
[8] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 372:

Հետագա իրադարձություններն ունեցան կործանարար ազդեցություն, և զուտ հայաբնակ գյուղը, ի վերջո, վերածվեց քոչվորների բնակատեղիի, որտեղ հայություն հասկացությունը պահպանվում էր «մի քանի գերդաստանի անունով»[1]:

Գ.Պաղտիկյանը վկայում է, որ գյուղն ուներ 25 տուն հայ բնակչություն[2]: Գ.Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 9 տուն, 95 շունչ հայ, 30 շունչ քուրդ բնակչություն[3]: Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, հայերն ունեին 27 տուն, 201 շունչ բնակչություն[4]: Արխիվային փաստաթղթերից մեկը գրանցում է 20 տուն, 116 շունչ հայ բնակչություն[5]: Միջին տարբերակով կունենանք՝ 20 տուն, 146 շունչ հայ բնակչություն:

Ուռի գյուղի անունը ծագել է Եփրատի ափերի ուռի ծառաստաններից: Մեր կարծիքով, այդ հիասքանչ բուսականության զարդը եղել են ուռիները, որոնք էլ գյուղին են փոխանցել իրենց անունը:

Գյուղի ցանքատարածությունները սահմանափակ էին, քանզի սարալանջի վրա էին, ձորաբերանում, ձոր, որտեղից ահարկու դղրդոցով հոսում էր Արածանին: Գյուղի դիրքը, չնայած բնական սահմանափակումներին, ուներ իր հմայքը: Այդ պատճառով էլ Աշխեն թագուհին սարալանջի աջ կողմում հիմնում է ուխտատեղի, որը հետագայում հիշատակվում է իր անունով՝ «Ս.Տիկին Աշխեն թագուհի»:

Գյուղի պարտեզներն ու այգիներն արգավանդ էին, ոռոգելի, որովհետև գյուղի միջով էր հոսում Մարեգի գետակը, որը սկիզբ էր առնում կամ բխում էր գյուղի տարածքից:

Կլիման, հատկապես ամռանը, զով էր, ինչն էլ պատճառ էր դառնում հովեկների գալուստի, որտեղ հնուց գոյություն ուներ նաև «լոգանքի յարմարաւետ կետ մը, ուր պատանի եւ երիտասարդ զուարճալի ժամանակ կանցնէին»[6]:

Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 5 տուն թուրք, 26 տուն, 132 շունչ հայ բնակչություն[7]: Գ.Սրվանձտյանցը գյուղում հաշվում է 20 տուն, 350 շունչ հայ բնակչություն[8]: Արխիվային

[1] Նույն տեղում, էջ 374:
[2] Նույն տեղում:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 29:
[4] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 225:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[6] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 386:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 225:
[8] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, էջ 23:

փաստաթղթերից մեկը հավաստում է, որ գյուղն ունեցել է 24 տուն, 205 շունչ հայ բնակչություն[1]: Գ.Պաղտիկյանի վկայությամբ, գյուղն ունեցել է «40 տուն բնակչութիւն (հայ– Հ.Զ.), քանի մը տուն թուրքերու խառնուրդով մը»[2]: Միջին տարբերակով՝ 27 տուն, 241 շունչ հայ, 10 տուն, 70 շունչ թուրք բնակչություն:

Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 1300 լիրա հասույթ, Վահանյան վարժարանի հասույթը կազմում էր 500 լիրա: Վարժարանն ուներ 35 աշակերտ[3]: Հաջորդ աղբյուրը հավաստում է, որ վարժարանն ուներ 60 աշակերտ: Նույն հեղինակի հավաստմամբ, գյուղն ուներ 3 արհեստավոր (որմնադիր, հյուսն): Անասնապահներն ունեին 40 զույգ եզ, 73 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 600 գլուխ ոչխար, 46 էշ, ջորի, ձի, 70 մեղվի փեթակ[4]:

Հազարք, Հազարիկ, Հազարք գյուղը գտնվում էր Կամախ գավառանիստի և Բագառիճ գյուղի միջև, սարալանջի վրա, որի դիմացից հոսող գետակն իր անուշ ու «շառաչիւն ձայնովը յարատեւ երաժշտութիւն կուտար Հազարքին»[5]:

Հազարքը, գտնվելով Կամախից, երկու Բագառիճներից մեկ ժամ հեռավորության վրա, իր ավանդություններով, կենցաղով գրեթե չէր առանձնանում շրջակա գյուղերից: Հայերը զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ: Մեծ թիվ էին կազմում պանդուխտները:

Գյուղի տնտեսական կացության բարելավմանը նպաստում էր «Մանուշակներ» կոչված հանդամասը, որը ցանքի տակ չէր, հանդիսանում էր թե՛ արոտատեղ, թե՛ հանրային օգտագործման տարածք: Այնտեղ աճում էին տարբեր տեսակի բանջարեղեններ, որոնք հազարքցիները, սեփական կարիքները բավարարելուց հետո, վաճառքի էին հանում հարևան գյուղերում, նահանգում:

Գ.Պաղտիկյանը հայտնում է, որ Հազարքը հնում ունեցել է հազարի հասնող բնակչություն: Թերևս, այդ պատճառով էլ գյուղը ստացել է իր անունը: 19-րդ դարում գյուղի բնակչությունը նվազել, մնացել է 45 տուն[6]:

Կամախի առաջնորդարանի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 34 տուն, 194 շունչ հայ և 5 տուն թուրք բնակչություն[7]: Գ.Սրվանձտյանցի

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[2] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 386:
[3] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 23:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[5] *Պաղտիկեան Գ.,* նշված գիրքը, էջ 383:
[6] Նույն տեղում:
[7] *Ա-Դո,* նշված գիրքը, էջ 225:

հաշվումներով, գյուղն ուներ 25 տուն, 400 շունչ հայ և 20 շունչ թուրք բնակչություն[1]: Արխիվային փաստաթղթերից մեկի հաղորդմամբ, գյուղն ուներ 30 տուն, 300 շունչ հայ և 7 տուն թուրք բնակչություն[2]: Հետաքրքիր է, որ վերջին երկու վկայություններում տների շնչերի քանակը սկսվում է 10-ով, ավարտվում 16-ով, այն դեպքում, երբ Կամախի առաջնորդարանը տների շնչերի քանակը հաշվում է 5,7 մարդով, որտեղից էլ սկիզբ են առնում հակասական տեղեկությունները:

Հազարքին վերաբերող մեր ունեցած վիճակագրության չորս վկայությունների միջինում կունենանք 33 տուն, 302 շունչ հայ, 5 տուն, 34 շունչ թուրք բնակչություն:

Հազարքը միջին մակարդակ ունեցող գյուղ էր: Ցանքատարածությունները կազմում էին 500 արտավար: Գյուղի հինգ բնակիչներ զբաղվում էին որմնադրությամբ, դերձակությամբ: Հազարքցիներն ունեին 40 զույգ եզ, 100 գլուխ անասուն, 1000 գլուխ ոչխար[3]:

Հազարքը ջրառատ էր, նշանավոր սառնորակ աղբյուրները հանդիսանում էին շրջակա գյուղերի խմելու ջրի միակ աղբյուրները, անգամ Կամախի բեյերը ջորիներով քաղաք էին տանում Հազարքի աղբյուրների ջուրը: Գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին ուներ 2500, Լուսավորչյան վարժարանը՝ 700 լիրա հասույթ: Վարժարանում սովորում էր 50 աշակերտ[4]:

[1] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 23:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 10:
[3] Նույն տեղում:
[4] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 47, թ. 23:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ
ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Մեր հաշվումներով[1] Ա-Դոյի հաշվումներով[2]

Գավառներ, գավառակներ	Գյուղ	Տուն	Շունչ հայ	Մահմե-դական	Գյուղ	Տուն	Շունչ
Կարինի գավառ	296	32086	199484	161848			
Կարինի գավառակ	57	6957	33990	10297	51	2768	19376
Կարին քաղաք		2142	15000	28000		2500	15000
Բաբերդի գավառակ	30	3267	20134	21200	29		11914
Բաբերդ քաղաք		391	4301	15422			2400
Բասենի գավառակ	37	2207	15056	19219	57		12404
Հասանկալա		57	265	1300			
Դերջանի գավառակ	43	3144	21873	15422	31		9128
Մամախաթուն քաղաք		20	124	11146			
Թորթումի գավառակ	14	3701	22009	10255	13		
Թորթում քաղ.		557	3900	910			
Խնուսի գավառակ	18	2121	13049	12197	32		13020
Խնուս քաղ.		257	1701	2544		325	2275
Կիսկիմի գավառակ	23	1749	12091	1750	6		7644
Կիսկիմ ավան		22	192	350			
Սպերի գավառակ	26	638	4880	4711	18		3122
Սպեր քաղաք		45	327	2540			
Քղիի գավառակ	48	4370	27505	3052	49	2326	16255
Քղի ավան		441	3087	1533		350	2450
Բայազետի գավառ	55	4685	26490	62396			
Բայազետի գավառակ	13	1263	5758	6063	3		1470
Բայազետ քաղ.		341	2387	1100		350	2450
Դիադինի գավառակ	8	460	2211	7109	7		1092
Դիադին ավան		145	1015	2620			
Ալաշկերտի գավառակ	14	1089	6911	21802	11		4480
Ալաշկերտ քաղաք		102	1101	1500		200	1400
Դութաղի գավառակ	12	179	1239	11599	22		1421
Դութաղ ավան		6	42	5580			
Կարաքիլիսի գավառակ	8	880	4201	4023	9	274	1918

[1] ՀԱԱ, 308 ֆոնդերի 800, Մատենադարանի 5 ֆոնդերի 50, ԳԱԹ, 18 ֆոնդերի 250 գործերը, որոնք նշված են ամբողջ շարադրանքում:

[2] *Ա-Դո,* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան, 1912, էջ 236-237:

Գավառներ, գավառակներ	Գյուղ	Տուն	Շունչ հայ	Մահմե-դական	Գյուղ	Տուն	Շունչ
Կարաքիլիսե / Թոփրակ		220	1625	1000		350	2450
Երզնկայի գավառ	58	8050	46218	39082			
Երզնկայի գավառակ	39	5170	25399	2436	31		7168
Երզնկա քաղաք		1425	10798	14546		1500	9000
Գուրուչայի գավառակ	6	663	4073	532	6		2725
Կամախի գավառակ	11	589	3802	10793	11		4483
Կամախ քաղաք		46	346	10000		48	298
Կերճանիսի գավառակ	2	122	1545	775	3		1421
Կերճանիս ավան		35	255				

Ընդ. 17 քաղաք և ավան, 409 գյուղ, 44.821 տուն,
272.192 հայ բնակչություն, 9 քաղաք, 389 գյուղ, 23.413,
263.326 մահմեդական,159.593 հայ բնակչություն

*Կարինի նահանգի հայ բնակչության աճի և նվազման ընթացքը 1850-1915թթ.**

Գավառ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Կարինի գավառ-296 հայաբնակ գյուղ, 32.086 տուն, 199.484 հայ բնակչություն, 161.848 մահմեդական բնակչություն														
Կարինի գավառակ-57 հայաբնակ գյուղ, 6957 տուն. 33.990 հայ բնակչություն, 10.297 մահմեդ. բնակչություն														
Կարին քաղ.	15000		31000	30800	10435						21809	5000		28000
Մուտուրկա			700		420		793	938			713			105
Սովուք Ջերմուկ			200		235		312	287			259			312
Շխնոց			258/280		175		612	287			333/338			161
Թուսնճ			350		280		405	322			339			321
Հինձք			700		490		692	140			506			301
Գզքիլիսե			230		140		105	210			171			343
Շեմեկ			300		35			315			217			119
Դինարգոմ							238	343		315	299			336
Չիթեռոդ			1150		490		1137	1512		726	1003			238
Արծաթի			500		350	560	210	210		215	341			300
Ոիմուտում			150		350	525	644	560			446			150
Կրոնք			590		280			519			463			79
Կրանկոց			210		105	300	180	259			211			37
Գեղախոռ			250		245	550		249			324			140
Դվեկ			500		280			505			428			103
Պատրշեն			310		210		278	238		600	327			71
Երկնիստ			90		35		68				64			126
Ընտաձոր			350		245		292	350			309			166
Գոմք			270		140	350	321	315	490		314			329
Օձեի	1150		1350				1141	1330			1243			199
Ղարարզ				420	682	700					601			138
Աշկալա		382			800						591			561
Ճինիս		240		140		297	455				283			487
Երկան Մանսուր		40		42		133	126	105			89			256

* Աղյուսակների հաշվարկները կատարված են ոչ միայն նշված, այլ աղյուսակում տեղ չգտած գյուղերի ցուցանիշների հիման վրա։

Գյուղաց. գյուղատակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Իլիձա	330	380				210	455	560	800		456			462
Բյուր		140		140	280	236	259				211			137
Արշունք		200	242	105	140	227	210				187			126
Չրվեթիկ		1300	1337				1143	1200	200		1036			148
Կան		2060	2400	1400	500	2242	1730				1722			244
Կեզ		800				776	910	280	910		735			130
Հինարի գոմ		300									300			300
Սալաձոր		120									120			150
Վարարշ	950										950			200
Ապրնտնտի		200									200			250
Թրթկեր		75									75			150
Քարահասան		400									400			350
Թուփալ Ջավուշ		150									150			312
Ջիմորջիկ		1300									1300			200
Մյորտյուլիկ		200									200			30
Սոկուտյու		160									160			200
Սնկառիչ		150									150			150
Յոչպեկ		80									80			140
Ընձիկ		50									50			140
Օրթլի		25									25			300
Վերին գեղ		18									18			
Ղալափա		60									60			100
Ղուշչի		15									15			140
Խնտեմելիք		16									16			100
Ղարա Հասան		407									407			167
Գզլքիլիսե		30									30			30
Խաչկավանք		14									14			38
Թարքունի		75									75			10
Նորաշեն		240									240			260
Մեզրե		280									280			50
Ճինիս		65									65			140
Ճիպոտ		50									50			
Վերնասա		35									35			5

Գավառ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Բաբերդի գավառակ - 30 հայաբնակ գյուղ, 3267 տուն, 20.134 շունչ հայ,19.000 թուրք,քուրդ և 2200 մահմեդական այլ բնակչություն														
Բաբերդ քաղ.–391 տուն,4301 շունչ հայ բնակչություն,15.422 շունչ թուրք բնակչություն														
Ավերակ	210	165			990	1020	770				631	4 բն. 3 եկվոր		
Բլուր	700	116	112	450	568	525					412	փրկ.17		1205թ.
Բլրակ	700			520	547	234	325			465	465	փրկ.17		
Գրգի						350	350				350	փրկ.24		210
Լահոնք		413			750	1100	840				776	փրկ.60		39
Հայեք					210	700	315			775	500			
Հնտի						560	455	455	900	408	556	փրկ.27		100
Մալասա						397	315	800		592	526	փոկ.30		270
Նիվ						250	280	250		524	326	փոկ.62		135
Բալախոռ							530	700		260	497	փոկ.18		98
Զահմանց						400	420	370		615	451	փոկ.40		970
Ս.Թորոս						455	420	700		432	502	փրկ.27		150
Վարդահան						660	630	660		650	650	փրկ.210		
Քարավրակ						2500	1295	1988			1928	փրկ.71		
Քանթայ						1773	1700	1106	1190	1442	1442	փրկ.111		
Խուբս		224				647	630				500	փրկ.27		140
Սարաճուղ								50			50			
Սղրճի								420			420			
Էվերեկ								1020			1020	փրկ.22		
Ռուշտի								700			700	փրկ.18		
Օծտեղ								300			300	փրկ.13		
Թոմլա								310			310	փրկ.9		
Երկուտ								700			700	փրկ.33		
Փեջրիկա								150			150	փրկ.10		
Ռումել								195			195	փրկ.4		
Այմշկա								52			52			
Խնգեվրեկ								56			56	փրկ.2		
Կեզ								800			800	փրկ.5		
Քեսթեսի								41			41			
Առյուծկա								594			594	փրկ.25		
Բասենի գավառակ- 37 հայաբնակ գյուղ. 2207 հայաբնակ տուն. 15.056 շունչ հայ և 19.219 թուրք բնակչություն														
Հասանկալա ավան-57 տուն, 265 շունչ հայ և 1300 շունչ թուրք բնակչություն														
Այվար		154						300			227	227 կոտ.		
Բլուր					38						38			70
Իգեպատ			760								760			

Գյուղ, գյուղատեղի	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Իշխու		900	1050				770				907	փրկ.50		
Ալիճեկրեկ	560-550փ	1050				1000	770				845	փրկ.550		
Գոմաձոր		900				1200	1120		1400		1155	փրկ.300		
Հերթեն		750					931				841			
Վելիբաբա՛		1050				1000	938	1500			1122			
Թորդան								800			800			120թ.
Կուլլու								50			50			70
Պլլաու								24			24			3
Էգերմեկ								34			34			
Կոապաշ								1000			1000			
Թանշման								25			25			25
Կամուրջ								450			450			
Ղարաչախու								20			20			
Մեջելդի								15			15			150
Հարսնաքար								900			900			
Սանամեր								90			90			100
Ցանցաղ								130			130			50
Արմտի								900			900			
Բաշգյուղ								1400			1400			
Ղարաքիլիսե								350			350			50
Փորիկ								240			240			
Առասուն								1000			1000			
Տոտի							100	450			275			
Միճիկորկ								1300			1300			70հույն
Խոսրովերնե							30	250			140			50թ.
Ղրրխ								65			65			6
Թարխուճա								1200			1200			
Խաչգյուղ								150			150			
Խոցավանց								350			350			
Թավանց								350			350			25
Երան								1350	100		725			20
Եկանի								250			250			50
Պատիժվան								200			200			
Ղալինտեր								22			22			150

Գավառ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Դերջանի գավառակ- 43 հայաբնակ գյուղ, 3144 տուն, 21873 շունչ հայ, 15.422 թուրք բնակչության														
Մամախաթուն քաղաք–124 շունչ հայ,11.146 թուրք բնակչություն (19–րդ դարի վերջ, 20–րդ դարի սկիզբ)														
Բույք		600				1000	840	1500	1015		991	824		
Ղվնիկ		450	1000			1900	420				943	փրկ.81		
Ապրանք		350			350						350	270կոտ.80պ.		
Ծաղկաբի		500	850		900	1600	420				854	384կոտ.300պ.		
Կոթեր		900	1500		1600						1333	1211կոտ.122պ		
Հոդիկ		550	522		650	420					536	495կոտ.169ա.		
Փիրիչ		700	1484		1019	1200	700				1021	կոտ.851		
Մանց		350	1977	1804	1019	620	420				1032	կոտ.836		836
Խաչ		300				610	350				420	կոտ.245		245
Բագարիճ վերի	1268	600				329	1050				812			
Բաղարիճ վարի		1200				373	910				828			
Էպիվերեք									360		360	փրկ.60		40
Ս.Թորոս									150		150	փրկ.13		
Չանախչի									250		250	փրկ.15		
Ղուրղուլ									30		30			25
Ջքնս									60		60			5
Քեռվուր									100		100			15
Խազախ վերին,ներքին									38		38			5
Չամուր դերե									15		15			
Էրանի									33		33	փրկ.2,20ա.		
Զանգզի									8		8			15
Գարագուլաք								1000			1000	250բնիկ,15եկվ		400
Խնգրի								700			700	129բնիկ,15եկվ		45
Գոմկա								150			150	փրկ.15		100
Հիրանի վերին								35			35			10
Հիրանի վարի								300			300	բն37		
Սարոյի գոմ								200			200	բն.45		
Գառնի Ագրակ								500			500	բն.74		
Մանուկի Զումուրտեր								150			150	բն.60		
Ղուրխուլ								1000			1000	բն.55		200
Մալղայա								1600			1600	բն.150		

Գյուղ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Աղատեր								600			600	բն.34,30տիրոջ		50
Թառու								250			250	բն.50		600
Բերկրի								400			400	բն.25		900
Համբախձոր								250			250	բն.20		100
Գուսպոյի գոմ								75			75			
Չխնոց								1000			1000	բն.35		
Վժան								500			500	բն.31		200ք
Ղայաոնեռ								800			800	բն.30		
Ղարխին								600			600	բն.12		500
Խաչիկ օղլուն գոմ								250			250	բն.10		
Վարտիկ								590			590	բն.27		95
Ղումլար								550			550	բն.20		90
Թորթոմի գավառակ- 14 հայաբնակ գյուղ, 3701 տուն, 22.009 շունչ հայ և 10.255 շունչ թուրք բնակչություն														
Թորթոմ ավան, 557 տուն, 3900 շունչ հայ և 910 թուրք բնակչություն														
Ապոնես					1960	1925					1943			
Գորքեր					630	623					627			
Խախու					2802		3269				3036	1470		
Խոզապրակ							728				728			
Կոչանս							1056				1056			
Նորաշեն						154					154			
Ռասպատ							570				570			
Վախթիկանս						525	560				543			
Քարնկոս							420				420			130
Պար	910						168				539	910		
Վերին գեղ							728				728	1725		
Քցխա						800	5600				3200			
Մեղրագոմ							280				280			5
Վարդաշեն							210				210			10
Խնուսի գավառակ-18 հայաբնակ գյուղ, 2121 տուն, 13.049 շունչ հայ և 12.197 շունչ թուրք բնակչություն														
Խնուս քաղ -257 տուն, 1701 շունչ հայ և 2544 քուրդ բնակչություն														
Գարաչոբան				1050	952	1190	1540				1183	693		
Չեվիրմե				805			721		1260		929			
Կարաքյոփրլա				455		399	1050				635			
Հարամե				651			784		1050		828			
Գովանդուկ				630		378	840	560	1003		682			
Քաղքիկ				315		315	840				490			

Գյուղ, գյուղական	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Արոս		250		252	611	315	665				419			
Խոզլու		1400				1039	850				1096			
Եկիս						525	480				503			
Ենիքոյ		374				175	350				300			149
Շաբաղրն											300			
Տաման			420			280	420				373			484
Կոպալ						646	455	315			472			190ք.
Խաչալուս				350	420	583	609	605			513			171ք.
Խրոթ				315		397	280				331			171ք.
Բերդ								1551			1551			127
Չեվերմն								180			180			695
Խալիլ Չավուշ								563			563			186
Կիսկիմի գավառակ- 23 հայաբնակ գյուղ, 1749 տուն, 12.091 շունչ հայ, 1750 շունչ թուրք բնակչություն														
Կիսկիմ ավան-22 տուն, 192 շունչ հայ և 350 թուրք բնակչություն														
Կարմրակ		1200				1140	580				973			
Կուտրաշեն		650				1050	280				660			140
Նիխախ		135									135			560
Մոխորկուտ		400									400			
Փոթինկեր							210		245		228			
Ցուգուլա		830							1272		1051			
Կրման							450		712		581			
Կիսակ		350						434			392			
Միջին թաղ.									690		690			
Սուսենց		770							1260		1015			
Վահնա						231					231			
Գեղուտ		455				245					350			
Արեգին		150				125					137			
Կաղմխուտ		770									770			
ճճասպաղ		770									770			
Մոխորկուտ վերին		100									100			1
Մոխորկուտ վարի		450									450			
Խանդաձոր վերի		350									350			1
Խանդաձոր վարի		800									800			
Կիսկիմ		7									7			

Գյուղ, գյուղական	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Մրսիս		140									140			
Վենեկ		770									770			
Կյունր								70			70			
Սպերի գավառակ-26 հայաբնակ գյուղ, 638 տուն, 4880 շունչ հայ և 4711 շունչ թուրք բնակչություն														
Սպեր քաղ. –45 տուն,327 շունչ հայ և 2540 շունչ թուրք բնակչություն														
Էգեծոր	266	70					84	105			131			40
Հունուտ		260				350	300				303			750
Մանց		350					360				355			
Ճիպռոտ		217					280				249			
Աղբրիկ		120									120			150
Ավեր		30									30			
Թշաձոր	210	70					105				128			47
Խաչաղբյուր	112						210	250			191			106
Կաժ		200					126				163			
Հիշեն		420					250				335			420
Շահիլտանս		130					105				117			
Մեզեգրեկ		150					150				150			150
Ձկնաջուր			222								222			
Հակ									30		30			
Հշանց									180		180			
Հիլեն									250		250			
Մացանց									350		350			140
Քրեոզ									350		350			84
Հուշիկ									56		56			
Աջունց									210		210			
Բանջարկա									105		105			150
Շուրակենց									80		80			120
Վրզենց									120		120			
Օձուտ									15		15			
Հիշպա									75		75			
Ճիտկանս									80		80			
Քղիի գավառակ- 48 հայաբնակ գյուղ, 4370 տուն, 27.505 հայ և 3052 շունչ թուրք բնակչություն														
Քղի ավան. - 441 տուն, 3087 շունչ հայ և 1533 շունչ թուրք բնակչություն														
Խաչատուր									60		60		փրկ.1պ.4	
Ավրանիկ									120		120		փրկ.1 պ.15	
Դարման	2450				2100	2650					2400		փրկ.38ա.350	175
Խուրս		2400		1980	1700		1400				1870		փրկ.13պ.325	

Գյուղ, գյուղական	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Խոսնակ		385				580	350				438		փրկ.պ.70	265
Հերտիֆ		1500		700			630				943		փրկ.71պ.85	
Առեզ		518				1050		1680	1570		1205		փ.16պ.200	
Ճերմակ				1500		1100	1050				1217		փ.14պ.120	294
Աստղաբերդ						1500	910				1205		փ.14պ125	120
Չանխչի				1400		1400	700				1167		փ.7պ.200	105
Սերկեիլ				1200		650	644				831		փ.7պ.75	110
Հողաս				995		450	350				598		փ.7պ.55	127
Ապոդեակ				1000		450	315				588		փ.6պ.40	42
Ճպռ				1100		480	350				643		փ.չկա,պ.60	59
Ղազի				640	400	180	105				331		փ.չկա,պ.25	222
Սազաձոր				640		450	420				310		փ.92պ.55	
Խոյխոյ						80					80		փ.1պ.7	
Ավրեիկ		140		280			140				187		փ.չկա պ.15	187
Օրոր		511		700			630				614		փ.10,պ.70	140
Առինջ		600					210				405		փ.8,պ.25	
Քարբոյս		450								450	450		փ.չկա,պ.55	
Չան		450								450	450		փ.չկա,պ.40	
Խաչտուր		60								60	60		փ.1,պ.4	
Ապեվանք		270									270		փ.1,ա.23	
Ալթուն		80									80		փ.43,պ.10	
Ագրակ		450									450		փ.1,պ.25	
Հանգստուն		400									400		փ.72,ա.54	
Խուպեկ		115									115		փ.3ա.20	
Խասգյուղ		30									30		փ.1պ.4	
Աղբգուտ		45									45		փ.չկա,պ.5	
Չելեպի մեջրե		56									56		փ.չկա,պ.7	
Լոք		65									65		փ.չկա,պ.10	
Խոշքար		160									160		փ.չկա,պ.20	
Չարիպաշ		300									300		փ.2,պ.15	
Մեղանք		200									200		փ.1,պ.20	
Ինախ		45									45		փ.չկա,պ.6	
Չումախ		67									67		փ.10,պ.7	
Տիներ		320									320		փ.13,պ.18	
Ամառիճ		140									140		փ.5,պ.6	
Մելիքան		450									450		փ.30,պ.11	
Շեն		70									70		փ.11,պ.5	

Գավառ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Ջերման		156									156			
Խարասպեկ		260									260		փ.30,պ.42	
Սանջակ		60									60			140
Խրչլպուղ		278									278		փ.15,պ.6	
Շարուկ		182									182		փ.20,պ.18	
Հեռլենք		62									62		փ.30	16
Խզելչպուխ		120									120		փ.10	105
Բայազետի գավառակ-13 հայաբնակ գյուղ, 1263 տուն, 5758 շունչ հայ, 6063 շունչ թուրք բնակչություն														
Բայազետ քաղ. 341 տուն, 2387 հայ, 350 տուն, 1100 շունչ թուրք բնակչություն														
Արծափ				600			840				720			
Քորուն			300				210				255			
Մուսան			500				420				460			
Գյուլիջա			48			805					426			
Մեղրեմանի		100									100			
Աշնի		125									125			
Խոյեան		90									90			50թ.,3ք.
Հնտի Սեֆեր		110									110			40թ.,4ք.
Բաւոնոց		285									285			100թ.,4ք.
Ղզլդյաե		180									180			100թ.,4ք.
Գոբշրա		250									250			
Ղազի		120									120			
Ենջալու		350									350			
Ալաշկերտի գավառակ-14 հայաբնակ գյուղ, 1089 տուն, 6911 շունչ հայ և 21.802 շունչ թուրք բնակչություն														
Ալաշկերտ քաղ.–102 տուն,1101 շունչ հայ,121 տուն,1500 շունչ քուրդ, թուրք														
Համատ		950	641				791				794		350	
Եխնի թափա		260					630				445	150տ.,130կոտ.		
Մոլլա Սուլեման		1000				1190	560				917	300շ.կոտ.		
Ջեռկան	455	400				245	560				415			
Խաստուր	1120	250				2100	385				964			
Խայլու	504	350				770	560				546			
Երիցու գյուղ	301	250	770			420	280				404			
Ղայաբեկ		200				210	280				230			
Չիկան		160					420				290			
Ֆրանկ երիցու		280				280					280			
Նավրուզ		600				600					600			
Խրտոր		160				160					160			

Գյուղ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Նոր գյուղ		130				130					130			
Հավիկ		50				50					50			
Դիադինի գավառակ - 8 հայաբնակ գյուղ, 460 տուն, 22.117 շունչ հայ, 7109 շունչ թուրք բնակչություն														
Դիադին ավան – 145տուն, 1015 շունչ հայ բնակչություն,2620 շունչ քուրդ														
Կարաբազար		210	140				140			163	163			2500
Գամուլպուճախ		200					105				153			
Ջուջան		250					315				283			120
Փոթի		120									120			
Վանուց գյուղ		150									150			
Սեյդո		70									70			
Ուչքիլիսե		189									189			
Միրզաջան		70									70			
Դուքաղի գավառակ-12 հայաբնակ գյուղ,179 տուն, 1239 շունչ հայ և 11.599 շունչ թուրք բնակչություն														
Դուքաղ ավան-6 տուն,42 շունչ հայ, 5580 շունչ թուրք բնակչություն														
Պաղնոս		350									350			700
Մբլան		84									84			420
Քոշք		91									91			700
Շամե		70									70			240
Նադաբ շեյխ		168									168			350
Խրբասոր		133									133			490
Բաղուն		77									77			700
Ջամալվերդի		35									35			700
Ղարաքեոյ		105									105			49
Մոլլա Հասան		56									56			270
Ղարխալրդ		35									35			1050
Խարխալրդ		35									35			350
Կարաքիլիսեի գավառակ- 8 հայաբնակ գյուղ,880 տուն, 4201 շունչ հայ,574 տուն, 4023 շունչ թուրք բնակչություն														
Կարաքիլիսե-220 տուն,1625 շունչ հայ և 1000 շունչ թուրք բնակչություն														
Յոնջալու		350				900	560				603			
Մանկասուր	560	700					420				560			
Մեզրե		130					280				205			
Երանոս							140				140			
Ջիրո		280				350	105				245			
Դաշլջա վերին,վարի	668										668			
Զաղլու		105									105			
Խրդր		30									30			

Գյուղ, գյուղական	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Երզնկայի գավառակ–39 հայաբնակ գյուղ, 5170 տուն, 25.399 հայ և 2436 շունչ թուրք բնակչություն														
Երզնկա քաղ.1425 տուն, 10798 շունչ հայ բնակչություն,14.546 շունչ մահմեդական բնակչություն														
Թիլ		200									200			200
Խնձորեկ		420					210				315	կոտ.բոլորը		175
Սթնին					1750	1400	595				1248	կոտ.բոլորը		
Գուլլիճն						462	280				371	կոտ.բոլորը		
Չիվթիկ					400						400	կոտ.բոլորը		
Մեղացիկ				1700	1400		1295				1465	փրկ.88		315
Կարաքիլիսե					400						400	փրկ.35		
Աղջաքենդ		350			175		42				189	կոտ.189		
Կարմրի		560			300		154				338	կոտ.338		
Ղարաթուշ		400									400	պ.3, փ.4		
Ծայթ		300									300	պ.42,փ.4		574
Մեծ Ագրակ		650									650	պ.66,փ.88		70
Հոմ Ագրակ		350									350	պ.6		1
Երկան		1000									1000	պ.27,փ.44		
Կլինջիկ		300									300	պ.3		
Մոյլա գյուղ		500									500	պ.7,փ.5		
Տաճրակ		250									250	պ.16,փ.4		14
Քուրդ գյուղ		150									150	պ.2,փ.11		
Բզվան		600									600	պ.3		
Գարատեկին		280									280	պ.4		
Վարի Չիվթիկ		400									400	պ.8,փ.1		
Վերի Չիվթիկ		500									500	պ.11,փ.2		
Մահմուդցիկ		1500									1500	պ.22,փ.4		
Շինլի		225									225	պ.3,փ.4		150
Ս.Թորոս		89									89	պ.6,փ.51		
Հայրապետի		120									120			
Բթառիճ		450									450	պ.12,փ.8		175
Գոլչիկեն Փայանկա		120									120	պ.1,փ.2		
ԱՕհան		160									160			
Ծաթեր		30									30			
Ախոռճուզ		80									80			
Կոթեր						50					50			10
Եալնզ պաղ						23					23			300
Խնձորեկ						227					227			25

Գյուղ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1900	1909	1912	1914	Միջին	1894/96 կոտորած	1915 կոտորած	Այլ
Ս. Նիկողայոս վանք						20					20			
Եկան						420					420			56
Ուռեկ						30					30			280
Տնկետիկ						20					20			70
Կամուրջ գյուղ						30					30			7
Գուրուչայի գավառակ – 6 հայաբնակ գյուղ, 663 տուն, 4073 հայ բնակչություն, 532 շունչ մահմեդական բնակչություն														
Մեծ Առտան		3000			1750	1400	1173				1831			
Փոքր Ամրտան		1300			416	1000	530				812			
Թեղուտ	500	1200					631				777			237
Հաւրշտա		100					124				112			20ք.
Հասանովա		500					211				356			
Տանձի		56					45				51			275
Կամախի գավառակ-11 հայաբնակ գյուղ, 589 տուն, 3802 շունչ հայ և 10.793 շունչ թուրք բնակչություն														
Կամախ քաղ.– 46 տուն,346 շունչ հայ, 10.000 թուրք բնակչություն														
Թորդան		425				450	419			431	431	փ.71		
Գոմեր	280	500				525	365			417	417			464
Մարեկ		500			735	784	586				651	փ.8		170
Թավկներ	450	350				450	374				406	փ.47		
Գառնի		95			116	175	201				147	փ.21		30
Ուռի		350			200	280	132				241	փ.8		70
Հազարք		400			300	315	194				302	փ.1		34
Թեղուտ		630									630			
Ավազ վանք		64									64	փ.29		25
Զաքարի		89									89	փ.1		
Ս. Նշան վանք		425									425	փ.2		
Կերճանիսի գավառակ-2 հայաբնակ գյուղ,122 տուն,1545 շունչ հայ և 775 թուրք բնակչություն														
Կերճանիս ավան-35 տուն,255 հայ բնակչություն														
Հոռոմխուլ						765	775				770			775
Մելիք Շերիֆ		421					400				411			

Կարինի նահանգի հայաբնակ և խառը բնակչություն ունեցող քաղաքներն ու գյուղերը

Կարինի գավառ

Կարինի գավառ - Աղաջա, Աղջագեն, Աղվերան, Անկեր, Աշկալա, Արաբքյոյ, Արծաթի, Արմուդլիք, Արնաքար, Արշունի, Աջու, Բագին, Բալակառիկ, Բերձոր, Բոնակապան, Բրդոնք, Գագիլ, Գեղախառ, Գոմք, Գզըլ Քիլիսե, Գմբեթ, Գրիչք, Դալգագիլ, Դաշաղլ, Դինարգում, Դվնիկ, Երկան, Երկան Մանսուր, Երկնիստ, Զետկե, Էսեվանք, Էվրենլի, Ըղտաձոր, Թագագեղ, Թասմաձոր, Թարքանի, Թիթկիր, Թոփալ Չաուշ, Թվանջ, Ծաղկի, Ծղկանց, Իլիճա, Լիճ, Խարաղբյուր, Կան, Կարարգ, Կարունի, Կարին, Կեզ, Կիրակուսակ, Կերձոր, Կրիճք, Կունշա, Հայդրի, Հասան Մանսուր, Հերբեստ, Հինձք, Ձիթհանք, Ձիթհող, Ղայափա, Ղարարջ, Ղուշչի, Ճենիս, Մեկնանսուր, Մեծ Գաղթառիճ, Մելո, Մճորք, Մուտուրկա, Յոդմճուկ, Յարմախ, Յոզբեկ, Յոնջալի, Յուլմուրճուք, Նորաշեն, Շեփեկ, Շխնոց, Շողիկ, Շորակ, Չիֆթլիկ, Պանիր, Պարնակին, Պատան, Պատիշեն, Պոշիկ, Պրդիվան, Ջերմուկ, Ջիբազ, Ջինիս, Սալաձոր, Սիրլի, Սոգյուտլու, Սոս, Սովուք, Վարտիկ, Տանձիկ, Տանձուտ, Տուզչի, Ումտում, Քարվոր, Քյոշք, Օձնի, Օրան:

Բաբերդի գավառ – Աբուստա, Ադե, Ախսումուլ, Ալմշկա, Աղբանոց, Առյուծկա, Ավերակ, Արմտլու, Արքայանիստ, Բաբերտ, Բաղձոր, Բաղնիք, Բատորա, Բեռնա, Բլրակ, Բլուր, Բոբղա, Բոչի, Գելախոռ, Գլխնոց, Գոմեր, Զագրակ, Զագրիդի, Թախտ, Թառգետ, Թոմլու, Թոմնա, Թոնղտի, Իշկիլե, Լիպանա, Խադրակ, Խալեֆ, Խայեք, Խան հարավային, Խան հյուսիսային, Խանձյուկ, Խառնեկ, Խափուր, Խուբս, Ծիրանի, Կարբավանք, Կեզ, Կերզ, Կիվ, Կիխտրա, Կիստեսիկ, Կյու, Կորնջուր, Կոշկուրի, Հավնոց, Հինտի, Հոնս, Հուփուզ, Զորակ, Մագարա, Մահաջուր, Մամ, Մեծ Գրչի, Մեծ Լոռի, Միթերջան, Ներմադի, Նիվ, Նշավերակ, Պալախոր, Պեսուր, Պիալի, Պոսուս, Ջահմանց, Ջենջե, Ռուշտի, Ռումելի, Սարաջուղ, Սինոռ, Սևքար, Սունձուր, Ս. Թորոս, Վազանդա, Վահանշեն, Վանշեն, Վարդահան, Վարդենիկ, Վարիժնա, Վարգահան, Փըշավերակ, Փնջրկա, Փոքր Գրչի, Փոքր Լոռի, Քարավրակ, Քսանթաց, Քրիստի, Օձտեղ:

Բասենի գավառ – Ազապ, Ազգիր, Ազպաղա, Ախա, Ախալեկ, Ախո, Աղափ, Աճալար, Ալիբազիրկան, Ալվար, Ամրագոմ, Ավնիկ, Արդի, Արմալի, Արմտլու, Արջաքար, Արտոստ, Բլուր, Գարավետ, Գիվա, Գոմաձոր, Դանշեք, Դանիշման, Դանշմա, Դելի, Բաբա, Դյուլեք, Դավթաքար,

Ելան, Ելերմեկ, Զարս, Էգերմեկ, Էգեպատ, Թայխոջա Վերին, Թայխոջա Ներքին, Թավանց, Թորդան, Իշխան, Իշխու, Խաչլու, Խըդրը, Խոռվերան, Խորենքներ, Խոռովերան, Խոցավանց, Ծանծաղ, Ծառս, Կամուրջ, Կարաչոխա, Կարաքիլիսե, Կարաուրկան, Կյարկ, Կյուլի, Կիչինքար, Կնտեղի, Կռապաշտ, Հանջաղազ, Հաջիլար, Հերան, Հարենկք, Հարթև, Հասանկալա, Հարսնեքար, Հնդի, Զազ, Զիթահանք, Ղարաչուխա, Ճառասուն, Միատուն, Մինղիզվան, Մեջելդի, Մենտևան, Մժնկերտ, Մոլլա սուլեյման, Յուզվերան, Նազարջուր, Նապի, Ոկամ, Որդորու, Չամուռլի, Չիֆթլիկ, Չուրուկ, Պատիճվան, Պլղուսան, Պոշորպեյի, Սանամեր, Սանսուր, Սարիքյուլլե, Սյուլիսկի, Սուլյուգա, Սոգութլու, Ս. Օհան, Վաղավեր, Վերին Թախրոջա, Վերին Ղարաբոնար, Տելիբաբա, Տոտի, Փերճիք, Փիրալի, Փոքր Դու, Փորիկ, Փուփխա, Քյոփրիքյո, Քաջալար, Օկամի:

Դերջանի գավառ – Ագաղիլ, Աղադիր, Աղվերան, Ապրանք, Աստոյի գոմ, Բագառիճ, Բերդակ, Բոչի, Բովիկ, Բրիչ, Բուլք, Գառնիբերդակ, Գարագուլաք, Գել, Գելլեջեն, Գերենվիգ, Գոմաձոր, Դանչեք, Դավո, Դվնիկ, Էսպիվերեք, Էրանի, Թառու, Խաղ, Խաղախ Ներքին, Խաղաղնիք, Խաչ, Խարխին, Խնզրի, Խնձորի, Խումլար, Ծաղկարի, Կարագուլակ, Կարաջա, Կիսմիսոր, Կոթեր, Կոնչա, Կուռիկ, Հերանի, Հողեկ, Ղաչաղ, Ղարաղուլաղ, Ղուրգոլ, Մամախաթուն, Մանթարտ, Մանց, Մեղուս, Մեջուլի, Մնդեվան, Մյուս Հերանի, Մրճիկ, Յանշթիքում, Յասի, Նորաշեն, Շողուն, Չաբրի, Չանախչի, Չխրլնոց, Չարնեշեն, Զրնչջուր, Սադոյի գոմ, Սարիդայա, Սալանըկ, Սնքար, Վարդուկ, Վերիվ Ղազի, Վժան, Ցախավիլ:

Թորթումի գավառ – Ագրակ, Ազորդ, Աղասեր, Աղբաձոր, Ապռնես, Ագրիք, Բլուր, Գեղեկ, Գորքեր, Թել, Թորթում, Լեսկի, Լակավ, Խախու, Խաշուտ, Խոզպրակ, Կալա, Կիրվենց, Կոչանս, Կուկվեանց, Կուտշեն, Հարս, Ձկնաջուր, Ձնավոր, Ղարազենց, Մաքիձոր, Մեղուս, Մեղաջուր, Մենասոր, Նորաշեն, Շեփեք, Շողուն, Ողեգ, Որչոխ, Պար, Ռապար, Սարբանլի, Սալիր, Ախտորուտ, Ս. Սարգիս, Վախթիկանս, Վարդաշեն, Վեկիլխաչ, Վեկիլձոր, Վերին գեղ, Վխիկ, Տանքար, Քարնկոս, Քլագոմ, Քցխա:

Խնուսի գավառ – Ալիկուլաղ, Ալիմուր, Աձկներ, Աղջմելիք, Աներ, Ավդալիգոմ, Արոս, Բաշքենդ, Բեգուրդա, Բուռնաս, Գաբրիելի գոմ, Գասպարի, Գարաչոբան, Գարապուրակ, Գովանդուկ, Գունդուզ, Դրբո, Դուման, Ելփիս, Եկմալ, Ենիքեոյ, Թաթոս, Թանտրլի, Թարաձիգ, Խաչալույս, Խախիլ Չաուշ, Խըրթ, Խոզլու, Խնուս, Խրմխայան, Կազբել, Կալիկան, Կախգիք, Կարաքյուփրլու, Կարաչոբան, Կյուլի, Կոպալ, Հայկ, Հարամիկ, Զիթհանքով, Մարուֆ, Մերկեզր, Մժնկերտ, Շաբաղին, Շահսուն, Շեփ-

խիր, Պեկուրտի, Պժնկերտ, Չեւերմե, Սալոր, Սարնլու, Սարվորի, Սոգյուտլու, Փայկ, Տուման, Քաղքիկ, Քրմեզի:

Կիսկիմի գավառ – Ամզիտ, Արեգին, Արսիս, Գեղուտ, Դյուրթ, Թասբորտ, Թև, Խամրուր, Խանդաձոր, Խարթ, Կաղմխուտ, Կարագրմիզ, Կարմրիկ, Կեսակ, Կիզնար, Կիսկիմ, Կրման, Կոճիկ, Կուտրաշեն, Կուցերանց, Հազասար, Հարշիշ, Հնայր, Հնգամեկ, Ճիճապաղ, Միքանիս, Միջին Թաղ, Մոխուրկուտ, Յայլա, Նիխախ, Նուխիզ, Շաղում, Պարտկոս, Ջաբրկերտ, Ջուլա, Ջուրկանց, Սևրի, Սունենց, Սուկուտ, Սուղբեզա, Ս. Խաչագրակ, Ս. Հովհաննես Մարի, Վահնա, Վավիե, Վընենե, Վրժան, Փրթիկներ:

Սպերի գավառ – Աղբրիկ, Աղբանոց, Աղոկե, Ավաձոր, Ավեր, Ավջի, Արաբքյոյ, Բաղչավանք, Բալանըգ, Բակիս, Բաշքենդ, Գանձ, Գեղնաձոր, Գելիմբերդակ, Գինոտ, Գող, Գողանց, Դրախտ, Դրաբնի, Էգաձոր, Թափձոր, Թշաձոր, Լետիրնիս, Խաչաղբյուր, Խոզաղբյուր, Ծաղկանց, Կաժ, Կահմուտ, Կարախաչ, Կարմրիք, Կին, Կիբաթ, Կլըտչ, Կոչկոսուս, Կուտմատ Հաջինս, Հիզպա, Հիշենց, Հրձոր, Հունուտ, Ձկնաջուր, Ճիտկանս, Ճինքոր, Ճիպոտ, Մաթսանց, Մանց, Մեզեգրեկ, Մեծ Ագրակ, Միշանտես, Մեխրաշեն, Նշենուտ, Նուխուշեն, Շիրիստանց, Շիկունից, Որձոր, Չափանց, Պոզար, Ձեբաիս, Ջուրկենց, Սարաչոր, Սեմեկրեկ, Սիթահանք, Սյունեյլի, Սպեր, Վահնաս, Վարդանիկ, Վանք, Վարզենիս, Վարիզնոց, Տանկես, Տանձուտ, Տղանց, Տուխ, Օձուտ, Օրսոր, Քարկունց, Քարափ, Քրեոզ:

Քղիի գավառ – Ագրակ, Աղային Շելնիկ, Ալիձոր, Ալթուն, Ալթն Հուսեին, Ալմալու, Անառիճ, Աղբղուտ, Աղբակ, Ակիպիվան, Ապողնակ, Ասեղ, Աստղաբերդ, Ավրնիկ, Առեք, Առինճ, Բիլիջա, Դարման, Դուշան, Զոկան, Էլբեկ, Թաթկիրան, Ինախ, Լեք, Լղիք, Խառագյուղ, Խարաբեկ, Խաչատուր, Խոշքար, Խոլխոլ, Խոսնակ, Խուբս, Խոպեք, Կարաբեկ, Կերպոլ, Կոճակ, Հազստուն, Հարկապ, Հերդիֆ, Հողաս, Ղազի, Ղազնի, Ղարապեկ, Ճերմակ, Ճպո, Մասրում, Մելիքան, Մեխոխ, Մեյդան, Մերջան, Մուտուվանց, Յանջալու, Յոլ, Չան, Չանախչի, Չըլըպե-Մզրե, Չիֆթլիկ, Սագանկ, Սագաձոր, Սանջակ, Սարիպաշ, Սեղանք, Սերկևիլ, Սիգանք, Տինեկ, Օսնակ, Օրոր, Քղի:

Երզնկայի գավառ

Երզնկայի գավառ – Աբիգե, Ագրակ Վարի, Ագրեկ Վերի, Ախորջըկ, Ախոռճուղ, Աղնատուն, Աղճաքենդ, Բազառիճ Վարի, Բազառիճ Վերի, Բալակոր, Բալանկա, Բեշիկ, Բզվան, Բթառիճ, Բլուր, Բռալմա, Բոլոմեր,

Գեղնիկ, Գելիմբերդակ, Գյուլլիճե, Գորուք, Գթաթաղ, Դարատեկին, Դզնիկ, Երկան, Երզնկա, Թիլ, Իշկիլար, Խաղ, Խնձորեկ, Խոզնցիկ, Խրաթող, Ծաթ, Ծաթեր, Կագի, Կադագուն Վարի, Կադագուն Վերի, Կալենցիկ, Կարաթուշ, Կարաջերլիզ, Կարաքիլիսե, Կարմին, Կարմիր, Կեչուտիկ, Հասանաղին քյոյ, Հայրապետի, Հոռոմ Ագրակ, Հուսեյն բեկ, Զորաբերան, Ճանճիկ, Ճմին, Ղարաքիլիսե, Մաղաջուր, Մահմուդցիք, Մեծագրակ, Մեղանցիկ, Մեղուսի, Մեյրանլի, Մթննին, Մերնեքլի, Մինյոլ, Շխլի, Շորակ, Շոխա, Չիվլիճի, Չիֆթլիկ, Պահիկ, Պողո, Ջերմի, Ս. Կիրակոս, Ս. Օհան, Սյուլմյուր, Վաղավեր, Վասկերտ, Վարդանշահ, Տարճրակ, Ուռեկ, Քիլիջե:

Կամախի գավառ – Ադալեր, Ալկոխան, Ախուտ, Ավագ վանք, Ավշեն, Բաղնիք, Բոստի, Բուռուս, Գառնի, Գոմեր, Ելնձոր, Զաքարի, Թան, Թավկներ, Թանուտ, Թորդան, Թողատի, Թոնուր, Լայնալի, Լիճ, Խնձորիկ, Խանգեղ, Խուտի, Կամախ, Կարդաք, Կետիկ, Հազարք, Հակասօվա, Հողաս, Ճինառիք, Մարեք, Մեծ Բագառիճ, Պահաձոր, Շոշիկ, Ոսկեբերդ, Սալի, Սաղի, Սալոր, Ս. Նշան վանք, Ս. Օհան, Սոնգու, Վունտի, Տետիկ, Ուխտիք, Ուռի, Ուսկուբերդ, Փեկարի, Փոքր Բագառիճ:

Կերճանիսի գավառ – Կարսագա, Կերճանիս, Ճպուռ, Մելիք շերիֆ, Նուխուտկեր, Շահրեդին, Ռեփահիե:

Գուրուչայի գավառ – Մեծ Արմտան, Գուրուչայ, Թեղուտ, Դասկներ, Հասանօվա, Հափշտա, Տանձի, Փոքր Արմտան:

Բայազետի գավառ

Բայազետի գավառ – Ալահողուլ, Ավաջուղ, Ավեշար, Արծաթ, Արաբքյոյ, Արուճ, Բաբախան, Բատնոց, Բայազետ, Բարաքյար, Բեզիրխան, Գյուլիճճա, Գիվա, Գոբղրոն, Գորագան, Զագիզուր, Թավլեն, Թափարիզ, Թուրակ, Ինջայսու, Խալու, Խաչլու, Խարք, Կալիջախ, Կալիսկավոր, Կաշոտ, Կարմիրկուր, Կերոնքենդ, Հալաճ, Հավիկ, Ղըզըլ ղայե, Ղամշու, Ղարաքյոնդ, Մարիամանա, Մելիքշեն, Մոսուն, Նորաշեն, Նուրեթի, Շահվալադ, Շեխո, Շոշիկ, Չաբրիխ, Պարնաքար, Պողի, Ջավայի, Սարուբեդ, Վելիխան Վերին, Վելիխան Վարին, Տաճարի, Քյուստուկ, Քոթիա, Քորունց, Ֆռանգերեցու:

Ալաշկերտի գավառ – Ապոնջի, Աբաս, Աբդուռահման, Աբուզեթ, Աղմեչեդ, Աղչայ, Ալեքսան, Ալի, Ալխիլ, Ալիկան, Աշխալա, Ահմեդբեկ, Ամատ, Արդ, Բավ, Բյուլակ, Բյուրապատ, Բլուր, Բոշեկ, Գափոլու, Գոգեկ, Գիլիան, Աղտառիճ, Դալիք, Դալիբաբա, Դավո, Դավոյի գեղ, Դա-

քար, Եխնի, Եղտո, Եկմալ, Երանոս, Երիցու գյուլ (Զաջուռ), Զատո, Զետ, Զիրո, Թորգոմներ, Խաչլուխալաբեկ, Խան, Խաստուր, Խարա, Խըտըր, Խլա, Խաշյան, Կայաբեկ, Կելյան, Կիաբեկ, Կարաքիլիսա, Կարսուն, Կյավբակյավր, Կոբալ, Հաճի Սաֆար, Համատ, Հայդր օղլի, Հաջիխան, Հասանկալա, Հասան փաշա, Ղազու, Ղայաբեկ, Ղալանտեր, Ճմիկան, Մազրա, Մանկասար, Միրանցիկ, Միրանի, Մոլլա հուսեյն, Մոլլա Սուլեյման, Մոլլա Օսման, Մուրադխան, Յայլու, Յոնջալու, Յումրուայրեն, Նավիկ, Ներքին Ղազին, Ներքին Մուրադխան, Շահնազար, Շորվերան, Չաթ, Զամբլուն, Չլկանի, Չուրուկ, Պավցիկ, Ջաջուռ, Ջլկունի, Ռեմկան, Սալ, Սեվիկ, Սուլեյման, Տոման, Տոտիկան, Տոտոյի, Տումար, Փոխան, Քարաձոր, Քյուլու:

Դիադինի գավառ – Ալիկոր, Աղբազար, Աղբաձոր, Բուդաղին, Գմբեթ, Գոբեկի, Գորանի, Գումուլպուճախ, Դաշկեսան, Դավթի, Դիադին, Թոխլուջա, Թավլու, Լաշկո, Կարաբազար, Կուբիկ, Ղումլուջա, Մարտիկ, Միրզաջան, Մոլաքենդ, Նավրուզ, Ներքին Բոտի, Պրումի, Ջանաշիս, Ջուրջան, Սեյդո, Սիրապեխ, Սորան, Վանքի գյուղ, Վերին Դաշլիչայ, Վարի Դաշլիչայ, Ուլուքենդ, Ուչքիլիսա, Քարվչուր:

Դութաղի գավառ – Ասմըր, Ավջո, Բաղուն, Բիշի, Դութաղ (Այնթափ), Խարխալըղ, Խարջան, Խըբասոր, Խոսրովան, Կզկապան, Կզպան, Հասան, Հասըկ, Հեսան, Ղարախաչ, Ղարաղալըղ, Ղարաքեոյ, Մեշխուն, Մերգեխել, Մլան, Մոլլա Իբրահիմ, Մոլլա Հասան, Մոլլա Շեմդին, Մուսիկ, Շամե, Պաղնոս, Պյուրմասի, Պիրյուսկ, Ջամալվերդի, Սևիկ, Ռութան, Քոշկ:

Կարաքիլիսեի գավառ – Աշրաբ, Բիզիրխան, Գելդուզ վերին, Գելդուզ ներքին, Դաշլիչայ վերին, Դաշլիչայ ներքին, Դամզախան, Երանոս, Եոնջալու, Զիրո, Խաչիթափ, Խասե, Խըդըր, Խոջիկ, Կարաքիլիսե, Համբար, Հերհեր, Ղազիքյոյ, Ղազվին, Մեծ Ախտա, Մեզրե, Մեզրե Մազրա, Միկեզար, Միրզախան, Մոլլա Օսման, Յազղի, Չաղլու, Փոքր Ախտա:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

19-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիան անցյալի աղմկոտ «փառքի» ծաղրանկարն էր ներկայացնում: Օգտվելով կայսրության տնտեսական հետամնացությունից՝ եվրոպական տերությունները Թուրքիան վերածեցին կիսագաղութի: Իսկ երբ բորբոքվեց «Արևելյան հարցը», երբ մեկը մյուսի հետևից բռնապետության դեմ ազատագրական պայքարի ելան նվաճված ժողովուրդները, Թուրքիան թևակոխեց մասնատման, ապա և կործանման ժամանակաշրջանը:

Երկրի տնտեսության առաջընթացն արգելակող բռնատիրական կարգերը քրիստոնյա հպատակների հալածանքների ու հարստահարությունների մեջ էին տեսնում իրենց գոյության արդարացումը:

Պետական քաղաքականության վերածված այդ դժնդակ կարգերն իրենց ողջ ծանրությամբ ընկած էին նաև արևմտահայության վրա:

Հողատիրության մեջ գոյություն ունեցող զավթողական կարգերը պատճառ էին դառնում քրիստոնյաների հողազրկման համար:

Միայն Կարինի նահանգում բռնագրավվեցին 36 գյուղերի 1632 դեսյատին 362 հողակտորներ, 190 դեսյատին 40 արոտավայրեր, 280 դեսյատին այլ հողեր, չհաշված պարտքերի դիմաց խլված հողերը[1]:

Կարինի նահանգում, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում, իրենց անարգել, դաժան քաղաքականությունն էին շարունակում, Չարենցի խոսքերով ասած՝ «հավիտենական հիվանդի թափթփուկ հորդաները»՝ քրդերն ու թուրքական խուժանը:

Անհամակարգ հարկային քաղաքականությունն ավելի էր քայքայում նահանգի հայության տնտեսությունը: Գանձարանի դատարկ սնդուկները լցնելու ուրիշ միջոց չունենալով՝ բռնապետությունը հարկային համակարգի ողջ ծանրությունը գցում էր քրիստոնյա հպատակների վրա: Բազմաթիվ անվանյալ ու անանուն, օրինական ու անօրինական հարկերը կեղեքումների այդ համակարգի վառ ապացույցն են:

---

[1] *Бекгулянц Р.,* По турецкой Армении..., Ростов н/Д., 1914, стр. 67.

19-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվեց արևմտահայության տեսանելի տեղաշարժով, որի առաջին վկայությունը սահմանադրական շարժումն էր:

Հայ առաջադեմ գործիչների ջանքերով, սահմանադրության բացթողումները լրացնելու նպատակով մշակվեց գավառների բարենորոգումների ծրագիրը: Սահմանադրական շարժման բաղկացուցիչ մասն էր նաև Կարինի բարենորոգումների ծրագիրը: Այն առաջադրում էր համարձակ պահանջներ: Երեք փաստաթղթերը դիտելով իբրև մեկ շարժման բաղկացուցիչ մասեր՝ ավելի ցայտուն են ընդգծվում արևմտահայության քաղաքական գիտակցության բարձրացման վերընթաց ուղին, ազատագրական գաղափարախոսության սկզբունքները, որոնք հետագայում վերածվեցին կուռ տեսության:

Ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմից հետո սուլթանական իշխանությունը եկավ այն համոզման, որ դարեր շարունակ կրկնվող հալածանքները չկոտրեցին հայության դիմադրությունը: Բեռլինի կոնգրեսից հետո սաստկացող հալածանքներին դիմադրելու նպատակով ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կարինի նահանգում ստեղծվեցին ընկերություններ ու կազմակերպություններ, որոնց մեջ «իր ուրույն տեղն ուներ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը»: Սկսված շարժումները ճնշելու, Թուրքիայի կործանման վտանգը վերացնելու, օսմանիզմի ծրագիրը կենսագործելու նպատակով սուլթանը ձեռնարկեց զուլումի քաղաքականությունը, որտեղ առաջին ջութակի դերը կատարելու էին քրդերը:

Անսանձ քրդական հորդաներն ավերեցին Արևմտյան Հայաստանի գյուղերն ու ավանները, հայաթափ արեցին քաղաքները:

19-րդ դարի երկրորդ կեսը Կարինի նահանգի հայության ծանր ժամանակահատվածներից էր: «Հավիտենական հիվանդի» հայաջինջ քաղաքականության դաժան հարվածներից փոխվեց նաև նահանգի ժողովրդագրությունը: Իր սև գործն էր կատարում նաև պետական կոչվող, կողմնակալ ու խեղաթյուրված վիճակագրությունը, երբ աներևակայելի չափերով պակաս է ներկայացվում արևմտահայության թվաքանակը:

Աշխատության առանցքային բաժնում արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի, օտարազգի հեղինակների վկայությունների, անգամ թուրքամետ աղբյուրների վերլուծությունների, համեմատությունների օգնությամբ փորձել ենք եթե ոչ ճշգրտում մտցնել, ապա գոնե խառնաշփոթ ու անիրական վիճակից հանել, հստակեցնել

պատկերացումները նահանգի ժողովրդագրության վերաբերյալ՝ միաժամանակ անդրադառնալով նահանգի գյուղերի ու քաղաքների պատմությանը, ազգային առանձնահատկություններին, սովորույթներին, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրթական ասպարեզներին, որպեսզի առավել կուռ դառնային նահանգի հայության ժողովրդագրության կացության վերաբերյալ հաստատումները՝ դրանով իսկ մեր նպաստը բերելով թուրքական ազգայնամոլ, կողմնակալ պատմագրության հակագիտական նկրտումների դեմ արդար պայքարի գործին:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ՊԿՊԱ (Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ), ֆոնդ 28, 42, 50, 56, 94, 114, 195, 198, 199, 222, 227, 243, 278, 314, 325, 339, 337, 374, 402, 411, 413, 425, 429, 430, 431, 469, 476, 477, 478 ֆոնդերի 800 գործ։
2. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Մատենադարան, արխիվային բաժին։
3. Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի անձնական արխիվ, թղթ. 4, վավ. 244, վավ. 405, թղթ. 244, վավ. 12։
4. ԳԱԹ (Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ), 2, 6, 18, 29, 40, 41, 43, 79, 88, 127, 136, 144, 147, 153, 161, 189, 202 ֆոնդերի 250 գործ։
5. Դիվան հայոց պատմության, կազմեց Գ.Աղանյանց, գիրք Ժ, Թիֆլիս, տպարան Մ.Շարաձե, 1912։
6. Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915։
7. Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, Երևան, 1967։
8. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Երևան, 1964։
9. Հակոբյան Բ., Ուղեգրություններ, աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Զ, Երևան, 1934։
10. Մանր ժամանակագրություններ, 13-18րդ դդ., կազմեց Վ.Հակոբյան, Երևան, հ. 2, 1956։
11. Սերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին, 1912թ., Երևան, 1968։
12. Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955։
13. Տեկանց Ա., Այցելություն ի Հայաստան 1878թ., Երևան, 1985։
14. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (16-17-րդ դդ. կանուննամեներ), Երևան, 1964։
15. Аграрный строй Османской империи в XV-VIIвв., документы, материалы, составление, перевод и комментарии А.С. Тверитиновой, Москва, 1963.
16. Акты Кавказской Археологической комиссии, тт. I-XII, Тифлис, 1866-1904.
17. Братская помощь пострадавшим в Турции армян, М., 1897.
18. Колюбакин А.М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. I, ч. II, Тифлис, изд. Отдела Ген. штаба Кав. воен. округа, 1883.
19. Колюбакин А.М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. II, ч. II, Тифлис, 1890.
20. Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг., изд. М.Г. Дарбинян, Вестник архивов Армении, 1977, N3, с. 3-23.
21. Турецкий сборник, СПб, 1909.
22. Արամյան Գ., Նամակներ, Երևան, 1959։

23. Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912։
24. Ազատյան Թ., Ակն և ակնեցիք, Ա-Թ։
25. Ալիշան Ղ., Քաղաքական աշխարհագրություն, Վենետիկ, 1873։
26. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890։
27. Ալիշան Ղ., Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853։
28. Ալպեր Տրվըլլե և Գևորգ Փիսոն, Ուղեգրություն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892։
29. Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ, իր կյանքը և գործը, Գահիրե, 1927։
30. Ալպոյաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950։
31. Ալպոյաճյան Ա., Անհետացող դեմքեր, Պոլիս, 1919։
32. Աղանյանց Գ., Կարնո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891։
33. Աղեքսանդրյան Ա., Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիո և սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսության նորին, Վենետիկ, 1911։
34. Ակնունի Է., Կովկասյան վերքեր, հ. 1, Ժնև, 1903։
35. Ակնունի Է., Դեպի կռիվ, Ժնև, 1904։
36. Ակնունի Է., Դեպի երկիր, Պոսթըն, 1911։
37. Աղայան Ղ., Մի երես մեր նորագույն պատմությունից, Մոսկվա, 1891։
38. Առաքելյան Հ., Թուրքահայ ժողովրդի վիճակագրությունը, Ա-Թ։
39. Աճառյան Հ., Պոլսեն Կարին, Ն.Նախիջևան, 1909։
40. Աճառյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը, Ն.Նախիջևան, 1915։
41. Աճառյան Հ., Իբն-ի Բատուտա, Երևան, 1940։
42. Աճառյան Հ., Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1900։
43. Ամենայն Հայոց Հայրիկ, Բոստոն, 1957։
44. Ամֆիտեատրով Ա., Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906։
45. Անդրանիկ, Դերսիմ. ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1909։
46. Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881։
47. Ասատուր Հ., Սահմանադրություն և հայ ժողովուրդն, Կ.Պոլիս, 1879։
48. Ասլանյան Ի.Ա., Նոր աշխարհագրություն, Կ.Պոլիս, 1873։
49. Ատոմ, Պետական վերանորոգումները և հողային հարցը, Կ.Պոլիս, 1910։
50. Ատոմ, Ազգային սահմանադրություն, Կ.Պոլիս, 1914։
51. Ատոմ, Պետական վերանորոգումների հարցը, Կ.Պոլիս, 1914։
52. Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929։
53. Ատրպետ, 1878-1928, 50-ամյա հայ հեղափոխության ոսկե հոբելյան, Լենինական (ձեռագիր), 1927։
54. Արծրունի Գ., Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894։
55. Արսլանյան Մ., Բաբերդ և շրջակայքը, Փարիզ, 1954։
56. Բեռնշտայն Էդ., Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժնև, 1906։
57. Բյուրատ Ս., Տեմիր Մուշլու, Պուքրեշ, 1916։
58. Բռնության դեմ, Աթենք, 1894։
59. Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնապետության դեմ, 1890-1910, Բեյրութ, 1973։

60. Գեղամյանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, Բաքու, 1909։
61. Դիվանի, Մի պատկեր Տաճկահայաստանի կյանքից, Բաքու, 1913։
62. Եզիկյան Ա., Պատմություն Կարնո կուսակալության Քղի գավառի Չանախ-չի գյուղի, Բելվիլ, 1977։
63. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963։
64. Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, հ. 1, Թիֆլիս, 1894, հ. 2, 1895։
65. Զատիկյան Հ., Կարին, Երևան, 1992։
66. Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, մաս Բ, Բարիզ, 1903։
67. Զուլալյան Մ., Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966։
68. Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Երևան, 1980։
69. Էհրամճյան Խ. (Կարնեցի), Վարվառե կամ 19-րդ դարու զոհը, Թիֆլիս, 1857։
70. Էփրիկյան Հ., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պր. 1, Վենետիկ, 1900, հ. 2, գիրք Ա., Վենետիկ, 1907։
71. Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881։
72. Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882։
73. Թուրիկյան Գ., Եփրատյան Հայաստան, հ. Ա, Փարիզ, 1947։
74. Թուրքիայի հայերը և իրենց դրացիները, Վիեննա, 1890։
75. Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենե-տիկ, 1806։
76. Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907։
77. Լալայան Ե., Կարնո գավառի տեղեկագիրը, «ԲՀԱ», 1974, N3։
78. Լեո, Գ.Արծրունի, հ. 1, Թիֆլիս, 1902, հ. 2, Թիֆլիս, 1903, հ. 3, Թիֆլիս, 1905։
79. Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1911։
80. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925։
81. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 1, հ. 2, Փա-րիզ, 1934, 1935։
82. Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1969։
83. Լինչ, Հայաստան, հ. Բ, Պոլիս, 1914։
84. Խաժակ, Հարկերը Տաճկաստանում, Բաքու, 1903։
85. Խորենացի Մովսես, Պատմություն Հայոց, Երևան, 1968։
86. Խրիմյան Մ., Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929։
87. Ծաղիկյան Մ., Համառոտ աշխարհագրություն, Վիեննա, 1857։
88. Ծոցիկյան Ս., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947։
89. Կարնեցի Հ., Տեղեկագիր վերին Հայոց, Վաղարշապատ, 1903։
90. Կարնո հիշատակին, Վիեննա, 1869։
91. Կալհոկեցի Պ., Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս, Պոլիս, 1851։
92. Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան, 1978։

93. Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974։
94. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968։
95. Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934։
96. Համբարձումյան Վ., Գյուղաշխարհ, Փարիզ, 1927։
97. Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965։
98. Համբարյան Ա., Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (19-րդ դարի 2-րդ կես – 20-րդ դարի սկիզբ), Երևան, 1983։
99. Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974։
100. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, 1967։
101. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, հ. 2, Երևան, 1988։
102. Հայկունի Ս., Բագրևանդ Զրաբաշխ գավառ, մասն Ա, Վաղարշապատ, 1894։
103. Հյուբշման Հ., Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907։
104. Հովհաննիսյան Ա.Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955։
105. Հովհաննիսյան Ա., Հայը և Հայաստանը օտարների աչքում, 1881։
106. Հովհաննիսյան Մ., Գորդյան հանգույց, Թիֆլիս, 1907։
107. Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակեպությունը, Երևան, 1965։
108. Հուլունյան Հ, Հաճյան Մ., Հուշամատյան Խոտորջրի, Վիեննա, 1964։
109. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երևան, 1967։
110. Մամուրյան Մ., Անկլեական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881։
111. Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, Պոլիս, 1919։
112. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968։
113. Մախմուդով Ն., Քուրդ ժողովուրդը, Երևան, 1959։
114. Մելքոնյան Ա., Էրզրում, Երևան, 1994։
115. Մելիքյան Ե., Վիճակագիր Խնուս (Հարք) գավառի և թոնդրակեցոց աղանդին և բողոքականության կապը ի Խնուս, Նյու Յորք, 1943։
116. Միրախորյան Մ., Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, հ. Ա, Պոլիս, 1884, հ. Բ, Գ, 1885։
117. Նաթանյան Պ., Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճակի, Ճապաղջրի և Երզնկայու, Կ.Պոլիս, 1883։
118. Նաուման, Էրզրում, Թիֆլիս, 1896։
119. Նեդիմ Մ., Հայ եղեռն, Կահիրե, 1925։

120. Նեմեսիս, Թուրքերը և մենք, տպ. «Նոր օր», 1928։
121. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1870, Երևան, 1955։
122. Նուրիխյան Մ., Պատմություն ժամանակակից, մասն Ա (1814-1848), Վենետիկ, 1881։
123. Շահպազեան Յ., Քիւրդո-հայ պատմութիւն, Կ.Պոլիս, 1911։
124. Ոսկանյան Հ., Կարին և կարնեցին և Կարնո վանքերը, Վիեննա, 1950։
125. Ոսկյան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951։
126. Չարըգ, Ղ., Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957։
127. Չերազ Մ., Թե ի՞նչ շահեցանք Պեռլինի վեհաժողովեն, Կ.Պոլիս, 1878։
128. Չերազ Մ., Պեռլինեն մինչև Լոզան, «Հայաստանի կոչնակ», 1923, N18։
129. Չերազ Մ., Ազգային խնդիրներ, Կ.Պոլիս, 1927։
130. Չոպանյան Ա., Մ.Պեշիկթաշլյան, Փարիզ, 1907։
131. Չոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1907։
132. Չոպանյան Ա., Հայ ազգը «մեղավոր» չէ, Փարիզ, 1926։
133. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, Բեյրութ, 1972։
134. Պարոնյան Հ., Երկեր, հ. 4, Երևան, 1958, 1965։
135. Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958։
136. Պաղտիկյան Գ., Տարագրի մը ճամբան (հավելված) և Քեմախի պատմությունը, Լոս Անջելոս, 1984։
137. Պերպերյան Ա., Պատմություն հայոց, Պոլիս, 1871։
138. Պիպեռճյան Ա., Օսմանյան պատմություն, Պոլիս, 1913։
139. Պոնտական ուսումնասիրություններ, Վիեննա, 1919։
140. Պրոկոպիոս Կեսարացի, Երևան, 1967։
141. Ռեկյու Է., Լազիստան, Հայաստան, Քուրդիստան, Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք, Ասորիք և Պաղեստին, Վաղարշապատ, 1893։
142. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963։
143. Սարգսյանց Լ., Այց Թուրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890։
144. Սարգսյան Ն., Տեղեկագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864։
145. Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. 1, Երզնկա, Կահիրե, 1947։
146. Սմբատյան Մ., Տեղեկագիր Գեղարքունիքի Ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետ գավառ, Վաղարշապատ, 1895։
147. Սվաճյան Հ., Հրապարակախոսություն, Երևան, 1960։
148. Ստեփանյան Գ., Ա.Արփիարյան, Երևան, 1955։
149. Սրապյան Լ., Քղի, Անթիլիաս, 1960։
150. Սրվանձտյանց Գ., Մանանա, Կ.Պոլիս, 1876։

151. Սրվանձտյանց Գ., Թորոս աղբար, Կ.Պոլիս, 1879։
152. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, 2, Երևան, 1978, 1982։
153. Վահե, Անջատվածները, Թիֆլիս, 1907։
154. Տաշյան Հ., Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921։
155. Տաշյան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հ. Ա, Վիեննա, 1987։
156. Տեր-Ղևոնդյան Ա., Կարին-Թեոդուսոպոլիսը ավանդության և պատմության մեջ, «Լրաբեր» ՀՀ ԳԱԱ, 1971, N3։
157. Տեր-Հակոբյանց Ա., Աշխարհագրություն Հայաստանի, Տփղիս, 1881։
158. Ռաֆֆի, Երկեր, հ. 4, 9, Երևան, 1956, 1958։
159. Փափազյան Վ., Երկեր, հ. 5, Երևան, 1958։
160. Փիսոն Գ., Ուղևորություն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892։
161. Քաջունի Մ., Աշխարհագրություն հին և նոր Հայաստանյայց, Վենետիկ, 1857։
162. Քոսյան Հ., Բարձր Հայք, հ. Ա, Բ. Վիեննա, 1925, 1926։
163. Քուրտյան Հ., Երիզա և Եկեղյաց գավառ, Վենետիկ, 1953։
164. Օտյան Գ., Սահմանադրական խոսքեր և ճառեր, Կ.Պոլիս, 1910։
165. Օրմանյան Մ., Ազգապատում, մաս 3, Երուսաղեմ, 1927։
166. Օրմանյան Մ., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929։
167. Абих Г., Геология Армянского нагорья. Западная часть. Орографическое и геологическое описание. Пер. с немецкого Б.З. Коленко. Пятигорск: 1889.
168. Акимкина Н., Практикум по истории стран зарубежного Востока, М., 1963.
169. Алимов А., Турция, Коммунистическая академия (сборник), М., 1934.
170. Астахов Г., От султана к демократической Турции, М.-Л., 1926.
171. Бакрадзе Дж., Исторический очерк турецкой системы земледелия, Тифлис, 1889.
172. Бекгулянц Р., По Турецкой Армении, Ростов н/Д, 1914.
173. Бисмарк О., Мысли и воспоминания, т. 2, М., 1940.
174. Гиппиус А., Статистические таблицы вилайетв турецкой империи ближайших к Закавказью, Тифлис, 1889.
175. Гиргас В., Права христиан на востоке по мусульманским законам, СПб, 1865.
176. Гроте Г., По Азиатской и Европейской Турции, М., 1904.
177. Дадиан Мкртич-бей, Современное армянское общество, Тифлис, 1878.
178. Диев Г.А., Армянский вопрос в Турции (Из переписки с стамбульским публицистом), 1893.
179. Данциг Дж., Русские путешественники на Ближнем Востоке, М., 1965.
180. Джалиле Дж., Восстание курдов 1889г., М., 1966.
181. Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.
182. Жуковский М.П., Земледельческая Турция, М., 1933.
183. Завриев Д., К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тифлис, 1947.

184. Кази-бек Ю., Современная Турция, СПб, 1897.
185. Калантар Ал., Экономические перспективы восточной Анатолии, Тифлис, 1913.
186. Де-Констансон Л., Реформы в Азиатской Турции, М., 1914.
187. Лазарев М.С., Курдистан и Курдская проблема (90-е годы 19-го века – 1917г.), М., 1972.
188. Лазарев М.С., Курдский вопрос (1891-1917), М., 1972.
189. Лазарев Як., Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895.
190. Лихутин К., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб, 1863.
191. Малама Я.Д., Описание Эрзрумского вилайета, СПб, 1874.
192. Малама Я.Д., Средства продавольственные, фуражные, перевозные и денежные северо-восточной части азиатских владений Оттоманской порты, Тифлис, 1876.
193. Маевский В.Т., Ванский вилайет, Тифлис, 1901.
194. Мак-Коль К., Наш новый протекторат, М., 1884.
195. Маркс К., Энгельс Ф., Сочинения. Т. 9, 10.
196. Маркс К., Обьявление войны. К истории возникновения восточного вопроса. Маркс К. и Энгельс Ф., 2-ое издание, т. 10, М. 1958.
197. Мезиер А., Турциа, СПб, 1907.
198. Миллер А., Мустафа паша Байрактар, М.-Л., 1947, Разложение военно-ленной системы и попытка реформ в Турции в конце 18 – начале 19в., М., 1963. Краткая истотия Турции, М.-Л., 1948. Народы Турции, СПб, 1879.
199. Народы Турции. Двадцать лет пребывания среди болгар, греков, турок, албанцев и армян. Дочери и жены консула. Перевод с. англ., т. 1, изд. Генштаба, 1879.
200. Народы Турции, т. 2, 1879.
201. Новичев А.Д., История Турции, т. 1, Л., 1963, т. 2, Л. 1968, т. 3, Л., 1977, т. 4, Л., 1978, Очерки истории Турции до мировой войны, М.-Л., 1937.
202. «Очерки по истории Востока в эпоху империализма», М.-Л., 1934.
203. Положение армян в Турции до вмешательства держав в 1895, М., 1896.
204. Петросян Ю., «Новые османы» и борьба за конституцию 1876г. в Турции, М., 1958.
205. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, вып. 4-ый, т. 4, Тифлис: Тип. Кав. Военного округа, 1888.
206. Проскуряков Я., Заметки о Турции, Тифлис, 1905.
207. Пушкин А.С., Путешествие в Арзрум во время похода 1829 года. Полн. собр. соч., 4-ое изд., т. 4, Л., 1978.
208. Саркисян Е.К., Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине 19-го века, Ереван, 1957.

209. Теплов В., Смутное время и дворцовый переворот в Константинополе, СПб, 1897.
210. Томилов А., Отчет о поездке по Азиатской Турции, Тифлис, 1907.
211. Турецкая империя, б.м.п.
212. Тыркова А., Старая Турция и младотурки, П., 1916.
213. Убичини М., Изображение современного состояния Турции, СПб, 1854.
214. Фадеева И.Е., Мидхат паша, М., 1977.
215. Фадеева И.Л., Официальные доктрины в идеологии и политике османской империи, М., 1985.
216. Хальфин Н., Борьба за Курдистан, М., 1963.
217. Ходжетлаш М., Убийца на троне, П., 1918.

Պարբերական մամուլ

218. «Ազատամարտ», 1911:
219. Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1908:
220. «Արարատ», Վաղարշապատ, 1879, 1885, 1893:
221. «Արաքս», Պետերբուրգ, 1893:
222. «Արձագանք», Թիֆլիս, 1882, 1883:
223. «Արև», 1914, N10:
224. «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1876, 1884, 1886-1891, 1895, 1896, 1899:
225. «Բազմավեպ», Վենետիկ, 1850, 1862, 1882, 1901:
226. «Բանասեր», Կ.Պոլիս, 1881:
227. «ԲԵՀ» (Բանբեր Երևանի համալսարանի), 1972, թիվ 2:
228. «ԲՀԱ» (Բանբեր Հայաստանի արխիվների), 1976, թիվ 3, 1974, թիվ 3:
229. «Գործ», 1917, N4:
230. «Դրոշակ», 1900-2000:
231. «Լուսա», Թիֆլիս, 1903:
232. «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863:
233. «Լրաբեր» ՀՀ ԳԱԱ, 1971, թիվ 3:
234. «Հայաստանի կոչնակ», 1923:
235. «Հայրենիք», 1892:
236. «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1902:
237. «Հնչակ», 1893, 1895:
238. «Զիթենի», 1915:
239. «Մասիս», 1872:
240. «Մեղու», 1859, 1863:
241. «Մշակ», 1876-1897:
242. «Մուրճ», 1893, 1895, 1898:
243. «Նոր դար», 1889:
244. «ՊԲՀ» (Պատմա-բանասիրական հանդես), 1959, թիվ 2, 3:

245. «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916-1917։
246. «Վեմ», 1938, թիվ 4։
247. «Տարազ», Թիֆլիս, 1891։
248. «Փորձ», 1876-1879 ։
249. «Օրագիր», 1774։
250. «Кавказ», 1853, N3, 38, 47.
251. «Новый Восток», 1923, N4, 1924, N6, 1925, N1.
252. «Исторический Вестник», 1915, т. 142.
253. «Русский Вестник», 1879, т. 143.

Հոդվածներ

254. Ազգային վիճակագրություն (Բանասեր), 1851թ. նոյեմբեր
255. Ամատյան Ս., Եկեղյաց գավառ (Արևելյան մամուլ), 1884թ. փետրվար, 1886թ. մայիս, 1887թ. փետրվար, օգոստոս, սեպտեմբեր, 1890թ. փետրվար, ապրիլ, մայիս։
256. Արծրունի Գ., Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակչության մասին, «Մեղու Հայաստանի», 1882թ. հունվար
257. Բաճյան Ս., Նկարագրություն քաղաքի Կարնո և մեծ գետնաշարժին, որ եղավ ամին 1859, «Բազմավեպ», 1862թ. հոկտեմբեր։
258. Երզնկա կամ Երիզա, «Մասիս», 1886թ. սեպտեմբեր։
259. Երիցյան Ա., Թե Տաճկական Հայաստանում որքան հայ կա, «Փորձ», 1880թ. հունիս-հուլիս։
260. Զատիկյան Հ., Կարնո նահանգի պատմությունից, «Լրաբեր» ՀՀ ԳԱԱ, 1991, թիվ 1։
261. Զատիկյան Հ., Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879թ.), ԲՀԱ, 1991, թիվ 3։
262. Զատիկյան Հ., Կարինի թատերական ընկերությունը, «Արվեստ», 1990, թիվ 4։
263. Զատիկյան Հ., Կարինի նահանգի Կամախի գավառակը, ԲԵՀ, 1999, թիվ 1։
264. Զատիկյան Հ., Կարինի նահանգի պատմությունից, «Լրաբեր», 1991, թիվ 1։
265. Զատիկյան Հ., Կարինի նահանգի Սպերի գավառակը, «Բնօրրան», 2000, թիվ 1-2։
266. Զատիկյան Հ., Կարինի Բասենի գավառակը, «Լրաբեր», 2000, թիվ 2։
267. Զատիկյան Հ., Կարինի նահանգի Խնուսի գավառակը, ԲԵՀ, 2002, թիվ 1։
268. Զատիկյան Հ., Կարինի գավառակի եկեղեցիները, «Էջմիածին», 2002։
269. Զատիկյան Հ., Բաբերդի գավառի եկեղեցիները, «Էջմիածին», 2002, թիվ Դ։
270. Զատիկյան Հ., Կարին քաղաքը որպես ռազմական խոշոր կենտրոն, «Հայոց բանակ», 2002, թիվ 1-2։
271. Զատիկյան Հ., Կարինի գավառ, Երևանի թատրոնի և կինոյի պետ. ինստիտուտի գիտ. աշխ. ժողով, «Հանդես», 2002, թիվ 1։
272. Զատիկյան Հ., Կարինի նահանգի քաղ. կացությունը 19-րդ դարի 2-րդ կեսին, «Նորք» ամսագիր, 2002, թիվ 4։

273. Զատիկյան Հ., Կարինի նահանգի Դիադինի գավառակը, ՊԲՀ, 2002, թիվ 2 (160)։
274. Էփրիկյան Հ., Բայազետ, «Բազմավեպ», 1901թ. փետրվար։
275. Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք, «Ազգագրական հանդես», 1882թ. նոյեմբեր։
276. Խաչատրյան Ա., Հին Բայազիդի և Բագրևանդի հայերին սպառնացող վտանգը, «Արձագանք», 1883թ. հունվար։
277. Կարնո գյուղերը ճանապարհորդի հիշատակներեն, «Բազմավեպ», 1907թ. սեպտեմբեր-հոկտեմբեր։
278. Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, ԲԵՀ, 1969, թիվ 2։
279. Ճանապարհորդություն ի նահանգն Կարուց, «Արարատ», 1879թ. սեպտեմբեր։
280. Մարտիրոսյան Ն., Պայազիտի գավառ, «Վան-Տոսպ», 1916, թիվ 14, 15։
281. Մուրատյանց Պ., Նկարագիր Ս.Հովհաննու վանուց ի վիճակին նորին Բագրևանդա, «Արարատ», 1889թ. հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս։
282. Սելյան, Տաճկա-Հայաստանի ազգաբնակչությունները, «Մուրճ», 1895, թիվ 7։
283. Սոլանելլի Կ., Տեսություն ի վերա գավառաց Հայաստանի, «Բազմավեպ», 1882, հ. 40։
284. Վիճակագրական տեղեկություն Տաճկաստանի բնակչաց վրա, «Արաքս», 1892թ. հունիս։
285. Տեղեկագիրք գավառական հարստահարությանց, «Մշակ», 1878թ. օգոստոս։
286. Տեր-Պետրոսյանց Մ., Նամակ Հին Բայազետից», «Մշակ», 1878թ. օգոստոս։
287. Փափազյանց Վ., Թե ինչո՞ւ համար տաճկաստանցի գյուղացին ստիպված է գաղթել, «Արձագանք», 1882թ. նոյեմբեր։
288. Փափազյանց Վ., Թուրքահայաստանի վիլայեթները, «Տարազ», 1891թ. հունվար։

Հովհաննես ԶԱՏԻԿՅԱՆ
ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԸ
XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ Քարաուղլանյան
Լուսինե Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 26,5 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 200։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։